


11 21

89199 (082)

9 - 87



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԼԵՒԹԱՑ

II ԱՎՏԻԶԱՆԻ VII ԽՄԲԵՐԻ ՑԵՎ ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԿԱԶՄԵՑ ԸՆ. ԶԱՐԵԿ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՎՐԵՊԱՆ 1980

891.99 (082)
4-87

13 APR 2011

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԼԵՒԹԱՑ

II ԱՍՏԻԳԱՆԻ VII ԽՄԲԵՐԻ ՅԵՎ ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԿԱԶՄԵՑ ՅԵ. ԶԱՐԵՎՅ

1457

2729

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1930



22 MAR 2013
1103 89A 11

62.482

1. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՈՐ ԿԵՆՅԱՂԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Ա. 1. Ա. 2. Ա. 6

ԱՌՈՐՅԱՆ ԹԻԹԵՂԵ ԹԵՎԵՐԻ ՏԵԿ

I

Ժամացույցը սրտի նման բաբախում ե և համաչափ, և հատու:

Փողոցը դիտող պատուհանի վերևից, հսկայական մեղվի նման, քռում ե թիթեղաթե ողահան մեքենան: Միքանի որ ե, ինչ աշխատում են այդ արտասովոր բռուցի տակ: Միքանի որ ե՝ ժամացույցի զարկերակը խլանում ե այդ բռուցի մեջ:

Իսկ հուլիսյան արեր: Ի՞նչ կարող են անել թիթեղե աղմկարար թեերը: Քարերը կրակի տաքություն են արձակում, և բաց պատուհանից տաք քամի յե փչում, ասես պատուհանի պատվանդանի մոտ հսկայական խարույկ ե բորբոքվում:

Հուլիսյան արեր: Թոշնեցնում ե ծառ ու ծաղիկ: Դանդաղեցնում կյանքը, տեմպը: Չորացնում շրթունքները: Թրջում դեմքն ու մարմինը: Դատարկում փողոցները: Առաջարկում ե թողնել քաքը: Հանում ե հազարավոր շահերի խցանները: Սառնեց, սառնեց:

Այդպես ե հուլիսյան արեր՝ և խստասիրու, և արշավող:

Այդ արշավի դեմ անզոր են բռուցող թիթեղե թեերը պատուհանի վերեռում: Յեվ հուլիսյան շոգի ճնշիչ ճնշի ներքո նրանք խընամքով վերցնում են յուրաքանչյուր տառը, միաձուլում, շաղկապում իրար ու արձիճե զանգվածին տալիս շունչ ու կենդանություն:

Յեթե թիթեղաթե բռուանը չխանդարի, ժամացույցի միապաղաղ ճնշառության հետ լսվում ե տառերի ու տառակալի հանդիպման միալար չըխչըխկոցը:

Արևածաղկի յեն նման, զլխահակ և անխոս: Հայացքները մեկ ձեռագրի տողերի մեջ են խորասուզվում, մեկ սլանում տառարկղի բազմաթիվ փոսիկների ցանցում, Մեկ սպասում, մեկ արշավում: Յեվ շոգը ճնշիչ ե, և թիթեղաթե բռուանը՝ անզոր:

Այս, այդ խմբագիրները և այդ հեղինակները: Ինչքան, ինչքան

Հըատ. № 1327

Գրառեալ. № 5246 (բ) Պատ. № 656 Տիրաժ 5000

Գետհրատի յերկրորդ տպարան Յերևանում.

6112-70



Են չարչարում։ Ահա գրչի անփույթ մի զեղում, և ստիպվում են նրանք ըռպեներով թողնել ձեռքերի արշավը, յետ մնալ ընկերներից, լարել տեսողությունը, ավելի կոանալ, խորասուզվել կոտրատված գծիկների մեջ։ Ինչու յեն ստիպում արձիճե փոշիով ոնվող այդ մարդկանց հոգնել այդքան ու լարվել անտեղի, յերբ հուլիսյան արել հեղնում ե թիթեղե թևերը, և յերբ բարակ քամին անդամ կրակի շնչով ե լցնում գրաշարանոցը։

Ահա ձեզ Արտեմը։ Յերրորդ րոպեն ե, ինչ կոացած կանաչ թանաքով ձեռագրի վրա, տքնում ե գտնել ճանձի փոտներով խաղը ըրդված տողում կծկված բառի իմաստը։ Հնար չկա։ Հուլիսյան արել մյուս կողմից։ Նա քամեց Արտեմի ճակատի կնճիռները և հոնքերից խոշոր մի կաթիլ նետեց հենց կծկված այդ բառի վրա։ Հեղուկը խառնեց բառը, լուծեց կանաչ անորոշության մեջ ու բարակ առվակի նման հոսեց դեպի ներքե, ակոսելով տողերը։

Ել ի՞նչպես, ի՞նչպես կարդա Արտեմը։ Ի՞նչպես չջղայնանա ու բորբոքվի։

Ա՛խ այդ խմբագիրները և այդ հեղինակները։

— Աշխատանքի պաշտպանություն, ի՞ն... ել ինչի, ինչի համար ենք ընտրել դրանց, վոր ելի պիտի քոռանանք, վոր ելի պիտի տանջվենք։ Քանի անդամ ասինք՝ եղակիսի նյութեր մի ընդունեք։ Յետ ուղարկիր, յետ, յետ ես նյութը շարողը չեմ։ Վրդովված տող գրաշարապետ վարպետ Ակոբին դարձավ Արտեմը։

— Քանի հետ եմ ասել, քանի հետ...—արդարացավ վարպետ Ակոբը։

— Քանի հետ... Գնում ես Քրիստոսի նման վիզդ ծոռւմ, ու նրանք ել գլխիդ ավետարան են կարդում։ Տար շպրտի նյութի իրանց առաջ ու արի, տես են վախտը հաշվի կառնեն, թե չե։

— Պարզ հայտնի յա, վոր եղակես ել չի կարելի, —ասավ վարպետ Ակոբը։

— Բա եսպես կլինի, համ, —ձեռագիրը շպրտեց Արտեմը։

— Զարչարվողը մենք ենք, նրան ինչ, վոր գնա խմբագրության առաջ վատամարդ լինի։

— Յերկու քաղցր խոսք ասին, գլուխը միքիչ յեղեցին, պլրածավ, ել մեր մասին մատածելը չեքը կոնի։

— Իսկ գու եստեղ քոռացի։

— Նրան ինչ։

Ու վողջ գրաշարանոցը մի բերան դարձած, սկսեց հարձակվել վարպետ Ակոբի վրա, վորպես չարիքի բուն պատճառ։

Միոյի ու Ալեքը համար եյականը հուլիսյան արել չի և վոչ ել գիմաղրող ձեռագիրը։ Այդ բոլորին միացել ե և սաստիկ ցավը, վոր նրանց գլխներում թողել ե գիշերվա անքնությունը և արաղի ու գարեջրի խառնուրդը։ Նրանց աչքերի առաջ տառերը պարում են, ու ձեռները ծուլությամբ են մոտենում տառարկղի փոսիկներին։

Այդ առաջին անդամը չի այդպիսի արաղախան բազմաթիվ գիշերներ ու գլխացավի ցերեկներ են անցկացրել նրանք, այսոր վաշուկի նման հոսեց դեպի ներքե, թիթեղաթե պտուտակի բուոցը դումարիր վրան։

— Ղուզա տեղից ժամումաժ ա գալիս, —դեպի Միոյն դարձավ Ալեքը, —«Լոք-Լոք» Ալեքը։ Բանվորներն այդպես եյին մկրտել նրան և այդպես եյին մկրտել տվել զինին ու արաղը, վորոնք նըրան հազնել եյին տալիս թափթփած ու վոտների հետ քաշ տալիս կարկատած հսկայական, «Լոք-Լոք» չստեր։

— Իմն ել քյալլա-քյաֆես ա գոռում, —ավելացրեց Միոյն։ Ու Փ, ես անտերի գոռոցն ել... Ե, քու հնարողի եսենցն ու ենենցը...»

— Գիշերն ով ա իմանում քանի բոթիլ եք ենտի աշխարն ուղարկել։ Կղուա յել, կըուա յել, բա վոնց, —վրա տվեց Սեղրակը, վորին շատախսոսությունը ոժտել եր «Բոշքողազ» մասսայական ածականով։

— Աչքերիցն արադ ա կաթում, ով ա իմանում ինչքան են վեր առվել։

— Մին, գու են ասա, ելի տրնգի պար եկամր։

— Դե սուսս...»

— Ելի վեր-վեր թռամր։

— Սուս՝ ասինք, Ե...»

— Մի-մի թաս արադ, մի-մի թաս արադ ա գրա իլաջր, —փորձված մարդու տոնով ասավ վարպետ Ակոբը։

— Յես ել եմ ասում, ե՝, —ավելացրեց Միոյն։ Արադի և գլխացավի շուրջն ոկսված խոսակցությունն սպառվեց, և բուռան թիթեղաթելը շարունակեց իրենը։

Արշակը ձեռագրի, ողու և գլխացավի շուրջն ոկսած խոսակցություններին մասնակցեց լոռությամբ միայն։ Նա խորասուզված ինքն իր մեջ շարում եր։ Իր կարդացածից ու շարածից վոչինչ չեր հասկանում։ մեքենայորեն նայում եյին աչքերը և մեքենայորեն շեր գործվում ձեռները։ Քունքերից այտուկըների վրայով իջել եյին յերկու թաց գծեր, վորոնց վրայով հոսում եր գորշագույն հեղուկը։ Նա մտածում եր այն հանձնարարության մասին, վոր նրան

արել եր կոմյերիտմիության բջիջը։ Հաջորդ որը բջիջում պիտի զեկուցեր կոմյերիտմիության ...ըդ համագումարի արդյունքների մասին։ Արդեն ծանոթացել ե յեղած նյութերի հետ և հիմա մըտքում կետեր ե նշանակում, դասավորում կոնսպեկտը, փոփոխում առանձին կետերի տեղերը, մտածում առաջարանի մասին և մեքենայորեն շարժում ձեռները տառարկի փոսիկների ու տառակալի միջև։

Յեվ գոհ ե իրեն արված հանձնարարության համար, և քիչ մտավախ։ Արդյոք կարող կլինի հաջողությամբ կատարել այն։ Արդյոք չի կտրվի, չի կանգնի տրված հարցերի առաջ անպատճախանու։

Արշակը դեռ կմտածեր, գուցե չսթափվեր, յեթե նրա շարվածքի ձեռագիրը չվերջանար։ Թերը յերկարելով կոտրատվեց և մոռեցավ գրաշարապետին նոր ձեռագրի համար։

Ներկա վեպի հեղինակը հավաստիացնում ե իր ընթերցողներին, վոր Արշակը վոչնչով մեղավոր չեր, յերք նրա այդ որվա շարվածքի սրբագրությունը հյուսվել եր բազմաթիվ սխալների ցանցով։ Մտքերը, մտքերը այնքան հեռու տարան նրան, վոր մոռեցավ շարվածքի վրա ուշադրություն դարձնել և դրանից ել այդ շարվածքի սրբագրության թերթի վրա, ինչպես գրաշարներն են սովոր ասել՝ «Հայաստանի քարտեզ» եր նկարվել, մի բան, վորն առիթ տվեց ու յենթարկեց Արշակին կատակի և սրամտության հարձակումների։

— Այ տղա, հո սիրահարված չես, — հանդիմանական տոնով ասավ վարպետ Ակոբը։

— Նոր ա կնիկ առել խեղճը, ել ինչ սիրահարվի։

— Նոր ա կնիկ առել, հա, իհարկե շարվածքն ել եղպես կըլինի, — վրա տվեց «Բոշբողազը»։

— Ես շարվածքն ուղարկենք մամուլի ցուցահանդես, տղերք։

— Զե, կլիշե հանենք ու տպենք պատի թերթում։

— Զե, կպցնենք գրաշարանոցի պատից։

— Զե, ուղարկենք գնահատուկոնֆլիկտալին հանձնաժողովին, թող շարողի կատեգորիան բարձրացնեն։

— Զե, ուղարկենք Սանդրոյին, թող քեֆը գա։

— Զե, ուղարկենք տեղկոմին։

— Զե, ուղարկենք միություն։

— Զե, լավ են ա, վոր Արշակն առնի շուշի մեջ ու կախ տաիրա սենյակի պատիցը։

Յեվ այսպես Արշակը լուռ ե։ Զի պատասխանում վոչինչ իրավացի յե գտնում ընկերներին։ Նրանք վորտեղից իմանան, թե Արշակի մտքում ուրիշ խնդիր ե յեփում։

* * *

Յեթե ընթերցողը ցանկանար, ներկա վեպի հեղինակն այստեղ կընդհատեր գրաշարական առորյային նվիրված իր նկարագրությունը և նրան կառաջնորդեր ու կծանոթացներ տպարանի շատ հետաքրքիր մի անկյունի հետ։

Ահա այդ։

Զրի ծորակի շուրջը, պատի վրա տարածված ու յեղերք ներով մեկ պատի սպիտակ տարածության մեջ սլացող ու մեկ նահանջող տեքստը, յերբեմն սպիտակն ու սեր մոխրագույնով ձուն լող գորշությամբ։ Սա պատահական մուր ու կեղտ չի, և այդ ե, լոր գորշությամբ։ Սա պատահական մուր ու կեղտ չի, և այդ ե, վոր ցանկանում ե իր ընթերցողին ծանոթացներ ներկա վեպի հեղինակը։

Այստեղ, այս սովորական թվացող մուր ու կեղտում, ամբողջ մի պատմություն ե խտացված։ Ցուցամատերով ու բժամատերով մի պատակված և ձեռների ափերով ամփոփված մի հետաքրքիր պատքանդակված մություն։

Ահա, այս հաստ ու սե գիծը, վորն սկսվում ե սպիտակից ու ձուլվում սեռում։ Նա պատահական գիծ չի։ Յեթե ուշագրությամբ քննենք, նա, այդ գիծն, ասում ե — տպագրելուց հետո շարվածքը լավ չեն մաքրում, ներկը ցեխ ե դառնում, կլանում տառերը, ցրելիս ու շարելիս գրաշարի մատները ներկի մեջ շաղախվում են, ձեռները լվանալու համար տալիս են լվացքի հասարակ սապոն, դիմադրում ե, չի մաքրում, և ահա այն հաստ գիծն ասում ե, վոր գրաշարն իր մատը քսել, արորել ե պատին, վոր ներկը գնա, միքիչ ներկից քայի պատին, միքիչ ել մատների կաշուց, ու ներկը մաքրվի։ Յեվ ահա, առանձին մատների այդ գծերը խտացել թանձրացել են իրար վրա ու ստեղծել հետաքրքիր այդ պատմությունը։

Յերբ «շարաշի» զանգը հնչում ե, ներկա վեպի հեղինակը դիտել ե, թե ինչպես կենդանի մի յեռուցեռ ե սկսվում յեղակի այդ ծորակի շուրջը։ Մատներով տրորում են պատը, տրորում սպապոնը, բութ մատով փորում կակուղ սապոնը, ցուցամատը վինափ նման վոլորում մեջը, ափը քսում պատին և կիսամաքուր ձեռներով հեռանում ծորակից։

II

«Տահնում են, աղե՛ ջան, տահնում են...»

Յեվ յեթե ուրիշ նորություն ըիներ, այդ բավական եր, վոր տպարանն առավտայան խոսելու նյութ ունենար։

Գործարկումի նախագահ Յեղիշեյի առաջքաշման լուրն եր։

Արդեն յերբորդ տարին եր, ինչ նա վարում եր գործարանաշյին կոմիտեի նախագահի պաշտոնը. այնքան շիտակ ու բարեխիղճ, այնքան տարված իր աշխատանքով, վոր հիմա բանվորների համար դժվար եր բաժանվել նրանից:

Նրան առաջ ելին քաշում աշխատանքի ավագ տեսչի պաշտոնին. այդ ուրախալի յեր բանվորների համար, բայց միևնույն ժամանակ ուրախալի չեր, վորովճետե գործարկումը զրկվում եր այնքան նվիրված դեկավարից:

— Յեղիշին ել տարան,—առավոտը ցրվածքի հետ սկսվեց խոսակցությունը գրաշարանոցում:

— Յեղիշին տանում են.—մեքենաները յուղելու հետ խոսք բաց արին մեքենայական բաժնում:

— Ափսոս Յեղիշը:

— «Տանում են, ադե՛ ջան, տանում են,
Տանում են, ինձանից հանում են...»

— Լավ տղա յեր:

— Գործից հասկացող:

— Գիծը ճիշտ տանող:

— Հեր որհնածներ, ենակես եք. ափսոսում, կասեք թե խեղճը մեռնում ա, տո տնաշեններ, ավելի մեծ պաշտոնի յա դնում, ե՛...

— Եղ գրուստ ա, համա դու են ասա, կարմնք ենպիսին ձարենք, վոր Յեղիշի տեղը բռնի:

— Կճարենք:

— Դժվար թե:

— Վհնց թե դժվար. կասես Յեղիշն ել մորից եղակես լավ նախագահ ա ծնվել. աշխատեց, սովորեց, ել՛...

— Եղ լավ. յարաք ով կլինի տեղը:

— Մեկը կճարենք:

— Արսենը:

— Զե, Ակոբը:

— Զե, Արտեմը:

— Արշակը:

Արշակը ժպտաց ու գլուխը ծոեց:

— Զե, յես ասում եմ Մեղրակը:

— Ախակը, վերջ տվեք: Բատեղ տեղը չի, պարզ հայտնի լա, ընտրության վախտը կգա, կընարենք, ինչ եք գլուխ տանում,—բարձր շեշտով վրա բերեց վարպետ Ակոբը, վոր մինչ այդ լուռ եր:

Խոսակցությունը մի պահ դադար առավ: Զենների աշխատ շարժումները տակավ առ տակավ լցնում են տառարկղի դատարկված

փոսիկները արձիճե մանրիկ տառերով: Ժամացույցը միապաղաղ բարախում ե:

Ալեքն ու Միոն դարձյալ չկան, ուշացել են: Նրանց տառարկղները դատարկ փոսիկների կույր աչքերով դարձյալ նրանց են սպասում:

— Ելի վեր են տվել,—սկսվեց խոսակցությունը, այս անգամ Ալեքի ու Միոյի շուրջը:

— Դրանց տունը չքանդվի, խմելուց աչք չեն բացում:

— Լավ ել իրար գտել են:

— Նմանն ըզնմանը սիրե:

— Թամամ վոր...

— Ահա, ձերդ մեծություն, բարձրապատճիվ տեր Ալեք, անունը տուր, փետը վե կալ, գու արդեն ժամանեցիր, Լոք-Լոք ախապեր,—վրա տվեց «Բոշբողազը», յերբ Ալեքն ուռած ու կարմրած աչքերով ներս մտավ.—բարե յեկար, Լոք-Լոք ախապեր, բա ուր եմուս թայըդ:

— Դեռ չի յեկել...—ծոր տվեց Ալեքը:

— Զեեե...

— Հալբաթ քնած կլինի, խեղճը գիշերվա սհաթի երկսին տառւն գնացել:

— Իհարկե, գործերը վոազ են:

— Վոազ ասիր, պրծանը:

— Թամամ վոր...

Ալեքը թերը տարածելով ծուլորեն կոտրատվեց, բերանը լայն ծռելով հորանջեց, լեզվով քսեց պապակած շուրթերին, հագավ կապույտ խալաթը ու դանդաղ քայլերով մոտեցավ տառարկղին:

— Ո՞ֆ, ես անտերի բոռոցն ել գլուխ ա տանում, տո, —ծոր տվեց նա և սկսեց հիվանդի ձեռներով վերցնել շարվածքը՝ ցրելու համար:

— Ճանձերն ել հոգի յեն հանում, թուհ, յես ձեր ըսենցն ու լնենցը:

— Բողոքիր Սանդրոյին, թող գա ճանձերը քշի, Լոք-Լոք ախապեր:

— Դե սուս...

— Մեկ ել՝ ասա, վոր գլխացավիդ ճար անի:

— Մուս՝ ասինք, եեե...

— Մեկ ել՝ ասա, վոր մի թաս արադ ճարի, վոր գլխացավդ անց կենա. —գնդացիրի նման վրա յե տալիս «Բոշբողազ» Սեղբակը:

Տպարանի վարիչ Սանդրո Փաշայանը քառասունհինգին մոտ եւ Մազերն ու միրուքն արդեն սկսել են արծաթազոծվել:

Նա Յերևան՝ աշխատելու յեկավ դեռ 1921 թվի սկզբներին, յերբ քաղաքացիական կոփսերի վերջին գնդակի արձագանքը նոր եր լոռում և նախերգանքն եր բայլշկիկյան մոլի շինարարության:

Վարժ ձեռներ: Վարժ ձեռներ ելին հարկավոր: Քաղաքի ամեն մասերից իրար մոտ հավաքված մասնավոր տպարանները մի ամբողջություն եյին կազմել, ու վարժ ձեռներ եյին հարկավոր՝ դորձն սկսելու համար: Յեղած ուժերը քիչ եյին ու վտիտ, և ահա թիֆլիսից աշխատելու հրավիրվեցին վեց բանվորներ, վորոնց թվում և Սանդրո Փաշայանը:

Անհրապույր եր նրանց աշխատանքի նոր միջավայրը: Թողել եյին «քաղաքը», ընտանիք, ավելի լավ բնակարաններ և կես ֆունտ հացով, միքանի չորացած «սելյողկաններով», որ որի վրա իր արժեքը կորցնող կարմրաներկ թղթի մի յերկու բոներով աշխատում եյին:

Աշխատում եյին յեռանգուն ու նվիրված:

Քնում եյին վեցը միասին, մի մոայլ սենյակում: Ամբողջ գիշերը, տպարանին մոտ իրենց սենյակում, ջոկում եյին իրար խառնրված տառերի զանգվածները, «սիպը», ինչպես կասեյին նրանք գրաշարական լեզվով ու ամբողջ գիշերը կատակում եյին և ուրախանում: Ել ինչպես լուսացնեյին անհրապույր գիշերները:

Սանդրոն գործի անցավ վորպես հասարակ գրաշար, ապա ստանձնեց գրաշարապետի պաշտոնը: Գործը լավ գրեց և որինակելի: Կարճ ժամանակ անցավ, նա առաջ քաշվեց վորպես տպարանի վարիչ:

Թե գրաշարության և թե վարչության աշխատանքներում նա տպարանի սիրելին եր: Իր վերին աստիճանի պարզ, կատակող բնավորությունը, աշխատանքի նվիրվածությունը, հարգանքը գեղինույնիսկ ամենաանվորակ աշակերտն ու սե աշխատողը, նրան ավել եր բոլորի սերն ու վատահությունը:

Վառվուն յերիտասարդի նման ճարպիկ ու աշխուժ եր Սանդրոն:

Նրան իր կառավարչական սեղանի առաջ շատ քիչ կարելի յեր գոներ: Շտապ աշխատանք կա, և նա բանվորական խալաթը հագած շարում ե: Ահա նա տպագրական մեքենայի վրա: Ահա նորեկ, դեռատի բանվորի հետ կատակելով ցրվածք ե կատարում: Ահա ավելն ու մի փայտ ձեռին նա մաքրում ե... տպարանի արտաքնոցը:

— Մեծի հետ մեծ ե, փոքրի հետ՝ փոքր, բանվորի հետ՝ բանվոր, նախագահի հետ՝ նախագահ, — ասում եյին բանվորները Սանդրոյի մասին:

Կյանքի մեծ մասը տպարանի արձիճոտ մթնոլորտումն եր մաշել: Զուրկ ընտանեկան քաղցրությունից: Տանը մենակ: Ինքն իր համար և դրսում՝ բոլորի համար:

— Սանդրո, խօ չես պատկում:

— Քեզ պիտի պսակենք, Սանդրո, բոլ ա ամուրի մնաս, — ասում եյին բանվորներն ամեն առթիվ:

— Սիրեկանս Աղեսումն ա, — կատակով պատասխանում եր Սանդրոն միշտ նույն ձեռվ:

Հեշտ ե: — Սանդրո, ինչու չես պսակվում: Հարց տալը հեշտ ե, բայց գիտեն նրանք արդյոք, վոր գրանով տակն ու վրա յեն անում Սանդրոյի սիրտը, ուր թաղված մնում ե նրա սիրային պատմությունը:

Մի անգամ սիրեց Սանդրոն իր կյանքում, և զա յեղավ առաջին սերը, և զա յեղավ վերջին սերը նրա համար:

Դեռ նորահաս յերիտասարդ եր, հազիվ քսաներկու տարեկան: Հանդիպեց կապուտաչյա ու շիկաներ այն սառնուն և սիրեց. Ժպտաց նրա յերեսին, և շիկաներ սառնուն նույնպես ժպտաց: Ժպիտներն իրար վողջունեցին ու սրտերը՝ հասկացան:

Աշխատում եր Սանդրոն տպարանում և մտաբերում ժենային, շիկաներ սառնուն, և աշխատում եր ժենյան անուշարանում, թեյ եր մտառուցում և հիշում Սանդրոյին, կաթ եր մտառուցում և դարձյալ հիշում Սանդրոյին:

Սանդրոն ու ժենյան պիտի ամուսնանային, անպայման պիտի ամուսնանային, բայց ցարական կայսրության այդ դուր չեկավ:

Քեցին: Սանդրոյին կովկասյան լեռնաշղթալից քշեցին տունդրաներն ու տայգաները:

Կայսերական բանակի զինվոր գարձավ Սանդրոն և վոտով չափեց հազարավոր վերստեր: Նոր յերկրներ տեսավ: Կովեց յապոնական ֆրոնտում, հասարակ զինվորությունից ֆելդֆերել դարձավ ու դարձյալ հիշեց ժենյային:

Ժենյան թեյ մտառուցեց, կաթ մտառուցեց ժենիան, հիշեց ու ափսոսաց Սանդրոյին:

Իսկ Սանդրոն իր սովորական վոտներով անցավ հազարավոր վերստեր, տայգաներով ու տունդրաներով անցավ, ստեպներով անցավ ու հիշեց ժենյային: Տարիներ անցան:

Յերբ վերադարձավ կայսերական զինվորը, արդեն տարիներ եյին:

անցել: Յեկավ ծննդավայրը: Աչքին բավական փոխվել էր: Փնտռեց ժենյային ու չգտավ նրան: Հուզվեց, անհանդստացավ:

Հարցը եց ուրիշներից ու չգտավ նրան։
Ուր եր...

Տարիներ անցան, ու Սանդրոն հիշեց Ժենյային:

Տարիքն ել անցնում եր, ել ի՞նչ ամուսնալ:

իսկ հիմա հարցնում են, թե ինչու չի ամուսնում նա...

10

Աանդրոյի գրասենյակում, հենց նրա սեղանի մոտ, սրբագրչի պաշտոնով աշխատում եր նախկին տպարանատեր պարոն Ասատուր Խաչքարյանը:

Այստեղ, ահա այս յերկու սեղանների մեջ խառաված ե գա-
սակարգային հակամաբության ամբողջ մի պատմություն:

Մի մետք այն կողմը՝ տպարանի նախկին տեր ու տնօրեն և այժմ վարձու տեխնիկական աշխատողը, մի մետք այս կողմը՝ տպարանի նախկին բանվոր և այժմ վարիչը, այժմ իրավունքներով ավելի բարձր, քան ինքը՝ «Լուսավորիչ» տպարանի տեր ու տնօրեն պարոն Ասատուր Խաչքարյանը:

— ՀԵՂ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ:

Ել ի՞նչպես որորի վրա չմաշվեր, չհալվեր պարոն Խաչքա-
բյանը:

Նա, վոր միակն եր քաղաքի բոլոր տպարանատերերից, վորը վայելում եր նահանգապետի ու նահանգապետարանի պատվերները կատարելու պատիվը, վորն անձամբ այցելություններ եր անում «նորին մեծություն» նահանգապետին, վորի ցուցանակը նույն ինքը, «նորին մեծությունը» զարդարեց վոսկյա շքանշանով, և վորը վայելում եր ժողովրդական կուսակցության ակնառու դեկավարներից մեկի պատիվը։ Յեվ ահա, այսքան բարձրաստիճան այս մարդը այժմ «ուրիշների կամքը կատարող ե» ու տեխնիկական աշխատող «մի ինչ-վոր» Փաշայանի «ձեռքի տակ»։ Պատկերացնում ես, բնմթերզնող։

— ՀԵյ ժամանակներ։
Նրան միշտ նկատողություն են անում, վոր լավ չի սրբա-
գրում, վոր ուշադիր չե։ Ի՞նչպես, ի՞նչպես ուշադիր լինի նա, յերբ
ներքեռում իր սեփական մեքենաներն են չըխչըխկում ուրիշների
համար, իր փայփայած մեքենաները... յերբ իր սրբագրած տեքս-
տում, ահա, ժպտում են Գերմանիացից, հատկապես նահանգապետի
գործերի համար պատվիրած ուսւերեն հազվագյուտ իր գլխատա-
ռերը։ Ի՞նչպես, ի՞նչպես սառնարյուն սրբագրի և ի՞նչպես «Ա»-ն
«Ա» չերեա նրա աչքին և «Ա»-ն՝ «Ա»։

Խազեցնական դամչէի փոխարեն այժմ տեխնիկական գրիչ են սվել նրա ձեռքը, և նահանգապետի համակրանքի փոխարեն այժմ՝ ի հասարակ գրաշար և կարգադրում նրան։ Այսպիսի մեկը, վորին ա և՛ կարող եր ընդունել իր մոտ աշխատանքի, և՛ վոնդել, և՛ բարձ-ացնել ոռճիկը, յեթե ցանկասար, և՛ իջեցնել յեթե քեֆն ուղիր։

Հիմա նրան ստիպում են իր սեփակառ
ող չըխչըխկոցի տակ ուշադիր աշխատել:

- «Անսիրտ մարդիկ»:

Ամեն անդամ նա վիստում է մեկին, վոր գանդատվի, վոր ա իր ցավը, վոր նկարազրի իր դրությունը։ Չնայած բարեկեցիկ ալլուստին, չնայած Զանգվի ափին նրա համար չխչխկացող ջրացի հասուլթին, նա սիրում է տպարանի կյանքում դեր խաղաղ բանվորների, վարչակազմի ու պրոֆմիութենական աշխատողների առաջ ամեն առթիվ լալ իր «թշվառ» ու «աղքատ» դրույունը։

— Տպարանս առաք, ախալեր, գոնե մի կարգին ոռձիկ տվեք,
որ կարողանամ ընտանիքս կերակրել —ասում են նա հաճախ:

Ուրիշ խորամանկությունն ել եր ստիպում նրան այդպես վար-
ել. նա մտածում եր՝ «յեթե յերեխան լաց չլինի, կաթ չեն տա»,
եթե այդ դրությունից միշտ չգանգատվի, յեթե ռոճիկը չափելաց-
են ել, գոնե այդ դրության մեջ կթողնեն, «չեն կրծատի», 75
ուռըլի կստանա տպարանեց, միքիչ դրանից ավել՝ ջրաղացից, մի-
շիչ դրանից պակաս՝ սենյակների վարձից ու «յոլա կփնա»:

Պարոն Խաչքարյանն է, վոր բոլորովին չի սիրում վհչ ժողով-
երը և վհչ ել ցույցերն ու թափորները, բայց պարոն Խաչքա-
րյանն է, վոր պարտաճանաչ կերպով հաճախում ե թե այդ ժողով-
երը և թե մասնակցում գույգերին ու թափորներին:

Ժողովսերում, մի անկյունում կծկված, լուռ և ինքնամփոփուում ե: Վոչ մի բառ չի խոսում: Քվեարկում ե միշտ մեծամասության հետ: Յերբ ժողովը շուտ ե վերջանում, ուրախանում ե, ասկ յերբ ձգձգվում ե՝ մտքում թունդ հայնոյում: Թափորում ու յուցերում քայլում ե գագաղի յետեկից գնացող հուզարկավորի ման, թթված դեմքով քաշ ե գալիս և մտքում հայնոյում նրանց հետինահենեսին:

Ի՞նչ անի պարոն Խաչքարյանը։ Յեթե իրեն մնար, կլծքեր
այդ բոլոր ժողովսերի վրա յել, ցույցերի ու թափորների վրա յել։
Բայց Ահա այդ բայցն ե, վոր պարոն Խաչքարյանին շպրտում և
ժողովսերի անկյունները ու քաջ տալիս թափորների յետեից։ Բայց
իր 75 ոռոքի ոռճիկը։ Բոնեցին ու կրծատեցին—«թե ժողովսերին

չես հաճախում, թափորներից փախչում ես, թշնամի ելեմենտ ես,
անդիսցիպլինար»։ Պրծավ գնաց։

ԶԵ վոր «անգութ ու անխիղճ դյաղաների ձեռքն ե ընկել»։
Յեկ վերջապես՝ «շան յերեսին ել պիտի ծիծաղել՝ նրանից ոգուտ
ստանալու համար»—կրկնում եր հաճախ իր վաղեմի «իմաստու-
թյունը»։

Յեկ ահա այս յերկու ծայրահեղ բևեռները—նախկին տպարա-
նատեր պարոն Ասատուր Խաչքարյանը և նախկին գրաշար Սանդրո
Փաշայանը աշխատում են այժմ իրար մոտ, մի մետր հեռավորու-
թյան վրա, մեկը՝ վորպես կարգադրող, մյուսը՝ կոտարող, մեկը՝
վորպես բարձրացած դասակարգի առաջավոր մարտիկ, մյուսը՝ վոր-
պես մեռնող դասակարգի բեկորը։

Ա. Ա. Զ Ա. Ն

ՀԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ, ԱՐՃԱԿ, ՀԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ

Աշքերը սուզել ե թավ հոնքերի տակ։ Մտածում ե յերկար,
խորը։ Շփում կնճռոտ ճակատը, սպիտակախառն միրուքը։ Զղայ-
նությամբ վոլորում, տրորում շեկ բեղերը։ Դժվար ե, չի գտնում։
Դարձյալ, դարձալ ե մտածում վարպետ Ակորը։ Չի ոգնում։
Ո՞վ կա հարմար, վոր գործ անի, բան հասկանա, Յեղիշի նման
դրուստ դուրս գա, ամոթով չմնա ու ամոթով չանի։

Բոլորն են խորասուզված, բոլորն են մտածում։ Բոլոր բան-
վորները մեկիկ-մեկիկ անցնում են նրանց մտապատկիրի առաջով։
Զննում են, «թափ տալիս», ինչպես կասեր վարպետ Ակորը, ստո-
գում։ Խիստ, խիստ են ստուգում, ու ամբողջ խորհրդակցությունն
այդ ուղղությամբ ե խորասուզված։

— «Արշակից հարմարը յանի ով կա»—մտքում հարց տվեց
իրեն վարպետ Ակորը.—«Յանի կարա զլուխ հանի, կարա, ճարպիկ
տղա յա, կսովորի. մենք ել քոմակ կանենք»։

— Մեր Արշակը վհնց ա։

— Վոչինչ...

— Վատ չի։

— Լավ ել չի։ Զահել ա, բերանիցը կաթնահոտ ա գալիս. յանի
նա կարա եսքան բանվորության ջուղաբ տալ։ Մեկ ել՝ ընենց
մարդ ջոկենք, վոր տրեստն ել միքիչ քաշվի, մարդատեղ դնի,—
վրա բերեց արտադրական հանձնաժողովի նախագահ վարպետ Ար-
քահամը։

— Խի չի կարա, ինչով ա Յեղիշից պակաս. միշտ ել ջահել-
ներին ըտենց թարս աչքով ես մտիկ անում,—վրդովված վրա
տվեց յենթավարպետ Ասոն։

— Փուշ պոսլոք, մեկ ել դու կարաս, հա։

— Բա ի՞նչ։

— Հա, դե...

— Զահելին ջահել թող ըլի, համա դու ասա ֆանդով ըլի,
բեջարող, աչքաբաց։ Պարզ հայտնի յա, վոր Արշակը ամենքից ել
միքիչ ունի, մենք ել քոմակ կանենք՝ դուրս կդա, — շարունակեց
իր թեկնածուին պաշտպանել վարպետ Ակորը։

— Մեղրակը վհնց ա։

— Հեշ բան։

— Արսենը։

— Վերջ տուր...

— Շատ թամբալն ա։

— Գլուխ պահող։

Փոքր լոռություն տիրեց։ Փակվեցին բերանները, և դարձյալ
մաքերն սկսեցին գործել։ Մտածում են բոլորը։

Վարպետ Արշահամը միենույն ժամանակ ձեռքի մատիտով
սեղանի յերեսի կանաչ թղթի վրա ծուռումուռ տառերով սկսեց
ինչ-վոր բաներ զրել։ Գրեց—Արշակ։ Գիծ քաշեց վրան։ Աեղրակ։
Զսջեց։ Ապա իրար տակ շարեց—

Մեղրակ

Արշակ

Չոփուռ

Բերգին

Բարաջան

Գեղամ

Քյավառցի

Նորից յերկար մտածեց։ Գիծ քաշեց Մեղրակի վրա։ Բերգինի
դիմացը, նույն կոտրատվող տառերով, զրեց՝ ոռւս ա, լեզու չի
հասկանա։ Գիծ քաշեց Արշակի վրա։ Չոփուռի դիմացը խաչ դրեց։
Մտածեց։ Բորեց ճակատը և մի փունջ մազ դուրս քաշելով յու-
ղոտ զիխարկի տակից՝ սկսեց տրորել։ Բարաջանի դիմացը նույն-
պես խաչ քաշեց, ապա մեքենայորեն ջնջեց Բերգին, Գեղամ և
Քյավառցի անունները։

— Ինչքան միտք եմ անում, Արշակից լավը չունեմ, — ասեց
վարպետ Ակորը։

ԶԵ։ Յես ասում եմ՝ յա Չոփուռին տանք, յա Բարաջանին։

Երկուսն ել խելքը գլխին տղերք են,—ծանր տոնով վրա բերեց
վարպետ Արքահամբ:

— Խոսք չունեմ, լավ են. համա են ա փիսը, վոր եղ անտեր
Չոփուռը զրել-կարգալուց լութ ա, սկի տաս տոկոս ել չի բեջա-
րում, այբն ասում ե, թենի վրին նստում: Բարաջանն ել հեշ մի
տոկոսի ակտիվություն չունի, հեն ա իրեք ամիս ա՝ շեֆի նախա-
գահ ենք ընտրել, քանի տոկոսի գործ ա արել: Ակի հինդ տոկոսի յել
չի արել: Ելի մնում ա Արշակը, յես ել համաձայն եմ,—յեզրափա-
կեց «Քյավառցի» Միքիմանը:

— Արշակը:

— Արշակը:

— Ընտրենք, թող եթա:

— Դրանից լավը չունենք:

Խորհրդակցության մեծամասնությունն Արշակին հայտնեց իր
վատահությունը և ցրվեց, մի ժամ հետո խնդիրը բանվորական
ընդհանուր ժողովի քննության դնելու համար:

2

Յերբ քարտուղարն իր մատյանում ստուդեց ներկաներին ու
բացականերին, «Ժողովը բացված» հայտարարվեց, և խոսք առավ
վարպետ Ակոբը:

Ծափահարեցին: Ասենք միշտ ել ծափահարում եյին վարպետ
Ակոբին: Բայց նա սկսեց:

— Ընկերներ, — ցած ու հանդարտ ձայնով ասաց նա, — հմի բանը
նրանումն ա, ախտեր, վոր մեր եսորվա ժողովը հավաքվել ա, զա-
թի գիֆիդ ել պարզ հայտնի յա, վոր մեր սիրելի ընկեր Յեղիշը
առաջ ա քաշվում, ավելի բարձր աշխատանքի, ինարկե, պարզ
հայտնի յա, վոր մենք սրտանց հաջողություն ենք հայտնում նրան,
վոր ավելի առաջ գնա ու մեր իրեսը սիպտակ անի: Պարզ հայտնի
յա, վոր մենք նրան պահել չենք կարող, սկի իրավունք ել չու-
նենք քար զցելու նրա առաջեթացման դեմք. հմի մենք հավաքվել
ենք, վոր առաջինը «բարի ճանապարհ» ասենք մեր սիրելի Յեղի-
շին, վրա յերկրորդն ել՝ մեզ համար գործարկումի նախագահ ջոկենք:

Նա սրբեց քրանած ճակատը և շարունակեց: — Հմի, ախտեր,
Յեղիշ ջան, բարի ճանապարհ քեզ, աջողություն, մեր իրեսը սիպ-
տակ արա: Պարզ հայտնի յա, վոր մենք քեզ չենք մոռանա, դու
յել մեզ չմոռանաս:

Փոթորկալի ծափահարությունները յեզրափակեցին վարպետ
Ակոբի ճառը: Ծափահարում եյին թե խոսողին և թե բանվորներին
այնքան սիրելի Յեղիշ Զաքարյանին—գործարկումի նախագահին:

— Հմի, ընկերներ, մեզ պետք ա ջոկել մի նոր նախագահ:
Ի՞նչ կասեք, ախտեր... եսոր մենք շատ միտք արինք, շատ վեկա-
լանք, զրինք ու Արշակ Հարիկյանից հարմարը չգտանք: Զեզ ել
պարզ հայտնի յա, վոր գրանից լավը չունենք:

— Լավ ե:

— Լավ ե:

— Իսկն ե վոր կա:

— Ուրիշը չունենք:

— Ընչի չունենք, բա «լոք-լոք» Ալեքը ինչ ա, — վրա բերեց
Արտաշը, վորին շատախոսության համար կպցրել եյին «բոշբողազ»
ածականը:

— Ալեքը գործարկումի չե, բայց լավ միկիտանկումի նախա-
գահ կըլի, — ավելացրեց կոմյերիտուհի Սիրուշը:

— Ընչի մե կիում չեք առաջ քաշե... հըմ... — ծոր տվեց գը-
լուխը տաքացրած Սիրական կոստանովը:

— Մասնավոր միք խոսա, — սաստեց վարպետ Ակոբը, — Արշակ
Հարիկյանին գեմ խոսող չկա:

— Լոք-լոք Ալեքին ընտրենք, լոք-լոք Ալեքին, — նորից բացա-
կանչեց «բոշբողազ» Արտաշը:

— Ասինք՝ մասնավոր մի խոսեք:

— Մասնավոր չի, պետական ա, — վրա տվեց Արտաշը:


— Դե սաւո, իշի քուռակ, — բամբեց գլխին «քյավառցի» Մի-
քիմանը:

— Հմի յես քվեարկում եմ. ով վոր համաձայն ա, վոր ընկեր
Արշակին ընտրենք մեր նախագահը, թող ձեռք բարձրացնի:

Փողովի ճնշող մեծամասնությունն իր վատահությունը հայտ-
նեց կոմյերիտական Արշակ Հարիկյանին, այդ յերիտասարդ ու հա-
մեստ բանվորին, վորը քրանած ու ամոթից կարմրած, վիզը քիչ
ծոած, կանգնել եր մի անկյունում և խորը միտք եր անում:

Բոլոր աչքերը նրա կողմն եյին սեեռված: Դեպի նա եյին
ուղղված բազմաթիվ հայացքներ: Այդ հայացքները, այդ աչքերը,
ո, նրանք ստուգում են, նրանք խիստ են, պահանջկոտ: Խկի դու
վճնց, Արշակ, կարող կլինես նրանց գոհացներ կարող կլինես այդ
բազմաթիվ աչքերից խրախուսիչ ժպիտներ շահել: Կարող կլինես
աշխատել այսպես, ինչպես Յեղիշը, վորին այսոր այնքան, այնքան
խանդավառ կերպով ծափահարեցին, այնքան մտերմորեն ժպտա-
ցին բազմաթիվ դեմքեր: Կարող ես դու այդ, Արշակ:

«Կարող կլինեմ, յես կաշխատեմ...»



Գործարկոմի գրասենյակում արդեն յերրորդ ժամն ե, ինչ Յեղվարձնում, իսկ Արշակն ստանձնում է գործերը:

Ինչպես ուսուցիչն առաջին խմբում նորել աշակերտին խնամքով բացատրում ու հասկացնում ե, վոր յերեք ակուա ունեցող տառը ա յե կոչվում, տիմպես ել Յեղիշը մանրամասնորեն բացատրում է Արշակին գործերի ամեն մեկի տանձնահատկություններն ու կողմերը, իսկ Արշակը՝ տեղով լսողություն դարձած, միտքը լարած, հետեւում է Յեղիշին ու զանազան նշանակումներ անում ծոցատերում:

Յերբ ավարտեցին, լավ հոգնել եյին: Յեղիշը թևերը տարածելով կոտորատվեց, իսկ Արշակը կարեռ ու ընթացիկ գործերը հավաքելով թղթապանակի մեջ, խնամքով կապեց յերեք կողմի սև ժապավենները և վերցնելով այն, դուրս յեկան:

Ինչքան են նստել: Ինչքան ժամանակ ե սահել: Արդեն խավարն իջել, թանձրացել ե քաղաքում, ելեկտրական պայծառ լույսերն են փայլվում, ուր սովորական անցուդարձը նվազել ե քաղաքի լայն և ուղղաձիգ փողոցներում:

Իրար խաչաձեռղ փողոցի անկյունում նրանք կանգ առան:

Յեղիշը, քիչ տարորինակ եր գուցե, բայց պինդ կերպով սեղմեց Արշակի ձեռը և ասաց հուզված:

— Հաջողություն, Արշակ, հաջողություն:

— Կաշխատեմ, — պատասխանեց Արշակը նույնպես հուզված:

Նրանք բաժանվեցին մեծ ելեկտրականի պայծառ կաթնալույսի տակ, Յեղիշը գնաց աջ, իսկ Արշակը՝ ձախ:

* *

— Հաջողություն, Արշակ, հաջողություն:

Գնում ե Արշակը: Հուզված ե: Ուրախությունն ու կասկածը պայքարում են ներսում:

Առաջինը հրահրում ե: Արշակը շուռ ե գալիս, նայում է թղթապանակին: Հուզվում ե:

— Հաջողություն, Արշակ, հաջողություն, ասում ե առաջինը:

Յերկրորդը կրծում ե անընդհատ, կրծում ե միտքը, լուսավորում ե միտքը լուսարձակի նման ու այդ լույսի տակ ցուցադրում յերեկվա բազմաթիվ հայացքները, վորոնք խիստ եյին, վորոնք պահանջուտ եյին: Վոչինչ չզիջող:

— Իսկ գու, Արշակ, կարսղ ես, — ասում է յերկրորդը:

Մինչ առաջինը թեթևորեն, առանց աշխատանքի ու հաջողության հեռանկարներ գծելու, կրկնում ե.

— Հաջողություն, Արշակ, հաջողություն:

Բայց լսի Արշակը, ում հավատա: Դեռ անփորձ ե, այդ ճիշտ ե, բայց չե վոր բոլորն ել սկզբում այդպես են լինում: Հենց ինքը, Յեղիշը, յերեք տարի առաջ ինչ եր վոր, չե վոր նա յել հասարակ բանվոր եր, իր նման: Առաջ քաշեցին, աշխատեց. սկզբում ենքան ել չեյին հավանում, ճիշտ ե, բայց նա կամաց-կամաց իրեն գտավ ու վոնց առաջ տարավ աշխատանքը: Իսկ հիմա ծափահարությամբ են բաժանվում նրանից:

Չե, Արշակ, պետք ե լինել վճռական, պետք չե վախենալ, պետք ե լարել բոլոր ուժերը և առանց մի պահ կասկածելու աշխատել: Այս, Արշակ, այդպես պետք ե վարվել, և այն ժամանակ դու կարող կլինես, և հաջողությունը քեզ հետ կլինի:

— Հաջողություն, Արշակ, հաջողություն, — այս անգամ ավելի համոզիչ եր ուրախությունը:

* *

Վերգուշը վրդովմունքով բաց արեց դուռը. Արշակն առանց նախագգուշացնելու այդքան ուշացել եր:

Իսկ Արշակը ժպտալով ներս մտավ:

— Կարող ես շնորհավորել «տիկին», — ասավ նա, աչքերը շուռ տալով դեպի թղթապանակը և ժպտալով:

— Ոհա, արդեն մեծ մարդ ես դառել, ել վոնց հետդ խոսենք, «աղա», — վրդովմունքը ժպիտի փոխելով ավելացրեց Վերգուշը: Նա ձեռքիցը վար դրեց ընթերցանության գիրքը և գնաց ամուսնու հանգեց:

Իսկ Արշակն ուղղակի փաթաթվեց նրան, շոյեց գլուխը, գորկեց ամուր ու համբուրեց:

— Իմ լավ Վերգուշ:

Վերգուշն զգաց, վոր նա այսոր ավելի տարորինակ ե ու հուզված: Ավելի ամուր ե գրել իրեն և փաղաքշում ջերմորեն:

— Արդեն ստացած գործերը:

— Ստացած...

— Իմ լավ Արշակ, դե, աշխատիր, շատ աշխատիր, վոր ամութով չմնաս:

— Կաշխատեմ, Վերգուշ, կաշխատեմ:

Նրանք նստեցին իրար դեմ ու տարորինակ կերպով իրար են նայում, անթարթ աչքերով:

— Յես արդեն ընթրել եմ, — ասավ Վերգուշը, — շատ սպասեցի քեզ, չեկար. իսկ գու թեյ ուղղում ես:

— Տնւր...

Վերգուշը, կուչ յեկած մահճակալի մի անկյունում, շարունակում եր ընթերցանությունը։ Բավական կարդաց։ Բայց աչքերը փակվում են, ու գիրքն ընկնում ե ձեռքից։ Թողեց գիրքը, հանվեց ու քնեց, առանց խանգարելու Արշակին, վորն ինքնամուսացության հասած աշխատում ե։ Կարգում յուրաքանչյուր թղթի կտորը, մածում, նորից նշանակումներ անում ծոցատեարում, ու այսպես անվերջ։

Մեկ-մեկ հոգնած գլուխը վեր ե բարձրացնում, դիտում շուրջը՝ պատերը, առաստաղը, ապա նրա հայացքը կանգ ե առնում Ստամինի դեմքին, վորը նրա սեղանի վերևից, խուզարկու աչքերով։ ասես ստուգում ե Արշակի յուրաքանչյուր շարժումը։

Յերբ վերջին թղթերն ե նայում, արդեն իր ձեռքի ժամացույցի ոլաքները յերկուսին են մոտեցել։ Ուշ ե, պետք ե քնել-չե վոր առավոտյան գործարանում անշափ գործ ունի Արշակը։ Հանվեց։

* * *

Բայց ինչպես, ինչպես քնի Արշակը։

Քունը աչքերին մոտ չի գալիս։ Զղայնանում եր Փակում աչքերը, բայց մտքերը կինո-եկրան են դարձել ու պատկերներն իրար են հաջորդում։

Շուռ ե գալիս աջ կողքին, շուռ ե գալիս ձախ, պառկում կը ունակի վրա։ Նորից շուռ գալիս, կրկին յետ դառնում։ Ոգուան ինչ Մտքերը չեն կանգնում։ Կինոն գործում ե։

Իսկ քանի մասից ե այդ կինոն, ինչքան անվերջ են իրար հաջորդող պատկերները։ Այս ինչ ձե ե։

Ահա։

Բազմամարդ ժողովը, բազմաթիվ աչքեր սուր նիզակների պետքեպի Արշակն են ուղղված, նրանք պահանջկոտ են, գործ են ուղում։ «Թե չես կարա, վեր դիր»,—բղավում ե Միրիմանը։ «Քո ինչ գործն ա ըսենց բաների հետ, դու հլա զնա հաց կեր»,—ասում ե Բուքողազը։ «Յես քու ըսենցն ու ընենցը, դու ինչ ես, վոր մեր գլխին մեծ դառնա»,—հարբած ծոր ե տալիս «լոք-լոք» Ալեքը։ Բայց ահա, բոլորի միջից յելնում ե Յեղիշը, ծափահարում են, ուռուա, ուռուա յեն կանչում։ Միրիմանն ել ծափահարեց, Արտաշն ել։ Յեղավ Յեղիշը բոլորի միջից, յելավ ծափերի տարափեասակ, ձեռքը յերկարեց Արշակին, ուժեղ սեղմեց և ասավ։ — Հաջություն, Արշակ, հաջողություն։ — Հաջողություն ենք հայտնում,

ավելացրեց վարպետ Ակոբը, և բոլորն սկսեցին նորից ծափահարել։
— Հաջողություն, Արշակ, հաջողություն։
— Իմ լավ Արշակ, դե, աշխատիր, շատ աշխատիր, վոր ամոթով չմնաս, — բոլորից հետո յելնում ե Վերգուշը։
— Հաջողություն, հաջողություն...

Կրկին ծափահարեցին, ծափահարեցին բոլորը, իսկ «լոք-լոք» Ալեքը իր անձունի լեզուն ցույց տվեց միայն։

Բայց ելի, ելի յեն հարձակվում Արշակի վրա։ Ի՞նչ իրավունքով, ի՞նչ եք ուղղում Արշակից, նա սմբողջ ուժով ու նվիրվածությամբ աշխատել ե, վոչ մի գործ թերի չի թողել։ Ի՞նչու յեք անարգում նրան, ինչու յեք խում թղթապանակը, այս եր ձեր գնահատականը։ Ախըր, «լոք-լոք» Ալեք, յես ի՞նչպես քեզ խոսք համկացնեմ։ Արիկա, շատախոս Արտաշ, միթե վատ եմ արել, վոր պգուշացրել եմ քեզ, վորպեսզի վոխես քո վարմունքը։

Ահա, կրկին վարպետ Ակոբ։ Ի՞նչքան ժպտուն ե, պարագա։
— Ի՞նչ, ով ա հարձակվում Արշակի վրա... ով ա թույլ տաշմիս։ Արշակը լավ, շատ լավ աշխատեց, ընկերներ, այդ պարզ հայտնի յա բոլորիդ եւ, պետք ա շնորհավորենք։

Ծափահարում են բոլորը։ Բազմաթիվ հայացքներ, ժպտուն, ուրախ հայացքներ շեշտակիորեն վողջունում են Արշակին։

Նորից բոլորի միջից յելնում ե Յեղիշը, ծածկում բոլորի դեմքերը, հսկայական հասակով տարածվում, կանգնում ե ելեկտրական կաթնալույսի տակ ու սեղմում նրա ձեռքը, սեղմում ուժգին, ժպտում մտերմաբար ու խրախուսում։

— Հաջողություն, Արշակ, հաջողություն։

— Ի՞նչ միջավայր ե նկարագրված Ալազանի պատմվածքներում։
— Վո՞րն ե այդ սիջավայրի հատկանշական կողմը։
— Բնորոշեցեք նրա նկարագրած բանվորներին առանձին-առանձին։
— Կա՞ն արդյոք նրա նկարագրած բանվորների շարքում դրական յեղացասական տիպեր։

— Մտացվում ե արդյոք նրա նկարագրությունից խորհրդային գործարանի ամբողջական պատկեր։

— Ի՞նչ դրական յեղացասական կողմեր ունի Ալազանի յեզուն։
— Կարելի՞ յե արդյոք այդ լեզուն անվանել ժամանակակից բանվորական լեզու։

— Հավանում եր նրա պատմելու յեղանակը։

— Այս պատմվածքների հիման վրա կարելի՞ յե արդյոք Ալազանին համարել ժամանակակից պրոլետարական գրող։

ՀՈՎԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ

ՏՈՆՆԵԼԻ ՃԱՄՊԻՆ

I

ՄԵծ տոննելի փորումը զեռ չեր սկսվել։ Ոժանդակ առաջին տոննելի փորման ավարտումը մոտ եր, և յերկրորդի համար նախապատրաստական աշխատանքներ եյին կատարվում։ ՄԵծ տոննելի բերնից, ջրամբարի մոտից՝ գետափով, յերկաթակուռ բարձր ժայռի պուռնկով կառուցվում եր խճուղի։ Խճուղին ջրամբարը կապելու յեր եւ լեկտրոկայանին։ Իսկ յերկրորդ ոժանդակ տոննելի փորումն անհնարին եր առանց խճուղու կառուցման։ Տոննելլ պետք ե փորվեր գետաբերանը բռնած յերկար ու բարձր պարսպած ժայռի կրծքից։ Այն կետը, վորտեղից պետք ե փորվեր յերկրորդ ոժանդակ տոննելլ, վայրի այծերի համար անգամ անմատչելի յեր։ Մարդը վորտեղից եր կարող բարձրանալ այնտեղ։ Դրա համար եր, վոր խճուղու կառուցումը շտապեցվում եր, հրատապ եր։

Խճուղու կառուցման աշխատանքը չտփագանց վտանդավոր եր, մարդկային զոհերն՝ անխուսափելի։

Ահարկու վտանդն զգում եյին թե բանվորները և թե մասնագետները։ Բայց բնավ չելին սարսափում։ Զե՞ վոր նոր աշխարհ են կառուցում։ Այդ հայտնի յեր բանվորներին, մասնագետներին։

Չորագետում սովորություն եր գարձել, բոլոր վտանդավոր աշխատանքներում առաջին հերթին հանդեռ եր գալիս իվանը։ Մահարհամարհելով նա մտնում եր վտանդի ծովս ու կուռ բազուկներով ամեն մի գժվարություն հաղթահարում։

Իվանը յերբ մի ծանր գործ վերջացնում եր ու մահվան ողակից դուրս գալիս, ուրախությունից ուզում եր լաց լինել, նա վառ հայցքը սեեռում եր վիթխարի ժայռերին, անդնդախոր, քարակող ձորին, արծաթափրփուր գետին ու բացականչում։

— Տղերք ջան, հընկերներ, լոռեցինե՛ր, յես ձեր ջանին մատադ, նամառու արեք։ Ես ա հա՛, միքանի տարուց յետ մեր քրտնքի պտուղները հասած կտեսնենք։

Ու նա պատկերացնում եր Չորագեսի կառուցումն ավարտվածք չիդրոկայանը, գործարանները, ելեկտրական յերկաթուղին ու դրանց

ճյուղերը՝ մյուս մանր ձեռնարկները դպրում են, Լոռին յերկաթափորփել ե։

Ավագ բանվոր եր իվանը, բայց միշտ սկ աշխատանք եր կատարում։ Նրա համար բոլոր աշխատանքները միատեսակ եյին։ Իրեն, իվանի համաձայնությամբ եր, վոր շրջանի ղեկավարը վերջին շաբաթը նրան առաջին ոժանդակ տոննելից փոխադրեց խճուղին։ Իսկ խճուղու կառուցումը հասել եր շատ վտանդավոր մի կետի։ Առաջ շարժվելու հնարավորություն չկար։ Պետք ե յերկու կամ յերեք մարդու, մոտ քառասուն մետր բարձրությունից, պարանով կախելին, վարում լաղում պայթեցնելու համար։

Մրտոտություն ու նվիրվածություն եր պահանջվում։

II

Ուրբաթ յերեկոյան եր։ Մութը զեռ չեր պատել։ Լոռվա բարձրանիստ սիրուն լեռները նոր հյուսված կանաչ քողերի տակ քաշված՝ թագուն նայում եյին իրար, կապույտ յերկնքին, աշխարհին, մարդկանց։ Կանաչաշող սարերի լանջերում նշամարվում եյին քառլծանի, հինգլծանի և վեցլծանի դութաններ։ Գութանավորների քաղցըը հորովելլ մթնշաղի կապույտ ալիքներում արծաթահնչյուն զըրընդում եր։ Գութանները յերկե վերջին ծիրն եյին դուրս գալիս։ Յերեսում եյին նաև վոչխարի և կովերի հոտեր։ Կովերի բառաշն ու հովիմսերի սրնգի ձայնը սիրտ եր դյութում։ Հովվական Լոռում մայրամուտն անշափ գեղեցիկ եր։

Իսկ արդյունաբերական Լոռում լուսաբացը սիրտ գերող կլինի։ Իվանը հենց այդ գեղեցիկ մայրամուտին վիթխարի ժայռի մեջ՝ քով գոտկանման նուրբ փարփած մի նեղ գծում կանգնած դիտում եր վար, անդունդը։ Նրա կանգնած կետից եր, վոր մարդիկ պետք ե վար կախվեյին լաղում պայթեցնելու համար։ Իվանի նեղ ձականին կնճիռներ չկային, նրանք բացվել եյին, միայն յերեք թե չորս նեղ գծեր թողել։ Իսկ խիս հոնքերը ծանր նստել եյին աշքերի վերել։

Իվանը մտածում եր վարում գինամիտ պայթեցնելու մասին։ Յերեսուն տարին բոլորած, հասունացած յերիտասարդ եր նա, քարի պես ամուր կագմվածքով։ Մարմնի փոքրությունն իվանին յերեկ աշխատանքներում չեր խանգարում։ Նրա կարճ ու լիքը մարմնին նայողը կլարծեր, թե կուռ քարի կտոր ե ընկած։ Տասնչորս տարվա քարհատական աշխատանքներն իվանին քար եյին դարձել։ Իր ամբողջ հմտությունն ու փորձերը նա մտածողության դաշտն

եր հավաքեր խորհում, քննում, դատում եր,—ի՞նչ անել, վոր դորձը գլուխ գա:

Իվանի մոտ բարձրացան տեխնիկ Ֆյոդորովը և բանվոր Ալեքսանը:

Իվանը ժպիտով ընդունեց նրանց ու վորպես Ֆյոդորովի արշած վողջույնին պատասխան՝ գլխով արավ:

Ալեքսանը յետեից Իվանի հաստ ուսերից բանեց: Իվանը Ալեքսանին շատ եր սիրում: Իվանն Ալեքսանին սիրում եր նրա ճարպիկության ու քարերի դեմ հմտությամբ կովելու համար: Նրանք յերկուսով միշտ կատակներ եյին անում:

— Ալեքսան, — Իվանը խիստ ու կտրուկ խոսեց:

— Բա, բա, բա...կպայթի...հեռան...— Ժպտաց Ալեքսանն ու մի կողմն անցավ: Նա գիտեր, վոր Իվանը հենց այդ վայրկյանին մի մակույկ ե՝ մտքի փրփրաբերան տլիքների գիրկն ընկած, գիտեր, վոր ընկերոջ տրամադրությունը վատ ե, խաղաց, փորձեց նրան ծիծաղցնել, բայց չեղավ:

Ֆյոդորովը լուռ եր, նրա ոռւսական վճիռ, լազուրաշող աչքերում կարելի յեր կարգալ այն ամենը, ինչ վոր մտածում եր: Կարծես թե նրա աչքերը լեզու առած աղաղակում եյին.

— Ի՞նչ անենք, վոր անվտանգ, առանց մարդկային դոհերի դուրս գանք այս փակուղուց: Յերբ կլինի, վոր ահարկու այս խութը կպոկենք:

Մերթընթմերթ ծտերի քնքուշ ծլվոց եր բարձրանում: Մոտակա գյուղերից շների լալուշ եր լսվում: Զորը հետզհետե խավարով լցվում եր:

— Սարգիս, Հանես, Մուրքել, Թևան, — տեղի լուռթյունը խախտելով բարձրածայն կանչեց Իվանը, — յեկեք, արա, դե յեկեք ե:

Զորս ըռպե չանցած մոտ քսան հոգի խճուղու կողմից բարձրացան վեր:

Նրանք բարձրանում եյին և սարսափով նայում դեպի ձորն ու վիթխարի պատմեշածե ժայռին, վորի կուրծքը պետք ե պատովեր:

Յերբ բանվորները հավաքվեցին, Ֆյոդորովը հազաց, կոկորդը մաքրեց ու դիմեց բանվորներին.

— Ընկերներ, ինչպես գիտեք, տեխնիկական հետազոտությունը յեկել ե այն յեզրակացության, վոր առաջ գնալու միակ յերը ձորի վրա ուղղահայց պատմեշ կանգնած ժայռի կուրծքը պատռեն ե: Յեթե փորձենք ներքերից պատ կանգնեցնել, հաղար հոգով յերեք ամսում չենք վերջացնի: Գործը կդանդաղի: Գիտեք, վոր այդ շատ թանգ կնստի մեզ վրա: Մենք պետք ե բարեխսդորեն մտա-

ծենք: Մեզ համար ենք աշխատում: Զորագեսը մեր սեփականությունն ե: Շատ վտանգավոր կետի յենք հասել, բայց հույս ունեմ և համոզված եմ, յեթե զգուշությամբ շարժվենք, վոչինչ չի լինի: Անփորձ գուրս կդանք այս անպիտան փակուղուց: Յես դըմարանում եմ մեկ կամ յերկու ընկերոջ առաջարկել, թե վար իշեք: Մենք բոլորս ել պետք ե շահագրգոված լինենք մեր սեփական պետության գործերով: Ըստամենը պետք ե տասը լաղում պայմեցնենք: Ընկերներ, նրանից հետո աշխատանքը կթեթևանա: Կարիք չի զգացվի վերից մարդ կախելու: Ո՞վ ե համաձայն ինձ հետ իջնելու, յես...

Լազուրափայլ աչքերով, սուր, յերկար ու մազոտ դեմքով, գուց քսաներեք տարին չբոլորած տեխնիկը վերջին բառն ասելուն պես մարմնի ցնցում զգաց ու դողաց: Նրա մեջքի կորությունը ձգվեց, ուղղվեց, ու վորպես մարմարե քարի հոյակապ արձան անշարժ դիտում եր բանվորներին:

Բանվորները շարժվեցին: Փայով յերեսին փոված խճերը նրանց վոտքերի տակ խուլ ու աններդաշնակ խշխացին: Գետի հոսանքին գուղընթաց, ձորնիվար սուլող գարնանային պաղ բամբին Իվանի ճակատին նստած յերկար մազերի փոնջը գիրկն առած խաղացնում եր, փոփոացնում: Ընկերների լոռությունն Իվանին ճնշում եր, սիրտը թեժ կրակի պես այրում, իսկ պաղ քամին միայն ճակատն ու գեմքն եր հովացնում: Քամին անկարող եր թափանցել Իվանի վառվասպ սիրտը:

Լուռ եր նաև Ալեքսանը: Անզլխարկ գլուխը կախ, վոտքի ծայրով խճերը դես ու դեն եր շպրտում ու թագուն Իվանին նայում: Նրանց հայացքները բնակ իրար չեյին հանդիպում, բայց մտքով խոսում եյին իրար հետ, սրտով համաձայնության եյին զալիս:

Միքանի հոգի մոտեցան պատմեշին, ներքե նայեցին ու յետ դարձան:

Իվանը մուայլ, ունքերը խոժուած, պուշներն ատամների տակ կրծոտելով կանգնեց ու յերկու ձեռքը մեջքին դնելով՝ բղավեց.

— Հընկերներ, խայտառակվեցինք...մեռնելն ապրելուց լավ ա... Հընկերներ, յես մեզ մարդ ասողի են... Այ, մենք սրանով շանց ենք տալիս, վոր տղամարդ չենք: Աննամուս մարդը յերկու շահի չարժի...դուրս ա գալիս, վոր ըստեղ օանի մարդ կա, բիրադի յել աննամուսներ են... Ժողովներում մեծ-մեծ խոսում ենք, հարցնում են, ասում ենք՝ բիլեթ չունենք, համա մեզանից լավ բայլշեիկ չկա: Քիչ ա մնում ասենք՝ մենք հընկեր լենինից ել լավ ենք: համա խաթառուահաթին յետ ենք փախչում: Հա, հա, հա եմ տալիս, բալշեիկ

եմ...Հընկերներ, ախր բալշեկ խաթալու սահաթին մեռնելուց վախում չի:

Իվանի ձայնը թրի պես կտոր-կտոր եր անում լսողների սըրտերը: Նրանք բոլորն ել ամբողջ մարմնով դողում եյին: Նրանց վըրա ազգում եր Իվանի կապտած դեմքը, բառերի դղրդյունը, նրա հուժկու ձայնը: Իվանը միքիչ հանգիստ շարունակեց:

— Հընկերներ, գործը խաթալույա, համա չպետք ա վախենանք: Եգուց պետք ա են քարափի սիրու հանենք: Մեր յերեխաների համար բախտավորության դուռն ենք բաց անում: Մենք հընկեր տեխնիկին թողար չենք կախ ըլի: Եգուց ըուավոտ մկ ա ինձ հետ:

Նա ասեց ու թափանցող հայացքներով փորձեց ընկերներին մեկ-մեկ բռնել: Բոլորն ել խուսափում եյին Իվանի հայացքներից, միայն Ալեքսանն եր, վոր ժպտաց ու տեզիցը ցատկեց:

— Յես: Իվան, յես քեզ մենակ չեմ թողնի:

Հետո մյուսները բարձրածայն աղաղակեցին: Մինչ այդ նրանք մի տեսակ քարացած եյին: Ալեքսանի «յեսը» քարացած վիճակից նրանց հանեց:

— Յես,—ձայն տվավ յերկրորդը:

— Յես,—բղավեց յերրորդը:

Յեվ բոլորն ել «յես» կանչեցին ու ժպտացին:

— Յես ու Ալեքսանը,—վորոտաց Իվանի ձայնը:

— Ուռուա, ուռուա, ուռուա,—խրոխտ ու հպարտ հնչեց Ալեքսանի ձայնը:

— Ուռուա, ուռուա,—գոչեցին մյուս բանվորները:

Տեխնիկ Ֆյոդորովը, քաղցր ժպիտը շրթունքներին, մոտեցավ, Իվանի գլուխը գրկեց: Իվանը կիսախավարի մեջ հազիվ նկատեց տեխնիկի ժպիտը:

— Ընկերներ, մուժը ընկնում ե, խավարը պատում, ել չենք կարող գնալ, շուտ արեք,—նեղ արահետը բռնելով ասեց մի բանվոր:

— Հա, տղերք ջան, գնանք,—ասեց Ֆյոդորովը—միմիայն խընդրում եմ՝ զդուշ:

Խճերի խշացոցը սաստկացավ: Նրանք շարժվեցին: Չորը խավարով լիքն եր: Չորազյուղի կատարում վոսկեփայլ շողում եր ուշացած լուսնի լույսը: Մոտակա գյուղերում ճրագներն անշուք, կիսախավար աստղերի պես պալղում եյին:

Գետը խելագար մնաչում եր:

III

Վաղորդյան լույսը բաց լուսամուտներով խրճիթի ներսն ել թափանցել: Պարզ կահավորումով խրճիթ եր, յերկու թախտ, մեկ որորոց, մեկ սեղան, թարեք, թարեքին ամանեղեն շարած ու նկարազարդ մի պատ՝ լենին, կալինին, Ռիկով, Ստալին, Շահումյան և մի շարք այլ պլակատներ:

Իվանը գլուխը վերմակի տակից հանեց ու դուրս նայեց: Հետո նա նայեց նկարազարդ պատին, պատից նայող ընկերներին ժպտաց, աշխուժացավ ու անկողնից դուրս յեկավ:

Իվանը սառը ջրով լվացվեց ու դուրս յեկավ բակը: Կինը վաղուց եր արթնացել: Վոսկին տունը, բակը և սրահը սրբել եր ու ջրի գնացել: Իվանը բակ դուրս յեկավ այն ժամանակ, յերբ Վոսկին կուժն ուսին տուն եր հասել:

— Վոսկի ջան, հաց շինի, յես յետ կընկնեմ, կանուխ արա:— Հետո շուռ յեկավ նա բակում ու հայացքներով սկսեց քննել շուրջը: Միհարկանի ցածր խրճիթ, դուանը՝ Սաքուլ շունը կապած: Իվանը շանը նայում եր գգվանքով ու սիրով: Շունը շոյվեց տիրոջ կողմից ու պոչը շարժեց: Իվանի սիրու թրթռաց: Մոտեցավ շանը և զլուխը շոյեց: Շունը կրկին կանչեց ու մաթաթվեց Իվանի վոտները:

— Սաքնւ, ոյադ կաց, գիշերները տունը լավ պահիր:

Սաքուլը պոչը շարժեց ու ժպտաց:

Իվանը գնաց: Արել աղեղաչափ դիմացի սարի կանաչ ուսից դուրս եր յեկել: Գյուղը կենդանի, բանուկ վորոտում եր:

Վոսկին յերկար, շատ յերկար նայում եր ամուսնու յետելից:

— Յերբ յետ կղառնա...Յերբ կմթնի յերկար որը...

IV

«Իվանն ուշացավ: Նշանակում ե նա գործից խուսափում ե: Յես յերբեք չեյի յենթաղը, վոր Իվանն այդ քայլը կանի, խոստանա և չկատարի: Խարի: Վախենում ե: Գուցե հիվանդացել ե. ինչու յեմ մարդուն զրպարտում: Ազնիվ խոսք, յես կխելագարվեմ: Յեթե մինչև մի շաբաթ չվերջացնեմ այս գետի հարթումը, լավն ե, վոր ինքնասպանություն գործեմ: Խայտառակություն ե. թեկուղ իմ արյան դնով, պետք ե գործն առաջ տանեմ: Ոհ, Իվանը չեկավ: Յերեի վախենում ե: Կինն ալրի կմնա: Ի՞նչ բանվորներ են սրանք, պլուխտարական վոգին վորտեղից ե սրանց: Վեց ամիս բանվորություն են անում, վեց ամիս՝ գյուղացիություն: Իվանի գեմքն ել պարզվեց: Ի՞նչպես, գուցե զրպարտում եմ: Բայց չե վոր մեր

Թյուղացիներն արդեն հեղափոխականանում են, պրոլետարիատի հետ ձեռք-ձեռքի առաջ են գնում: Մեր բանվորները...իվանը չեկավ: Լավ, յեթե սրանք հեղափոխական—բայց եկի բանվորներ են, ինչու չեն համոզվում: Յես կկախվեմ, լաղումները կպայթեցնեմ: Հավանական է, գուցե ընկնեմ ու ջարդ ու փշուր լինեմ: Ուր կզնա ժենյաս, ինչ կանի: Կտո ու ջարդված մարմնիս վրա շեկ մազերը կփետրի»...

Պատնեշի կատարին մի լլոր քարի վրա նստած, գլուխը կախ, զառանցում եր տեխնիկ ֆլոգորովը: Ուշադրությամբ դիտողին կը թվար, թե դիվահարված և նա: Մատերը չուում եր, դես ու գեն տանում, կոտրատում, յերեսը ճմում, ջղածգումներ կատարում...

Բանվորները գլխավոր պատմեշից գեն գցված ժայռերի կը քըռվով խճուղու քարերն եյին կոտրատում: Իսկ Ալեքսանը լուռ ու մենակ նստած եր և վոչվոքի չեր նայում:

Իվանի ժամանակին աշխատանքի չգալը թե տեխնիկի և թե բանվորների վրա վատ եր ազգեր: Յերեի նույն ժամին նրանք առանձին-առանձին, բայց միատեսակ մտածում եյին.

— Իվանը չեկավ, վախեցավ: Եստեղ մի խաթա կտ:

Յեթե Իվանը ժամանակին յեկած լիներ, հավանական է, վոր նրանցից ամեն մեկն առանց արտունջի վար կկախվեր: Բայց նըմուտ, փորձված ու սրտոտ ընկերոջ աշխատանքի չգալը նրանց սարսափեցնում եր: Ալեքսանը հողեալես տանջվում եր, նրա ներքին աշխարհում կատաղի կոիկ եր:

Նոր դուրս յեկած արել վուկեզոծել եր ժայռերը, սարերը, ձորը, արծաթափրփուր գետը: Քարքարոտ ձորում անգամ գարնան հոտ եր բուրում—կենդանարար ու անուշ գարնան հոտ:

Տեխնիկ ֆյուղորովը մտածում եր:

— Ալեքսան, ընկեր Ալեքսան, յես ու դու, դու, յես...

Ալեքսանը վոտքի կանդնեց: Գլխակոր աշխատող բանվորները մի պահ կանգ առան:

— Պարանները բերեք, բոլորդ ել յեկեք,—կանչեց ֆյուղորովը: Բանվորները հավաքվեցին ֆյուղորովի շուրջը:

Պարանը դեռ չեյին դրել տեխնիկի թերի տակը յերքու հարյուր քայլի վրա լսվեց ծանոթ մի բղավոց:

Քարաբլի սե ուսից յերևաց Իվանի գլուխը: Նա շնչառապ գաղում եր:

— Տղերք ջան, հընկերներ, կացեք, յես միքիչ յետ ընկա...դե յեկա, կացեք:

Ալեքսանը ժամաց ու վազեց ավագ ընկերոջ թերը բռնեց:

— Դե յեկ, ե, մեռանք,—Իվանի քրտնակոլու աչքերին նայելով

առեց Ալեքսանը. բանվորներն աշխուժացան: Ֆյուղորովը ժպտացը իվանը հասավ, բացատրեց, վոր միքիչ տանն ե ուշացել, միքիչ ել վարչության գրասենյակում: Սրանեղած գանգատվեց, թե գրասենյակում նստած «չոտկը զցողները» բյուրոկրատ ու անպետք մարդիկ են:

Հաշիվները սխալ են գրում, բացատրություն չեն տուլիս: Յերկու բանվորի ոռնիկ վաթսուն ոռւբլու փոխարեն քսան հինգ ոռնիք լին լի յեն դրել: Հենց վրա համար ել իվանը գնացել եր գրասենյակը կովել հայհոյել, հաշիվներն ուղղել տվել:

Տեխնիկը հիացմունքով ձեռքը դրեց իվանի կուռ ուսին ու խնդրեց:

— Քրտնած ես, միքիչ հանգստացիր:

V

Պարաններով Իվանի և Ալեքսանի թերի տակից կապեցին ու բարձը ժայռից, պատնեշի ճակատով վար կախեցին: Նրանք հետները վերցըրել եյին լոմ, մուրճ ու դինամիտի պայթեցման փոս փորելու համար այլ պարագաներ: Վերից վեց մարդ զսպված և ուշագրությամբ հերթով պարանները պահում եյին: Իսկ այդ պարանները միաժամանակ կապված եյին և վերի օարերից:

Գետը ձորում վորոտում եր, արծաթաշող փրփուրն ու կոհակները ցրում կողերի քարերին: Գետն անշափ զեղեցիկ եր, հըապուրիչ: Բայց նրանք տերևի պես դողում եյին: Իվանն ու Ալեքսանը վորոշված տեղում հազիվ վոտք դնելու նեղ քարի սրունքներ գտան ու մի կերպ ամրացան:

Վար նալելիս նրանց թվում եր, թե գլորվում են անդունդը, կործանվում են: Իվանը հասկանում եր, վոր գերեզման մտնելու համար միայն մի քայլ ե մնացել:

Սրյունն Ալեքսանի յերակներում հետզհետե սառչում եր: Բոլորովին անծանոթ ու խիստ ցուրտ քրանքի կաթիներ եյին հոսում նրա թշերով:

Իվանը յերը Ալեքսանին նայեց, ցնցվեց. նրան թվաց, թե գիմացինը դիակ ե:

— Ալեքսան, Ալեքսան, վախիլ մի, հընկեր, վախիլ մի...

Նրանք գործում եյին: Պետք ե ժայռի կրծքին փորվեր տառը փոս:

— Ես ա հա, ես ա հա, բան չի մնացել, պրծել ենք,—Ալեքսանին միշտ սիրու եր տալիս իվանը:

Նրանք ընավներքի չեյին նայում: Վախենում եյին, վոր շեղվեն:

VI

Մինչեւ խողովակները փորել վերջացնելը նրանք յերկու անդամ վեր բարձրացան հանգստանալու։ Յերբ ամեն անդամ հասնում էյին վեր, ընկերներին, ջերմ փարփում եյին նրանց։ Կարծում եյին, թե գերեզմանից են դուրս յեկել։ Ժայռի պարանոցը, ուր հանգիստ նստելու տեղ կար, իվանին թվում եր, վորպես «հընկեր Լենինի շանց տված՝ կոմմունիզմի շեն ու ազատ աշխարհը»։ Իսկ վարիչնելիս կարծում եյին, թե վողջ-վողջ գերեզման են իջնում։ Այդպիս եր թվում և վերևում մնացողներին։ Նրանք սրտատրով սպասում եյին, թե ահա մեկն ու մեկը՝ իվանը կամ Ալեքսանը կընկնեն, ջարդովիշուր կլինեն։

Տեխնիկն ամբողջ ժամանակ ցնորվածի պես եր, անհանգիստ ու ժայռի կատարից, պարանների մոտից մի քայլ հեռու չեր զընում։ Մատերր բերանում դրած կրծոտում եր ու հեռում։

— Ի՞նչպես կվերջանա... ՅԵՐԵ կվերջանա...

Տասներորդ խողովակի փորումը յերբ վերջացավ, ժամի հինգն
եր արդեն:

Ավելի վտանգավոր բռպեները հետզհետեւ մոտենում եյին։ Ի-
րիկնադեմի վոսկեցող արևը գեղեցիկ եր։ Ալեքսանն իրեն այնքան
եր հանգիստ զգում, վոր քիչ եր մնում ծիծաղի։ Նայում եր ու
ժպտում։ ԶԵ վոր չորս ժամ առաջ նա միայն դիակի յեր նման։
Ի՞նչպես փոխվեց։ Ի՞նչպես սովորեց։ Յերբ ժպտալու պատճառ ու
կարիք չկար, Ալեքսանը ժպտում եր։ Ի՞նչու։

Իվանը վոչ միայն չեր ժպտում, այլ և շատ անհանգիստ եր: Նրա կրակոտ խոշոր աչքերը դալկանում եյին, անհրապույր դառնում: Շնչել չեր կարողանում, շրթունքները չորացել եյին: Շըրթունքներից, միքանի տեղերից, արյան կաթիլներ եյին գլորվում: Ծնոտները շարժվում եյին, իրար դիպչում, չխչխկում: Իվանին թըմում եր, թե ժայռն ամբողջովին իր կրծքին ենստած:

Վերևում Թյոդորովը մատերը կամ ճմռում եր կամ կրծոտում:
Մոտակա գյուղերից լսվում եր շների հաջոց: Դիմացի սարի ճակա-
տից ապրանքատար մի ավտո, կանաչ-կարմիր հագած ծաղկափթիթ
եքսկուրսանու պիոներների մի խումբ վրան առած, իջնում եր գե-
պի ձորը: Նրանք մանկական քաղցր ձայնով յերգում, կարկաչում
եյին: Իվանը լսեց նրանց ձայնը: Դողաց: Դարձավ, հասավ իր մանկու-
թյանը: Դեմք պատկերացրեց իրեն ութ տարեկան հասակում, վոտա-
բորիկ, անշալվար, մի խղճուկ, կիսաքաղցր յերկիսա: Հայրը՝ յերկար քթով,
հոգսերից կուչ յեկած «Գյոդակ Մարտինը» հարեան Յեղիշի դարբ-
նոցում փուքս եր փշում: Իվանը բարկացավ, չուզեց այլև իր ման-

կության տիսուր պատկերները տեսնել։ Նա միայն յերանի տվավ սարի ճակատից ավտոյով ձորն իջնող պիոներներին ու պարանը քաշեց։

Պարանը քաշելը նշան եր: Դիմամիտն իջեցրին: Իվանին թվաց,
թե շուրջը հրդեհ է վառված, ու բոցերը լիզում են իրեն:

Ալեքսանը հիմարացած հա ծիծաղում եր: Իվանը կասկածում էր Ալեքսանի մտքի առողջության վրա: Բայց նեղ տեղն եր, պետք էր նրան ել ոգտագործել:

Իվանը դիմամիտները պայմեցման համար ամրացնում եր փո-
սերում։ Նա խողը Ալեքսանդր, վոր յերբ ինքը վերջին դիմի-
տը կդնի, թող նա առաջինը պատրույգը վառի և պարանը քաշի-
Խողը ու շորժվեց։

Ալեքսանն շտապեց: Իվանը դեռ ութերորդ դինամիոը չեր դը-
րեւ յերբ ընկերը յերկուսի պատրույգները միասին վառեց: Իսկ
այդ յերկու պատրույգներից պետք է պայթեյին բոլորը: Ալեքսանը
պատրույգները վառեց ու մոռացավ պարանը քաշել՝ վերև ձգելու
նշան տալ: Իվանը յերբ վերջին դինամիաը դրեց ու յետ նայեց,
կրակն արդեն հասել եր:

— Կորանք, — ձչաց նա ու պարանը քաշեց:

— Կրակ...կրակը... շնւտ, քաշեցեք...կորան, — աղաղակեց Ֆյուդորովիր խելազարի նման:

Դիմամիտները դղրդացին...Ժայռակող ձորը հինգ րոպե ան-
լինդատ վորոտում, դղրդում, մոնչում եր:

Մայրամուտին հասած արել սովորական ժպիտով նայում, ծիծաղում եր: Ծաերը ծլվլալով ճախրում ելին ողում, ուրախ թռչկոտում: Փրփրաբերան գետափին տեխնիկը ծնկաչոք հևհևում եր հերոսական մահով ընկած բանվորների ջարդված, այլանդակված դիակների առաջ:

Յերեք հարյուրի չափ բանվորներ, հուզված, հրհրում եյին
իրար, առաջ շարժվում: Նրանք առաջ եյին հոսում ընկերների տը-
րորված դիակները տեսնելու:

Պատնեշաձև ժայռը, կուրծքն անձոռնի ձեղպած, դիտում երարխիածներին ու հուզվածներին:

VII

Կյանքը միշտ արագ առաջ է հոսում: Իվանի և Ալեքսանի յեղբական մահվանից յերկու շաբաթ չանցած՝ տոննելի բերանը բացվեց: Արնոտ պատճեցը կործանված է: Աշխատանքը հոսում, գարնան հեղեղի պես առաջ եր մոնչում: Յերկու շաբաթվա ընթացքում

քարհատ թևանը, Սարգիսը, Հանեսը և մյուսները այնքան սրտոտություն ու հմտություն են ցուցաբերել, վոր զոհված ընկերներից նրանց համբավը միքիչ ել անցել ե:

— Տղերք ջան, դե հա, ջան. տոննելը բանանք, եղ տոննելը մեր մեռած ընկերների գերեզմանաքարն ե:

Նրանք ասում են ու քարերը կրծում, պոկում, ցրում:

— Ո՞վ ե այս պատմվածքի հերոսը, կենտրոնական դեմքը,

— Մի՞ անհատ ե դա, թե միքանիսը.

— Կարո՞ղ ե արդյոք տոննելի փորման աշխատանքը կանգ առնել իվանի յեկ Ալեքսանի մահով:

— Բնորոշեցք ոռու տեխնիկին: Ինչո՞ւ յե նա այդքան կապված հայ բանվորների հետ: Ինչո՞ւ յե նա այդքան մոտ զգում իր սրտին չայաստանում փորվող տոննելի գործը:

— Այս պատմվածքի վո՞ր մասն ե ամենահուզիչը: Կարողացե՞լ ե արդյոք հեղինակը ցայտուն կերպով պատկերել բանվորների հոգեբանությունը:

— Կարելի՞ յե արդյոք այս պատմվածքից յեզրակացնել հեղինակի վերաբերմունքը դեպի իր հերոսները: Վո՞րն ե այդ վերաբերմունքը:

ՀՈՎԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ

ՀԱՅՐ ՅԵՎ ՎՈՐԴԻ

ՅԵՐԳԱ

Ցերեկվա ժամը յերկուսին «Ինտերնացիոնալ» ֆաբրիկայի շչակը բերանը բացեց:

Շշակը զիլ ու ձիգ ծվաց: Ցեկ ֆաբրիկայի ամեն մի բանվոր հնչող շչակի ձայնում լսեց.

«Հայ-հո՞ւյ, ընկերներ, բանվորներ, բավական ե, աշխատանքը դադարում ե: Մայիսի մեկն ե: Ցեկէք: Գարձե՞ք: Զարդարեցեք, զարդարվեցեք, տոնեցեք»:

Շշակի ձայնը կտրվելուն պես ցեխերում կյանքը հորձանք տվեց: Աշխատանքն արագացավ:

Անհամբեր բանվորները վերջին անգամ դազգյաների սանձերը բաց թողեցին:

Ցեկ ականջ խլացնող չխչխկոցի խառնարանում ամեն մի բանվոր ու բանվորնի շուրջերը շարժեց:

Մեկի յերգը մյուսը չի լսում: Բայց մեկի շուրթը յերբ շարժվում ե, յերկրորդը դիտե, թե նա ինչ արտասանեց: Այդպես ե, վո-

րովհետեւ աշխատանքի ժամանակ նրանք միայն մի յերգ են յերգում:

Ցերգը զնգում ե բոլոր ցեխերում: Ցերգը լեռնահոս առվակի նման ջինջ կարկաչում ե բոլորի բերնից: Բայց կարկաչունը, բացի յերգողից, ուրիշը չի լսում:

Ցեկ սանձաթող դազգյաները կարծես խրանել են իւամ ձիերի պես յերգից, շոխնդից:

Լ Ո Ւ Բ Ը

Մահուղի ցեխում կիսատ գործերը վերջացան: Մեքենաները կանգ առան: Ցեկ աշխատանքի դազարից հետո, հենց առաջին վայրկանին, ջուր մաղվեց գործից գարձած մարդկանց գլխին:

Առաջին ցեխի դոնով ֆաբրիկա մտավ մի լուր ու ցեխից ցեխ, դազգյանց-դազգյան ծիծեռնակի պես արագ թռավ:

— Ֆաբրիկան շրջապատված ե: Կարև Մայսկու ջոկատը ֆաբրիկան շրջապատել ե:

Մեկ ուրիշը յեկավ:

— Մայսկու ջոկատից տասը հոգի գանձարկղի մոտ հսկում են, վոր սոճիկ չարվիս: Ֆաբրիկայի գեներալները՝ գիրեկտորը, կոմբջիջի քարտուղարը և պրոֆկոմի նախագահն առանձնացված են: Ասում են՝ բակում թռուցիկ միտինգ ե լինելու, Բանդարենկոյի լակոտը «ուլտիմատում» ե անելու:

Բայց ինչո՞ւ յե Մայսկին ֆաբրիկան շրջապատել: Ի՞նչ ե ուղղում այդ յերեխան մեզանից: Վոր հարբեցող նիկիտ Բանդարենկոյի տղան կարող ե մի որ ֆաբրիկան շրջապատել և «ուլտիմատում» դնել դա մարդու մտքով չեր անցնում:

— Ախր ի՞նչ «ուլտիմատում» ե գնելու:

Լուրը բոլորին հանկարծակի բերեց:

Ցեխի ավագը թեկուղ ինքն ել ե հուղված, բայց թագյնում ե այդ և ուրիշներին խրախուսում:

— Բնկերներ, ամոթ ե, լակոտների մասին ել կմտածե՞ն: Ի՞նչ կա վոր, յերեխեք են, խաղ են անում:

Մահուղենի ցեխի մեխանիկ Սալավյովան՝ ճուճուփ քթով, կլոր գեմքով վարկան՝ դուրս եր յեկել մի բան իմանալու: Վերադարձ գունատված ու բարձր-բարձր կանչեց.

— Կարև Մայսկին հրամայել ե կիսատ գործ չթողնել. մինչև նորման չլրացվի, մարդ գուրս չի թողնելու:

— Խայտառակություն ե, պետք ե պահանջել ֆաբրիկմից, վոր մեզ ազատի այդ լակոտից: Տղամարդիկ ենք, նամուս ունենք...

— Ոյ, կարիճ ե, կարիճ...

— Շան վորդին շուն կլինի...
 — Դե, ըռեխներդ շաղ մի տաք, Կարլը յերկի մի նպատակ ունի, վոր մեզ պաշարել ե: Զահլա միք տանի, մայիսի մեկը շնորհավորելու յե, — զնզգնգաց Վարկայի ձախը:
 — Շնուտ արեք, տեսնենք այդ իժն ինչ ե պահանջում, — ունքերը խոժուած ավելացրեց մի ուրիշ բանվոր:

ՀԱՐԲԵՑՈՂՆԵՐԸ

Մահուդի ցեխին կից, մեծ շենքին կպած, ինչպես սունկը թփի մոտ՝ կկղած ե նորոգման արհեստանոցը: Դուռը կիսաբաց ե: Բանվորները գնացել են: Ներսը մնացել են միայն յերկու հոգի: Դրանք հավերի պես թառել են դռան մոտ, դազգյահի վրա:

— Միտկա Կազինցև, սիրելիս, տառապյալ յեղբայրս, ի՞նչ ես կարմիր քիմդի կախ արել: Նու, քեզ հավաքիր, աչքերդ ճպճպում են: Շիշը հանի, մին-մին խմենք ու ծլկենք:

Միտկա Կազինցևը մատներով խառնեց փոշոտ բեղերը և խեթնայեց խոսողին:

— Քցելիս դոչաղ ես, փող տալիս՝ չե: Լավ փեշակ ե: Նիկալայ Բանդարենկո, ոձի հայր, դու գիտես, վոր ֆաբրիկան շըջապատողը քո լակոտն ե, Կարլ Մայսկին: Պիճը: Զհուդիկը: Ափառս են մալառուսական կաթը, վոր նա յե ծծել:

Բանդարենկոն դազգյահից թուավ: Նրա կեղտու միրուքը դողաց: Մատները տարայի կզակին ու շոշափեց մազերը:

Բոռուցքով դազգյահին զարկեց:

— Միտկա Կազինցև, պահանջում եմ, վոր թողնես քո վելիկուուսական ազգայնամոլությունը: Ի՞նչ ե, ուզում ես Նիկալայ ցարի պես հարստահարել: Իմ տղան վոչ թե մալառուսական կաթ ե ծծել, այլ ուկրայինական: Հը, մի խմիր, սպասիր վերջացնեմ: Եյ, հարբեցող, իմ տղան ջնուդիկ չե:

— Ի՞նչ Ուկրայինա, ինչ բան, չե մի զիբիւ—խայթեց Կազինցևը: — Իսկ քո վորդին յեթե ջնուդիկ չե, ինչու յե են դեղեցիկ Լուկա անունը վոխել ու Կարլ դրել: Զգիտեմ, վոր Կարլ Մարքու ջըհուդ ե յեղել:

— Սատանա, հականեղափոխական կարիճ, փոխանակ մտածելու, թե վոր ծակով փախչենք, նստել ես ու սեհարյուրակայինի ճառ ես ասում: Դու թամուզ ցարի ոեթիմի մարդ ես:

Կազինցևը նույնպես դազգյահից թուավ ու ավելի բարկացած բղավեց:

— Լոիր, ապաւշ: Ողու շիշը գլխովդ կտամ: Յես պրոլետար եմ, պլուետար: Յերեք տարվա բանվորական ստած ունեմ:

— Գեղացի, կուլակ ես, դունչդ գործարան խոթած:
 — Լոիր, ազգայնամուր—բղավեց Կազինցևի:
 Բանդարենկոն չհամբերեց. նա յերկու ձեռքով սեղմեց Կազինցևի կոկորդը:
 Ողու շիշն ընկակ ու կոտրվեց:

ՏՐԻԲՈՒՆԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Մոսկվա գետը վարարել ե ու ափերից դուրս յեկել: Յերկու շաբաթ առաջ հունի մեջ ամփոփված, սացածածկ մի հեղ հարս եր նա: Բայց հիմի, յերբ արեն այնքան չերմ ե, վոր տափաստաններում ձյունն անկարող ե դիմանալ նրա համբույրներին ու հալվում ե, Մոսկվա գետը կատաղել ե: Գետավնյա փողոցները դողում են: Յեկ ահարկու գետի հոսանքի ուղղությամբ, գետափնյա փողոցի ծայրին՝ բազմել ե «Խնտերնացիոնալ» ֆաբրիկան: Գետի պղտոր ջրերը վողողում են ֆաբրիկայի պատերը: Պատերի տակ պղտոր ջրեր են մռնչում, իսկ ներսը, բարձրանիստ պարսպակերպ պատերից գենը մարդիկ են, շշակի կանչից հետո աշխատանքից դարձած բանվորները, յերկու հազար հոգի: Ֆաբրիկայի բակի կենտրոնում, տափաստանում բուսած թփի պես յերեսում ե թուցիկ միտինգների համար սարքած տրիբունան: Յերբ բանվորուհիները դուրս յեկան բակը, զինվորական կարգապահությամբ շրջող պիոներները հանդիպածին զգուշացրին.

— Հավաքվեցէք տրիբունայի շուրջը: Գրասենյակ մտնելու իրավունք չկա: Աղմուկ բարձրացնողն ակումբի կարիքների ողտին քսան հինգ ուուբլի տուգանք ե տալու:

— Ո՞յ, ո՞յ, ի՞նչ խուժանն ե, կատարյալ ժանդարմ:

Կարծես ալիքներ են մարդկանց խմբերը, վոր մի գունից մյուս դուռն են հորձանքվում: Ուզում են գնալ, սակայն դռները բռնած պիոներ-զինվորները չեն թողնում: Ի՞նչու:

Խճճված զանգվածը կարգի բերելու համար քրտնակոլու թըռչկուում են հարյուր հոգի: Կարմիր վզկապ կապած հարյուր կայտառ պատանիներ բակի մի ծայրից մյուս ծայրն են վազում: Հեռվից նայողին թվում ե, թե պիոներները ծաղիկներ են՝ խճու դաշտում բռնած:

Կարլ Մայսկին, տասնվեց տարեկան մի պատանի, կոմյերիտականի հագուստով, ուկրայնական հաստ ու պայծառ դեմքով, յերկուափայլ վճիտ աչքերով՝ կանգնել ե տրիբունայի վրա ու կարգադրություն ե անում: Նրա շուրջը կանգնած են տասը հոգի: Նա խոսում ե փողը բերնին՝ զնզգնդան ու ազգեցիկ ձախնով:

Բայց բակում աղմուկը չի դադարում:
Կարլը ջոկատի շտաբի արտակարգ նիստ հրավիրեց: Նիստ կա-
յացավ հենց տրիբունայի մոտ:

ՏՐԻԲՈՒՆԱՅԻ ՎՐԱ

Յերկու վայրկյան չանցած՝ կարգադրություն յեղավ կոմքի ջե-
քարտուղարին, դիրեկտորին և ֆարկոմի նախագահին առանձնարա-
նից կանչել: Նրանք ծիծաղը դեմքերին, գլուխներն որորելով, յերբ
յեկան հասան տրիբունային, կարլը պատվի նշան բռնեց ու խոսեց:

— «Իստերնացիոնալ» ֆաբրիկայի յերրորդ սերնդի ջոկատի
շտաբը վորոշել ե ձեզ աշխատանքի դնել: Դուք մեզ հարկավոր եք
բանվորներին հանգստացնելու համար:

Այդ ժամանակ դիրեկտորի վորդին, ողտկապետ Պետկան մո-
տենում եր տրիբունային: Հայրը վորդուն յերբ տեսավ, ուրախու-
թյունից հուզվեց: Դիրեկտորը հիսուն տարեկան, հասակն առած
տղամարդ ե և միայն մի վորդի ունի: Նա անչափ սիրում եր իր այդ
մի հատիկ ծաղիկին: Հայրն ուզեց վորդուն բռնել համբուրել
Պետկան ունքերը կիտեց նրա վրա:

— Քեզ գործի լեն հրավիրում, այստեղ վորդի համբուրելու
տեղը չե:

ՅԵՎ ԳՆԱԳ:

Դիրեկտորը դողաց: Կարմրատակեց: Նրա յերակներով մի դոր
անցավ:

Բայց դա միակ դեպքը չեր: Կարլ Մայսկու յերկու ջոկատը
կազմակերպված եր գործարանային բանվորների զավակներից: Իսչ
պատահեց դիրեկտորին, նույնն ել պատահեց համարյա բոլոր մլուս
զավակատերերի հետ: Հայրերը կամ մայրերը հանդիպելով զավակ-
ների խստությանն ու կարգապահությանը՝ սպրդնած յետ են մըդ-
վում:

ՀԱՐԲԵՑՈՂՆԵՐԸ ՓԱԽՉՈՒՄ ԵՆ

Մոնկվա դետը՝ ֆաբրիկայի պատերը լիզելով՝ հոսում ե ա-
ռաջ: Գետը լայն ե ու ջրառատ: Գետի պես լափու-լափու յե ֆաբ-
րիկայի բակը, բայց դեկավարները տրիբունայի վրա յերեալուն
պես՝ բակը խաղաղվեց: Բանվոր-բանվորունիները բոլորն ել ուզդ-
վեցին դեղի տրիբունան: Յերկու հազար զույդ աչքեր նայում են
տրիբունային:

Կարլը շրթունքները մոտեցրեց կոմքի ջե-
քարտուղարի ձախ-

— Առաջուց պետք ե այսպէս անելիք, զուր տեղը դժգոհու-
թյունների տեղիք տիին:

ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ՀՃՆՃԱԳ:

— Փորձվեցինք: Բնկերս, սովորում ենք:

Բակը բոլորպիին խաղաղվեց: Ֆաբրիկի քարտուղարը գլխար-
կը վերցրեց, ճակատի քրածնքը սրբեց ու բարձր-բարձր ծղրտաց.

— Ըսկերնե՛ր, ֆաբրիկայի թռուցիկ միտինքը հայտարարում
եմ բացված: Խոսք ե տրվում յերրորդ սերնդի ջոկատի պետ ընկեր
Կարլ Մայսկուն:

Յեվ ջղայնացած, Կարլի վրա ատամ կրծացնող բանվորները
մեքենաբար թե ըստ սովորության՝ խլացուցիչ ծափահարեցին:

Զե՞ վոր Կարլին խելքի բուն են ասում: Ինչո՞ւ չպետք ե ծա-
փահարել. միայն նեղացած են, վոր ոռնդի որը, տոնի նախորյա-
կին, հոգնած ժամին ե գլուխ բարձրացրել: Կարլը մի քայլ առաջ
գնաց ու ժպտաց:

— Հարգելի ընկերներ...— Հանկարծ Կարլը հայացքը բեեռեց
ֆաբրիկայի «սև գուան» կողմը: Ատամները չխչխկացրեց: Հետո զայ-
րացած բացականչեց.— ընկերներ, հարբեցողները՝ միտինքից փախ-
չում են: Նիկիտ Բանդարենկոն ու Միտկա Կազինցել ճղում են,
մի թողեր:

Ու ձեռքը մեկնեց գեպի փախչողները:

— Բոնեցե՛ք, բոնեցե՛ք,— ճացին հազարավոր բերաններ:

— Նրանք կպատժվեն: Համաձայն իմ շտաբի վորոշման՝ ամեն
մի փախչող հինգ որ, որական յերկու ժամ, ֆաբրիկայում ձրի
կտշխատի:

Ինչպես յերեսում ե, հոր արարքը Կարլի սիրու շանթահարեց:
Նա գունատ եր ու գողգոջուն:

— Հարգելի ընկերնե՛ր, դուք շատ եք հուզվել, վոր ձեր զա-
վակները մի ժամով ձեզ զբաղեցնում են: Դրա համար ել վեց հա-
րյուր պիոներ-կոմյերիտականների կողմից ներողություն եմ խընդ-
րում:

Հանկարծ լուռ զանգվածի կրծքից՝ զանազան կետերից գո-
չեցին.

— Հանձնա-բար-ված ե:

Ծափի ձայնը լերկինք բարձրացավ:

ՆԱԽԱՏԻՆՔ

— Բնկերներ, աշխատանքն այսպես շարունակել չի լինի: Ար-
տաղբականությունը չի բարձրանում: Ինքնարժեքը մնում ե նույնը:
Հարբեցողությունը տարածվում ե: Գործալքումները շատանում են:

Հրեատյացությունը մեր ֆաբրիկան ել ե մուտք գործել: Հայրեր ու մայրեր, ամսթ ե, պետք ե այս բոլորին վերջ տալ: Զեզնից շատերը իրենց անպատճանատու յեն զգում գործի համար: Սոցիալիզմ կառուցող բանվորի համար դա վոճրագործություն ե:

Թաքլումի նախագահը շրմումքները կրծուում ե: Կոճակներն արձակեց, խեղդվում ե: Դիրեկտորը կորցրել ե իրեն: Նիկիտ Բանդարենկոն տրիբունայի առաջ բերանը լայն բացած՝ նայում եր վեր, վորդուն:

— Հարազատներ, ընկերներ, մենք ուսումնասիրել ենք ձեր բյուջեն: Ամեն մի բանվոր տարեկան խմիչքի փող ե տալիս ուժուուն ոուբլի, կամ աշխատավարձի մոտ 10 տոկոսը: Միթե սա խայտառակություն չե: Կան մարդիկ, վոր աշխատավարձի 25 տոկոսն են խմում: Հարբեցողության հետևանքով մի հոգին տարեկան 24 որ աշխատանքի չի դալիս: Հասկանում եք, ֆաբրիկայում տարեկան 28 հազար որվա կորուստ կա: Ել ի՞նչպես ինքնարժեք իջեցնել. Ել ի՞նչպես բանվորի նյութական դրությունը բարելավել: Այսպէս եք սոցիալիզմ կառուցում: Զեր զավակները նախատում են ձեզ:

Ըսթերցող, դուք չեք դողում: Անհարմար դրության մեջ չեք Զեր զլսի մազերը չեն ցցվում:

Միտինգավորները գունատվել են: Նրանց թվում ե, թե վերից մեկն իրենց յերեսին ասեղ ե մաղում: Հայացք են թագյնում: Ինչու չի մթնում, ինչու արեն այնքան դանդաղ ե շարժվում: Ո՞վ ե յերկնքից կրակ թափողը:

Փողը կարլի ձայնին ուժ ու վսեմություն եր տալիս: Բառը յերբ դուրս ե դալիս կարլի բերանից ու մանում ե պղնձե բարակողը, թվում ե, թե ուումբ պայթեց:

— Մենք վորոշել ենք ազատել ձեզ ամոթալի վիճակից:

Մարդիկ սպրդնած են, ամոթալեմ, բայց յերկար ծափահարում են:

— Հինգ կետից բաղկացած մի պահանջ ենք ներկայացնում ձեզ: Նախորոք հայտարարում ենք, վոր յեթե չընդունեք մեր պահանջները և ցանկանաք մնալ այդ կեղտոտ վիճակում, մենք հրաժարվում ենք ձեր զավակները լինելուց: Վաղն անմիջապես կդնաք «Ռաբոչայա գաղետա» թերթի խմբագիր ընկեր կոնի մոտ ու կը խնդրեք, վոր մեր հրաժարականը և ձեր անունները թերթում արպի: Տանը ձեզ հետ չենք խոսի:

— Հանձնարար-ված ե:

— Այդպես ե: Յեթե համաձայն եք մեզ հետ, ընդունեք մեր պահանջները, իսկ մենք մեզ վրա կվերցնենք հետեւալ պարտականությունները.

ա) «Բանվորական» թերթի միջոցով շնորհակալություն հայտնել ձեզ և վորպես սոցիալիզմի կառուցման պատվին արժանի մարդկանց՝ կինդրենք խմբագրությանը թերթում տպել ձեր խմբական նկարը:

բ) Խոստանում ենք դպրոցական դասերը լավ յուրացնել, որինակելի պահել մեզ հասարակության մեջ ու մեզ վրա վերցնել ընտանիքում լեղած փոքրահասակների դաստիարակությունը:

գ) Պարտավորվում ենք վեց ամսում յերեք շաբաթորյակ կազմակերպել՝ մաքրելու ֆաբրիկան զանազան հնոտիներից:

դ) Վերջապես, հանձն ենք առնում մի տարում յենթաշեֆ գյուղում հինգ ներկայացնում կազմակերպել, տաս որինակ թերթուղարկել զյուղ ու ամրացնել ձեր և նրանց դաշինքը:

Մայսկին լուց: Դիրեկտորը գողում ե: Գուցե հավասարակշռությունը կորցնի: Իսկ կոմքջիջի քարտուղարը՝ թագուն մի ժպիտ լճափայլ աչքերում՝ դիտում ե քարացած մարդկային զանգվածը:

Մարդկային զանգվածն անշարժ ե ու լուս: Առաջին շաբաթից քիթը կարմիր, անձոռնի դեմքով մի կին, ըստ յերեսութին հարբեցող, առանց ձայն խնդրելու դուրս յեկավ շաբաթից ու բգավեց:

— Անաստվածներ, ի՞նչ եք յեսիր դարձել եղ լակոտին, հոգիներս դուրս յեկավ: Յրվեք գնանք: Քունն ել... քու «Բանվորական թերթին» ել... քու կոնին ել և քու նկարին ել... Ըսկեր դիրեկտոր, հրաման տուր աշխատավարձ տան, գործի տեր ենք:

Տրիբունայից դեռ չեյին պատրաստվել խոսող կարմրաքիթքանվորունուն կարգի հրավիրելու, վոր վարից յերկու զույգ հաղթձեռքեր նրան յետ տարան:

— Լոկը ու լսիր, հիմար: Կարմրաքիթ կինը արմունկով զարկեց Բանդարենկոյի մեջքին: Բոյըդ թաղվի, կարիճ ես աշխարհ բերել:

Կարլը փողը դրեց բերանին: Զանգվածը կրկին խաղաղվեց:

— Այժմ մեր պահանջները: Հայտարարում եմ:

ա) Մինչև Հակտեմբերյան հեղափոխության տոնակատարության որն արտադրականությունը քսան տոկոսով բարձրացնել:

բ) Ինքնարժեքը 15 տոկոսով իջեցնել:

գ) Խմիչքի տրվող գումարը 80-ից իջեցնել 8 ոուբլու:

դ) Վերջ տալ գործակքուներին: Վոչ հարգելի պատճառներով գործի չեկողների նկատմամբ ձեռք առնել դաստիարակչական ու պատժական միջոցները: Չուղղվելու դեպքում գործալիքը հեռացվում ե աշխատանքից:

ե) Հրեատյացների նկատմամբ կազմակերպել հասարակական դասեր ու չուղղվողներին հեռացնել ֆաբրիկայից:

Պիոներների բերաններին փողերը դնդպնդացին.—Հանձնաւ-
րաբաված ե:

— Կես ժամ ձեզ ժամանակ.—Վորոտաց կարլի ձախը փողից,—
մտածեցեք:

Միտինգավորներին թվաց, թե փշից գործած քողը յերեսներից
վայր ընկավ: Ազատ հազարին: Շունչ քաշեցին:

Մոռկվա գետը՝ ֆաբրիկայի պատերը լիզելով՝ հոսում է առաջ:
Գետը տանում է սառցե հսկա զանգվածներ: Հյուսիսի ջերմ արևն
արծաթազդել է գետը, ֆաբրիկան ու կարլի ձեռքի փողը:

Բանվորները խոնվում են: Խմբվում են ըստ ցեխերի: Խորհր-
դակցում են:

ՀԱՐԲԵՑՈՂԻ ՎՃՌԱԿԱՆ ՔԱՅԼ Ե ԱՆՈՒՄ

Կարլը նման է իր ընկերներին, և ընկերները նման են նրան:
Նրանք գարնան ծաղիկներ են, յերկնքի ասաղեր՝ լուսատու, սիրուն
ու համարձակ: Կարլն ընդունեց բանվորության ներկայացուցիչնե-
րին: Վեց հոգի յեն: Յերկու կին, չորս տղամարդ: Նրանք ամոթով
են նայում կարլին: Իսկ նիկատա Բանվարենկոն ունքերը խոժուել
ե, վեր չի նայում:

— Յես ել զործալիքների և հարբեցողների կողմից եմ ստո-
րագրելու, — հայացքը վառ, գլուխը կախ ասաց Բանվարենկոն: Ծա-
նըր խոսեց, կարծես թե սիրու կոկորդից հանելիս լինելին:

Բանվորների ներկայացուցիչները խմբվեցին ֆաբրիկի նախա-
գահի շուրջը: Քիչ հետո նախագահը դիմեց մարդկային զանգ-
վածին:

— Ընկերներ, ուրեմն մենք միաձայն ընդունում ենք ընկեր
կարլ Մայսկու ջոկատի պահանջները: Պայմանագիրը գրվում է, և
ստորագրում են ինչպես ֆաբրիկը, կոմբինի քարտուղարը, դիրեկ-
տորը, նույնպես և ընկեր Մայսկին իր ողնականներով:

Պահանջեց փողերից ամպերի պես վորոտաց.

— Կուռ ենք, անձնը-վեր:

— Պատասկի քաշեր:

— Լըսեցեք, հայրեր:

— Մենք միշտ պատրաստ ենք:

Իսկ շարքերում քչփշում են.

— Դժվար պայմաններ են, չենք կարող եղ լակոտը խայտա-
ռակեց մեզ:

— Թող իր հարբեցող հորն ուղղի: Ոխ ի՞ժ... ծուղակի մեջ
ընկանք:

Յեկ յերը պայմանագիրը քվեաբկության դրվեց, գործարկումի
նախագահին թվաց, թե հրապարակում անտառ բռւսավ:

Միաձայն:

Կարլը փողը բերնին դրեց.

— Ընկերներ, հարազատներ, վաղը մայիսի մեկն է. յերորդ
սերնդի կողմից մայիսեկյան ջերմ վողջույն ձեզ: Դուք արժանի
յեք այդ փողջույնին:

Կարլ Մայսկու ձայնը խեղդվեց խլացող ծափերի տարափում:

Տրիբունալից իջնելիս կարլը նկատեց, վոր Միտկա կազինցեկի
կոկորդն արնաթաթախ ե: Բանվարենկոյի յեղունկները չանկուել ելին
այն: Նա մոտեցավ իր հոր հարբեցող ընկերոջն ու գրպանից հանեց
ճերմակ թաշկինակը:

— Քեռի Միտկա, առ թաշկինակս, կոկորդդ կապիր, արյու-
նու:

Միտկան մրոտ միրուքը յետ տարավ ու շրթունքները մոտեց-
րեց կարլի ճակատին:

Բանվարենկոն յերեսը ծռեց, վոր չաեսնի:

— Ո՞վ եր կարլ Մայսկին:

— Ո՞վ եր նրա հայրը:

— Հաջողվել ե արդյոք հեղինակին բանվորական մասսայի նկարա-
գրությունը:

— Ի՞նչն ե այս պատմվածքում ամենից ալելի հուզին ու վոգեորիը:

ԱՅ. ԶՈՐՅԱԿԱՆ

ՇԻՐԱԿԻ ԶՐԱՆՑՔԸ

Գնում ենք Շիրակի ջրանցքը տեսնելու:

Գիշեր ե: Մեր գնացքն անվերջ շիշխկոցով սլանում է առաջ:
Անցնում ենք մոծակաշատ Սարդարաբագը, անցնում ենք լուս
Արաքսը, անցնում ենք անալմուկ Ալագյոզը, և լուսը կամաց-կա-
մաց բացվում է ահա: Գծի աջ և ձախ կողմը, Անի կայարանից
ակսած, Շիրակի դաշտի շարունակությունը կազմող լեռնուտները—
հրաբղխային այդ անհեթեթ ժայթքումները—անվերջ հաջորդում են
իրար՝ մեկը մյուսի նման, մեկը մյուսի նման: Ու Ախուրյանը՝ հայ-
կական այդ տիսուր գետը մերթ յերեսը և լեռնուտների արանքից,
մերթ թագնվում նրանց յետե, մողեսագույն ժայռերի անդնդում...
Գչի շուրջն այրված, պղնձացած բլուրներ են և փոքրիկ հարթա-

վայրեր՝ խանձված արտերով ու խոտերով։ Անցնում ենք առաջ, ելք առաջ—տեսարանը նույնն է. բլուրները հալվում են հետզհետե, բայց հարթավայրը նույն տեսքն ունի. այրված, ծարավից դեղնած ցանքսեր ու արտներ, վտիտ հասկերը և նվազ խոտերը կպել են չոր, ճաքճքած հողին։ Յեկ այդ բոլորը՝ դեղնած հասկերը, թղաչափ խոտերը, պղնձագույն բլուրներն ու հողը մի տեսչանք ունեն։

— Զուր, վոր իրենց տանջող ծարավը հազեցնեն։ Իզուր են յերկար, յերկար սպասել անձրեի։ Յերկինքը զլացել է այն, և նրանք այժմ ախուր, դեղնած ու զլիսիլոր նայում են անցորդին։

Ու այդպես զծի շուրջն ու հեռուն տարածված արտերն ու աշրոտները՝ մինչև լենինական ու ավելի դեն՝ գետնին կղած հեռում, հորանջում են ծարավից... Այդպես են և գյուղերը։ Ահա՝ մեկ, յերկու, յերեք, հինգ, յոթ... բոլորը միասեսակ ու միանման անզարդ, անձառ ու տիսուր։ Նման են ավելի ավերակների, նման են ուրարտական կամ ավելի հիս ժամանակների գերեզմանատների, քան զյուղերի, քարի և մոխրի շեղակույտեր, վորոնց գլխով կարծես հազարամյակներ են անցել, և նրանք, այնուամենանիվ, մնացել են անփոփոխ ու անշարժ։ Միակ բանը, վոր վկայում է, թե այդտեղ, այդ գետնափորներում ու քառակուսի տուփերում մարդիկ են ապրում,—դա յեկեղեցին է, ավելի շուտ նրա մամուապատ ու հողմածեծրում,—դա յեկեղեցին է, ավելի շուտ նրա մամուապատ ու հողմածեծրում է սներից վեր։ Յերբեմն ծուխ անզամ գմբեթը, վոր բարձրանում է սներից վեր։ Յերբեմն ծուխ անզամ գմբեթը, վոր բարձրանում է սներից յերդիկներից, և տարակուսանքը ճնշում է նայողի հոգին, թե արդյոք հանգած զյուղեր չեն սրանք, վորոնց գլխին ժամանակն իր մոխրն է մաղել։ Վհշ—ահա մի մարդ՝ անցավ գերանդին ուսին, ահա մի կին, վոր կովը տանում է հանդը, ահա մի յերեխա, վոր հորթ է քշում... Վհշ այստեղ ապրում են մարդիկ, վոր հոգի ու քարի հետ կոփի տալով իրենց որվա հացն են վաստակում...»

Բայց շրջապատի ամայությունը վոչինչ չի մեղմում։ Ծառի ու կանաչի սովոր աչքն այստեղ վոչինչ չի գտնում, վոր հանգստացներ իրեն։ Տեղ-տեղ Ախուրյանի ափերին յերեացող կանաչուաներն ու հատ-հատ ծառերն ավելի զգալի յեն դարձնում այդ ամայությունը և ավելի սուր՝ ծառի կանաչի կարոտը։

Ահա և սեապատ հին կյումայրին. նախկին Ալեքսանդրապոլը, այժմյան լենինականը՝ նույնպես անձառ ու անզարդ, ինչպես Շիրակի բոլոր գյուղերը։

Ինչու այստեղ ծառեր չկան։ Ինչու պարտեզներ չեն գցում։ Ինչու արտերը դեղնած են այսպես... Բոլոր հարցերն այստեղ մի պատասխան ունեն՝ ջուր չկա...»

Անջրությունը Շիրակի հին ցափս է, և դա յեպատճառը, վոր այստեղ գյուղացին, ավելի քան վորեւ շրջանի գյուղացի, իր ճակատագիրը, իր ամբողջ ընտանիքի բախտը հանձնում է ամպերին և հաճախ, գրեթե ամեն տարի, «Յոթ վերքը» իր չոր գաշտում պլատելով՝ չվող ամպերից աղերսում է գութ ու փրկություն։

Գնացքը դանդաղում է կամաց-կամաց և կանգ ե առնում հանկարծ։ Մենք լենինականի կայարանում ենք։ Խառն բազմություն։ Կայարանային յեռուզեռ։ Ըսդհանուր ժխորի մեջ նոր բարբառ։

— Այ ողուր, բլեթը ֆնս է, ֆնս է, քնվս է...

— Բա, ինչդ ել չափուկ կերթա կը...

— Բաքլայի, գուքամ կը...

իջնում ենք և շտապում քաղաք։

Վաղ առավոտ է և կիրակի։ Այդ պատճառով արհեստավորների և առեարականների այս քաղաքը լուռ է. չի լսվում արհեստանոցների սովորական ժխորը, չեն նկատվում շտապող քայլեր։ Խանութները փակ են։

Քաղաքում յերկար չեն մնում։ Շտապում ենք ժամ առաջ կապս՝ ջրանցքը տեսնելու։ Մեր ընկերներից մեկը հավատ չունի այստեղի յեղանակին։

— Մեկ ել տեսար՝ անամպ յերկնքից անձրե յեկավ, — ասում ենա, — լավ կլինի՝ մի բրեգենտ վերցնենք։

Բացատրում ենք, վոր բրեգենտի կարիք չկա, քանի վոր կառքով ենք գնում։

— Եղ գեպքում ով բրեգենտի դեմ է, թող կառքի առաջ մասում նստի, — հայտարարում ենա։

Այդպես ել անում ենք։ Յեկ կառքերը միքանի բոպեյում մեզ դուրս են բերում քաղաքից։

Նորից նվազ արտեր և նոսր, համարյա թե անխոտ խոտհարքներ։ Տեղ-տեղ հնձել են այդ խոտերը, անզին տարածությունը չի տվել անզամ մի փոքրիկ բլուլ խոտ։

— Ժամանակին անձրեներ չեն յեկել, — բացատրում է կառապանը։

— Ջրանցքը, ջրանցքը, — բացականչում է մեր ընկերներից մեկը, ձեռն առաջ պարզելով։

Կավահողի և սեահողի մի գորշ յերիզ, ինչպես ահազին, առասպելական մի սողուն, մեջքն ուռցնելով ու իշեցնելով, կանաչ գուշտի միջով գնում է հեռու։

— յերթա Որթաքիսա, ենտեղեն, ըշտը, կիշնի ցած, — բացատրում է կառապանը։

Հասնում ենք այդ յերիդին ու կառքերից իջնելով՝ մտնում ենք ջրանցքի հունը։ Մարդահասակ և գրեթե մի սաժեն լայնություն ունեցող փոս ե՝ փորված գլխավորապես ու քարի և տեղ-տեղ հողի մեջ։

Բավական տեղ բայց փորվածքով գնալով՝ հասնում ենք վերջապես տաննելին, վոր ջրանցքի աշխատանքների ամենահետաքըրոքրական մասն և կազմում և այնքան այցելուներ և դրավում դեպի իրեն։

Տոննելից նախ սառը խոնավություն ե փշում մեր դեմքին, հետո, յերբ մտնում ենք ներս, ցուրտ ենք զգում։

Այդ տոննելը, վոր 2 ու կես վերստ յերկարություն ունի, աշխատանքները շուտ վերջացնելու նպատակով փորվել և միաժամանակ ութը տեղից, այդ պատճառով, վորտեղ աշխատանքները շուտ ավարտվել են, այստեղ արդեն առաստաղի կողքերը քարել են, իսկ հատակը ցեմենտել։ Այսպես վոր միքանի տասնյակ սաժեն տեղ գնում ենք կոկ տոննելով։ Ապա սկսվում ե նոր փորվածք։ Այստեղ արդեն հատակը լիքն և գեռ բոլորովին չմաքրած քարերով և առաստաղից թափվող ջրերով։ Մութն ե, կատարյալ խավար։ Գնում ենք խարխափելով, ինչպես կույրեր, և վորովնեակ հատակին ջրեր ու քարեր կան, գնում ենք տոննելի կողերը բոնելով։ Զեռներ են ցեղարկում, վոտեր են ընկնում ջրերի մեջ, յերբեմն կոշիկը լցվում է ջրով, բայց վոչինչ—հետաքրքրությունը մղում է առաջ։ Յես մանավանդ, Թովմա առաքյալի նման, ուզում եմ ամեն ինչ տեսնել և շոշափել։ Անցնում են տասը և ավելի բովեներ—խավարի մեջ լույսի վոչ մի շող։ Վառում ենք այդ նպատակի համար վերցրած մոմը։ Բայց նա լուսավորում ե միայն իրեն և համզչում շուտ-շուտ։ Բերնից յելած թեթև մի հեք, ձեռքի թեթև տատանում իսկույն հանգնում և նրան։ Ու գնում ենք յերեմն իրար ձեռքից կամ ըդգեստից բոնած։ Մեկ-մեկ հանդիպում ենք քանդվածքների, ավելի շուտ փլվածքների, վոր դժվարացնում են ճանապարհը, և յես հիշում եմ միքանի գրվածքներ հանքափորերի կյանքից և մանավանդ այն, ուր նկարագրվում ե, թե ինչպես խեղճ ածխահատները, պայշթյունից հանքի մուտքը փլվելու պատճառով, քսան որ մնում են գետնի տակ՝ մի յելք փնտոելու համար շարունակ յետ ու առաջ դնալով։

Բայց «սարսափելին թվում ե դյութող», և մենք շարունակում ենք մեր ճանապարհը նույն խավարի, ջրի և ցեխի միջով։

— Առաջ, տղերք, առաջ անվեհեր,—խրախուսում ե մեկը։

Ահա վերջապես լույս ե շողում խավարի խորքից։ Շտապում ենք։ Ելեկտրական լամպեր են։

Մենք արդեն աշխատանքի վայրումն ենք։ Բանվորները փոքրիկ վագոններով կրում են քանդված քարը և հողը։ Լուրջ կենարունացած և զգուշ դեմքեր։ Մեզ տեսնելով՝ չեն զարմանում։ Սովոր են նման հյուրերի։

— Բարե, տղեք։

— Բարե, — պատասխանում են կարճ և շարունակում իրենց գործը նույն կենարունացած, զգուշ շարժումներով, վոր չմինի թե հանկարծ փոքրիկ վագոնը գուրս ընկնի ուելսից։ Յերկու հոգով բրունած վագոնի կողերից՝ հրում են հասցնելու մինչև շախտան, ուր լիֆտը 23 սաժեն խորությունից հանում ե այդ քանդվածքը դեռնի յերեսը։ Նույնպես վեր են հանում և հատակին չհասած ջրերը տակառներով։

Քանի առաջ ենք դնում, հատակի ջրերը շատանում են, կարեիդի, ծծումքի հոտը դառնում ե հեղձուցիչ, բանվորներ ավելի շատ են յերեսում, փոքրիկ վագոնների թիվը ավելանում ե։ Հանդիպում ենք մի խմբի, վոր ինչ-վոր բան և չափում։

— Կարելի՞ յե առաջ գնալ։

— Կարելի յե, բայց շուտ վերադարձեք. կես ժամից հետո պայթյուն ե լինելու։

Պայթյուն... Յես նորից հիշում եմ այն խեղճ ածխահատներին, վոր քսան որ մնացին գետնի տակ...։

Բայց կես ժամ կա տակավին, և մենք արագ-արագ առաջ ենք գնում շուտ վերադառնալու համար։ Ու քանի առաջ ենք գնում, ոզըն այնքան դառնում ե հեղձուցիչ, ծանը, կապարյա... Խորքում լույս ե յերեսում։ Խավարի և թանձրացած ողի մեջ նա նման է փոքրիկ առկայծող կրակի։ Այդ փոքրիկ կրակները... Ի՞նչ դյութական ուժ ունեն նրանք խավարի մեջ։ Անթիվ խոստումներով նրանք կանչում, քաշում են դեպի իրենց։

Մոտենում ենք վերջապես։

Աշխատանքի ամենահետաքրքրական վայրում ենք արդեն։

Այստեղ, գետնի յերեսից 24 սաժեն ցած, փորում են ժայռերի կուրծքը։ Ինչպես անդունդն ընկած, յելք չգտնող հուսահատ մեքենան, խտացած ողի ոգնությամբ, համառորեն ու անընդհատ չանկում, կառո-կտոր պոկում և կարծր ժայռը։ Ու նրա մոտ, եւեկտրական լամպի աղոտ լույսի տակ յերեսում ե նախ մի կերպարանք մարդկային, հետո յերկրորդը։ Բանվորներ են՝ բան ձեռներին, վոր մեքենայի քանդածը յետ են ածում դեպի յերկաթուղարքը, վորպեսզի փոքրիկ վագոնները գան և կրեն այն։ Ու աշխատանքը խուլ, համառ ու միորինակ ոփթմով շարունակվում ե ան-

ընդհատ: Կիսախավարի մեջ այդ բանվորները թվում են ժայռեր շպլանը և սարեր տանող առասպելական հսկաներ, վոր այժմ գետնի տակ մտած, ժայռերի արգանդում ճանապարհ են հարթում դեպի լույսը... Կամ թվում են անձնվեր մարտիկներ, վոր կովի յեն յելել իրենց ջրերը ցամաքեցնող ահեղ վիշապի դեմ...

Ողբ հետզհետե ծանրանում ե, ավելի շուտ մեղ համար դառնում ե այնքան անսովոր, վոր իմ առաջին հարցը բահով աշխատող բանվորներին լինում ե այն, թե քանի ժամ են աշխատում որական:

- Ութ ժամ,—պատասխանում ե նա:
- Իսկ քանի՞ հերթ եք աշխատում:
- Յերեք:

Ուրեմն ժայռերի այս մթին արգանդում, ծանր ողի մեջ որ ու գիշեր աշխատանք ե յեռում: Մեքենաներն ու մարդիկ միացած՝ անդադար փորձում են, փորձում...

Սրանք գնում են դեպի մուտքը, իսկ մուտքից, Արփաչայի կողմից, առաջ ե գալիս մի ուրիշ խումբ:

Վերջին խմբերն են, վոր պիտի ճեղքեն տոննելը և միանան իրար:

Յերեակայում եմ՝ ինչ ուրախ հանդիպում ե լինելու:

Մի կատարյալ տոն՝ աշխատանքի հաղթանակ:

Մասամբ ողի ծանրությունից, մասամբ պայթյունի յերկուղից ընկերներն շտապեցնում են. «Գնանք, գնանք»...

Դառնում ենք նույն ճանապարհով: Համնում ենք շախտային և ուզում ենք բարձրանալ վեր: Լիփան զբաղված ե. նա քանդվածքներ ե վեր հանում: Առաջարկում են սպասել կամ բարձրանալ յերաններով... 24 սաժեն վեր: Մի փոքր տատանվելուց հետ՝ գերադասում ենք վերջինը:

Ու սկսվում ե մի անորինակ վերելք — ուղղահայաց ու մթին: Այստեղ ավելի բազուկներն են աշխատում, քան վոտները: Բարձրանում ենք սանդուղքից սանդուղք, բարձրանում ենք, և վերելքը կարծես վերջ չունի... Մութն ե, վերեկից՝ առջեկից բարձրացողը իր վոտներից, սանդուղքի աստիճաններից շարունակ հող ե թափում ցած, ներքեկից գնացողի գլխին. միմյանց չենք տեսնում, այդ պատճառով շուտ-շուտ կանչում ենք իրար.

- Վահան, գալի՞ս ես:
- Այո...

Ու բարձրանում ենք, բարձրանում և, վերջապես, ահա հողի յերեսին ենք. արևի տակ:

Կարծես մթին ուղիներում՝ քայլել ենք շաբաթներ ու ամիսներ, մեր կուրծքն սկսում ե լայնացած շնչեր, ու արել թվում ե այս քան սիրելի, վոր ուրախությունից ուզում ենք ճշալ — վողջույն քեզ, արև:

Մինչդեռ ընդամենը ժամ ու կես ենք մնացել գետնուղում:

Ինչպես են անում այն մարդիկ հապա, վոր գիշեր ու ցերեկ որական ութ ժամ անընդհատ կարբիդի, ծծումբի հոտով հագեցած ողում աշխատում են լարված մկաններով և կոացած մեջքով...

Դուրս գալուց անմիջապես շտապում ենք Արփաչայի ձորը՝ տոննելի մուտքը տեսնելու:

Խոր ձորը, վորի անդունդում խշում ու թշում ե Ախուրյանը, շրջապատված ե տեղ-տեղ պղնձագույն ժայռի պարիսպներով, վորնք խատաղեմ ու մոայլ կախված են խշուցող ջրերի վրա: Սայլի կեսումնեռ ճանապարհով իջնում ենք ձորը: Այստեղ կա փոքրիկ տնակների մի շարք, վոր ցեմենտի, փայտեղենի և այլ նյութերի պահեստներ են:

Ահա և մուտքը: Հսկայական, մոտ 30 սաժեն բարձրություն ունեցող, հողմերից ու արևից շիկացած, պղնձագույն՝ գրեթե միաձույլ ժայռի տակից բացվում է այդ մուտքը՝ արդեն քարված ու ցեմենտված: Բացվում է նա, վորպես անուշ մի յերախ:

Այստեղից ե ահա, վոր Ախուրյանը կամ իր ժամանակակից անունով՝ Արփաչայը, իր անդնդախոր ձորից պիտի գնա՝ նախ 2 ու կես վերստ տոննելով, ապա բաց ջրանցքով՝ Շիրակի ծարավ գաշտը վոռոգելու, նրա ամլությունը բեղմնավորելու և նրա դեղնած դեմքին զվարթություն տալու:

Այս ջրանցքը մեր փոքրիկ, ծարավ յերկրի համար մի մեծագործություն ե. նա հիմք ե դսելու մի նոր կուլտուրայի, նոր տեմպ ու նոր ընթացք ե տալու ժողովրդի տնտեսության և լույս ու բարեկեցություն ե բերելու Շիրակի գաշտում ծվարած «անով նիրհող խրճիթներին»... Ջրանցքի նշանակությունը մեր ընկերներից մեկը շատ միշտ բնորոշեց այցելուների գրքում թողած իր հակիրճ խոսքերով — «Ջրանցքը Շիրակի կենսանցքն ե»: Վերջին բառը թեև անհարմար բառ ե, բայց իմաստը միշտ ե: Այս ջրանցքն, իրոք, կյանք և կենդանություն ե տալու ամբողջ Շիրակին: Ախուրյանի պաղպաջուն ու զովարար ջրով նրա մոայլ անհամբույր ու անզարդ գյուղերը պիտի զարդարվեն ծառաստաններով ու այգիներով, զյուղացիները պիտի աղատագրվեն ամպերի որինստացիալից, իսկ ցանքուն ալիս չեն մնա ջրակարուտ... Աշխատանքի յեռանդն ու սերը չի պակասում հայ գյուղացուն: Նրա մեջքը կոտրում, նրան թշվա-

ուացնում ե իր յերկրի ժլատ բնությունը։ Զրից հետո նա կարճ ժամանակում կկերպարանափոխի իր գյուղն ու կենցաղը և այստեղ, ուր այժմ տեսնվում են մռայլ, զերեզմանատների նման գյուղեր, մի տասը, քսան, յերեսուն տարի հետո կունենանք ծառաստաններում թաղված դեղեցիկ շեներ։ Նախ և առաջ ծառերը կծածկեն նրանց մերկությունը, ապա փայտեղեն կմասակարարեն վառելիքի և շենքերի համար, ու աթարի բուրգերի տեղ մեր գյուղերում կը բարձրանան կղմինդրե կամ թիթեղե տանիքներ... Յեվ այսպես այն բոլոր տարածության վրա, ուր անցնելու յէ ջրանցքը։ Իսկ ջրանցքը պիտի անցնի 45 վերսա տարածություն և պիտի վուոգի 15,000 դեսիարին ցանքսեր, բանջարանոցներ, խոտհարքներ ու այդիներ։

Վոռոգման շըջանի մեջ են մանում կենինական քաղաքը և 13 դյուզ։

Մուտքից հետո դաւնում ենք կապս՝ բանվորական կացարանները տեսնելու։ Դրանք գտնվում են կապս գյուղից միքիչ հեռու և բոլորը միասին կազմում են գրեթե մի փոքրիկ գյուղ։ Այստեղ ապրում ե 500 բանվոր։ Գիշերում են հանրակացարաններում։ Ունեն իրենց ճաշարանը, ակումբը (ուր նաև ներկայացումներ են տառիս), բաղնիքը, հիվանդանոցը (յերթեեկների համար). այստեղ են դրված ելեկտրական մոտորները, վոր լույս են մատակարարում բանվորական կացարաններին և տոննելներին։ Հայ վարպետների և բանվորների հետ միասին այստեղ աշխատում են հույն, իտալացի և ուսւ բանվորներ ու վարպետներ։ Այստեղ ե ապրում ջրանցքի աշխատանքները հսկող ինժեներն իր ողնականով։ Այստեղ կան մարդիկ, վոր ապրում են և ընտանիքներով։ Կապսի ողը յերկելի յէ, չոր և թեթև։

Վերադառնում ենք։ Նորից անցնում ենք Շիրակի ծարավ դաշտերով։ Հեռուները՝ միապաղաղ գորշ, անհրապույր սարեր ու բլուրներ են։ Այդ ընդհանուր գորշ տեսարանը մեզմում եր Արագածու իր գույգ ձյունակատար գաղաթներով։ Իսկ նրա յետեից, ամպերի տակից յերեսում ե «Հայոց աշխարհի մեծ հսկան»—Մասիսը։ Ալեներ զլուխը վեր պարզած նայում ե նա Շիրակի գաշտին հսկող պահակի համառ հայացքով։ Կարծես դաշտի պահպանությունը նա չի վստահում Արագածին ու, իր ծեր գլուխը բարձրացրած սարերի յետեից, Արագածի թիկունքից, ինչպես պապն իր թոռան ուսից, նայում ե, թե արդյո՞ք ամեն ինչ կարդին ե այստեղ—Շիրակի դաշտում։ Ու զարմանքից ասես մնացել ե տառած—ինչ հանգուզն բաներ են կատարվում այստեղ, Շիրակի դաշտում... մարդիկ փորում են կուծքը հավիտենական ժայռերի...»

Այո, ազատն Մասիս, կգա մի որ, ժամանակ, վոր մարդիկ քո կուրծքն ել կփորեն, վոր գու՝ «ժլտտ ասպետի» պես՝ քո զանձերը միայն քեզ համար չպահես։

Համում ենք քաղաք։ Մեր առաջին գործը լինում ե մաքրել մեր կոշիկների անորինակ ցեխը։

— Կապսվա չամուռն ե։— բացականչում են կոշիկ սրբող տղաները։ Նրանք վաղուց ձանաշում են այդ ցեխը։ Յեվ դա զարմանալի չե։ Զրանցքն այցելող 30,000 հոգուց 10,000-ը գոնե դրանց մոտ ե մաքրել իր կոշիկները։ Յերբ վճարում ենք կոշիկ սրբելու արժեքը, չարաձնի փոքրիկները բացականչում են։

— Եսոր ել խերվանք կապսեն...

Այո, մտածում եմ յես, պիտի «կերպենք կապսեն» վոչ միայն այսոր, վոչ միայն դուք, փոքրիկ չարաձնիներ, այլև բոլորը՝ Շիրակի բոլոր բնակիչները՝ քաղաքացի և գյուղացի միասին, և պիտի «կերպեն» վոչ թե նրա ցեխից, ինչպես դուք այսոր, այլ նրա ջրից, լույսից և ջերմությունից...»

— Ի՞նչ ե նկարագրված այստեղ։

— Կարելի՞ յե սա պատմվածք համարել։

— Վո՞րն ե պատմվածքի և այս տեսակ գրվածքի միջն յեղած հիմնական տարբերությունը։

— Փորձեցեք նկարագրել ծեր կատարած երսկուրսիաներից մեկը՝ նախապես կազմելով ծրագիր։ Այդ նպատակով վերլուծեցեք այս ակնարկը ըստ ծեփի, բաժանելով այն հիմնական մասերի։

ԼՅՈՒՄԻ ԹԱՐԳՅՈՒԼ

ՆԱ ԳՆՈՒՄ ԵՐ ԲՈՂՈՔԻ...

Ամբողջ յոթը տարի նա աշխատում եր այդ հիմնարկում հաշվապեհի պաշտոնով։

Վաթունինդի մոտ եր արդեն. գեմքի կնձիոները ծալ-ծալ շարվել եյին իրար մոտ համրիչի հատիկների պես, գագաթի մազերը թափվել եյին վաղուց, և փայլուն, մաքուր մաշկը կարծես գառել եր ճակատի շարունակությունը. միայն զլսի ստորոտի հատու կտոր մազերն եյին մնացել վորոնք ճերմակ պսակի պես զարդարում եյին պատկառելի գլուխը։

Ծերությունից նրա մարմինն արգեն կորցրել եր կայուն վիճակը, անվերջ սեղանին կռանալուց կրծքի վանդակը փոս եր ընկել խոռոչի նման, իսկ դրա փոխարեն մեջը սապատակալել եր, դուրս ցցվել աչքերը կարծես ակնոցների միջից ել դժվարությամբ ելին ջոկում, ձեռները դողում ելին գրելիս, բայց և այնպես առավոտները գրասենյակում ելի ամենից առաջ նա յեր նստած լինում աշխատանքի, չորցամաք թվերի ահագին մատյանը սեղանին դրած լարված ուշգրությամբ գրում եր, ստուգում, փայտացած մատներով զարմանալի արագությամբ ցցում եր համրիչի հատիկները և ուրիշների կատարած ամեն մի սխալը գտնելիս գրիչը փայր եր դնում ձեռքից, հենվում եր աթոռի կոնակին և հանգիստ շունչ քաշում:

— Այ-այ-այ... Մի փոքրիկ հաշվի մեջ 300 ոռություն տարբերություն, — ասում եր նա բարձրածայն զլուխը թափահարելով. — ջահեների մտքից շատ բան է վրիպում, ով գիտե աշխատելիս ինչի մասին են մտածում...

Ու ակամայորեն հիշում եր իր յերիտասարդությունը:

Վոչ մի ուրախ շող չեր գտնում հիշողությունների մեջ:

Դեռ նոր եր դպրոցը վերջացրել յերբ սրտի պայթյունից հանկարծ մեռավ հայրը (նույնպես գրասենեկային ծառայող): Տանը լիքը յերեխաներ... Տատը, պառաված հորաքույրը, բոլորն ել հաց են ուզում, նրանց հույսը նորավարտ Մարտինն եր, իսկ Մարտինը մտախոհ նայում է նրանց և տանջանքից շրթունքները կրծուում:

— Բա համալսարանը, իմ յերազած համալսարանը, — հառաչում եր նա գաղտագողի. — ուրեմն ինժեներ դառնալու բոլոր հույսերս — վիճակ...

Ու առանց տանեցիներին իր հուսախար դրությունը հայտնելու, սուս-փուս մտնում է հիմնարկներից մեկը՝ հաշվապահի պաշտոնով:

— Ինժեներ դառնալու տեսչանքից հետո հանկարծ խեղճ-կրակ հաշվապահ. իսկ տանը լիքը քաղցածներ, — հառաչում եր նա տարիներ շարունակ:

Ու համրիչի հատիկները ցցելով, նա իրար յետեից գլորում ե տարիներ, ու կարծես ինքն ել չի նկատում՝ ինչպես ամուսնանում ե, յերեխաներ ունենում, համաշխարհային կովի ժամանակ իրենից փոքր յեղբայրն սպանվում է զերմանական ֆրոնտում, այրի մնացած կինն ու յերեխաները նույնպես գալիս, փաթաթվում են Մարտինի վզին, ու Մարտինը հոգսից, ասես թե հանկարծ, ծերանում ե, կուշ գալիս, այտոսկրները դուրս են ցցվում բլուրների պես, ծնոտը

թուլանում ե, ու նա դառնում է մեքենայացած մի կմախք, մռայլ, անժպիտ, միտքն անվերջ հոգսերով խճճված:

Որական հազարավոր ոռություններ են գալիս-անցնում նրա ձեռքով, նրա աչքերը հագեցել են փողից, նրա ձեռները միշտ լի յեն փողով, սակայն գրաններում միայն սառը կոպեկանոցներ...

Միայն ոռնիկ ստացած ժամին ե նրա զրպանը տաքանում և դեմքը փայլում ուրախությունից, սակայն հիմնարկությունից դուրս է գալիս թե չե, հերթով անցնում է սրա-նրա մոտ ու պարտքերը բաժանելով բարձրանում ե տուն, իսկ միքանի որ անց, տանից իջնելիս, ելի հերթով հանդիպում է սրա-նրա մոտ ու վերադարձած փողերը հավաքելով «նոր պարտք» անվան տակ՝ գնում ե. ու այդպես անվերջ:

— Այ Մարտին բիձա, տալի վորն ե, առնելի վորը, — ծիծադում են ծանոթները, — են ե, պարտք խո պարտք, թող մնա, ժամանակին չկարողացար վերադարձնել՝ անուշ արա, ջանդ սադ:

— Հաշվապահն ամենից առաջ պետք ե իր հաշիվները ճիշտ պահի, — պատասխանում ե նա ժապտալով. — յեթե անձնական հաշիվներդ սխալ տարար, պետական հաշիվները հո սխալ կտանես-կտանես:

Վարիչը շատ գոհ եր Մարտին բիձալից:

— Այ քեզ իսկական խորհրդային ծառայող, — ասում եր նա հրաժանքով իր ընկերներին, տարիներ շարունակ աշխատել ենք միախոհ, և նա այդ ահագին ժամանակվա ընթացքում վոչ մի աշխատանքային բոպե և պետական կոպեկ իշարը գործ չի գրել. որինակելի աշխատակից ե մեր Մարտին բիձան:

Ու վորպես վարձատրություն այդ բարեխիղճ վերաբերմունք, վարիչը հարց գրեց վարչության ժողովին.

— Ազատել Մարտին բիձային աշխատանքից ու նշանակել կենսաթոշակ:

Միքանի որ անց Մարտին բիձան, իզարմանք բոլորի, սառնարտությամբ լսեց վարչության վորոշումը, գրիչը վայր գրեց ձեռքից, փոշոտած ակնոցների արանքից յերկար նայեց վարիչի նոր ածիւված դեմքին ու բողոքեց վշտացած.

— Քանի վոր ձեռներումս ուժ կա և զլիսումս խելք, չեմ դադարի աշխատելուց:

— Բայց չե վոր, սիրելիս, ամբողջ կյանքումդ տանջվել ես չարաչար, ծերությանդ հասակում անհրաժեշտ ե քեզ հանգստություն, — համոզում եր վարիչը, քնքշությամբ խոսակցի չորացած ուսին խփելով:

— Ես ե՛ կմեռնեմ ու ընդմիշտ կհանգստանամ, դրա մասին
չարժի մտածել:

Այս պատասխանից հետո վարչությունը վորոշեց ավելացնել
բարեխիղճ հաշվապահի ոռնիկը քառասուն տոկոսով:

Մարտին բիծան այդ որը ուրախությունից կարծես ջանելա-
ցավ, կարծես զեմքի կնճիռները հարթուկվեցին, չքացան, նա դեռ
շպրտեց անպետք ակնոցը, աշխուժացած մոտեցավ վարիչին ու
շորհակալությամբ նեղմեց նրա ձեռքը:

— Սրանից հետո գեռ տասը տարի կարող եմ աշխատել, —
ասում եր նա գոհունակությամբ:

Դրանից միքանի ամիս հետո նա տխուր-տխուր ճանապար-
հում եր վարիչին, վորին կուսակցությունը փոխադրում եր այլ
աշխատանքի:

Հենց սկզբի որից նոր վարիչը դուք չեկավ շատերին: Նա կար-
ծես դժվարանում եր բարեկել աշխատակիցներին ու առանց վոշ-
վոքի վրա ուշադրություն դարձնելու, անցնում եր իր կարինեար-
դուռը փակում և շուտ-շուտ հեռախոսով զրուցում ինչ-վոր Մարի-
ցայի հետ:

Աշխատակիցներն շտապ գործով վազում եյին դռան մոտ ու
կանգնում շվարած:

— Ընկեր Ստեփանյան, հարկավոր ե...

— Ընկեր Ստեփանյան, կարելի՞ յե իմանար, թե...

— Ընկեր Ստեփանյան, մեկը ուզում ե ձեզ տեսնել շտապ գոր-
ծով ե...

— Կարծում եք յես պակամ շտապ գործով եմ խոսում, ի՞նչ
եք խանգարում, — խոսում եր նա ջղայնացած, հեռախոսի խողովակը
կախելով:

Մարտին բիծային ամենից շատ դուք չեր գալիս նոր վարիչի
ծակող նայվածքը. նա առանց նայելու զգում եր այդ աչքերի ցըն-
ցող զորությունը: Շփոթվում եր Մարտին բիծան, գրիչն ավելի յեր-
դողդողում նրա դողդողացող ձեռքում, և յերկոր ժամանակ չեր
կարողանում տեղումը հանգստանալ:

Նալաթ չար սատանին, — վիճինթում եր նա քթի տակ և
աշխատում եր ուշադրությունը կենտրոնացնել, բայց չեր հաջող-
վում:

Յեվ այդպիսի շփոթ մի բոպեյում նա առաջին անգամ հաշիվը
խառնեց և այնպիսի մի սխալ արեց, վոր ինքն ել զարմացավ և
ջղայնությունից ամբողջ գիշերը չկարողացավ քնել:

— Տո քոն, տո հայվան... խո չեյի՞ր ցնդել, — նախատում եր
ինքն իրեն, — քեզ ի՞նչ պատահեց, վոր զոռով-զոռով անունդ կոտ-
րեցիր...

— Ասա են անտեր 10-ը վոր ջհանդամից գտար, բերիր, 70-ի
պոչին կապեցիր, — հառաջում եր նա զլուխը թափահարելով և
իրար յետեից ծխում անդադար, սակայն ծխի միջից հակառակի
պես ելի գծագրվում եր նոր վարիչի գազազած դեմքը:

— Նման տգեաները ի՞նչ են քաշ գալիս մեր հիմնարկներում, —
կարծես գոռում եր վարիչը նորից, պահանջագիրը շպրտելով, —
իհարկե են ավելորդ տասը ուուբին գրանիցդ չի գնում, վոր
սիրադ ցավի:

Քիչ եր մնում Մարտինը գետին մտներ ամոթից. նրա փոս-
տնկած այտերն այրվում եյին կրակի պես, իսկ զլուխը կախ-
եր ընկել աչքերը չելին բարձրանում:՝

— Ը-ընկեր Ստեփանյան, խնդրում եմ նե-ներեք... կյանքումս
առաջին անգամ սխալվեցի հա-հաշվի մեջ, վեասը կրկնապատիկ
ստացեք:

— Գիտեմ, ձեզեաներին լավ եմ ճանաչում, հանցանքում
քոնված գեպքում վոչիսար եք դառնում, իսկ մնացած ժամանակ
գայլի նման անխնա հոշոտում եք մեր պետական փողերը, անհա-
բագատներ...

Այդ խոսքերից Մարտինի աչքերը մթագնեցին, հարկարծ ծնոտ-
ներն ամուր սեղմվեցին իրար, նա բորբոքված բարձրացը զլուխը
ու արնակալ աչքերով նայեց վարիչին:

— Իրավունք չունեք զրպարտելու մի խորհրդային ծառայողի,
վորը գուցե ավելի սրտացավ և վերաբերվում դեպի պետական կո-
պեկները, քան թե...

— Ոհո՛, իրավունքի մասին ճառողին մտիկ, — ընդհատեց վա-
րիչը հեղնանքով և մոտեցավ հեռախոսին:

— Այդ դժւ յես, սիրելի Մարի... այսինքն վարիչն ե խոսողը...
Խողովակից լսվեց կանացի յերկարատե քրքիչ:

Իսկ Մարտին բիծան անուշադիր մնաց ու ճարահատված դուրս
յեկավ կարինետից:

Հաջորդ որն աշխատանքի գալիս Մարտին բիծան զարմացած
կանգ առավ գըասենյակի դռան մեջ. նրա աթոռին նստել եր մի
անձանոթ յերիտասարդ ու հաշվեմ սոյանը առաջը զրած աշխատում
եր հանգիստ:

— Թվո՞ւմ ե, թե...

Նա տրորեց աչքերը. շփոթված դես-դեն նայելուց հետո անհամարձակ առաջ յեկավ ու քաղաքավարի ժպտալով ասաց.

— Ներեցեք, ընկեր... Այս իմ սեղանն է, խնդրեմ տեղուազա...

— Խնդրեմ չխանգարել—ընդհատեց յերիտասարդը, առանց խոսակցի դեմքին նայելու.—համապատասխան բացատրություն ստանալու համար կարող եք դիմել ընկեր Ստեփանյանին:

— Ի՞նչ բացատրություն,—մտածում եր նա շվարած,—տառ ոռւրին արդեն ոռնիկիցս հանեցին, ել ի՞նչ կարող ել լինել...

Նրա հուզված շնչառությունը լսվում եր գրասենյակում, նա հարցական դառած նայում եր աշխատակիցներին, իսկ աշխատակիցները խեթ-խեթ նայում եյին նորեկին և դժգոհությամբ գլուխ-ները թափահարում:

Գրասենյակի ճնշող լոռությունը սարսափեցնում եր նրան, միայն նորեկն արագ-արագ շխշկացնում եր համրիչի հատիկները և հազում ինքնագոհ:

Յեկ համրիչի շխշկոցը, և նորեկի հազը, և ընկերների դեմքերի արտասովոր արտահայտությունը, և գրիչների ճոճոցը կարծես մի տեսակ չարագուշակ գաղտնիք եյին փսփսում, իսկ այդ գաղտնիքը հետզհետե բացվում, պարզվում եր նրա համար:

Նա դողաց. սպրդնեց... Ապա դժվարությամբ բարձրացրեց գլուխը և ունքերի տակով նայեց նորեկին. նորեկի փայլուն աչքերը դեմ առան նրա ահաբեկված աչքերին, նա ցնցվեց. Նրա սիրտը ճմլվեց ուժգին, գլուխը նորից կախ ընկավ, ու կոպերը փակվեցին:

Նա նոր ճանաչեց այդ յերիտասարդին. վարիչի բարեկամն եր նա, միքանի անգամ տեսել եր նրա կաբինետում:

— Այ Մարտին բիձա, ինչի՞ յես քարացել—ասաց աշխատակիցներից մեկը, կարեկցությամբ թեր վերցնելով,—անցիր վարիչի մոտ, բացատրություն պահանջիր:

— Ուրեմն կըկըր-ճատված, —թոթովեց Մարտին բիձան: Աշխատակիցը դժվարացավ պատասխանել:

— Մարտին բիձան մտամոլոր կանգնել եր կարինետի դռան մոտ և սպասում եր սրտատրոփ, վոր վարիչը խոսակցին ճամպու դներ, նոր հետո ինքը մոտենար:

Ընդհանուր բաժնից համառ կերպով նրա ականջին եր հասնում համրիչի շխշկոցը. այդ ձայնը մի շատ սկրելի, հեռագոր յերգի պես մղկտացնում եր նրան. հուզված ուզում եր ականջները խցկել և միւնույն ժամանակ ուզում եր լսել: Ամբողջ քառասուն-

տարի այդ շխշկոցը յեղել եր նրա ամենորյա աշխատանքի յերգը իսկ այսոր նա զրկվում է այդ ձայնից:

— Դես, Մարտին, ել ի՞նչ ես կամսպնել գնա մի գդալ ջուր առ, խեղդվի, ելի,—մրմնջում եր նա ինքնիրեն՝ մշուշապատ աչքերով միգապատ հեռուն նայելով,—ամբողջ հաշվապահական կյանքում մի սխալ անեմ, են ել եսպես գլխիս տան, դուրս շպրտեն...

Նա հավատացած եր, վոր յեթե նախկին վարիչը լիներ, յերբեք այդպես չեր անի. նախ նա ժպտալով կմոտենար, ժպտալով կխոսեր կատարված սխալի մասին, ժպտալով սխալված գումարը դուրս կհաներ սխալվողի ոռնիկից և կզգուշացներ ավելի ուշադիր աշխատել՝ սխալը չկրկնելու համար:

Ու դեռ կավելացներ...

— Մարդս սխալական ե, —և սխալը պիտի ուղղեր:

— Ի՞նչ եք կամենում, —ձայնեց հանկարծ Ստեփանյանը, Մարտին բիձային նոր նկատելով:

Մարտինը վեր թռավ ձայնից և հուզումը զսպելով մոտեցավ սեղանին:

— Ուզում եմ իմանալ, թե ինչո՞ւ համար եք ինձ աշխատանքից հեռացրել:

— Այսինքն կրծատել, —ուղղեց վարիչը ժպտալով:

— Այս...

— Հիմա խորհրդակցություն ունեմ, վաղը կամ մյուս որն անցեք, կիմանաք:

— Ուզում եմ իմանալ, թե ինչո՞ւ համար եք ինձ աշխատանքից հեռացրել, —կրկնեց նա դիմացինի անտարբերությունից սաստիկ բորբոքված:

— Զեք լսո՞ւմ, ինչ ե, ասացի գնում եմ խորհրդակցության, վաղը, մյուս որն անցեք, կիմանաք, —պատասխանեց վարիչը ձայնը բարձրացնելով: Յեկ ել ուշադրություն չդարձնելով խոսակցի վրա, վերցրեց դատարկ պորտֆելը և դուրս յեկավ կարինետից:

Մարտինը վիրավորված նայեց նրա յետեկից ու հեռացավ:

Ուղիղ յերկու շաբաթ տեսեց, մինչև վոր նա վերջապես արժանացավ Ստեփանյանի ընդունելությանը:

— Գիտեք ինչ, հարգելի պապաշա, —սկսեց վարիչը այս անգամ չափազանց սիրալիք և աթոռ առաջարկելով, —իհարկե, շատ եմ ցավում, բայց յես այլ կերպ չեյի կարող մոտենալ:

— Լավ, հանուն վո՞ր մեղքիս, ե, —ընդհատեց Մարտինը հուզված, —հաշվի մեջ տաս ոռւրի ավել եյի գցել, են ել զրանիցն գանձվեց, ել ի՞նչ եմ արել...

Միայն դա չե պատճառը, — աշխուժով վրա տվեց խոսակիցը,
— բա ի՞նչ...

— Այն, վոր դուք ծերացել եք արգեն, ձեր ձեռները դողդո-
ղում են, չեք կարողանում արագ աշխատել, մինչդեռ մեզ հարկա-
վոր ե, այ, են նորեկի պես աշխուժ աշխատակից:

Ասես հանկարծ թնդանոթ պայմանագրեց Մարտին բիձայի ական-
ջում. նա ահաբեկված վեր թուավ տեղից, ու աչքերը մթագնեցին:

— Միթե յես իմ աշխատանքը լիովին և նույնիսկ նորմայից
ավելի չեյի կատարում, — գոռաց նա հանկարծ ու ինքն ել իր ձար-
նից վախեցավ, — այդ ի՞նչպես այս հիմնարկում տարիների ընթաց-
քում ինձ վոչվոք նկատողություն չարեց, իսկ դուք յեկաք թե չե,
յես անպետքացա... Ապացուցեք ձեր ասածը փաստերով...

Հուզումից գողում եյին նրա շրթունքները, աչքերը կարծես
ուզում եյին թուչել խոռոչներից, վզի չորացած յերակները կանգ-
նել եյին փայտի պես. իսկ ծալծլված դեմքն արտահայտում եր
կատաղի ցասում:

— Իսկ սրանից հետո յես, ընտանիքս ինչո՞վ ապրենա, — շա-
րունակեց նա վհատ տոնով, ու փոս ընկած աչքերն արցունքու-
վեցին:

— Հնարավոր յեղած դեպքում չեմ խուսափի լավություն ա-
նելուց, — ասաց վարիչը մեղմությամբ, — աշխատանքի թերթիկի վրա
փոխանակ արձանագրելու, վոր «ընկերը հեռացված ե աշխատանքի
անընդունակության պատճառով», կորեմ՝ քանի վոր տեղական կլի-
ման քայլայում եր ընկերոջ առողջությունը, ուստի նպատակահար-
մար գտանք ազատել նրան տեղական պայմաններից». դրանով դուք
հնարավորություն կունենաք գնալ մի ուրիշ տեղ և հեշտությամբ
աշխատանք գտնել:

— Ի՞նչ եք կարծում, ընկեր Մաեփանյան, յեթե ուրիշ միջա-
վայրում ծառայելիս լինեմ, նորից «աշխատանքի անընդունակ»
լինելու պատճառով վնաս չեմ հասցնի նույն հիմնարկին, — հեզնեց
Մարտինը դառնացած ու դուռը շրխացնելով դուրս յեկավ փողոց:

Յերկար ժամանակ նա գնում եր որորվելով. չնայած ցրտա-
շունչ ձմռան, նրա մարմինը այրվում եր կրակի նման, նրա հոգին
լի յեր մաղձով կատարված անարդարության դեմ, նա ուզում եր
ճշալ, բողոքել:

Դիզվող ծյան տակ կանգնած յերկա՛ր խորհում եր Մարտին
բիձան, ու հանկարծ մի միտք փայլ տվեց նրա հանգած աչքերին,
նրա դեմքը պայծառացավ, չորացած մարմինը ջերմացավ, վոտներն
ուժ ստացան, ու նա սկսեց արագ և վստահ առաջ ընթանալ:

Նա գնում եր բանգյուղաբեսչություն, — բողոքի...

— Ի՞նչ միջավայր ե նկարագրված այս պատմվածքում:
— Ո՞վ եր Մարտինը. բնորոշեցեք նրան, իբրեւ խորհրդալին ծառա-
յողի:

— Համեմատեցեք հիմնարկի նախկին վարիչին Մաեփանյանի հետ.
ի՞նչպես կարելի յե բնորոշել վերջինիս:

— Կարելի՞ յե մոտավորապես յեզրակացնել, թե ինչ վերաբերմունք
ցույց կտա բանգյուղաբեսչությունը դեպի Մարտինը յեվ դեպի Մաեփա-
նյանը:

— Հավանում եք արդյոք հեղինակի պատմելակերպը:

— Ի՞նչ թերություններ ունի հեղինակի իեզուն:

— Կա՞ն արդյոք այս պատմվածքի մեջ չափազանցություններ:

— Ի՞նչ փոփոխություններ կարող ելիք առաջարկել՝ այդ չափազան-
ցությունները վերացնելու համար:

ԱԿՍԵԼԻԱ

«ԱՐՏԵԼԻԱ»

1

Ամուսն կեսորդա կիզիչ արկը խանձում ե: Մի նեղ կածանով
ձին զգուշ փոխում ե քայլերը, իջնում, նորից բարձրանում:

Գյուղը դեռ չի յերեսում:

Կածանը ցորենի արտերի միջով ե անցնում: Բելք չկա այս
տարի, ձմռան ցրտերը կտրել են, յերաշտն ել մի կողմից ե այրել:
Մրտերում՝ լղարիկ հասկեր, հատ ու կենտ թզաչափ բարձրության:

Կանաչն ե փոփուռմ միայն բազմերանգ ծաղիկներով՝ բնական
մարգերում, վոր նախշուն գորգերի պես փուկել են սարալանջերին:

Հեռվից, ասես, քաթանի կանաչ գույնի վրա մեկը վրձինով
քմահաճ գծեր ե քաշել՝ մի տեղ կարմիր, մյուս տեղ դեղին:

Բանուկ ճանապարհ չե: Գնում եք ժամերով, վոչվոքի չեք հան-
գիպում: Հնձի ու վարի ժամանակ միայն միքանի որ բանում ե
ճամպան: Գյուղից-գյուղ յերթեեկ քիչ կա: Ամեն գյուղ ինքնամ-
փոփի ե, հարևանի մոտ գնալ-գալ չունի:

Կածանն իջնում ե գեպի ձորը, անցնում սրածայր ժայռերի
տակով: Վարեծքը դժվար է, քարոտ, առապար: Ներքե անդունդ ե.
մի անզգուշ քայլ՝ և մեծ կտորը ականջդ կմնա: Վերեսում ժայռեր
են, վորոնց հիմքը հեղեղը փորել ե, մաշել, և մի թեթև ցնցումի
յեն սպասում, վոր գլորվեն ներքես:

Մի հեղեղ լինելիս՝ ավազախառն սելավը սրբում ե կածանը,

բար ու հողով ծածկում և տեղաբեղ դժվար անցանելի խորխորասր կազմում:

Քերծի տակից մեկը հերսոտ «թոշ-թոշ» ե անում և հայնոյում: Հավասարվում ենք: Գյուղացի յե, հանդ ե գնում: Մի սրածայր մահակով բգում ե եշին, զարկում դայրացած, իշտիրոջ հերն անիծում:

Լզար, քոսոտ եղ ե, գութանի խոփն ու թել բարձած: Բարակ վոտքերն զգուշ ե փոխում և ամեն քայլափոխին տնքում բեռան տակ:

Գյուղացին ել ե շալակել և քափ-քրտինքի մեջ կորած, դըժվարին վերելքով և ինքն ե բարձրանում շալակն ուսին և եշին բըզում, հըում:

Մի կողմ եմ կենում, վոր անցնի:

Շալակը մի քարի յե գնում, մեջքը դեմ ե տալիս և փափախով քրտինքը սրբում: Գեղի ճանապարհն եմ հարցնում:

— Հենց ես կածանը գեղի վրա յե իջնում,—ասում ե և հարցը նում, թե ինչու յեմ գնում:

Պատասխանում եմ. նա միքիչ մտածում ե, ասում, վոր լավ գործով եմ գնում:

— Բարի նպատակ ա...

• Յեկ վոտքից գլուխ մի հայացքով չափում ե ինձ, նայում ձիում սարք ու կարգին:

— Յես ես կառավարության մի բանը զլիսի չեմ ընկնում: Եղ վնաց ե, գյուղերը ման եք դալիս ու մի նշան չունեք, վոր տեսնողն ել իմանա, թե որենքի մարդ ես: Առաջ ե, են քյոխվեն, վոր ելի անուսում մի մարդ եր, մի մեծ զինջիլ վզին կախ եր ման դավիս: Տեսնողն ել իմանում եր, վոր հա, սա քյոխվա յա...

Ասաց ու քրտինքը նորից սրբեց:

Այնքան չարքաշ դեմք ուներ, խեղճ արտաքին: Տեղով մի միտք եր, թե՝

— Յես հեչ, հա, քո ասածն ա...

Եշը բավական հեռացել եր:

Նա մի անգամ ել կրկնեց, թե կածանն ուղիղ գեղի վրա յե իջնում, բեռը շալակեց և վոտները ծանրության տակ կքելով, սկսեց բարձրանալ սարնիվեր:

Քիչ հետո նորից լսվեց նրա բարկացած «թոշ-թոշը»:

Ներքեւ ձորի մեջ լեռնային գետակն եր աղմկում, ձերմակ փրփուրներ բաշին զարկոտում քարի վրայով:

Մի պահ դժվար թվաց ինձ աշխատանքը գյուղում, վորպես ա-

ռապարը քարոտ, անհատակ՝ անդունդի պես և անգուլ, ինչպես հոսանքն աղմկող գետակի:

2

Անսվաղ պատերով մի մեծ սենյակում տեղափորված են և «խըրձիթը», և գյուղխորհուրդն ու ՓՈԿ-ը:

Սենյակում տաշեղների կիտուկներ են թափված հատակին, ուանդած տախտակներ և հյուանի գործիքներ: Դպրոցի համար նըստարաններ են պատրաստում: Լենինի նկարը սեացրած, քարից խըրմորով փակցրած և պլակատներ՝ մի հատը թարս կախած և լոզունգներ շարեշար, իբր նախշ:

Գյուղում խսկույն իմանում են, վոր քաղաքից մարդ ե յեկել: Յեկ մեկ-մեկ հավաքվում են, անպատճառ մոտենում, ձեռք տալիս, քեֆ-հալ հարցնում և հեռվից, կեռումեռ ճանապարհով մոտենում գալուդ նպատակին:

— Տեսնում եք, ինչքան քանդված տներ կան մեր գյուղում: Յոթն անգամ ենք գաղթել,—ասում ե մեկը:

Ավերակ տներ շատ կան, պատերը փլված, դուռ ու պատուհան այրած, հանած տեղից: Ազգամիջյան կոփմսերի ընթացքում միքանի անգամ տեղահան են յեղել, թալանվել և նորից վերադարձել, դոմ ու մարագ նորոգել, տունը կարգի բերել:

Ավերակ տնատեղերում փարթամորեն աճել են սոխ, կաղամբ, ծխախոտ:

Տան դիմաց, ծառի շվաքում իր աժդանա հասակովը մեկ փովել ե մեկը, քնել մուշ-մուշ:

— Զան նրան: Աչք ել չունի, աչքացավ եր,—ասում ե մեկը և ավելացնում, վոր քնողը գեղի աղքատներից ե, տանն ուտելիք չկա, գյուղում ել՝ աշխատանք:

Բագվից մի բանվոր ե յեկել նույն գյուղացի: Ընկերները նըրան ուղարկել են գյուղի ապրուստն իմանալու, գպրոցի կառուցմանը հսկելու: Փող են հավաքել դպրոցի համար, գրքեր ե բերել և մի զրոշակ, վոր միքանի որ առաջ առանձին շքով գյուղին են նվիրել: Բագվի բանվորների վրա մեծ հույս ունեն:

Դպրոցի կառուցման աշխատանքը նրանց վզին ե ընկած: Գյուղը միայն աշխատավոր ձեռք ե տալու, քար ու կիրն ե բերելու:

Միքանի հողի գանգատվում են, վոր թերթերը կանոնավոր չեն ստացել:

— Հենց միայն անունն ենք լսում, բայց իրան չենք տեսնում:

Նախագահը ժողովը բացում է։ Հավաքվել են, նստուել զետին, տաշած տախտակի վրա, պատուհանին։

— Եդ մահակները միքիչ քաշ պահեք, — նկատում է նախագահը դռան մոտ կանգնած միքանի հոգու, վորոնց բարձր պահած մահակները ներս մտնողին խանդարում են։

Որակարգում խնդիրներ շատ կան։ Արտել, հողային հարց, դաշտապահի ընտրություն և զանազան գործեր։

Նախագահն ինքն է խոսում արտել կազմելու մասին, պատմում է, թե ինչքան դժվար է աղքատ զյուղացու համար մենակ աշխատել։

Տասներկու տնտեսություն միացել են և մի գութան տոել։ Այդ գութանի հետ է կապված արտել կազմելու գաղափարը։

— Մենք պետք ա «արտելիա» կազմենք, վորպեսզի մենք ել մարդկության շարքերում դասակարգվենք, — վերջացնում է նա իր խոսքը։

Վոմանք դժվար են համոզվում։ Մեկը, մահակին հենված, որինակով ու առակով ե իր միտքն ասում։

— Գութանում բոլոր յեղները մին չեն. դալը յեղ կա, վոր հածերից դուրս ե քաշում, ծուլություն անում։ Նմանապես և «արտելիան»։ Յեթե բարկանամ՝ արնակոլու անեմ, տերության առաջ մեղավոր եմ. չանեմ՝ ընկերս թամբալ ե, ինձ հետ չի դալիս, բայդ վոնց անենք։

Շատ են խոսում, աշխատում են իրար համոզել։ Մի փոքրիկ խումբ է նկատվում, աչքաբաց ջահելեր, վորոնք, ինչ ել լինի, վորոշել են «արտելիան» հիմք դնել։

— Քյասիբը թող մեզ հետ գա, Մուքի ապեր։ Մենք ջոկովի աղերք ունենք, մինը մինից ասլան։

Մուքի ապերը «զալք» յեղան պատմությունն անողն է։ Դարձյալ առակով և որինակով ե խոսում, բայց վերջում ջահելերը հաղթում են։ Մուքի ապերը մի անկյուն է քաշվում, չիբուխին զոռտալիս և փափախի տակից ունքերը կիտած նայում ջահելերին, վորոնք իրեն հակառակ խոսեցին։

Միքանի սպիտակ գյուղացիք թիկն են տվել պատին, թաղբեք են քաշում, ժպատում են ծերի ժպիտով, բարի ու զարմացած են, վոր իրենց կյանքի վերջում ջահելերը շսած-չտեսած բաների մասին են խոսում։

Հողային վեճ կա, ավելի ճիշտը՝ մի ծառի հարց։ Ծառը յերկուսի սահմանում է բուսել, արտի միջում։ Հին վեճ է. ամեն տարի նույն բանը կրկնվում է, յերբ պատերը նորոգում են, փլվածը պատում։ Մեկն ասում է, թե՝ ծառն իմն է, մյուսն ել՝ իմն է։ Զեն ել ուղում ծառը կտրել, բայց այնքան պինդ են պատել շուրջը, վոր ծառի բունը չի հաստանում։

Վեճին վերջ են տալիս, ծառը համարում դպրոցի սեփականություն։ Կողմերը մի պահ վարանում են, հետո համաձայնվում։

— Թող ձեր ասածը լինի...

Հանդում մի վոչխար է կորել, թուրք քոչվորի վոչխար։ Տերը գյուղի խորհրդից խնդրել է իմանալ, թե ով է տարել։ Ելի Մուքի ապերն է խոսում։

— Եդ մի նամուս չի մեզ համար, այ ժողովուրդ, հարկանք, եգուց ել մեր տավարը նրանց հանդում կարող է կորչի։

Յեկ Մուքի ապերն առաջարկում է՝ վոչխարը յեթե չգտնվի, գյուղի վոչխարներից մեկը նվիրել քոչվորին։

Առաջարկներ են անում, կասկած հայտնում, թե կարող է գայլերած լինի։ Բայց Մուքի ապերը չի համաձայնվում։

— Գայլը վոր ուտի, մի հետք կմնա. — և ավելացնում է.

— Հիմա վոչ ծեծ կա, վոչ ել յերգում տալ։ Գողն ել չի առելու. ել ինչպես իմանանք, թե ով է կերել ես քյասիբի վոչխարը։

Յեկ առաջարկում է կասկածավորին միքանի ոռղդի հասցնել, ու վոչխարը իսկույն մեյդան կհանի։

— Մուքի ապեր, հիմա թակ չկա, — ասում է Բագվից յեկած բանվորը։

— Եդ ե փիս, ե... պիտի թակես, վոր գողի աչքը վախենա, — պատասխաննում է Մուքի ապերը։

Միքանի հոգի գլխով հավանության նշան են տալիս։

Ժողովը վերջանում է։ Մեկը մոտենում է ինձ, հայտնում, վոր առանձին ասելիք ունի։

Գյուղթղթակից ե, գյուղի ժրաշան աշխատողներից մեկը, «արտելիայի» մասին առաջին անդամ նա յէ խոսել գյուղում։ Մի պակաս տեսնելիս գրում է, իմաց ե տալիս թերթին։

— Թե չե՝ միքանի տուն կա, վոր չվախենան, գեղի աղքատներին հում-հում կուտեն։

Հողված ե գրել վոր այդ ունկորներից մեկը մի աղքատի խարել ե և հողը զավթել։ Հողվածը տպել են, լրագիրը գյուղ ե հասել, կարդացել են ժողովում։ Յեվ հալածանքը ծալր ե առել։ Սպառնացել են, թե՝

— Խելքդ գլուխդ՝ հավաքիր. յեթե մի անգամ ել մեզ խայտառակ անես, մեր պատվին դիպչես, գլուխդ ուսերիդ վրա չի մնա։

Ափաշկարա չեն հալածում. ծածուկ են անում։ Թղթակցի արտըն են արածացնում գիշերով, տավարը նրա խոտանեղին քշում, ծառը կտրում, քաշած պատը փլցնում։

Մութն ե արդեն։

Գյուղի դիմաց վողորկ լանջով մի սար ե ցցված՝ սրագագաթ ու լերկ։ «Դադ-Մելիքի» սարն ե։ Նստել ենք տան առաջ։

Հսկերս պատմում ե, թե ինչու սարին «Դադ-Մելիք» են ասում։

— Մեր գյուղն առաջ Մելիքին եր պատկանում։ Պապս եր պատմում, թե Մելիքն ինչ ուզեր, անում եր գյուղում։ Մի լավ որ չեյին տեսնում նրա ձեռքից։

Ու յեթե մեկը հակառակ գնար Մելիքի կամքին, ուզածը չը կատարեր, մարդ եր ուղարկում, բռնել տալիս, վոտ ու ձեռ կապում և սարի գլխից գլորում... են որից ել սարի անունը մնացել ե «Դադ-Մելիք...»

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

ԳՅՈՒՂԱՇԽԱՎՈՐԻ ՏԵՏՐԱԿԻՑ

Մութն ընկնելուց, մեկ-մեկ գալիս են գյուղխորհրդի անդամները։

— Դե, սկսենք, — հայտնում ե ընկերս, վոր ամբողջ որը վոտքով շրջել ե գյուղի դաշտերը, մեկ առ մեկ ցուցակ կազմել ցանած ցորենների ու բամբակի հերկի։

Նիստն սկսվեց. Նախագահում ե գյուղխորհրդի նախագահը՝ Պողոսը։

Մեր նպատակն ե ստուգել հողերի տարածությունը, հաշվել աղատ հողերը, տնտեսությունների թիվը և ըստ այդ տվյալների՝ տնտեսությունների վրա բաշխել 275 հեկտարը։ Տվյալներ պիտի քաղելինք հողամատյանից, այսպես կոչված «լրացուցիչ ցուցակից», Պողոսի դավթարից, վոր չգիտեմ ինչու ծոցումն եր պահում, և... մնացածների հիշողություններից։

Լիտը առ լիտը հաշվում ենք ցորենը բազմաթիվ և բազմանուն

տեղերում. «Ներքին չայիր», «Ճամպի տակ», «Խարաբեք», «Ճուրտ հողեր», «Ղամշկուտ», «Բարսեղի տափ» և հազար ու մի անուններ, վորոնք կազմում են Քյոթանլվի հողերի քարտեզը։ Հողամատյանը կազմել են 1923 թ.։ Նրանից հետո փոփոխություններ են յեղել, մեռել են, ծխեր են հանգել, բաժանվել են, ծնվել են, վերաբնակիչներ են յեկել։ Յեվ ծխերի փոփոխության հետ ել փոփոխվել ե հողամատյանը։ «Ղամշկուտի» 9 լիտը, վոր մատյանում գրված ե Սահակ Եյվազյանի անունով, այժմ դերձակ Համոյի ձեռքին ե։ Իսկ Համոն 27 թվին ե գյուղ յեկել, ճշգրիտ հայտնի չի, թե քանի շունչ ե։

Յեվ նման բյուր փոփոխություններ՝ ջնջում, ավելացում։ Մեր ընտրած միջոցը խստ գժվար եր, բայց միակը։ Միայն այդ կերպ կարելի յե ստույգ վորոշել, թե ով և ինչքան պիտի բամբակ ցանի։

Յեվ ինչ տարրորինակ չլսված, շատ անգամ անհասկանալի անունների յենք հանդիպում... «Կակտոս Ռուփյան»... «Ղանդիոս Սըհակյան» կամ, ինչպես գյուղում են ասում, թոփալ Ղանդու «Պիոն Խաչատրյան»... Այրի կին ե, ունի յերեք տղա՝ 16, 10 և 7 տարեկան. անունները՝ Մանթաշով (մեծը), Լիազոր (ծնվել ե 19 թ.), յերբ Դաշնակցության պարենավորման լիազորները գազազել ելին) և կենտրոշա։ Մեծի անվան արտահնչումը շրջապատը ձևակերպել ե «Մանթաշ», իսկ ցուցակում մնացել ե հինը։

— Դրա անունն ել պտի փոխվի, — տրտնջում ե Պողոսը, կարծես անհաշիվ հոգսի ու պարտականության շարքում այդ ել իր տեղն ունի։ — Գաղափարի պակասությունիցն ե... Պիոնին քանի անգամ ասի խառնի կարմիր կնունքին, թող եթա...»

— Տո, անունն ինչ նշան։ Ասա ի՞նքը նոր ծրագրով շարժվի, — պատասխանում ե մյուսը։

— Գարեգին Ռվազյան, — կարդում եմ։ — Յորենը քանի՞ հեկտար ե...»

Անսպասելի կերպով տիրում ե, ինչպես ասում են, գերեզմանային լոռություն։ Լսելի յե, թե ինչպես լամպի ֆիթիլը ծծում ե նավթը։

— Եղանակ միքիչ սպասի, — դանդաղ ասում ե մեկը, վորին, գուան մոտ թիկնելու պատճառով, մինչ այդ չեյինք նկատել։ Յեվ առաջ ե գալիս, ծխախոտը սեղանի ծայրին գնում ու սառնալը տությամբ, ինչպես դատավճիռն են կարդում, բառերը հատհատ արտասահնում։

— Սա վոր կա, մեր գլուղի ամենապերվի կուլակն ա... Մինչև անգամ յես կարող եմ ասել, վոր եվելի մեծ մասշաբի կհարմարի։

Դրուստ ա, թե չե, ընկերներ,—դիմում ե նա: Յեվ 10—15 հոգի միանգամից արձագանգում են.

— Դրուստ ա...

Իսկ նա, վոգեորված, շարունակում ե.

— «Ներքին չայիրը» ցորեն ա. «Ճամպի տակը» ցորեն ա,— եդ 65 լիտր... Են վոր հիմա կարդացիք են, Պիոն Խաչառյանի հողերը կիսու ցանել ե ցորեն... Փոկի «Բարսեղի տափը» կիսու ցանել ե ցորեն... Դե քցի չոտքը, տես 120 լիտրը թամամեց, ինքն ել 3 նաֆար: Ուրեմն թե պիտի Յերևանու բազարումը փութն ոխար մանեթով ծախի: Հա, են կոլոյի հողը ցորեն ա... Ել վո՞րն ասեմ: Ինքն ել պատերի տակ նստած սրան-նրան ծաղը տակ ա քցում, թե չքաշորի կնկա ջանը դուրս գա չանաք անելով: Եղալիսի հականողին ա... բաս:

Յեվ նորից քաշվում ե տեղը:

Մյուսներն արտահայտվեցին: Առաջինի ասածը կարծես շեշտակի հարված եր: Լեզուները բացից. կարծես ավելի կողմնորոշվեցին: Նույնիսկ մեկը պահանջեց, վոր արդեն ընթերցած ցուցակը վերանայվի:

— Տո նրա արարքը մինչի լուս պատմես, չի վերջանա... Են ինչ աղվեսն ա, գիտում ես... Նրա պոլիտակը քանդես, հավատա, վոր ես բոպեյին ել վոսկի կդտնես: Դուք վոնց եք ճանաչում նրան...

Շարունակում ենք ընթերցումը:

— Մկրտիչ Աստվածատրյան,—կարդում եմ ցուցակը:

— Ես ով ե,—հարցնում ե Պողոսը:

— Մկրտիչ Սարգսյան կլինի, —ուղղում ե «անարխիստը»:

— Նա յել կա, —պատասխանում եմ և սպասում, վոր մարդիկ մտածեն ու գտնեն:

Առաջին դեպքը չի: Վոմանք հոր անունով են գրված, վոմանք պապի, վոմանք ել՝ պապերի պապի: Մի յեղբայրը հոր անունով ե, մյուսը՝ պապի: Կանայք կան՝ հայրական ազգանունով, այնինչ նրանք ամուսնացել են, ազգանունը փոխել: Յեվ ընդհակառակը. առաջին ամուսնության ազգանունը այժմ չկա, քանի վոր յերկրորդ անգամ ե ամուսնացել: Ազգանվան փոփոխությունը կախված ե յեղել և գրողից: Յեվ վերջապես, ինչպես Քյոթանլվում, այնպես ել բոլոր գյուղերում, իսկական անվան հետ վոմանք ունեն և՝ ավելորդ անուն, և ազգանուն: Քսան բոպէ մենք կորցրինք, մինչեւ կարողացանք ստուգել, թե ով ե Գևորգ Ռիանյանը: Բանից դուրս յեկավ, վոր նրան կոչում են «Ծուռ բոշա»:

— Հը, գտաք, —հարցնում եմ:

— Տո, ջանմ, եղակես մարդ չկա մեր գեղում...
— Խաչոյենց թագա վիսեն չլինի, —մոտ գալով հարցնում ե մեկը:

— Տո, չե... նա վորտեղից Աստվածատրյան...

— Եհեյ, —բղավում ե դուն մոտ կանգնածը, —Ասոյի Մկրեն ե, Մկրեն...

Պողոսը ձեռքը ճակատին ե խփում:

— Վայ, Մկրեն... վոնց եյի մոռացել...

Արդեն հոգնել են: Միքանի հոգի կիսամութում, գլուխները սեղանին, մուշ-մուշ քնել են: Ճրագում նավթը հտանում ե: Բայց պիտի ցուցակները կազմել, ստուգումը վերջացնել, վորպեսզի վաղը վորոշենք, թե ով ինչքան պիտի բամբակ ցանի:

Շարունակում ենք ցուցակի ստուգումը:

Հանկարծ դուռը թափով բացում են, դուռը չըխկոցով կպչում ե պատին ու յետ գալիս: Քնածները զարթնում են:

— Ես ինչ ժողով ա, —գոռում ե աչքերն արնոտ մեկը, գրգռված, ծվենները կախ շինելն ուսին: Յեվ առաջանում ե. — Զեզո՞վ ա կանչել... Ես ինչ եք անում:

Հաղիկ ե վոտների վրա կանգնում: Սեթոն ուզում ե մոտենալ: Արդելում ենք:

— Հին ոեժիմի ժամանակն ա, հը, խոսեք, ե...

Սեթոն չի կարողանում զապել իրեն: Հարբածը փորձում ե խըփել նրան: Պողոսը տեղից վեր ե թոչում: Ներս ե մտնում յերկրորդը ու բարակ, ներքին սարսափից կետ-կետ ձայնով բոռում ե.

— Մեզ մորթեցիք... Մեզ մորթեցիք... —գոռում ե ու ասես ինքն ել իր ձայնից վախեցած, քարացած նայում ե մեզ:

— Ինկերներ և քաղաքացիներ... Զքավոր գյուղացիներ... Յես ձեր... Զքավորներ և ինկերներ...

Առաջին հարբածին մի կերպ դուրս են անում: Իսկ յերկրորդն ինքն ե գնում և մըմթմըմթում:

— Ինկերներ... և չքավորներ...

Դուրս ենք զալիս բակը: Միքանի ստվեր իսկույն պահպում են յեկեղեցու պատի յետեւում: Կտուրի վրայով թփթփալով մեկը վազեց և թուավ ներքեւ: Նա յերեկ ընկավ փափուկ աղբակույտի վրա, վորովինետե ընկնելու ձայնը չլավեց:

— Լավ, գնանք...

— Տեսանք, վոր ասում եյի կդժգոհեն, —վրա յե բերում մեկը: Նա չի կարողանում իր ներքին հրձվանքը զապել: Նրանք, այն յերկուսը, վոր ներս մտան, զարմանալի նման եյին իրար: Յերկումն ել նիհար, մաշված, յերկուսն ել պատառուած շինելով, մեկը կեպին

դլիսին, մյուսը՝ աղասոտ թաշկիսակով։ Առաջինի մի կողքը ցեխոտ եր. յերեկի ընկել եր փողոցում։

— Ում մոտ են յեղել, — հարցնում ե Պողոսը իր հարևանին։

— Իբր թե չես իմանում, — կշտամբում ե հարևանը։

— Լավ, հետո կպարզենք... Առայժմ պատահածի արձանագրությունը կազմի...։

— Երախկ, և փշրվում ե մի պատուհան, ապակին զրնգում ե։

— Խրճիթն եր, — կանչում ե Սեթոն ու դուրս թռնում։

Մոտակա տներում շները հաջում են։ Հեռվից լավում ե սուլոցի ձայն։ Մութն ե։ Ճրագը Պողոսի ձեռքին դողում ե։ Մոտենում ենք խրճիթին։ Զարդել են պատուհանը. ապակու կտորտանքը թափված էն գետնին, ներսը։ Չթրծած աղյուսի կտոր ե ընկած պատիտակ։ Քար չի յերևում։ Գուցե փայտով են խփել, կամ բոռնցքով։

— Թե մի կպարզեմ ով եր... — զայրանում ե Պողոսը։

— Մի ամիս չկա շուշեքի քցելուն, — ասում ե մեկը և տընտղում մյուս ապակիները։ Ես մեկն ել ճաքել ե...։

— Եղ կար... եղ քցելուց եղակն յեղակ...։

Քիչ հետո նորից ենք շարունակում աշխատանքը։ Ել վոչվոք չի քնում։ Այդ պատահարը սրում ե նրանց միտքն եւ լսողությունը ել։ Ավելի արագ ենք թերթում մատյանը, մարդկանց ավելի հեշտ ենք ճանաչում։

Մոտ 200 հեկտար «տեղ» արդեն արել ենք... Աքլորները կանչում են։ Միայն ֆիթիլի նավթն ե վառվում։ Խաչիկը հավաքում է մատյանները, մեր ցուցակները, և դուրս ենք գալիս գյուղինորհրդից։

Մութն ե։ Իսկ Սեթոն գնաց ու չեկավ։
Կոմսոմոլի շաբաթորյակը...։

Յերեկոյան Խաչիկն ամեն ինչ կազմակերպել եր։ Հայտնի եյին ջոկերը, ղեկավարները. յուրաքանչյուր ջոկ գիտեր, թե վոր չքավոյն ըի բամբակի ցողունները պիտի հավաքի, ուր պիտի թափեն աղըն մոխիրը։ Առաջին յերթն եր, վորին պիտի հաջորդեր ավելի հզուրը, ավելի բազմամարդը։ Այս յեռուղեռը, վոր նկատելի յեր ու սկըրը, ալիքի նման բարձրանալ, առաջին յելքն եր գտնում այդ պարզ, անպաճույն թափորով։

Գնացին յերգելով, կատակներով, գնացին՝ աղա ու աղջիկ, հանաքով ու ծիծաղով։ Գնացին և իրենց հետ տարան մի խումբ «անկառակ» պատահների, մեծահասակ պիոներների, դպրոցի աշակերտների։ Միքանի յերեխաներ, ցեխը կոխ տալով, վազում եյին յերթի յետեից։

Առավոտյան դեմ գյուղ յեկավ մի «Ֆորձոն» ել։ Յեկավ ու

խոփերը բարձրացրած, բագեյի նման սլաց փողոցով։ Նրա ծանրությունից փայտե կամուրջն որորվեց, բենզինի ու նավթի ծուխ շրպրտեց աթարի դեղերին, ցեխի պատերին ու սլացավ դեպի չիմանը, ուր յերկու տրակտոր պատվում եյին իրար յետեից ընդարձակ տափարակում։ պատվում, ինչպես հիպաղողումում ձիերը, սև ակոսներ եյին գծում։

Մի տրակտոր ել։ Այդ նշանակում ե՝ որը մեկ ու կես հեկտար ցել։ Յեթե տասն որ արև անի՝ 15 հեկտար։ Բայց մենք յերկումն ել ունենք։ Ու պիտի նորերը գան, մի ամբողջ կալոն, պիտի գածանը «կեյսը», վորի լայներախ խոփերու ամենակարծր հողն ել թեթև են շրջում։

Պիտի գա տրակտորների կալոնը, «Ֆորձոն»-ներ ու ծանր «կեյսը», սակայն արև ե, ու զեռ չկան։ Իսկ յուրաքանչյուր որը վճռական նշանակություն ունի մեր պլանի համար։ Յեթե հանկարծ ձյունի, հողերը կմնան խոպան, գարնանը չենք հասցնի և վրը, և ցանքը։

Հարկավոր ե գութաններն ել հանել։
Մոտենում ենք գյուղիորհրդին։ Հավաքված խոսում են նրանք, ովքեր յերեկ կային։ Նոր դեմքեր ել կան։ Արդեն տեղեկացել են մեր աշխատանքի մասին։ Գյուղիորհրդի անդամներն են պատմել, կոմյերիտականներն են ագիտացիա արել տներում, իրենց բարեկամներին ու ծնողներին համոզել, վոր բամբակի կոնտրարակտ կնքեն։

— Ուրեմն մեզ ել պլծում չկա, ելի, — ասում ե Պողոսը, գրապանից հաց հանելով։

Նրա աշխատանքը շատ ե։ Գետափի ամբացման համար ամեն որ պիտի 20—25 բանվոր տա, պիտի տեղափորի տրակտորիստներին, գյուղական ճանապարհների և կամուրջների նորոգման գործին պիտի հետեւ և սովորական կարգով Քյոթանլվի պես վեց գյուղի առորյային ընթացք տա։

Պողոսն անլվա յե. վոտքերը բոպիկ։ Յեխոտ չուստի վրա կախվել են վարտիկի կապերը։

— Դուք սկսեք, մի յես տեսնեմ ինչ արեց կատարածուն...։

Յեկ չուստերը շլոփ-շլոփ քաշ տալով, գնաց կոռպերատիվի կողմը։

Բակը մտավ յերիտասարդ մի աղջիկ, հնամաշ վերարկուն ուսերին. նրան հետևում եր մի ծեր կին։ Յերբ շրջվեցինք նրա կողմը, աղջիկն ամաչեց, կարմրեց։ Նա կաղում եր. գուցե դրա համար կաս-կարմիր յեղավ նրա յերեսը։ Ապա մոտեցավ ու, գլուխը վեր բարձրացնելով, շեշտակի նայեց մեզ։

— Սրան ել գրեք... Սրա նման մեր գյուղում բամբակ ցանող չկա...։

— Հրանուշ, մեռնես դու... Ես ել քանի՞ հոգու բերիր:
 — Չորսը,—պատասխանեց նա ու հանդիմանական շեշտով ա-
 սաց:
 — Բա ամոթ չի, վոր շրջանի մեջ ամեն տեղ մեր գյուղի վա-
 տությունից են խոսում:
 Նրա աչքերը բոցկլտացին: Աղջիկը ձեռքերը խրել եր վերաբ-
 կուի գրպանը, կարծես ձեռքում մի ինչ-վոր բան եր պահել:
 Ջգացի, վոր առանձին մի բան ե ուզում ասել, գուցե թուղթ
 ե գրպանում: Ըսկերս հասկացավ ու բակում կանգնածների հետ
 ներս մտավ «կանցելարը»: Պառավն ել գնաց:
 — Սեթոն տրակտորի մոտ սպասում ե ձեզ...
 Գյուղից դուրս, կամուրջի մոտ, մի փոքրիկ տնակից դեմ-հան-
 դիման յելավ Հրանուշը: Զարմացա: Ի՞նչպես եր նա այդքան ճա-
 նապարհը կտրել ինձանից շուտ:
 — Սեթոն հրես կզա... ներս մտեք,—ասաց նա:
 Այդ «ներսը» նոր ու փոքրիկ խրճիթ եր, յեղեգնածածկ կտու-
 րով: Մի կիս կոացել եր որորոցի վրա: Ոջախի մոտ չոքել եր մի
 4—5 տարեկան տղա: Ներս մտնելուց, նա նայեց ինձ և ելի տուշ-
 վա դիրքն ընդունեց: Խրճիթի կահկարասին պարզ եր, բայց մա-
 քուր: Հասարակ թախտի վրա փուփած եր նոր գործած կապերտը:
 Այդ տունը, փոքրիկ բակը շատ նման եր այն հնձաններին, վոր հազ-
 վագյուտ չեն ընդարձակ այդիներում:
 — Ես իմ քույրս ե,—ասաց Հրանուշը, թախտին նստելով: Նրա
 շարժ ու ձեփ մեջ անսահման պարզություն կար և համարձակու-
 թյուն: Նա խոսում եր, ինչպես ին ծանոթի հետ: Յեվ առաջին
 խոսքից իր ուրախությունը հայտնեց, վոր մենք «պինդ ենք բռնաց-
 րել»:
 — Վորտեղից իմացար...
 — Խաչիկն ել ասաց, Սեթոն ել:
 — Դու կոմյերիտական ես:
 — 28 թվից...
 — Ինչու շաբաթորիակին չես գնացել,—հարցը և հանկարծ
 հիշելով նրա կաղ լինելը, խսկույն խոսքս դարձրի.
 — Սեթոն յերբ ե ես ոթախը շինելու...
 — Մի տարի չկա,—պատասխանեց Հրանուշը: Նա կարմրել եր,
 ինչպես բակը մտնելուց:
 Տիրեց լուսթյուն: Յես ուզում եյի մի կերպ նրան սիրաշահել,
 բայց հենց այդ ըսպեցին Սեթոն ներս մտավ:
 — Հրանուշ չայնիկը դնեյիր ելի ոջախում,—և դառնալով ինձ,—
 բարի լուս...
 Հրանուշը վեր կացավ:

— Յես թեյ խմել եմ, Սեթն:
 — Դու խմել ես, յես չեմ խմել—ծիծաղելով ասաց նա. պըս-
 պղացին առողջ ատամների զույգ սպիտակ շարքերը: Դիր, ախչի...—
 ու կնոջը դառնալով, ասաց.—Ուտելու բան չկամ...
 Կինը կոացած տեղը սկսեց արագ որորել յերեխային:
 — Սեթն, կանչել ես ինձ...
 — Հա... Հրանուշ, հայաթի դուռը դիր:
 Ու մոտիկ նստելով, ասաց.
 — Գիտես, յես իրիկունը խի դուան մոտն եյի կանգնել:
 — Զե՞:
 — Յես գլխի եյի, վոր եղանակ մի բան պիտի լինի... Դե, ո-
 տար չես, քեզ կարելի յա ասել: Են Ծվազանը վոր ասում եյինք ի-
 րիկունը, նա եստեղի հակաների գլխավորն ա... Ժողովում շատ բան
 չեր կարելի ասել... Դու տեհանք, վոր նրա անունը տալուց, քարտու-
 ղարը մի տեսակ ուանգը փոխեց:
 — Աչքիս չընկավ:
 — Հա, եղանակ յեղավ... Իմ տեղը մութն եր, ձերը լույս: Լամ-
 պը ձեր առաջին եր, կարող ա, վոր չտեսնայիր: Յես իմանում ե-
 յի, վոր գալու յեն, համա ուզում եյի իմ աչքով տեսնայի... Վոր դուքս
 յեկանք յեկեղեցու մոտ, շվաք տեհանք:
 — Տեսա:
 — Են հենց ինքն եր:
 — Ո՞վ:
 — Ծվազի թոռն, ո՞վ...
 — Սեթն, գուցե սխալ ես...—Սեթոն պոռշը ծպացըց, գլուխն
 որորեց:
 — Ինչ վոր քեզ ասում եմ, հաշվի, թե աչքովդ ես տեհել... Յես
 հավատարիմ մարդ ունեմ...
 — Վորտեղի:
 — Նրանց միջին: Են նմուտում խաբարը կբերի:
 — Ո՞վ ե:
 — Նրա բատրակը՝ Կոլոն: Ինքը յեղիդի յա, համա հայերեն ին-
 ձանից լավ ա իմանում: Դուք հլա չեկած, յես արդեն իմանում ե-
 յի, վոր գալու յեք... Քո անումդ չեյի իմանում, համա Խաչիկին,
 մեկ ել են դյուղատնաեսին գիտեյի:
 Հետաքրքրությունս արդեն փոխվում եր զարմանքի: Հրանուշը
 կոացել եր ոջախի վրա, նայում եր սեացած թեյամանին:
 — Դուք վոր շրջանումն եք յեղել, նա ել ե ենտեղ յեղել... ի-
 րիկունը կանչել ե միքանի հոգի:
 — Շատվհը են:
 — Մեր գյուղում 4—5 հոգի յեն... Ուրիշ տեղից ել են գալի:

Մի լեզուի շեյխ կա, նա ամիսը յերկու վոտք գալիս ա... Բուրդ արերում, պանիր, վոչխար... Նրանք աշնա յեն:

— Գիտեմ, գիտեմ...

— Վոնց վոր յես ու դու.—Սեթոն նորից ժպտաց:—Հա, Կոլոն լավ չի լսել բայց ասում աշատ են խոսել մինչի աքլորականչը համարյաթենստել են:

— Են ո՞վ քար խփեց պատուհանին,—անհամբեր հարցրի յես:

— Ինքը:

— Ռվազյանը:

— Հա:

— Բա ինչ իմացար:

— Եղ խոսքին եմ գալի: Յերեկ կանչում աբողազից խեղճ միքանի մարդու. մինը մեր Սհակին—ինձ ել ազգական ահաշվում, մինն են Գաբոյի տղին, են վոր առաջինը մտավ, ուզեց ել ինձ խփի...:

— Ո՞վ, Սեթ, —սրանեղած հարցրեց Հրանուշը:

— Գաբոյի տղան...

— Կանչում ա, թե գոմի կտուրը քանդված ա, ողնեք, վոր սարքեմ: Ճաշին դրանց լավ խմացնում ա... Վոր տաքանում են, թե շրջանից մարդիկ են յեկել չքափորների տները գրում են: Վո՞նց թե, յես դրանց ըսե՞նցո, ընե՞նցը... Մեր Սհակն ել շաշ ա, կատարը տաքացավ թե չե, ել լեզուն չի պահի: Գալիս են, վոր խանգարեն... վերջը տեհար ինքդ: Իսկ իրանք հեռու յեն կանգնում... Մենք վոր ներս ենք մտնում, ինքը մոտենում ա, շուշեն ջարդում: Քարով չի խփել ձեռքի փետովը...

— Քեզ ո՞վ ասաց:

— Կոլոն, ո՞վ: Մինը շվացրեց... լսեցի՞ր:

— Հա:

— Են կոլոն եր... Ուրեմն թե՝ զարթուն եմ, ելի...

— Նրա սովորցրած խոսքերը քեզ ո՞վ ասաց, Սեթո:

— Ինքը, Սհակը... Յես վոր դուրս յեկա, վազի գեղի կամուրջը: Ասի՝ աչքովս տեսնեմ: Տեսա... Կոլոյի քեչեն ել քցել եր ուսինտ Սհակը պատի տակ մեկնվել եր... Յես եմ նրան տուն տարել: Մի լաց եր լինում, վոր—ու քահ-քահ ծիծաղեց:—Գոռում ա տանը՝ «ինկերներ և չքափորներ»... Գոռում ա ու կրծքին խփում:

— Զահրումար խմի թող, —զայրացած բացականչեց Սեթոյի կինը, թախտին փոելով յերեսսրբիչը, վոր սփոռցի տեղ եր ծառայում:

— Յես ուրիշ բան եմ ասում, եղ գլխավորը չի, —ասաց Սեթոն, յերեսսրբիչի ծովերը հարդարելով:— Նրանք խորհրդում մի մարդ ունեն, գլխի չեմ, թե ով ա:

— Ինչից գիտես, վոր ունեն...
— Ինչից վորոշեն, ինչ խոսան, են անրանց ականջում:
— Քարտուղարը չի լինի:

— Զե նրա գալուց առաջ ել կար եղ կապակցությունը... Յես ուրիշի վրա յեմ կասկածավոր:

— Ո՞ւմ:

— Հաստատ իմանամ, հետո,—այնպես ինքնավստան ասաց նա, վոր կարծես կասկածի հետք անգամ չեր կարող լինել, վոր պիտի իմանա վաղ թե ուշ:

Հրանուշը թեյամանը մոտեցրեց: Յես վեր կացա գնալու:

— Մի ստաքան խմի, հետո... Հրանուշ, տես հո մարդ չի յերեսում: Հրանուշը բակի դռնակը բաց արեց:

— Զե:

— Հենց կիմանաս, թե վախից եմ եսպես... Զե, զգուշությունը լավ բան ա: Նրանք ել շատ հարիֆ են իմանան, թե ով անրանց սեկրետը գողանում... Են, վերջը դրանց վեր ենք քցելու, համա մի քիչ չարչարում են...

Կես ժամ հետո յես գյուղխորհրդումն եյի:

— Ա մարդ, եսքան ուշանալ կլինի, —հանդիմանեց գյուղատնտեսը: Տես, ինչքան պայմանագիր եմ կնքել—թղթերի կույտը ցույց տվավ Խաչիկը:

— Դաշտումն եյի...

«Կանցելարում» տեղ չկա: Իրար հրմշտկելով մոտենում են Խաչիկի սեղանին: Ծեր, ջահել, կին ու տղամարդ: Նրանք, վորոնք գըրվել են, դուրս չեն գալիս: Մեկը սպասում է տեսնի իր հարեանը քանի լիտրի պիտի գրվի, վորպեսզի հանդիմանի կամ զայրանա, յեթե իրենից պակաս գրել տա, մյուսը աչքը դրել ե ֆոնդի հողին, սպասում է, վոր այդ մասին «առանձին» խնդրի, յերրորդը՝ վորովհետեւ դուրսը ցուրտ է, գնալու ել տեղ չունի: Համոզում են, հանդիմանում, զայրանում, ծիծաղում:

— Պարթև Սբրահմայան, —կանչում է Խաչիկը: Լուսմ են. հեկեկում է մի կին՝ չորացած, մաշված... Խաչիկը ցուցակում կարդաց նրա մահացած վորդու անունը, ինչպես գրված եր հողամատյանում, յերբ նա յեր ծխի գլուխը: Մայրը գլուխը շրջում է պատին, անձան հեկեկում, սև գոգնոցի ծայրով աչքը սրբում: Ու շշնջում է.

— Քոռանաս, աստված... Աչքդ նրան տեհան:

— Անցածն անցել է, մերս... Հանգստացիր, —ասում է Պողոսը:

Այս խոսքից մոր հեկեկանքը սաստկանում է: Նա ել չի կարդանում իրեն զսպել, յերեխայի նման «Պարթև» կանչելով դուրս ենում, թողնելով և՛ բամբակը, և՛ պայմանագիրը:

— Զարմանալի բան ա: Զորս տարին թամամեց, ելի անունը
տալուց եսպես փլվում ե,—մրմռաց մեկը:

— Դրան մոր ջիգար են ասում ե,—վրա բերեց մյուսը:

— Տուր ինձ նրա պայմանը, յես կտանեմ նրանց տունը,—
ասում ե մի յերիտասարդ:

Մոտենում են յերկու պառավ կին:

— Դրա ինձ,—ասում ե մեկը:

— Ո... ընկեր Խաչիկ, դա գիղաս ինչ պառավ ա...

— Դրա նման բամբակը բեջարող չկա: Հերու մրցանակ ստա-
ցավ:

— Ինչքան գրեմ:

— Վաթուն լիտը.—հանդարտ ասում ե նա: Միքանիսը զար-
մացած բացականչում են:

— Ա՛յ պառավ, հեկտար ու կես բամբակ կարաս ցանի...

— Ես վոսկի ձեռքերով,—ասում ե ու ձեռքերն իրար տալիս:
Ծիծաղում են: Մաշված, մաքառված ձեռքեր են, չորացած կաշի ու
վոսկը: Ով գիտե՞քանի՞ հազար փութ բամբակ են մշակել այդ
«վոսկի» ձեռքերը:

Մյուս պառավը նրանից քիչ ե վերջնում:

— Հերիք ե դրան... վոտները քամոտ են...—ասում են Խաչի-
կի մոտ կանգնածները: Բայց պառավը մի պայման ե դնում, վոր
իր հողը գութանով վարեն:

— Ինչի՞:

— Չեմ ուզում: Որես գենն ինձ սազ չի եղ մաշինեքերը...—Ծի-
ծաղը վեր ե ածվում հրհոոցի: Առաջին պառավը հանդիմանում ե.

— Գութնվորին մի շալ լավաշ, մի դազան փլավ տաս լավ ա,

հմ...
— Եղպես ա կարգը:—Մյուսների հրհոոցը նրան այնքան չզայ-
րացրեց, վորքան առաջին պառավի այդ խոսքը: Ու ձեռքը ձեռքին
խփելով ասաց:

— Բիինձն ել իստակել, հազըել եմ... քեզ ի՞նչ:—Հրհոոցը
սաստկացավ:

— Պառավները կովան... Տո, կովան իրար,—կանչեց մեկը:

— Շնորհակալ եմ,—ասաց ու հեռացավ պառավը, պայմանա-
գիրը գոտկալի տակ պահելով:

* *

... Սյուր յեռյակից դրություն ստացանք: Ժամը 12-ին տրակ-
տորների կալոնը պիտի մտնի Քյոթանլու: Գրել են, վոր աշխատան-
քը մյուս գյուղերում ել հաջող ե: Նորից են հիշեցնում, վոր հա-
մայնական ժողովում չմոռանանք սոցիալիտական մրցության պայ-
մանագիրը կնքելու: Պիտի գան հարևան թուրք գյուղից: Ուղարկել
են և լրագրեր... Թեկուղ խրճիթը ստանում ե, բայց գալու որից

թերթին չենք նայել: Յեռյակից գրում են, վոր շուտով կենարոնից
մեր շրջանն ե դալու բանվորական բրիգադան...

Հաշվեցինք մեր աշխատանքը: Ութ գութան յերեք որ ե վա-
րում են... Տրակտորները բավական տեղ ցել են արել: Նրանցից
միայն մեկը կես որ չի աշխատել՝ բոլտը կոտրվելու պատճառով:
Հինգ որում 29 հեկտար վարել են:

— Նու 30 ասենք... 44-ն ել կար... 74: — Յեկ Խաչիկը տոկոսն
ե վորոշում:

Հրանուշը յերեկ գնաց. նա սովորում ե շրջանի յոթնամյակում:
Շաբաթ որերը գալիս ե, մի որ մնում, մյուս որը վեց որվա հաց
շալակին գնում: Յեթե սայլ ե պատահում, նստում ե: Գնում ե՝
մեկ յեկած ճանապարհով, բամբակի դաշտերի և կանաչ արտերի
միջով... Ուրախ գնաց և ափսոսաց, վոր չի տեսնելու տրակտորնե-
րի մուտքը Քյոթանլու:

— Յեկան, յեկան...

Յերեխաները վազեցին առաջ: Հրապարակում խմբված ժողո-
վուրդն առաջ շարժվեց: Յերեաց առաջին «Ֆորձոնը», հետո յերկ-
րորդը, յերրորդը, չորրորդը... վեց «Ֆորձոն»: Իսկ ամենից վերջը՝
ծանր «Կեյսը», նոր խոփերը վեր ցցած, վոր չցեխոտվեն: Փըթ-փըր-
թում եյին տրակտորները, ու նրանց աղմուկի մեջ վորոշակի կարե-
մի յեր ջոկել «Կեյսի աղմուկը, ասես վնմինթում եր, վոր իրեն
ամենից վերջն են գցել ու զայրացած պահանջում եր խոպան ու
կարծր մսահող, վոր ցրիվ տա, փշըի...

Ժողովը հրապարակում յեղավ: Մարդիկ նստուեցին տրակտոր-
ների վրա, հենվեցին նրա անիմսերին: Ու յերբ հարևան գյուղի
պատգամավորներն յեկան, ժողովը վերածվեց անպաճույժ, անզարդ
միտինգի:

Յերեկոյան դեմ տրակտորներն անցան հրապարակով, մտան
կայանի բակը:

Հողե պատերը գողում եյին նրանց թափից: «Կեյսը» թևով գի-
պավ ավերակ պատին ու փլցրեց մի շերտ, վոր խանգարում եր նը-
րա յերթը...

— Ի՞նչ միջավայր ե նկարագրած այստեղ:

— Ո՞վ եր Ռվազյանը: Ի՞նչպես եր նա ազդում չքավոր գյուղացիների
վրա:

— Բնորոշեցե՞ք ըքափորների վերաբերմունքը դեպի նա:

— Ո՞վ եր Սեթոն: Համեմատեցեք նրան Սահակի հետ:

— Բնորոշեցե՞ք Հրանուշին, վորպես գյուղական կոմյերիտունու:

— Կարելի յե Ակսելի այս գրվածքը պատմվածք համարել.
— Տալիս ե արդյոք այս գրվածքը ցայտուն պատկեր՝ ներկայումս
գյուղում տեղի ունեցող անցուղարձի մասին:— Վո՞րն ե այդ անցուղար-
ձում հիմնականը:

Մ. ԴԱՐԲԻՆՅՈՒՆ

ԱՆԻՇՎԱԾ ՀՈՂԸ

* * *

Գյուղը խոր քնի մեջ ե: Անթափանց խավարի մեջ լուսատի-
կի նման մի լույս ե շողում միայն: Կոմքջիջի սենյակի լուսամու-
տից ե ցոլում փոքրիկ լամպի շողքը, վորի չորս բոլորը նստած մոտ
10—15 հոգի լուրջ ու մտախոն գեմքերով լսում են ինչ-վոր թըզ-
թերի ընթերցում: Ուղեղի ծայրահեղ լարումից շատերի ճակատի
վրայի մեծ յերակն ուռել ե, արյունով լցվել քիչ ե մնում պայ-
թի: Թղթերի մեջ անհասկանալի տողեր ու բառեր կան: Ա՛խ, եղ
տպողները, ախ, եղ գրողները, վոր չեն կարողանում պարզ լեզվով,
հասարակ ու հասկանալի գրեն...

— Ընկերներ, — ընթերցումը վերջացնելով խոսում ե կոմքջիջի
քարտուղարը: — Վոնց վոր լսեցիք, յերկու բանի մասի կարդացինք.
մեկը — հողաշինարարության, մյուսը կոլեկտիր անտեսնության: Հար-
ցը պարզ ա: մեր հողերն անկանոն ենք բաժանել մեզ ու մեզ. հի-
մի կենտրոնից հողաչափ կզա, մարդավարի կչափի, հողը չնչի կա-
նենք, ու ամեն մինը զակոնով իր բաժինը կունենա. թե ավելանա,
են ել ֆոնդի մեջ կցցենք: Ես ուրեմն շատ պարզ ա: սրա մասի ել
ինչ խոսք: Մենք պետք ա ամեն միջոց ձեռք առնենք, վոր ես հո-
ղաշինարարության գործը լավ գնա. աշակցենք հողաչափին, ցույց
տանք մինչև որս դավթար չընկած հողերի տեղը...

— Մի ցուցակ ել կազմենք են տնվորների, վոր հողաբաժին
են վերցըել քաղքումն ապրող իրանց տղի, հարսի կամ փեսի հա-
մար, — ընդհատեց մեկ ուրիշը:

— Եղ պարզ ա: եստեղ ել շատ պարզ գրած ա եղ մասի, թե ով
վոր իրան ձեռով հող չի մշակում, այսինքը՝ ով ինքը չի վարումու-
ցանում, նա հող ստանալու իրավունք չունի, թե չե ինքը քաղքումն
իրան աշխատանքին, գեղումն ել հող ունենա, եղ ել նոր դայդի
Մանաս-բեգ կդառնա զլիներիս:

— Պարզ ա, պարզ ա, մեկել բանի մասին խոսա, — ձայնեցին
այս ու այն կողմից:

— Մեկել բանն ել զուտ կուսակցական գծով ասա նոր բան

ա, համա մտքիցը վոնց վոր յերկում ա, լավ բան ա ուզում: Հարցը
պարզ ա, կոլեկտիրի մասի յա...

— Կոլեկտիր չե, ընկեր, կոլեկտիվ, — ուղղեց կոմյերիտական
բախչոն:

— Հաշիվը մին ա, լեզուս չի պատում, վոր դուզ ասեմ, համա
խելքս լավ ա պատում: Հարցը պարզ ա, ընդհանուր գործ ա ու-
զում. միանանք, միասի աշխատենք, միասի ուտենք. հողը միատեղ
վար ու ցանը հավասար. թե ուզենք, ապրանքներս ել կխառնենք ի-
րար, մի գոմ, մի մարագ, մի թեջան, մի խնոցի...

— Հո, հո, հո... կամաց քշի, ինչ ես կարկտաթակ անում,
կաց մի ասածդդ գլխիս բուրջումը տեղավորեմ ե... յանի եղ վոնց
թե հողը միատեղ. Շեկ յալիցն իմ հողը հո շալակելու չեմ, բերեմ քու
Տանձուտի տակի հողիցը կպցնեմ:

— Հարցը պարզ ա, ընկեր ջան, Շեկ յալն ու Տանձուտը մտի-
ցըդ գցի. հողաշինարարության վախտը եղ ամենը փոխվելու յա-
հնաց գիդաս քու հողը քեզ վրա յեն չափելու. ով գիդա վորտեղ
քցեն...

— Եղ վոնց կըլի, — տարակուսեցին միքանի հոգի:

— Պարզ ա, վոր ըսենց կըլի, վոնց վոր հրես ես հրահանդի մեջ
զրած ա. այսինքը՝ կոլեկտիրի անդամները միատեղ հող կստանան
հանդի մի մասիցը, համաձայն իրանց ունեցած շնչի...

— Բա, ես ասենք, իմ շունչը շատ, քու շունչը քիչ յես վեց-
ոխտը ջան, դու յերկու հոգի, դրա բանը վոնց կըլի. յես շատ հող
ստասամ, շատ ել աշխատեմ, դու ինձ հետ հավասար բաժին առնես
քիչ հողով ու քիչ աշխատանքով...

— Եղ ել պարզ ա, ընկեր ջան, շատ շունչը շատ հող կստա-
նա, շատ ել բաժին. դու վեց-ոխտը ջանի բաժին կստանաս, յես ել
երկու. կոլեկտիրը հո նրա համար չի, վոր քու աշխատանքն ու հողը
զավթի, ինքն ուտի, քեզ սոված թողա. ուրեմը քու կարծիքով, յես
ել ասեմ, թե մենք երկու ջան ենք, վոնց ըլի կապրենք, ել ինչու յենք
ձեր վեց-ոխտը ջանի համար իշխ մշակություն անում... եղ վոնց
կըլի. բա ել վոր որվա կոմմունիստն ենք, վոր որվա կոլեկտիրը...

— Ասենք, հողի մասի ասածդդ լավ ա, համա ապրանքիցը խել-
քըս լավ չի վարում...

— Կվարի, կվարի, խելքիդ խոփը վոր լավ սրես, եղ ել կվարի.
հարցը շատ պարզ ա:

— Ընկերներ, — ընդհատեց ՓՈԿ-ի նախագահը, — ես գործի մեջ
շատ խորը միտք կա. յես առաջարկում եմ հաստատ վորոշում չկա-
յացնենք, գավառից մարդ ուզենք, թող գա մի լավ բացատրի, ա-

մեն բան տեղին ասի, վոր մենք ել համ ինքներս սրտով կպչենք,
համ ել ուրիշներին մեզ հետ տանենք...

— Հարցը պարզ ա, ընկեր ՓՈԿ, ինչ վոր գրած ա, կարդա-
ցինք ու հասկացանք. են ա դիմու ել գրվենք կոլեկտիրի մեջ, պըր-
ծավ, գնաց...

— Չե, — առարկեց մեկ ուրիշը: — Ընկերը լավ ա ասում, եսոր-
եսոր իսկի վոչ յես, վոչ ել դու, եդ զադի անումը դրուստ չենք
կարում ասենք, մեջը վոնց հասկանանք. լավն են ա՝ մարդ կանչենք,
վոր մեզ բացահայտ ասի կոլեկտիրի նշանակությունը:

Ժողովականների մեծամասնությունը համաձայնվեց այս առա-
ջարկին, և արձանագրության Վարուժեցին մասում դրվեց 1. Աջակ-
ցել հողաշինարարության գործին: 2. Գավառից ինդրել մի ընկեր,
վոր գա բացատրի կոլեկտիվի նշանակությունը:

Աքլորի առաջին կանչն եր, յերբ ժողովը ցրվեց: Տաք վիճաբա-
նություն եր սկսվել փողոցում կոլեկտիվի շուրջը. խոսում եյին,
հարցեր տալիս միմյանց, հակածառում:

Կոլեկտիվի գաղափարը հանգիստ չեր տալիս կոմբջիջի անդամ-
ներին: Ամեն մեկը վորոճում եր այդ միտքը, ինքն իրեն հետ կը ու-
վում ու հաշտվում, մերժում կամ համաձայնվում. մինչև անդամ
յերազում տեսնում եյին ապագա կոլեկտիվն իր գրավիչ կամ բա-
ցասական կողմերով: Իսկ վոմանք յերազում տեսածը պատմում ու
հրամցնում եյին վորպես իրական փաստ, վոր տեղի յե ունեցել այս-
ինչ կամ այն-ինչ կոլեկտիվ տնտեսության մեջ, հեռու տեղում, ինչ-
վոր յերեակայական գյուղում:

Հարցն այնքան այրող եր, վոր կոմբջիջի սահմաններից դուրս
յեկավ, ընկավ բերնե-բերան. ծամեցին, ծամծմեցին, գզեցին ու մա-
նեցին և, ընականորեն, չարակաները հրեշտակոր առասպելներ հո-
րինեցին, հողի կոլեկտիվացմանը կցելով նաև կանանց կոլեկտի-
վացումը:

Կոլեկտիվը չվանի դրին:

* *

Գյուղն իրար ե անցել: Յերկու բանակ դեմ առ դեմ կանգնած
աղմէում են, յերկումն ել լավ դիտեն իրենց անելիքը: Հողաբա-
ժանման կոիվ ե: Շատ հող ունեցողները չեն ուզում զիջեն ի-
րենց դիրքերը. ամենից շատ նրանք են գոռգոռում: Կան մի խումբ
մարդիկ ել, վորոնք չեն խառնվում պայքարին. սպասում են, տես-
նեն նժարի վոր կողմն ե ծանրանում, վոր կողմն ե ուժեղանում,
վոր անցնեն այն կողմը: Ինչ-վոր թուղթ ե մեջտեղ յեկել. հողա-
չափը շուռումուռ ե տալիս թուղթը, ազգանուններ կարդում:

Ամեն մի անվան հետ հեղնական բացականչություն ե լսվում կոմ-
բջիջի և նրա կողմակիցների շարքից:
— Քաղքումն առուտուր ա անում:
— Ամառները կնկանը դաչա յա դարկում, վոր կոռպերատիվի
սիպտակ կտորն ու ձուն առնի, դարկի քաղաք:
— Քաղքումը դասաբություն ա անում:
— Նալոգը չի տվել, հրեն իշի բաղնիսումը նստած:
— Մանաս-բեգի աղվակատն ա:
— Քաղքումը մասնավոր պարտնոյ ա:
— Դաշնակների ժամանակ ափիցեր եր, հիմի հրեն քաղքումը
վարժապետութին ա անում, լայեղ ել չի անում թե գեղը դա:
— Ասա վախում ա, լայեղ չի անում...
Հակառակ խումբն ավելի յե կատաղում:
— Հրետ ըստնց բաներ եք խոսում, վոր ես որին ենք, ե, մի
որինավոր մարդ ելա գեղը չի մտնում:
— Են մարդիկը վոր եգուց գան, ինչ ջուղաբ եք տալու. ես
գեղումը տուն ու տեղ ունեն, հերն ու մեր, ազգականներ ունեն...
— Խլեցեք, խլեցեք խեղճերի փայլը, վոր կոլեկտիվի բաժինը
շատ ըլի...
— Յաչեյկեն աշկարա խեղդում ա մեզ, ա խալիս, ինչ եք ձեն-
ներդ փորներդ գցել, տաղ արել...
— Կոլեկտիվը հողի ամենալավ տեղերն ուզում ա զսվթի,
մեզ քոլերն ու զոերը գցի, ինչ եք պապանձվել...
Ես ու են կողմից բորբոքվող կրակի վրա նավթ են լցնում.
խոսք ու զրիցը խառնվում ե, չես իմանում ով վորի կողմակիցն
ե, ուզածն ինչ ե. ամեն մեկն ուզում ե ավելի բարձր ծվա, վոր
մյուսների ձայնը չլսվի:
— Յաչեյկի տղերքը թող դրադ քաշվեն, գեղականն իր բանը
մասնախթով կվերջացնի:
— Սուտ ոյին են սարքել, վոր հողի շահմար տեղը խլեն, մի նոր
Մանաս-բեգ դառնան մեր գլխին. առաջ թե մի բեգ եր, հիմի տաս-
նումինն ա լելու:
— Հրեն ե, հրեն... առաջուց ձայնագուրկ են արել, վոր եսոր
ել ունեցած-չունեցածը ձեռիցն առնեն. նա ել շունչ-արարած ա,
թե չե, ես գեղիցն ա, թե չե, մի կտոր հող ելա կտաք, վոր երեխան-
ցը պահի...
— Մեզ հետ դավի չունեք, մեր բաժին հողը տված ա, հրեն...
գերեզմանատանը: Մարդս իրեք արշին հող, գուք ձեր ցավը քաշե-
ցեք, վոր սար ու դաշտը ձեռներիցդ խլելու յեն, մի ծառ ել չեք

գտնելու, վոր տակին նստեք, շողի ձեռիցն ազատվեք, — հեռվից
ձայնում եր մի ձայնազուրկ:

— Քոլը զադաղա յեն անելու, վոր ճիպոտ ել չկարենաս կրտ-
քես յեղդ քշելու համար, — վրա յե բերում մեկ ուրիշ ձայնազուրկ:

— Զմեռը տես մի կտոր փետ ելա կտանք, վոր աչքդ կոխես,
ոչախիդ ծուխը չկտրի...

— Ինչ կա չկա, կոլեկտիվին, դու սոված զկոտա, աղբանքդ
ել սատկի առանց խոտ ու դարման:

— Կոլեկտիվի անումը մեջտեղից հանեցեք, թող դրանք ել
մեղ պես հողաբաժին ստանան հավասար, սարիցն ել, դաշտիցն ել:

— ԶԵ... միասին, միատեղ են ուզում: Ուզում են հողի դմա-
կը կտրեն, վոսկուն ու պողերը մեղ թողնեն...

— Թե զոչաղ են, թող գնան, հրեն... են անիծած հողն ավադ
անեն, շենացնեն, են վախտը կասեմ՝ աֆֆերիմ յաշեյկա, քարիցը կա-
նաչ հանեց...

— Հա, հա... լավ ա ասում, անիծած հողն իրանց փեշքեց, ինչ
են կպել ես խալխի բողազիցը:

— Ով վոր հենց գիդի, թե կոլեկտիվն ուզում ա հողի լավ
մասը խլի, թող ինքն ել մտնի կոլեկտիվ...

— Սուտ են ասում, դրանք ուրիշին կոլեկտիվի մեջ չեն ըն-
դունի. յես մտնում եմ, դե ինձ ձեր մեջն առեք, հրես, ամեն բան
ել ունեմ, ինքս ել, սաղ գեղը կվկայի, վոր ամենալավ հողագործն
եմ, կրնդունեք, գդալիս եմ, — զոչեց ձայնազուրկ, Դահրամանը տեղիցը
վեր կացավ ու շորերը թափ տալով մտավ ամբոխի մեջ:

— Կոլեկտիվը ձայնազուրկների տեղը չի:

— Բա ում տեղն ա, գեղի լավ հողը զավթողների...

— Վոր ասում եմ սարքովի բան ա...

— Սարքովին են կըլի, վոր ձեղ նմանները կոլեկտիվ մտնեն,
շինեն կուլակի կոլեկտիվ ու բատրակների հողին հանեն:

— Դուք ել բան եք գտել, ելի. կուլակս վորն ա, ե, վորը, մի
հալա իմ ձեռներին ել մտիկ ե, կասես կուրյի (կրյայի) մեջք ըլի.
յես եմ շատ բանում, թե դու...

— Մին բանում ես, տասը բանացնում:

— Զոչաղ ես, դու յել արա:

— Այ, հրես անում ենք ելի, բա աչքդ չի տենում. հրես
կոլեկտիվ ենք կազմում, վոր բատրակը քեզ համար աշխատելու-
տեղ, իրան համար աշխատի, վոշ թե քեզ ու քեզ նմանների հա-
մար տնքա...

— Ըսկերներ, հարցը պարզ ա. ընկեր լենինն ասել ա, թե վոր

տեսնես դուշմանդ հակառակ ա դնում քու արարքին, դու տեղդ դհա
պինդ կաց, կնշանակի լավ բան ես անում: Ուրեմը՝ մենք լավ բան
ենք անում, վոր կոլեկտիր ենք կազմում. ով մեր կողմն ա, թող
դեսը կենա, ով հակառակ ա, թող գնա ձայնազուրկների ջաղացի
ջուրը կապի:

— Դե, խախալվեցեք, հրես խախալը կջոկի:

Խախալը ջոկեց:

Մի մասը մոռութները կախ, բնից դուրս գցած արջի պես փընթ-
փընթալով քաշվեց, իսկ մացածը կատակով ու գնացողների հասցե-
յին ծաղրական բացականչություններով ու ծիծաղով մոտեցավ կոմ-
բջիջի խմբին:

Հողաշինարարությունն սկսվեց:

Կոլեկտիվի հիմքը գրվեց: Կոմբջիջի անդամներից զատ, կոլեկ-
տիվ մտան նաև միքանի չքավոր ընտանիք, վորոնց համար գյուղ-
վարկային ընկերությունը համապատասխան վարկ բաց թողեց:

Հողաբաժանման ժամանակ կոլեկտիվը վերցրեց նաև անիծ-
գած հողը, վարպետզի հակառակորդների բերանը փակի:

— Եղ հողիցը թե դրանք մի բեռը խոտ ելա տուն բերեն,
թող յես սաղ տնովտեղով խոտ դառնամ, — ասում եր գյուղի «ա-
նատամ գելերից» մեկը:

— Մանաս-բեգի մերը չմեռնի, նա վոր եղ հողիցն ոգուտ չը-
քաղեց, ենքան գիտնական մարզը, դրանց ինչ ըստի բանն ա...

— Եղ ել գեղականի աչքին մոխիր փշել ա. յանի թե տեսեք,
տեսեք, մենք անպետք հողն ել վեր կալանք:

— Համա շատ անխիղճ բան արին, վոր քաղաքումն ապրողնե-
րի բաժին հողը գոնդի մեջ գցեցին. պարապ-սարապ վեր ընկած
կմնա զուը տեղը:

— Ասում են՝ կոլեկտիվը վարելու յա գոնդի հողերը, ինչ ել
ոգուտ ստանա, տալու յա ՓՈԿ-ին:

— ԶԵ, ոգուտը տրակտորի յեն տալու:

— Յաշեյկեն կուտի:

— Իրանց ձեռին չի, վոր ուտեն, նրանց բերանը փակողն ովա...

— Թող տորգի դնեն, տորգ անեն, ով շատ տա, նա յել վարի:

— Մեր տղա, միտքդ են ա, վոր թե գմակը ձեռդ չընկավ, մոր-
թուցն ելա միքիչ ըստես, հա...

— Զոչաղ տղի տեղ ա. թե կարենամ, եղ կոլեկտիվ ասածդ
տես վոնց եմ գլխի վրա ցից անում, վոր մենակ վոտները բարդի-
բալդի անի...

— Ումուղով կաց, ումուղն ա կերել աշխարքը...

* *

Կոլեկտիվի մասին շատ խեր ու շառ խոսեցին, բամբասեցին, բայց կոլեկտիվի անդամները ասե-կոսեներին չելին յենթարկվում։ Միահամուռ աշխատանքով հողերը վարեցին։ Գարնանացանն աջող եր։ Կոլեկտիվի հողերը վարելուց զատ, վարձով վարեցին ուրիշների հողերն ել։ Կթի անասունները սար տարան, կազմեցին կաթնարտել։ Սերգատը, վոր նորություն եր գյուղի համար, կաթնարտելի շուրջն եր համախմբում նաև մասնավորներին։

Աշնանը բերքն այնքան առատ եր, վոր կոլեկտիվը վորոշեց ավելորդ հացահատիկը հատկացնել տրակտորի ֆոնդին։

Կոլեկտիվի հմայքը հետզհետե բարձրանում եր և զրավում շատերի ուշադրությունը։

Անիծված հողը գեռևս մնում եր նույն վիճակում, վորն առիթ եր տալիս խոսկությունների։ Պետք եր նրան ևս գործի դնել, տեղից շարժել։ Խնդրեցին գյուղատնտեսին, վոր քննի ու իմանա, մի բան դուրս կդա եղ հողից, թե անհուսալի յե։ Գյուղատնտեսն առաջարկեց գոմաղբով պարարտացնել, բայց դժվար եր այնքան տարածությունը ծածկել գոմաղբով։ Կոլեկտիվը քննեց հարցը և վորոշեց անիծված հողի վերի մասում գոմեր շինել, վոր ապրանքը ձմեռն այստեղ ապրի։

— Հարցը պարզ ա, ընկերներ, գոմը վոր շինենք, ապրանքը կդնա, կդա, համ փեյինը կցրվի հողի մեջ, համ ել տեղն արեստ ա, մեր ապրանքը չի մրսիլ։

— Բա ջնուրը...

— Զուրը հեռու յա, միքիչ նեղություն կքաշենք, բայց վոչինչ, կմտածենք, մինչև դարունք գուցե կարողանանք մի արխանց կացնենք ես վերի առվիցը։

— Վայ թե չարչարանքներս անտեղի կորչի...

— Հարցը պարզ ա, ընկերներ, ջուրը վոր գա, ապառաժ քարն ել կկանաչի, դուք գոմերի մասի մտածեցեք։

— Ել ինչ գոմեր, են ա մի մեծ դոմ շինենք։

— Համաձայն ենք։

— Եգուցվանից սկսենք. առաջներս ձուն-ձմեռ ա գալիս, չուշանանք։

— Գեղումն ել պարագ մարդ շատ կա, մշակ կբռնենք, վոր շուտ վերջանա։

Արձանագրության մեջ գրվեց։

Վօրուեցինք անիծված հողի վերի մասում կոլեկտիվի համար մի մեծ զու շինենք. աշխատանիներն սկսենք եզուցվանից։

Քլունդն ու յերկաթե նիզը գործի եյին։ Սկզբում աշխատանքը կարծես դանդաղ եր ընթանում, բայց հետզհետե ջլուտբազուկները պրկեցին, մշակները հանեցին շորերը, մնացին մենակ շապկով։ հողախտուն վիսրուն քարը չեր գիմանում այլևս ուժեղ հարվածներին։ հիմքը գցելու փոսը յերկար ու մեկ ձգվում եր։

— Դե, ձեզ մատաղ, հուպ տվեք, դուս անենք։

— Պահ, հալա ես ցորենի ամբարին... անիծածներն ենքան ցորեն ու գարի յեն հավաքել, վոր մի տուն յեթիմ կպահի...—Քլունդի ծայրով մեկը բաց ե անում զետնի տակ ամբարած մրջյունի ձմեռվա պահեստը։

Աշնան ալեր դուրեկան ջերմություն ե փոել։ Գյուղամիջում, պատերի տակ նստած միքանի նախկին «աղաներ» համրիչը ձեռներին չըխկացնում են, հորանջում։ Կողերը դեմ արած արեին, զըրույցը թեքել են կոլեկտիվի ու բջիջի վրա։

— Ինչ վոր աշխատել են, հրեն՝ անիծած հողումն են թաղելու. իրանց աշխատանքի համար գերեզման են քանդում։

— Հայտնի բան ա, են հողը պառող չի տալ։

— Զորին թե քուռակ կծնի, անիծած հողն ել խոտ ու արտկոտա։

— Տեսնաս խելքներին ինչ բամի յա փշել. գոմ են շինում, վոր հայվանի թրքիցը հաց հանեն։

— Իրանք շաշ են, եղ քիչ ա, են խեղճ ու կրակ քյասիբներին ել են շաշացրել։

— Եշ դադի, ձին ուտի։ Հրես կքամեն, կմզեն, ել յետ աղքատը մեր դուռը կգա։

Պայթյուն։

Փոշու նման ծուխ բարձրացավ. քարե անձրկ տեղաց։

Գոմի հիմքը փորելու ընթացքը խանգարող սալը փուլ յեկալ վառողի ուժից։ Մշակները միահամուռ գոռացին։

— Ու... ու... ու... ուոա...։

— Տղերք, արեր թոլ ելավ, յետ դառեք։

Մշակները յետ դառան գործից, շորերը գցեցին վրաները, վոր չմրսեն։ Միքանիսը դեռ կանգնած են փուլ յեկած սալի կողքին։

— Տեղը պինդ նստել ա, թե՝ ժաժ չեմ գալի, այ, թե՝ ժաժ չես գալի, դե հիմի գնա ու վորտեղ քոնն ասես, ենտեղ ել մերը պատմի...։

Այդ յերեկո, ով գիտե, գուցե միքանի հարյուր տարի անց, կամ թերեւս հենց առաջին անգամ, անիծված հողի վրա վառվեց կոլեկտիվի կրակը։

Գոմը գյուղի սովորական գոմերից չեր: Յերկար ու մեկ ձգված էր կղմինդրի տանիքով, փոքրիկ աղբածակերով: Ներսը կտեղավորվեր մոտ հարյուր զլուխ յեղջուրավոր մեծ անասուն: Զիերի համար հատուկ տեղ եր առանձնացրած, փայտե պատով բաժանած: «Գոմ հո չի, պալատ ա, պալատ», — ասում եյին գյուղացիք ու թամաշալի դալիս:

Կոլեկտիվը խոտը կրեց գոմի մոտ, դիզեց, իսկ դարմանի համար ժամանակավոր, ծղոտով ծածկած մի մարագ շինեց։ Գոմի վերևի մասում մի փոքրիկ սենյակ իր փայլուն լուսամուտներով ժպտում ե անցվորականին։ Դա—նախրապանի տնակն ե իր պարզ կահավորությամբ։ Մարդ ու կին յերկու յերեխաներով, գյուղում թողել են իրենց գետնափոր ու բորբունած խարխուլ հյուղը, բատրակության լուծը դեն շպրտել ու դարձել կոլեկտիվի հավասար անդամ։ Անասուններին խնամելու գործը մեկ կամ յերկու հոգու բան չեր։ այդ պատճառով ել ամեն որ գյուղից հերթով գալիս եյին կոլեկտիվի անդամներից և ոգնում նախրապանին։ Զուրը հեռու յեր։ Զրի հարցը բավական դժվար եր։ Կոլեկտիվը իր հերթական, անմիջական հարցը դարձրեց առվի ջուրն անց կացնելը։

Զմեռն սկսվել եր, բայց կուեկտիվի բախտից խստաշռնչ չեր.
չոր եր ու արևկոտ:

ԿԵՆՏՐՈՆԻց ինչ-վոր ընկեր յեկավ կոլեկտիվի պահանջով։
Գյուղը գլխին ե թափվել։ Ինչ-վոր գործիքներ ունի ընկերը, չափ ու
ձև ե անում, գրում, հաշվում, նայում ե ջրին, մոտը ցցված ապա-
ռաժմներին, վորոնք հեզնական ժպիտը շուրթերին քարացած, գոմի
հիմքում ընկած սալի նման, կարծես ասելիս լինեն, թե տեղներիցը
չեն շարժվելու, ջրին ճամպա չեն տա, վոր անցնի դեպի անիծված
հողը։

— Հարցը պարզ ա, ընկերներ,—խոսում ե կոմբջիջի քարտուղարը, վոր միաժամանակ նախագահն եւ— Դուք կամաց-կամաց քանդեցեք ես հեշտ տեղերը, յես գնամ քաղաք։ Կզնամ ընկերներին կասեմ, վոր մեզ բարութ ու ֆիթիլ ա պետքը, վոր մեզ մի մաս-նազետ ա պետքը։ Թող տան։ Կասեմ, հարցը պարզա ա, մինչև գա-րունք ես առուն պետք ա մեր գոմի կողքովը քչքչալով գնա, թէ չե հու... են վոնց են ասում, հա, սոցիալիզմի գործը խարաբ ա...

Միքանի հոգի ծիծաղում են

Կուլակները զլուխները պտտացնելով դրադ են քաշվում, նըստում քարերի վրա, փնթփնթում, կամ վեգը խլել տված յերեխաների և ման անզոր սպառնալիքներ կարդում:

Քլունգը, նիդը, ղազման ու թին գործի յեն անցնում։ Մասնաւ գետը ցուցմունքներ ե անում, ապագա ջրանցքը դեռ թղթի վրա յե։ Նախազահը մեկնում է կենտրոն։

Պահեստում ունեցած վառողն ու պատրույգն իրենց զորությունն են ցույց տալիս: Համառ ժայռերը խոնարհվում են, փուլ են գալիս: Պայթյուն պայթյունի յետևից: Դղբդում են քարայրերը: Համբերությունը հատած միքանի հոգի մաքրած տեղի վրա յեն անում ջուրը, վորը հոսում է ու դեմ առնում քարախութերին: Բահի կոթով՝ չափում են դժվար տարածությունը:

— Եսքանի տեղը վոր քանդենք, նլանից դենը ջուրն իրան-իրան հաղ կանչելով ա վազելու...

Բանիդ կաց, սոցիալիզմի ճամպեն թամզի, — կատակում ե քնկերներից մեկը, հիշելով նախագահի խոսքը:

Ծիծաղում Են:

* * *

Գարնան գեմ աղբակույտերի չորս բոլորը կանաչ յերեաց — իւղինջ, վիփերթ, հատ ու կենտ գետնասունկեր։

Զյունը նոր ե վեր կացել. գետնից գոլորշի յե բարձրանում,
կարծես հողը թափահարում ե իր փոշոտ մուշտակը։ Անիծված հողի
վրա շարժում կա։ Մարդիկ, անասուններ։ Ծտերը քուջուջ են ա-
նում փեյինում, իսկ ծիծեռնակը մկրատ-պոչը բացած՝ պտույտ-
պտույտ ե անում գոմի չորս բոլորը, բնի տեղ ե վորոնում։ Առվից
բերած արխը կեռումեռ հոսում ե, խոխոջում, հեռվից թվում
ե, թե արծաթե գոտի յե շարժվում հողի իրանով։

— «Հողը պետք է շուռ տալ», ասում են կոլեկտիվի անդամները, բայց հերկելը դժվար է, մանավանդ վոր դաշտային աշխատանքներն սկսվելու վրա յեն. կոլեկտիվը հազիվ թե կարողանա իսկական վարելահողերը հերկի: Տրակտորն ուշանում է: Կոլեկտիվի անդամներից մեկը մի առաջարկություն է անում:

— Ընկերներ, յեկեք մի բան ասեմ, վրես ծիծաղեք վոչ։ Ասում
եմ՝ յեկեք մի հինգ փուլ՝ կարտոֆիլց ձեռ քաշենք, ես փեյինը շաղ
տանք հողի յերեսով ու եղ փեյինի տակին տեղ-տեղ մի-մի հատ
կարտոֆ գնենք ու խոզերը մեջն անենք։ Խոզերը հողը կքանդեն,
եստեղ-ենտեղ կարտոֆ կդանեն, համի կընլինեն, հենց կիմանան՝ սաղ
հողը կարտոֆով լիքն ա, կքանդեն ու կքանդեն, հողը միքիչ տակն ու
վրա կանեն. ի՞նչ եք ասում։

— ԽԵՂՔԻ ՄՈԹԻԿ Բան ա:

ԲԱՆՈՒՄ Են, համաձայնվում:

Մեկ ուրիշն առաջարկում է «քարը ճղող, նյութ քաղող» ծառեր տնկել՝ ինչպես փոշնի, ակացի...

— Փոշնին բանի պետք չի, համա լավ կըլի ակացի ու լորե
տնկենք:

— Յեկեք ջըռ թթնի յել դնենք, բալքի բռնում ա, տերել շե-
րամին պետք կգա:

Խոզերը «հերկում են» հողը: Հերկում են և բան ու քլունգը:
Ծառատունկ ե:

Մեծ ու փոքր բերում են ու բերում զանազան ճյուղեր, շար-
քով տնկում, փոսերի մեջ շալակով բերած սև հող լցնում: Յերե-
խաները, մըջունների պես, պարարտացնող հող են կըում փոքրիկ
կողովներով. ամենից շատ նրանք են փորփորում, տնկում ու խնամ-
քով ծփծփում հողը: Զորս բոլորը ակացի յե շարված, մի մասը
թթնի, մի մասն ել լորենի: Տեղ են թողել նաև ապագայում մրգա-
տու ծառեր անկելու համար, յեթե առաջին փորձն աջող անցնի:

Անիծած հողի վրա ճիպոտներ են միայն յերեսում: Ծառեր՝ են
դառնալու, թե վոչ...

«Կոլեկտիվի քոլը» ծաղրի առարկա յե դարձել: Ծաղրում են
հակառակորդները, թույն են թափում «բաղերի ու բոստանների ջուրը
կտրողների» վրա:

— Ասում են կոլեկտիվի քոլումն արջ ա յերեացեր վոնց ա-
լելու ես գեղի բանը...

— Դու արջն ես ասում. բա վոր հրեն են ջրի վրա տախտակ
քաշելու գավող են բաց անում...

— Մեկել որը մի ծառ են կտրել տամնինդ արշին հաստ,
քաղքիցը վագոն են ուղել վոր դարկեն զազրանիցա:

— Ասում են կոլեկտիվը պայման ա կապել թիֆլիսի հետ,
վոր սաղ քաղքի ձմեռվա վասելիքն ետ քուիցը տա...

«Կոլեկտիվի քուլումն», իհարկե, արջ չերեաց, բայց նրա փոխա-
րեն մեղու յերեաց, շերամի վորդ յերեաց:

Յերեք տարվա պատմություն ունի մեր կոլեկտիվի «անտա-
ռը»: Գարնանը ծաղկում են լորենիներն ու ակացիները մատղաշ,
վայրի թթենին բաց ե անում իր աչքերը, փուում նուրբ կանաչ
տերեները. առվակը ջուր ե տալիս նոր բանջարանոցին:

Հեռվից, շարքով շարված ծառերի տակ, յերեսում են գույնըգ-
գույն փեթակներ: Յերկար նայելուց թվում ե, թե շարժվում են
նրանք, կարծում ես, թե կոլեկտիվի հորթերն են. բայց... այժմ
այնտեղ այլես գոմ չկա: Գոմը կատարեց իր դործը. նա այժմ վե-
րափոխված ե չոր ու ցամաք լուսավոր մեծ սրահի, յերկար ու մեկ
ձգված մաքուր տախտակներով: Նախկին գոմի ճակատին մի ցու-
ցանակ կա - վրան իրար գրկած մուրճ-մանգաղով ու կարմիր տա-
ռերով «Երամապահական արտել—Մուրն-Մանգադ»:

Գյուղի բոլոր կանայք շերամարտելի անդամ են: Տարեցտարի
ավելացնում են թթենիների թիվը, վոր բավարարի պահանջին:
Կոլեկտիվը ձեռք ե բերել հիսունից ավելի փեթակ: Կոլեկտիվի
անդամներից մեկն արդեն մասնագետ ե մեղվարուծության: Անիծ-
ված հողը կանաչել ե, ծաղկել, կյանք առել...

Կյանք ե առել նաև կոլեկտիվը:

Տրակտորը յեկել ե արդեն. նա շուռ ե տալիս խոր ակոսելով վոչ
միայն հողը, այլ մարդկանց ուղեղը:

Գյուղամիջում, մամուակալած յեկեցու բակում, գերեզմանա-
քարեր կան շիկավուն: Փորպարված յերկաթագրերի փոսերը լցվել
են քարախեժով, սեացել, դժվար ե կարգացվում, բայց հայտնի յե,
վոր «ազնվական առնմի» դամբարանն ե: Տապանաքարերն այժմ
նստարանների տեղ են ծառայում պարապ մարդկանց ու ծերերի
համար: Ահա այդ քարերի վրա յե, վոր նստառել են միքանի հողի,
ջրակալած աչքերը տրորում են, նայում դեպի անիծված հողը, վո-
րի վրա կանաչ ծառերն ու ծաղիկները խաղ ու պար են բանել
արեի, մեղվի, ջրի փայլի ու թռչունների հետ:

— Ախպեր, արին, ելի, իրանց ասածն արին...

— Բա չեյիր հավատում:

— Յես ինչ գիտեյի, թե դրանք Մանաս-բեզիցն ել ավելի
հունարով են:

— Կոլեկտիվ ասածդ վոր կա, ին առակի նման ա—«գեղ
կանգնի, գերան կկոտրի»:

— Հը, միտքդ հո չի՞ ծովել. չըլի՞ դու յել ես ուղում կոլեկ-
տիվ մտնես:

— Միթամ դու չես ուղում:

— Մեղքս ինչ ծածկեմ, ախպեր, թե ընդունեն՝ վազ տալով
կզնամ. ես բանը տեսնողը քոռ պետք ա ըլի, վոր չուզենա:

— Բա վախում չես կոլեկտիվի քոլի արջերը քեզ ուտեն...

Բաժանեցեր մասերի յեվ վերլուծեցեր այս պատմվածքը ըստ հետևյալ
ժրագրի:

1) Տրամադրությունները գյուղում:

2) Գյուղի վո՞ր խալին ինչպես ե վերաբերվում դեպի կոլեկտիվաց-
ման գաղափարը:

3) Ինչո՞ւ յեն կուլակները դեմ կոլեկտիվին:

4) Ինչո՞ւ յեն կոլեկտիվ կազմակերպելու գործում ամենից շատ շահա-
գրգռված չքավորները:

5) Ի՞նչպես կազմակերպվեցին նրանք:

6) Ի՞նչպես մշակեցին անիծված հողը:

ՍԵՐԳՈ ԶԱՎԵՏԱՆԻՑԵ

ԱՌԱՋԻՆ ՏՐԱԿՏՈՐԸ

(Հատվածներ)

— Հողը մերն ե. դուրս յեկեք, գյուղադիք:

— Կորչի մենշևիկյան կուսակցությունը:

— Կեցցե Խորհրդային Ռուսաստանը:

— Կեցցե բայլշեկիլյան կուսակցությունը:

Այդպիսի լոգունքներով անցան միքանի զինվորներ գյուղի միջով: Գյուղացիների մեծ մասը հետեւեց նրանց: Խուժեցին Թաղայի հողերն ու սկսեցին վարել: Այդ լուրն արագությամբ տարածվեց գյուղում:

Թաղան գյուղացիների վարմունքի մասին տեղեկացրեց քաղաքում գանվող Փերխուլիձեյին:

Փերխուլիձեն գյուղացիների վարմունքն ապստամբության անունով մկրտեց և տեղեկացրեց այդ մասին կառավարության:

Այդ որը խաղաղությամբ անցավ:

Հետեւյալ որվա համար ուրիշ գյուղացիք ել պատրաստվեցին արտերը գնալու: Հենց առավոտից ամպերը ծածկում եյին արել: Գյուղացիք աշխատում եյին արտերում: — Դուրս գնա, իմ յեզ, — լրավում եր ամեն տեղ: Յերիտասարդ տղաներն ու աղջիկներն առաջնորդում եյին լծված յեզներին:

Մեծ խճուղու վրա յերեաց հեծյալ գվարդիան: Նրանք կանգ առան նշանակված տեղը:

Միքանի ձիավոր ուղղվեցին արտերի կողմը: Գյուղացիներին առաջարկեցին աշխատանքը դադարեցնել:

Գյուղացիք չհամաձայնվեցին:

Գվարդիականները զենքի դիմեցին: Հրացանները չըխչըխկացին:

— Կրակեցեք... մենք մահից չենք վախենում: Վորքան ավելի ներկի բանվորների արյունով կարմիր դրոշակը, այնքան ավելի կտրուկ ու անհողող կլինի նրանց հաղթանակը. — գոռում եյին նախկին զինվորները:

Գյուղացիները զըս տվին գվարդիականների վրա: Գվարդիականները վիրավորեցին միքանի մարդ, վորով հնաղանդեցրին մնացածներին:

Գյուղում կանանց լուր տվեցին, թե գվարդիականներն արտերում կոտորեցին նրանց ամուսիններին ու զավակներին:

Պայթեց մեծ աղմուկ, շատերը թողեցին չփակված տունը, որուրոցում պառկած մանուկներին ու, դեմքերը ճանկուելով, վագեցին արտերի կողմը:

Դիվանատանը ձերբակալված գյուղացիներին քաղաք ուղարկեցին:

Այդ տարի Թաղայի դաշտերում անասուններն եյին միայն արածում:

Անհող մնացած գյուղացիք քաղաք գնացին աշխատանք վորոնելու համար:

Գյուղում առաջացան հիվանդություններ: Առանց բժշկական ողնության, սոված ու անիմամ հիվանդները մեռնում եյին:

Իսկ Թաղա Մարգվելաձեն դարձյալ զբաղված եր առեարով, վոսկի ակնոցներով նայում եր դավթարին ու փողերը հաշվում:

Ո՞վ կարող եր մտածել կամ յերեակայել թե բայլշեկիները կհաղթեն, — ասաց Թաղան Փերխուլիձեյի բակի դռան մոտ:

— Բայց չկարողացանք հասկանալ, թե վոր կուսակցությունն ե ավելի լավ, — պատասխանեց նրան Մեքին:

— Դրանք յերկար որեր չեն ունենալու, բայց ցավալին այն ե, վոր ժողովուրդն ե տանջվում: Տանջված վրաստանը վոտքի կկանգնի, վնաս չունի, — ավելացրեց նորից Թաղան:

— Աստված լսի խոսքդ, — վկայեց Մեքին:

— Դեհ, այդպես, սիրելի Մեքի, բարի գիշեր, — վերջին անգամ վնթինթաց Թաղան և հեռացավ:

Թաղա Մարգվելաձեն այլևս այն չե, ինչ առաջ եր:

Նրա գույքը իւլեց Հոկտեմբերյան հեղափոխության ալիքը:

Թաղայի սիմինդրի ամբարներն այլևս չեն լցվում իրրե տուրք վերցրած բերքով:

Գինու կարասների մեջ այլևս չի լցվում ուրիշի քրտինքով քամված զինին, և դահլիճում չեն լսվում մենշևիկների որով յերգված յերգերը: Թաղայի խանութի տերը փոխվեց: Մարգվելաձե ազգանվան փոխարեն գրված ե. «Սպառողական կոռպերատիվ»:

Ահա առայժմ այսքանը կարողացա հավաքել, խնդրեմ գոհ յեղիր: Մի վհատիր, դրանք յերկար կյանք չունեն վրաստանում... Բոլոր թաղաղներն ու ազնվականները վոտքի վրա յեն, — լսվեց Թաղայի խոպոտ ձայնը չափարի յետեր, մթան մեջ:

— Ինչ կանես արա, վող ե հարկավոր, մասցածը կարգին ե, — պատասխանեց կամաց ձայնով իոնան չափարի մյուս կողմից:

— Դու անհոգ կաց, շապիկս կծախեմ, միայն թե մեր վերջը լավ լինի, — դրանով վերջացավ իոնայի ու թաղայի դաղտնի տեսակցությունը:

Գիշերվա խավարի մեջ ծածկվեց անտառում թաղնվող իոնա Փերքուլիձեն:

Այն գիշեր ընթրելու մասցին մոտիկ հարկաններն ու ազգականները և մյուս որը մինչեւ աքաղաղի յերկրորդ անգամ կանչելը պատռնաներից լույս եր յերեռմ, և Եղիշերի ընտանիքում լսվում եր ուրախ յերգեցողություն:

— Մենք նոր յերկիր ենք կառուցում... Պետք ե արմատապես քանդենք հինը, այն տմենը, ինչ մեզ համար անընդունելի յե ու մնասակառ, — ասում եր Եղիշերը, վորը Լենինի պատկերը վակցնում եր ովատին ու բերանում մեխեր ուներ բոնած:

— Դա ո՞վ ե, սիրելիս, — հարցը Աղաթին և աչքերը հառեց պատկերին:

— Զկարողացած ճանաչել... Սրան յերկու տարեկան յերեխան անգամ ճանաչում են, այ մայրիկ, — պատասխանեց առանց յետ նայելու Եղիշերը:

— Աչքս այլս չի կտրում, վորդի: Ծերացել եմ:

— Սա Լենինի պատկերն ե, — ասաց նրան Եղիշերը և սկսեց ուշադրությամբ զննել պատկերը:

— Իսկ դա ով ե, վորդի, ոհ, ինչպես են բոլորովին թուլացել աչքերս, — ավելացը իր հարցումին Աղաթին:

— Սա քսան և վեց կոմմունիստների գնդականարումն ե Բազգում: Ապա մի տես, թե ինչպես են գնդականարում քո մենշևիկ ախաբեր-տղերքն աշխատավոր ժողովրդի համար անձնուրացությամբ գործողներին. — ասաց իր մորն Եղիշերը, հանաքով գրկեց նրան ու նստեցրեց թախտի վրա:

— Զգիտեմ, վորդի, յես ձեր կուսակցություններից վոչինչ չեմ կարողացել հասկանալ, — փնթփնթալով ասաց Աղաթին, թախտից վայր իջնելով:

— Վայ, գժվեցիր, այ տղա, չե, վորդի, չե, սիրելիս, այդպիսի բան մի անի, — սառը ձայնով գոչեց Աղաթին, յերբ տեսավ իր վորդուն սրբի պատկերի առաջ:

Եղիշերը պոկոտեց անկյունում կախված սրբի պատկերի զարդերը:

— Այո, դու յել այս սրբի պատկերը տար և հանգստացրու

ներ քահանայի կրծքին: Պրծավ, գնաց: Ապա մի նայիր, միթե լեմինի կողքին կազի սրբի պատկերն ու խաչը:

— Այ տղա, քահանան այլես տունս չի որհնի: Այդ ինչ ես անում, խելագար:

— Այո, քահանան առանց այն ել այս տունը չի կարող որհնել: Վերջ այդ սովորության: Դեհ, վերցրու քո այդ սրբի պատկերն ու դնա:

— Աստված, չբարկանաս դրա վրա, հիմար տղա յե, ներիր, մատաղ լինեմ ծնկներիդ, — փնթփնթաց Աղաթին յերեսը խաչակընքելով և իր կրծքին դեմ տված սրբի խաչը տարավ խոհանոց:

— Բնկերներ, գյուղացիներ և կարմիր-բանակայիններ, — զուաց Եղիշերը ուզգմական ձայնով:

— Ո՞վ ե այս յերիտասարդը, — շշնջում եյին գյուղացիք:

— Փերխուլիձեն ե, իոնայի յեղբայրը, — լսվեց հարցի պատասխանը:

— Միթե, այ մարդ, տեսնում ես, կոմմունիստ ե:

— Այսորվա մեր հավաքվելու նպատակը չափազանց ուշագրավ ու նշանավոր ե, — սկսեց նորից Փերխուլիձեն: — Այսոր ազատ գյուղացին տնտեսության ձրագրային արտադրության հիմքը պետք ե ձգի: Յերկար ժամանակ չե անցել այն օրից, ինչ դուք լսել եք կոլլեկտիվիզացիա բառը: Դրա մեջն ե կայանում, ընկերներ, մեր միակ փրկությունն ու հաղթությունը: Կոլլեկտիվ տնտեսության աճումը մեզ հնարավորություն կտա համելու այն բարորության, վորի համար պայքարում ե մեր կուսակցությունը բանվորների ու գյուղացիների հետ միասին: Տրակտորը ձեր յեղբայրակից բանվորների ձեռքով շինված այնպիսի մի մեքենա յե, վորը գյուղացուն կազատե անկարգ ու անտանելի աշխատանքից: Տրակտորը մեզ կուլտուրապես զարգանալու հնարավորություն կտա: Տրակտորը կուլ կտա ձեր անխոնջ աշխատանքի մեծ ծանրությունը:

— Կեցցե կոլլեկտիվիզացիան: Կեցցե տրակտորը միացյալ հողերի վրա: Կեցցե խորհրդային շինարարությունը, — ավարտեց իր խոսքն Եղիշերը:

Վորոտաց անվերջ ծափահարությունը:

— Այժմ, ընկերներ, այդ նույն հարցի վերաբերությամբ ձեզ հետ կիսուի կառավարության կողմից ուղարկված ընկերը:

Դրանից հետո ամբիոնից ցած իջավ Եղիշերը: Միտինգում իրենց ձառերով հանդես յեկան մնացած կարմիր-բանակայինները և տեղական կուսակցական ընկերները:

Ժողովը փակվեց, փողոցներում մութն ընկափ։ Տուն վերաբարձող գյուղացիք կրկնում եյին ժողովում լսած խոսքերը և ամեն մի հարցը քննադատության յենթարկում։

Հետևյալ որը կոլեկտիվի մեջ մտնել ցանկացող գյուղացիք հավաքվեցին նշանակված տեղում։ Ժողովին նախագահում եր Եղիշերը։

Խոսեցին ընթացիկ հարցերի մասին և հետո ընտրեցին վարչություն։

Կոլեկտիվի անունը «Մեր փրկությունը» դրին։

Հզոր ե կոլեկտիվը թշնամու և բարեկամի հանդեպ։ Ել ովկի կհամարձակվի այսուհետև թշնամանալ վորեե անդամի ընտանիքի հետ։ Նրան կոլեկտիվը կպատասխանե։

Այդպես եր մտածում այն րոպեներին ամեն մի գյուղացի այն խրճիթում, վորտեղ ստորագրեցին կոլեկտիվի կազմակերպումը։

— Յանկանք մեր կոլեկտիվին յեռանդուն աշխատանք և յեղայրական միություն՝ մահով ու կյանքով։ Թող մեր զործն որինակ դառնա մեր դրացի գյուղացիների համար, վորպեսզի աշխատավոր գյուղացիությունը դրանով փրկվի, — ավարտեց Եղիշերը։

Կովեցին ծափեր։

— Շատ տարիներ ապրես...

— Թող հրձվեն ծնողներդ...

— Միշտ ուժեղ լինի բազուկի...

Այդպիսի ցանկություններ եյին հայտնում այդ մեծ զործի ղեկավար Եղիշերի վերաբերությամբ այն ամենաաղքատ գյուղացիք, վորոնց միացել եր Եղիշերն ու լծել կոլեկտիվ տնտեսության զործին։

Ժողովն ավարտվեց, Բոլոր գյուղացիք իրենց հետ տարան մտածմունքներ նոր զործի վերաբերմամբ և իրենց ստացած տպավորությունները հաղորդեցին իրենց տնեցիներին։

Կոլեկտիվի կանոնադրությունը հաստատեցին։

Սպառողական կոոպերատիվը նրանց համար վարկ բացեց։ Տվեց տնտեսական զործիքներ և տրակտորի պատվեր ուղարկեց կենտրոնին։

Կոլեկտիվի յերկրորդ ժողովում կարմիր դրոշակ ծածանեցին հետեւյալ մակարությանը։

«Կեցցե մեր փրկությունը»։

«Կեցցե կոլեկտիվացումը»։

«Կեցցե կոլեկտիվ տնտեսությունը»։

«Կեցցե կոլեկտիվ շինարարությունը»։

Ժողովից հետո անցան փողոց և յերգելով դիմեցին դեպի թաղայի նախկին հողերը, վորոնք այժմ նրանց կարգադրության տակ եյին։

Դրոշակը տնկեցին արտերի մեջտեղում և «կեցցե» բացականչելով սկսեցին քանդել իբրև սահմանի նշան շինված թմբերը, կտըրտեցին փշոտ չափարները և տրակտորի համար պատրաստեցին ընդուրձակ տարածություն։

Յերեկոյան հավաքվեցին ծերացած կաղնու տակ և ականով պայթեցը թաղայի շատ ժամանակից իվեր իբրև հողերի սահմանի նշան ամրացրած, մամոռվ պատած քարը։

Գյուղում առևտրի համար նշանակված եր ուրբաթ որը։

Գյուղացիք զանազան գյուղերից գալիս եյին այդտեղ առևտուր անելու։ Բերում եյին ծախելու և գնած իրեր — սապոն, լեղակ, նավթ, աղ։ Բերում եյին սայլերի ցցերի վրա ամրացրած, ծայրերը կերպած հացեր։

Կոոպերատիվը լիքն եր գյուղացիներով։

Խանութի աշխատակիցը չափում եր ընտրված ճոթեղենը։

Վաճառում եյին մասնավոր վաճառականներն եր բայց վճառած ու դժգույն։

Շուկայում մի ինչ-վոր անսովոր ձայն լսվեց։

Ժողովուրդը զարմացավ։ Սկսեցին նայել յերկնքի կողմը։

— Սավաննակ ե...

— Վո՞չ մի ինչ-վոր ուրիշ բան ե, — լսվում եյին ժողովրդի մեջ ձայներ։

Մի գյուղացի վագելով ներս ընկավ կոոպերատիվ ու շնչառապ բղավեց. «Բերում են, գալիս են»։

— Ի՞նչ են բերում, — հարցնում եյին մարդիկ։

— Տրակտոր են բերում կոոպերատիվի համար, — արտասանեց չիթը չափող ու կտրող աշխատակիցն առանց գլուխը բարձրացնելու։

— Տրակտոր, — լսվեցին խառն ձայներ, և կոոպերատիվը դատարկվեց։

Կոլեկտիվին մասնակցող գյուղացիք դուրս բերին կոոպերատիվի առջև մի դրոշակ և դիմավորելու պատրաստվեցին։ Գյուղի մեծ ճանապարհով դժմալով գալիս եր տրակտորը, բակերի դռների ու չափարների մոտ լցվել եյին մեծ քանակությամբ կանայք։ Գյուղի փոքրահասակ տղաներն ու աղջիկները խմբերով հետեւում եյին նրան։ Շներն իրենց հաջոցով աշխարհ եյին քանդում։

Տրակտորի կողքին կանգնած ե Եղիշերն ու նայում է հպար-
տությամբ:

Տրակտորը հասնում է շուկայի մուտքը, նրա յետելց ընթա-
նում են գյուղացիք, վորոնք տրակտորին դիմավորել եյին դրոշա-
կով: Այժմ այդ դրոշակն Եղիշերն և բռնել: Խվում են անընդհատ
կեցցեների ձայներ:

Տրակտորը շարժվեց, զնում է գեղի շուկայի կենտրոնը: Բազ-
մությունը հետզհետե ստվարանում է:

Մեքենավարը մեքենան կանգնեցրեց Եղիշերի մատնանշած
տեղը:

Գյուղացիք զնում եյին մեքենայի այն մասերը, վորոնք պետք
է պայքար մղեյին հողի գեմ:

— Ընկերներ, — գոռաց համարձակ ձայնով Եղիշերը և նրա կող-
քին կանգնած գյուղացին ավելի ևս բարձրացրեց դրոշակը:

— Այսոր տուածին անգամ պետք է զգա գյուղացին, վոր մեր
փրկությունը կոլեկտիվում ու տրակտորումն ե... Այսոր առաջին
անգամ գյուղացու նյարդերը պետք է տողորվեն այն գիտակցու-
թյամբ, վոր մենք միացյալ ուժերով ու հենց այս մեքենայի ող-
նությամբ կկարողանանք բարվոքել միացյալ հողերի վրա մեր կյանքն
ու հաստատուն հիմքերի վրա դնել այն: Այստեղ է մեր փրկու-
թյունը, և հենց այսանդ պետք է վորոնք մեր ազատությունը, —
ասում եր Եղիշերը:

Խանութներում այլևս մարդ չմնաց:

— Այս ճանապարհով, այս միջոցով գյուղացին կհասնի այն
բարձրության, վոր նա յել հնարավորություն կունենա ձայն բարձ-
րացնել կուլտուրական ֆրոնտում և հոգալ իր բարորության մասին:

— Կեցցե կոլեկտիվացումը:

— Կեցցե խորհրդային շինարարությունը, — ավարտեց Եղիշերն
իր ճառը:

Խվում են ծափեր ու «կեցցե» բացականչություններ:

Ժողովից միքիչ հեռու կանգնած մարդիկ ասում եյին:

— Այստեղ չոկտեմբերյան հեղափոխության նոր աշխարհ են
կառուցում:

Յերեկոյան թե տներում և թե դուրսը լավում եյին «տրակտոր»,
«կոլեկտիվացում», «մեր փրկությունը» բառերը և Եղիշերի անունը

Գյուղում գարունը յերաշտով սկսվեց:

Խոտը չկարողացավ ծայրը դուրս հանել անգացած հողից:
Սնսպասելի քամին ու տաքությունը սրտապատառ արին վա-
բել սկսած գյուղացիներին:

Կոլեկտիվը վորոշեց իր միացած հողերի մի մասում կուլտու-
րային բույսեր ցանել: Այդ որերին գյուղում աշխատանք եր կա-
տարվում ջրանցքում:

Վզից խաչ կախած քահանան և գյուղի կուլտակները հավատաց-
նում եյին, թե ջրանցքի մեջ ջուր չի գա այն պատճառով, վոր
գետը գյուղից ավելի ցած և հոսում:

Շատերը վհատում եյին և խույս տալիս աշխատանքից:

Ջրանցքի ավարտվելին ուշանում եր:

Փորած տեղերում ջուրը նեխում եր: Գորտերը կուկում եյին, և
առաջ եյին գալիս մոծակներ, տարածվում եր դողերոցքը:

Ցերաշար շարունակում եր:

Գյուղացիք սովի վասնգի մեջ եյին: Մեքանի հարուստ գյու-
ղացիք հավատն ուժեղացնելու նպատակով դիմեցին քահանային և
սրբերի պատկերներով ու խաչերով սկսեցին վորոնել յերաշտի
պատճառը:

Գարնան սովորական առավոտ ե: Պայծառ արև ե: Չնայած այն
հանգամանքին, վոր սաստիկ յերաշտ եր, գյուղացիք սկսեցին տրակ-
տորով աշխատել:

Տրակտորը փորում եր հողը:

— Ոհ, թող հրճի ու զորանա այն բազուկը, վորը քեզ շի-
նեց, — ասում եր մի ծերունի ու շուտշուտ հանգստանում եր յե-
րեխայի պես վոգեորված:

Տրակտորի մեքենավարի համար բնակարան և հարկավոր: Կոլ-
եկտիվի անդամների ընտանիքներում չգտնվեց համապատասխան
սենյակ:

Թաղայի կանաչ գույնով ներկված տան մեջ տեղավորեցին մե-
քենավարին:

Գյուղացիներին դուր չեկավ, վոր թաղայի տան մեջ բնակվեց,
բայց ի՞նչ կարող եյին անել, քանի վոր իրենց ընտանիքներում հնա-
րավոր չեղավ մի սենյակ հարմարեցնել:

Գյուղում վարուցանքի ժամանակն անցնում եր: Արորով աշ-
խատող գյուղացիք ամեն որ զնում եյին իրենց լծկանների հետ ար-
տերը, սակայն անուժ արորով ու գութանով չեյին կարողանում
բանալ տափարակ հողի կուրծքը, և որած յերկաթի ծայրը ճանկը-
տում եր միայն գետինը:

Կոլեկտիվի անդամները վարեցին ու ցանեցին իրենց միացյալ
արաերը և տրակտորը սլացըրին գեղի լրված ջրանցքը:

Տրակտորի աշխատանքից խրախուսված վոտքի կանգնեց ամբողջ գյուղի գյուղացիությունը և անձնատուր յեղավ յեռանդու աշխատանքին:

Այդ ժամանակ ուղղափառ կուլակները քահանայի հետ միասին նորից խոսում եյին ժողովրդի մեջ, թե ջրանցքի մեջ ջուրը չի կարող մտնել: Խորհուրդ եյին տալիս միքանի տղետ գյուղացիների հավատ ընծայել քահանայի խոսքերին և սրբերի պատկերների ու խաչի ոգնությամբ վերացնել յերաշտը չորացած դաշտերից:

Ջրանցքը շուտով ավարտվեց: Բացմանը ներկա յեր անհամար բազմություն: Կառավարության ներկայացուցչի և տեղական ընկերների ճառերից հետո բացեցին ջրանցքի դռները, և ջուրն աղմուկով վաղեց փորփածքի մեջ: Լսում եյին յերկարատև ծափեր և «կեցցե» բացականչություններ:

Թերահավատներն իրենց սեացած դեմքերը կախեցին և լսելիքները փակում եյին, վորպեսզի չլսեն ջրի կարկաչումը:

Վոռոգվեցին հողերը... Աշխուժացավ գյուղը ջրի շնորհիվ: Յերաշտի ահը վոչնչացավ:

Կապույտ գույն ստացան դաշտերում անասունները:

Սուատ ջուր խմեցին դաշտերում անասունները:

Եղիշերը գյուղում մատով ցույց տալու մարդ դարձավ:

Բոլոր գեղջկուհիներն ու գյուղացիք, մեծ ու փոքր, նրան եյին նայում ժպտուն դեմքով և նրա մեջ ոգնություն վորոնում նեղության միջոցին:

Եղիշերը, բացի կոլեկտիվ տնտեսության գործի մեջ խառնվելուց, լուսավորության բնագավառին ել ձեռք զարկեց և գյուղի յերիտասարդությունը լծեց ակմբային աշխատանքին, աշխատանքը հրահրեց կուլտուրական ֆրոնտումն ել:

Նրա անդադրում աշխատանքն զգալի ազդեցություն գործեց գյուղում: Կոլեկտիվի ամեն մի անգամ բաժանորդ եր գրվել «Ախալի Սովելի» (Նոր գյուղ) լրագրին և յերեկոներն աշխատանքից ազատվածները լվացած ձեռք ու յերեսով հավաքվում եյին բակի հով տեղում ու կարդում այս:

Այդ յերեսութը սաստիկ անհանգստացրեց ու հուղեց կուլակներին և նրանք հնարներ եյին վորոնում գյուղացիության բարության ճանապարհը խափանելու համար:

—

Մի յերեկո տրակտորի մեքենավարին միկիտանում մոտեցան միքանի յերիտասարդներ, վորոնք զգալիորեն հարթեցրին նրան: Մինչև բնակարանը նրան ուղեկցելիս՝ նրա գրպանից հանեցին բանալին:

Նույն գիշերվա կեսից քիչ անց եր, յերբ այն բակի դռան մոտ, վորտեղ արակտորն եր պահված, կանգ առան յերկու անծանոթ մարդ: Միքանի բովելից հետո նրանցից մեկն արագ թռավ բակի դռան վրայով և մոտեցավ տրակտորի գտնված տեղին:

Շունը մի անգամ ծուլորեն հաջեց, բայց նրա առաջ գլորվեց մսի մի կտոր, և կծելու համար պատրաստված ատամներն սկսեցին կրծել:

Անծանոթ մարդը բացեց այն ծածկոցի գուռը, վորտեղ արակտորն եր գրված, և իր չար ձեռքով մի ինչ-վոր նյութ ներս տարավ մոտորի մասերի մեջ: Նա նորից վրա քաշեց ծածկոցի գուռը, կողմեքը դրեց վրան ու յետ դարձավ:

Նա շտապով նորից թռավ բակի դռան վրայով, և յերկու անձանոթներն արագությամբ հեռացան դեպի գյուղից դուրս տանող ճանապարհը:

Շունը մի անգամ ու վերջնականապես ճշաց և սատկեց՝ միուր բերանում մնացած:

Շան հաջելու վրա գյուղացին պատշգամբ դուրս յեկավ—հազար ու շանը կանչեց: Զարմացավ, տեսնելով, վոր հավատարիմ շունը թողել ե քակը, նորից մտավ սենյակ, ճրագը դուրս բերեց և սկսեց վորոնել շանը: Նա այդտեղ ևեթ, պատշգամբի տակ գտավ իր տան հավատարիմ պահապանին՝ վոտերը ձգած:

— Մուրա...— գոչեց ապշած մարդը: Վոտով խփեց, ճրագը մոտեցրեց:

— Այ մարդ, ինչ ես դես ու դեն ընկնում այս կեսդիշերին, ի՞նչ ե պատահել—հարցը գյուղացուն, առանց աչքը բանալու, նրա անկողնում մնացած կինը:

— Մեր շանը թունավորել են,—լսվեց գյուղացու պատասխանը:

— Շմնը...— ճշաց տանտիկինը և այնպես արագ նստեց անկողնում, կարծես մի մլուկ եր կծել նրան:

— Մուրան մեռել ե, մայրիկ: Ո՞վ ե սպանել: Մեր խեղճ Մուրա, — բղավեց աղմուկից զարթնած փոքրիկ աղջիկն ու դեմքը կընձուաց:

Այդպիսով, ամբողջ ընտանիքը համակվեց ցավով՝ Մուրային պատահած դժբախտության պատճառով:

Գյուղացին նայեց յերկնքին: Աստղերով ժամանակն իմացավ, և քանի վոր մինչև լուսանալը բավական ժամանակ եր մնում, մտածեկոտ աչքերով անկողնում թափալվեց և ծխախոտի ծխի մեջ եր աշխատում գտնել չարագործներին:

Այսպես անքուն մնաց գյուղացին, մինչև վոր լուսամուտներից թափանցեց արևի լույսը:

Այն որերին կոլեկտիվը ծխախոտ տնկելու համար հող եր պատրաստում:

Գյուղացիք, ագրոնոմի կողմից դպուշացված լինելով, առանձին յեռանդով եյին աշխատում, վորովհետև ծխախոտի մշակումը լավ ուշադրություն եր պահանջում:

Այդ գործում շահագրգոված և կոլեկտիվ տնտեսության հավատարիմ ագրոնոմն ել ամեն բոսկ առաջնորդում եր գյուղացիներին ու վարում այդ գործը:

Լուսացավ: Գյուղը վոտքի կանգնեց: Ամենքն շտապում եյին գործի գնալ:

— Ումը պետք ե մեղադրեմ, վոչվոքի վրա կասկած չունեմ,— լավեց գյուղացու ձախը:

— Այդ գիշերս ե պատահել:

— Այս, լուսանալու մոտ եր, յես հետո այլես քնել չկարողացա, — նորից պատասխանեց գյուղացին:

— Զարմանալի բան ե, — ասաց ագրոնոմը և մի պապիրոս տվեց գյուղացուն:

Այդ խոսակցությամբ նրանք հասան ու նստեցին միքանի քայլ հեռու գետնին ընկած ու անփները հանած մի սայլի ծայրին:

— Վարտեղ ե այսքան ժամանակ: Նա վոր իրենը չանի՝ չի լինի, — ասաց ագրոնոմը և ծխախոտի ծուխը փշելով քշեց բակի դուն կողմը:

— Նա միքիչ կոնծել ե սիրում, յերեկ յերեկ յերեկո վորեա տեղ քեֆ ե արել, — բացատրեց գյուղացին ագրոնոմի աված հարցը:

— Զափազանց քնքշություն ե պահանջում ծխախոտի մշակումը, մեծ զգուշություն ե հարկավոր, տապա թե վոչ՝ յեթե մի ուրով գործը հետաձգվի, բոլորովին կանփետքանան տունկերը, — սկսեց ագրոնոմը զգուշացնելու նպատակով:

— Յեթե այդ գործը մեր հույսերն արդարացնի, մեր դրությունը կը արվորվի, — ասաց գյուղացին:

Այդ միջոցին ուշացած մեքենավարն այսպիսի մի վազքով վրա ընկավ բակի դռան, կարծես նրա յետեկից եյին ընկել սպանելու համար:

— Վողջույն հանդիպողներին, — արտասանեց նա առանց կանգ առնելու և, հանցանքը քավելու համար, վրա ընկավ այն ծածկոցին, վորտեղ տրակտորն եր դրված:

Միքիչ աշխատելուց հետո մոտեցավ առջեկի անփներին, վոտքը պինդ գրեց գետնին և ձեռքը շարժեց, վորպեսզի բանեցնի մեքենան:

Առաջին փորձն անհետեանք մնաց: Գլխարկն ուղեց և յեր-

կրորդ անգամ ավելի ուժեղ կերպով շարժեց ձեռքը: Մոտորը զժաց:

Ագրոնոմն ու գյուղացին անցան բակի դռան կողմը:

Մեքենավարը նստեց մեքենայի կոթը բռնելու տեղի մռա և սկսեց ձեռք ու վոտքով կարգի բերել մեքենան: Մոտորը ձայն հանեց: Ծածկոցում ծուխ կանգնեց, և այրված բենզինի հոտով լցվեց բակը:

Ագրոնոմն ու գյուղացին այդ անսովոր ձայնի պատճառով շըրջվեցին ծածկոցի կողմը: Հաղիկ նրանք յերկու քայլ եյին արել, վոր հուժկու վորոտ լսվեց ծածկոցում:

Գյուղում հաջեցին շները, կոկուցին հավերը, և աներից դուրս թափեցին մարդիկ:

— Սա լավ նշան չպետք ե լինի, — ասում եյին միմյանց գյուղացիիք:

Դեռ առաջին պայթումի ձայնը դիպչում եր մոտակա սարերին, յերբ լսվեց յերկորդ վորոտը:

Նեղ փողոցները լցվեցին գունատ գյուղացիներով:

Տախտակից շինված ծածկոցը բոցի մեջ փաթաթվեց:

Դեպի բակի դուռն Ելին վազում կանայք, մարդիկ, մեծ ու փոքր՝ կուժերով, դույլերով, կաթսաներով:

Գյուղացիք առաջին հերթին պաշտպանում եյին տրակտորը: Կրակը շուտով հանգցըին:

Դեմքը խանձած և ձեռքերն այրված մեքենավարին բժշկական ոգնություն ցույց տվին:

Բակում մեծ բազմություն ե հավաքվել:

Զգացվում ե ընդհանուր անվճռականություն:

Ամենքն ել կամենում են իմանալ տեղի ունեցած զեպքի պատճառները:

Այն գիշերն Եղիշերը նիստ եր ունեցել մոտակա գյուղում, ուշ եր տուն վերադաբել և առավոտը քաղցր քնել եր:

Կարծես գյուղի տանջանքներով ապրող Եղիշերին քնած միջոցին մի ինչ-վոր անհայտ եյակ ասել եր:

— Զարթի՛ր, գյուղացիների արծի՛կ, գյուղը նեղ դրության մեջ ե, ոգնի՛ր:

Հանկարծ նա վեր թռավ, աչքերը տրորեց, ժամացույցին նայեց, շտապով հագնեց:

— Դեռ ելի լավ չես քնել, վորդի՛ս, — ասաց դռնից ներս մըտնելուն պես Աղաթին Եղիշերին:

— Ի՞նչ ե պատահել, — կարծես մի ինչ-վոր զգացում արտասանել տվեց Եղիշերին:

Աղաթին յենթադրեց, թե իր վորդին հարց ե տալիս պայթումի առիթով:

— Վոչինչ, վորդի, յերեխ վորևե մեկը ջրհոր փորելիս ական ե դրել մեջը, — պատասխանեց Աղաթին:

— Ի՞նչ ասացիր, մի ինչ-վոր բանի ձայն ե յեկեր, — վրա բերեց Եղիշերն ու վագեց դեպի պատուհան, հետո դուրս գնաց պատըշպամբ:

Գյուղում նորից լսվում եր շների հաջոց ու մի ինչ-վոր անվըճականություն եր տիրում:

— Եղիշեր, դու վոչինչ չես լսել, — հարցրեց նրան բակի դոնից՝ տեղի ունեցած պատահարից վերադարձող մի գյուղացի:

— Վոչ, ի՞նչ ե պատահել, — հարցրեց Եղիշերն ու սանդուղքով ցած վագեց այնպիսի մի ձեռվ, կարծես մեկը յետելից բոթել եր:

— Տրակտորը պայթեցրե...

— Ի՞նչ, տրակտորը...

Դեռ իր խոսքը չեր վերջացրել լուր բերողը, յերբ բագեյի պես առանց գլխարկի ու գոտիկի, սլացավ Եղիշերը դեպի դժբախտության վայրը:

Պայթումի տեղում բազմությունը ստվարանում եր:

Հանգուծ հրդեհում ճրթճրում եյին խանձված ու ջրի մեջ ածած ձողեր. ծառերի տակ թափած եր տան կանկարասիքը, և ծծերը դուրս թափած, յերեխային գրկած, դեմքը ճանկուտած մի կին վողքում եր իր կրած ֆսաների համար:

Հանկարծ մարդկանց գեմքերը բակի դռան կողմն ուղղվեցին:

— Եղիշերը, — լսվեց ամենքի բերանից:

Եղիշերը վրա ընկալ բակի դռանը կատաղածի պես: Նրա գեմքը քրտինքի մեջ քամքում եր:

Նա իր աչքերից կրակ եր թափում: Նա նախ վրա ընկալ տրակտորին, լավ զննեց ու ապա շրջվեց բազմության կողմը: Ամենքը վագեցին նրա կողմը, ամենքին հետաքրքրում եր նրա բրունելիք դիրքը:

— Մի վախենաք, գյուղացիք: Մեզ, Հոկտեմբերյան հեղափոխության պահապաններիս, չի կարող վախեցնել այնպիսի մի չարագործ ձեռք, վորի արածին գուք այս բոպեյիս նայում եք: Հանցավորը մեր մեջ ե գտնվում, ընկերներ: Հեղափոխության և իրենց անձի դավաճաններ կլինեն նրանք, ովքեր այժմ մեր կողքին չեն կանգնի և չեն մասնակցի չարագործությունն ինայտ բերելուն: Ման նրանց, ովքեր չարամտությամբ են մտնում մեր բարորության գործի մեջ ու խոչընդոտ հանդիսանում նրա բարգավաճման, — ասաց Եղիշերը վշտացած գյուղացիներին:

Նրա աչքերից կրակ եր թափվում, ու նա շտապում եր չարագործների հետքերը գտնելու:

— Ման չարագործներին, ման մեր թշնամիներին, — լսվում եյին ձայներ:

— Համեմատեցեր այս պատմվածքը նախկին պատմվածքի հետ յեկ վերլուծության յենթարկեր միեվնույն ծրագրով:

Ն. ԼՈՐԴԿԻՇԱԽԻՉՅԱՆ

ԶԵՄՈՔԵԴԻ¹⁾ ԿՈՄՄՈՒՆԱՆ

ԽԵՂԱԿԵՍ ԱԿԱՎԵՑ

Արձանագրություն № 1.

1926 թվի հունվարի 25-ին կայացավ Զեմոքեդի գյուղում գյուղատնտեսական կոմմունայի ժողովը: Ներկա եյին 22 մարդ և 8 կին, ընդամենը 30 մարդ: Նախագահում եր կորա Զոխելին. քարտուղարն եր Ալեքսանդր Կոբայիձեն:

ՈՐԱԿԱՐԳ.— 1. Սամթավիսի²⁾ կոմմունայի կանոնադրության ծանոթությունը.

2. Անդամների գտումը և ընդունելությունը:

ԼՍԵՑԻՆ

Սամթավիսի կոմմունայի մասին գեկուցեց ընկ. Բասիլ Քավթարովը, վորը նշում ե այս կոմմունայի կարգ ու կանոնն ու առաջադիմությունը:

Լսելով գեկուցումը, ժողովը միաձայն վորոշեց, վոր կոմմունայի ամեն մի անդամ աշխատի և ամեն ջանք թափի, մեր կոմմունան իր բարձրության վրա պահի:

ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՏՈՒՄԸ

Ըստհանուր ժողովում արվեց ամեն մի անդամի ընութագիրը, և ըսդունվեցին կոմմունայում հետեւյալ ընկերները:

(Թված ե 17 մարդու անունազգանուն):

¹⁾ Զեմոքեդին գտնվում ե նախկին Սղնախի գավառում՝ Քիղիղում, Սղնախից 70 կիլոմետր հեռու:

²⁾ Սամթավիսի կոմմունան գտնվում է Գորու շրջանում, Անդրկովկասի լերկաթուղու կասպի կայարանից 7 կիլոմետր հեռու և համարվում է վրտառանի առաջին կոմմունաներից սեկը: Ծ. Թ.

Այս պարզ ժողովով եւ սկսվում այն մեծ կյանքը, վոր սթափեցրեց ծանր ու լուռ Շիրաքին, ազմկեց, արագացրեց այն, ինչպես կայարանը դնացը մոտենալու ժամանակ:

— Զանձրացա շան պես կյանք վարելուց: Այնքան հաց չեմ կերել, վորքան անիծել եմ ծնված որս. ուղղակի տանջանք եւ մասնավոր գյուղացու աշխատանքը. ել ի՞նչ պիտի լինի. ահա արդեն քառասուն տարեկան եմ դարձել, որ ու գիշեր հավասարեցնում եմ, բայց ժամանակ չեմ գտնում յերկնքին նայելու:

Մի բարձրահասակ, մեջքը քիչ ծռած լեռնցի մեկնեց ձեռին յեղած ճիպոտը սալորենու տակ խաղացող յերեխաների կողմը:

— Յերկուսն իմ են, նրանք մի անգամ նույնիսկ չեն կանչել ինձ հայրիկ, առանց հետն ավելացնելու՝ քաղցած եմ, հաց եմ ուղում. իսկ այժմ. արդեն ինքներդ տեսնում եք, միությունը մեզ փրկեց, ապա թե վոչ մեր պապական գութանը... լեռնցին ճիպոտով տարածության մեջ մի այնպիսի բան գծեց, վոր ինքը ևս ծիծաղեց:

Վոր պապական գութանով չքափորությունից ու կեղտոտությունից չեյին ազատվի, արդ քաջ հայտնի յեր քեղացիներին:

Այն ել լավ գիտեյին, վոր քսանժամյա աշխատանքային որը զուր կորչում եր մանր, մասնավոր տնտեսության վայրենության ժամանակ:

... Ինչ-վոր նոր բան պիտի ստեղծեյին, մեր կյանքի կարգը պիտի փոխեյին: Բայց ի՞նչպես, ի՞նչպես պիտի ձևակերպվեր նորը...

Աչքով չեյին տեսնում, ձեռքով չեյին կարող շոշափել ու նախնիքների փորձով և ավանդությամբ չեյին կարող առաջնորդվել: Ահա այսպիսի անորոշ գրության մեջ եյին գտնվում, յերբ նրանցից մինը ներս գցեց «կոմմունա» բառը:

Գյուղացիք պինդ բռնեցին այս բառից և աշխատեցին պարզ ըմբռնել նրա լավն ու վատը:

— Միության դեմ վոչինչ չունեմ ասելու, բայց նա արդյոք կբարելավի՞ մեր կյանքը, — ահով հարցըց մինը:

— Փորձենք...

Իսկույն, հենց վոր կոմմունա հիմնելու միտքը ծագեց, զեմոքեղացիք ներկայացուցիչներ ուղարկեցին Սամթավիսի կոմմունան:

— Ծանոթացեք, լավ դիտեցեք նրանց կյանքը, յեկեք և պատմեցեք մեզ՝ ի՞նչպես են ապրում, ի՞նչ են շինում. ուսումնասիրեցեք՝ յերբ մասնավոր կյանք եյին վարում, այն ժամանակ եյին լավ ապրում, թե այժմ...

Տվին հրահանգ իրենց մարդկանց:

Այսպիսի հրահանգով զանազան գյուղերից շատերն են յեկել Սամթավիսի կոմմունան, և Վրաստանի այդ ամենահին կոմմունայի արժանիքը հենց նրանում եր կայանում, վոր շատ ներկայացուցիչների նա ճանապարհ եր դրել շինական կյանքի վերակազմության տեսչով, հուսով և ուրախությամբ: Յերեկի Սամթավիսից յետ դարձող Բասիլ Քավթարաձեն չեր ել մտածում, թե մի յերկու-յերեք տարուց հետո իրենց կոմմունան ևս այնքան պիտի բարգավաճի, վոր այլ գյուղացիք իրենց գուռը պիտի բաշխեն ճիշտ նույն նպատակով, ինչ նպատակով վոր Բասիլը գնաց միքանի հարյուր վերստ հեռավորության վրա գտնվող այդ կոմմունան տեսնելու:

ՔԱՆԴՎԱԾ ԿԱՄՈՒԻՐՁՆԵՐ

Կոմմունայի խորհրդի կողմից գրասենյակում բանելու համար ընտրված ե կոմմունայի հիմնադիրներից մինը՝ Սիմոն Զոխելին: Վրաստանի ամենամեծ կոմմունայի թղթերի և հաշիվների վարելն այնքան ել հեշտ բան չե. բայց Սիմոնը դարձյալ կարողանում է դաշտային աշխատանքների գնալ: Նա խոստացավ ինձ տալ կոմմունա հիմնելու միքանի մոմենտների պատմությունը: Գնում եյի նրա մոտ խոստումը հիշեցնելու: Մտանք գրասենյակ. յերկու սեղան լիքն ե թղթերով և մատյաններով. պատերին պլակատներ են ու քարտեզներ:

— Վորտեղից սկսեմ, — հարցնում ե Սիմոնը:

— Այ, ենտեղից, կանոնադրություն վոր կազմեցիք:

— Աբա եղ ի՞նչ ե, մի աշքի ընկնող բան չի. անփորձ եյինք. մի գիշեր նստեցինք ու գրեցինք քսան հոգված, են ել հետո կորցրինք. այ մարդ, են ի՞նչ եր, վոր այժմ հիշում եմ, ի՞նչպիսի բաներ գրեցինք...

Սիմոնը գլուխը շարժում եր ու ժպտում: Նրա ժպտալը յես հասկանում եմ:

— Ման եյինք գալիս գյուղում ու ցուցակագրում այնպիսի գյուղացոց, վորոնց վստահում եյինք: Ցուցակագրեցինք 35 մարդ: Յերեկոյան դեմ հավաքվում եյինք, շրջում եյինք ու վիճում: Վրձուեցինք միանալ բայց չկարողացանք ընտրություն անել՝ կոմմունաթե արտել արտել թե կոմմունա. ով նոքար եր—կոմմունայի կողմակից եր.—Վոչ տուն ունեմ, ասում եր, վոչ տեղ: Արտել վոր մտնեմ, տուն ով կտա. աղքատ եմ, աղքատ ել կմնամ. յերբ միասնական կյանք ենք սկսում, ավելի լավ ե ամեն բան ընդհանուր դարձնենք ու ընակարաններն ել նոր շինենք: Իսկ վորմանք ասում եյին. — Արտելում անդամները խոշոր տնտեսությունները— հողերն եյին.

են միացնում. իսկ մանը կարողությունը մնում է վորպես սեփականություն. ով գիտե, կարելի յե արտելի միքանի անդամ ընդհանուր տնտեսության դավաճանեն և սկսեն իրենց մասնավոր սեփականությունը զարգացնել: — Ինչեր չեյին ասում: Յերկու տնտեսությունը՝ մասնավորն ու ընդհանուրը չեն կարող միաժամանակարել. թող մինը լինի, բայց լավ: Կարողություն ունեցողներն ավելի արտելի կողմնակից եյին:

Հունվարի սառնամանիքներին քարուքանդ արեցինք մեր գոմերն ու խրճիթները — հողի հետ հավասարեցրինք: Զահելն ու ծերը, կինն ու յերեխան, ամենքս վոտի կանգնեցինք: Մեծ դժվարությամբ ու տանջանքով քար կրեցինք: Սկսեցինք ժամանակավոր մի ընդհանուր կացարան շինել: Դժվար են նկարագրել, թե ինչեր անցան մեր գլխով այն ժամանակ. ժողովրդի կեսը դուրսն եյին ածած:

— Ո՞ւր եյիք խրճիթներ, քանդում, չե՞ վոր ժամանակավոր ընակարանների տեղ կարող եյին ծառայել: Դեռ դումար ճարեյիք, շինարարական նյութեր պատրաստելիք և ամառն սկսելիք ընդհանուր կացարանի կառուցումը:

Սիմոնը քմծիծաղ տվեց, և աչքերն սկսեցին փայլել:

— Մենք յերգվեցինք գիմանալ և իրար չդավաճանել. բայց և այնպես վախենում եյինք: Նոր գործ եյինք սկսում, նոր կյանքի ձևակերպումն եյինք ուղում. նոր գործի հետ հազար տեսակ արդելքներ են կապված. կարելի յե մեզանից մեկը լքեր, վհատվեր, վախենալը մի վորեե արգելքից ու ցանկար յետ դառնալ դեպի մասնավոր կյանքը: Յետ նահանջելու կամուրջները փլցրինք — քանդցինք. յետ դառնալու ճանապարհները վոչչացըրինք ու ասինք՝ յեթե մինը կորչելու յե, թող բոլորս կորչենք:

Ս Ո Յ Ի Ա Լ Ի Ս Ը Լ

Չեռաց շինած կացարաններում տանավարի զբոսնում եր ցուրտն ու քամին: Անփորձ ձեռքը հարյուր անդամ պիտի փչացնի գործը, վոր նրա շինելու գաղտնիքն իմանա:

— Գյուղատնտեսի խորհրդով պատվաստները մայիսին զննեցինք. պատվաստները փչացան:

Մեզանից վորմանք շարունակ ասում եյին.

— Ո՞վ ե լսել մայիսին պատվաստներ. բայց հո գիտեք, ագրոնոմն եր ասում... նրա խոսքը մեր խոսքից թանգ արժե. հավատացինք և պատվաստները փչացըրինք. այսպես եր խոսում խորհրդի անդամը:

Բայցի դրանից խցկվեցին ոտար տարբեր, վորոնց շահերը չեյին

համապատասխանում կոմմունայի ընդհանուր ձգտման: Բորբոքվեց շահերի խաղը, և կոմմունան սկսեց տատանվել նավի պես, դեռ անսկատելի կերպով. ընդհանուր նեղությունը միքիչ թեթևացնում եր այդ տատանումը: Բայց յերբ ամենաեյական պահանջներին բավարություն տրվեց, այն ժամանակ շահերի զանազանակերպությունը հետզհետե խորացավ, և թեթև տատանումը դարձավ ահագին ալեկոծություն ու կոփի: Անցավ առաջին ձմեռը. որերը տաքացան, և զետինը ծածկվեց կանաչով, վոչխարը շարժվեց դեպի սարերը, և արտն ովկիանոսի նման ալեկոծվեց Շիրաքում: Դժժալով մտավ առաջին տրակտորը կոմմունայի բակը:

— Բաց թողինք եղ մեր սոցիալիստին գեպի դաշտերը. խըռխըռաց, փնչաց և յերկու որում շուռ տվեց մեր բոլոր հողերը. սահմանին հասավ և կանգ առավ. տրակտորն ու սահմանը. կրակն ու ջուրն ավելի շուտ կհաշտվեն. նա ագահ ե, անկուշտ, մեծ դաշտեր ե պահանջում:

Ահա այսպես եր պատմում կոմմունարը «սոցիալիստի» գլխով անցածի մասին: (Կոմմունարներն առաջին տրակտորին սոցիալիստ են կանչում):

Տրակտորը դադարեց բանելուց: Կոմմունարներն սկսեցին մտածել և ըմբռնել, վոր այն, ինչ վոր իննը զույգ յեղան ու գոմեշի համար շատ դժվար ե, տրակտորին բավական չե նույնիսկ «վորպես նախաճաշ»: Ուղղակի հանցանք ե քիչ հողը տրակտորով վարելը, հանցանք ե թե տրակտորի և թե պետության համար: Տրակտորն այն ժամանակ կդառնա գյուղական տնտեսության սոցիալիստ, յերբ կունենա թե «ճաշի», թե «ընթրիքի» հողեր և թե այլ մեքենաներ՝ յետեից կապելու համար: Կոմմունարները համոզվեցին, վոր կոմմունայի զարգացումը կախված ե տրակտորի ուժի ամբողջական ոգտագործումից: Բացի դաշտային աշխատանքներից, տրակտորն ամենալավ միջոցն ե տրանսպորտի համար: Տրակտորով կարելի յե բանեցնել փոքր գործարան. տրակտորն ամեն ինչ ե, յերբ նա գործում ե խոշոր տնտեսության մեջ. կոմմունարներն այս բանում համոզվեցին և մեծ յեռանդով սկսեցին սահմանների ընդարձակումը:

ԿԱԼՍԵԼՈՒ ՏԵՂՈՒՄ

Չորս հարյուր փութ ցորեն բարձած վագոնը տրակտորը գոռգոռոցով ներս բերեց բակը:

— Շաքրո, — կանչեց տոպրակների վրա նստած յերիտասարդը. — Վերտեղ դատարկենք:

Շաքրոն՝ կոմմունայի հախագահը, վոր միջին տարիքի գյուղացի յեր, մի փոքր մտածեց ու դիտեց բակը. ապա հուսահատված գլուխը կախեց և ժպտալով դիմեց ինձ.

— Հացն ու յերեխաները մեզ բնակարաններից դուրս քշեցին. գիշերը խոտի մեջ ու տանիքների վրա յենք բնում. առանց դրան ել նեղվածք եր. մանկական մսուր բացինք. մի շենք նրանց հատկացրինք. ինչ վոր մնաց, են ել հացը խլեց մեզանից. գալիս ե ու գալիս. չգիտենք՝ վո՞րտեղ տեղավորենք: Այս տարի մեր հաշվով յերեսուն հազար փութ պետք ե ստացվի. դեռ կեսն ել չենք ներս բերել իսկ սենյակներն ու ներքնատներն արդեն լցվել են:

Այս տարի հացն ու յերեխաները շատ են կոմմունայում. բայց առաջինն ամեն սպասելիքից գերազանցեց: Այնպիսի հատիկներ են, վոր նայելով ել կկշտանաս:

Անագին վագոնը ուժեղ յերիտասարդները ձեռաց դատարկեցին. վեց փթանոց տոպլրակները բարձի թեթևությամբ զցում ենին ուսերն ու ամեն անգամ ժպտալով նայում եյին ինձ, կարծես թե ծաղրում եյին ինձ կամ խղճում, մինչև վոր միքանի տոպլրակ նրանցից վոչ պակաս արագությամբ ներս տարա սենյակ. ճիշտն ասած, յերրորդ տոպլրակը միքիչ ցնցեց ինձ, բայց յետ չմնացի և քաղաքացիներին «ամոթով չթողի»: Վագոնը յետ դարձավ գեպի կալսելու տեղը, մենք ել հետեւցինք նրան:

— Արխ վոր լինի անցկացրած, Շիրաքը կգժվի. ինչ ասել ե հարյուր վաթուն փութ մի հեկտարից, ավելի կստացվի.—ասում ե սրտապակաս Շաքրոն: Զուրը պակասում ե հողին ել, հողագործին ել. հնդամյա պլանի մեջ մտցրած ե ջրմուղ անցկացնել. ջրմուղը Շիրաքում... սրանից մեծ ցնողք դեռ չի ունեցել շիրաքեցի դեղնուկը:

Միքանի վերստից հետո դաշտում յերեաց փոշի. մոտենում ենք կալսելու տեղին:

Դղրգում ե կալսիչ մեքենան. փոշու հաստ շերտի մեջ աղոտ կերպով յերեսում ե նրա առաջի մասը, վորտեղից թափվում ե կալսած խուրձը. աղջկերքը, յերեսները փաթաթած, բանում են փոշու մեջ. հարդը հավաքում են ու ձիաներով դուրս տանում դաշտ, կիտում միքանի տեղ:

— Խոտ ել շատ ունենք.—ասում են նրանք:

Միքանի սայլ կարգով խուրձեր են կրում մեքենայի մոտ, ապա յեղաններով բարձրացնում-տալիս են մեքենայի վրա կանգնած կանանց. սրանք ել, խուրձերը քանդելով, զցում են մեքենայի բերանը: Մեքենան սարսափելի արագությամբ հափշտակում

ե հասկերը. հասկերը կալսվում են, հատիկները հենց մեքենայում տեսակների յեն բաժանվում և խրխրալով թափվում մեքենայից կախված տոպլրակների մեջ: Շնորհիվ աշխատանքային յերկար ժամերի, վոր ընդունված ե Զեմոքեղի կոմմունայում, մի մեքենան ուրական կալսում ե հազար-հազար յերկու հարյուր փութ ցորեն:

Հազիվ թե գտնվի մի գյուղացի, վոր դաշտում աշխատելու ժամանակ չանիծի իր ծնված որը: Վորքան ել սաստիկ սիրելիս լինես գործը, վերջիկերջո պիտի ատես, յեթե նրա պայմանները կոպիտ են ու ծանր:

Յեռանդով ու անձնվիրությամբ են բանում կոմմունարները:

— Գյուղը դեռ հունձը չի վերջացրել, իսկ մենք վաղը մյուս որ կալսելը կպրձնենք և վարելու կգնանք:

Մի ամիս ե արդեն, ինչ վոր դաշտ դուրս յեկավ կոմմունայի կեսը. մարդիկ, յերեխանեռ, աղջկերք, իրենց անկողիններով ու մթերք-ներով մի ամիս ե բանում են ու դեռ վոչ մեկը յետ չի դարձել հանգըտանալու. մեքենան հեշտացնում ե աշխատանքի պլոցեսսները: Մեքենան չգիտե բարդ և պարզ, ծանր ու թեթև գործ. այ, որինակ, կալսիչը. հարկավոր ե միայն ձեռքերի մի փոքր վարժություն, վոր ամենքը՝ կինն ու մարդը, ծերն ու յերիտասարդը կարողանան նրա վրա ամեն տեսակ գործ կատարել:

Դժժում ե մեքենան, և ամբողջ կալսելու տեղն աշխատում ե կարգով, անարգել, անընդհատ; ինչպես կենդանի կոնվեյերը:

Աշխարհս փոխվեց. Արիխիլոյի կոմմունայի բակում, մաքուր և գեղեցիկ հանրակացարանի առաջ, կնկատեք կիսով չափ գետնի մեջ թաղված մութ ու խոնավ խրճիթը: Կոմմունայի ընդհանուր ֆոնի վրա այս խրճիթը թվում ե մի նույնքան ավելորդ և վհչ ցանկալի բան, վորքան վոր անցանկալի յետ ցեխի կույտը հրաշալի և փայլուն գույներով նկարած պատերի վրա:

— Բոլոր խրճիթները քանդեցինք, իսկ այս մինը դիտմամբ թողինք... Թող այս խրճիթը դրսից յեկողին ցույց տա և ներսից պատահողին ամեն ըովե հիշեցնի, թե վորտեղ եյինք ապրում, ու վորտեղից գուրս բերեց մեզ հեղափոխությունը...

Այսպես ասաց կոմմունարը, ցույց տալով գետնափոր խրճիթը:

— Ի՞նչպես կազմակերպվեց այստեղ նկարագրված կոմմունան:

— Ովքե՞ր եյին կազմակերպողները:

— Անհրաժե՞շտ եր արդյոք անցյալի հետ «կամուրջները բանդել»:

— Ի՞նչ դեր ե կատարում տրակտորը կոմմունայում:

- Կարելի՞ յէ արդյոք այս հատվածը համարել «պատմվածք»:
- Կա՞ն արդյոք այս հատվածում կենդանի տիպեր, բնավորություններ և այլն,
- Ի՞նչպես կարելի յէ անվանել նման գրվածքները:

- Համեմատեցեք այս հատվածը Ակսել Բակունցի պատմվածքի հետ:
- Ի՞նչ նմանություններ ու տարբերություններ կան ըստ՝ ձեզ և ըստ բովանդակության:

ՅԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑՄԵՐ ԱՇԽԱՐՀԸ ՍԱՎԵՏԱԿԱՆ

(Հատված ելեգիայից)

Յես պատմում եյի նրան, թէ մեր
յերկիրը ի՞նչ ե հիմա դառնում,
և ինչ ուժեր են հիմա հառնում
իր յերազած այն աշխարհի դեմ:

 Յես պատմում ելի աչզը մեր մեծ
և առավոտը մեր իրական
և այն, վոր սիրոս թինդով յերգեց,
և այն, վոր նոր և ու պիտի դա:

 Յես ասում եյի.—յերկրում հեռու,
ուր մեր աշխարհն ե սալետական,
հիմա յելնում ե ուրիշ մի կյանք,
և այլ պայքար ե հիմա յեռում:

 Վոր այն, ինչ մութ եր, հնին անտես,
վոր խորշերում եր, ներսում, միգում—
հիմա դառել ե հրե մի գունդ
և բորբոքում ե կյանքը այնտեղ:

 Վոր վոնց գարնանը հեղեղը գա
և կապանքները ձմռան քանդե—
աչդպես մրրիկը այն հեռակա
խուլ աշխարհում մեր արձագանգեց:

 Ինչպես հանքում հին, յերբ վերեկի
շերտերը ծուխ են արդեն դառնում—
ուրիշ ուժեր են վարից հառնում
ու բարձրանում են վեր—արեին,
այդպես մրրիկը այն կարմրակեզ,
վոր Հոկտեմբեր ե հիմա կոչվում—
բերեց յերկրին մեր նոր աճում
և աշխարհներ նոր հանեց հանդես:

 Յեկ այդ աշխարհը, ուժը այդ մեր—
ո, այլ ե, այլ ե, չեղած յերբեք.
վորպեսզի գար նա, կյանքում հորդեր—
դեռ հարկավոր եր հինը սրբել

Այդ ուժը նոր ե, ձերին ոտար,
ձերին ներհակ միշտ ու հակադիր,
ինչպես վայտի դեմ—հալած մետաղ,
ինչպես ջրի դեմ—հրի հատիկ:

Դա մեր բանակն ե, յելած վարից,
խուլ խավարից ձեր աշխարհի այն,
վոր մեր քրտինքը փոխում քարի՝
և մեզ թողնում եր արյուն միայն:

Մեր կյանքը մութ եր ձեր աշխարհում,
անգուս նկուղ եր, անանց ձմեռ.
յեկավ պայքարը, ցուրտը ցրեց—
և ձմեռի տեղ—տեսանք գարուն:

Մենք մեր որերը, այգը դարու.
Հոկտեմբերից ենք հիմա հաշվում
և անաջող մի, հիմար սիրուց
գեպի լեռները մենք չենք քաշվում:

Յեվ սրտերում մեր—տրտունջ չկա.
մենք հավատում ենք հիմա կյանքին.
մեզ հմայում են գործ ու պայքար
և հոգնությունը աշխատանքի:

Քո ճանապարհը աշխարհում այն
գու գնացել ես մեն ու մինակ—
իսկ մենք անթիվ, անհուն բանակ
և կառուցում ենք հիմա անա
մեր նոր աշխարհը՝ պայծառ ու լայն:

Յեվ մենք ասում ենք.—մենք ենք հիմքը
ամբողջ կյանքի ու մարդկության.
ամբողջ աշխարհը հայրենիք ե,
և աշխատանքը ու քրտինքը,
ո, նոր աշխարհ մի պիտի տան—
նրանց, ում կյանքը անիծել ե,
ով ճորտ ե, մերկ ե ու անտուն,
բայց պայքարում են հիմա անգուլ
և աշխատում են ստեղծել
նոր մարդկություն մի՝ անցավ, անցեց...

Մեր յերգը—սա լե, Յեվ մենք հիմա
խուլ աշխարհում մեր նայիրական
բերել ենք ուժ նոր, ու թափ, ու կյանք,
վորպեսզի կյանքը աշխարհի այն,
վոր գուք քանդել եք ու կործանել—
վերաշինենք ու վերածնենք:—

Յեվ մենք անթիվ ենք ու անհաշիվ,
մենք մեր յերկրում ենք և ամենուր—
և անհաջող մի, հիմար սիրուց
գեպի լեռները մենք չենք քաշվի:—

Հիմա յելնում ենք մենք մեր կաշվից,
հիմա հոգնում ենք, ոքնում անքուն,
վոր մեր Զանգուն այն, հիմար Զանգուն
կիլովատտներ ու վոլտեր հաշվի:

Ուր անապատ եր, դաշտ եր ամա,
ուր լոկ յերաշտ եր ու մահ բոցի—
մենք ջրանցքներ ենք շինել հիմա
և մեր դաշտերը վոսկեղոծել:

Այնտեղ, ուր հովի եր քո կարկաչում,
ու կուզելիր վոր Զարոդ ապրի—
հիմա զրել ենք յերկաթ ֆարբիկ,
և մեքենան ե այնտեղ շաշում:

Յեվ կիլովատտը յուրաքանչյուր,
ամեն մի վոլտը այնտեղ հաշված—
ո, այլ վոլտեր ե կյանքի կանչում
և կիլովատտներ հանում աշխարհ:

Ո՛, դաշտերում այն մեր անջրդի,
ուր կառքը փառք եր, յեթե գնար—
մեր նոր բանակն ե յելնում բանտից,
այնտեղ զնգում ե յերբ մեքենան:

Յերբ ծինելուցին ե ծխում այնտեղ
և հիդրոշենը փռում կածեր,
դա թաթն ե, թաթն ե մեր յերկաթե
քանդում աշխարհը հնամլա ձեր...

Այնտեղ մեր շուրջը ծխում ե դեռ
ճղճիմ ճահիճը ձեր ծանրանիստ,
և տարիներ գեռ քանի, քանի
պիտի նա թափը մեր կաշկանդի:

Կարծում են՝ հինը չկա այնտեղ,
քո յերազածը՝ հուշով նաշխած:
Ո, վոչ. կանգնած են դեռ գեմտողեմ
յերկրում մեր յեվս—յերկու աշխարհ:

Ո, ձեր աշխարհը գեռ կա, գեռ կա,
նա զեռ նստած ե, հաստանստուկ,
և քո յերգերը յերեկ յերգած
գեռ շատերին են այնտեղ ազդում:

Բայց դա աշխարհն ե մահապարտված,
կյանքի մամուռը, տիղմը անհուն,
վոր բռստանին քո, առվին կառչած՝
և համառում ե, և հեռանում:

Յեվ խուզերի յերբ անդուլ մթում
վառվում ե լամպը ելեկտրական,
դա մեր պայքարն ե ընդդեմ անդուռ
խուլ աշխարհի ձեր նայիրական:

Յեվ մեր քլունդը՝ լեռը քանդող՝
յերբ տոննելներ ե ձգում յերկար,
դա վոչ թե լեռն ե քանդում անդուլ,
այլ ձեր աշխարհը սարսափահար:

Քանդում, քանդում ե նա անհանգիստ,
քարե բերդերը շալրտում դեն
և նոր շերտեր ե կանչում կյանքի
և բանակներ նոր հանում հանդես:

Յելնում, յելնում են նրանք արդեն,
ստվարանում են որը որին,
ինչպես մետաղը յերկրի խորից,
ինչպես գարնանը հեղեղ հորդե:

— Դա հորձանուտն ե բանվորական,
հորդել գալիս ե ահազնորեն,
վոր ծանրությունը պայքարի այս
լայն ուսերով իր եզրուց կրե:

Քալիս, գալիս են ահա,
լցնում յերկիրը շառաչով զիւ,
և մեր յերդերը ել ավելի
հնչում են բարձր ու խանդավառ:

Դողում ե հողը այդ ընթացքից
և յեռանդից այդ, խանդից անծալը
և մեր գալիքը՝ այնքան պայծառ
ահա բացվում ե իմ հայացքին...

— Բնորոշեցեք յերկու բանաստեղծների աշխարհայացքը:
— Ինչո՞վ են պայմանավորված այդ աշխարհայացքները:
— Ի՞նչն ե դրդում հեղինակին այդքան լավատես լինելու դեպի Խոր-
հըրդային Հայաստանի ապագան:

ԲԱԼԼԱՐ ՔՍԱՆԸՎԵՑԻ ՄԱՍԻՆ

1.

Ամեն առավոտ ծեզին,
յերբ քնից զարթնում ե Բագուն,
յերբ յելած գիշերվա մեզից
արթնանում ե կյանքը քաղաքում,—
յերբ ձայնով աշխուժ ու հնչուն
քաղաքի բոլոր մասերից
շշակները գործի յեն կանչում
պլողետարներին,—
քաղաքի ծայրերից բոլոր
ձգվելով յերբ շարան-շարան
բանվորները հոծ խմբերով
շտապում են դեպի գործարան,—
ամեն առավոտ ծեզին,
այդ ժամին գորշ, մխերանգ—
ձուլվելով յերթին ամենքի—
քաղաքից անցնում են և նրանք:

2.

Քսանըվեց հոգի յեն նրանք—
և խոճուն, մտապբաղ են բոլորը—
Առջեկց գնում ե նա—
Յերկաթյա կարմիր կոմանդորը:
յերկաթե քայլերով համաշափ
հետեւում են նրան ընկերները,
ընթանում են քայլերով շտապ,
շտապում են դեպի վիշկաները:
Աննկատ ձուլված ամենքին,
քայլում են նրանք դեպի ծովը.
վողջունում են ջրերը դեմից,
համբուրում ե հովը:
Համբուրում ե դիմքերը քամին,
շշնջում ե խոսքեր հյուսիսի:—
Յերկաթե շքախումք ե դա մի—
գնում ե զորահանդեսի:

3.

Յերկաթե քայլերով համաշափ
ընթանում են նրանք խմբովին.
անցնում են բուլվարի միջով,
մոտենում են ծովին:
Խփում ե ծովը ափերին,
յերկինքը գորշ ե, կապար.
ճոճվում են նավերը սևերիզ՝

շղթայով ափին կապած:
իսկ հեռում —ուրիշ նավեր,
կողերով ծանր նստած՝
սահելով գնում են վեր—
դեպի Պարսկաստան...
Գնում են գեղի Ենգելի,
գնում են դեպի իրան—
տանում են յերկրից Լենինի
մի հեղուկ ալ-հուրհուրան:
Նայում են նրանք նավերին
և իրենց շրթերով անբառ,
անսահման խինդը դեմքերին
ՀՀում են — բարի ճամպա...

4.

Տեսնում են ապա հեռում
և ուրիշ նավեր նրանք.
մշուշում նրանց յերկում,
արեում են ափեր հուրհուրան:
Տեսնում են նավեր ծանրակող,
վոր ջրերը խորունկ արխած՝
գնում են դեպի Կրասնովդուկ,
գնում են դեպի Հաշտարխան...
Նայում են կարոտով անդուլ
այդ հեռու ափերին նրանք.
մի յերգ և այնտեղից հոնդում,
ինդալով վողջունում նրանց:
Դաշտերում անբեր ու ամա
տեսնում են հազար նվաճում.
յերկաթե անտառի նման
սերունդներն են յելնում ու աճում՝
Հասնում են նրանց ականջին
վիթխարի մուրճերի ձայներ.
ՀՀակներ են թնդալով կանչում,
աշխատանքն ե հնչում այնտեղ:
Լսում են նրանք այնտեղից
բյուրափոր վոտքերի դոփիուն.
քրտինք և բարձրանում հանդերից,
մի կուրծք և անդուլ մրոփում:
Նայում են հրճվանքով անհուն—
ու անդուլ յեռանդով ջամբած՝
կոմանդորը ձեռքով և անում—
ու թեքում են նրանք ճամպան...

5.

Ու, կրկին հեռուն նայելով,
յերկաթե քայլերով համաշափ—

անցնում են նրանք Բայիլով,
մտնում են յերկիրը նվաճած...
Տարիներ են անցել կորովի,
սուրացել գնացել անդարձ—
ու յելել և նահանջող ծովից
մի ամբողջ նոր նավթանտառ:
Ուր ծովն եր առաջ շառաչում,||
յեփիլով զուր յեռանդից—
վիշկաներ են հիմա աճում,
վիշկաներ անծալը, անթիվ:
Թնդում ե յերկիրը նվաճած,
շնչում ե յեռանդ ու կրակ.
անցնում են քայլերով համաշափ,
յերկաթե քայլերով նրանք:
Դեմքերով՝ վառված արեից,
մազութով, մրով ծեփած—
վիշկաները կեցած բարեի
ասում են — բարե՛, Ստեփան...
Աշխատում, յեռում են բոլորը—
մրոտած դեմքեր ու ձեռներ:—
Հիացած՝ Կարմիր կոմանդորը
ՀՀնջում ե — բարե՛, ընկերներ,
Ու ստնում են նրանք վիշկաները,
յերկաթե քայլերով շրջում—
դառնում են փոկերն, անիվները,
յեռանդի ձայնով ՀՀնջում:
Շնջում ե Կարմիր կոմանդորը
փոկերի ազմուկի միջից —
և լսում են, լսում են բոլորը
նրա ձայնը ջինջ ու վճիտ:

6.

Յեկ ասում ե նա — Կոմանդորը.—
«Տոկացեք, ընկերներ անդին.
Ճեր ամեն մի փորած նավթահորը
մի քայլ և ցանկալի կյանքին:||
Բացիկ ե հորիզոնը լուսե,
պայքարով ակոսել մի կյանք.
Ճեզ համար գիշերով մի սկ
ավագե դաշտերում մենք ընկանք:||
Քսանըլեց ելինք մենք, քսանըլեց,
բայց անթիվ, անթիվ ե մեր անունը.
վոչ գնդակը մեզ սպանեց,
և վոչ ել կապանի հոգնությունը:||
Քանի կաք, ընկերներ, քանի կաք,
քանի կա աշխատանքը անդուլ—

մեր յերթին – վախճան չկա,
մեր պայծառ գործին – պարտություն։
Տոկացէք, ընկերներ, մենք ձեզ հետ
հնք,
տոկացէք, ընկերներ անդին,
վոր անցնենք այս նեղ արահետը
ու հասնենք ցանկալի կյանքին...»։

7.

Շշնջում ե կարմիր կոմանդորը
փոկերի աղմուկի միջից,
ու լսում են, լսում են բոլորը
նրա ձայնը ջինջ ու վճիռ։
Ու անտես ամենքին, ինչպես ոիթմը,
այնտեղից յելնում են նրանք,
թողնելով սրտերում հուր շոփնդ մի,
վառելով անդուլ մի յեռանդ։
Ու վերջին հրճվանքով անհուն,
գլուխը բարձր ու ուղիղ՝
կոմանդորը ձեռքով ե անում —
ու փոխում են նրանք ուղին։
Հոնդում ե դեմից քամին,
բայց անդուլ բայլերով նրանք
անցնում են Բալախանի,
մտնում են գործարան ու հանք։
Շրջում են ալդպես ամենուր,
մտնում են գործարան, դավող,
գեմքերին իջնում ե մուր,
շորերին նստում նավթի հոտ։

8.

Յեվ մինչև բարձրանում ե որը,
դառնում ե թնդացող ցերեկ —
շրջում ե կարմիր կոմանդորը,
լինում ե ամենուրեք։
Չուլվելով դարձող փոկերին,
աղմկող ոիթմերի միջից —
խոսում ե ընկերներին
իր ձայնով հաստատ ու վճիռ։
Ու ոիթմի նման անտես,
ձուլվելով սրտերին նրանց —
շնջում ե, շնչում ե անվերջ,
անդադար ավտուն ու յեռանդ։
Յեվ ապա յերբ դառնում ե որը
շառաչուն, թնդացող ցերեկ —
իրարից բաժանավում են բոլորը,

յրվում են ամենուրեք։
Մտաղբաղ, գլուխը թեքած,
քայլերի համաչափ զարկով —
Ստեփանը գնում ե Ցեկա,
Զափարիձեն — դեպի Սովորկոմ։
Գնում են և մյուս ընկերները,
ամենքին անտես քայլերով
անցնում են բոլոր փողոցները,
մտնում են հիմնարկները բոլոր։
Մրտերում անբոց մի կրակ՝
յերկաթե անդուլ խոսքերով
ամենուր շնչում են նրանք
անսպառ յեռանդ ու կորով։
Աշխատանքը անտակ ե, մեծ ե,
թշնամին անտես ու դժնի, —
և շրջում են ալդպես Քսանըվեցը,
մինչև իրիկունը իջնի։
Շրջում են անվերջ, շնջում են,
առորյա աշխատանքը հսկում,
մինչև իրիկունը իջնում ե
ու վառում կրակներ վոսկուն։
Յեվ ըջնում ե յերբ իրիկունը,
վոր հոգնած սրտերին նստի —
Քսանըվեցը անտես հեռանում են,
գնում են հանգստի։

9.

Յեվ ամեն առավոտ, յերբ որը
բարձրանում ե՝ հոգսը թեին —
շրջում ե կարմիր կոմանդորը,
Քսանըհինգ ընկերներ յետերի։
Շրջում են բոլոր վեշկաները,
մտնում են գործարան ու հանք —
Քսանըվեց կարմիր ընկերներ են,
Քսանըվեց մարտիկներ նրանք։
Չուլվելով դարձող փոկերին,
աղմկող ոիթմերի միջից
խոսում են ընկերներին
ձայներով հաստատ ու վճիռ։
Ասում են նրանք. — Տոկացէք,
տոկացէք, ընկերներ անդին,
բացվել ե հորիզոնը բոցե,
առավոտը ցանկալի կյանքի։
Քանի կաք, ընկերներ, քանի կաք,
քանի կա աշխատանքը անդուլ —
մեր յերկրին վախճան չկա,
մեր պայծառ գործին — պարտություն...»

ԱԶԱՏ ՎՃՏՈՒՆԻ

ՁԱՆ, ՍԱՎԵՏԻ ՅԵՐԿԻՐ

Գարունն եկավ, Մարտ ջան,
արեն ելավ վառուն,
կչկչում են, յարո ջան,
սառն աղբյուրներն, առուն:
Մեր սրաերն ել, Մարտ ջան,
վոնց վոր ծագիած գարուն, —
ես ի՞նչ անուշ ու վառ ես,
ջան, սավետի յերկիր:
Արեն ելավ, Մարտ ջան,
պաշեց դոշը սարի,
տրակտորը, յարո ջան,
քշիր, դեսը արի.
թերդ քշտիր, Մարտ ջան,
մեր սրտերը վարի, —
ես ի՞նչ անուշ ու վառ ես,
ջան, սավետի յերկիր:
Գարունն եկավ, Մարտ ջան,
ձները վողջ հալվան,
մեր դաշտերը, յարո ջան,
ծաղկունքներով ալվան,
տրակտորները, Մարտ ջան,
կապած շարքով քարվան, —
ես ի՞նչ անուշ ու վառ ես
ջան, սավետի յերկիր...

Գ. ԱԲՈՎ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՅԵՐԿԻՐ

Անծալրածիր յերկիր,
անծալրածիր յերկիր,
յերկիր բուժվող վերքի —
քո զորացող սրտում
դեռ ինչքան շատ վերքեր,
խորհրդալին յերկիր...

Հուղվել ե սիրտը մտու,
և իմ գրչով արկար
փորձել եմ հուզերը տալ —

Ճկտել եմ քեզ յերգել
և քո հուզերն անմար,
անծալրածիր յերկիր...
* * *
Տափաստաններդ արձակ
արտերի ծով դարձան —
սով ու սարսափն անցած...
բազմություններ բերկրի
բերքովդ լիացան,
անծալրածիր յերկիր ...

Դործարաններդ հին
ժանգակալած ու ծույլ,
վոր դըղիրդնվ յելան —
հիմա հնչում են զիլ՝
քո բերկրանքով բերքի,
անծալրածիր յերկիր...

Յեվ իմ սըրտում զըվարթ՝
ամեն որ նոր նվագ —
բացվում և նոր զըվագ —
մի հիացում ներքին —
նվաճումներդ են շատ,
խորհրդային յերկիր...

* *

Քո զարթոնքի ժամին,
քո պայքարում կարմիր
վիճակվել եր և ինձ
նըլվաստ ուժերը իմ
ի սպաս դնել կամքիդ.
իմ հայրենի յերկիր...

Յես հարազատ վորդիդ —
քո տիրությամբ համակ,
քո ցնծությամբ լիցուն —
յես մի համեստ ուազմիկ,
յես հըպատակ կամքիդ,
խորհրդային յերկիր...
Յեվ մըղկըտում եմ յես
ցավով մի սրտակեզ —
յերը վոր՝ աղե՛տ վորպես —
տառապանքներըդ հին
գալիս են զեռ հանդես —
իմ հայրենի՛ յերկիր...

Թաղե՛ր ու դեռ մրուր —
գյուղեր՝ վորպես խլուրդ —
կըրլա մի գետնահուզ,
վորպես քեզ խոչընդուռ,

վորպես խճիճ խրթին —
կըծկել ենք քո գոգում,
իմ հայրենի՛ յերկիր...

* *

Բայց քո սըտում զըվարթ՝
ամեն որ նոր նվագ,
բացվում և նոր զըրվագ...
խորհրդալին յերկիր —
յերկաթահինչ յերգիդ
ձայնանիշին վստահ:

Ո՛, ինդուստրիկ վաղվա
մեր առորյա հույզում —
ո՛, ինդուստրիկ վաղվան՝
մեր յեռանդը բազում —
մեր ինդուստրիկ վաղվա
բարձրաբարբառ լեղուն...

Ժպտում և վաղը վառ
և հյուղերում մթար
և թաղերում տկար —
ամեն հնչյուն ու տառ
փոխվում ե վառ յերգի —
փալլատակիր զվարթ,
իմ հարենի՛ յերկիր...

Աշխատանքով տոկուն
վառվում ե մեր հոգին —
և չնչին գործն անգամ
իր ելությամբ ներքին
դառնում ե մեծ մի քար
խորհրդալին շենքի...

* *

Անծալրածիր յերկիր,
բանվորության յերկիր,
յերկիր բուժվող վերքե —
առողջացող վերքեդ
կըլինենք մենք սպեղանի,
մեր հարազատ յերկիր...

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ**ԱՍԴԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ**

(Դյուցազներգություն)

ԳԻՄՈՒՄ ՄՈՒՍԱՅԻՆ

Ով դու մասսա հաղար գլխանի,
հազարաչք դու և հազարասիրտ,
դու, վոր անգամներ քանի ու քանի
ներշնչում տվիր գրչին իմ բիրտ:

Ով դու աստղակիր և անթագակիր
արքա տարերքի և պատմության,
վոր գուրս հս յելել բռնության տակից
և հասել այս վեհ ազատության:

Հույս տուր իմ մտքիս, ներշնչում գրչիս,
և տուր խոսքերիս պայծառություն,
վոր իմ այս յեղուկ և անփորձ գրչից
կենդանանաս և յերեաս դու...

ԹՈՐԳՈՄԸ ՀԱՎԱՔՈՒՄ Ե ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

Յեկ մարդ հավաքեց բանվոր Թորգոմը,
խորհրդի նստեց նրանց հետ միասին.
նրանց գործարանը քաղաքի խորքումն եր,
բայց նրանք, բոլորը նախկին գյուղացիք,
բացի այդ Թորգոմից...

Բանվոր Թորգոմը.

Բանվոր եր յեղել իր ծնված որից,
և այն մեծ մուրճը, վոր իր ձեռքումն եր,
ժառանգել եր մի որ իր մեռնող հորից:

Բանվոր Թորգոմը հաստափոր մարդ եր,
ուներ սե բեղեր, մի-մի հատ կեռ թուր,
կարծեք թե այդ կեռ թբերից մի հատն եր,
վոր այն կոփառին ուներ իր ձեռում:

Հոնքեր ուներ նա, յերկու կամուրջներ,
վորոնցից մեկը գնդակով կիսած՝
կարծեք այն կովում պայթած կամուրջն եր,
վորով անցնում եր նա հրացանն ուսած:

Ու նրա ձայնը կարծեք գալիս եր
գործարանի հնոցի միջից,
ու բոցի նման պիտի նա լիզեր
բոլոր խոհերը սրտերի միջի...

Յեկ հենց այդ ձայնով ել նա խոսեց այսպես,
ուղղելով իր խոսքը բոլոր լողներին.
— Հեռավոր տեղում մի գյուղ զիտեմ յս,
աչքաթող արված կարծեք թե լինի...

— Այստեղ մարդիկ են ապրում մեղ նման,—
խոսեց Թորգոմը նորից ու նորից,—
և յես ասում եմ, վեր կենանք գնանք,
իմանանք նրանց վիճակից, որից:

Ունինք այդ գյուղին ամենայն ինչով,
ինչպես կարող ենք և ինչպես գիտենք...
Ո՞վ և համաձայն...—ու մարդկանց միջով
շուկ տարածվեց ու մեն մի բառ. — մենք...

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԳՆՈՒՄ ԵՆ ԳՅՈՒՂ

Յեկ յելան նրանք ու գյուղ գնացին.
ու տեսան մարդկանց տանջանքը բազում,
և թե ինչպես և դատում գյուղացին,
և թե ինչեր և արդեն յերազում:

Տեսան գրոշը մուրճ ու մանգաղով,
բայց այդ գրոշի տակ հին արոր տեսան,
տեսան գերանդի՝ արտերը քաղող
և վաղուց մաշված քարե մի հեսան:

Տեսան շատ գեմքեր ու նրանց վրա
և խինդ և տանջանք մեկտեղ կարդացին,
իխնդը՝ նոր կյանքի և ազատության,
տանջանքը՝ ջանքի, մի կտոր հացի:

Տեսան այն հուլար, վորով զորացած
գյուղացին իրա նոր կյանքն եր կոռւմ,
թեև յերկաթի փոխարեն թրած
փայտե արորն եր բռնել իր ձեռում:

Ու տեսան նրանք, ինչպես ամեն մարդ
իր փոքրիկ հողն եր հերկում, մշակում,
և հին յեզները քշելով հանդարտ,
հին հոռովելի բառերն եր յերգում:

Յեկ տեսան, ինչպես նախկին հարուստներ
զրկված հողերից, լքված բոլորից,

գաղանի նման սրած ատամներ՝
կուզեյին կաչքի տիրանալ նորից:

Յեվ ինչպես նրանց ատամն եր ջարդում
յերկրի որենքը, դեկը իմաստուն,
սակայն հարուստը այդ մենամարտում
գարձյալ աճում եր և հարստանում:

Ու նա մի քար եր իր կողքին աճող
չքավոր ուժի տնտեսության դեմ. .
գիտեր թորգոմը այն միջոցն հաջող,
վորով կարող եր հարստին սանձել...

Դիտեր, վոր արդեն հազար-հազար տեղ
գործադրում են միջոցն այդ հասու,
և այդ միջոցը մի զենք եր ահեղ,
վորով հարստի որն եր ընդհատվում:

Յեվ նա այդ զենքն եր իրա հետ բերել՝
չքավոր մարդկանց հանձնելու համար,
վոր այդ նոր զենքով նոր կյանքը կոհն
ավելի արագ, հաջող և հարմար:

Դրա համար ել բանվոր թորգոմը
վող գյուղն շտապով հավաքել տվեց,
և հաղթ ժպիտը սրտի խորքում իր՝
գյուղի համայնքի ժողովն սկսեց:—

ԾԵՐՈՒՆԻ ԽՈՍՔԸ

Խոսք ասավ, խոսեց բանվոր Ծերունը
և ասեց. — Հսեք, գեղջուկ ընկերներ,
ահա յերկիրը մեր պիրկ ձեռումն է,
մենք՝ աշխատանքի յերկու յեղալըներ:

— Ահա, որինակ, մոտիկ քաղաքում
մենք աշխատում ենք գործարանի մեջ,
այստեղ փոկերն են միալար յերգում,
և ձայնակցում ե հնոցը անշեջ:

— Դուք ել այստեղ եք աշխատում հարկավ,
ունեք դուք յեռանդ, ունեք ցանկություն.
Ճեր աշխատանքին բյուր-հազար հարգանք
և ճեր յեռանդից շնորհակալություն:

— Բայց ի՞նչ ունեք դուք. — Փայտե արորներ,
մի-մի թիզ հողեր, բաղեր խունացած,
նախահայրերի թողած իրճիթներ,
անպետք գործիքներ՝ հնուց մնացած:

— Թեև անցել ե յերկար ժամանակ
յերկիրն առնելու այն պայծառ որից,
բայց դուք տարերքին դարձյալ հպատակ,
դժվար եք կովում նրա դեմ նորից:

— Դժվար եք կովում այն հարուստի դեմ,
վոր մութ անկյունից իր դավա և լարում,
վոր պատսպարված այստեղ ու այնտեղ՝
ուզում ե ծծել սնունդ և արյուն:

— Յեվ գիտե՞ք ով ե աստեղ մեղավոր,—
խոսեց Ծերունը նորից ու նորից,—
մենք, վոր չենք բռնում ուղին լուսավոր
ու չենք աղատվում չութից, արորից:

— Մենք, վոր կպել ենք մեր մի բուռ հողին
և անթիվ հողեր չենք միացընում,
մենք, վոր ընկել ենք մեր համառ կողին,
մեկտեղ չենք դատում, մեկտեղ չենք ցանում:

— Մենք, վոր ձեռք ձեռքի չենք տալիս ահա,
մեր ուսեցվածքը չենք միացընում,
մեր մեջ թագնված ուժ կա աժդահա,
բայց մեր տրակտոր նույնիսկ չենք գնում...

— Ու մեր յեռանդը կորչում ե անհետ
կեղտոտ գոմերում, պապակ դաշտերում,
փտած խոտի տակ, հին արորի հետ,
մեր բաժան-բաժան յեղած արտերում...

— Յեվ այն հարուստը, վոր իրոք չնչին,
բայց ուժեղ ե մեր անմիության դեմ,
ուզում ե նստել ամենքիս շնչին
և շինվող կյանքը վերստին քանդել...

— Ոգուտ ե քաղում մեր մեղմությունից,
վոսկի յեղիզում, գնում անասուն...
Դուրս գանք հնամյա այս դրությունից,
չքավոր գեղջուկ, յես քեզ եմ ասում:

— Փոխենք, ասում հմ, որինքները հին,
մեկտեղ աշխատենք համայն ջանքերով
քշենք այս գյուղից ստոր հարուստին,
դիմենք սոցիալիզմ պակաս լուսերով...

— Զեզ հետ ե խոսում բանվորը այն հին,
վոր մարտնչում եր բարրիկադներում,
վոր մահ եր բերում խավար աշխարհին
և չունեռին նոր կլանք եր բերում...

— Նա, վոր հող տվեց գյուղացիության,
նրա շահերը համառ պաշտպանեց,
այդ նա յի խոսում, լսեցեք նրան
և ձեր վճռական խոսքը ասացեք...

ՍԻՄՈՆԸ ԲԱՏՐԱԿ

Տեղից վեր կացավ Սիմոնը բատրակ.
Քսան տարեկան մի ջահել եր նա.
միայն յերկու ձեռ ուներ նա գատարէ
և անթիվ կոշտեր ձեռների վրա:

Թող չմոռանա բանաստեղծն ասել,
վոր մի ճիպոտ ել ուներ նա ձեռում,
այդ ճիպոտի ծալըն այնքան եր մաշվելո
վոր բռան միջից հաղիվ եր յերեռում:

Հարուստների մոտ հոտաղ եր յեղել,
որն ի բուն դատել, մնացել դատարի...
Հազաց, կմկմաց, պոկեց մի յեղեգ,
և ալսպես խոսից Սիմոնը բատրակ.

— Յես համաձայն եմ, թող այդպես լինի-
հերիք հարուստի դռանը դատեմ.
կոմսոմոլի մեջ սովորած հիմի
կուզեմ բոլորիս համար աշխատել:

— Յեկեք միանանք ու մեջտեղ դնենք
վորն իր յեղները, վորն իր թերը,
յեկեք մի համայն կոլեկտիվ հիմնենք,
սովորենք կյանքի հաջող ձեռը...

Քիթը վեր քաշեց Սիմոնը բատրակ,
նայեց հավաքված բատրակ տղերանց.
նրանց աչքերից ցայտում եր կրակ,
և գովում ելին Սիմոնին նրանք:

ՀԱԿՈՆ ԳՅՈՒՂԱՑԻ ՅԵՎ. ՄԻԿԻՉԸ

Ու ճռչալով վորպես յեղասայլ,
տեղից վեր կացավ գյուղացի Հակոն.
— Սիմոնը խոսեց. յես ի՞նչ ասեմ այլ...
ու ծուռը նայեց հոնքերի տակով:

— Հա, ասում եմ, վոր դժվար ե միքիչ,
լավ բան դուրս կգա, դե ի՞նչ զիտենաս...
Հը, ի՞նչ ես ասում, դրացի Միկիչ,
ասում եմ՝ տչքով դեռ պիտի տենաս...

Ասում եմ՝ կազմեք, թե բան դուրս եկավ՝
են ե՛ յես, Հակոն, դե զիտեք հո, կամ,
բայց յեթե գործից մի բան դուրս չեկավ՝
դուք ինձ չխառնեք, այ խալիս, բարեկամ...

— Հը, ի՞նչ ես ասում, դրացի Միկիչ,—
ասաց ու նստեց գյուղացի Հակոն...
Միկիչը, սակայն, կոմկուս եր միքիչ,
իր ասածի պես՝ անդամ-թեկնածու:

Գիտեր աշխարհի խերից ու շառից,
գրքեր եր կարդում, թերթեր զանազան,
վերացավ կանգնեց, պատրաստվեց ճառի,
խորիմաստ նայեց, խորապես հազաց...

Խորամանկ լոեց, խորը մտածեց,
հիշեց իր պարտքը՝ անդամ-թեկնածու,
ապա այն հայտնի խոսքերը հիշեց.
— Յեղիր ջահի պես առաջ գնացող...

Թող քո յետերից ընթանան անթիվ
աշխատող մարդիկ, բանվոր, գյուղացի,
գործարաններից, գյուղերից, հանդից,
յերկրի ծալըրերից մեծ ու լայնածիր...

Հիշեց իր պարտքը և ել չիմացավ,
ճառելու միտքը վոնց հանկարծ թողեց,
հավաքվածներին դիմեց բարձրածայն
և հասկանալի բառերով ասեց.

— Այ մարդիկ, յեթե այդպես վախենանք,
ձեռներս ծալենք, սպասենք հիմի,
ով պիտի տանի համառ աշխատանք
և կոլեկտիվը ով պիտի հիմնի:

— Հակոն ասում ե՝ սպասենք հալա,
բան դուրս գա յեթե, նոր կմիանանք,
ասել ե՝ խալիսը թող յեփի փլավ,
մենք գդալն առնենք ու լավ կշանանք...

— Հակառակ եմ յես նրա ասածին.
ի՞նչ լինելու յե, թող լինի դե, հա,
յեմ յերկու յեղը, կովս ու քոսոտ ձին,
մեկ ել յես՝ ձերն ենք, ընդունեք ահա:

Ու ծափ տվեցին թորգոմ ու Ծերուն,
և ուրախացավ Սիմոնը բատրակ,
ամաչեց Հակոն, բոլորից թագուն
աչքերը ծածկեց իր մոթալի տակ...

ՎԱՐԴՈԶԱՐԸ ԿՈՒԾԿ

Ու մըթմըթալով, խոսելով կամաց,
տեղից վեր կացավ կուլակն ամպամած.
խորը տնքոցով նա կանգնեց վոտի.
քարացել եր նա իր լսած բոթից:

Գեղեցիկ մարդ եր—անմորուք, անբեղ,
պարթև հասակով, աշխուժ, անհամրեր,
վոչ մի թերություն յերեսի վրա,—
կարծեք պոյետն եր ստեղծել նրան:

Ու խոսեց ահա դանդաղ ու ամուր,
ու կարծեք ինքը իրեն եր դիմում.
— Ո խեղճ Վարդաղար, տանջվիր ու տոկա,
վոր ունեցածդ գրավեն դոքա...

— Սրանք ունեն փոկ, գյուղխորհուրդ, սոցապ,
ասացեք ախըր, ի՞նչ ե պետք սոցա.
ել ի՞նչ են ուզում ամբոխից նոքա,
ի՞նչ, վատ են ապրում գյուղերում սոքա:
— Ցես ունեմ յեզներ, գութան և մանգմղ.—
ամեն ինչ լինի թող սրանց մատաղ.
չնչին վճարով վարձեք ու տարեք,
բայց իրավունքս մի՛ բռնարարէք:

Խ Ո Ւ Կ Ը

Տեղից վեր կացան թորդոմ ու Ծերուն,
Միկիչ ու Հա՛ռ, Սիմոնը բատրակ,
հաստատ մի վճիռ պողպատիա ձեռում,
կուլակի ձախնը կտրեցին նրանք:

— Մենք առանց քեզ ել կգնանք յոլա,
դու փասափուսդ հավաքիր հալա...
ու ձեռքից խլած յեզներ ու տավար,
տունը քարաշեն, արտերը նրա:

Մի նոր ու լավ կտանք հիմնելու համար
գյուղի սահմանից քշեցին նրան:
— Մենք առանց քեզ ել կգնանք յոլա,
դու փասափուսդ հավաքիր հալա...

Նրա յետեից, ձախով հեզնալի,
հրաժեշտ ասեց Սիմոնը բատրակ.
— Ցես մեռնի սոված ու կապրես ելի,
բայց մի գործ կանես, կանես աշխատանք...

— Մենք առանց քեզ ել կգնանք յոլա,
դու փասափուսդ հավաքիր հալա...
— Ու կդիտենաս, թե ինչ ասել ե
քրաինքի գնով իր հացը ճարել.

Բլուրի կողքով հեռացավ սելը,
նրա ճոխնչը ճամպեքում մարեց...
— Մենք առանց քեզ ել կգնանք յոլա,
դու փասափուսդ հավաքիր հալա...

ՎԱՆՈՆ ԿՈՄՅԵՐԻՑ

Յեվ հանկարծակի, նույն ճանապարհով,
վորպես բորբոքուն կրակի կտոր,
ուրախ ժպիտով և հաղար բարով
այդ գյուղը մտավ մի մեծ արակտոր:

Քշում եր նրան վանոն կոմյերիտ,
վորի բերանը կաթնահամ եր դեռ,
նրա քթի տակ, վերեկի շուրթին
բուսել եր նեղլիկ շիկահեր մի բեղ:

Հենց քթատակին... կարծեք զորացած
իրա ստվերից, խոնավությունից,
մամուսի նման բուսել եր հանկարծ,
վորով հողարտ եր վանոն կոմյերիտ...

Քշեց մեքենան, մեկին բարենց,
մեկին հայհուց անգուշ կանգնած,
մի խումբ աղջկերանց նա աչքով արեց,
նայեց թորդոմին, բարենց, ժպտաց:

Գյուղի կենտրոնում կանգնեց մեքենան,
վանոն վար իջավ, փոշին թափ տվեց,
թորդոմն հաղթորեն նրա մոտ դնաց
և բարձր ձախով խոսել սկսեց:

ՆՐԱՆՑ ՆՎԵՐԸ

— Սա մեր նվերն ե, ընդունեք ահա,
նոր կազմակերպված ձեր կոլեկտիվին,
թող իր յեռանգով յերկաթն աժդահա
յեռանդ տա ամուր ձեր մտքին, թեին:

— Աշխատանք արեք դուք այս յերկաթով
նրա վոտքի տակ արորը ջարդեք,
և չժուլացող ձեր հաստատ կամքով
փոքրիկ արտերի ափերը քանդեք...

— Քանդենք հին կյանքը, վորի մեջ այնքան
մենք տառապել ենք գյուղում, քաղաքում:
Քանդենք խութերը մեր ճամպին ընկած,
ընկած նոր կյանքի և մեր արանքում:

— Զեր զանգվածներից կաթիւ առ կաթիւ
այն հսկա ուժը թողեք սիանա,
վորը տեր դարձած հղոր յերկաթին՝
դեպի նոր մի կյանք պիտի ընթանա...

— Թող գյուղի ճամպով, հեռու քաղաքից,
դեպի ձեզ հորդեն նոր մեքենաներ
և անիվերով իրենց ահազին՝
հին գյուղը հիմքից քարուքանդ տնեն...

— Թող գյուղի ճամպով, քաղաքից հեռու
մեքենաների բանակը հորդի...
Վողջուն նորաբաց մեր յերկրին յեռուն,
և սավետական անժանդ յերկաթին...

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Զ

Նորից ցերեկ եր. արևի կովը
իր լույսն եր հորդում, վոր հրե կաթ եր,
և ճանապարհով, ուրախ յերգով իր՝
վերադառնում եր նրանց բրիգադը...

—

— Մանրամասն վերլուծեցեք այս պոեմը թե ըստ բովանդակության
յեվ թե ըստ ծեվի:

— Բովանդակության վերլուծության համար գրեցեք ծեր խոսքերով
պոեմի սյուժեն:

— Ձեվի վերլուծության համար զեկավարվեցեք հետեւյալ կե-
տերով.

ա. Պոեմի ընդհանուր կառուցվածքը.

բ. Լեզուն.

գ. Պատկերները.

— Կա՞ արդյոք, ընդհանուր առումով, բովանդակություն յեվ թե
ներդաշնակություն:

—————

Վ. ՆՈՐԵՆՑ

ՅԵՐԳ ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

Իմ հողի համար ինչ առավոտ ե,
և յերգիս համար ինչ որ լուսացավ...
բայց քեզ հիշում եմ, դեռ ինչքան մոտ եմ,
իմ սկ մանկություն, հողի վեշտ ու ցավ...

Հուլիսն եր իջել մեր գյուղի վրա,
շեկ ասեղներով արեն եր կիզում.
հեռում ելին թուլ ծառերը լուսած,
տերեները կախ, վրապես շան լեզու:

Երտերում սուգ եր: Սըգվոր կույսերի
վարսերի նման, թերեր թափած՝
յերազում ելին հասկերը թերի
ջրերի սերը, համբուլները թաց:
Զըտուքի որը տոնական որ եր,
յերբ, — ինչպես շվին իմ, — վտիտ առուն
ջրերի յերգով պիտի որորեր
հասկերի սերն ու ուռմացումն առուց:

Բայց այն առավոտն, յերը մեր արտնիվար
իջավ յեղբայրս ջրդունը ուսին,
սգի իրիկուն դարձավ մեզ համար,
արեք դարձավ մի սառած լուսին...

Այս, ինչու այդ որ ջուրն այնպես քիչ եր...
հենց արտի կողքին, այդ ջրի վեճով՝
ուրիշի բահը թրի պես իջեվ
ձեղքել եր յեղբորս ճակատն անզիջող...

Անհագ մեր արտը ծծում եր, քամում
նրա արյունը և կյանքը նվազ...
Հարեւան արտում ջրտուք եր անում
մարդասպան մարդը՝ լուր ու գլխակախ...

Անիծում եմ քեզ (ինչ ոգուտ սգալ),
իմ սկ մանկություն... աճած և հասուն.

ինչպես իմ յերկրի այսորը զգաստ,
յս հիմա ուրիշ կյանք եմ յերազում:

Յեվ ինչ յերազել... փլվում են հիմա
և սահմանի քար, և վտիտ առուն,
ու մեր արնահագ արտերի վրա
բացվում ե կանաչ, համասփյուռ գարուն...

ՍԱՆԴՐՈ ԵՐԻՒՆ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ

(Թարգմ. Վրացերենից)

Ինձ այցելեց հայրս յերիկ—
վաթսունամյա մի ծերունի,
վոր տքնել ե գիշեր-ցերեկ,
խմել կյանքի դառն թույնից,

Նա հյուր յեկավ անակնկալ
և գրկաբաց ընդունեցի.
ասի.—Տունդ ե կըակ ընկած.
թե բռնվել ես ծանը վեճի—

Գրկեց, ասաց նա ժպտալով.
— Յես հպարտ եմ պոհտ վորդով.
բայց փոխանակ տալու յերկեր,
լավ ե դաշտում հողը հերկել—

Յեվ նա հանեց իր գրպանից
մի ձերմակ թուղթ, չորս ծալավոր.

— Սա մանդատ ե գյուղից, վորդիս,
ինձ ընտրել են պատգամավոր:

Կարծում եիր հյուր եմ յեկեւ
կամ բերել եմ լուր աղետի:
Վոչ, ինձ իմ գյուղն ե ուղարկեւ
վոր իր ձայնը տամ սավետին:

Յես գրկեցի հորս ծերուկ
պինդ սեղմեցի ձեռքերը կոշտ.
ու նա պատմեց, թե գյուղերում
ինչն ե պակաս, ինչից են դոհ:

Այսոր կերթա համագումար
և վողջունի խոսքեր կասի
մեր նորաստեղծ կյանքի համար,
հանուն կարմիր մեր դրոշի:

ԿԱԼԵ ԲՈԲՈԽԵԶԵ

ՎՈՂՋՈՒՅՆ ԾՈՎԱՓԻՆ

(Թարգմ. Վրացերենից)

Վողջունում եմ քեզ, ծովափնյա յերկիր,
և ձեզ, Սև ծովի փրփրած ալիքներ,
տենչում եցի ձեզ ցանկությամբ մեկին,
և ահա սիրտս ձեղանով լիքն ե:

Հագուստս մըստ, գեմքս մըագույն,
վերև յերկինքն եր մըով սեանում...

Այստեղ կանաչ ե. յերկինքը կապույտ,
ու կապույտ ծովն ե ավը լվանում:

Բմպում եմ կարծես, ձեր խելադայից*)
լեռների շունչը դուրեկան, առույգ,
և ինչպես յերեկ ծովն եր փրփրալից,
այսոր ել այդպես իմ սիրտն ե յեռում:

Այստեղ ծովափին զգում եմ խորին
պայծառ ու խաղաղ մի նոր խնդություն.
թող հենց իմ ձեռքը աչքերս փորի,
թե վշտի նշույլ մնաց իմ սրտում:—

Ննջում են այստեղ յերազ ու ցնորք,
և թամբաքոն**) և թեկերփի ոել,
յեռում ե այստեղ աշխատանք մի նոր
և կապտության մեջ ձանձրութն ե կորել:

Այստեղ քրտինքը իզուր չի անցնի՝
արգասաբեր և հողը ծովամերձ,
մոլորփածը թող իրեն հարցնի՝
ինչու յի կորել անտառների մեջ:

...Ավազակը, վոր յերբեմն ահարկու
ձանձրապահներին ոռութեր եր նետում,
այսոր գըգվում ե տունկերը այզու.
իսկ հնից միայն հուշեր կան սրտում...

Յերբ «իլիչ» նավը ինձ տանի ափից,
այդ աշխատանքի հուշը դուրեկան
և այս բնության թովչանքը անրիծ
սրտիս մեջ յերկար կըմնան, յերկար...

Կոմէրիտական պայծառ իմ մըտքում
քաղցր հուշերով կմնան անանց
տքնող գյուղացին, բանվորը տոկուն.
կյանքն ու հաղթանակ կմաղթեմ նբանց:

Չեմ մոռանա յես Սուխում, նոր Աֆոն,
վոր թեկ հսկա ու յերկաթեղեն
քաղաքի տեսքը չունեն ահավոր,
սակայն բնությամբ չընաղագեղ են:

Վողջունում եմ յես նրանց, վոր այսոր
սահմանն են հսկում հենց այս ծովափում,

*) Խելադա—գինու փարչ:

**) Թամբաքո.—ծխախոա:

ու վաղը նրանց կամքն հզորագոր
չի ճանաշելու վոչ սահման, վոչ թումբ:

Յեվ աղջիկներին այս պարզ, թիւաթով,
վոր ժպտում են ինձ ծովի խորությամբ,
վորոնք մեղ հետ են ամբողջ ճակատով,
վողջունում եմ յիս հրճվանքով անամպ:

Վողջունում եմ քեզ, ծովափնյա յերկեր,
և ձեզ կը եմ երներ, և ձեզ, ալիքներ,
տենչում ելի ձեզ ցանկությամբ մեկին,
և սիրտս ահա ձեզանով լիքն եւ:

Ա. ՌՈՒՍԱՄ-ԶԱՐԵ

ԲԱԳՈՒ

(Թուրբերենից)

Կասպիական ջրերով ահա լոզում են նավեր,
իսկ ծովափին շրջում են ջլաբաղուկ բանվորներ,
ու մարդարիտ և սփոռում լուսինը լույծ ջրերին...

Վորքան նորութ քո ծոցում, ո, կարմրավառ իմ Բագու.
լույսով պատիր ամեն կողմ, ո, խանդավառ իմ Բագու...

Շուրջու բացվում են արդեն խինդու հաճույք անհատնում
չի հանդպնի վոչ մի ձեռք պրոլետարին քո տանջել.
ինչքան ուրախ ե, տես, նա, — քրտնաճակատ ու ջանել...

Միշտ զարդարվիր մեծ գործով ու վաստակով, իմ Բագու...

Վիշկաները քո ծոցում շատրվաններ են խփում,
չորս ծայրերին աշխարհի՝ լուսե նավթը քո տանում.
ցրվում ե մութը դաժան, յերբ ժպտում ես լուսեղեն:

Առանց դադար ու հանգիստ՝ ոջախներդ վառիր զու,
և մթությունը ցրիր, ո, կարմրավառ իմ Բագու...

Գիշերով քեզ ժպտում են արծաթ լուսինն ու աստղեր,
շրջում զվարթ քո գրկում աշխուժ կին ու աղջիկներ:

Յերբ խնդուն ես զու հրով, սիրտն ես խոցում վոստիր.
քեզ գգվում են հովերը, — քո վարսերը հրատու,
քեզնից լույս են սպասում ժողովուրդները, Բագու...

Հինգ թեանի աստղ ունես դրոշակիդ ծփանուտ,
կասպից ծովի նման վես և ալեկոծ ծով կապուտ:

Ունես հետքեր դու անջինջ պատ նության մեջ մերորդա,
յեղեր շողուն, լուսաշող, ուրախացիր ու ինդա:
Վորքան պայքար քո խորքում, կարմիր քաղաք իմ Բագու,
աիրահարն եմ յես միշտ քո, ո, կարմրավառ իմ Բագու...
Թարգմ. Ֆաֆիր

Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

(Հատված)

Մտել եմ ահա մի նորեկ աշխարհ —
մտել մի սքանչ հեքիաթի դռնով.
այստեղ ամեն ինչ նոր և ինձ համար —
նոր ու կատարյալ իր վեհությունով.
արել այստեղ փայլում և թեթև
առաջվան շուքով,
աստղերը գոհար ժպտում, ծիծաղում
գեղ ու հմակքով.
մեր կովող գետերն փոթորկող, ահեղ,
մեր անտառները թափավարս, շքեղ,
թեկ խոսում են առաջվան հանգով,
բայց կյանքն և ուրիշ, մարդիկը մի այլ
ու ել վաղեմի չեն նման իրար:
Մի հեքիաթ և ալս, տեսիլ աննման,
ուր հաղար-հազար
տասնյակ հարկանի տներ ու շենքեր
նայում են իրար տիտանի նման.
այստեղ ամեն տուն և ամեն մի շենք
մի-մի քաղաք և մեծ ու փառաշեն,
ամեն մի փողոց՝ ծով համատարած,
ամեն տանիքի արել բազմած...
Հրեն քաղաքի հեռածայրերում
շարեցար՝ հպարտ, գեղեցիկ, սիրուն,
գործարաններն են վեհապանն իշխում,
վերամբարձ զլխով աշտարակներից
լույսեր են բաշխում,
հրեն մաքրաջինջ ջրերի հույզեր,
կանաչ պուրակներ և ծաղկանոցներ,
ամեն մի շենքի և գործարանի
փարթամքն են կազմում,
և մարդիկ այստեղ ամենքն են բանվոր
և աշխատավոր,

ուր չկան ալես վոչ միլիոնավոր
և վոչ չքավոր,
այստեղ ամենքն են ընկեր—բախտավոր
իրար հալասար
և մեկը հազար:
**
Յեվ յես հեքիաթի շեմքին խոնարհած՝
հիանում եմ լոկ այս նոր աշխարհով.
մի աշխարհ չքնաղ, վոր ալիք առած՝
ծփում ե, շարժվում, վորպես յեռուն ծով:
— Ե՞ր, հազար-հազար ավտոմորիլներ,
վոր այդպես արագ թռչում եք, սլանում,
ում եք պատկանում:
— Հանրապետության...
— Ե՞ր, հազար-հազար լույսեր ելեկտրոյան,
վոր գիշերները արև եք վառում,
ում եք պատկանում:
— Հավասարության...
— Յեվ դուք, աշխարհի զեղեցկուհիներ —
հաղթ մեքենաներ և գործարաններ, —
վոր քար ու հողից բարիք եք ծնում, —
ում եք պատկանում:
— Բանվոր մարդկության...
— Դուք, նավեր, ջրեր, յերկաթուղիներ,
հանքեր ու ցանքեր ազատ աշխարհում,
ում եք պատկանում:
— Հանուր մարդկության...
— Համալսարաններ, աստղեկայտներ,
չքնաղ թատրոններ, հանձարի տներ,
վոր այս հեքիաթի պարծանքն եք կազմում,
ում եք պատկանում:
— Մեկին, ամենքին—իրար—հավասար —
ուր հազարն ե մեկ և մեկը՝ հազար...
**
Տեսել եք արդյոք վաղ արշալուսին
նորածին կանաչ—ցողը լիրեսին.
կամ ծով-լեթերում լուսաշող ամպեր
անրիծ, անարատ, ինչպես կարապներ,
կանաչների մեջ և վարդերի մեջ
յես տեսա այստեղ մի ավան սիրուն,
քաղացից հեռու շարվեշար անվերջ
միահարկ տներ—շուրջը վողջ գարուն:
Տները այստեղ բլուրեղից ե վողջ,
յույլերի հեղեղ, արևն ընտանի.
այստեղ ծլում ե մի սերունդ առողջ
գեղ մանուկների.

ինչպես միաձև ու պարզ են հազնված
այս զավակները նորեկ Աշխարհի,
և ինչպես սիրով և ինչպես ազատ,
աղջիկ ու տղա իրար հարազատ,
կարծես ամենքը մի մորից ծնված,
մի որ միծացած ու մի տեղ սնված,
խաղում են կայտառ, ծլվում սրտանց,
նախանձ, չարություն ոտար ե նրանց.
չերգում են վորպես գարնան թուչուններ,
վոչվոք նրանցից հոգս ու ցալ չունե...
**
Ահա և նրանք՝ գործարանները
նոր սերունդների.
ահա և նրանք՝ ստեղծողները
այս նոր Աշխարհի.
հոյակապ, սիրուն, վողջը ապակյա —
լույսերի աղբյուր,
հատակը հղկուն, հարթ ձենապակյա —
ողը համասփյուռ.
մտել եմ նրա կամարե դոնով —
նման տաճարի,
այստեղ ե ծնվել, աքտեղ սավառնում
վոգին հանձարի...
Ահա և նրանք՝ ձախարակները
զուգահեռ շարքով,
վորպես տիտաններ՝ մարմար հիմքերին
բազմել են կարգով.
գործում են թափով, մրրկում արագ,
տհնդային հեքով,
և լսելիքով շոյում միտնվագ
հաղթական յերգով.
Այստեղ չի լսվում առաջվա նման
շոինդ ու շառաչ,
վողջը խոնարհել վողջը զսպիկ ե
հանձարի առաջ.
և մարդու համար մեքենան անսաս
մի զսպված զազան...
վոր ինչ ուղղություն և ինչ ընթացք տաս՝
կլսի անձայն:
**
Վողջույն ձեզ, վողջույն, նորեկ Աշխարհի
ազատ զավակներ,
վոր դարեր, դարեր ձեր մեծ հայրերի
հարատե ջանքեր
այսոր պատկվեց վսեմ գործերի
վեհ հաղթանակով.

և այժմ գիտեք անցրալը հիշել
անուշ պարծաճքով:
Վողջույն ձեզ, վողջույն, յերջանիկ դարի
անխոնջ զավակներ,
վոր հաղթ ու ու անդարձ այս մեծ որերի
տերերն եք դարձել:
Իմ վառ խոհերի մարմնացում տվող,
հերոսներ կարող,
ձեզ հազար վողջույն, վոր կյանքին մեր այս
շնչեցիք իմաստ,
և մարդն այսոր ազատ ու տիրող՝
չենախին զրաստ:
Ու ձեզ ել վողջույն, կարմիր որերի
հրդեհի կալծեր,
վոր ձեր մեծ ճամպի խոռթերը ալրած
և ընդմիշտ անդարձ
մի վեհ, փառավոր ուղի յեք անցել...

— Նկարագրեցեք ձեր խոսքերով, թե ի՞նչպես ե այս բանաստեղծության հեղինակը պատկերացնում ապագա կյանքը:
— Վո՞րն ե մարդկային հարաբերությունների հիմնական գիծն այդ կյանքում:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՈՐ ԿԵՆՅԱԴԸ ԺԱՄԱՆԱԿԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(Ցիկլային առաջարություններ)

— Այս բաժնի վո՞ր զրվածքներում ե նկարագրվում սոցիալիստական շինարարությունը բաղարում:
— Վո՞ր զրվածքներում ե նկարագրված գյուղի սոցիալիստական շինարարությունը:
— Վո՞ր զրվածքում ե ամենացայտուն կերպով նկարագրված նոր կենցաղը խորհրդային գործարանում:

— Համեմատեցեք Ալազանի «Առորյան թիթեղի թեվերի տակ» պատմվածքը Հ. Մելիքյանի «Հայր յեվ վորդի» պատմվածքի հետ. ի՞նչն ե ընդհանուր ըստ բովանդակության. ի՞նչն ե տարբեր.

— Համեմատեցեք նույնանույն Ակսել Բակունցի «Դյուղաշխատավորի տետրակից»-ը Ս. Զավշանիծելի «Առաջին տրակտորը» պատմվածքի հետ:

— Գրեցեք շարադրություն «Խորհրդային գործարանը Ալազանի յեվ Հով. Մելիքյանի պատմվածքներում»:

— Գրեցեք շարադրություն «Խորհրդային գյուղը Ակսել Բակունցի»,
Մ. Դարբինյանի յեվ Ս. Զավշանիծելի պատմվածքներում։
(Այս շարադրությունների համար կարելի յե ոգտագործել նայեվ վերոհիշյալ հեղինակների այն զրվածքները, վորոնք չեն մտնում սույն դասընթացի մեջ. ինկատի կարելի յե ունենալ ինչպես ալդ հեղինակների առանձին գրքով լուս տեսած գործերը, նույնպես յեվ 7-րդ տարվա դասընթացում զետեղված նյութերը։

— Այս բաժնում զետեղված նյութերից վո՞րը ամենից ամենից ավելի հավանեցիք ըստ ձեզի։

— Կա՞ն արդյոք այս բաժնում նյութեր, վորոնք զուտ նկարագրական բնույթ ունեն։ Վորո՞նք են դրանք։

— Ինչո՞վ ե տարբերվում պատմվածքը զուտ նկարագրական շարպրությունից։

— Ի՞նչ բան ե սյուժեն։

— Կա՞ն այս բաժնում զրվածքներ, վորոնց մեջ բացակայում ե սյուժեն։

— Ի՞նչն ե ընդհանուր այս բաժնում զետեղված հեղինակների գրպածքներաւմ ըստ ձեզի։

— Համեմատեցեք Ալազանի յեվ Հ. Մելիքյանի պատմվածքների լեզուն։ Վո՞րն ե ավելի պարզ. վո՞րն ե ավելի շատ գործածում ոտար բառեր կամ ժողովրդական դարձվածքներ. ի՞նչի՞ց ե դա բգխում։

— Տարբերվո՞ւմ ե արդյոք Մ. Դարբինյանի պատմելու յեղանակը Ակսել Բակունցի պատմելու յեղանակից. համեմատության համար վերցրեք Բակունցի «Արտելիան» յեվ Դարբինյանի «Անիծված հողը»։

— Կա՞ արդյոք վորեվե ընդհանուր բան այս բաժնում զետեղված հեղինակների մեջ, բացի նրանց պատմվածքներում նկարագրված ժամանակաշրջանից. ի՞նչն ե դա. ի՞նչն ե, վոր բոլորին ել դարձնում ե ժամանակակից խորհրդային գրողներ։

— Ի՞նչպես ե արտահայտվում զրվածքում հեղինակի վերաբերմունքը դեպի վերցրած նյութը. Բերեք որինակներ։

— Կարդացեք Ալազանի «Ճանապարհին» վեպը։

— Կարդացեք Հով. Մելիքյանի «Պատմվածքները»։

— Կարդացեք Ակսել Բակունցի յեվ Մ. Դարբինյանի գյուղական պատմվածքները։

2. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՅԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈ- ԽՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆՈՒ- ԹՅԱՆ ՄԵԶ

ԱՏ. ԶՈՐՅԱՆ

ՀԵՂԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀԸ

1

Ծանր, հանգիստ որեր եյին, ու քանի որեր՝ քամբիներ եյին փչում անընդհատ—դիշեր, ցերեկ, ու քամբիների հետ ինչ-վոր խուլ լուրեր եյին պատում փոքրիկ քաղաքում։ Անհանգիստ եյին քաղաքացիները, անհանգիստ եյին բայլշեիկները։ Բնչ և լինելու... Արգելվեց անցուդարձը յերեկոյան 8-ից հետո։ Դիշերները, քամբիների հետ, սրբնթաց ավտոմոբիլներ ելին անցնում փողոցներով—վը զզ...«Փախչնում են», ասում եյին քաղաքացիները աներում փակված ու չեյին համարձակվում փողոց նայել. դիշեր եր, մութ, յերկյուղալի.., կույսը բացվելուն պես, սակայն, վեր եյին թռչում անկողիններից ու դիշերային սպիտակեղենով վազում եյին դեպի լուսամուտները։ «Հետաքրքիր ե՝ գնացել են, թե չե»... Նայում եյին դադտուկ՝ աշքները ծերպ անում, և միշտ ել տեսնում եյին միենույնը—աստղանիշ սաղավարտով պահակ զինվորներ, վոր հոգնած, քնատ անցնում եյին փողոցով, կամ՝ կարմիր դրոշակներ հարեան տների ճակատին, վոր փողփողում, փոփոռմ եյին քամբիների առաջ։ ԶԵ, գեռ եստեղ են... Ու կամաց-կամաց, մեկը մյուսի յետեղ, փողոց եյին դուրս գալիս մանրավաճառները, ուսուցիչները, արհեստագործները՝ զգուշությամբ իրենց չորս կողմը նայելով, դեմքներին չեզոքության արտահայտություն տված՝ գնում եյին բազար նոր լուր, նոր խարաց իմանալու։ Հավաքվում եյին պատի լրագիրների, հայտերի, պլակատների առջև և յերկյուղով, սրտղողով, մըրբիկի մեջ ընկած ճամբորդների նման, զլուխներն ոճիքների մեջ խրած՝ լուռ կարգում եյին լրագիրները, հայտերը և լուռ հեռանում։

Այդ առավոտ եւ յերբ Ոսեփը՝ յերկարածիտ կոշիկներով, կեպին գլխին, ձեռները կաշվե բաճկոնի՝ կրծքագրպանները՝ դրած անցավ բազարով—պատի լրտգիրների առջև և փակ խանութների մոտ խմբված առևտրականները նրա մտահոգ դեմքին նայելով փրափրսացին։ «Բանները վատ ա երեսում—նոթերը կիտած ա...»։

Յեվ, իրոք, Ոսեփի դեմքը մոայլ եր սովորականից — հոնքերն աշվելի ելին իջել աչքերի վրա. Մտահոգ եր: Տնից դուրս գալով՝ փոխանակ հեղկոմ գնալու, նա քայլերն ուղղեց դեպի խճուղին, վոր գնում, ձգվում եր քաղաքից դուրս — հեռու, հեռու — դեպի զյուղերը, դեպի քաղաքները, դեպի Յերևան...Ծանոթները, մասսամբ անծանոթները, մոտից անցնելիս բարեւում ելին նրան — վոմանք հարգանքից, վոմանք նրա ուշադրությանը արժանանալու, բայց նա՝ Ոսեփը, վոչվոքի չեր պատասխանում, ավելի շուտ չեր նկատում. գնում եր ձեռները միշտ կաշվե բաճկոնի կրծքագրպաններում, մըտամիոփ ու կենարոնացած: Մտածում եր կնոջ հետ ունեցած խոսակցության վրա և այդ պատճառով հեղիոմ գնալուց առաջ, ուզեց «անցնել միքիչ»: Նա ամեն ինչ չասավ կնոջը և ասել չեր կարսղ. նախ՝ միանգամից հայտնել նրան յեղբայրների ձերբակալման խեկական պատճառը — անկարելի յեր. Վերդինը պիտի հուզվեր, անհանգստանար և յերկրորդ՝ կարիք չկար...Այդպես եր. Ոսեփն առհասարակ սովորություն չուներ ամեն բան, ամեն մի գաղտնիք հայտնել կնոջը վոչ թե նրա համար, վոր չեր հավատում. ընդհակառակը. նա Վերդինին հավատում եր անվերապահ, բայց միանգամից այդպես եր — սովորություն եւ...Քանի՞ քանի անգամ յեղել են վտանգավոր գեպքեր, ասենք, վերահաս կատաստրոֆներ, և գրանց մասին կնոջը չի ասել վոչինչ, վորովհետև գիտեր, մտածում եր, վոր Վերդինն իր պատճառով, իր անթիվ ձերբակալությունների որերին, շատ հուզումներ ե կրել, և այժմ ել ամեն մի չնչին դեպք հուզում ե նրան — թե արդյոք մի բան չպատահի իրեն՝ Ոսեփին: Բայց զում ե նրան — թե արդյոք մի բան չպատահի իրեն՝ Ոսեփին: Բայց այս անգամ ամեն իսչ կնոջը չասելու պատճառը այլ եր: Կատարայս ամեն իսչ կնոջը չասելու պատճառը այլ եր: Կատարայս վել եր մի բան, վոր հեղիոմի հինգ անգամից և մի անգամից և միշվել եր մի բան, վոր հեղիոմի հինգ անգամից և մի անգամից և միշվել եր մի բանից «պատասխանատու ընկերներից» բացի՝ վոչվոք չպիտի իմաքանի «պատասխանատու ընկերներից» բացի՝ վոր հիմա այլապէս հետևանքը վատ կլիներ: Անհրաժեշտ է ծայրահեղ նար, այլապէս հետևանքը վատ կլիներ:

գտել եյին մի նամակ՝ Վերդինի յեղբայրների անունով, թե «Յերեվանը մեր ձեռքին ե (գրում ելին ապստամբները), դուք ել վոտքի յելեք...» Ահա պատճառը Ասլանյան յեղբայրների ձերբակալության: Նամակը գրված եր այնպես, վոր յեթե մի յեղբոր ձեռը չհասնի, ընկնի գոնե մյուսի ձեռը. — Հիշված եր յերկուսի անունն ել. ակնարկներից յերկում եր, վոր մի ուրիշ նամակ ևս ստացած պիտի լինելին: Կապն ապստամբների հետ — պարզ եր: Հնարավոր եր այս բոլորը հայտնել Վերևանի անկման մասին Ոսեփը և ընկերները գիտելին մի շաբաթ առաջ, բայց չելին կարծում, նրանց մտքով անգամ չեր անցնում, թե ապստամբները կապ ունեն իրենց քաղաքի հետ: Այժմ՝ պարզ եր, վոր այդ կապը վաղուց յեղել ե, և հիմա գուցե ապստամբություն ե պատրաստվում քաղաքում: Այդ բանը նկատի ունենալով հեղիուսի անդամներից մեկը, սասափիկ գրգռված պահանջում եր «իսկույն և յեղբայրներին» Ասլանյան յեղբայրներին...Մի յերկուսը միայն խորհուրդ տվին՝ սպասել նոր լուրերի — Յերևանի մասին, գուցե ապստամբությունը ճսվել ե արգեն, այն ժամանակ կտեսնեն... Հիմա, յենթաղրենք, Յերևանը նույն դրության մեջ ե. ինչ պիտի անել, մտածում ե Ոսեփը ու գնում ե ձեռները կաշվե բաճկոնի կրծքագրպանները դրած. — յենթաղրենք գնդակահարեցինք, դրանից հետո ինչպես կվերաբերվի կինը իրեն. կարող ե ինքը առաջվա պես զնալ կնոջ մոտ և խոսել նրա հետ... Հնարավոր բան ե — սպանել մեկի յեղբայրներին և ապրել նրա հետ — նրատել միենույն սեղանի շուրջը, պառկել միենույն անկողնում... Սրիկաներ, դուք ինչո՞ւ նրա յեղբայրներն եք...»

Մտածում, խոսում ե մտքում Ոսեփը և ձեռները կաշվե բաճկահարեցինք, կրծքագրպանները դրած՝ գնում ե դեպի մեծ ճանապարհի ծառուղին: Գնում ե ու մտածում ելի, թե ինչու իր ժամանակին չընդունեց Յեկայի առաջարկը և չգնաց Եջմիածին. այնտեղ, համենայն դեպս, կնոջ բարեկամներ և, առհասարակ, բարեկամներ չկային: Իսկ հիմա — զե արի... Յեկ բանն այն ե, սրիկաները կը նոյն, յերեխաների տեր են: Դա գոնե չլիներ... Բայց Վերդինի համար յեղբայրները նշանակություն ունեն և վոչ թե նրանց յերեխաները կամ կանայք... Նամակը գոնե մեկի անունով լիներ. բայց նա ուղղված է յերկուսին ել և գրված է «ստացանք». Նշանակում ե՝ սրանք մի բան գրել են, նրանք ստացել են և պատասխանել:

— Հիմա արի և իմայիր դրանց, — ասում եր Ոսեփը մաքում և ինքն իրեն հարցնում, թե մի այդպիսի արարքի համար նրանք կը իմայիրին իրեն: Գտնում եր, վոր — վոչ: Ամենեւին: Այն որից, յերեկները յեկել ե այստեղ, նրանք չեն ել ուղում իրեն տեսնել և տեսնելիս խուսափում են միշտ, իսկ դեմ առ դեմ հանդիպելիս — ուղ-

զակի չեն բարեռում։ Այո, նրանք ատում են իրեն, ատում են իրենց հոգու ամբողջ ուժով, և յեթե մի բան, յենթազրենք, մի թեթև հեղաշրջում լինի—նրանք ամենից առաջ իր՝ Ռսեփի զլուխը կկարեն։ «Խոկապես կանեն», մտածեց նա.— Գուցե և վոչ. գուցե բան չանեն, ինայելով իրենց քրոջը, բայց վոչ իրեն—Ռսեփին։ Այժմ ինքն էր, յեթե նրանց մասին մտածում ե—դարձյալ նրանց քրոջ պատճառով և վոչ թե նրանց սիրուն։ Այդ, յեթե իր կողմից վորեն զիջում լինի—այդ զիջումը արվելու յե նրանց քրոջը։ Բայց կարելի յե արդյոք, կնոջ պատճառով զիջել բացարձակ ավաղակների (վոր ուղում են խորտակել հեղափոխության գործը), թեկուզ դրանք լինեն կնոջ յեղբայրներ։ Կարելի յե... Յեթե ընկերներից մեկը այնպիսի բան աներ—կնոջ հանցավոր յեղբայրներին փրկեր կամ նրանց հանցանքը (վորի վարձատրությունը սիրտի լիներ գնդակահարությունը) մեղմեր—ինքը և մյուս ընկերները ինչպես կվերաբերվելին։ Յերկու կարծիք լինել չի կարող—այդպիսի մեկը կարժանանար բոլոր ընկերների դատապարտության և գնդակահարության դուցե։

Բայց յեթե այդ ընկերը սիրում ե կնոջը և այդ բանը անում ե նրա սիրուն... Այդ մի կողմ. Կարելի յե արդյոք սիրած կնոջ յեղբայրներին սպանել և գնալ այդ կնոջ յերեսին նայել, ժպտավ։ Նրա հետ հացի նստել և, վերջապես, ապրել նրա հետ մի հարկի տակ։ Կարելի յե... Մի պատասխան կա—կարելի յե, յեթե վորոշել ես զրկել կնոջից։ Իսկ յեթե չես ուղում զրկել, յեթե սիրում ես...

Մտածում եր Ռսեփը և դնում ձեռները կաշվե բաճկոնի կրծքագրանները դրած։ Վերջին հարցի վրա նա ակամա կանգ առավ, ինչպես հանկարծ բացվող վիճի առաջ։ Կանգ առավ և շուրջը նայեց։ Ու այդ ժամանակ միայն նկատեց, վոր քաղաքից դուրս ե յեկել։ Անցել ե ուրեմն յերկու վերստ ճանապարհ։ Պետք ե յետ դաւնալ։

Յետ դարձավ նույն անշտապ քայլերով, դարձյալ մտածելով կնոջ և յերեխաների մասին և այն մասին, թե ինչպես ընկերները կատաղած են այդ յեղբայրների դեմ։ Սերգեյը հենց այդ գիշերը կամեցել ե խփել նրանց, Սաքոն թեև իր մոտ չի արտահայտվում, բայց սարսափելի գրգոված ե յերեռում։ Նա իր բարկությունը պարզ չի հայտնում իր մոտ, նկտաի ունենալով իր և նրանց բարեկամությունը, բայց նա, ասում են, ապտակել ե յերկուսին ել... «Սրիկաներ», ասում եր Ռսեփը մտքում աներոջ վորդիների հասցեյին—դուք ինչու նրա յեղբայրը յեղաք, լրբեր...»

Էավ, այդ բոլորը այդպես։ Տիմի ինչ կարելի յե անել։ Շատշատ ինքը, յեթե չի ուղում ձեռները թաթախել նրանց արյան մեջ,

ընկերներին կհայտնի, վոր, շատ հասկանալի պատճառներով, հրաժարվում ե Ասլանյան յեղբայրների դատավճիռը վորոշող նիստին մասնակցելուց։ Թող թեկուզ—գնդակահարեն... Բայց այդ բանը կը բավարարի Վերգինին։ Նա պիտի մեղադրի իրեն, թե ինչու իր աղդեցությունը գործ չի դնում կամ գործ չդրեց։ Իսկ իր ձայնը միշտ կլսեն—դուցե կարող ե փրկել իր ձեռնպահությունը, միևնույն ե, նրան չի համոզի. Վերգինը պիտի կրկնի, թե ինչու չարավ հնարավորը ե, ընդհակառակը, դիմամամբ ձեռնպահ մնալով, յեղբայրներին հանձնեց «անգութ» մարդկանց ձեռը... Իսկ յեթե իր աղդեցությունը գործ դնի, գուցե կարող ե մի բան անել... Վոչ, ավելի լավ ե ձեռնպահ։ մնալ... Բայց կարելի յե արդյոք ձեռնպահ մնալ... Դա հավասար չէ արդյոք դաշտանության... Այ, յեթե Վերգինն ինքը լիներ հեղափոխական—կհասկանար իմ դրությունը... Յեկ իսկապես—յեթե նա լիներ կուսակցական—միթե, վորպես քույր, այլ կերպ կմտածեր... Մտածում եր Ռսեփը. և ինչի մասին ել մտածում եր, մըտքերը դաւնում եյին կրկնի աներոջ աղաներին։ «Սրիկաներ, գոնե ձեր կանանց, յերեխաներին, մորը և քրոջը խնայեյիք...»։

Մտածելով, անշտապ վերադառնում եր Ռսեփը, հանկարծ հեղկոմի պահակ միլիցիոններից մեկը կանգնեց նրա առաջ։

— Հընգեր նախագայ...»

Ռսեփը նայեց նրան վոտից-գլուխ, ու նրան թվաց, վոր գա բուրը ժամանակ իր հետ ե յեղել։ Իսկ միլիցիոնները ձեռը տարավ գրլուխը, իբրև թե պատիվ տալու և, իբրև նախկին զինվոր, հին սովորության համաձայն, հաստ կոշիկներով վոտները խփեց իրար։

— Հընգեր նախագայ, յեղկոմումը քեզ սպասում են...»

Ասավ հեացող բամբ ձայնով և վոտներն ելի խփեց իրար։

— Հեռագիր ա յեկել. ասում են՝ վոազ ա... Գնացի տուն—տանը չեյիր...»

Ռսեփը նայեց ժամացույցին։ Ժամի 9-ն եր։ Յերկու ժամ և դուրս ե։ Մինչդեռ ընկերների հետ պայմանավորվել եյին 8-ին հավաքվել մի շարք շտապ գործեր քննելու, դրանց թվում և Ասլանյան յեղբայրների գործը։

— Հընգեր նախագայ, յես գնում եմ...»

— Գնա...»

Միլիցիոնները, հին սովորության համաձայն, վոտները նորից խփեց իրար, շուռ յեկավ և մեկեն տեղից պոկվեց ու վազեվազ առաջ անցավ, վոտներով փողոցի ձյունն ու ցեխը շաղ տալով, վորոնց կտորները թռչում եյին նրա գլխից բարձր և ընկնում թիկունքին, մեջքին ու գլխին։

Հեղկոմը գտնվում եր քաղաքի կենտրոնում, պլխավոր փողոցի վրա, վաճառական Աթայեի տանը, վոր գեղեցկությունից ավելի նըշաբնավոր եր իր անցյալով։ Այդտեղ իր ժամանակին, իրենց ճամպորդության միջոցին, իջևանել ելին շատ նշանավոր անձեր—միքանի նահանգապետ, գավառապետներ, թեմական առաջնորդներ և նույնիսկ ինքը կաթուղիկոսը՝ Խրիմյան Հայրիկը, յերբ Պետերբուրգ եր գնում։ Այն հանգամանքը, վոր այդտեղ իջևանել ելին «այդքան պատվարժան մարդիկ»՝ ինչպես տանտերն եր անվանում նրանց, դըրա համար քաղաքացիներն այդ տան մոտով անցնում ելին պատկառանքով ու խորին ակնածությամբ, ինչպես սպասավորը մեծավորի սենյակի առջեից, իսկ ինքը՝ վաճառական Աթայել ամեն տարի, գարունը բացվելուն պես, ճերմակցնում եր տան պատերը դըրսից և առիթը յեկած ժամանակ, յերբ, ասենք, դպրոցի կամ աղբյուրի համար փող ելին խնդրում նրանից, նա միշտ պատասխանում եր միենույնը. «Յես իմ տնով եմ ծառայում ազգին, ուրիշներն ել թող ծառայեն փողով»։ Յեզ նա այնքան մեծ համարում ուներ իր տան մասին, վոր յերբեք չեր կարող յերևակայել, թե այն մի որ կանցիլար կդառնա, ինչպես ինքն եր ասում խորին սրամտությամբ, և կաթողիկոսի, նահանգապետի և գավառապետների փոխարեն կիջևանեն ու կապրեն այնտեղ «ինչվոր լոթի-փոթի» տըղերք։ Առաջ, վոր այդ տանը՝ նրա սենյակներում ու միջանցքներում հանդիսավոր լսություն եր տիրում, վոր ճանձի բզզոցն անդամ լսելի յեր լինում, այժմ, սակայն, այնտեղ՝ առավոտից մինչև յերեկո, անընդհատ յել ու մուտ ելին անում ամեն կարգի մարդիկ։ Խմբվում ելին մուտքի դռանը, միջանցքներում, իսկ սենյակներում հօ՛ բազմաթիվ տղաներ ու աղջիկներ, գրասեղանների մոտ նատած գրում ելին, գրում, գրում... Գրում ելին հրամաններ, կարգադրություններ, ծանուցումներ, ու բոլոր սենյակներում ել՝ կարի լարված մեքենաների պես կամ ուղմաղաշտում գործող գնդացիրների նման՝ աշխատում ելին Ռեմինգտոններն ու Ռեմերվուդները— Զը՛կ, չը՛կ, չը՛կ... Տա-տա-տա... չիկ-տա-չիկ-տա-չիկ-տա... Աշխատում ելին անվերջ, անընդհատ, հետապառ։ Գրում ելին հրամաններ, կարգադրություններ, գաղտնի գրություններ... Առաջները Աթայեի տան ճակատին արտաքո կարգի տոն որերին եր միայն, վոր պարզվում եր յեռագույն դրոշը, այժմ յերբորդ ամիսն եր ահա, նրա տան գլխին, և վոչ թե ճակատին, անկել ելին հսկայական մի կարմիր դրոշ, իսկ գրան ճակատին արդեն, ամեն որ, մեկի տեղ, փողփում ելին յերկուսը։ Դրանից բացի տան պատերին, վոր այնպես

Հնամքով ձերմակացնել եր տալիս Աթայել ամեն գարնան, — փակցնում
Եյին որը մի կամ միքանի պլակատ. — Հաղթանզամ գյուղացին ցա-
խավելով քշում եր կալվածատերերին ու տերտերներին. — Մերկա-
բագուկ բանվորը մուրճով ջարդում եր յերկրագնդի յերկաթե կա-
պահքները. — բանվորը և գյուղացին մուրճով ու մանգաղով յեղայ-
րանում են: Այսպիսի պլակատներ կան և մյուս սենյակներում, ուր
Ռեմինսկաններն ու Ունդերվուդները գործում են գնդացիքների
նման:

Հեղկոմի նախագահի սենյակը պատառած է. պատերին Մալքս,
Ենգելս, Լենին, Տրոցկի և սաղավարտով կարմիր-բանակային, վոր
ավինը մեկնել է լեհ կալվածատերի կոճքին. Պատերին՝

Մահ բուրժուազիային».

կորչի՝ կապիտալիզմ»

«Կեզզե աշխատանիք»

Կազմակերպենք սպառոյակներ»:

Հետո նախադահի գլխավերեւ

«Կարև, զործով վերջացրիր, զիս...»

Այդ որը, յերբ Ոսեփը շրջում եր փողոցում, նրա յերեք ընկերը՝ Հեղկոմի յերեք անդամը նրա սենյակում սպասում են նրան։ Յերկուսը նստած են, մեկը յերթևեկում է նյարդային քայլերով։ Նստածները զինվորական շինելներով են, յերթևեկողը՝ կաշվե բաճկոնով և կաշվե զիմարկով։ Նման ե շոգեշարժի մեքենավարի։ Պնում ե գալիս և խոսում նյարդային, գրգռված շարժումներով, իսկ մյուսները՝ առաջներն ընկած նոր ստացված հեռագրին նայելով՝ լսում են նրան։

Դեստում յեկեք պահադա—խոսում ե
կաշվե բաձկոնավորը կարծես ինքն իր հետ, առանց վորեմ կողմ
նայելու, բայց բարձր, հուզված, յերբեմն մոնջունով, հաճախ ոռու-
սերեն խառնելով.—Վոչ, դրանց պետք ե թեզպահադն... Թույլու-
թյան ռեզուլտատը այ—դա յե... Յեթե Յերեանում թեզպահադնի
ըլեյին—ըստը եղ վազսանին չեր ըլի... Հասկանո՞ւմ եք. մենք շատ
ցերեմոնիայա ենք ըլում դրանց հետ... Հասկանո՞ւմ եք:

Եինելավորները լսում են նրանք և, հեռազբին սայտով ստա-
ծում, վոր Սերգեյը ճիշտ է ասում.—Թուլությունը, ինարկե, վասն-
գավոր և հեղափոխության ժամանակը Պետք է կտրուկ լիներ, ան-
խնա, մտածում են նրանք: Նրանք հավանում են Սերգեյին. նրա
թափը, հեղափոխական վճռականությունը և համարձակությունը
դուր են գալիս նրանց, միշտ հաճուքով են լսում նրա ոռւսերենա-
խառը, մասամբ բարբառով զբույցը, բայց... իրենք տեղացի թեն,

Նախկին զինվորներ, յեղել են շատ ֆռոնտներում—Պերեմիշլ, կարպատներ, երդում—Նահանջել են բանակի ճետ Սարիղամիշից, չեն յեղել, սակայն, հեղափոխության յեռուն շրջաններում, քաղաքացիական կոիմսերի մեջ, այդ պատճառով Սերգեյը, վոր մասնակցել է Թուսաստանի քաղաքացիական կոիմսերին, տեսել լսել է իրան Լենինին ու Տրոցկուն—դուր ե գալիս նրանց, լսում են նըրա հեղինակության առջև, բայց միշտ գտնում են, վոր Սերգեյը տաք բնավորություն ունի և, առանձարակ, խիստ է: Յեզ դրա համար նրանք ավելի հարգում են նախագահ ընկեր Ռուսին, վոր ավելի հասակով և, ամեն բան հասկանում է և քիչ է խոսում, շատ գործում, ու միշտ՝ մտածված, և տաք չե, ինչպես Սերգեյը: Ընկեր Ռուսի...Ռուսի մասին մտածելով՝ նրանց մտահոգում եր այն միտքը, թե նա ինչպես պիտի վերաբերի իր աներոջ վորդիների գործին, վորը քննվելու յե այսոր.—Ի՞նչպես հետաքրքիր ե... նրանք նույնպես վրդովված եյին Ասլանյան յեղայրների դեմ, նույնպես զրգոված եյին, մանավանդ նրանց նամակը գտնվելու գիշերը, բայց խղճում եյին, վոր յերեխաների տեր են, գոնե ամուրի լինելին—գլուխը քարը...Բայց յերբ մտածում եյին մի վայրկյան, վոր յերթե նրանց բանը հաջող եր, այսինքն՝ յերբ նրանց «ծրագիրը», ինչպես Սերգեյն եր ասում, իրագործվեր,—իրենց ըոլորին պիտի կոտորեյին—նրանք զայրույթից ատամները սեղմում եյին, գլուխներն որորում և մոնչում քթածակերով...Մանկության ընկերներ լինելով հիշում եյին այդ ըոլելին նրանց վատ գծերը, չար արարքները միայն ու վրդովվում ավելի:—Նրանք հենց յերեխա ժամանակ եղակա եյին,—միշտ թագուն գործող, գաղտնի բաներ կատարող: Այս, յեթե նրանց բանը հաջողեր, —մտածում եյին նրանք, —իրենց ըոլորին պիտի կոտորեյին. չեյին խնայի վոչվոքի... Մտածում եյին զայրույթով, զրգովված, բայց նորից իրենց յերեխակայելով նրանց տեղը, վոր կսո՞ց, յերեխաների ու մոր տեր են—խղճում եյին և ցավում նրանց հիմարության համար:

Իսկ նրանց առջև ընկած հեռագիրը հայտնում եր, վոր Յերեվանը տակավին գտնվում եր ապստամբած դաշնակցականների ձեռին:—պետք եր զգուշ և ուշադիր լինել տեղացիների նկատմամբ և պատրաստ ամեն անակնակի: Պետք եր՝ զգաստություն, հեղտփոխական տոկունություն, աչալրջություն. ամեն մի դավադիր փորձ պետք ե խեղղել իր բնում... Ահա ինչ եյին ասում հեռագրի միքանի խոսքերը... Յեզ այժմ նրանք սպասում եյին նախագահին, վորպեսզի վորոշեն իրենց անելիքը և, զիմավորապես, քննեն ձերբակարված եղբայրների ինդիբը: Բայց նախագահը, հայտնի չե ինչու, ուշանում եր: Չնայած յետեկից միլիցիոներ եր գնացել, նա դարձյալ չկար:

— Ըսկեր Ռուսին ուշացավ, —խոսեց շինելավորներից մեկը: — Նալերն քշերվա բանը—ըուրիների բոնվելը վատ և ազգել վրեն, —ասաց Սերգեյը քմծիծաղով: — իսկական ըուրիներն են, չե, —հարցըրեց նա՝ լսածը ստուգելու համար:

— Այս, պատասխանեցին շինելավորները միասին ու մտախոհ: — Այ, հենց ես բանը, — շարունակեց Սերգեյը: — ինչու թողինք մինչև եսեր. ինչու հենց քշերը չվերջացրինք նրանց. պարզ ա, վոր մարդիկ կոնյունկուլյուցիոներ են. աշակարա ուղեցել են պերեվարուս սարքեն և մեզ բոլորիս կտորեն. ըթենց չի, ախակեր. իսկ մենք հինչ ենք անըմ. վերջացնելու տեղակ՝ նստացրել ենք բանտում, թե՝ սպասեցիք—կոնյունկուլյուցիան կզա ձեզ կազատի: Եսո վոզմուտիտելին! Եսո պրեսուպենու պապուսիտելսվո! նազո բըս բեզ պաշարնիմ... ու կտրուկ... իսկ դուք—սպասենք, սպասենք... — հեղնեց Սերգեյը՝ շարունակելով գնալ-գալ, շուտ-շուտ մեջին կապած ատրճանակը ուղղելով: — Սպասենք. հընչի սպասենք—կոնյունկուլյուցիային...

Բարկությունից Սերգեյը կանգ առավ և նայեց ընկերներին, կարծես նրանդից սպասելով իր հարցին պատասխան:

— Ըսկեր Սերգեյ, մենք ասինք՝ սպասենք, գործը քննենք, — խոսեց շինելավորներից մեկը:

— Վոր որինավոր լինի, — ավելացրեց մյուսը: Սերգեյը բոնկեց. Որինավոր, որինավոր... Ռուսի ել հալբաթ եղակա ե մտածում—որինավոր... Նես! յես կարծում եմ—պետք ե վերջացնել, քանի շուտ և. և դա իր ազգեցությունը կունենա, հասկանում եք...

Շինելավորները հասկանում եյին. ձերբակարված յեղբայրների արածը, ինարկե, հականեղափոխություն եր, գնդականարության արժանի զործ, բայց յերբ գարձյալ մի ըոպե իրենց զնում եյին նրանց տեղը, խղճում եյին. — յերեխաների, մոր, կնոջ տեր... Անձանոթ լինելին—ուրիշ եր:

— Յես հասկանում եմ Ռուսին, — շարունակեց Սերգեյը սենյակը չափելով: — Նրա համար, գուցե, ծանր ըլի ես բանին մասնակցելը, ազգական ե և այլն... Յօ նմա քերություն կառաջարկենք նրան, վոր չմասնակցի մեր քննությանն ու վճռին: Յես հասկանը եմ նրա պալածենին և վարչե...

Շինելավորները լուռ եյին: Գնդականարել...

— Չորս վազմի, ախը եղ լրբերը ըեխեք ունեն, — սկսեց շինելավորներից մեկը, բայց նրա խոսքը կիսատ մնաց:

Ներս մտավ նախագահը— Ռուսի՝ ձեռները կաշվե բաճկոնի կըրծ քաղաքանները դրած:

— Ի՞նչ հեռագիր է, — ասաց նա արագ, ընկերներին դլխով բարելով:

Շինելավորներից մեկը հեռագիրը անխոս տվեց նրան։ Ոսեփը աչքի անցրեց հեռագիրը, շրթունքները սեղմեց իրար, հետո ներքին շուրթը դրեց ատամների տակ, հեռագիրը նետեց մի կողմ և նըստեց իր նախագահական տեղը։

— Յես այդպիս ել կարծում եյի, — խոսեց նա զուսպ, չոր ձայնով, աշխատելով բանալ բաճկոնի ոճիքը, վորի կոճակը դժվարությամբ եր բացվում. — Այո, յես այդպիս ել կարծում եյի:

Ոսեփը նրա ակնարկը հառկացավ։

— Ապահովան յեղայիների գործից ի՞նչ պարզվեց, — դարձավ
նա Սերգեյին և հիշեց կնոջը.

— Ինչ պարզվեց... — Սերգեյը նորից կանգ տռավ և կողքից նայեց նախագահին: —Պարզվեց, վոր մեր բոլոր պրեդպալամենիքը ճիշտ էն. նրանք դեյսւլիտենը կապ ունեն ապատամբների հետ. յես պալազայտ եմ անում, վոր դրանք եստեղ վազուանիյէ են կազմակերպել արդեն...

Ոսեփը լոռւմ եր նրան և մտածում, շրթունքները թեթևակի կրծելով. իսկ հեղկոմի շինելավոր անդամները նայում եյին նրան և սպասում, թե ինչ կամի Ոսեփը, բայց Ոսեփը լոռւմ եր:

— Разумеется,—*շարունակեց Սերգեյը*,—*նրանց գործը պիտի քննենք և տրժանի վճիռ հանենք, բայց յես ուրիշ բան պըտի ասեմ...*

Ուսեփը, նրա հետ և հեղկողի շինելավոր անդամները գլուխս-
ըը բարձրացը:

— Յես առաջարկում եմ, վոր եղ գործը քննվի եսոր, և առաջին հերթին, յեթե ձեզ համար, ընկեր Ոսեփ, անհարմարութին կտ...

Ուեփը հասկացավ ակնարկը,

— Ի՞նչ անհարմարություն...

— Վոր ձեր ըստիներն են և վարչն...
— Այն, ընկեր Ռոեփ, —խոսեց շինելավորներից մեկը, —յեթե...
Ռոեփը բերանի անկյունով ժպատց միայն: Ընկերները նայե-
ռն իրար և անհարմար զգացին իրենց առաջարկի համար:

Մի ժամ հետո յեկավ քաղբաժնի նախագահը—Մելիքը՝ իր սի-
բարական, ականջակալ ունեցող զվարկով, կաշվե բաճկոնով և յեր-
կարածիտ, շշերի նմանող կոշիկներով. հետո յեկավ Քաղբաժնի քըն-

Նիշ ընկեր Արշակը՝ մի թղթապահակ ձեռին, մշտական շարքը վիզով փաթաթած. յեկավ կոմիտեյի քարտուղար ընկեր Բենոն, և բակրավեց Ասլանյան յեղայիների գործի քննությունը:

3

Վերպինի ձեռն ու վոտը բան չեր բռնում. նա շարունակ յել ու
մուտ եր անում և անհամբեր սպասում Ոսեփին.—ճաշը, նրա
գալու ժամը, վաղուց անցել եր, բայց նա չկար. —ի՞նչ է պատա-
հել, ինչու ուշանում է այսպես, մտածում եր Վերպինը և, մտածե-
լով՝ գնում-գալիս շարունակ։ Քանի ժամ եր արդեն—մի տեղ նրա-
տել չեր կարողանում. զուրս եր գալիս փողոց, զլուխը հանում եր
լուսամուտից և նայում Ոսեփի ճամպին. նրան ավելի անհանգըս-
տացնում եր ավելի այն, զոր մի լուր իմանա և նայոնի հորանց
տուն—մորը և հարսներին հանգստացնելու... Ինքը գնալ չեր կարող,
զոնե լուր ուղարկեր. իսկ ինքը գնալ չեր կարող շատ հասկանալի
պատճառներով. նախ՝ ինչպես յեղբայրները խոռվ եյին Ոսեփից,
այսպես ել խոռվ եյին իրենից վոչ միայն յեղբայրները, այլ և հարս-
ները. յերկրորդ. յեթե այդ հանգամանքը թողներ մի կողմ և գնար—
պետք ե յենթարկվեր հարսների հարձակման՝ անեծքներին ու լու-
տանքներին, վորպես յեղբայրներին ձերբակալող իշխանության գըլ-
խափորի կին. և նա իր հարսներին լավ եր ճանաչում. գիտեր նաև՝
ինչ լեզվի տեր են. բավական եր զլուխը տեսնեյին՝ հայհոյանքների
ու անեծքների տարափ պիտի թափեյին...Յեվ, վերջապես, իր գնա-
յը անհարմար եր՝ Ոսեփի դիրքի համար։

Սյսպես եր մտածում Վերգինը և զնում-զալիս սենյակում։ Իսկ դուրսը քամին՝ մոլեգնած անցնում եր փողոցներով և թրխկոց ու շրխկոց բարձրացնում այստեղ, այնտեղ։ Իսկ այս թրխկոցն ու շրխկոցն ավելի եյին անհանգստացնում Վերգինին։ — Ի՞նչ յեղավ Ուսեփը, ինչո՞ւ յե ուշանում։ մերոնք հիմի իրենց կերան... Անհանգիստ, մտածելով՝ զնում-զալիս եր Վերգինը, յերբ մայրը հովանոցի կոթը ձեռնափայտ շինած ու նրան հենած՝ ծեր մեջքից յերկուտակված յեկավ և, գեռ սահնդուղների վրա, սկսեց իր բամբ տղամարդու ձայնով։

— Ես ի՞նչ բան ա, աղջի. են տղերանցը ճաշ են տարել—թողըմ չեն իրանց տան... Բա ըսենց բան կըլի... Բա մի բան չիմացար, ի՞նչ են արել ախր, հը... Յես ջիս շաշտրմիշ եմ ելել—հասկանըմ չեմ՝ ի՞նչ բան ա... Բոնել են՝ քիչ ա—թողըմ ել չեն հաց ուտե՞ն...

Խոսում եր պառավը զլուխը կողմացույցի պես տմտմբացնելով ու, յերկար քայլելուց հոգնած, հեացող ու խզզացող ձայնով.

Խոսում եր, և նրա ամեն մի խոսքը վերդինին թվում եր հանդիմանություն, նախատինք:

«Ճաւը չեն ընդունել»... Դա ի՞նչ է նշանակում, — մտածում եր վերդինը հուզված. — ինչու այսպես վարվում են միայն նրանց հետ, վորոնց աքսորում են կամ... պիտի գնդակահարեն...

Ու իր հուզումը մորից ծածկելով՝ սկսեց հանգստացնել նրանց ինչու մեկ ել յեկար. զուր ինչու յեք անհանգստանում: Յես Ոսեփի հետ խոսեցի. հարցրի, հարցուփորձ արի, — ասավ՝ «հանգիստ յեղեք (ավելացրեց իրենից), վոչինչ չկա. գործը կքննենք»... Թեև խոսում եր վերդինը մոր հետ ու քայլում անդադար, բայց նրա գլխի մի անկյունում մի միաք եր գործում շարունակ.

«Ճաւը չեն ընդունել»...

— Յերբ գործը քննեն, բաց կթողնեն, իհարկե. — շարունակեց նա. — Ի զուր հո չեն պահելու. իսկ յեթե ճաշը չեն ընդունել — դա վոչինչ. սոված չեն թողնի, իրանք ճաշ կտան, ինչպես բոլորին... «Ճաւը չեն ընդունել»...

— Հա՞ — բացականչեց պառավը թերահավատ հանգստությամբ, վոր տղերանցը սոված չեն թողնի և բռնողներն իրենք ճաշ կրտան. — Ուր ա թե. թող իրանք տան, միայն սոված չթողնեն, — շարունակեց նա գլուխը կողմացույցի պես տմբտմբացնելով. — բա տարմ են, թե՝ բանները վատ ա, մթամ՝ մեղքները շատ ա — դրա համար ճաշը չեն վերցրել կամ, ով գիտի, ասրմ են՝ Ծրեան պտի տանեն — դրա համար: Հազար ու մի բան են ասրմ — հասկանըմ չեն, աղջի...

Վերդինը կրկին սկսեց հանգստացնել մորը, վոր վոչինչ չկա, վոր նա զուր տեղը յեկել ե մեկ ել. և խորհուրդ տվեց գնալ տունինքը ամեն բան կիմանա և լուր կտա:

— Գնամ, — ասավ պառավը տարակուսած. — բա են հարսներն ենտեղ իրանց ուտում են, գնամ ի՞նչ ասեմ...

— Ասա՝ հանգիստ մնան. զիշերը բանել են՝ եսոր հո բաց չեն թողնի. գործը կքննեն — եսոր չե, եգուց, մյուս որը կթողնեն, յերկար հո չեն պահելու...

Վերդինն ուղում եր ասել՝ քանի Ոսեփը կա, նրանց վնաս չե հասնի, բայց փոշմանեց: Ավելի շուտ՝ կասկածով լոեց. արդյոք Ոսեփը կպաշտպանի վոր...

— Ասըմ ես՝ միքանի որից բաց կթողնեն... Դու ասես՝ ասաված լոի, — հառաչեց պառավը. — Դու ասես՝ աստված լոի: Թե չե ենպես բաներ են խոսում, սիրտս ջուր ե դառնում... Ախ, քանի անգամ րեխա վախտներն ասում եյի. «Այ տղերք, բան չունեք. ձեռ-

վեր կալեք եղ կուսվացկութենիցը. դա խեր բան չի — ելավ վոչ. իրանց եշը քշեցին,.. Դե հիմի յես ի՞նչ անեմ: Գնամ, ասում ես, ելի՛: — Հա, դու հանգիստ գնան. հարսներին ել ասա՝ հանգիստ մնան: Մորը ճանապարհ դսելուց հետո վերդինը նորից սկսեց իր անցուցարձը սենյակում:

Ճաւը չեն ընդունել...

Դա յերեխ Ոսեփը չի խմանում... ի՞նչ է նշանակում. ծանր հանցանքի տեր են. բայց ի՞նչ հանցանքի. ի՞նչ պիտի արած լինեն, վոր հականեղափոխական գործի մեջ են մեղադրում... Մտածում եր վերդինը քանինիրորդ անգամը և միշտ ել յեղբակացնում, վոր ի՞նչ ել արած լինեն յեղբայրները, Ոսեփն, այնուամենայնիվ, այնքան աղղեցություն և հեղինակություն ունի, վոր նպա մի խոսքը բավական է. վոչվոք առանց նրան վոչինչ չի անում, և բոլորը միշտ նրա կարծիքն են հարցնում: Վորքան ել յեղբայրները ատում են Ոսեփին, բայց Ոսեփը նրանց հետ չի վարվի այնպես, չի թողնի վարվեն այսպես, ինչպես ուրիշների հետ: Վերդինը համոզված եր այդ բանում, բայց նրան զբաղեցնում եր միայն այն միտքը, թե ի՞նչ է արդյոք յեղբայրների հանցանքը և ի՞նչու ճաշը չեն ընդունել...

Մտածում եր վերդինը, պտտվում սենյակներում, աչքը միշտ ճամփի, թե յերբ պիտի Ոսեփը գա, վոր կարելի լինի մի բան իմանալ:

Ու նա սպասումի յերկար ժամեր անցրեց, մինչեւ վերջապես, ամուսինն յեկավ: Ուշ յերեկո յեր արդեն, քաղաքի կեսը համարյաքնած, յերբ Ոսեփը ներս մտավ — հոգնած՝ դադրած. նրա դեմքը մըտահոգ եր ու մոայլ: Դեռ աստիճանների վրա վոտնաձայն լսելով՝ վերդինը վագեց ընդառաջ:

— Հը, ի՞նչ յեղավ, ի՞նչ արիք, — հարցրեց անհամբեր, անհանգիստ աչքերը մարդու յերեսը գցած:

Ոսեփը լուռ եր. առանց կնոջը նայելու, նա զուռը դրեց, հետո կաշվե բաձկոնը հանեց անխոս:

— Հոգնած ես, հը, — շարունակեց վերդինն իր հարցերը: Ի՞նչու չես խոսում: Ասա, ի՞նչ պարզվեց: Քննեցիք (նայում ե մարդու աչքերին):

— Այս, — խոսեց Ոսեփը կես բերան: Հետո... Հետո ի՞նչ պարզվեց:

Ոսեփը լուռ եր. նա մի թուղթ հանեց բաձկոնի գրպանից և նատեց սեղանի մոտ: Վերդինը մոտեցավ, նայեց ամուսնու աչքերին ու թեր ըոնեց:

— Դե ասա, ի՞նչու յես լուռ մասն Ասա պարզ, մի վախի — ամեն

բան մտքովս անցել ե, այնպես վոր վոչ կվախենամ, վոչ կուշա-
թափեմ...Մի վորևէ հանցանք ունեն, թե... Հը...

Ոսեփը գլուխը բարձրացրեց ծանրությամբ:

— Անմեղ չեն:

— Միթե...Լավ. ինչումն ե մեղքները: Ըը. դու լոռում ես, ելի...
Լավ. ասենք մեղավոր են, հետո ինչ արիք:

— Այն, ինչ վոր պետք եր:

— Այսի՞նքն:

— Հանցանքին համապատասխան պատիժ:

Վերգինը ժպտաց թերահավատ ժպիտով և նազանքով փարվեց
մարդուն.—դու հանաք ես անում. չեմ կարող հավատար վոր նը-
րանք մի բան արած լինեն և, դուք ել...

— Արել են և այն ել շատ վատ բան,—խոսեց Ոսեփը հան-
կարծ չոր, սառը ձայնով, վոր կարծես իրենը չլիներ:

Թերահավատ ժպիտը սառավ Վերգինի շուրթերին, և նա ինչ-
վոր սառնություն զգաց իր սրտում իր շուրջը. կարծես մեկը սա-
ռը ձեռքով բոնեց սիրտը. կողքին կարծես կանգնած եր ստար մի
մարդ, վոր չեր ուզում հասկանալ իրեն, և ինքը չեր հասկանում նը-
րան: Մարդու ձայնից զգաց, վոր վատ բան ե կատարված, վոր
յեղբայրները մեղաղըվում են ծանը հանցանքի մեջ:

— Նրանց հանցանքը,—հարցրեց դողացող, գրեթե կերկերուն
ձայնով.—ի՞նչ ե նրանց հանցանքը...

Ոսեփը լուռ եր: Այդ լոռությունը Վերգինին թվաց խորհրդա-
վոր, նույնիսկ չարագուշակ. նշանակում ե՝ կատարվել ե մի վատ
բան:

— Դուք դատապարտեցիք նրանց,—հարցրեց այլայլված:

Ոսեփի պատասխանը հնչեց պողպատի պես.

— Այն:

Վերգինը կանգնած տեղը ուղղվեց և խորը, սրաի խորքից շունչ
քաշեց. նրա կուրծքը բարձրանում եր, իջնում՝ բարձրանում եր, իջ-
նում. ուզում եր հարցնել. ինչ պատիժ, վախենում եր պատասխա-
նը լինի սարսափելի, ուստի իրեն հավաքեց և, կարծես իրեն ա-
րիություն ներշնչելու համար, հարցրեց թերահավատությամբ.

— Գնդակահարել...

Ոսեփի ձայնը հնչեց դարձյալ պողպատի պես.

— Այն:

Այդ «այո»-ն նման եր նաև մուրճի հարվածի, վոր իջավ կար-
ծես Վերգինի գլխին, բայց Վերգինը նրանից չցնցվեց անզամ: Մնաց
անշարժ կանգնած և լսեց:

Նա զ որմացած եր, հանկարծակի յեկած: Լոեց մի վալրկյան

մարդու յերեսին նայելով, այնպես, ինչպես նայում են ոտար, թըշ-
նամի մարդու՝ պաղ, զննող նայվածքով, ապա դիմեց նրան խուլ
ձայնով.

— Իսկ ի՞նչ ասավ քո խիղճը,—հարցրեց նա նույն պաղ, զըն-
նող նայվածքը մարդու յերեսին:

Ոսեփը, զգալով ինո՞ց հայացքն իր վրա, աչքերը բարձրացրեց
և կայեց նրան:

— Իմ խիղճը հանգիստ ե, — ասավ հանդարտ, անվրդով, ա-
նայլայլ:

Վերգինն աչքերը չոեց մարդու վրա. նա այդքան ստու, ան-
տարրեր պատասխան չեր սպասում մարդուց:

— Հանգիստ,— ասավ նա առժամյա լոռությունից հետո, հեգ-
նախառն դառնությամբ: Հանգիստ...

— Այս, — կրկնեց Ոսեփը առանց գլուխը բարձրացնելու, ձեռի
թղթի ընթերցումով զբաղված:

Վերգինը, առաջվա պես, աչքերը չոած, մի վայրկյան նայեց
մարդու յերեսին, նայեց զննող հայացքով, կարծես նրա դիմագծերն
ուսումնասիրելու համար, նայեց, նայեց և, հանկարծ, մեկն պոկ-
վեց տեղից ու անցավ մյուս սենյակը: Միքանի բոպեյից դուրս յե-
կավ այնտեղից շալը թեին գցած:

— Դե, մնաս բարձվ, — ասավ արագ, դառնորեն:

Ոսեփը գլուխը բարձրացրեց:

— Ուր, — հարցրեց նորից հանդարտ ու անայլայլ:

— Յես չեմ կարող ապրել մեկի հետ, վորի ձեռներն արյու-
նուս են, — ասավ Վերգինը, յերկու քայլ արագ և նորից կանգ առավ,
ասես մի ծանը խոսք ասելու, բայց փոշմանեց և գնաց դեպի դու-
ռը: — Մնաս բարով:

— Բարի ճանապարհ, — պատասխանեց Ոսեփը միենույն ոեղը
նստած, թուղթը ձեռին և լսեց, թե ինչպես կինը իջնում եր սան-
դուխով, ինչպես նրա կոշիկները զարկվում եյին քարե աստիճան-
ներին. «կըլըկ-կըլըկ, կըլըկ-կըլըկ»...

— Այդպես ել գիտելի, — ասաց Ոսեփն ինքն իրեն: — Բայց իմ խիղ-
ճը հանգիստ ե...

Ասավ և շարունակեց թղթի ընթերցումը:

Իսկ զուրսը ցերեկվա քամին բուք դարձած՝ վոռնում եր փո-
փոյներում ու վզզում քաղաքի գլխին...

— Ի՞նչ ժամանակաշրջան ե նկարագրված այս պատմվածքում:

Ո՞վ եր Ոսեփը: Բնորոշեցեք նրա սոցիալական ծագումը յեվ դրու-
թյունը,

- Ո՞վ եր նրա կինը: Ի՞նչ միջավայրի ծնունդ եր նա:
 - Իրավացի՝ յեր արդյոք Ռանիքը: Խսկ կի՞նը:
 - Կարողացե՞լ եարդյոք հեղինակը համոզեցուցիչ կերպովնկարագրել պանց հոգեբանությունը:
-

ԱՅ. ԶՈՐՅԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՂՋԻԿԸ (Հատված)

Եդ որվանից հույսս կտրեցի ամեն կողմից. մնաց միայն աստված: Դրա վրա յել վորդուս սպանվելուց հետո, հավատ չունեցի. բայց ելի հույս եր: Վորդուս չփողորմաց, մտածում եմ, իցե թե աղջկուս վողորմա: Ամեն որ բանտ եյի գնում, կերակուր եյի ասում՝ մեկ-մեկ ել վիկտորիս համար փոխնորդ: Չեսս ու վոտս ել բան չեր բռնում. գործից ել զրկվեցի, բանից ել: Ով սիրտ ուներ գնա սրա-սրա լվացքը անի: Մւր ել գնում եյի—հենց մի զլուխ են եյին ասում, թե ինչ աղջիկ ես մեծացրել վոր եղակս աղջի խայտառակիչ դուրս յեկավ: Թագուն փողեր ե ստացել վոր Հայաս տանը քանդի, ել ինչեր, ինչեր... Շատ քիչ մարդ կար, վոր ցավում եր ինձ: Բայց նա յել ով ցավում եր—չեր կարում սիրտը բաց խոսի: Կային ենպեսներն ել, վոր ինձ հետ չեյին ուզում ինուել, թե եսպես աղջկա մեր ե...

Քանի վոր գործ չեյի անում՝ ձեռիս փողը կամաց-կամաց հատնում եր: Մի որ ել հիշեցի, վոր վիկտորը զրադարանի ոռճիկը, վերջի ամսվա հումար, չի ստացել: Ասի գնամ ստանամ. իրա համար գոնյա ճաշի փող կըլի, վոր միքիչ կարդին հաց, բան տանեմ բանտ: Մարդամեջ եմ տանում, մտածում եմ, ամոթ ե: Տանը վիկտորը ցամաք հացով յոլա յեր գնում—բանտում ի՞նչ աներ: Մտածեցի ու գնացի:

- Նա բան չունի ստանալու,—ասում ե կառավարիչը:
- Չե վոր,—ասում եմ,—անցած ամսի ոռճիկը չի ստացել:
- Միենույն ե,—ասում ե, կարգադրված ե չտան...

Չտվին: Ելի սկսեցի թեթև բաներ տանել, մի որ կարտու մի որ աղցան, լոբի, միքանի անգամ ել կատլետ տարա: Ինչ վոր տանում եյի, մեղքս ինչ թագցնեմ, յես կարծում եյի վիկտորի ձեռքը չի հասնում, հենց իրանք բանտի մարդիկն են ուտում: Քանի վոր աչքս չեր տեսնում—եղակս եյի մտածում: Բայց հետո իմացա, վոր ինչ վոր տարել եմ, տվել են իրան:

Մի որ ել եղակս գնացի բանտ, տեսնեմ հրես մեծ բազմություն

Ե հավաքվել բանտի առաջ: Հավաքվել նայում են ներս, նայում են բանտի պատերին, խսկ եղտեղ, վողոցում թափված են ամեն տեսակ բաներ—հաց, պանիր, կոտրած չափանիեր, ամաններ, մսի կրտորտանք: Միքանի գաղթական կնիկ հավաքում են թափված բաները, գողները լցնում, մնացած մարդիկ բամաւա են անում: Ու բանտի կարառվեները ինչքան ասում են դրանց «զնացեք, հեռացեք»—ժաժ չեն գալի: Բանտի մեջ ել ինչ-վոր դալմաղալ կա: Դես նայեցի՝ բան չհասկացա: Նոր հարցնում եմ:

- Ես ի՞նչ բան ե,—ասում եմ,—ես բաներն ով ե թափել:
- Բոնավոր լալեիկները,—ասում են:
- Ինչու յեն թափել:

Մինը թե՝

- Գժվել են, դրա համար:
- Մի ուրիշն ել թե՝
- Եսոր մեկին ծեծել են բանտում, դրա համար բերած ու անելիքը թափել են փողոց: Չեն ուզում ուտել:

Այ թե ի՞նչ... Միրտս թուլացավ հանկարծ: Քիչ մնաց շունչս կտրի: Մոտեցա եդ խոսողներից մեկին, մի շապակոր մարդու:

- Դու կիմանաս,—ասում եմ—պարոն, ում են ծեծել բռնավորներից վորին:

Հարցնում եմ, բայց սիրտս գողում ե:

Շապակորը թե՝

- Մի տղի:
- Իսկ յես կարծում եյի,—ասում եմ,—Վիկտորիա... Եդ մարդը թե՝
- Աղջիկ ունես բռնված
- Հա,—ասում եմ,—նրան ել բռնել են բալշեիկության համար. բայց անմեղ ե աստծու գառի պես:

- Ի՞նչ ե աղջկադ անունը,—հարցնում ե:
- Վիկտոր Դանելյանց,—ասում եմ. — Գրադարանի աղջիկը:
- Եդ մարդը յերեսը շուռ տվեց հանկարծ:
- Նա յե անմեղ,—ասում ե. — Վոր անմեղը նա յե, բա մեղավորը ով ե: Նրան ծեծը,—ասում ե,—քիչ ե:

Եստեղ յես ել չհամբերեցի—մի վոտս յետ դրի, մինն առաջ:

- Դու ով ես, հողեմ զլուխդ, վոր եղակս դուրս ես տալիք ու քեզ:
- Վոր չսկսեցի եսպես, եդ մարդը թողեց ու հայդա: Ինքն ել շապակ մարդ եր:

Քիչ յեղի, յերբ հանգստացա, ճաշն ուզեցի տանեմ ներս: Զընդունեցին:

— Ինչու, — ասում եմ դարառուին:—
Կարգադրված ե՝ չընդունել:
— Պատճառը:
— Եղ քու իմանալու բանը չի, պառավ՝ — ասում ե:
Եղ դարառուների մեջ կար մի դարսեցի տղա — մեծ-մեծ աշքերով, ճակատը ճղված ու կարված: Ինձ հետ լավ եր. միշտ «մայրիկ» կասեր, խղճում եր. ինչ վոր ասեյի — կողներ: Բայց եղ բուպեյին նա եղտեղ չեր:

Եղ ժամանակ, յերբ յես խոսում եյի դարառուի հետ, — բոնավորներն սկսեցին յերգել: Ենպէս են յերգում, վոր բանաը թնդում ե: Յերգում են բալշեիկների յերգը, են վոր ամեն տեղ յերգում են հիմի — «Անտիբնացոլը»: Ու ամենից բարձր լսվում է Վիկտորի ձեռնը զիլ, զանգակի պես: Յերգում են բոլոր սենյակներում, յերգում են ձեռն-ձեռնի տված: Բանտի ծառայողները, դարառները անհանգիստ գնում են, գալիս, ուզում են մտնեն ներս, ուզում են արգիլել յերգելը, բայց նրանք՝ հեչ: Վախից՝ սիրտս ջուր ե դառել: Ասում եմ՝ հրես բոլորին կկոտորեն, կսպանեն... Բայց նրանք, սկի՞ Յերգում են, ու բոլորից բարձր Վիկտորը: Տեր աստված, սա տանը չեր յերգում, մտածում եմ, գուցե նա չի, ուրիշ ե: Բայց չե. տեսնում եմ, վոր նա յե: Վերջապես յես իմ աղջկա ձեռը ճանաչում եմ: Յերգում են եսպես բոլոր սենյակներում, յերգում են իրարութ աված, ու ամենից բարձր ելի Վիկտորի ձեռն ե գալի:

Միքիչ վոր լեցի, աստասուքս յեկավ, ինձ չկարացի պահեմ: — Զան, ջան, ասում եմ, — Վիկտոր ջան: Յես քու զանգակ ձենին մեռնեմ...

Բանտի դարառների մեծը բարկացավ.

— Դու ով ես վոր, — ասում ե, — եղանակ ձեն ես հանում,
Ու կասկածով, զարմանքով նայում ե ինձ:
— Յես, — ասում եմ, — Վիկտոր Դանելյանցի մերն եմ: Են վոր յերգում ե՝ իմ աղջիկն ե:
Ասում եմ, վոր սիրտը գութ գցեմ: Բայց նա, աեսնում եմ չե — դրանից ավելի բարկացավ:

— Դե հեռացիր, — ասում ե, — թե չե...

Եղ ժամանակ իմ ծանոթ դարսեցի տղեն յեկավ: Մոտեցալ ու կամաց.

— Մայրիկ, — ասում ե, — գնան, անհարմար ժամանակ ե:
Մեծի բարկությունը տեսնելով գնացի: Եղ դարսեցի տղեն ինձ ճամպու զրեց մինչեւ դուռը:
— Եղուց բեր, — ասում ե, — եսոր խառնված որ ե:

Իսկ յես զեռ չեմ հանգստանում:
Վիկտորիս հո չեն ծեծել՝ ասում եմ:
— Զե, — ասում ե, — հանգիստ կաց. որիորդին ծեծելու իրավունք չկա: Միայն թե հաց չեն ուզում ուտել
— Վո՞նց թե. սոված պըտի մնան, — ասում եմ:
Ասում եմ ու մտածում - գժվել են դրանք, ինչ ե. մարդ եր տված հացը չուտի: — Բա սոված պըտի մեռնեն, — հարցնում եմ:
— Զեն մեռնի, — ասում ե, հանգիստ կաց:
— Թողեք, — ասում եմ, — յես իմ աղջկանը համոզեմ, վոր հաց ուտի: նա ջահել ե. արածը չի հասկանում:
— Զե, — ասում ե, — չես կարող համոզել, միևնույն ե, նա առանց ընկերներ չի ուտի:
— Գուցե ձեր հացը չեն ուզում, — ասում եմ, — իմ հացը ուրվեք, իմ հացը կուտեն:
— Զե, — ասում ե, — միևնույն ե. չեն ուտի: Զենք ել կարող տար նրանք պետք ե մեր հացը ուտեն...
Ու բացատրեց ինձ, վոր նրանք վոչ թե չեն ուզում հաց ուտել այլ գրանով, — ասում ե, — բողոքում են:
Յես բան չհասկացա. ինչպես թե հաց չեն ուզում ուտել. սոված մնում են, թե բողոքում ենք: Այ քեզ շաշեր..
Բողոքում ենք: Խնաք են գտել...
Տուն յեկա. վոչ հաց ե կուլ գնում, վոչ չուր: Յերեխես են տեղ սոված — յես հաց ուտեմ: Վոր մտածում եմ — գլխիս կրակ ե մաղփում: Ծունկս ծեծում եմ ու ինքս ինձ. «կուրանամ յես, կուրանամ»... Ու եղ որը՝ գիշերը մինչեւ լուս, թե գուք իմ տանը քընել եք, ենպես ել յես...
Առավոտը բացվեց թե չե, նորից պատրաստովյուն տեսա Վիկտորին ճաշ տանելու: Ասի, երեկվա եփածս հնացած ե. նոր ձու եփեցի, կաթ տաքացը ու տարա:
Ելի՛ չի կարելի: Ելի՛ բռնավորները, ասում ե, հաց չեն ուզում ուտել: Յես ել թե՝ թողեք, ասում եմ, ախպեր, իմ աղջկանը համոզեմ — ուտի:
Զե, վոր չե...
Յերեք որ եսպես հաց չընդունեցին: Բայց յերեք որն ել քանի գնում եյի, լուսմ եյի վիճակ են յերգում դրանք: Յերգում են ձեռն-ձեռնի տված, յերգում են բոլոր սենյակներում, յերգում են ենպես, բանուր թնդում ե կարծես: Ու յերգողների մեջ ամենից զիլ լըսվում ե ելի Վիկտորի ձեռը, վոր գնդում ե զանգակի պես...
Ինչ յերկարացնեմ — մի որ ել յերբ հաց տարա բանտ, հայտնեցին, թե՝ եղուց ել հաց, կերակուր չըերես:

— Ինչու:

Թե՛ բռնավորներին տանում են Երևան:

— Ինչու:

— Եղ քո իմանալու բանը չի, —ասում ե ծառայողը, են զար-
ացի տղեն —Միայն եսքան իմացի, վոր ել չըերես, —ասում ե —ես
ել վոր ասում եմ՝ մեծ բան ե: Ուրիշներին, —ասում ե, —յես չեմ
ել ասում: Խեղջ կնիկ ես, դրա համար:

Յես մատս կծեցի: Տեսա վոր եստեղ մի բան կա: Շատ եյի
լսել, վոր բռնավորներին թագուն տանում են սպանում, հետո կե-
րակուրը ընդունում, մթամ թե՛ եստեղ ե... Եղ որերն ել մեկին՝
Մացո եյին ասում —եղակն տարա՞ն. Նոր մի շաբաթ յետո իմացանք
վոր սպանել են: Ուզում եր փախչի, դրա համար, —ասում են: Մի
խոսքով՝ եղ վոր լսեցի, սիրտս ահ ընկակ: Բայց տեսա, վոր եղ
մարդը խղճում ե ինձ: Ու հարցրի, թե յե՞րբ են տանելու:

— Ել, ասում ե, —ավել բան չեմ կարա ասի: Եսքանն ել վոր
ասի, չնորհակալ յեղիր:

— Շնորհակալ եմ, —ասում եմ, բայց, թե արեդ սիրես, ասա
մի իմանամ:

— Զե՞ —ասում ե, —չեմ կարող: Ուզումես ինձ պաշտօնից գուրս
անեն, սպանեն:

— Վոչինչ ել չեն անի, —ասում եմ. —վերև ասոված, ներքե.
յես ու դու: Մեր խոսածը մարդ չի իմանա: Ասա՝ ի՞նչ ժամանակ են
տանելու. ցերեկը, գիշերը, սհաթի բանիսի՞ն:

Շատ վոր խնդվեցի, աղաչեցի, խղճոց եղ զարսեցի տղեն
(ասոված յերկար կյանք տա նրան և աջողություն. ինչ գործ ել
բռնի —բարին առաջի, չոր քարին ել վոր գնա —կանաչի): Տեսավ
արտանուքը աչքերիս լաց եմ ըլում —խղճաց:

— Ես գիշեր, —ասում ե, —ժամը 12-ին: Բայց, իմացած յե-
ղիր, —ասում ե, —մարդու բան չասես, թե չե վատ կըլի...

— Խելառակվել չեմ, —ասում եմ. —Դու հանգիստ կաց:

Եղ, որը մինչև գիշերվա 10-ը, վոնց վոր ինձ կրակը գնես —
Երկում եմ: Յեկել եմ տուն ու Վիկտորի համար պաշար եմ պատ-
րաստում: Ճամպալ ե գնում, մտածում եմ, պետք ե հետը մի բան
դնել գիտեմ, Վիկտորի բնավորությունը ենպես ե, վոր շատ պաշար
չի սիրում, բայց, ասում եմ՝ վոչինչ ընկերների հետ կուտի: Գուցե
միամբին մի քանի որ մնաց, ո՞վ նրան հաց կտա... Զու յեմ եփում,
հավ եմ եփում, պանիր առա, լոշի մեջ դրի: Եփեցի, հավաքեցի,
դրանց հետ ել մի քանի փոխորդ, մի գերյա —կապոց արի ու դեռ
սհաթի ութը չեղած՝ գնացի վակզալ: Ասի՛ շուտ գընամ, ով ե իմա-

նում, միտքները փոխեն գուցե ու շուտ տանեն: Տանը սպասելու
փոխարեն ավելի լավ ե ենտեղ սպասեմ: Տանը հո նստել չեմ կա-
րում. թվում ե՝ Վիկտորին տանում են արդեն, թվում ե՝ ել չեմ
տեսնելու —սիրտս անհանգիստ ե ենպես. այ կրակվի իմ սիրտը:
Հարազատ աղջիկ են տանում, մտածում եմ, միակ աղջիկ են տա-
նում ոտար տղերանց հետ: Աղջիկ պահես մեծացնես —են ել ես-
պէս: Վոր մտածում եմ —ուղեղս ժաժ ե ընկնում: Մի շունչ ել
չկա մոտա, վոր սիրտ տա, մխիթարի —հանգընտանամ միքիչ: Են-
պես եմ, վոր սիրտս ուզումա բերնովս գուրս գա: Կապոցը ձեռիս
ճամբար յեմ ընկել ու գնում եմ, վոտներս գոռով եմ փոխում —
ենպես թութն ե, ցեխ. աստղ ել չկա յերկնքում: Ֆայ-
տոները գնում են շվշփալով ու ցեխը թափում վրես: Տանից մին-
չև վակզալ՝ աշխարքի տեղ ե. մինչև հասա՝ իմն ել ինձ հասավ: Գնացի
կապոցը ձեռիս նստեցի ծառերի տակ: Եղտեղ ել՝ շատ ճամ-
փորդներ՝ կնանիք, մարդիկ իրանց կապոցների վրա նստել՝ պոյեզի
յեն սպասում, դրանց հետ ել յերեխեք —մինը լաց ե ըլում, մինը
քնել ե, մի ուրիշը ըլրլում ե մոր հետ: Եստեղ-ենտեղ ուրախ խո-
սում, ծիծաղում են: Սիրտս դանակ իրես, արին չի կաթի: Եստեղ
եմ մենակ ու մտքիս յետեկց ընկած՝ սպասում եմ: Մին ել մի
տղամարդ մոտեցավ թե՝

— Քույրիկ, ուր ես գնում:

— Տեղ չեմ գնում, —ասում եմ. —աղջկաս տանում են, յեկել
եմ ճամբու գնեմ:

Նա թե՛ ուր են տանում, ո՞վ ե տանում:

— Կառափարությունը, —ասում եմ. —բռնել ե տանում ե ե-
րկան:

— Ինչի՞ համար ե բռնել:

— Բալշեկիկության համար:

Եղ մարդը կանգնեց, «հըմ» արավ ու՝ «բա կթողնեն», —ասում
ե, —դու նրա հետ խոսես»

— Խի՞ չեն թողնի, —ասում եմ —նրա՝ մերն եմ, հո ոտար
չեմ. միակ աղջիկս ե. տանում են ու ել ով սաղ մնա, ով ապրի —
չեն թողնի իրար յերես տեսնենք, վերջին անգամ յերկու խոսք ա-
սենք իրար:

Եղ մարդը շվարած գլուխը թափ տվեց ու գնաց: Դա գնաց,
մին ել ընը՝ զինվորները հավաքված խալխին քշում են: «Նեռու,
հեռու... ի՞նչ ե: Տեսնեմ հրես բռնավորներ են բերում. չորս կող-
մից զինվորներ՝ հրացաններով, բանով:

Սիրտս կուչ եկավ. ծնկներս զողացին: —Ուրեմն Վիկտորիս տա-

նում են, Վիկտորս սրանց մեջ եւ Շշմածի պես եմ: յերազի մեջ: Զինվորները խալսին հեռու յեն քշում, յես մոտենում եմ, տեսնում Վիկտորը դրանց մեջ եւ, թէ չե: Մատիկ եմ անում, մատիկ եմ անում—բան չեմ տեսնում, զինվորներն ենպես են շրջապատել, վոր չեն երեռմ: Գիշերն ել վոնց վոր ասի՝ մուլթն եւ աստղ չկայերկըն քում. աչքերս ել, արցունքից քաղված, լավ չեն ջոկում տեսնում եմ գլուխներ ուսեր. բայց Վիկտորին չեմ ջոկում: Զըլի, ասում եմ, նրան թողել են. խղճացել են, վոր աղջիկ եւ, տղերանց պես չի կարելի չարչարել, ու չեն բերել: Դրանց տարան պոեզի կանգնելու տեղը: Յես ել՝ կապոցը ձեռիս, դրանց յետելից: Ուզում եյի մոտենամ, մին ել տեսնեմ՝ զրանք, մուլթի մեջ զինվորներով շրջապատված, եղ կես գիշերին սկսեցին իրանց յերգը—«Անտինացուլ»: Սկսեցին ու վժնց են յերգում, աման, վժնց են յերգում... Խալխը հավաքվեց. գուրս թափվեցին մարդիկ զալերից, դուրս թափվեցին վակզալի տներից, բուտկաներից, հավաքվեցին ճաղերի մոտ, ծառերի տակ ու բամաւա են անում, թէ ես ինչ բան եւ ես կես գիշերին... Դրանք սկսեցին թէ չե—յես ելի Վիկտորիս ձենը ջոկեցի. վոր բոլորի ձենից բարձր ե—զիւ զանգակի պես... չենց վոր երեխիս ձենը լսեցի՝ ել չկարացի ինձ պահեմ, ինչպես են անգամ՝ բանտի հայաթում.

— Զան, ջան, Վիկտոր ջան,—ասում եմ.—յես քու ձենին մասպաղ...

Ու ուզում եմ մոտենալ, բայց ով կթողնի: Երկու վոտ փոխեցի թէ չե, զինվորը՝

— Հեռո՛ւ, հեռո՛ւ, չի՝ կարելի...

— Այ «Զի կարելին» ընկնի փորդ, —ասում եմ մտքումս ու հիմի յել ուզում եմ մեկել կողմից առաջ գնալ: Եսուղ ել մի ուրիշ՝ «Զի կարելի»: Ասում եմ՝ իմ աղջիկը դրանց մեջ եւ, բան եմ տալիս:

— Զի կարելի, չի կարելի...—Ու ենպես մի բոթեց վոր քիչ մնաց ընկնեյի մեջիս վրա:

Իսկ նրանք՝ բոնավորները, յերգում են իրանց յերգը. յերգում են գժվածի պես, յերգում են ձեն-ձենի տված, յերգում են կարծես զինվորների ջգրու, յերգում են բարձր... Բոլորի մեջ ելի ջոկում Վիկտորիս ձենը, բոլորի մեջ ելի նրա ձենն եւ բարձր... Ու զեցի ձեն տամ, իմացնեմ, վոր յես եսուղ եմ, բայց բարսի պես, պոեզը հանկարծ շվացրեց մոտիկ ու յեկավ շիշմակլով: Մարդիկ իրար զլիով զիպան, բեռները, կապոցները հավաքում են պատրաստ կենան, վոր պոեզը կանգնի թէ չե վագոնները մտնեն:

Մի կողմից վազում են, մի կողմից կանչում իրար: Բիլեթ են զուռում: Իսկ նրանք՝ բոնավորները յերգում են ձեն-ձենի տված:

Ել եղանակ, եղ դալմաղալի մեջ, իմ ձենը կլսվեր վոր...

Յերբ պայեղը կանգնեց, դրանց բոլորին շրջապատած տարան պարավողի կողքի վագոնը, վոր լուսամուտները, տեսած կը լեք, երկաթած են բանտի պես: Դրանց տարան, յես ել, կապոցը ձեռիս, նրանց յետելից: Մարդիկ դժվարում են. վագոններն են մըտնում, գուրս են գալի: Անցնել չի ըլում: Բոթում են դես, բոթում են դես— չեն թողնում մի զրանց համեմ: Վերջը, աչքս զինվորների խշտիկների վրա, վոր նրանց չկորցնեմ. գնացի մի կերպով գնացի հասա ենտեղ, վոր վերջին բոնավորին վագոն՝ են նստացնում, նրա յետելից ել զինվորները՝ հրացաները ձեռներին, հրացանների ծերին խշտիկներ:

Եղ վոր տեսա, սիրտս մի ուրիշ տեսակ ելավ: «Վանց թէ,—ասում եմ, —ենպես պիտի տանեն, վոր վերջին անգամ իմ երեխին չտեսնեմ: Զե, ինչ ել ըլի, —ասում եմ, —պետք ե նրա խոսեմ, թեկուզ եղ խշտիկներից մինը սիրեն, թեկուզ, մինչե անգամ պոեզի տակը քցեն»...

Մտածեցի եսպես ու վագոնի դեմը կանգնած՝ ձեն տվի:

— Վիկտոր, Վիկտոր ջան...

Լավ եր, զինվորները չհասկացան՝ ում եմ գոռում—ձեն տվի իսկ Վիկտորը, ինչպես եղավ, չգիղեմ, ձենս լսեց, ու վագոնի ալուսկից:

— Մայրիկ, —ասում ե, —դժւ յես: Մնաս բարով:

— Յես եմ, Վիկտոր ջան. քեզ համար պաշար ու փոխնորդ եմ բերել:

Ասում եմ ու ձեռիս կապոցը բարձրացնում:

Խոսքի կեսը գեռ բերանումս, բանտի մարդկանցից մինը մոտեցավ, թևս բանեց ու բոթում ե.

— Բոնավորի հետ խոսել չի կարելի, —ասում ե. — Հեռացիր, հեռացիր...

Են կողմից մյուսները ու նրանց մեծը՝

— Հեռացրու, հեռացրու, —ասում են, — չի կարելի:

— Ի՞նչու չի կարելի, —ասում եմ. — Իմ աղջկանը մուր եք տանում՝ անաստվածներ: Իմ աղջիկը բալշեիկ չի, իմ աղջիկը...

Ասում եմ, գոռում ու ելի առաջ եմ ուզում զնալ:

Զեն թողնում:

Իսկ Վիկտորը վագոնից:

— Մայրիկ, —ասում ե, — հանգիստ կաց: Եղ լրբերի հետ մի խոսի: Յես բալշեիկ եմ, թնդ ինչ ուզում են՝ անեն:

Ենտեղից մյուս տղերքը՝ Վիկտորի ընկերները՝
— Մայրիկ, գնա տուն, մայրիկ հանդիսատ կաց...

Հեշտ ե ասել՝ «հանդիսատ կաց»։ Սիրտս կրակ ե ընկել, նրանք
«հանդիսատ կաց»։ Գոռում եմ ու ուզում եմ առաջ գնամ։ Ժողովուրդն ել հավաքվել, կիտվել ե ձենիս վրա։ Մարդիկ զլուխները
վագոններից հանել, մտիկ են անում ու, ով դիտի, մտածում են՝
«Ես ինչ դարաչի կնիկ ե»։ Բայց ինձ համար—հէչ։ Մահն աչքիս
տակն եմ առել. ել մարդ. մարդթ չեմ հարցնում—գոռում եմ, վոր-
թողնեն...

Բայց ինչ արի—ել չկարացի առաջ գնամ։ Վրա յերեք գանգը
տվին։ Մարդիկ ելի իրար դիմով դիպան։ Պոեզը շարժվեց։ Մին ել
Վիկտորը ձեն տվեց.

— Մնաս բարով, մայրիկ։

Ու հենց պոեզը շարժվեց, նրանք՝ Վիկտորն ու ընկերները
յերգեցին ելի իրանց յերգը։ Յես չկարացի համբերեմ. վազում եմ
պոեզի յետևից ու ձեն տալի.

Վիկտոր, Վիկտոր...

Պոեզը գնում ե, յես վազում եմ, պոեզը գնում ե, յես վա-
զում եմ...

2.

Երևան տանելուց հետո երկույիւրեք շաբաթ անցավ՝ Վիկտո-
րից նամակ չկար։ Յես ել անհսնդիստ կնիկ—ինձ ուտում եմ. զի-
շերները չեմ կարում քնիմ։ Ամեն որ նամակ բերողին հարցնում
եմ. «Անստ Դանելյանց, նամակ չկամ»։ «Չե»։ Ու ինդրվում եմ, վոր
յեթե նամակ ըլի ու յեթե տանը չըլեմ—լուսամուտի կոտրած տե-
ղով քցի նեքս։ Չեյի ուզում իմ նամակը բանը լիզինկի կամ նրա
աղջկերանց ձեռն ընկնի։ Խոռվ եյինք. նրանք ինձ հետ չեյին խո-
ռում, յես՝ նրանց։ Եսպես մի ամիս ել անցավ՝ նամակ չեկավ, չպ-
ղար ու մի բան եմ մտածում—տեսնես ի՞նչ պատահեց, տարան
երեխուս զլուխը կերան, ի՞նչ ելավ։ Մարդ ել չկար սրտացավ, վոր
սիրաս բանամ, հետը խոսեմ։ Ում հետ ել խոսում եյի՝ իմ աղջր-
կանն եր վատ գուրս բերում։ Մենակ Պետրեն եր, վոր սիրտ եր
տալիս ինձ. «Նամակ չլինելը, ասում եր վոչինչ, յես հաստատ գի-
տեմ, վոր տեղ են հասել ու բոլորն ել լավ են»։ Միքանի անգամ
գնացի նրա մոտ—միշտ եսպես խոսքեր։ Ու ամեն անգամ ել, քա-
նի՛ գնում եյի մոտը, կհարցներ։ Մայրիկ յեթե կարիք ունես, մի
քաշվի, ասա. յես քու վորդին, զու իմ մերը...

Յես ամաչում եյի. շատ ել կարիք ունեյի, բայց քաշվում եյի:
ի՞նչքան չըլի ոտար տղա յե, — մտածում եմ. — յես նրանից վոնց փող

վերցնեմ... Անցավ մի ամիս, մի շաբաթ—նոր մի կտոր նամակ ե-
կավ—«Մայրիկ, յես լավ եմ, բարեվում եմ»։ Հետո յել թե՝ «Ղո-
չաղ կաց։ Իմ մասին մի մտածիւ Վիկտոր Դանելյանց»։ Եղան ել
զբում ե՝ մի մտածիւ... Ամբողջ որը ուշք ու միտքս իրա վրա յե,
իսկ նա մի մտածիւ... Դրսնից հետո մի քանի նամակ ել եկավ, ելի
եղան կարձ—յես լավ եմ դու հանգիս կաց, իմ մասին մի մտա-
ծիւ... Եսպես, հինգ թե վեց ամիս եր, հոկտեմբերն արդեն անցել
եր, նոյեմբերը եկել—յես հանդիսատ չեմ կարում նստեմ, ամեն տեղ
կարծես ինձ հուշտ են անում, թե ես ինչ մեր ե, վոր աղջկա մա-
սին չի մտածում։ «Ես ել մի բան չի, — ասում եմ ինձ ու ինձ,—
մի աղջիկ ունենաս ես աշխարհում, են ել—բանտում ու հինգ-վեց
ամիս երեսը չտեսե՞մ։ Ել ես ի՞նչ մեր եմ», մտածում եմ։

Մտածեցի, մտածեցի—մի որ ել վեր կացա գնացի Պետրեյի
մոտ, Եսպես-Եսպես։

— Ուզում եմ գնամ Երևան, Պետրե ջան, — ասում եմ. — Վիկտո-
րին տեսնեմ։

Պետրեն թե՝ վոչինչ ել չկա, — ասում ե, — զուր մի գնա։ Յես
տեղեկություն ունեմ, վոր ընկեր Վիկտորը լավ ե։

— Չե, — ասում եմ, — պետք ե գնամ իմ աշքով տեսնեմ։

— Եսկ վող, ճամփի ծախս ունես, — հարցնում ե,

— Չե, ասում եմ, — մի կարպետ ունեմ. կծախեմ—կերթամ։
Պետրեն մտածեց։

— Դե վոր եղան ե, — վոր հաստատ վորոշել ես գնալ, ել
զուր ծախս մի անի. յես քեզ կուղարկեմ իմ մոր տեղը։ Յես իրա-
վունք ունեմ, — ասում ե, — վոր իմ մերը պոեզով ծրի գնա-գա։

— Ե՞ն չնորհակալ եմ, — ասում եմ, — վորդի։ Աստված մուրազդ
կատարի։

— Վոչինչ, մայրիկ ջան, — ասում ե. — դա իմ պարաքն ե. ըն-
կեր Վիկտորին յես շատ եմ պարտական։ Բայց հիմի, — ասում ե, —
զու ես ասաւ—Երևան վոր գնաս՝ վորտեղ կամ ում տանը պըտի
իջնես։

Յես եղ մասին չեյի մտածել։ Դրուստ, ասում եմ, ես վոր ու-
զում եմ գնամ՝ վորտեղ կամ ում տանը պըտի մնամ։ Փողոցում
հանգամ կարա ապրեմ։ Ամառ ել չի, թե ասես՝ մի պատի տակ կուչ
կզամ—կանցնի։ Բայց, համարյա թե ձմեռ եր։ Նոյեմբերը։ Մեր
սարերումն արգեն ձուն եր եկել։

— Յես ել չգիտեմ, ասում եմ, Պետրե ջան, ում տունը կարող
եմ գնամ. վոչ ծանոթ ունեմ, վոչ բարեկամ։ Առաջին անգամն ե, վոր պոեզ եմ նստում։
վոր Երևան եմ գնում. Առաջին անգամն ե, վոր պոեզ եմ նստում։

Դրուստ վոր—մինչև եղ յես մեր քաղաքից դուրս չեյի եկած: Միքանի անգամ վոտով զնացել եյի Սարիգեղ՝ ուխտի: Եղքան: Մինչև եղ՝ պոեզ ել չեյի նատած: Պատահել եր դաշնիկների գնալու ժամանակ—ում լվացքը անում եյի—գնում եյի նրանց ճամփու քցում. ապրանքները, կապոցները վագոն եյի դնում. բայց տեղ դնամ—չե:

Ես վոր Պետրեն լսեց—նորից մտածեց:

— Վոչինչ—ասում ե, — անհոգ կաց: Յես քեզ մի ծանոթ կանդրխորի հետ կուղարկեմ. նրան ել կասեմ, վոր տանի քեզ իմ լավ ընկեր Արտուշի տունը, վոր հենց վակզալի մոտ ե: Նամակ ել կըտպմ, ասում ե, վոր քեզ լավ մտիկ անեն:

Եղ Արտուշն ել ճամփու ծառայող եր հենց եղանեղ՝ վակզալին մոտիկ, կազոնինի տան մեջ: Կնիկը ոռու եր, երկու ել երեխա ուներ՝ շեկլիկ մազերով, չալ աչքերով: Վոր իմացավ՝ Պետրեն ե ուղարկել ինձ—լավ ընդունեցին, պատվեցին, շնորհակալ եմ: Գիշերը քընեցի, առավոտը վեր կացա, տեսնեմ՝ եղ ոռու կնիկը սամազար ե գցել ու մի ենպես սեղան ե բաց արել վոր—մաքուր ձուն: Տսարար կնիկ եր. քիչ ու միշ ել հայերեն գիտեր: Զարթնեցի, ուզեցի վեր կենամ—չի թողնում:

— Զե, — ասում ե, — բարուելա, քնի. նիշավո. հոգնած ես:

Յես, իհարկե, չքնեցի: Բնելու համար եմ եկել: Վոտիս տակին կրակ ե վառվում. ասում եմ՝ շուտ անեմ, Վիկտորիս տեսնեմ: Մինչև վեր կացա հագնվեցի—Արտուշը եկավ: Քցովի չայ տվին, մխլով արին, մուրաբա հանեցին: Չայի վրա բոլոր հանգամանքը պատմեցի Արտուշին ու վերջն ել.

— Արտուշ ջան, — ասում եմ, — հիմի վոնց անենք. յես ուզում եմ դնամ Վիկտորիս տեսնեմ:

— Դա հեշտ ե, — ասում ե: — Կասենք հեռվից ես եկել, կիսնդրենք՝ կթողնեն:

Չայից հետո վեր կացանք գնացինք: Կասլոցը Արտուշը վերցրեց ու առաջ ընկավ. յես ել շալս առա նրա յետևից: Գնացինք: Հասանք բանտ: Խսդրեցինք, վոր ուզում ենք բռնավոր տեսնենք: Ասին՝ կարելի յե: Եղ որը, իմ բախտից տեսնելու որն եր, Հարցըին՝ ում եք ուզում տեսնել: Ասի՝ իմ աղջկան, Վիկտորիա Դանելյանցին: Բանտի գլխավորն եր, ինչ—կանչեց ծառայողներից մեկին, զե՝ Վիկտորիա Դանելյանցին բերեք: Ինձ ել Արտուշի հետ տարան մի ուրիշ սենյակ, վոր հետը խոսեմ: Քիչ հետո հեռվի կարիգորից լսեցի, թե ինչպես կանչեցին. «Վիկտոր Դանելյանց», Վախից թե ինչից, ել չգիտեմ, սիրտս ենպես ե քցում, վոնց վոր բռնած ծիտ: Ինչ հալի

պըտի տեսնեմ Վիկտորիս, մտածում եմ, տեսնես առո՞ղջ ե հագին շոր կա:

Եսպես մտածում եմ, մեկ ել տեսնեմ մի աղջիկ՝ տղամարդու պինջակ հագած, եկավ երկաթների են կողմը կանգնեց: Յես չձանաչեցի ով ե, երեսին ոանգ չկար. վիզը բարակել, տանձի կոթ եր գառել. միայն աչքերն եյին յերեսին պսպղում, մեկ ել կտրած մազերն եյին ուսերիցը հետ: Եկավ. նա նայեց ինձ, յես՝ նրան: Ինչպես երկում ե, նա ել ինձ չձանաչեց. չեր սպասում, թե եկած կլիմ երկան: Նոր դա:

— Մայրիկ, — ասում ե, — դո՞ւ յես:

Սիրտս թուլացավ: Վեց ամիս եր՝ ձենը չեյի լսել:

— Յես եմ, Վիկտոր ջան...

Ասի ու լաց եղա: Ել չկարացի ինձ պահեմ:

— Դե, լավ, — ասում ե. — լաց լինելու չես եկել: Ասա մի տեսնեմ՝ ինչո՞ւ յես եկել ի՞նչ կա:

— Քեզ տեսնելու, — ասում եմ, — Վիկտոր ջան:

— Ե՞ս, — ասում ե, — դրա համար ել ծախս ես արել, հսուել եսսեղ:

Խոսեցինք եսպես-ենպես, ու յես հարցնում եմ.

— Բա յե՞րբ պըտի աղատվես, Վիկտոր ջան. — յե՞րբ պըտի դաս տուն:

— Շուտով, — ասում ե, — մայրիկ, շուտով բոլորս ել կազավենք:

Ասում ե ու նայում դարառլի կողմը, վոր կանգնած՝ լսում ե մեզ:

Յես ուրախացա:

— Վանց, — ասում եմ, ուրեմն գործը քննել են:

— Ո՞վ պըտի մեր գործը քննի—ասում ե. — Մենք կազատվենք առանց քննիչի յել: Մեր ընկերները կգան շուտով, — ասում ե, — կազատեն:

Դա վոր եսպես սկսեց—դարառլի են կողմից, թե՝ «եղ մասին չի կարելի, գործի մասին խոսեցեք, որիորդ»:

Խոսեցինք միքիչ ել, յես «մնաս բարով» արի՝ դուրս եկա, վոր եքսի որը ճամփա ընկնեմ: Բայց տուն հասա թե չե—խաբար եկավ, վոր թուրքերն Ալեքսանդրապոլը գրավել են, ճամփեն փակվել ե:

Այ քեզ խայտառակություն: Ի՞նչ անեմ հիմի... ել ճար չկար: Պետք ե մնայի...

Ու մնացի երկան, Արտուշի տանը: Մտածում եմ—սա ինչ վատ բան եղավ, եկա ես եեղճ մարդկանց տանը բես դառա: Բայց Արտուշը թե՝

— Վոշինչ, մայրիկ,—ասում ե,— մի մտածի. մեր մերն ես քաշվիլ մի... Մի կտոր հաց կդանենք...
Կնիկն ել մի կողմից.

— Նիչավո, բարուշկա, նիչավո...

Եսպես անցավ միքանի որ: Դարդ եմ անում, տեսնես կազմավի Վիկտորը, կամ յերբ կազմավի, իսկ Արտուշը ինձ սիրու եր տալիս, թե շատ չի քաշի. շուտոնվ, շուտոնվ...

Մի որ ել դա եկավ թե՝—Մայրիկ, վեր կաց, գնանք բանտ:

— Ի՞նչ կա, Արտուշ ջան:

— Մեր ընկերները եսոր բանտից դուրս են գալիս: Վիկտորն ել դրանց հետ:

— Վոնց թե, — զարմանում եմ:

— Բա, — ասում ե, — կառավարությունը փոխվեց: Իշխանությունը հիմի մեր ձեռին ե...

Նոր իմանամ, վոր ես Արտուշն ել բայլշիկլ ե, Պետրեյի ընկերը:

Գնացինք: Են, ինչ վոր յես տեսա—պատմել չի ըլի: Ի՞նչ ուրախություն եր: Հասանք ենտեղ, վոր մարդիկ հավաքվել-կիսվել են բանտի դռանը: Դրոշակներնվ, բաննվ: Ու մեկը դրանց միջից մի քարի վրա բարձրացավ ճառ եր ասում բանտից դուրս եկածներին.

— Ընկերներ, դուք շատ չարչարվեցիք...

Եսպես-ենալես...

Դա խոսում ե, յես՝ աչքերս չորս արած՝ Վիկտորին եմ ման գալիս: Բայց եղքան մարդու մեջ Վիկտոր կդանվի: — Դես նայեցի, զեն սայեցի—չկա՞: Մին ել—յերբ խոսողը վերջացրեց—նրա տեղը բարձրացավ Վիկտորը՝ ելի տղամարդու պիհնջակը. հադին, կտրած մազերը բաց ուսերին կախ: Վեր կացավ ու՝

— Կատարվեց, — ասում ե. — Են, ինչ վոր մենք սպասում եյինք...
Ու խոսեց, խոսեց...

Դա խոսում ե—յես լաց եմ ըլում, դա խոսում ե—յես լաց եմ ըլում: Ես անդամ ուրիշ տեսակ: Լաց եմ ըլում ուրախությունից...
Դա վոր խոսեց պրծավ, յես խալիս միջով, զոռով մոտեցա

դրան ու թեր բոնեցի:

— Վիկտոր:

— Վայ, մայրիկ—ասում ե:

— Յես եմ, Վիկտոր ջան:

Բոնեցինք իրար, համբուրվեցինք, ու յես լաց եմ ըլում: Արտասունքս չի կտրվում: Լաց եմ ըլում ուրախությունից...

—

— Յասկանում եր արդյոք զրադարանի աղջկա մայրը իր աղջկա գործունելության իմաստը:

— Ի՞նչ նպատակով եյին բանտարկված բայլշեվիկներն իրենց համար բերված ուտելիքները թափել փողոց:

— Ի՞նչն եր դրդում Պետրեյին, Արտուշին յեվ նրա կնոջը այդքան զերմ վերաբերմունք ցուց տալու դեպի զրադարանի աղջկա մայրը:

ԱԿՍԵԼ ԲՈԿՈՒՆՑ

ՎԱՆԴՈՒՆՑ ԲԱԴԻՆ

Գյուղում բոլորն ել ճանաչում եյին Վանդունց Բադուն, գիտեյին, վոր նրա տունը վերի հանդը տանող ճամպի վրա յե, ջաղացներին չհասած, Աթանանց մեծ ընկուզենու մոտ:

Բադին գյուղի տավարածն եր: Ամենից կանուխ նա յեր զարթնում, նրա ձայնն եր հնչում գյուղի փողոցներում:

— Տավարը տարա հեյ, ա խալիսը, յետանաք վոչ...

Գյուղացիք այնքան եյին վարժ նրա կանչին, վորքան աքլորի կանչին: Շատ անգամ ժամանակ վորոշելու համար ասում եյին, թե՝

— Բադին հալա տավարը տարել չեր, վոր յես հանդումն եյի, — կամ թե՝

— Հեսց Բադին մի բերան կանչեց թե չե, վեր թռա տեղից:

Բադին ինքն ել չեր հիշում, թե քանի տարվա տավարածն եր: Նա հենց այն գիտեր, վոր խոլերի տարին իրեն զինվոր եյին կանչել մնացել եր գյուղում: Այն ժամանակ Աթանանց ընկուզենու մոտ ջաղաց դեռ չկար:

Վոչվոք գյուղի հանդն ու սարը Բադուց լավ չգիտեր: Անթիվ անգամ նա չափչփել եր նախրի հետ սար ու ձոր: Նախրին ել եր լավ ճանաչում, գիտեր, թե այս կովն ումն ե, թե չալ կովը յերը ե սուրահ մնացեր, քանի ծին ունի, թե Քարամենց յեկան պոզն ինչու յե կոտրած:

Ամեն անգամ նախրը գյուղից քշելիս հերիք եր մի անգամ նայեր, վոր կարողանար վորոշել, թե նախրից վոր կովն ե պակաս:

Յերբ յերեկոյան նախրը գյուղ եր գառնում, աղբյուրի մոտով անցնելիս Բադին եր, վոր հարս ու աղջիկներին կշամբում եր, թե՝

— Պղնձաքարի սարում ավելուկը կանաչել ա, Սանդ աղբյուրի մոտ մոշը հասել...

Նախրը գյուղում ցրելուց հետո, իրինապահին, Բադին փայտին հենած մեկ ել յետ եր գառնում տուն, Աթանանց մեծ ընկուզենու մոտ:

Տանը կինն եր և միակ վորդին, վոր հասնում եր ջահել տուն-
կի պես:

Բաղու կինը, իր պես զառամած մի պառավ, ընթրիք յեփելու
ժամանակը գիտեր: Տարիների ընթացքում ամեն ինչ ամեն որ կըր-
կընվել եր այնքան նման իրար, վոր շարժումները մեքենայացել ելին:

Յերբ անիվի պես ճռչում եր դուռը, և ներս եր մտնում Բա-
ղին, մահակը դնաւմ շեմքին ու հարցնում կնոջը.

— Հաթամի աղջիկ, հորթին ջրել ես...

Հաթամի աղջիկը իր կինն եր, հնուց սովորույթ ուներ նա կնոջն
այդպես կանչելու: Այդ սովորույթը մնացել եր այնպես հաստատ,
ինչպես հարևան հաստաբուն ընկուղենին:

Հաթամի աղջկա պատասխանն ել միշտ նույնն եր.

— Բա չեմ ջրել...

Հետո Բաղին բեղարած մարդու տնքոցով շեմքի մոտ տրեխներն
եր հանում, թափ տալիս և շտկում առավոտվա համար: Իսկ կինը
ոջախին եր նայում կամ ճրագի պատրույթը շտկում և մաքուր ավ-
լած գետնին փոռում թաղիքը հնամմաշ:

Ապա համեստ ընթրիք՝ պանիր-հաց, յեթե լիներ՝ տաք կերա-
կուր, հանդից բերած կանաչեղեն, յերենն ել հարևանի ուղարկած
մի աղիզ կերակուր, վոր տարին մի մնագամ կեփվեր Բաղու ոջախում:

Բաղու վորդին՝ Հարուդը, հասել եր այնքան, վոր ողնում եր
հորը: Սակայն Բաղին չեր ուզում, վոր Հարուդը հոր փեշակը սովորի:

— Թող գրաճանանչ լինի, վոր հետո գերեզմանս չանիծի:

— Կմեծանա, կպսակեմ, տուն ու տեղ կլինի, մի փեշակի ծայր
կրոնի, հացի կտիրանա: Յես ել ծերության որերում իր ջրերն ըն-
կած կապրեմ, վոտքերս կդինջանան սար ու քոլ չսփելուց:

Նահապետական վարք ու բարք ուներ Բաղին, միամիտ եր և
արդար: Նա ուզում եր, վոր իր վորդին ել այդ ճամպով գնա, հյու-
րասեր լինի, ադամ սիրող, մեծին հարգող, գյուղամիջում շենք-շնորհ-
քով մի մարդ:

Մի անգամ ել հանդում, մի զրույցից հետո, Հարուդը հորը
հարց տվավ, թե՝

— Ապեր, եղ ինչիցն ա, վոր մեր նախրում իսանանք իննը
կով ունեն, իսկ մենք մի կով:

Բաղին ժպտաց քթի տակ:

— Բա գու նրանց թայ մարդ ես: Հերդ մի տավարած, իսկ
իսանանց ողորմած հոգի Զաքի ապերը պատվով, կայքով մարդ եր:
Գեղը վոր մի մեծավոր գար, նրանց տանը վեր կգար: Զաքի ապերը

Մովրովի ժամանակ մեղալ եր ստացել: Դե աղերքն ել խելոք են
յեղել, հոր թողած մեկը յերկու յեն արել:

Տարին բոլոր Բագի ապերը պահում եր իսանանց իննը կովը,
դրա համար ստանում մի սոմար ցորեն, յերեք գրվանքա շաքար,
վոր իրենց չեր հերիքում, և միքիչ ել փող:

Յաբուդը չեր սիրում, վոր հայրն ամեն ամիս տնետուն պը-
տում եր, տավարածի բաժին հավաքում կամ թե կոլին, մի պարկ
ուսին, ման եր գալիս կալերում և իր բաժին ցորենն առնում: Պատ-
վին եր գիպչում, յերբ հոր տեղակ ինքն եր ընկնում դռնեղուու,
հաց կամ դրամ հավաքում:

Ամեն անգամ իսանանց խանութը մտնելիս՝ միջնակ ախպերը
մի տեսակ ծաղրով ասում եր Հաբուդին:

— Ամիսը յԵրբ թամամեց, վոր յեկար.—կամ թե՝

— Քանի շաբաթ ա քո ամիսը...

Յերբեք Հաբուդը չեր կարողանում հաշիվը կանոնավոր ստա-
նալ: կամ ասում եյին, թե ստանալիք չկա, կամ ել, շատ վոր հա-
մառում եր Հաբուդը, իսանանց ախպերը բարկանում եր նրա վրա
և ասում:

— Դու ինչացն յես, հերդ կգա, նրա հետ հաշիվ կանենք:

Հաբուդը գիտեր, վոր հայրը խոնարհ մարդ ե, լեզուն կարձ:
Ինչ վոր ասեյին, համաձայն եր, մենակ թե համփա մարդկանց
խաթրին չկպչեր:

— Ունեոր են, մենք ել նրանց շվաքում կապրենք:

Այսպես եր ասում Վանդունց Բաղին, ստացած կոպեկները
տալիս Հաթամի աղջկան, վոր պահի: Մի որ պետք կգար. Հաբուդի
հարսանիք կար, ապագայում տուն-տեղ ունենալ կար:

— Համեստ ա հա, զատ չի մնացեր,—ասում եր յերենն Բա-

դին իր կնոջն ու յերկուսով կարոտով նայում եյին Հաբուդին:

— Թե սադ մնամ, յեկող աշունք հարսանիք եմ անելու:

Հաթամի աղջիկն ասում եր, վոր գյուղում սագ աղջիկ չկա,
վոր պիտի հարևան գյուղից աղջիկ ուզի, տրանջում եր, թե բան ու
գործից աղատ չի լինում, վոր մի գնա, տեսնի՛ ում աղջիկն ե
հարմար:

— Դու վոր կարենաս, ես աշունք քոչը սարովն անցնելիս մի-
քիչ բուրդ առ, մանեմ, համ ել քորից մի ձեռք տեղաշոր կապեմ:

Յերկու պառակ խելք-խելքի մտածում եյին գալքիք մասին,
յերբ տանն աղմուկ կլինի, յեկող-գնացող, խարիսուլ խրճիթը կլսի
մանկական ուրախ ճիչ:

Յերենն ել զրույցում ելին, թե ինչ արհեստի գնեն Հաբուդին:

Մայրն ուղում եր, վոր նա գյուղական գրադիր դառնա կամ ծառայի պրիստավի մոտ, իսկ Բաղին արհեստի յեր կողմակից:

— Հարամ հացը թող իմ սուփրին չլինի, —ասում երնա: Վանդունց Բաղին գիտեր, վոր պիսիրը կաշառք ե ուտում, գյուղում նրանից շատ են դժգոհ, չեր ուղում, վոր իր մահից հետո իրեն անիծեն:

Հաբուդն ել համաձայն եր հոր հետ, նա յել չեր սիրում պիտիր Ավանին, վոր վորսկան շան պես հոտոտում եր, թե վորտեղից կարող ե սլոկեր յերկու խոսք գրելու համար մի հավ առնել:

Պիտիր Ավանը իսանանց հետ շատ մոտ եր, վնալգալ եր անում միշտ և շատ անգամ ել հենց նրանց խանութում եր գործերը դրստում:

Բայց Հաբուդը թագուն մի ուրիշ միտք եր անում. վնալ Բագու, արհեստ սովորել: Շատ անգամ եր հանգ անում հորից ինդրելու, բայց բերանը չեր զորում մի բան ասելու:

Նա ուղում եր աշխարհ տեսներ ինչպես ասում եր նրա ընկերը, վոր Բագում եր աշխատել և հիվանդ լինելու համար տուն յեկել: Նրանք յերկուսով նստում եյին ժամերով տան կտուրին, ընկերը պատմում եր, թե ինչքան ուժով ե մաշինը, թե մի բան կա, վոր դարձնես, ճրագը կվառես առանց կրակի, թե ինչպես են նավթ հանում հորից և ել հազար ու մի բան:

Հաբուդը լուսմ եր ուշագիր, զգում մի անգուստ ցանկություն՝ տեսնել այդ ամենը: Բայց հենց վոր տուն եր գալիս, հանգչում եր կրակը բորբոք, հաշտվում եր գյուղում արհեստ սովորելու մտքին:

Մի որ ել հետ միասին դուրգար Դավիթի մոտ գնացին՝ խերով-բարով Հաբուդին նրա մոտ թողնելու համար: Ուստան միքիչ չեմ ու չում արագ, վերջը խոստացավ յերկու տարում արհեստին վարժեցնել:

Իրիկունն ուստան յեկավ Վանդունց տուն, կերան, խմեցին, դարդ դարդի տիֆն և այդ որից դարձան սերտ բարեկամ:

... Կես գիշերից անց եր. չեր քնել վոչ Բաղին, վոչ Հաթամի աղջիկը: Միտք եյին անում եղուցվա մասին գոհ ու բախտավոր: Նրանց կողքին մուշ-մուշ քնել եր Հաբուդը՝ նեղ որերի տալավենը միակ:

Մի առավոտ ել գյուղում անսովոր իրարանցում ընկավ: Գղիրը կտուրից կտուր կանչում եր զիլ ձայնով.

— Ա խալիը, հեյ, թագավորի հրաման ա, ով վոր սալգաթ ա ելել, պտի հավաքիլի քաղաքում, կոփ ա Գերմանու հետ...

Քաղաքից յեկողները պատմում եյին, վոր ամեն տեղ մեծ թղթեր կա պատերին փակցրած, փողոցներում մարդիկ իրար տեսնելիս կովի մասին են խոսում, շատ զինվոր պիտի հավաքեն, կոփ վը շատ տերությունների մեջ ե, աշխարհոս խառնվելու յե իրոր:

Գյուղացիք խմբերով հավաքում եյին գուքանի առաջ. գրագետ մեկը սկսում եր լրագիր կարդալ, լսում եր գուղը անծանոթ անուններ ու վայրեր, քաղաքներ ու տերություններ և բնագդով զգում, վոր թանգություն պիտի լինի, մեծ կոտորած ու զրկանք:

Իսանանց տանուտեր ախտերն ասում եր, վոր կոփը ոգուտ ե, ժողովրդին, վոր ուռափի թագավորի թախտը հաստատ ե, ժողովուրդը շատ և, վոր շուտով Գերմանի թագավորը հաղթվելու յե:

— Սրան Ռուսեթ են ասում, մի տուտը հեն ա Սիբիր, մեկելը Հնդկաստան. բա իսկի կարա դիմանա...

Ալեորներից վոմանք պատմում եյին, վոր «Յեփրեմերդին» այդպես ե ասում, գրված ե, վոր յոթ տերություն իրար պիտի խառնը լինին, հացը պիտի թանգանա, թագավորի խարջը շատանա:

Ամենից շատ պիտիրն եր ուրախ: Նրա շուրջը ստեղծվում եր զյուղի զուբանների տղերքից գեղերախինների մի խմբակ: Նրանք կաշառում եյին, չափաբերականը կեղծում, իրենց տեղ ուրիշին ուղարկում, վոր իրենք գյուղում մնան, ինչ ուղեն անեն: Մանր հաշվների ու հին վրեժների հատուցման լայն ասպարեզ եր բացվել գյուղում:

Քաղաքի պատերից կպցրած թղթերը հուզել եյին ճահիճն այն խաղաղ, ուր ամեն ինչ առաջ մերվել եր, և կարծես թե զայլի հետ գառն եր ապրում:

Հաբուդն արդեն նկատում եր գյուղում յեղած փոփոխությունը: Իսանանց գուքանում ներկերը թանգացել եյին, ճոթ ու կտորը պակաս եր յերկում, իսկ շաքարը կրակի գին ուներ:

Իսանանց տղերքը ճոթը պահում եյին իրենց տանը, վոր հետո ծախեն:

— Ճամպեքը փակվել ա, ես ներկերը Գերմանու ապրանք ա, ել յերբ կճարես դու եսովես ապրանք:

Հաբուդի աչքի գրողը գյուղի պիտիրն եր: Մի անգամ պիտիրը Խաչումենց հարսին, վոր գնացել եր ամուսնուն նամակ գրել տառ, — փիս խոսք եր ասել, ձեռ տվել, հարսն ել լացակումած հեռացել եր նրա մոտից:

Գյուղում այդ լուրն իսկույն տարածվեց: Միքանի հոգի ուղում եյին պիտիրի հախից զալ, բայց տանուտերը սպառնաց:

— Սիրիր կքշեմ նրան, ով կհամարձակվի գեղում խառնակչում թյուն անել: Թուք գիտեք, թե ինչ տարի յա ես տարին:

Պիսիրը Հաբուդի աչքում ել ավելի ընկափ, դարձավ գեղի վատ մարդը, գեղի արյուն խմողը: Իսկ իսանանց գուքանը նա ել չեր գնում, տանն ել շաքարով թեյ չեյին խմում:

Իսանանց միծ ախպերն ասել եր, թե զյուղից տավարածի տղան ել վոր սալդաթ գնա, ամեն ինչ լավ կլինի:

Վանդունց Բաղին համդից եր խոսում, թե վանքի ձորում խոտը թագնել ե, ազին ծաղիկ կովը պիտի ծնի, վերի համդի կամուրջը փլվել ե: Յերեմի ել պատերազմի մասին Հաբուդից եր հարցնում:

— Հաբուդ, բա եղ գերմանը խաչապաշտ չի:

— Խաչապաշտ ա:

— Բա վհնց ա միացել թուրքի հետ: Աստուծ դա ընդունել չի:

* Հաբուդը ժպտում եր հոր միամտության վրա, մտաբերում իսանանց տղոցը, պիսիրին և նրանց, վորոնք հեռավոր դիրքերում կըռվում են, վոտ ու ձեռից զրկվում, ցրտից սառչում, թագավորից խաչ ստանում:

Ինչու համար այդպես յեղափ: Ինչու իսանանց անից մի զինվոր չկա, իսկ Խաչումենց Բախշու յերեք տղան ել կովում են: Ինչու յե թանգանում շաքարը, են ինչու քաղաքում ժողովներ են անում, փող հավաքում, են վհնց յեղափ, վոր վարժապետ Մինասը խումբ կազմեց, գնաց վան, իսկ գաղթական ժողովուրդը կոտորվում եր սովից, ցրտից:

Մտածում եր Հաբուդը, և նրա անտաշ միաքը մեծ ցավով ձգնում եր պատասխան տալ, հաղթել արգելքներին, պահված գաղտնիների դուները բանալ:

Մի որ ել գգիր Զաքին յեկավ Վանդունց Բաղու տունը՝ Աթանանց մեծ ընկուզենու տակ...

— Բարի որ, Հաթամի աղջիկ...

— Հը՛, Զաքի, խեր ըլնի:

— Խեր ա, բա խեր չի. տղադ վոր դա, ասի եղուց քաղաք գնա սալդաթ են կանչում:

Ասես մի մեծ քարով խփեցին Հաթամի աղջկա գլխին. ծնկները դողացին, աչքերը շաշվեց, ու հենց դուն շեմքին վեր ընկափ:

Իրիկունը տավարածի տունը սպատան եր նման. վոչ հաց, վոչ սովորական զրույց: Բաղին ոջախի մոտ նստել թրջած արեխներն եր չորացնում ու միտք անում:

— Բա վոնց ա լինելու...

Բաղին ամեն ինչ կարող եր սպասել, բայց այդ բանին՝ յերբեք: Հաթամի աղջիկը ցնորվածի պես եր: Նստել եր Հաբուդի մոտ, նայում եր նրան, նայում անկշտում, անլեզու անասունի պես ու միտք անում: Հաբուդը պառկել եր խսիրի վրա, մտածում եր, թե ինչպես պիտի ապրեն ալեսը հայրն ու մայրը, յեթե ինքը հեռանաւ:

Այդ իրիկուն ամբողջ գեղի ցանք ասես թառել եր Վանդունց տան գլխին: Մաքերը—ծանը, անպատասխան, վոր վորոճում եյին յերեքն ել խրճիթի խավարի մեջ, տավլտկում տեղաշորի մեջ, մեկը՝ տնքում, մյուսը հառաչում ու լալիս, մեղմ կողման հեծկլտուքով:

Մյուս որը Հաբուդը առավոտ կանուխ քաղաք գնաց: Հաթամի աղջիկը այդ որը մոռացավ Բաղու թաշկինակի մեջ հաց կապել: Բաղին ել չեր նայում, թե տավլարը ուր ե գնում, կուշտ ե թե սոված: Նա միայն վորդու մասին եր մտածում:

— Յարաբ չափսում պիտի գա թե վոչ...

Կար մի բողե, վոր Բաղին ցանկացավ Հաբուդին կաղ կամ կոնստանտինել, վոր տանը մնար. բայց հետո ինքն ել սոսկաց այդ մաքից և հուսահատ աչքերը յերկինք ուղղեց:

— Աստված, քո ստեղծած խեղճն եմ, զու մի ճար արա:

Վանդունց Բաղին մատաղ խոստացավ, յեթե վորդին զորակոչից ազատվեր: Բայց այդպես չեղափ: Հաբուդը չափսում յեկավ, ու նրան ել գրեցին նորակոչների ցանկում:

Ըսկերների հետ տուն յեկավ Հաբուդը, վոր մյուսորը նորից քաղաք վերագանակ, իսկ այնտեղից ել՝ ուր ուղարկեն: Հաբուդն ուրախ եր, վոր նա քաղաքներ պիտի տեսնի, լեզուն սովորի: Բայց հենց վոր աչքի առաջ կանգնում եյին պառավ ծնողները, ուրախությունն իսկույն չքանում եր, վորպես թեթև շամանդադ:

Զափսի ժամանակ իսանանց մեծ ախպերն ու պիսիրն իրար հետ փսփսում եյին: Զլինի թե նրանք մի բան խաղացին նրա գրլին: Յեվ դառն ատելությունը ալիքի պես բարձրացավ նրա հոգում գեպի պիսիրը, վոր Ոհանի հարսին ձեռք եր տվել, վոր նամակ գրելու համար հավ ու ճուտ եր ուղում, գեպի իսանանք և նրանց պես համփա մարդիկ:

Զար լուրը շուտ եր տուն հասել: Հաթամի աղջիկը շիվար, ձեռքը ծոցին, վորդուց չեր հեռանում, ձեռքը մի բանի չեր կարողանում տալ, դատարկ եր թվում չորս կողմը, ասես հեղեղը քշել, տարել եր ամեն ինչ...

Հապա Հաբուդի հարսանիքը:

— Հաբուդ, կոիվը հեռու յա մեր մահալից, — հազիվ գորեց հարցնել մայրը:

Վորդին ժպտաց. ի՞նչ ասեր: Ի՞նչ գիտեր մայրը և ի՞նչպես հասկանար նա, վոր աշխարհը խառնվել ե իրար, ու վորդին հազար վերստից ավելի պիտի գնա, անցնի քաղաքներ ու համնի այնտեղ, ուր թոփի ձենից մարդու ականջ ե խլանում:

Իրիկունը Բաղին տուն յեկավ: Նա իսկույն հասկացավ ու միայն կարողացավ ասել.

— Հաբուդ, քե մատաղ, բա մենք...

Կեսպիշերից անց եր, վոչվոք չեր քնել: Հաթամի աղջիկը վորդու կապոցն եր պատրաստում՝ գուլպա ու թաշկինակը միրգ ու գաթա: Ամեն մի իր ձեռք առնելիս ջգիտեր, թե ուր դնի. արցունք եր, վարար ջրի պես հոսում եր:

Բաղին ինքն իրեն սիրտ եր տալիս.

— Թագավորի ծառայություն ա, ննար չկա: Թագավորի հողից ուր պիտի փախչես:

— Հաբուդ, քեզ լավ պահի, շատ ջանելություն չանես: Ոտար յերկիր ա, կոիվ ա, ով ա զիտում ինչ կարող ա պատահի: Ուշդ տանը պահի, նամակ ուղարկի. հալբաթ մի տեղով մեզ մի լուս կհամնի:

Ու ինքն իրեն, քթի տակ խոսում եր Բաղին՝ ոջախի մոտ, գըլուխը կախ, թաց տրեխները ձեռին: Հազար ու մի միտք գալիսանցնում եր նրա գլխով, սրաի. խորից թառանչ եր յեխում, և անարցունք աչքերը ճպճպում եյին, վորպես մարմբուն ճրագներ:

Մյուս որը Հաբուդը գնաց:

Տարան, ճամպա զրին մինչև զյուղի վերջը, ասացին, լաց յեղան, համբուրեցին հազար անգամ ու մենակ վերադարձան իրենց խարխուլ խրճիթը՝ Աթանանց մեծ ընկուզենու մոտ:

Գյուղի տափարն այդ որն առաջին անգամ ուշ գնաց հանդ: Տափարն ել եր մոլորվեր, ցաք ու ցրիվ բառաչում եր Վանդունց տան մոտերքում:

* *

Անցան ամիսներ:

Հաբուդից նամտէ եր գալիս: Նրան ճակատ եյին ուղարկել, մի անգամ վիրավորվել եր վոտից, պառկել եր լազարեթում, լավացել ու նորից գիրքերն եյին ճամպել:

Նամակների մեջ Հաբուդը գանգատվում եր: Գրում եր, վոր զորքը սոված ե, շոր չունեն, ամեն շաբաթ մի զիրքից մյուսն են ուղարկում, հաշտության վոչ մի լուր չկա: Մի անգամ ել նա զրել եր, թե շուտով արձակուրդ ե ստանալու, տուն պիտի զա:

Ծնողների ուրախությունն անսահման եր: Հաթամի աղջիկն այդ նամակը ստանալու մյուս որը գնաց իսանանց արտը քաղնանելու: Նամակն իսանանք եյին ստանում, նրանք ել կարդում եյին ու պատասխան գրում:

Հաթամի աղջիկը դրա փոխարեն յերկու որ առավոտից իրիկուն անվարձ քաղնանեց, իսանանց արտը:

Հաբուդը գրում եր, թե թանգություն ե, զորքը միքանի տեղ կոտրատել ե խանութները: Ել ուրիշ շատ բան եր գրել նա, հայրը չեր հասկանում, թե ինչու յե այդպես: Պիսիրն ու իսանանց մեծ ախպերը զայրանում եյին: Մի նամակի մեջ ել Հաբուդը գրել եր, թե ապեր, «մենք ինչու պիտի կովենք գերմանացու հետ, մեր ի՞նչ հաշիվ ա»:

— Հայվան, քեզ սալդաթ են ուղարկել, ել գլխիդ ի՞նչ ես զոռտալիս, — ասաց իսանանց տղան նամակը կարդալիս:

Մի որ ել քաղաքից լուր բերին, թե հեռագիր ե ստացվել վոր զորքը հեղափոխություն ե զցել, թագավորին թախտից վեր են բերել: Գյուղը նախ չավատաց. տանուտերը, պիսիրը, նույնիսկ գզիր Զաքին գեղամիջում բոլորին ել ասում եյին թե այդ լուրը սուտ եւ իսկ աեր-Գեորգը, վոր սազմոս ու շարական անգիր գիտեր, համոզում եր, թե առանց չոբան վոչխար չի լինի, ժողովրդին մի զուխ ե հարկավոր, խառնակիչ մարդիկ են այդ լուրերը տարածում, զերմանի ագենտները:

Մի յերկու որ անց քաղաքից յերկու մարդ յեկան, թեերին կարմիր շորի մի կտոր կապած: Մեկը վարժապետ Մինասն եր, միշուսն ել մի ջայել տղա: Վարժապետ Մինասին գյուղացիք ճանաչում եյին:

Վարժապետն սկսեց ճառ ասել, թե ել թագավոր չկա, հիմա ազատություն ե, հողը պիտի զյուղացուն տալ, ժողովուրդը սոված ե, դրա համար ել պիտի ջարդել զերմանացուն, կոիվ մինչև վերջ: Զահել տղան ել խոսեց, հետո ընտրություն արին:

Իսանանց մեծ տղան, Խաչումենց Ոհանը և տանուտերը դառան կոմիտե: Ժողովրդից մի մարդ ասաց, թե տանուտերին չեն ուղում, արնախում մարդ ե, բայց զզիր Զաքին աչքերը նրա վրա այնպես վոլորեց, վոր խեղճի լեղին ցամաքեց: Տեր Գեորգը վկայեց, վոր տանուտերը խեղճով մարդ ե, ժողովրդին կարեկից ու հոգատար:

Ժողովից հետո նոր կոմիտեն, տերտերը, վարժապետ Մինասը, Զահել տղան, պիսիրը, զզիր Զաքին և ելի ուրիշ միքանի հոգի Իսանանց տանը ճաշ արին, կերան-խմեցին, յերեկոյան դեմ վարժապետն ու ջահել տղան միքիչ կոնծած՝ վերադարձան քաղաք:

Հաթամի աղջկն այդ ամենը պատմեց ամուսնուն: Վանդունց Բաղին նախ չհավատաց, թե ջրի խաբար ե, ապա ինքն իրեն սիրա տալ սկսեց:

— Կարող ա կռվին վերջ տան, Հաբուդը տուն գա:

Հաթամի աղջկը բան չեր հասկանում այդ ամենից: Նրա ականջին եր համում անկապ հաբարներ, լսում եր անհասկանալի խոսքեր: Քաղաքի մեծավորին բոնել են, բանտ նստացրել, հիմա յել նորից պիտի սալդաթ հավաքեն. մահ կամ ազատություն: Թագավոր չկա, համա կոփվ կա:

Գյուղի կոմիտեն գործի յեր անցել: Իսանանք իրենց խանութի ապրանքն սկսել եյին ավելի թանգ ծախել, վոսկի եյին գանձում, պարագի դիմաց ցորեն ու պանիր հավաքում, ուղարկում քաղաք:

Վարժապետ Մինասը մի անգամ ել յեկավ, ժողով արեց, խոսեց Դաշնակցության մասին, մենշևկին ուշունց տվավ և ասաց, թե ով դաշնակցական չի, նու հայ չի: Գեղը տեղով մի ձայն տվավ, գրագետները մի թուղթ ստորագրեցին, վոր պիսիրն ու վարժապետն եյին կազմել:

Վարժապետ Մինասն ասաց, վոր շուտով գալու յեն հողերը չափեն, հարուստից խլեն, աղքատին տան, չունեվորին ճող ու կտոր են տալու, ամեն գյուղում մի կապերատիվ պիտի բացվի, ամեն գյուղում յերկու բժիշկ յերեք ուսուցիչ պիտի լինի,—միայն թե հարկավոր ե ձայն տալ դաշնակցականի ցուցակին, վոր գնան, մեր ցավերը պաշտպանեն ամենամեծ ժողովում, վորտեղ Ռուսաստանի բոլոր ազգերը պիտի հավաքվեն:

Գյուղացիք արին այն, ինչ վոր ասում եր վարժապետ Մինասը: Նրանք ավելի շուտ իսանանց մեծ ախտորն եյին լսում, ուշադիր նրա աչքերին նայում, ով կարար նրա գեմ խոսել, նրա խոսքից դուրս գալ: Մեկը նրան ցորեն եր պարտ, մյուսը միքանի արշին կտոր պիտի առներ խանութից, մի գրվանքա շաքար,—ով եր դժվել նրան հակառակ գնար:

Հաբուդից շարունակ նամակ եր գալիս: Նա ուրախ եր, վոր թագավոր ել չկա, բայց գրում եր, թե այդ քիչ ե, պիտի այնպես անել, վոր ամեն մարդ իր հալալ քրտինքն ուտի: Հաբուդն ուրիշ շատ բան եր գրում նամակում, բայց իսանանց տղան հորը չեր կարգում:

— Տղադ սարսաղացել ա, Բագի ապեր, խելքը գլխից թռել ա:

Վանդունց Բագին յերեք չեր հավատա, թե Հաբուդը խելքը տանուլ կտա: Նա գիտեր, վոր վորդին աչքաբաց տղա յե, ով գիտե, ինչ հաշիվ ուներ իսանանց տղան Հաբուդի հետ: Նա հենց են գըլ խից նրան չեր սիրում:

Հաբուդը գրում եր, վոր ինքը մի պոլկի կոմիտե յե գառել, վոր իրենց պոլկն ել կոփվ չի ուզում: Իրիկունը գալիս եր տուն, Հաթամի աղջկա հետ խոսում, հարցուփորձ անում, թե գյուղում ի՞նչ են ասում: Մի իրիկուն ել Բաղին թե՝

— Հաթամի աղջկի, լսել ես, վոր ասում են, թե մեր Հաբուդը բալշեիկ ա դառել:

— Ի՞նչ...

— Բալշեիկ. Իսանանց տղան եր ասում: Բալշեիկն են ա ելի, վոր ուզում ա հարուստ քյասիր խանի իրար, հավասարացնի:

Սայավ մի ամիս ել:

Մի որ ել Հաբուդը տուն յեկավ, առանց առաջուց հայտնելու: Հենց յերեկոյան դեմ, յերեք մութ եր արդեն, ներս մտավ նա, շինելը ուսին, հաղթանգամ, բեղ ու միրուքով մի տղամարդ:

Վանդունց Բագու իր խրճիթն հիմնելու որից այնքան ուրախություն յերեք չեր տեսել: Հարցուփորձ, գրկախառնումի արցունք և ուրախություն անչափ:

Հաբուդը հայտնեց ծնողներին, վոր ել զինվոր չպիտի գնա, ել չի ուզում կռվել:

— Թող միքիչ ել իսանանց աղերքը կռվեն:

Յերկու տարվա բացակայությունից հետո, անհամար քաղաքներ թափառելուց հոգնած՝ Հաբուդը հանգիստ պառկեց հայրենի խրճիթում, Խորի վրա, պառավ մոր կողքին:

Միւս որը գյուղում ամենքն իմացան, վոր Վանդունց Հաբուդը տուն ե յեկել:

Շատերն ուրախացան, Հաթամի աղջկան շտապեցին աչքալույս տալ: Բայց իսանանց տղան ու պիսիրը, մինչև անգամ զզիր Զաքին շուրախացան:

Իսանանց տղան նրանց ասում եր, վոր Հաբուդը բալշեիկ ե դառել, նա զյուղում խառնակչություն պտի անի, չուրը պիտի պըղտորի: Յեկ զզիր Զաքուն անմիջապես հանձնարարվեց հետեւ, թե ում հետ ե լինում Հաբուդը, ուր ե գնում, ինչ ե անում:

Առիթը շուտով ներկայացավ:

Գյուղում մի ժողովի ժամանակ, վորին ներկա յեր և վարժապետ Մինասը՝ քաղաքի կոմիտեն, Հաբուդը միքանի խոսք ասեց իսանանց տղի հասցեյին:

Ժողով եյին արել, վոր տուրք նշանակեն քաղաքի կոմիտեյի համար: Վարժապետ Մինասը ճառ եր ասում, թե հեղափոխությունը

վասնգվում ե, գերմանացիք կաշառք են տվել բայլշեիկներին, վորուսաց զորքը քանդեն: Հարկավոր ե բանակը զորացնել կյանքը զոհել հայրենիքի համար:

— Մեկը յես՝ պատրաստ եմ, յերբ ինձ հրամայեն, թողնել տուն ու տեղ, զործ ու պաշտօն, գնալ կամավոր:

Այսպես եր ասում վարժապետ Մինասը և ճառում, կոկորդը պատռում, կուրծք ծեծում, ծեռքերը քամու ջաղացի թերի պետարժում ողի մեջ:

Իսանանց մեծ տղան ել խոսեց, թե պետք ե ազգային տուրքը տալ, այդ սուրբ պարտք ե, և ավելացրեց, վոր խառնակիչ մարդկանց ել գեղի միջից պիտի հեռացնել: Գյուղում միքանի գեղերտիք տղերք կան, վորոնց պիտի բռնել և քաղաք ուղարկել, թող թշնամու դեմ կոխվ գնան:

— Իսկ դժու յերբ պիտի գնաս,—տեղից կանչեց Հարուդը, վոր մինչ այդ գլուխը կախ լսում եր և զայրույթից շրթունքները կըրծուսում:

— Զենդ, շան լակուա,—վորոտաց են կողմից պիտիրը ու զգրին աչքով արեց, վոր վրա պըծնի: Յեվ միքանի տղերք, պիտիրի, մարդիկ, վրա պըծան, վոր ծեծեն, բայց Հարուդն իզուր չեր մնացել ճակատում: Մի յերկու հատ աջ ու ձախ խփելուց հետո գյուղացիք միջամտեցին և հեռացրին ախոյաններին:

Հարուդը հեռացավ ժողովից, տուն գնաց, մորը հանդատացրեց և գիշերով, յերկու հավատարիմ ընկերոջ հետ, գուրս յեկավ տնից գեղի քաղաք, մորը պատվիրելով, վոր վոչ մի մարդու բան չասի, ինքը գալու յե եղուց:

Այդ գեպը վանդունց Բաղու վրա վատ ազգեց: Նա զայրացավ նրանց գեմ, վորոնք որը ցերեկով ժողովրդի մեջ համարձակվել են իր վորդուն ձեռք տալ: Իսանանց տղան այդ որից նրա աշքի փուշը դառավ:

Մյուս որը, յերբ տավարը հանդ եր տանում, նա ուղեց իր վորդու յերեկա ախոյանների կովերը ջոկի տավարից, բայց խիղճը չտվավ. անլեզու անասունն ինչ մեղք ունի:

Տավարը քշելիս Բաղին լուռ միտք եր անում, թե ինչու Հարուդը գնաց քաղաք, ինչ թղթեր եր, վոր բերել եր նա իր հետ հեռու գիրքերից, ինչու նա դժգոհ եր գյուղի կարգերից և հակառակ վարժապետ Մինասին:

Հաջորդ որը Հարուդը տուն յեկավ, մի կտոր հաց կերավ ու սկսեց գրել:

— Հարուդ, հերիք ա գրես, աչքը գիրը կտանի, — ասում եր

մայրը կեսդիշերին, իսկ Հարուդը շարունակում եր գրել ջնջել: Լույսը բացվելու մոտ եր, յերբ նա թղթերը ծալեց, գրեց ծոցում և մահակն առավ, ուզում եր դուրս գալ:

— Ո՞ւր, բալաս...

— Հրես կդամ. գնում եմ քաղաք, զործ ունեմ, իրիկունը կդամ: Բաղին խնդրեց, թե մութ ե, չար վախտ ե, հազար թշնամի կա, սպասի, լուսով գնաս: Հարուդը մտիկ չարեց:

— Բան չկա, խամ հո չեմ ես ճամպեքից, — ասաց ու դուռը ծածկեց:

Մյուս որը յերեկոյան դեմ գյուղում լուր տարածվեց, թե քաղաքում խառնակութիւնն է յեղել բայլշեիկները զորքի հետ միասին վրա յեն տվել, կոմիտեյի շենքը ջարդել, ժողովուրդն սկսել է խառնութիւնները թալանել: Հետո բայլշեիկներին շրջապատել են, խմբի աղերքը վրա յեն տվել բայլշեիկի կոմիտեյի վրա և բոլորին բանապարկել:

Վանդունց Բաղին և Հաթամի աղջիկն անհամբեր սպասում ելին Հարուդի վերադարձին: Մի քար լուռթյուն կար խրճիթի ներսում, նրանց սրտերում և վոչվոք չեր զորում հարցնել մյուսին, թե գուցե մի փորձանք ե պատահել:

Հարուդը չեկավ: Առավոտ կանուխ իմացան, վոր նրան ել են բանապարկել:

— Բա, տեսաք են շան թուլան, մեր սաղ մահալում վարժապետ Մինասի նման խելոք մարդ չկա, իսկ Վանդունց Հարուդը՝ տավարածի տղան, նրան հավան չի, — այսպես եր ասում իսանանց տղան, չարախինդ և ինքնազնի, առավոտյան, յերբ գյուղացիք հավաքվել ելին նրա խանութի առաջ:

— Դե հիմա տեսեք թանգություն ով ա գցում, յես թե նա: Մեզ հավան չեր, ա խալխը, գե դուք դատավոր յեղեք, — կեղծ անմեղությամբ դիմում եր նա գյուղացիներին:

Յեվ հենց նույն որը չթի գինը մեկին յերկու թանգացավ:

* *

Վանդունց Բաղին այդ որը տավարը չտարավ, գնաց գեղամեջ ու խեղճ-խեղճ հայտնեց, վոր քաղաք ե գնում իմանալու, թե ինչ յեղավ վորդին:

— Են ա բերդումը նստած, ինչ ես գարդոտվում, այ պառավ, — ասաց գգիր Զաքին:

Միքանի հոգի խղճացին նրան և իրենք տարան տավարը գյուղի:

Շատ տարիներ առաջ եր Բաղին քաղաք գնացել: Նա հիշում եր, վոր քաղաքին չհասուծ Խաչի աղենց քարվանսարան կա: Կինա, հարցուփորձով կիմանա:

Բայց դեռ գլուղից դուրս չեկած, Բաղին իմացավ, վոր քարվանսարան ել ե վառվել, վորովհետև բայլշելի ձիաներն այնտեղ են կապված յեղել:

Ում մոտ գնալ. հենց ուղիղ վարժապետ Մինասի մոտ: Մեծ մարդ ե, քաղաքում կոմիտե: Կպատմի նրան, ձեռ ու վոտը կպաչի. գուցե Հաբուղին ազատեն:

Բաղին քանի քաղաքին եր մոտենում, այնքան ավելի յեր գգում, վոր ծնկները գողում են, վոտքերը գժվար են առաջ գնում: Մի յերկու տեղ կանգնեց, փափախով ճակատի քրաինքը սրբեց, շունչ առավ ու նորից շարունակեց ճանապարհը:

Ահա և քարվանսարան: Գերանները դեռ միսում են, սկացած պատերն են մնացել միայն: Հենց քաղաք մասնելուն պես Բաղին փողոցում տեսավ մեկին, վոր թեին կարմիր շոր ուներ կապած: Ուժ արեց և վոտները քարշ տալով մոտեցավ նրան, խոր զլուխ սպեց:

— Վարժապետ Մինասի կանցելարը ի՞նչ տեղ ա,—հարցրեց:

— Ի՞նչ ես անում...

— Խորիք ունեմ, փորձանք ե յեկել գլխիս...

Յեկ աչքերում արցունք, Բաղին սկսեց պատմել վորդու մասին լսածը:

— Հըմ... արեց մարդը, մատով ցույց տվեց սպիտակ մի շենք, վոր այնքան ել հեռու չեր:

Բաղին այդ շենքին մոտեցավ, բայց ներս չթողին, ասին՝ եւ գուց կպաս:

— Այսր յես ալեոր եմ, տավարն անտեր ա մնացել բա իմ վորդուց մի խաբար չիմանամ, — ասեց ու նստեց շեմքին, սուլահատակի վրա:

Չուած աչքերով նայում եր չորս կողմ, անցուդարձ անողներին, լսում աղմուկը փողոցի, մտքի մեջ՝ Հաթամի աղջիկը, աչքերը, լացակումած, տավարն անտեր և Հաբուղը, վոր մի կոտոր շիկացած ածուխ եր դարձել խանձում եր սիրաը, անասելի ցավ պատճառում նրան:

Շենքի ներսից մի մարդ դուրս յեկավ, նայեց Բաղուն:

— Դու ի՞նչ ես շնթռկել այստեղ...

— Աղա, յես Վանդունց Բաղին եմ, տավարած...

— Վանդունց, — հարցրեց մարդը զարմացած:

Բաղին սիրտ առավ, սկսեց իր ցավը պատմել նրան: Մարդը լսեց, ունքերը կիտեց, ապա Բագու խոսքը թերի թողեց, մոտեցավ գոնապանին, կանչեց նրան մի անկյուն, ականջին ինչ-վոր բան առաց, ապա արագ-արագ հեռացավ, ծովեց դեպի մյուս փողոցը:

Բաղին զգաց, վոր մի ծանր հարված պիտի իշնի եր գլխին, կանգնեց մի ակնթարթ, ապա մոտեցավ դոնապանին:

— Քեզ մատաղ, ի՞նչ ասեց աղեն...

Դոնապանը յերեսը մի կողմ շրջեց, շրթունքը սեղմեց, ապա հանկարծ կուցավ և Բաղու ականջին արագ ասաց:

— Վորդուդ բերդում կրակել են ես գիշեր...

Դոնապանը հեռացավ: Բաղին մի պահ ասես քարացավ: Հետո հանկարծ մոնչաց ցավից՝ վորպես զաղան վիրավոր, և արցունքի յերկու շիթ գլորվեցին խորշոմած այտերի վրայով:

Բաղին վաղեց բերդի կողմը, շփոթվեց քաղաքի փողոցներում ու չգտավ բերդը...

Նրան ասացին, վոր ել ուշ ե, իդուր ե արդեն: Յեկ գլուխը կախ յետ դարձավ նա յեկած ճամբով, մենակ ու ձեռնունայն:

Ել վոչվոք չկար, ամեն ինչ կորավ:

Բաղին հաղիվ կարողացավ մինչև քարվանսարան հասնել, ընկավ հենց ճամպի վրա, մի քարի մոտ: Գյուղացիք իմացան յեկան ու նրան գյուղ տարան

* *

Գյուղի գլխով շատ բան անցավ:

Բայլշեիկը նորից յեկավ, և վարժապետ Մինասը թավրիզի ճամպան բոնեց, բայց Արագի մյուս ափին մեռավ:

Բայլշեիկը գյուղ յեկավ, ճամպեքը բացվեցին: Իսանանց դուքանը դարձավ խըրճիթ-ընթերցարան: Իսանանց մեծ ախպերը պիսիրի հետ փախավ Պարսկաստան, և այն որից մինչև հիմա խաբար չկա նրանց մասին.

Գզիր Զաքին ել փախավ մոտիկ անտառը և ել գյուղը չեկավ: Գյուղացիք չգիտեյին, թե ինչ յեղավ նրա դին: Հերու յեր, վոր յերեխեքը անտառում ցախ ժողովելիս մարդու վոսկորներ գտան, մի քոլի տակ: Շատերն ասում են, թե զզիր Զաքու վոսկորներն են:

Վերի հանդը տանող ճամպի վրա, ջրաղացներին չհասած Աթանանց մեծ ընկուղենու տակ Վանդունց Բաղու տունն ե: Բաղին ել տավար չի պահում: Տանը վոչվոք չունի: Հաթամի աղջիկը վորդու մահից հետո յերկար չապրեց: Վանդունց Բաղին մնաց մենակ, իր հին տնակի մեջ:

Նրա աչքերը լավ չեն տեսնում, ջրակալել են: Ամեն որ շալակով սրա-նրա համար անտառից միքիչ ցախ ե բերում, մի փոր հացի համար, իր կյանքի վերջին որերն ե ապրում:

Յերբեմն ել անտառում ցախ հավաքելիս, յերբ միքիչ ծանր և մինում շալակը, իրեն-իրեն թոնթորում ե Բաղին.

— Աստված, քեզ ինչ ասեմ, վոր ինձ տեսար, նրան առարք իրիկունը առւն ե գառնում մենակ, ոջախի մեջ մի յերկու կտոր աթար նետում և մեկնվում խսրի վրա...

Իսկ դրսում, առաջվա պես Աթանանց մեծ ընկուղենին մեղմորեն որորում ե իր ճյորդերը Վանդունց խարխուլ խրճիթի վրա...

— Ինչ ժամանակաշրջան ե ընդգրկում այս պատմվածքը:

— Հասկանում եր արդյոք Վանդունց Բաղին իր շուրջը կատարված դեպքերի իմաստը:

— Ում դեմ եր պայքարում Հաբուղը:

— Ովքե՞ր եյին նրան գնդակահարողները,

— Ում կողմն ե հեղինակի համակրանքը. ինչո՞ց ե դա յերեվում:

Մ. ԳՈՐԾԻՆՅԱՆ

Կ Ի Կ Ո Ս Ը

Յերբ հեղափոխությունը յեղավ, կիկոսը հանդումն եր. իրիկունը եշն առաջն արած վոր գյուղը մտավ, տեսավ՝ վողջ գյուղը աղմուկ-աղաղակ, իրարանցում, գոռգոռում եյին, հայհոյում եյին քյոխվին, գզրին, պրիստավին ու մինչեւ անգամ թագավորին:

Պատերազմից վերադասած միքանի զինվոր հրամայում եյին արան-նրան, կարգադրություններ անում, իսկ աղա ու քեթխուդամարդիկ մի կողմը քաշված սմքել, տաղ եյին արել ու խոռված յերեխաների պես քիթները կախել:

Տուն համնելուն պես՝ կինը դիմացը յելավ ու սկսեց հանդիմանել.

— Կիկոս, զլուխդ մեռնի, ինչ ես եշի ականջումը քնել. զնայե, զնա զեղամեջ, տես ինչ խաբար ա, թագավորին թախտիցը գցել են, քյոխվին ու սուզին բռնել ծակուռն են կոխել. զնա մի զուլուղ ել դու վեկար քանի ըտհենց յեսիր ու խեղճ մնաս:

— Ասում ես թագավորին թախտից զցել են...— շշմած հարցը կիկոսը...

— Հապա... աչքն ել չեն հանել...

— Դե, զցել են, զցել, բարի լավն եղ ա... յես ել ուր եմ զնում զեղամեջ. ինձ հո թագավոր չեն շինելու:

— Ա՛ հողագլուխ, թագավոր չես դառնալ, զեղի տեր կդառնաս, զու կկառավարես:

— Բան ու գործդ կտրել ա, ա կնիկ. յես զոռով եմ իմ զլու-

խըս պահում, գեղի հետ ինչ դավի ունեմ. Առանց ինձ ել կկառավարեն, արի քոմագ արա իշի բեռը վրիցը վեր ունենք, արի:

Կիկոսի կինը բարկացավ, մարդուն անիծեց, նամուսը ցեխը գցեց, վոտնատակ արեց. բայց ինչ ոգուտ. կիկոսն իսկի այնունն ել չգցեց: «Կնիկ ա, կասի-կասի, տաղ կանի»— վճռեց նա ու իշի համար գոմի կտերը մոխիր շաղ տվեց, վոր թավիլ տա, մեջքը դրնացնի:

Մի շաբաթ եր՝ գյուղն իրարանցման մեջ եր: Ժողովներ եյին անում, ձառեր ասում, նոր մարդ եյին չոկում, վոր գյուղը կառավարի, իսկ կիկոսն իր իշի պոչից կպած՝ առավոտը հանդ եր գնում, իրիկունը տուն գալի: Մեկ-մեկ միան նա միտք եր անում, թե առանց թագավորի յերկիրը վնաց կկառավարվի: Նա իր քառակուսի գլխի ամեն քունջ ու պուճախը ման եկավ, պարտեց ու տեսավ, վոր գլուխն եղ անսովոր աշխատանքից, մտածելուց ցավում ե, թարգը տվեց:

Ճիշտ ե, թագավորը չկար, ասենք նրա յեղած ժամանակն ել կիկոսը սրան չեր տեսել միայն լսել եր,— բայց աշխարհն ելի են եր մնացիր: Քոխի տեղակ հիմի գյուղացիներից մեկն եր կառավարում, վորին «նախազան» եյին ասում, իսկ գզրի անունն ել «սուրհանդակ» եյին դրել, ելի տերտերը ժամ եր ասում. կնշանակե— զեռ աստվածը կար, նրա «թախտը հաստատ եր». ելի հարուստները բըրթըրթացնում եյին, նրանց քեֆին կպչող չկար, ու ելի կիկոսին եյին կոռ ուղարկում, նրան եյին բանեցնում: Գյուղն ելի են հին գյուղն եր, իր հին աղամով, կիկոսն ել են կիկոսը— իր եշով ու քառակուսի գլխավ: Մենակ մի բան լավ չեր, վոր հիմի հարկերն ավելի եյին շատացել, կաշառք ուտողները— լցվել, ու շուտշուտ կոփներ եյին պատահում:

Գյուղի ճամբանները կապվել եյին. ապրուստը դժվարացավ, նամին ու շաքարը կտրվեց, դրսից ճոթ ու կտոր չեր ստացվում: Գյուղը խավարի ու կարիքի մեջ տանջվում եր: Բայց կիկոսն ելի առաջվա պես լուռ ու հանդիստ իր բանին եր: «Բալքի լավն ես ա»— մտածում եր նա:

Գյուղը բաժանվել եր յերկու մասի: Մարդիկ գազազել եյին: Սովոր ու կարիքը ինչեր ասես չեն անիլ...

Են վոր տերտերն ու գյուղի առաջվա մեծամեծերն եյին, նըրանք թագավոր եյին ուղում, են վոր կովից յեկած զինվորներն եյին, նրանք հայհոյում եյին թագավորին, վորովհետեւ մեծ կովին խառնվել եր ու ենքան ջահելների— վորին կոտորել տվել, վորին ել աշխատանքի համար անպետք շինել, վոտքը կամ ձեռը կովում

կորցնել տալով, են վոր մնացած գյուղացիք եյին, նրանք ել մի գլուխ են եյին ասում—«ով կուզի թող լինի, մնակ թե մեր ճամպեքը բաց անի, մենք Ռուսեթից հաց, ճոթ, նավթ ու շաքար ստանանք»:

Կնանիքն ել վոր մինչև եղ ժամանակ գյուղամիջից ամաչելով եյին անց ու դարձ անում, բերանները կապած, վոչ մի մարդու հետ չեցին խոսում, հիմի նրանք ել եյին լեզու բաց արել ու համարձակ խոսելով, վորն իր սպանված տղին եր յետ պահանջում, վորն իր կորած ամուսինը՝ Գյուղն ենալես եր խառնվել իրար, վոր մեծ ու փոքր չեր ճանաչվում. ով վոր առավոտը վաղ վեր եր կենում ու գյուղամիջում բարձր գոռդուռում, են ոք նա յեր գյուղի կառավարիչը:

Ամեն որ գյուղում մարդ եր թակվում: Մեղավոր ու անմեղ չեր ջոկվում. ով զոռ ուներ, իրենից թույլի գլուխը կոտրում եր: Մենակ կիկոսն եր, վոր, ինչպես ասում են, «գլուխը փեշումը դրած»՝ իրեն բանին եր: Նրա հետ անկարելի եր կովել նա լավ եր պահում իր գլուխը. ինչ վոր ասում ելին, անում եր, ինչ խոսում եյին—համաձայնվում եր կամ սուսուփուս քաշվում մի կողմ: Իսկ յեթե բան ու գործից գցում եյին, ժողովի կանչում, լուս նստում եր ու քնում: Տանն ել կնիկը թե վոր վրեն ճղճղար, թե կիկոսը գյուղի վոչ մի բանին չի խառնվում, նա հանդիստ պատասխանում եր:

— Վորտեղից բարակ ա, ենտեղից ել կկտրվի, կնիկ. Կիկոսը, վոր ենքան դոչաղ ըլի, իրան գլուխը պինդ պահի, թակել չտա, եղ ել մեծ հունար ա...
—

Ամեն բանի խառնված ժամանակն եր: Գյուղացիք ստեղծված դրությունից դուրս գալու համար վոչ մի ճար, վոչ մի հնար չեցին գտնում, յերբ մի որ ել գյուղում լուր տարածվեց, թե հայոց թագավորություն է ստեղծվել: Ամենքն ուրախացան: Մանավանդ գյուղի մեծամեծները:

Ժամում պատարագ արին, քարող խոսեցին, ժտմից դուրս մաղթանք ու թափոր կազմեցին, որ ու կյանք մաղթելով հայոց թագավորին ու թագավորությանը:

Լուրն ստանալու յերկրորդ որը մի մարդ յեկավ ճառ ասեց, գովեց հայոց անկախությունը ու յերբ ճառը վերջացրեց, հարց ու փորձ արավ, թե գյուղացիք ինչ ցավեր ունեն:

Գյուղը մի բերան են եր խնդրում, վոր ճանապարհները բաց անեն:

— Լավ, — ասաց ճառախոսը. — Կկատարեք կառավարության հրամանները, ճանապարհները կբացվեն:

— Ինչ վոր հրամայեք, կանենք, թեկուզ մաղով ջուր կրել տաք, միայն թե մեղ աղատեք խավարից ու տկլորությունիս:

Ճառախոսը գնաց. իսկ գյուղացիք սպասում եյին անհամբեր, յերբ մի շաբաթից հետո հրաման յեկավ, թե գյուղում ում վոտը բռնում է, և տարեկանից մինչև 70-ը, պետք ե կովի գուրս գա, վոր թուրքերին կոտորելով ճանապարհը բաց անի դեպի յերկաթուղու կու կայարան ու քաղաք:

Առ քեզ նոր տրաքոց... ինչ եյին սպասում—ինչ դուրս յեկավ: Գյուղը նորից տակնուլիք յեղավ: Կոփի չեյին ուզում. բայց ինչ կարող եյին անել, յերբ հրամանի հետ զինված խմբեր ու խմբապետներ թափվեցին գյուղն ու սրան-հրան բռնելով գոռով կոփի քշեցին: Դիրքերում տրաք-տրաքոցն սկսվեց:

Կիկոսը, վոր հանդիստ եղն առաջն արած ջրաղաց եր գնում, նրան ել բռնեցին ու տարան խմբապետի մոտ. դուռը բանալով ներս հրեցին ու վրան փակեցին:

— Դու դեղերտիր ես, հա...—գոռաց կիկոսի վրա խմբապետը:
— Զե, աղա, յես կիկոսն եմ, Թոփալանց կիկոսը:
— Ինչու չես կոփի գնացել:
— Ինձ բան ասող չի ըլել. վոր հրամայես, կզնամ, ինչ պետք ասեմ:

— Դե հրայում եմ, գնան
— Գլխիս վրա.—խոնարհ գլուխ տալով դուրս եկավ կիկոսը, վորին գուրսը «բերդանի» մի հին, ժանգուած հրացան տվին:

Կիկոսը շվարած կանգնել եր—«բերդանկան» ձեռքին պինդ բռնած ու չեր իմանում ինչ անի: «Փառք աստուծու, կիկոսը թը-վանք ել տեսավ»—կամաց փնթինթաց քթի տակ: «Ասենք ամեն բանի կոռ տեսել եմ, համա կովի կոռը չեյի իմացել»—միտք եր անում կիկոսը: Նա, վոր իր կյանքում վառոդ ել չեր փշտացրել հիմի հրացանը ձեռին կոփի պիտի գնար, ինչ պիտի աներ, նւր պիտի գնար, վոնց պիտի կովեր, փամփուշը վճր կողմից պիտի հրացանի մեջ դներ—չգիտեր: Եսպես դմբրված կանգնել եր գյուղ գամիջում, յերբ խմբապետը դուրս գալով, հրամայեց, վոր կիկոսի եշը տանեն «աբողի» համար, իսկ իրեն քշեն գիրքերը:

— Ինձ ել տարեք լշիս հետ, աղա.—կմիմալով ասաց կիկոսը.—ինչ վոր իմ եշը կանի, յես ել են. ես թվանքիցը խելքս բան չի կտրում:

— Այ դու աղգի դավաճան,—գոչեց խմբապետը.—ուրեմն գու-

ՀՅԱ ուզում վրեժինդիր լինել. միթե քո յերակներում չի հոսում թորգոմյան արյունը:

— Աղա ջան, եղ ինչ վոր հրամայում ես, բան չեմ հասկանում. Թորգոմն ով ա. յես վոր կամ, Թոփալանց կիկոսն եմ. ես սաղ գեղը գիտի, վոր իմ որում յես թվանքի ծակովը մտիկ տված չեմ. թե եշ թվանք կրակ տվող ա, յես ել նրա պես. ախր խի՞ յես ինձ անպատիվ անում, յես թվանքի մարդ եմ...— գլուխը կախ պատասխանեց կիկոսը:

Խմբապետը գայրացավ, կատաղեց, ջղայնացավ, յետ ու առաջ ման յեկավ ու են ե՛քիչ եր մնում մարակը պիտի իջեցներ կիկոսի զլիին, յերբ գյուղի քահանան վրա հասավ ու միջամտեց.

Պարոն խմբապետ, սա մի աստծու յեզը մարդ ե, խեղճ ու կը բակ. իր որում մելին մի վատ խոսք ասած, հակառակ բան առած չկա. սա իր կյանքում ճանձ ել չի սպանել. ներեցեք, թողեք՝ իր բանին գնա. թե ուրիշ զուլուղ ունեք, ասեք անի, թե չե սրա աչքերը...— քահանան կանդ առավ, զգալով, վոր կարող ե ավելորդ բան ասել:

— Անկարելի յե,— պայմեց խմբապետը,— սա իր բոնած դիրքով կարող ե վատ որինակ դառնալ ուրիշների համար. ամենքը վոգենրված դիմում են կովի դաշտ, իսկ սա թիկունքը քայրայում, անրարոյականացնում ե: Յեթե մինչե այժմ ճանձ ել չի սպանել, ավելի վատ իրեն համար, այժմ պետք ե մարդու արյուն խմի: Վաղը դուք ես պետք ե մասնակցեք պատերազմին, ուր մնաց թե սա: Կոփը որհասական ե և պայքարը վճռական, հասկանո՞ւմ եք...

Խմբապետը թամամ փրփրած եր:

Կիկոսը, վոր շվարած կանգնել ու բան չեր հասկանում խմբապետի ասածներից, զգալով, վոր բանը կարող եր վատ վերջանալ, հրացանը բարձրացնելով կոթովն իշին բգեց ասելով.

— Գնում եմ, աղա ջան, թնշ, թնշ, գնում եմ, գնում եմ: Վայ են կովին, վոր կիկոսով պտի գլուխ գա... Ու եշն առաջն արած ճամբա ընկավ, ինքն ել չիմանալով դեպի ուր:

Խմբապետը գոհ սրտով բեղերը վոլորեց ու կանչելով իր քարտուղարին՝ հրամայեց, վոր կառավարությանը մի հեռագիր ուղարկի, թե «Ժողովրդի վոդեռությունը մեծ ե այնչափ, վոր իր կյանքում հրացանի յերես չտեսած մարդն ել ցնծությամբ դիմում ե դեպի դիրքերը»:

Խմբապետը սենյակ մտնելով հրամայեց, վոր իբրև պատիժ կիկոսի հանգնության, նրա կովը բերեն մորթեն տղերանց համար, վորոնք խմբապետի հետ եյին յեկել ու, դիրքերը գնալու տեղ, գյուղը ընկած սրանրա տանը քեֆեր եյին անում.

Ու յերբ կիկոսի կովը գյուղամիջում մորթում եյին, կիկոսը թմբի քամակն անցած՝ իշի հետ զրույց եր անում.

— Գնանք, իշուկ ջան, գնանք, գլուխներս լավ ազատեցինք ես անդամ. գնանք հայոց ազգի թագավորի համար կոփի անենք, ուսամթութին ա... բալքի լամբ ես ա...,

Կիկոսը կոփի իմացել եր, բայց չեր տեսեր: Ես ու են սարի ծերից թնդանոթները վորոտում եյին, կարծես ամպերն իրար հետ կոփ ելին բռնել յերկնքում ու դղրդոցից սար ու ձոր շարժում, իսկ դիրքի վրա գնդակներն ենպես եյին զգում, վոր կիկոսին թվաց, թե ինքը մի հսկա մեղվանոց ե ընկել, ու եղ մեղվանոցն ընկած արջի պես, չեր իմանում զլուխը վոր անկյունը կոփի, վոր աղատի:

Կոփի քանի գնում սաստկանում եր: Կիկոսը մի անկյունում վոգնու նման փշաքաղել ու կուչ յեկած տաղ եր արել. նա շշմել եր ու կասես զլուխը հարսանիք եր զրմբում: Նա ենպես եր ապուշ կտրել, վոր յեթե եղ բոպեյին մեկը նրա անունը հարցներ, նա դժվար թե կարողանար հիշել իր անունը:

Նա ենպես եր քարացել, անզգա դարձել վոր մինչեւ անդամ չնկատեց, թե ինչպես դիրքում կովող տղամներից մի մասը փախավ, իսկ մյուս մասը հրացանները բարձրացրեց և «ուռա» տալով անցավ հակառակ կողմը:

Դիրքը դատարկվեց:

Կոփի ել առաջգա պես սաստիկ չեր: Լովում եյին հատ ու կենտ տրաքոցներ:

Կիկոսի գլուխն այժմ վարար ու հանդարդ հոսող գետի պես թշշում եր, յերբ գլխի վերել մի պոսոգավոր մարդ կանգնեց, հրացանը գեմ արավ դոշին ու ինչ-վոր բան առաց, վորից կիկոսը վոշինչ չհասկացավ: Պողավոր մարզը նորից բղավեց, բայց կիկոսն ելի չհասկացավ. նրան թվաց, թե տեսիլքի մեջ ե: Իր որումն եղպես պոզավոր ու յերկար, կախ ընկած ականջներով մարդ չեր տեսել: Պողավորը հրացանի ծայրն ել ավելի մոտեցնելով կիկոսի կրծքին, յերեսը շուռ տվեց ու բարձր ձենով կանչեց, վորի վրա միքանի ուրիշ պոզավորներ ել վրա վազեցին: Նրանք իրար հետ ինչ-վոր անհասկանալի լեզվով խոսեցին, վորից հետո մեկը մոտենալով կիկոսին՝ հայերեն լեզվով հարցրեց.

— Այ մարդ, հայ ես...

Կիկոսը վոչինչ չկարողացավ պատասխանել:

— Քեզ հետ չեմ, այ մարդ. ով ես, ինչ մարդ ես, անունդ

ի՞նչ ե: ի՞նչ ես պապանձկել.—բարձր ձենով կրկնեց պողավորն ու թափ տվեց կիկոսի ուսը:

կիկոսը յերազից վեր թռածի պես հազիվ կզկզաց.

— Թվաճքը դեսը պահեցեք, վախում եմ...

— Դե դու յել, թե հրացան կամ մի ուրիշ գենք ունես, դու...

շպրտի:

— Յես մի զադ ել առնեմ վոչ, ինձ սպանել միք...

— Բա վոր զենք չունես, ես դիրքում ի՞նչ ես շինում:

Հսկի... հրամայել են, յես ել յեկել եմ կոփի...

— Դե տեղից վերկաց:

— Ընը՝, —ասեց կիկոսն ու որորվելով տեղիցը կանգնեց:

— Դե առաջ անցիր, —հրամայեց պողավոր հայբ:

— Զեզ մատաղ, ինձ սպանեք վոչ...

— Մի վախենա, վոչինչ չենք անի, առաջ շարժվիր:

կիկոսին առաջներն արած՝ պողավորները տարան մեծավորի մոտ:

— Բնկեր, սրան դիրքում գտանք. —ասեց սողավորը մեծավորին:

— Անունդ ի՞նչ ե. —հարցրեց մեծավորը:

— Կիրակոս, կիկոս են ասում ինձ... Թոփալանց Մակիչի տղա կիրակոս... յես մի անշառ մարդ եմ, ինձ սպանեք վոչ:

Մեծավորը կարգադրեց, վոր կիկոսը նստի, մի թուղթ գրեց տվեց մի պողավորի, վորն իսկույն վաղեց. Քիչ հետո յերեք հոգի յեկան, վորոնք կիկոսենց գյուղիցն եյին, բայց քաղաքումն եյին ապրում, Բալախանու զավոդներումը: կիկոսը թեև զարմացավ, վոր նրանք ել եյին պողավոր, բայց քիչ սրտապնդվեց.

— Յես ձեր արեին մատաղ, Մուսի ջան, Մուգուչ ջան, Սևան ջան... ինձ հո ճանաչում եք, ձեր խեղճ ու կրակ կիկոսին. սրանց հասկացրեք, վոր յես անշառ մարդ եմ, ինձ կոփի զարկողի տունը կոփի ընկի...

Տղաները քմծիծաղ տվին ու ինչ-վոր ոռուսերն ըան ասացին մեծավորին, վորից հետո կիկոսին տարան մի փոքրիկ սայլի մոտ, վորի վրա մի մեծ դազան եր դրված ու կրակը տակին վառած: Մի պողավոր բարձրացավ ես սայլի վրա, պղնձի բերանը բաց արավ, մի մեծ շերեփ ձեռը կալավ, խառնեց ու մի աման լիքը կերակուր ածեց, գրեց կիկոսի առաջին:

— Կուշայ, տավարիշչ, կուշայ, —ասեց ու մի մեծ սև փոսն հայ կողքին դրեց:

— Ի՞նչ անեմ... —հարցրեց կիկոսը շվարած:

— Կուշայ, կուշայ... տակ... տակ... ասեց մարդն ու հացը կը թելով մի կտոր թաթախեց ինքը կերավ. —կուշայ, տակ... տակ...

— Տաք, տաք ուտեմ. —հարցրեց կիկոսն ու սկսեց ուտել:

— Տակ, տակ, մալադեց. - ասաց մարդն ու պղնձի տակի կրակը թեժ արավի:

կիկոսը, վոր մալադեց հասկացավ, ել ավելի սրտապնդվեց ու ամանը խաղացեց, կերակուրը վերջանալուց հետո, մարդը կիկոսին թեյ տվեց, են ել շաքարով թեյ:

կիկոսը՝ վոր լավ կշատացել եր, ինքն իրան միտք եր անում, թե ինչու յեն եղան լավ պատիվ անում եղ պողավորները, վոր իսկի չեյին ել ճանաչում նրան, չդիտեյին նրա ով լինելը, բայց խելքը բան չեր կտրում:

Ճաշից հետո կիկոսին նորից տարան մեծավորի մոտ, վորը ժպտալով հարցրեց.

— Հը՛, վո՞նց ես ընկեր կիկոս, քեզ հո եստեղ նեղություն տվող չեղամփ:

— Զե՛ աղա ջան, շատ չնորհակալ եմ, լավ պատիվ արին, հաց ու չայ տվին:

— Ուղիւմ ես քեզ քո տունն ուղարկենք:

— Վո՞նց վոր կիրամայես, աղա ջան, քու դուն եմ:

— Զե՛, բանն եղան չի. քո կամքն ե, կուղես գնա, կուղես եստեղ կաց:

կիկոսը յերկընտրանքի մեջ ընկավ: Վո՞րն եր լավը. գնալը թե մնալը. չեր կարողանում վճռի:

— Են խմբապետ տղեն թե մեր գեղումն ա, հա. . լավն են ա եստեղ մնամ. թե ինձ կզահեք, թե յես մի բանի պետք կդամ. — վերջապես վճռեց կիկոսն ու մեծավորին ասաց, զլուխը կախ սպասելով պատասխանին:

— Լավ, մնա այստեղ, միայն մի պայման կա, վոր ամենքին պետք ե ընկեր ասես. մոռացիր աղեն ու խաղեյինը:

— Վո՞նց վոր կիրամայես, աղա ջան, ենալես ել կանեմ:

ի՞նձ ել պետք ե ընկեր ասես, ի՞նձ ել:

— Լավ ես հրամայում, աղա-հնդեր ջան, համա մի բան եմ ինպրում, թե կարելի յա...

— Ի՞նչ ե:

— Յես պարապ վոր մատմ, կիկոսինդանամ, ի՞նձ մի բանի դը եք, վոր հե կերած հացիս հախն ելա դուրս գա:

Վո՞նց վոր յերկաց, մեծավորին շատ դուր յեկավ. նա ծիծաղելով ասաց.

— Ի՞նչ ես ուզում:

— Յեսիմ. մի բան ելի... Այ, թե վոր եշտ կարաք ինձ հասցնեք, յես իմ եշտին ես սաղ դոշունին կերակուր եփելու համար փետ կը եմ. ես հանդերին յես լավ վալադ եմ:

— Լավ, ընկեր կիրակոս, գնա են կերակուր յեփողի մոտ. Կկարգադրեմ, վոր քեզ մի եշտան:

Կիկոսն ուրախ հեռացավ մեծավորի մոտից: Նրան մի եշտ արվին, վոր առաջն արած քշեց դեպի մոտակա քոլուտը՝ չոր փայտ բերելու:

Կիկոսը յերեք որ փայտ եր կը ում: Գիշերում եր մոտիկ թուրքի գյուղում և իրեն շատ լավ եր զգում: Նրա բախտից կերակուր յեփող իվանը մի լավ տգա յեր, վոր աղատ ժամերին նրա հետ ձեռով-վոտով զրից եր անում: Կիկոսն արդեն մի քիչ «ոռւսերեն» եր սովորել: Նա գիտեր, վոր ուսմներին պետք ե «տավարիշչ» ասի, կերակուրին—«բորշ», հացին—«խլեր», բարի լույսին—«զդրաստի», նստելուն—«սաղիս», կանգնելուն—«սառյ»:

Բայց ամենից հետաքրքիր բանը, վոր կատարվեց նրա հետ, դա այս եր, վոր կիկոսին ել պողավոր շինեցին ու մի սալդաթի շինել ել հագցրին, վոր չմըսի:

«Ես խեղճ հայվանի բեռն ել ա թափեմ, մեջքը կկոտրի»,—մտածեծ կիկոսն ու վայտը թափեց: Եշտ բեռիցն ազատվելով, քուցին-քուցին արավ, մեջքը թափ տվեց ու պինչը տափերը քսելով սկսեց խոտի մնացորդները զոնդացնել, իսկ կիկոսը փայտի մոտ նստեց, թե մի լավ միտք անի ու վորոշի ուր գնալ: Նրա միտքը ենքան մոլորվել եր, վոր նստած տեղը քիչ մնաց փետանա, սառչ ու մի ասող ել չկար, վոր դոնե կրակ անի տաքանա:

Եշն ել, վորի մարմնի տաքությունն անցել եր ու կամաց-կամաց սկսել եր սառչել, զարմացել եր թե ինչու կիկոսը չի մոտենում իրան, մեջքը չի տրորում ու չուլը վրան քցում, վոր չմըսի: Նա համբերությունը հատած, մոտեցավ կիկոսին, հոտոտեց ու պինչով կամաց բգեց նրա ուսը: Կիկոսը լուռ եր. նա իշխ փաղաքշանքին չպատասխանեց. Եշտ քիթը վեր քաշեց ու բերանը բաց արավ, պոտշները պլրպտացրեց ու թամամ կիկոսի ականջի մեջտեղը մի պինդ զռաց: Կիկոսը գլուխը կամաց թեքեց, վոր իշխ ձենն ականջը չընկսի, ու գորովագույթ ձայնով ասեց:

— Կանչի, կա՞նչի, քեզ մատաղ, կա՞նչի, բալքի ձենդ Իվանին համնի, յետ գա:

Բայց ով եր տվել Իվան...

Եշտ մին ել փռացրեց, քթածակերը մաքրեց, վոր իր զուռնեն

Ել սկինդ փչի, յերբ մի զյուլլա հըղ՝ զ՝ արավ... ու թամամ իշխ յետերի վոտների մեջտեղը:

— Պահ քու տերը մեռնի, շշկված զյուլլա, քիչ մնաց իշխ վոտները ջուր աներ. ես անտերը վժրդիան եկավ...—տեղից վեր թուավ կիկոսը և ուզեց իշխ հեռացնի, բայց հենց վեր կենալը տեսսավ. մի զյուլլա ել շշկվացնելով նրա ականջի մոտովն անցավ:

— Պահ քու տերը մեռնի, ես անտերը քիչ մնաց քյալլես շուռ տար,—ասեց շշկված կիկոսն ու մտավ իշխ փորի տակը: Բայց դեռ մի վայրկյան չանցած՝ յերբորդ գնդակը թրմփաց նրա վոտների մոտ:

— Հալբաթ մեզ տեսնող կա, Ելի.—կիմթփսթաց կիկոսը.—թամամ զյուլլախորով պտեր անիլ. մի հարցնող ըլի, թե կիկոսը զրանց ի՞նչ ա արել, հու հետները կորիվ չի ահում վոր...

Զորրորդ գնդակն իշխ աջ ականջի ծայրին կպավ, ու եշտ ծուլ ելավ, յետի վոտներով տուր թե կտաս ես քու կիկոսի մեջքին ու փախավ:

— Ա՛ տերը մեռած, ուր ես փախչում, ես անվիրու-վիրու (անվայրի-վայրի) չոլում ինձ մենակ թողնում, ես հարամ զյուլլի բոխին,—ճաց հուսահատ կիկոսն ու վեր կպավ, թե ինքն ել փախչի, յերբ հեռվից մի ձայն նրան կանչեց.

— Ստո՞յ, ստո՞յ...

Կիկոսը տեղը կանգնեց ուրախացած. «Հալբաթ Իվանն ա», մտածեց նա ու ձայն տվեց.

— Ա՛րի, Իվան ջան, արի, յես քու հոգուն մատաղ, ընհենց չոր դրավա յեմ բերել վոնց վոր սպիչկա:

Զայն այս անդամ ավելի մոտիկից եր գալիս, վոր Ելի «սառյ» եր կանչում:

— Ա՛րի, Իվան ջան, արի, տեսնում չես՝ տեղիցս ժաժ չեմ գալի, ես ա կաղնած եմ Ելի, ել սրանից լավ վոնց ստոյ անեմ... համա եշտ զիտեմ վոչ ինչ ելավ...

Զայնը «ստո՞յ, ստո՞յ» անելով մոտեցավ, բայց ձայնատերն Իվանը չեր: Ասենք վոր Իվանը չեր, եղ վոչինչ բայց պողավոր ել չեր, մի շատ սովորական սալդաթ եր, ուսւ թագավորի ժամանակի սալդաթի նման, վոր հրացանը թամամ կիկոսի դոշին նշան բռնած մոտենում եր: Մոտեցավ, մոտեցավ ու մի պինդ բղավեց:

— Ստո՞յ, բայլշեկիւ թե չե հրես ջիգյարդ գյուլիս ծերով թիկունքովդ կանեմ:

Կիկոսը նոր հասկացավ, վոր Իվանը չի, հայ ե, բայց լավ չոկում, թե ով եր յեկողը:

— Բայլշեկիւ Ես.—հարց ավեց յեկողը:

— Զե...—ծոր տվեց Կիկոսը:
 — Հայ ես...
 Հա...
 — Ձեռքիդ զենք, հրացան-բան ցւնեմ...
 — Մի զադ ել ա ունեմ վոչ:
 — Դե ձեռներդ բարձրացրու, թե չե դլուխդ շաղ կտամ:
 Կիկոսը ձեռները վեր բարձրացրեց ու յետեի վոսների վրա
 կանգնած արջի նման սկսեց տմբամբալ:
 — Մնա արի.—ձայն տվեց հրացանավորը Կիկոսին:
 Ընդ՛, ես ել յես. մի լավ մտիկ. ի՞նչ ես ուզում ինձանից.
 յես մի անմեղ մարդ եմ.—ասեց Կիկոսն ու մոտեցավ, նկատելով,
 վոր առաջը կանգնած ե մի զինվոր, վոր աչքերն արյունով լցված,
 կատաղած, ուզում եր հարձակվել Կիկոսի վրա.
 — Ո՞վ ես, ի՞նչ մարդ ես, վնրտեղից ես.—հարց տվեց զին-
 վորը:
 — Յես եղ վերի գեղիցն եմ. անունս ա, Թոփալանց Մակիչի
 տղա Կիկոս, ինձ սաղ գեղը ճնանչում ա:
 — Անցիր առաջ.—հրամայեց զինվորը:
 — Հրաման քեզ, բան չեմ ասում, մենակ թող տեսամ, եշ
 ինչ ելավ, եշս ել տանենք.—ասեց Կիկոսն ու ծավեց գեպի եշի
 կողմը, վոր մի քարի տակ կանգնած՝ վիրավոր ականջն եր թափա-
 հարում:
 — Կանգնիր,—գոռաց զինվորը.— Հշարժվես:
 Կիկոսը տեղը մեխվեց, իսկ զինվորը յերեսով դառնալով դեպի
 վերեի վիրքերը, գոռաց.
 Յեկեք, յեկեք, բայլշեիկ եմ բռնել...
 Սարի գոշից յերեք հոգի թփթփալով ցած թռան: Նրանք ըշա-
 պատեցին Կիկոսին ու ապուշ-ապուշ նայում եյին նրա տարորինակ
 գլխարկին, շենք ու շնորհին, յերբ մին ել Կիկոսն ուրախացած, թե՝
 — Վույ, Ունան ջան, քե մատաղ, եղ դու յես... Աղա, բա
 հենց ինձ եք քոռ ասում, դու եղ վննց ես քոռացեր վոր ճնանչում
 չես Կիկոսին:
 Ունանը, վոր Կիկոսի աներձագն եր, զարմացավ, թե վոնց և
 Կիկոսն ընկել բայլշեիկների մոտ:
 — Կիկոսն ես...
 — Բա շուն եմ
 — Բա եղ գլխիդ պնդն եղ ինչ ա. եղ վեր կար, վոր հավա-
 տամ, թե Կիկոսն ես...
 — Ընդ՛.—ասեց Կիկոսն ու բաց արավ իր քառակուսի դլուխը.

— Տո Կիկոս, դլուխդ չմեռնի, մենք ել հենց զիտենք, թե քեզ
 սպանել են. դու սաղ-սալամաթ ես ու ըստեղ բայլշեիկ դառնել. դը-
 լուխդ չմեռնի, Կիկոս...
 — Դու ճանաչնում ես սրան, — դարձավ զինվորն Ունանին:
 — Լավ... իմ վեսեն չի...
 Զինվորը հենց վոր իմացավ, թե Կիկոսն Ունանի փեսեն ե,
 մյուս յերկու զինվորի ոգնությամբ նրան զինաթափ արավ ու ա-
 ռավ ողակի մեջ, ապա նրանցից մեկին ուղարկեց, վոր Կիկոսի եշը
 բերի, իսկ մյուսին վազեցրեց, վոր Կիկոսի եշը բերի, իսկ մյուսին
 վազեցրեց, վոր շտաբում հայտնի, թե՝ «գերի յե բռնված, աբողի
 մի մասն ել հետք»:
 Կիկոսին իր նոր իշխ և Ունանի հետ առաջ արած գյուղն եյին
 տանում իբրև «բայլշեիկ գերի», և ճանապարհին ով վոր ծանոթ եր
 դուրս գալի Կիկոսին, նրան ել եյին ձերքակալում, առաջ քշում,
 յենթագրելով, թե վողջ գյուղը բայլշեիկների հետ կապ ե պահպա-
 նում Կիկոսի միջոցով:
 Մութին ընկնում եր:

—

Լույսը դես չեր բացվել, վոր գյուղը մտավ Կարմիր բանակի
 շտաբը, վորին ուղեկցում եյին զուռնան, ցնծագին աղաղակներն ու
 պարերը:

Կիկոսը դտել եր իվանին, վորը նրան նստեցրել եր իր կողքին,
 շարժական խոհանոցի վրա և հետը ձեռով վոտով զրույց եր անում:
 Կիկոսը դտուել եր մի յերանելի մարդ, վորին նախանձում եյին
 գյուղի ջահելները, վոր ենավես լավ ծանոթություն ունի բայլշեիկ-
 ների հետ, և մտածում եյին նրա միջոցով կապեր հաստատել նը-
 րանց հետ, իսկ Կիկոսը՝ սիրաը կոտրած, վոր չի կարողանում պատ-
 մի իվանին իր գլխի յեկածը, մի զլուխ են եր ասում.
 — Այս իվան ջան, թե մի լեզուս կհասկանա, ինչեր չեմ
 պատմիլ քեզ...

Բայլշեիկ զորքի շտաբի պետը զանազան կարգադրություններ
 եր անում, վոր գյուղում անկարգություններ չպատճին: Մինչև
 լույսը բացվելը նա տեղավորվեց նախկին շտաբի տանը, ապա ան-
 միջապես հեռախոսային կապ հաստատեց առաջապահ գնդի հետ,
 վոր հալածում եր թշնամուն, և իր մոտ կամչելով այն ջահելներին,
 վորոնք դեռ շարունակում եյին գյուղում զուռնա-ղնոլով ցնծար
 պատիքեց, վոր գյուղում մի խելքը գլխին մարդ գտնեն, վոր վոչ
 նախկին քյոխվա լինի, վոչ ել սարամնիկ, այլ հասարակ ուանչպար
 գյուղացի, վորը կարողանա գյուղը կառավարի:

Զահելները շվարեցին: Գյուղում թե մի եղ տեսակ մարդ կար, են ել կարոն եր, վորին բանտարկել եյին ու ով զիտի թե ուր տարել: Հիմի ով կա, վոր ում ջոկեն... միոք արին, միտք, ու մին ել աղաներից մինչ՝ թե՝

— Տղերք, յեկեք մի բան ասեմ, համա վրես ծիծաղեք վոչ:

— Ի՞նչ.—հետաքրքրությամբ հարց տվին ամենքը:

— Ես վոր մեզանից մարդ առ ուղում, եկեք կիկոսին ջոկենք. են մարդը համ նրանց հետ ծանոթ ա, համ ել իր որում իսկի գըզիր ել չի ելել. ինքն ել հալալ ռանչպար մարդ ա. թող նա կառավարի. ինչ վոր կհրամայեն՝ են ել կանենք. ասում են՝ ծանոթությունը աշխարհ ա կերել: Տեհաք, վոր կիկոսին տեսան թե չե, վոնց ուրախացն... են իվանն ել առավ ու իր գրոժկի վրա նցտացրեց...

— Եդ լավ ես ասում համա...—առարկեց մեկը. վախում եմ սաղ խալխի մասխարեն դառնանք. ախր ի՞նչ կասեն, թե վլան դեզի կառավարիչն ով ա... կիկոսը...

Մինչդեռ ջահելները միաք եյին անում, կիկոսը իվանին խընդուց, պազատեց, վոր բրիչկեն քշի իրենց տան դուռը, իրեն զոնազը դառնա: Իվանն ել «խարաշո, տովարիշ» ասեց ու շարժական խոհանոցը գոռալով քշեց կիկոսի դուռը:

Յերկինքը շառագունել եր. որը բացվում եր:

Իվանը սարք ու կարգ եր անում, յերբ ջահելներից մի հինգ հոգի յեկան ու կիկոսին, թե՝

— Ես զորքի մեծը մի մարդ առ ուղում, վոր գեղը կառավարի, մենք ել քեզ ենք հարմար տեսնում. հազիր ծանոթ ես սրանց հետ, ինքու ել հին դուլուղչի չես ելել, արի ես մեր գեղի կառավարիչը դառ, մինչև տենանք ես գեղի ցրված խալխը հավաքվի, են վախուր հալբաթ նրանք մի բան կանեն:

Կիկոսը դեռ գլուխը կախ միաք եր անում, յերբ կինը մեջ մտավ.

— Լավ են ասում, գնա, քանի պետք առ ուրիշը քու զլուխը թակելով կոռ դարկի, հիմի յել դու դառ ես գեղի տերն ու տիրականը. հողեմ յես քյոխվի զլուխը, մեզ երել-խորովել ա. դու ել ջանը քարեքար ես զցել ես որվա համար, գնա, գնա, լավ են ասում:

Ջահելներն ավելի վոգեորվեցին ու սկսեցին համոզել կիկոսին, վորը կացինը ձեռին փայտ եր ջարդում իվանի համար, շուտ-շուտ ցույց տալի փայտի չոր կտորներն ու պարծանքով ասում:

— Իվան ջան, տեսնում ե՞ս ինչ չոր դրավա յա. դու քեֆդ քոք պահի՝ հըես եշ կչուկեմ ու ես մոտիկ տեղից դհա լավը կըե-

րեմ: Ա՛ կնիկ, գնա տես հավերը ձու յեն ածել, բեր իվանի համար մի ձվաճեղ անենք, չուկն ել հազիր արա, ես ա եշ մի գուրս հանեմ գոմիցը...

— Թեզ կառավարիչ են ասում, կառավարիչ, զայրացավ կիւը, եշ չեն ասում:

— Գնա բանիդ, կնիկ, կիկոսը գեղի կառավարիչ, իսկի ըլելու բան ա... յես վոր ես խառը ժամանակ կարենամ գլուխս պահեմ, եդ ել մեծ հունար ա...

Վոչ մի հորդորանք ոգուտ չտվավ:

Հենց եդ միջոցին եր, վոր գյուղամիջում զանզը հնչեց: Դա նշան եր, վոր ժողով ել լինելու: Տղերքը մի կողմ զոռով, մի կողմ խաթրով, կիկոսին առաջ արին գյուղամեջ, իրար հետ խոսք կապելով, վոր ամեն կերպ աշխատեն կիկոսին համոզեն գյուղի կառավարիչ դառնալու:

Շուտով ես ու են թաղից սկսեցին հավաքվել գյուղամեջ: Շատերը վախով. շատերն ել կասկածանքով մոտենում եյին շտաբի դռանը՝ իմանալու, թե ինչ նոր բան պիտի ասի նոր իշխանության ներկայացուցիչը:

Կանալք քաշվել եյին մի անկյուն և ուշադրությամբ դիտում եյին կարմիր-բանակայիններին: Ծերունիներից վոմանք նստել եյին քարերի վրա ու չիբուխ եյին ծխում, իսկ ջահելներն ել անսպատակ վազվզում եյին ու աղմկում:

Գյուղացիք, վոր մինչ այդ սարսափելի առասպելներ եյին լսել բայլշելի զորքերի արաբների, նրանց թալանների ու ավերմունքների մասին, զարմանում եյին, թե ինչու այդքան հանգիստ ու խաղաղ եյին պահում իրենց. վոչ մի մարդու վատ խոսք չեյին ասում, վոչ ել տանից հաց դուրս քաշում կամ ապրանք զոռով զոմից հանում: Իսկի կովող թշնամու զորքի նման չեյին: Զարմանալի յեր նաև այն, վոր զորքի մեծ մասը հայերից եր, այն ել շատերը ծանօթ, իրենց հայրենակից, մոտիկ գյուղերից:

Շտաբի մեծավորը դուրս յեկավ, մոտ կանչեց բոլորին և ճառի վոխարեն սկսեց զըուցյ անել գյուղացիների հետ, վոնց վոր նրանցից մեկը: Վոչ բարձր զոռզոռում եր, վոչ վոտներով տափը թակում, վոչ ճահճի մեջ ընկած ծիու պես ձեռները թափահարում:

Մի քարի վրա նստած, հանգիստ, կես հանաքով-կես լուրջ խոսում եր նոր իշխանության, նրա նպատակների ու անելիքների մասին:

Գյուղացիք, վոր սովոր եյին իշխանավորի մեջ անսպատճառ բունցք ու մտրակ տեսնելու, հայնոյանք ու սպառնալիք լսելու, մի

խոսքով՝ այն ամենը, ինչ վոր վախ ու յերկուղ ե առաջ բերում մարդու մեջ, հետաքրքրությամբ հետևում ելին ես նոր աեսակի, «իրանց զայդի» խոսողի ամեն մի բառին ու սիրա առած հարցեր ելին տալիս:

Զբորյցն աշխուժ կերպարանք եր ընդունել: Կանայք, վոր մինչ այդ հեռու քաշված ելին, նրանք ել մոռեցան և մինչև անգամ հարցեր տվին: Իհարկե, ամբողջ խոսակցության նյութը գյուղի ու գյուղացիների ցանք եր, իսկ եդ ցանքերից ամենամեծը՝ խաղաղության ու գետի կայարան ճանապարհ բաց անելու հարցը:

— Հըմի, ագա...—ծոր տվեց մի ծերունի...

— Աղա չե, ընկեր: Ըսկեր պետք ե ասեք. մեր մեջ աղա չետ, հայրիկ. — ընդհատեց մեծավորը:

— Լավ ես ասում, բայլա ջան, լավ հնդերը ոխտն ախտորիցը լավ ա. դու յել մեր զայդի մարդ ես երեսում, հմարատ ու գոռոզ չես, շատ ապրես, վոր մեր երված սրտին մխիթարանք ես յեկել. Թե վոր բայլշիկ են ասում, ինչ են ասում, դիվն ել քեզ պես են, հնդեր ել եք, տխապեր ել: Հա, են ի ասում: Եդ ինչ վոր զրից արիր, շատ հավան ենք, համա շատերն են եկել ըսհենց զրից արել, շատերըն են իրանց գովել-գովարանել... Յես պառավ, մի վոտս գերեզմանում մարդ եմ, գլխովս շատ փորձանք ամսցկացած. կբաշխես, վոր ասեմ՝ շատ բանին ել չեմ հավատում: Հրես ես ժամն ինչ ա, ես ժամը վոր ասում են աստծու տունն ա, ես ժամի տերը—մեր տերտերն ել ա շատ քարոզ ավել համա մի բան ելա մեր աչքովը տեհել չենք. ենքան թերահավատ եմ դառել, վոր քիչ ե մնում հոգիս կրակը գցեմ, աստօծս ուրանամ: Զուխտ-ջուխտ տղերքս սարի պես կանգնուծ, կոփի տարան, թագավորի թախտը բաթմիշը ըլի, ինչ բաթմիշ ելավ: Հույսս կապելի աստծուն, ամեն մի տղիս ուղուրին մի-մի աշառ մատաղ մորթեցի, վոր աստօծ նրանց համար գյուլի ըսիսըն ազատի... Համա տղերանցս տեղ՝ նրանց սև գիրն եկավ, տունս քանդկեց, դուռս երեսիս փակ մնաց...

Ծերունու ձայնը կերկերաց, ու աչքերիցը յերկու խոշոր կաթիլ արցունք կախվեց, վոր չուխայի թեքովը սրբելով շարունակեց.

— Բայլա ջան, սիրաս փուլ յեկավ, կբաշխես, պառավել եմ, սիրաս ամեն բանի չի դիմանում: Հենց կիմանաս, թե իմ ցանք եմ սղում, չե, բայլա ջան, եսքան խալիսի մեջ մեկը չկա, վոր սիրաը դաղված չըլի: Հրես ե, ես իխանի, ես կնանոնց միջին մինն ելա կա վոչ, վոր յա տղեն, յա մարդը, յա ախապերը կորած չըլի... դիմս ել երված ենք... Հիմի յել դուք եք եկել. լավ եք արել, բարով եք եկել, մեր երեսը ձեր վոտի տակը... Խոսալդ ել իրան կարգին, հա-

մա ասա՝ ես կոփիմներին մի տուտ, պուճախ, մի վերջ, մի հատնելիք, մի ծեր (ծայր) կա, թե քանի սաղ ենք, պետք ա իրար ջընջենք... Չես զիդում ե, չես զիդում, թե ինչ ենք ուղում: Ուղում ենք, վոր ել թվանքի տրաքոցի ձեն չիմանանք, պատրոնը երադ գառնա, բարութն ել դարմանի (գեղ) համար ման գանք, գտնենք վոչ: Ասում ես—ինչ ա մեր ցավը, այ, ես ամենամեծը: Թե վոր կույին վերջ կտաք, յես իմ պառավ տեղովը կուրանամ յերկինք ու հրեշտակ, ձեր առաջը խունկ ու մոմ կվառեմ... Ի՞նչ կասեք, ա խալի.—դիմեց ծերունին խմբված հասարակությանը:

— Քրհատ ա, զնրթ ա, ե՛դ ենք ուղում,—ձայն տվին ամեն կողմից.—Արթյուն ապերը դրուստ ա խոսում, նրա ասածն ա...

Ծերունին վոգեորված, թափ տվեց չիբուխը, ապա թամբաքուի քիսան թափահարելով՝ սկսեց լցնել, շարունակելով.

— Եդ մին: Գլխացավանք չըլի, բայլա ջան, ցավ շատ ունենք. ոխտն որ պատմեմ, համանիլ չի. համա թող մինն ել ասեմ ու պրծնեմ:

— Ասա, հայրիկ, ասա, մենք ել հենց ե՛դ ենք ուղում, վոր ամեն բան իմանանք, գուցե մի ճար գտնենք,—ասաց շապեի պետն ու գլուխն կախ՝ ականջ դրեց:

— Մեր մի ցանք ել են ա, վոր... Հրես տեսնում ես ես իդիթ տղին, հրես վոր կողքիս նստած, կուռը կոտրած ու առանց մի վոտի... Սա մի ասլանի բերան ճղող մարդ եր, ոխտը հարամու դեմ դնացող. հիմի յեսիր ա դառել, վոտը կոտրած ճուտի պես յեսիր: Ոխտը տան ումուղը, հիմի ինքն ա ուրիշի ձեսին մտիկ տալի: Ե՛ս, բանի-քանի դրա պեսէրը կան... Հա. խոսքիս քամակին մտիկ: Մի խի չես հարցնում, թե ընչիցն ա ըսենց ելել... Ես մեր հայոց թագավորութինը վոր եկավ, կզիտենաս, եդ թագավորության հետ ել թուրքի ու հայի մեջ կոփի ընկավ: Եկան թե՝ ով նամուս ունի ու գլխին փափախ ա ծածկում, թող կոփի դուրս գա թուրքերի գեմ ու ճամպեքը բաց անի մինչի վագգալ: Դե դիտաս ելի, դու յել ես ջանել, կիասկանաս: Զահել տղեն վոր թուր ու թվանքը կապում ա, ձին նստում, հենց ա գիտում, թե սաղ աշխարհն իրանն ա, մարդիկ ել ճանճեր են իր առաջ: Եղան ել մեր ջահեները—նրանց մեջ ել գլխավորը սա: Գնացին, վրա տվին, մի թուրքի գեղ ել վառեցին, հարամ ապրանքն ու հացն ել թալանեցին, բերին, «խումբերը» տարան, ինչ արին-չարին՝ գիտեմ վոչ, վերջն ես դուս եկավ, վոր սա ըսենց ես որն ընկավ, որա պես ել շատերը: Թուրքն ել մեզանից խելոք եր. տեսավ իրան շատ են նեղում, մեջքն ուուսին բութա արավ, պնդացրեց ու... ճամբեքն ել բացվելու տեղ, հենց պինդ փակ

վեցին, վոր ոխտն յերկաթի դուռ ու կողպեք ըլեն վրեն դը-
րած։ Հիմի խոսքս ըտեղ ա գալի թե... եղ մեր տեսած ճամպեն
բաց եք անելու, թե մի թազա կոիվ ել նոր պտեք սարքիլ... մենք
վոր կանք, իրարով ապրող մարդ ենք, թուրքերը վոր մինչև մեր
արտերը համելը մեզ հաց չտան, մենք կոտորվենք, թե վոր մենք
ել նրանց մեր սարերը չթողնենք, նրանք ել ենտեղ կոտորվեն։
Մենք ել ենք ադամորդի, նրանք ել, շատ ել թե մինս թուրք ա
ծնվել, մեկելս հայ. իսան ենք, պետք ա ապրենք, չե... մի յերկու
որվա կյանքը խի յենք սև անում... դինջ ու սերով ապրենք ելի...
եղ եմ ասում, թեկուզ նեղանաս ել, յա խելքը պակաս պառավիր
տեղ դնես...

Թե ով ա մեղանից արդար՝ ով ա մեղավոր, եղ հողը կջոկի,
մենակ թե իմ աչքովը տենամ, վոր առաջվա պես ճամպեքը բաց,
լեն ու ազատ գնում-գալիս ենք, մեր հարկանութիւնն ել հաստատ
ա, ել մեռնեմ, դարդ չի։ Դե յես պրծա, ասելիք չունեմ ել. մնացա
ծը դու գիդաս, ես խալիսր։

Ծերունին վերջացրեց իր խոսքն ու մեջքը պատին դեմ անե-
լով չոփով սկսեց չիբուխի կրակը խառնել, վոր ծուխը վարարի։

Միքանի հոգի ել դեսից-դենից հարցեր տվին, խոսեցին, բայց
ամենքի ասածն ել նույն յերկու գլխավոր խնդրի շուրջն եր պըտ-
տում. նրանք միայն ավելի մանրամասնություններ եյին ավելաց-
նում և ավելի սարսափելի պատկերներ նկարագրում, թե ինչպես
մեծ պատերազմից սկսած մինչև եղ որը գյուղն անվերջ կոփմերից,
սովից ու հիվանդություններից տանջվել ու քայքայվել ե։

Ամենքն անհամբեր սպասում եյին, թե ինչ կասի մեծավորը,
վորը գլուխը կախ լսում եր, ու յերեմն թափահարում, յերը լսում
եր մեկ-մեկու յետեից պատմվող սոսկումների շարանները։ Նա կա-
մաց գլուխը վեր քաշեց ու հաստատ, վճռական ձայնով ասաց.

— Խորհրդային իշխանությունը ձեր իշխանությունն ե, այսին-
քըն ձեր ծոցից դուրս յեկած բանվորների ու եստեղ մնացած չքա-
վոր գյուղացիների։ Այժմ մի բան կարող եմ հաստատ ասել, վոր
ձեզանից ամեն մեկը, տղամարդ թե կիսարմատ, կարող ե մեն-մե-
նակ, ազատ գնալ կայարան, նրա մազին դիպչող չի լինի, ճանա-
պարհը բաց ե ու ազատ։ Յեթե կուզեք՝ հենց այսոր փորձի համար
կարող եք միքանի հոգի ուղարկել մեր մարդկանց հետ կայարան,
վորոնք նավթ, աղ ու ալյուր են բերելու զորքի համար։ Ես մի
հարցը վճռված ե։ Ինչ վերաբերում ե մյուսին, վոր պատերազմ
այլես չլինի, մենք հույս ունենք, վոր մինչև մի յերկու ամիսը դուք
այլես վոչ մի հրացանի ձայն չեք լսի։ Ինչպես դուք եք կոփմերից

քեզարել, այնպես ել ձեր հարկան թուրքերը. և վորովհետև իշխա-
նությունը ձեր ձեռքին ե, և դուք ել կոփվ չեք ուզում, պարզ ե,
վոր այլևս կոփվ չի լինի։ Կապրենք, կտեսնենք։ Իսկ այժմ դուք
պետք ե ձեր միջից մարդիկ ընտրեք, վոր գյուղը կառավարեն։ Ըստ-
րեք ենտեսակ մարդկանց, վոր վոչ գող-ավագակ լինեն, վոչ կըու-
վարար խառնակիչ, վոչ ել նախկին տանուտեր կամ ստրաժնիկ կամ
թագավորի հին ծառայող, դուլուղչի։

Ժողովը վերջացած եր. ամենքի դեմքը պայծառ փայլում եր։
Մեծավորը մտավ շտաբի սենյակը, իսկ գյուղացիք սկսեցին սովո-
րական աղմուկով խորհրդակցել, թե ով պետք ե լինի գյուղի նոր
կառավարիչը։

— Վո՞րն ն այս պատմվածքում կարեռը կիկոսի արկածները, թե՞
նրա շուրջը կատարվող դեպքերը։

— Վո՞ր ժամանակաշրջանի Հայաստանն ե նկարագրված այստեղ։

— Ի՞նչ ընդհանուր բան կա այս պատմվածքի և Ակսել Բակունցի
«Վանդունց Բաղին» պատմվածքի մեջ։

Վ. ԱՆԱՑԱՆ

ԿԱՐՄՐԱԴՐՈՇ ՊԱՏԱՆԻՆ

ՑԵԽԸ ՀՈՍՈՒՄ ԵՐ...

18 Թիվ...

Այդ տարվանից հիշողությանս մեջ ամենից թարմ մնացել է ցեխը։

Այն, ցեխը, վոր այդ դարնանը հոսեց մեր լեռների լանջերից
դեպի վար, դեպի անդամախոր ձորերը և իր ճամբին տակով արավ,
սևացրեց, աղականեց մեր կանաչ արտերը, թավշա մարգագետին-
ներն ու նոր բացված ծաղիկները։

Ախր ինչպես գոյացավ ու հոսեց ցեխն այն լեռներից, վորոնց
լանջերում յես միայն ծաղիկ ու կանաչ եմ տեսել և մեկ ել ձուն,
յերբ աշնանը վրանները պոկում եյինք ու քոչում ձմերանոցները։
Բայց ցեխ, ցեխի հեղեղ յես միայն 18 թվին եմ տեսել։

Ցեխը գոյացավ մարդկանց հեղեղից, ահաբեկված թշվառ ամ-
բոխի հեղեղից, վոր մեր կանաչագարդ ու անտառապատ լեռներից
հոսեց դեպի վար, դեպի մեր աղքատիկ ու հյուծված դյուղը, վորը
կուչ եր յեկել լեռան ստորոտին՝ Դիլիջան տանող ճանապարհի
վրա։ Ահա ինչու մայիսյան մառախչապատ ու անձրեսու որերի մարդ-
կային հեղեղն անցնելուց հետո, մեր գյուղը մտավ ցեխը—մեր
սարի սև ցեխը։

Յեխը հանդարտ եր հոսում և տեղաեղ դեմ եր առնում մարդկանց ու կմախքացած անասունների գիտակներին կամ մի խորտակված սայլի, լճանում եր, իր գիրկն առնում և վրայով շարունակում հոսել ցած...

ՄԱՐԴԻԿ ՆԱԽԱՆՁՈՒՄ ԵՆ ԶԻԵՐԻՆ

Ղաղախում մայիսը գեղեցիկ ե: Առները կանաչաղարդ, թափիշ, սակայն այդ տարի սովի, մերկության, խեղճության հետ մայիսը մեզ անձրեւ ու մասախուղ բերեց: Կարծես յերկինքն ել դաւացած հրդակային այն խմբի դեմ, վոր բուն դրեց մեր դյուզում, հնձեց մեր կանաչ արտերը, մորթուեց մեր անասունները, պուճախից հանց դարու ու կորեկի վերջին հատիկն ու հարյուրավոր մարդկանց սովի ճիրանները նետեց...

Հավ եր: Մտռախուղն անցավ, անձրեւ դադարեց և բաղցած ամբոխը տափարի նետ դաւ յեկալ արածալու:

Հավ եր, շատ լավ, վոր Դիլիջանում բուն դրած Սեպուհի հրասակները չեյին կարող հանդի կանաչն ել խլել քաղցած բերանաներից:

Յեվ այն ժամանակ, յերբ Դալմանց Յեփրեմի, Մելոնց Ամինի և նրանց պես հարյուրների տոտամները կանաչել եր «բանջար» ուտելուց, յերբ անասնապահը կաթի մեջ հացի փոխարեն պանիր եր բրգում, այդ նույն ժամանակ Արսենի տներում «Վանսկի պոլկը» խրախճանքի գիշերներ եր լուսացնում և հոշտում աղքատի թասից վերցրած վերջին հավը, արխաջից՝ զենքի ուժով հափշտակած վերջին վոչխարը: Անդրանիկ փաշայի, զորավար Սմբատի և մյուռների ճիերի համար զարուց հաց եյին թխում: Մարդիկ նախանձում եյին ճիերին և կուզեյին իրենք ել ձի լինել:

Այդպես եր տամնմեկ տարի տուած, 18 թվի մայիսին:

ՑԱՅԻ ՏԵՂ ՄԵԽԵՆԵՐ

Տարուց ավելի հրոսակախումբը չոքած մնաց մեր դյուզի բեկին: Ամեն առավոտ դաշնակցական կոմիսար Ասատուրը դուռը կտրում եր ու մարդկանց պլետի տակ տալիս:

— Շան վորդիք, մարդիկ ֆըռնտում կոտորվում են, դուք կու ել չեք գնում: Յեվ կմախքացած յեղներին արձակվում եյին գութանից, արորից, խոտի սայլը բարձած մնում եր կես ճամնապարհին: Այսոր Սեպուհի խմբի համար անտառից փայտ են տանում, վաղը կոմիսարը վեց սայլի կարիք ունի: Իսկ ամեն որ ռազմամթերք պիտի տանենք, դա մեր անվիճելի պարտականությունն ե:

Յերբեմն ել սայլը խլում են ուղիղ դեպի կաղարմա:

— Այ, լազար! կտա սոմի*): բարձեն, անցնում ե մտքովդ ու բերնիդ ջուրը թափելով սպասում ես, թե եսա կդա մեշոկներով սոմին, միաը կամ ամերիկական կաթը. հույս ունես մի կտոր ել դու ճենկիդ քցես:

— Զե, բալամ, մելեռներ են բերում:

Զանդ վիշաքաղվում ե. միբադ կծկվում, ցավում, իւկ նրանք սառնասիրտ կերպով սայլիդ բարձում են տիֆից, քաղցից կոտորված զինվորներին ու քշում դեպի գերեզմանատուն...

Յեվ մահը անխնա իր հունձն եր անում կաղարմաներում, դյուզում ու անդամ կանաչաղարդ իմ սարերում, ուր առաջ մահն այնքան վարանուա քայլերով եր մստենում:

ԲՈՒՆՑԲ*:

Գարուն եր: Նոր ցողուն արձակող արտերը մեջ հացի համ տեսնելու հույսեր եյին զարթեցնում: Ահա ինչու սոված ամբոխը գաղաղեց, գուրս յեկավ ափերից, յերբ մի առավոտ դաշնակցական հեծելագորի ճիերն արտերը քանդելիս տեսավ:

Համբերության բաժակը լցվեց: Դանակը վոսկորին հասավ:

— Ծղերք, բա փափախ չկմ ձեր զլիկին, եկուց մեր աղջիկներին ել կտանես, բա տղամարդկություն չկմ ձեր մեջ:

— Ծիդրան, թվանքդ մեյզան հանիր, մեռնելը սրանից լավ առ ու ֆրոնտից փախած մի խումբ աղերք վրա տվին մառզերիստական խմբերին: Մասուզերիստները ճիերը, զենքերը, շատերն ել գըլխարկները թողած մինչև Դիլիջան. մի շնչում ճղեցին: Գյուղում «Վանսկի պոլկի» հետքն ել չմնաց:

Ապստամբներին տմեն կողմից խրախուսում եյին: Մենակ նոր կոմիսար Մելոնց Դաշնութին եր կտառարեւ փրփրեւ, մեկ ել ճերերից վոմանք հանգիմանում եյին շահեներին:

— Այ զանմազներ, տերություն ա, թոփ ու թոփիսանա ունի, դուք քանի զլիանի յեք, վոր թվանք եք քաշում տերության վրա:

— Զեվ եժան չի նոտի, սրիկաներ, սպասեցեք, — սպասնում եր կոմիսարը:

Յեվ եժան չնոտեց, Միքանի ժամ չանցած Սեպուհի հերոսները շրջապատեցին դյուզը: Բլուրներից ու գյուղի գիմացի գերեզմանատներից սկսեցին անդամ արձնե կարկուտը:

— Տը, տ'ը, տ'ը, տրա, տրա, տրա... Կղմինդրները տանիքներից սկսեցին կարկտահար տերենների նման ցած թափվել: Գյուղա-

*.) Սոմի—թխված հաց:

*) Բունչ—ապստամբություն:

ցիք լեղաճաք տները թափվեցին: Մի խումբ ձիավորներ սրերը մերկացրած արշավեցին սարի դոշին կանգնած բունտի ղեկավար Տիգրանի վրա: Առ նժույգը խոռվարարին միքանի ըոպեյում սարն անցկացրեց:

Ապստամբությունը ճնշված եր: Զինվորները թափվեցին գյուղը: Նորից թալան, նորից խոռվարկություն: Խոռվարարներին են փնտում, սակայն նրանք չկան. փախել են լեռներն ու թագնվել քարանձավերում, կիրճերում, անառիկ քարավներում:

Ա.Ռ.Ա.ՁԻՆ «ՎԱՐՍԼ»

Արխային ճամբեղ գնում ես, մտածում ընտանիքիդ, ցավիդ ու դարդիդ մասին, մեկ ել հաստաբուն մի կաղնու լանջով, կամ թիերի արանքից քեզ վրա ուղղված յես տեսնում հրացանի զարգանդ ազդող փողը:

— Զինաթափ:
— Զեռքերդ վեր:
— Բեռդ վայր դիր, շորերդ հանիր ու կորիր, թե չե ծուխը փորդ կլցնեմ:

Յեվ թալանում եյին բայց-աշկարա, որը ցերեկով:
Մեր տանն ապրող դաշնակցական զինվոր Բարկենն ամեն յերեկո մեծ հաճույքով եր պատմում դեպի մալականի հանդը կատարած իրենց ևսիքի «մաներայի» մասին:
— Ուսւ աղջիկները լամփ են, շատ լավը:

13 տարեկան Հանեսը ճմերանոց ե գնում: Զիու թամքից միքանի հավ ունի կախած:

Դշտողանի զետի մոտ դաշնակցական մի մասուզերիստ առաջը կտրում ե.

— Զինաթափ, հավերը վայր դիր: Հրամայում ե նա՝ մատը հրացանի շնիկին դնելով:

Արիասիրտ պատանին իրեն չի կորցնում, կարաբինը վղիցը հանում ե ու դաշնակի ճակատի մեջտեղը՝ «տրաք...»:

— Այ քեզ զինաթափ: Յեվ ձին մարակում ե ու կորչում մթին ծմակում: Հետեւից մասուզերիստներն ապարդյուն կըակելուց հետո՝ «հերոսաբար» ընկած ընկերոջ թալանում, շորերը տանում:

ԴԵՊԻ ԿԱՐՍԻՐ ՊԱՐՏԻԶԱՆՆԵՐԻ Ա.ՊԱ.ԱՏԱ.ՆԸ

Գիշեր ե. խավար ու ցուրտ գիշեր:
Լեռնային կածանով մեկը ձիու սանձից քաշելով բարձրանում ե զեպի վեր, դեպի քարալրում բոցվառող լույսը:

Կրակի մոտ ինչ-վոր ստվերներ են շարժվում: Մեկն ահազին մի շալակ փայտ դրեց խարույկի վրա: Կրակը բորբոքվեց, կայծերի խուրձեր արձակեց և լուսավորեց մթին լեռան լանջը: Ներքեռում հաստաբուն մի կաղնու հետեւից հրացանի փողը մեկնվեց ցած՝ դեպի ձիավոր պատանին:

— Ո՞վ յես, կանգնիր:

Պատանին կանգ առավ: Զին անհանգստությամբ սկսեց շարժել ականջները:

— Յես եմ, գոմերի գառնարածը:

— Աղա Հանես, դու յես, ադա եղ ուր ես գնում ես չախին:

— Հենց ձեղ մոտ եմ դալի, լավ եմ դտել-պատասխանեց պատանին և աշխուժությամբ շարժվեց առաջ:

Թեժագած խարույկի շուրջը գետնին ծալապատիկ նստած մարդիկ պատասխանեցին պատանու բարեկին: Նրանցիդ միքանիսը ճանաչեցին:

— Իգիթ տղա յա, իգիթ, յերեկ են չներից մեկին Աբրահամի գողն ուղարկեց,—ասաց Վահանն ու հաստ հոնքերի տակից սկսեց խանդադանքով նայել պատանուն:

— Հանես, նստիր, ինչ խաբար կա:

— Մեր գեղը արդեն մաքրել են ու եսոր մալականի գեղի բկին են չոքել: Ճաշին Դուրդաղից մտիկ արի, ինչ տեսնեմ—զորքերը շրջապատել են գյուղը ու թոփով, պիմոտով կրակում են խեղճ մալականների վրա: Մեպուն ասել ե, յեթե եսոր եսքան հազար փութ կարառիկ չտաք, բոլորիդ սուրը կքաշեմ:

Տղերքը մտատանջության մեջ ընկան:

— Հա, են եյի ասում—շարունակեց վաղուց ընդհատված խոսակցությունը Պետիկը—Փրոնտից փախած աչքաբաց մի յերիտասարդ, վոր ըստ յերեսույթին պարտիզանական խմբի զեկավարն եր, — են եյի ասում, հարկավոր ե կապիկ Դիլիջանի ու Շամշադինի խմբակների հետ... Նիկոլը աչքով արավ ու կեղծ հազով հասկացրեց՝ լոել:

Պետին քմծիծագ տվեց.

— Զե, յես Հանեսին լավ եմ ճանաչում. նա մերն ե, մեր մեջ նրանից շատ ով ե ճնշվել: Հանեսը հասկացավ ու քաշվեց դեպի իրեն յեղած վատահությունից:

— Յես ել գնալու տեղ չըւնեմ, ասաց նա, ինչ վոր անեք, ձեզ հետ եմ, եղ շներն ինձ հոտոտալով փնտում են, վորտեղ գտան կապանեն, ենալես վոր յես ձերն եմ,

Յեվ նա ախալես ամուր ու վատահ շեշտեց վերջին բառերը, վոր ալևս կասկած չմնաց:

— Տղերք, Հանեսի փոքր ու կտրիճ լինելը մեզ շատ պետք կդա: Նաղդի վրա մեզ հրահանգներ ու գրականնեթյուն ե պետք, մեկ ել ստույդ տեղեկություն, թե ինչ է մատում կենարոնը, ինչ լուր կա միուսաստանից: Յես մի թեթև լսեցի, վոր մերոնք Բաղվին մոտեցել են, չգիտեմ վորքան հաստատ ե:

Յեվ մինչև ուշ գիշեր խումբը յերկար ու բարակ քննեց մոտիկ որերի իր խնդիրները: Հենց նույն գիշեր ընկերներից մեկը ցուց մունքներ ստացավ և ճանապարհվեց կեպի Շամշադին:

— Թողեք յես զնամ ելի, բուռն ցանկությամբ ասաց Հանեսը, յերբ Զատնանց կաղ Գրիգորը թուղթը ծոցը դնելուց հետո՝ աշխուժությամբ անցավ թփերի արանքով ու անհետացավ անտառի մթության մեջ:

— Մի վռազիր, եղուց ել դու կպնաս, քո շորերն ու շնորհքը փոխելու յենք, թե չե կըսնեն մեծ թիքեդ ականջդ կթողնեն:

Յերկար ժամանակ պատամին աչքը չեր հեռացնում հաճարի այն ծառից, վորի հետեւ անհետացավ կաղ Գրիգորը:

Վերջերս նրան ինչ վոր մի ուժ մղում եր գեղի աղմկահույդ տարերքը: Յարիների ընթացքում նրա պատանի հոգում ամբարված մաղձը ալեկոծվում, յելքեր եր փնտում: Յեվ այսոր յետ քաշվոր վարագույրի հետեւ կարծես այդ յելքը ավելի պարզ, ավելի պայծառ ե յերեւում: Դեռ մոտիկ անցյալում կնյազը, ձմերանոցի տե՛ր ըերը նրան անձեռնմխելի ու որենքի մարմնացումն եյին յերեւում, նա տեսնում եր և իր նմանների ու նրանց միջև գոյություն ունեցող վիճը: Նա տեսնում եր մի խումբ «բախտավորների», վորոնք անդունդի մյուս կողմը, անհասանելի բարձունքներում ազահությամբ ծծում են կյանքի բարիքները: Յեվ նրան թվում եր, վոր դա հնարք, շատ հնուց «պատճենական որենք ե», ինչպես իր հայրն եր ասում «բալա մենք մեր վուները նրանց հետ չենք կարա մեկնի, նրանք մեծ մարդիկ են, նրանց աստված եղավես և ստեղծել»: Յեվ բատրակ պատանին գտմշարած ու դառնարած ժամանակ այդ համոզմունքով ել անմտունչ տանում եր բոլոր զրկանքները: Իսկ այժմ նա ինչ-վոր ըմբուստացել ե: Մի շաբաթ առաջ եր, վոր նա միքանի խոսք լսեց «բայլշեիկ» Ղուկասից և այդ միքանի խոսքը թրի նման ծվատեց վարագույրը: Այժմ՝ թեւ կարծես մշտում, բայց նա նշմարում ե վարագույրի հետեւ թագնված իրականությունը և՝ վոր գլխավորն ե, տեսնում ե դեպի նոր կյանք տանող ուղին:

Գյուղի ապստամբությունը և մասուղերիստներին խփելը նրան վոչ միայն ահազին քաղաքական վորձ տվեց, այլ և վերջին այդ դեպքերը հղոր ուժով նրան շպրտեցին մյուս ափը, վորտեղից նա

վերապարհուալ կարող եր միայն զենքի ուժով, արյունոտ պայքարով:

Նա տեսնում ե, այժմ արդեն պարզ ե տեսում արյունոտ ու քարքարուա այդ ճանապարհը, սակայն և պարզ կերպով նշմարվում ե մոտեցող վարդագույն արշալուսը:

Խարույկը հետզհետե իջնում ե, մեղմ բոցկլտում: Յերբեմն այրվող մի փայտ զրկվում ե նենաբանից ու ճարճատելով ընկնում: ցրվող կայծերի լույսի տակ փայլում են պղձագույն նիբող դեմքերը, փամփշտականներում փայլող պղնձյա փամփուշտների և քարին դեմ տված հրացանների պղղպատյա փայլի նման:

Յեվ պատանին արևավառ ու բրնձյա փայլող այդ դեմքերի վրա յերկաթյա վճռականություն ու մոտալուս հաղթանակի խորը համոզմունք ե կարդում...

ԿԱՅՑԱՆԻ ՀԵՏ ԱՆՏԱՌԻ ԺՈՂՈՎՈՒՄ

Թփերի, ծառերի արանքներով, խոտերի ու բուճկուանների միշտով փորսող տալով ինչ-վոր մարդիկ են բարձրանում դեպի վերին բացատը: Հսկա մի աճարենու տակ արդեն հավաքվել են 30-ի չափ մարդիկ: Խոսում են շշուկով ու ծխում են շինեների տակ: Մեծ մասը զինվորականներ են: Մոտենում ե մի խումբ եւ: Խոսում են ուղևերեն: մեջ տեղը քայլում ե զածրահասակ ու ակնոցավոր մի մարդ:

— Ընկեր Կայյանն ե, շշնջում են ծառի տակ նստածները: Պատանին աչքերը չուում ե մթության մեջ ավելի լավ տեսնելու այն մարդուն, վորի մասին Պետիկը յերեկ այնքան վոգեորությամբ եր խոսում: Դեռ Պետիկը մի գիրք ել բարձրածայն կարդաց՝ «Ուր ե յելքը» վերնագրով, և ասաց, «Ես զիրքը կասյանն ե զբել»: Ինչ լավ եր գրտծ ե, ճամփեն ենալես պարզ ցուց ել տափս, յերեկի վրա համար են անունը զբել «Ուր ե յելքը». «Համա ստուսումնական մարդ կլինի հա», մտածում ե Հանեսը ու աչքը կարծանասակ մարդուց չի հեռացնում: Ժողովն սկսվում ե:

— Իսկ սա ով ե, այս փոքրիկը:

— Սարից ե յեկել, մերոնցից նամակ ե բերել կտրիճ տղայե. եսոր լավ միլրտություն ստացավ, կարող եք վստահել:

— Եղ առաջինը չի, վրա բերեց պատանին կարմրելով:

— Բռավո, ճուտիկը ել ինչ են արել քեզ:

— Դա յե արել, ասաց մեկը պառկած տեղից. միքանի որ տուած մեկին ստակացրել ե. եսոր ել շիշը հայրուրապետի գլխին փշեց: Միքանի ճեռքեր վոգեորդած բարձրացրին պատանուն:

— Ղոչաղ կաց, եղավես ել պետք ե:

Պատանուն ամենից շատ շփոթեցնում եյին ապակու տակից հայրական խանդաղատանքով փայլող զույգ աչքերը:

Ժողովում շատերը խոսեցին և շատ բանի մասին խոսեցին. այդ բոլորից Հանեսը քիչ եր հասկանում, բայց բնազորեն նա զգում եր, վոր բոլոր ասածները, նրանց բոլոր ծրագրերը այն են, ինչ վոր կա իր ներսում, ինչ-վոր ամբարված ե իր, Պետիկի, Սիմոնի, կաղ Գրիգորի և մյուսների ներսում: Առանձնապես հափշտակված նա լսում եր Կասյանի ասածները:

— Հիմնական այժմ դաշնակցական բանակը քայքայելն ե, ասում եր նա: Զինվորները — դրանք շինել հաղած գյուղացիներն են, իսկ գյուղը յերեկ ձեր աչքի առաջ ապստամբեց. ծայրահեղ ճնշումը, հարստահարումը, վոր կատարում են դաշնակներն այս գյուղերում չի կարող հուզմունք առաջ չբերել նաև ֆրոնտներում չորս հինգ տարի անասելի տանջանքներ կրած զինվորների մեջ: Այդ գժը՝ գոհությունը կա, հարկավոր ե ուժեղացնել կուսակցական աշխատանքը բանակում, գրականություն, կոչեր տարածել կազարմաներում և կտղմակերպել հեղափոխական այդ տրամադրությունները:

Բուռն վոգերություն ե առաջացնում Աղբեղջանի խորհրդայնացման լուրը: Մթության մեջ միքանի տամնյակ աչքեր հրճվանքից հրդեհվում են: Պետք ե կրկնապատկված յեռանդով գործի կազմել:

Իսկույն կատարվում ե աշխատանքի բաժանում. հատուկ ազիտատորներ են նշանակվում բանակի և գյուղի համար: Ներքին գյուղերից յեկած պատղամավորը յերկու խոսքով պատմում ե դաշնակների գաղանությունների մասին:

— Գեղի տղերքի մեծ մասը սարերն են փախել ու եստեղենտեղ կովի յեն բռնվում դաշնակցական խմբերի հետ: Յուցմունքների և գրականության մեծ կարիք ունենք:

Հենց այդ գիշեր յերկու հոգի ուղարկվում են Հաղափի ներքին գյուղերը՝ ապստամբական շարժումները դեկավարելու համար:

— Իսկ ով ե ցրելու թոռուցիկներն ու պլակատները, դառնում ե ժողովականներին բայլշկիկ ֆեղֆերել Հակոբջանովը և ծաղկատար հոնքերի տակ փայլող աչքերը ման ե ածում հարմար թեկնածու դանելու համար:

— Տվեք, յես կտանեմ, խրոխտ ձայնով ասում ե նա, — վճռական քայլերով առաջ ե գալիս և վերցնում ե թոռուցիկներով լիքը տոպլակը:

Բոլորը հայացքները սեեռում են պատանու վրա: Կասյանը ժպտում, մի ինչ-վոր բան ե շշնջում կողքին կանգնած մարդու ականջին ու դառնում պատանուն:

— Ապրես, տղաս, տար, բայց չբռնվես, յեթե բռնեն՝ ասա, վոր թուղթ ե, գտել եմ, տանում եմ գյուղերը կարտոֆիլի հետ փոխեմ:

Առաջ են գալիս յերկու զինվորականներ ևս և թոռուցիկներ խնդրում կազարմաներում ցրելու համար:

Հանեսը տոպլակը թերեն ե անցկացըել, բայց չի շարժվում:

— Տվեք նամակ և գրքեր, գնում եմ մեր խմբի մոտ, հետո ել ես թղթերը կտանեմ գյուղը:

— Չես կարող մի գիշերումն եղքանն անել, պնդում ե Ակոբ-ջանովը. բայց պատանին համառում ե:

— Թողեք Աղբեղջանի հեղափոխության խաբարը տղերքին հասցնեմ, հետո գնամ գյուղերը, — թախանձում ենա:

Համաձայնվում են: Պատանին «մնաք բարե» ե ասում և ցատկուելով անհետանում ե մթին անտառում:

«Մեծ կամրջի» ծայրին, միլիցիայի շտաբի առաջ համաշափ քայլերով հետ ու առաջ ե շարժվում պահակը: Պատանին մի բոպեկանդ առավ: Գարնանային պղտոր դետը վիշապի նման մոնչալով զարնվում ե պատերին, ամբարտակներին: Պատանին շոսսեյի կողքով ձգվող կանալով կուզեկուզ առաջ ե շարժվում, աննկատելիութեն մտնում ե կամուրջի տակն ու յերկաթե ճաղերից կախված ճոճկելով ճարպկությամբ առաջ ե գնում, դուրս ե գալիս մյուս ափը և զգուշությամբ քայլում դեպի բլուրը: Մի քար վոտքի անըզգույշ հարվածից աղմկելով գլորվում ե ցած:

— Ո՞վ ես, կանգնիր, — հրամայում ե պահակը կամուրջի ծայրից: Պատանին յեղնիկի նման սլանում ու անցնում ե բլուրը, իսկ հետեւմ հրամանը յերկու անգամ կրկնվելուց հետո՝ վորոտում ե հրացանը: Միլիցիայի մոտ ինչվոր խլրտում ե ընկնում, ձայներ են լավում, իսկ պատանին դուրս գալով ճանապարհից մտնում ե անտառը և թփերից, քարերից կախվելով մազցում ե դեպի վեր, դեպի կարմիր պարտիզանների բուռնը:

Ահա և քարայրերը իրենց սկ, գերեզմանի նման բերաններով: Լույս չի յերեսում, ձեն ձուն չկա: Վատանդ ե յեղել, տեղափոխել են, դե արի ու գտիր: Յեվ պատանին հոգնած ու ջարդված վուկորները հանգստացնելու համար կուչ ե գտլիս մի փոսում, վրան հավաքում ե ձյան տակից նոր դուրս յեկած չորացած տերենները և իսկույն քուն ե մտնում:

ԱՌԱՋԻՆ ՎՈՐՈՑԸ

Քարափներից, մթին այրերից, թփուտների հետեւ գդուշությամբ գլուխները հանում ու կուզեկուզ առաջ են շարժվում:

Հեռնային նեղիկ շավիղով, հրացանների կիսերից ամուը բըռ-
նած ցած և իջնում մեզ ծանոթ պարտիզանական խմբերը: Մթին
ծմակներից ու բարձրաբերձ լեռներից յեկող փոքրիկ այդ առվակ-
ները միանում են վոլորապտույտ ճանապարհներում, ձորերում,
պատահում են գյուղերի կատաղած ամբոխին, իրենց գիրին առ-
նում, ուռչում ու դառնում հսկա մի հեղեղ՝ պղտոր ու ահարկն...
Կազարմաներում ես կայծերը թեժանում են, հրգեհվում: Նշա-
նակված ժամին միքանի վաշտեր ապստամբում են: Առաջին ան-
գամ մառախլապատ այդ ձորերում, մայիսյան պայծառ արեի տակ
փողփողում ե կարմիր դրոշ:

Պայթում ե ամբարզած վառողը և կործանիչ ուժով թափ տա-
լիս տիրող կարգերի խարխուլ շենքը...

Մի խումբ ձիավորներ սրարշավ մտնում են գավառական քա-
ղաքը: Տների, նեղիկ փողոցների արանքներում կուղեկուզ առաջ
են շարժվում շինելավոր, արեխավոր, չուխայով ու շառերն ել մո-
թալ փափախով մարգիկ: Անձրեն ու արել քշել, տարել են նրանց
դեմքերի ու շորերի բնական տեսքը: Ամիսներ շարունակ ապրելով
խոնակ ու անհյուրնեկալ քարայրերում, այժմ գավառական կեղտու-
ու խարխլած այդ դյուղաքազաքը նրանց այնքան պայծառ, այն-
քան հոյակապ ե թվում:

Յեկ արնակալած աշքերով նրանք խուժում են իրենց այնքան
դեղեցիկ թվացող քաղաքը:

Տրա տա տա... միքանի բոպե ճարճատեց գնդացիրն ու
լոեց: Միքանի մառւզերիստներ թողեցին գնդացիրն ու իրենց ան-
տառը նետեցին: Քաղաքի միակ և գլխավոր փողոցով հաղթական
«ուռա»ներով առաջ ե շարժվում մի վաշտ: Կարճիկ, լայնաթի-
կանք ու ծաղկատար յերեսով մի զինվորական ընթանում ե խմբի
առաջից: Գեներալ Բաղդասարովին զինաթափ անող խիզախ բայլշիկ
Ակործանում ե: Նրա տջ կողմից գնում ե մեզ ծանոթ պատանին:
Նրա դիմիր վառվում ե վոգեռությունից, իսկ սիրնի ծայրին մա-
յայան արևի տակ փայլիւմ են գնդապետի վսոկեթել նախշերով
պատոնները (ուսագիրները):

Խմբերը մեկը մյուսի հետեւց գրավում են քաղաքի կարեռ
կետերը: Այս ու այն տնից դուրս են պրծնում «Սպարտակ» յերիտ-
միության անդամները՝ Գրիգորը, Բաղդիշը, Աշոտը և ուրիշները հրա-
ցանների կեսերից բռնած խառնվում են խմբին: Մառւզերիստական
խմբերն իրենց նետեցին յեղենու անտառն ու ապահով դիրքերից

սկսեցին գնդացիրներից ու հրացաններից դնդակ տեղակ առնտամբ-
ների վրա:

— Տրաք, տրաք, տրաք, տրատը տը, տահ-տա տա: Յեկ մա-
դում ե արճճի կարկուտը սարսափած ազգաբնակչության վրա:

Ապստամբների խումբը ցրկեց ու սկսեց աների արանքներով
կրակելով առաջ շարժվել: Գնդակը ծակում ե, սիմինի ծայրին ամ-
բացը առաջ ուստիրն ու վզում ողում, շամփրում ծառերը, ճյուղեր
ցած բերում: Գնդապետի պազոնի մի յերեսը վառողը վառեց. հա-
նելու ժամանակ չկա, պետք ե կրակել անընդհատ: Ահա նրանք ա-
ռաջ են շարժվում, նրանց ուժերը շատանում են, յերեկ ողնական
զորքեր են ստացվել... Յեկ քարքարոտ զառիվայրով կուզեկուզ մադը-
ցում ե պատանի պարտիզանը ու կրակում, հա կրակում:

Փամփուշտը վերջանում ե, ուժերն սպառվում, բայց անտառը
վերցնել կժվար ե, զրեթե անկարելի: Ծառերի հետևում դարան
մտած թշնամին հետ ե շղթառում կարմիր պարտիզանների խիզախ
գրոնները:

Յեկը ջուխտ ձեռքով բռնեց կողից ու նստեց պատի տակ...
Տեղացող գնդակների տարափի տակ պատանին վազեց զեպի վիրա-
փորը: Անտառից «ուռաներով» ներքեւ են վազում թշնամու ջոկերը:
Պատանին վիրափորին քարշ ավեց գեպի հարեան տունը, պառկեց-
րեց պատշգամբում, տանտիրունուց շոր խնդրեց և շտապ փաթա-
թեց ըկներով փորն ու կարաբինի կիսից բռնած դուրս վազեց:

Այս լնչ ե. հրապարակում արգեն յեռագույն դրոշն ե փայ-
լում: Փողոցներում մառւզերը հանած մարդիկ են վազում: Պատա-
նին իրեն քցեց փողոցի կողքին զառիվայրում թառած տան պատշ-
գամբն ու պառկեց:

Փողոցում միքանի մառւզերիստներ գլորեցին բարակ ու եր-
կար մի յերիտասարդի ու սկսեցին հարվածել հրացանի կոթերով:
Սպարտակի անդամ Բաղդիշն ե: Քիչ անց՝ քարշ տալով փողոց նե-
տեցին նրա յեղբորը, բայլշիկի Արմենակին և վոսկորները ջարդե-
լուց հետո՝ քարշ տվին գեպի բանտ: Պատանին սողալով անցակ
հարեան բակը: Միլիցիայի շտաբի մոտ սոսկալի մի տեսարան
բացվեց.—թոքախտափոր ու բարալիկ մի յերիտասարդի, —բայլ-
շիկի Իշխանի յերկար մազերից բռնած գլուխը խփում են հե-
ռազբասյունին: Նրա բժիշկ հայրը, իր վորդու ճիշտ հակապատկերը,
հաստիկ ու չաղիկ մի մարդ վազվում ե դիմացի պատշգամբում
ու աղիողորմ ճշում.

— Խղճացեք, պարոններ, թոքախտափոր ե:

Պարտիզան պատանու արյունը գլուխին ե տալիս:

Տրաք-տրաք-տրաք, կրակում ե մեկը մյուսի հետեւից նա ու թռչում հարևան բակը: Մառլերիստներից մեկի թևը քարի նման կախ ընկավ ու հրացան ընկավ ցած: Խումբը շփոթված ցրվեց ու աղա մերկացրած մառլերներով վազեցին կրակոցի ուղղությամբ: Պատանին բակից-բակ անցնելով հասավ «վոսկի աղբըին»: Յեվ հենց ուղում եր վազել ցած՝ տեսավ մեկը փոված ե սալահատակին՝ աղբը մոռ: Նրա չեշոտ դեմքի մի կտորն եր մնացել միայն, իսկ ջախ-ջախված գանգից ուղեղը թափվել եր աղբը թաց քարերի վրա: Եինելից ու ծաղկատար գեմքից ճանաշեց՝ Ակոբջանովն եր: Պատա-նու սիրտը կծկվեց կսկիծից. պետք ե փախցնել, վճռեց նա ու հենց կուացավ, վոր վերցնի, հետեւից լսվեց հրացանների պայմանուն: Զախ թեկից ինչ վոր սառը բան անցավ: Նա արագ շուռ յեկավ, թռավ մոտակա պատի գլուխը, մոտեցող մառլերիստական խմբի վրա կրակեց վերջին յերկու փամփուշտը, հրացանը նետեց ցած և իրեն շպրտեց առաջ բացվող ձորն ու անհետացավ մարդաբոյ բոնկուտի մեջ...:

ՄԱՐԻԶԵՐԻՍՏՆԵՐԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ

Չորրորդ որը ճուտիկը դուրս յեկավ մեզ ծանոթ լեռնաշղթայի հյուսիս-արեմտյան ծայրում, ուր յերկաթուղին բաժանում ե լեռ-նաշղթան յերկու մասի:

Այրում կայարանն ե: Ճուտիկը մեկնվում ե կայարանից քիչ հեռու մի ծառի տակ և քուն մտնում: Այնքան ե հոգնել, իսկ քաղ-ցից աղիքները կտրտվում են:

Լավեց սուլոց: Վեր ե թռչում ու նայում: Գնացքը վաղուց յե-կել ե, իսկ այժմ գանգաղ, յեղան սայլի նման շարժվում ե գեղի Մանահին: Վաղոններում տեղ չկա, շատերը կախվել են վաղոննե-ների, ճաղերից, կանգնել են աստիճանների վրա, վոմանք ել պառ-կել են վաղոնների կտուքներին: Միքանի զինվորականներ համանում են գնացքի յետեւից և սրան նրան ներքե են շպրտում ու ներս խուժում: Զաջուտից կանգուետորը բղավում ե:

— Տո, ուր կը շեն, բլեթ՝ ունե՞ս:

Բլեթ՝ բլեթ, իսոր ել բլեթ, ասում ե խոժուադեմ շինելավորն ու ձեռքը դնում մառլերի կոթին: Կանգուետորը մըթմըթալով հետ ե քաշվում:

— Ախպեր, պարյագկա չմնաց, զակոն չմնաց: Եհ, ջանմ, թող սելլոդկա եղնին, խոսես՝ մարդի գլուխը սոխի գլուխ ա դառել:

Ճուտիկը մտնում ե անտառի խորքն ու վազում առաջ, հաս-նում ե մոտակա թռւնելի պոնկին ու բարձր մի քարի հետեւ թաք

կենում: Գնացքը դանդաղ առաջ ե գալիս: Բանվորներից մեկն ան-գագար փայտ ե լցնում շոգեշարժի կրակարանը: Նավթն ով կտա:

Ահա շոգեշարժը մտավ թունելլ: Պատանին դուրս ե գալիս դա-րանից ու հովազի նման ցատկում յերկը բորդ վագոնի վրա և անմի-ջապես պատկում:

Սանահնում ինչ-ինչ պատճառներով ամբողջ գնացքը խուզար-կեցին:

Մեկը մառլերը հանած կանգնեց պառկած պատանու գլխա-վերնը:

— Առաջ անցիր, յեղավ հրամանը: Իշան վագոնի կտրից:

— Տո, ես վերգուց գտար ես բայլշկիկ լակոտին, բղավեց մի զինվոր և խնդալով բգեց ընկերոջը:

— Տո, Մացո, ես են լակոտը չի, վոր Դիլիջանում դատեցին:

— Տո, բաս վեց ե, տո տվեք, յես դրա յեկած ճամբին...

Ու քոթակելով տարան, քցեցին աղբը գիմացի բուտկան: Եղ բուտկան, վոր այժմ «Զակառեպոյին կրպակն ե. առաջ բանտի տեղ եր ծառայում:

«Ես անիբավերը կընդականարեն, պետք ե ճար տեմնել», մտածեց պատանին ու սկսեց զննել պատերը: Պատուհանի ապա-կիներից մեկը չկա: Դիշերվա ամենաթռւնդ ժամանակ պահակը կուչ յեկավ շինելի մեջ ու նստեց դուան առաջին քարին: Ննջում ե: Պա-տանին զգուշությամբ դուրս սողաց պատուհանից ու իրեն շպրտեց ձորը: Պահակը քնաթաթախ վեր թռավ, հրացանից կրակեց դիմացի ժայուին:

Պատանին արդեն գետն անցել եր և ապահով քայլում եր դի-մացի լեռան լանջի թիկունքով: Քիչ առաջ գնալուց հետո՝ նո մո-տեցավ յերկաթուղագծին ու թաք կացավ մի ծառի հետեւ: Ահա աղ-բանքատար գնացքը: Փայտ ե տանում: Պատանին կախվեց ճաղերից բարձրացավ բաց վագոնը և պառկեց փայտերի արանքում: Կողերը ջարդվում են, բայց ի՞նչ արած: Լուսագեմին նա գնացքից դուրս թռավ Ղարաբիլիսայի մոտ ու գետն անցնելով մտավ քաղաք:

Կայարանի մոտի ծառուղով շվացնելով քայլում ե: Նրա գլխում դժաբրվում ե առաջիկա որերի ծրագիրը՝ գիշերը նստել ապրան-քատար գնացք, գնալ Լենինական Դեպո և հանձնարարություններ ստանալ:

«Այ, պողպատի պես բայլշկիկներ կան Դեպոյում» հիշում եր ճուտիկը Ժենյայի խոսքերը, յերբ նա խուրջնով գրականությունը տալուց հետո՝ ինֆորմացիա տվեց Լենինականի կազմակերպության մասին:

— Ստո՞պ, ձեռքերդ վեր, հրամայեց մեկը:
Պատաճին սթափվեց մաքերից և տեսավ հրացանի սառը վորդն
ուղղված դեպի իրեն:

— Առաջ անցիր:

Այսորվա Խորհրդային հյուրանոցի աեղը դաշնակցականների
շտաբն էր: Գրասենյակում ֆետփերելը հանկարծակիի յեկավ,
յերբ նրան ներկայացրին ձերբակալված պատաճուն:

Ես լակոտին մենք հո աքսորեցինք Սև Քար. փախել ե, հա,
պառկեցրեք: Չորս հաղթ բազուկներ ցած գլորեցին պատաճուն:

Ճուտիկը վարկյանապես մտաքերեց ալափարսցի Խեչո բիձին:
«Այ թե ինձ ել են նրա որը քցելու» մտածեց նա ու բղավեց,
ճանկուեց յերեսները, բայց իզուր... Քսան մտրակ տալուց հետո՝
բանտ նստեցրին:

Այն կամերան, ուր ընկավ պատաճին, լիքն եր քաղաքական
բանտարկյաններով: Նրանցից շատերի յերեսն այլանդակված եր ծեծից,
միքանիսի յել գլուխներն եյին կապած թաշկինակով: Նրանցից
նա մանրամասն աեղեկացավ վերջին դեպքերի մասին: Առատամ-
բությունը ձնշվել եր, գնդակահարել եյին Ալլահվերդյանին Սևոյա-
նին, բժիշկ Մելքոնյանին, Բայազետում՝ Սարուխանյանին և ուրիշ
շատշատերին: Սևանում, Դիլիջանում, Լենինականում մի շարք
տներ բանտերի եյին վերածվել կալանավորներին տեղափորելու հա-
մար: Այս կամերան ել խսկական բանտ չեր, հասարակ խոնավ սեն-
յակ եր, իսկ լուսամուտներին յերկաթի փոխարեն փայտե ճաղեր
եր ամբացըած:

Գիշերվա կեսին, Թաթուլը—բրդոտ արջանման լոռեցի մի մարդ,
ձեռքը քցեց պատուհանի փայտերին մեկ-մեկ զգուշությամբ պո-
կեց ու շնչաց:

— Տղերք, դուրս թափվեցեք: Լայնաբերան պատուհանով մի
վարկյանում բանտարկյանները դուրս թափվեցին ու ցրվեցին խա-
վար փողոցներում: Պահակն իզուր կրակեց, հարայ տվեց, զինվոր-
ներին հավաքեց, բան դուրս չեկավ: Կալանավորները փախել եյին
դեպի մոտակա անտառը:

Յերկու որ ե, վոր ճուտիկը Յաղափրվի հարուստներից մեկի
վոչխարն ե պահում: յերրորդ որը նո վոչխարը քշեց մինչև Համ-
պաշիմանի սարերը:

«Չոքանը յես չեմ, վորտեղ ուղենամ-ենտեղ ել կարածացնեմ»
ու իր ոյինբազության վրա հրճվելով քշում եր հոտն ավելի ու ա-
վելի հեռու:

— Դե, մնաք բարի, սիրելի վոչխարներ, յեթե զայլի բաժին

դառնաք, ինձանից չնեղանաք,—ասաց նա ու թոչկոտելով բարձ-
րացակ լեռնաշղթայի գագաթը, վորտեղից հեռվում յերևում եյին
հայրենական լեռների անտառապատ լանջերը:

Մի տարի յել չկա, վոր գյուղը չի տեսել, բայց թվում ե՝ թե
յերկա՛ր, շատ յերկար տարիներ և նույնիսկ մի ամբողջ տասնյակ
տարիներ են անցել: Ինչքան դեպքեր են անցել նրա գլխով, ինչ-
քա՞ն հասունացել ե նա վերջին մի տարվա ընթացքում: Կյանքի
աղմկահույզ ծովը նրան այնքան ե այս ու այն ափը նետել, վոր
ժամանակ չի յեղել անգամ ընկերներին՝ Վարսիկին, Գիքորին, Պետ-
րոսին մտաքերելու: Ժամանակ չի յեղել հիշելու գոնե գեղածիծաղ
այն լեռները, վայրենի գեղեցկությամբ ոժտված այն բնությունը,
ուր անց եր կացըել նա իր մանկությունը: Յեվ այժմ նա քայլում
ե անտառոտ սարալանջով, մտնում ե առատ խոտի, անհամար ծա-
ղիկների մեջ ու կարոտով հիշում իրենց բինան, վրանների շարքը,
գառնները և վծիտ ջրերում արկի ճառագայթների տակ փայլվող
նախշուն կարմրախայտ ձկները:

ՆԱՎԹԱԾԽԱՐՀՈՒՄ

Տո, մի վեր թոցըեք, ե՛:

«Ուռա՛ ուռա՛, ապրի ճուտիկը»: Յեվ մի խումբ պարտիզան-
ներ, ճուտիկին ողում թոցնելով, ձեռքերի վրա տարան շտաբը՝
Բատալյոնի հրամանատար Բաղդասարյանի մոտ: Տղերքից մեկը
կարծ զեկուցեց, թե ով ե ճուտիկը: Հրամանատարը հայրական խան-
դաղատանքով նայեց պատաճուն և հարցըեց:

— Կարո՞ղ ես կարմիր բանակային լինել:

— Լավ...

— Կարո՞ղ ես զենք գործածել:

— Են ել վո՞նց, ծոր տիեց պատաճին ու Պետիկին աչքով ա-
րավ: յերեկի կամենում եր մառկերիստին սատկացնելը հիշեցնել:

— Զինվորագրեցեք Ն վաշտին, կարգագրեց հրամանատարը:

Որը բավական տաղտկալի յեր անցնում: Հեշտ չի կանաչ լեռ-
նիրէց ու թափուտ անտառներից ընկնել Բագու և ծծել նրա մուրը,
նայել մոտայլ տներին, մըի մեջ թաղված վիշկաններին: Այդտեղ, թեեւ
ամեն ինչ փոխված եր, զգում ես՝ վողջ քաղաքը, վողջ յերկիրն այժմ
արդեն ե, խորհրդային ե, բայց հայրենի գյուղից վաղուց
կտրված պարտիզաններն անհանգստությամբ մտածում եյին ընտա-
նիքի, յուրայինների մասին: Ով զիտի, կոտորեցին, թալանցին,
ինչ արին: Տղերքի վրա շատ ծանր տպավորություն թողեց Պետի-
կի կնոջ վողբերգական մահը: Պետիկին արնակալած աչքերով քանի

որ եր ընկած՝ տախտին մոնչում եր ու հրացանի դայիշը կրծումը բոլորի մեջ ել միևնույն ցանկությունն եր բորբոքում: «Ախր յԵրբ են հրաման տալու մի շարժենք ե:

— Աղա թվանքներիս լուլեքը ժանդուտեց ե»:

Յեկ որական յերեք քառորդ փունտ կորեկի ցեխ հացը, աղի սելյոդկի հետ խժում եյին ու տաք ջուրը խմում-հա խմում: Յերբեմն դեմոստրացիաներ եր կազմակիրպվում, խմբով քայլում եյին մուզիկայի նվագակցությամբ: Հանեսին առանձնապես վոդկորում եր «Ինտերնացիոնալ»: Նրա արյունը յեռում եր այդ յերդից: Բայց տղերքից շատ քչերը հեղափոխական յերգեր գիտեյին: Յեկ մեկ ել տեսար սկսեցին «մեր Հայրենիքը», կամ Զեյթունի յերգը: Իզուր եր յերիտասարդ քաղցեկ Զուրարը նախատում տղերքին: Յերդ չկար, ինչ անեյին: Յեկ նա ստիպված յեղավ մի դիշեր լուսացնել ու յերդ գրել: Հաջորդ որվանից արդեն յերգում եյին հայերեն առաջին հեղափոխական յերգը:

Ով չի տեսել ազատ յերկիր՝
թող գա Հայաստան,
մառզերիստին ազատ մեյդան,
իսկ մեզ՝ կախաղան...

Վերջին որերն ինչ վոր աշխուժություն եր տիրում զորամասում: Լուրեր եր պտտավում Հայաստան գնալու մասին: Մի որ ել շտարի առաջ հսկա միտինգ կայացավ: Ճուտիկը բերան բաց առաջին անգամ ամբիոնի վրա տեսավ ապագա խորհրդային Հայաստանի դեկավարին՝ Հեղափոխական կոմիտեյի անդամներին: Ահա Ավիսը գլխաբաց և ահազին սև զանգուրներով, ահա և իր անտառի ծանոթը՝ կայանն, ակնոցների տակ բարությամբ փայրող աշքերով Խոսում են վոգերգած ու յերկաթյա համոզմունքով: «Հայաստանում աշխատավորության բողոքն ու զայրույթը խեղդվում ե արյան ծովի մեջ: Խմբապետների կառավարությունն ազգամիջյան կոտորածներ ե սարքում ու ավերում յերկիրը: Ապստամբող աշխատավորությանը պետք ե ոգնության համել»:

Մուզիկան նվագում ե Ինտերնացիոնալ, իսկ բատալիոնը վորոտընդուս ուռաներով գլրդացնում ե քաղաքը: Մթնոլորտն ելեկտրականում ե: Վաշտերը հեղափոխական մարզ յերգելով մնաբարե են ասում նավթաշխարհին ու շարժվում առաջ:

ՄԵՐԿ ՍՎԻՆԵՐԻ ԱՌԱՋ

Տափականներում ցուրտը թրի նման կտրում ե: Կուրի ափով ձգված լայնարձակ զամշկուտները դողում ու սփսվում են տափա-

տանի աշնանային հողմի առաջ: Յերեկոն իր սև թևերն ե փոռմամայի գաշտի վրա: Յեղեգնուտներից գնչները յերկնքին արած, հոտոտելով, զգուշությամբ գուրս են գալիս գեղին չախկալները (շնագայլերը) ու սկսվում ե դրանց աղմուկն ու կոնձկոնձյունը: Վայրի խոզերը գեպի շեներն են շարժվում, թբքի կույտերը քրքրելու համար:

Առանձնապես այդ գիշեր զամշկուտի բնակիչներն անհանգիստ են: Նրանք վեր են ցցում գնչները, լուսնի աղոտ լուսով նշմարում սպիտակ վրանները, լուսմ են պողպատի չըսկոցն ու մըմբըթալով պահում յեղեգնուտի խորքերում:

Մեծ սպիտակ վրանում մի խումբ զինվորականներ խորհրդակցում են:

— Արդեն սահմանի մոտ ենք, սակայն գեռ տեղեկություն չունենք, թե ինչ կա գծից այն կողմը:

— Սարատեղիական բոլոր կետերը գրավված են, զեկուցում ե գասակապետներից մեկը, մեր գիտակներն ուղղակի թշնամուքի տակ են, ինկ հետախույզներն արդեն անցել են խնդրի կատարման:

— Դա այնքան կարենոր չե, — ընդհատեց հրամանատարը, — հավանաբար մենք առանց գնդակ արձակելու մտնենք յերկիրը: Հազարի գյուղացիությունը մեր կողմն ե մնում և ճշգրիտ տեղեկություններ ստանալ սահմանապահ զորամասերից, հայտնել, վոր չկրակեն մեզ վրա և գենքն ուղղեն խմբապետների վրա այս և մեր խնդրիրը:

— Նու, մարդ պիտի ուղարկել: Խոսեց քաղցեկը:

— Այո, և մարդ, և թռուցիկներ, և գրականություն. ահա մեր նամակն, ուղղված սահմանապահ զինվորներին. բավական ե հասցնել, ցըել այս կոչերը և արդյունքը խոշոր կլինի: Նու, շտագ տվեք մի կտրուկ տգա:

— Ճուտիկին, ամենից հարմարը նա յե:

— Կանչեցեք ճուտիկին, — կարգադրեց հրամանատարն ու գարձավ պարտիգաններին՝ ձեր ճուտիկով շատ եք պարծենում, հիմի կտեսնենք:

Քիչ անց ներս մտավ ճուտիկը և զինվորական բարե բոնեց: Ահազին շինելի փեշերը գետնին քարշ եյին գալիս նրա հետեկից, այնպես, վոր քայլելիս նրա շինելի ծայրը մի քայլ հետ եր մնում վոտներից: Թեկերը կախ եյին ընկել մատներից շատ ցած, իսկ կոմմունարկան այնպես եր ընկել ականջները, վոր յերեսի միայն ներքեմի մասն եր յերեսում:

Հրամանատարը չկարողացավ ծիծաղը զսպել:

— Նու, ձուաիկ, կարող ես անցնել սահմանը և ես թռուցիկ-ներն ու զբքերը բաժանել զինվորներին:

— Պատրաստ եմ, ընկեր հրամանատար,—աշխուժ պատասխանեց նա և բեռը շալակելով դուրս յեկավ վրանից:

Սահմանն Ուղունթալայի կամուրջն եր: Պատանին կամրջից քիչ ներքեւ գուրս յեկավ շոսսեյից ու մտավ անտառ: Զյունի սառած կեղեւ ջարդվում եր նրա ահազին զինվորական կոշիկների տակ և դժվարացնում վերելքը:

— Ո՞վ ե, կանգնիր,—լսվում ե հրամանը և հրացանի փողն ուղղվում է ծառի լանջով: Միքանի զինվորներ, փաթթված հնամաշ շինելների մեջ պառկել են ձյունի վրա ու անընդհատ ծխում են: Պատանին մոտեցավ, բեռը վայր դրեց խմբի առաջ: Զինվորները սկսեցին ագահությամբ կարդալ ու անհանգստության նշաններ ցույց տալ:

— Ես գնրտեղից ե, այ տղա. ես վոր բռնեն՝ քեզ ել մեզ ել կզնդակահարեն,—ասաց վախեցած ջոկապետը:

— Ինձ են գյուղերում տվին, չգիտեմ ել թե ինչ ա,—կեզծ միամտացավ պատանին: Բայց նա նկատում եր, վոր զինվորների դեմքերն ինչ-վոր արտասովոր ուրախությունից փայլում են: Խումբը պատանուն աղատ թողեց: Նա սարի լանջով իջավ ցած, պատահեց եստեղենտեղ պառկած զինվորների և զբքերի ու կոչերի կեսից ավելին բաժանեց: Նա հաստատ համոզված եր, վոր կձերբակալի, բայց ուրիշ կերպ կոչերը ցրել չեր կարող: Յեզ խմբից-խումբ անցնելով ցըռում եր, հա ցըռում: Զինվորները կմկմալով կարդում ելին չեղկոմի կոչերը, նայում ելին տպված հնգաթե աստղին, ժալտում ու պատանու ուսին բարեկամաբար խփում:

— Ասում ես, գալիս են, ելի:

— Են ել վո՞նց, ծոր եր տալիս պատանին ու անցնում:

Գետակն անցնելիս պատահեց մի խումբ զինվորների ու միքանի կոչեր տվեց: Չեշոտ յերեսով մի տամնապետ ուժվին ասլտակեց պատանուն ու հրամայեց ձերբակալել: Զինվորներից մեկը ձուտիկին տարավ զլխավոր ուղեկալը: Ճանապարհին պատահող զինվորներին թռուցիկներ եր տալիս: Իզուր եր զինվորը հրացանի կութով խփում ու սպառնում:

— Շան վորդի, կիսփեմ, մի բաժանի: Զինվորները հետաքըրքը քըռությամբ խլում ելին թռուցիկներն ու արագ աչքի անցկացնելով հուզվում:

Գլխավոր ուղեկալում խոժոռազեմ մի ոփիցեր, խթանները զինդացնելով հետ ու առաջ եր քայլում:

Պահակը կարճ զեկուցեց կալանավորի մասին:

— Ի՞նչ, սահմանն անցել ե, կոչեր և տարածել: Զարմանքից ու կատաղությունից աչքերը չոեց նիհար ու ցրտից կապտած պատանու վրա:

— Սրիկաներին պետք ե բոլորին ձերբակալել, սա զորք չի, սա դավաճանների ու բայլշկիների ագենտների շայկա յե, յես զբանց... ու ոփիցերը, փրփրած, հրամայեց ձերբակալել բոլոր նրանց ում ձեռքին թռուցիկ կդանովի:—իսկ «լակոտին» տանել իջևան և հանձնել շտարին:

Չորս զինվորներ պատանուն մերկ սվինների առաջն արին:

— Եղ սատանի ճուտն ուսումնասիրում ե մեր ուժերի դաստիորումը, աչքերը կապիր,—հրամայեց պահակապետը: Յեզ վորպես զի պատանին չիմանա, թե ուր են տանում իրեն, հանեցին ճանապարհից ու քշեցին սարի լանջով, քարերի, ծառերի արանքներով: Մութն ընկավ, այլևս անապում շարժվել չեր լինում. պատանին կույրի նման, ձեռներն առաջ պարզած հազիվ ե շարժվում:

Մտան շոսսեն: Այնքան մութն ե, վոր մատը մարդու աչք, կոխես, չի տեսնի: Ճանապարհին ճոնչալով տասնյակ սայլեր ու ֆուրգոններ են գնում: Սայլերի աղմուկի մեջ պատանին կամացուկ աչքերից ցած քաշեց թաշկինակն ու աննկատելիորեն մտնելով սայլի տակ, կուզեկուզ քաղցեց սայլի հետ ու մյուս յեզան փորի տակով անցնելով, մնցավ ճանապարհի սլոնդին կանգնած հսկա կաղնի կոճղի հետեւ: Թիչ անց՝ աղմուկն ընկավ: Սայլերը կանգնեցրին, սկսեցին խուզարկությունը, իսկ պատանին նայում եր կոճղի տակից ու հաղիվ զսպում ծիծաղը: Ինքն իրեն զվարձանալուց հետո կամացուկ անցավ գետն ու առաջ շարժվեց դեպի մոտակա դյուզը՝ իջւան:

ԻԶԵՎԱՆՑԻ ՄՈՒԽԵԼԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Տոպրակը պատճի համար թողել եյին մեջքին, վորի մեջ դեռ ևս բավականաչափ կոչ եր մնացել կամացուկ մտավ զյուղի խուլ փողոցներից մեկն ու խառնվեց հարսանիքի հետեւից աղմուկով գնացող ամբոխին:

— Ես ում հարսանիքն ա,—հարցրեց նա մեկին:

— Մուխելինն ա, խի, ես աշխարհիցը չես. աղա:

— Վոնց չե, Ղողարանց Մեխակի հոտաղն եմ. յես ել հենց Մուխելի հարսանիքն եմ ուղում, ելի,—ասաց նա ու մտավ հարսանիքատուն: Կերակուրների հստը, ծուխը, աղմուկը, դժոխային ժխորը շշմեցնում ե մարդու: Ճուտիկը տոպրակից հանեց թռուցիկ-

ներն ու սկսեց ցըել: Զահել-ջուհուլը կուտակվեց սիրուն պղակաաների գլխին: Մի հարբած մարդ, որորվելով առաջ յեկավ, խլեց տոպրակը, բարձրացավ սեղանի վրա ու թափ տվեց: Թղթերը թոթոացին ողում: Հարյուրավոր ձեռքեր պարզվեցին դեպի վեր ու սկսեցին իրարից խլխել կոչերը:

— Աղա, բայլշեկիները դալիս են, բղավեց մեկը, թռուցիկը կարգալուց հետո:

Խլրտուն ընկավ:

— Տո թող գան ե՛, յիս դրանց կարմիր աստղին մատաղ, բղավեց սեղանի վրայի մարդն ու մինչ ճուտիկն ամբոխի արանքով ծլկվել եր ուզում, հարբած մարդը թուավ ցած, գրկեց նրան ու ամուր համբուրելով կոմմունարկալի աստղը, քաշեց մեջտեղ և զուռնաչիներին հրամաւեց.

— Աղա, մի քոչարի քոքեցեք:

Մի խումբ տղերք վրա թափվեցին, կախվեցին իրար ուսերից ու ճուտիկին «յայլաբաշի» գնելով՝ սկսեցին քոչարի թոներ: Ճուտիկը հենց են եր, ուզում եր դուրս գալ շարքից և անհետանար, Փրկու զինվորներ ներս մտան, հրամայեցին աղմուկը դադարեցնել և պատանուն հրացանների առաջ արած տարան:

Պատի տակին 5—6 հոգի աժդահա մի տղամարդի հազիվ են զսպում:

— Յես դրանց են-են-են... Դրանք քանի ոլխանի յեն, վոր իմ զոնաղը զենքով են տանում. բայլշեկիկը դալիս ա, չուզողի աչքն ել ա հանում, բայլշեկիին հո են յերեխեն չի բերում, մենք ենք բերում. մենք: Յեվ ամեն «մենք» ասելով ահագին բոունցքը խփում ե լան դոշին:

Զինվորները հրացանի կոթերով ճուտիկին հրեցին զցեցին շտարը:

Բուխարա փափախով և կոկիկ չերքեղկայով մի խմբապետ կատաղությունից սպրանած միքանի վարկյան չի կարողանում խոսել: Ել ինչ խոսի: 14 տարեկան մե «լակոտ» ճղել ե ֆրոնտը ու անարդել ավերում ե թիկունքը:

— Շնէն, թռուցիկները վնրտեղից ես բերել:

— Բայլշեկիների մոտից—հանգիստ պատասխանեց պատանին: Ատրճանակը թափով դուրս յեկավ բնից և ճրագի լույսի տակ փայլեց նրա վողորկ փողը: Պատանու մարմնով սառը դող անցավ: Մի ձեռք հետ հրեց ատրճանակն ու ոփիցերներից մեկը ինչ-վոր բան փսփսաց խմբապետի ականջին:

— Լավ, կյանքդ քեզ եմ տալիս, յեթե ասես, վորտեղ են ձեր զորամասերը: Պատանին քմծիծաղ տվեց:

— Ինձ մի հոգի թղթեր ե տվել ու ճանապարհ դրել, զորամաս չեմ տեսել—ստեց նա:

— Ուրեմն գու յել բայլշեկիկ ես, լակոտ,—վորուաց խմբապետը:

— Կարող ե պատահել ի՞նչ կա վոր,—պատասխանեց պատանին, բայց զորամաս չեմ տեսել ավելացրեց նա:

Խմբապետն այլևս չհամբերեց.

Առավոտը կսատկացնեք հրապարակով և ցույց կտանք, թե ինչպես պիտի վարվել բայլշեկիների ագենտների հետ,—հրամայեց նա: Պատանու արյունը զլուխը խիեց:

— Ավագա՛կ, մենք քեզ ձեռք չենք տա, քո զորքն ե քեզ սատկացնելու,—բղավից նա և ուշագնաց ընկավ զմին իջած ծանր հարվածից:

ԿԱՐՄԻՐ ԱՐՇԱԼՈՒՅՈՒ

Նա ուշի յեկավ ականջի վրայով սողացող ինչ վոր թաց բանից: Շուրջը վոչինչ չեր յերկում: Որորվելով առաջ գնաց ու շոշափեց պատերը: Ճուրտ ու Խոնավ քարեր: Յերկաթապատ մի փոքր անցքից հեռու խրճիթում ինչ-վոր աղոտ լույս և շողջողում: Դըրսում ինչ-վոր մեկի համաշափ քայլվածքի ձայն ե լսվում: Պահակն ե:

Ճուրտ ե, սոսկալի ցուրտ: Ձախ կողքը, վորի վրա ընկած ե յեղել հողե հատակին—փայտացել ե: Գլուխն ինչ-վոր ծանր ե ու թաց: Շոշափում ե. արյունոտ կակուզ վերքը ընկնում ենրա մատների տակ:

Դրսում խավարը հետզհետե նոսրանում ե: Պատանու սիրու ձմլվում ե, կծկվում: Յերազում ե մի տաք ու պայծառ արև: Ինքն ու վարսիկը պառկած են գետափի սալին ու նայում են ջրում վազգող կարմախայտներին. իսկ արևն այնպես դուրեկան ե տաքացնում:

Լույսը բացվում ե ու մահասարսուռ մի դող բերում պատանուն: «Չե, սպանեն ել վոչինչ—միքանի որ հետ մերօնք կմտնեն, գուցե հենց այս կոչերը միքանի հարյուր մարդ մեր կողմն անցկացրին»: Յեվ տրտմած հոգու մի անկյունում առկայծում ե բերկրանքը.

Գոնե գիշերը յերկարեր: Սակայն մութն արագությամբ նահանջում ե. լույսի առաջին շողերը նեղիկ պատուհանով ընկնում են բորբոսնած պատին:

Դրսում վոտնաձայներ են լսվում, ապա ձիերի դոփյուն, ատրճանակի միքանի կրակոցներ, և հետո՝ գնդացիրային ու հրացանային համագարկներ... Մեկը հրացանը ձեռքին արագ անցավ պատուա-

հանի առաջից: Լովեցին վունաձայներ և մեկն ուժին հրեց դուռը: Պատանու շունչը բռնվեց: Հրացանների կոթերի ուժին հարվածներից գուռը խոբտակվեց և չորս հոգի, կասկաները գլխներին, ուրախ ներս մտան:

Պատանին ուրախության ճիշ արձտկեզ ու նետվեց ընկերների գիրկը...

Գյուղամիջում բազմամարդ միտինդ եւ: Մի խումբ կարմիր բանակայիններ թևերի վրա թոցրին ճուտիկին և հասցրին միտինդի նախագահ Բաղդասարյանի մոտ: Հրամանատարը հուղվեց, ջարդված պատանուն տեսնելով:

— Այսպես գաղանությամբ են վարվում դաշնակները մեր ընկերների հետ, — բացականչեց նա արյունլվա պատանուն ցույց տվեց ժողովրդին: Ամբոխը հուղվեց, ալեկոծվեց: Նեղկոմի նախագահ ընկեր կայանին ամբոխը դիմավորեց խառնիխուռն «ուռաններով»: Նա բարակ ու թույլ ձտյնով, բայց ամուր ու համոզիչ շեշտով խոսեց նոր կարգերի մասին, աշխատավորությանը սովից, կոտորածից ու ավերածությունից զեպի նոր ու լուսավոր կյանք տանելու մասին. ապա ուժեղ ներշնչեց առավոտյան գով ողն ու հատ-հատ, մուրճի հարվածների նման արտասանեց.

— Նեղափոխական կոմիտեյի անունից Հայաստանը հայտարարում եմ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն: Նրա վերջին ևոսքերը կորան «ուռանների» վորոտի ու «ինտերնացիոնալի» նվազի մեջ:

Տերեաթափ անտառով ձգվող վոլորապտույտ շոսսեյով առաջ են շարժվում կարմիր վաշտերը, իսկ սվինների անտառը շողջողում ե արեգակի առաջին շողերի տակ...

— Ողտվելով այս պատմվածքից՝ զրեցեք մի շարադրություն՝ «Հայաստանը դաշնակների որով» վերատառությամբ:

— Կարդացեք վ. Անանյանի «Կարմրադրոշ Պատանին» զրվածքն ամբողջությամբ:

ՍԵՎ ՑԱՎԸ

ԱՐԱՋԻ

1.

Զմեռնամտի արեն ուրախ խաղում եր առավոտյան յեղամի հետ՝ հուրս ներշնչելով սովից տառապող գրուղին: Յերդիկների ծուլի գորշ-կապտաղույն սյուներով դանդաղ բարձրանում եր վերև: Աղբյուրի մոտ գեռ նկատվում եյին ուշացած կանայք իրանց հսամաշ, կեղտի գույն հագուստներով: Նրանց հետ միախառնված ծանր ու բարակ քայլում եր նիճար, բրդոտած տավարը:

Ժանգոտանց Ոհանեսը՝ գյուղի ամենահարուստը յափնյին ուսին, մոթալի փափախը գլխին, կանգնել եր իր տան առաջ, ձորի տիփին, վորի փուփած լանջով անցնում եր մեծ ձանապարհը: Չիրուխը բերանին, ստեղծատեպ թքելով ու իր սկ գեմքը ծռմռելով, նա դիտում եր բարձրից գյուղի անցուգարձու Բոլորը զիտեյին, վոր առավոտյան այս ժամին Ոհանեսը նայում ե, վոր «աչքը կշացնի», թեպետև այս ասելիս միշտ ավելացնում եյին.

Ժանգոտանց Ոհանեսի աչքը մենակ գերեզմանը կիշտացնի:

Այդ նրա սովորությունն եր կամ, ավելի ճիշտը, նրա ցավը. միշտ իր նախանձ, խուզարկու աչքերով հետեւում եր, թե գյուղում ով ինչ ե անում, ինչ հնարք ե բանեցնում, վորպեսզի ինքն ել անի, վոր մի բան ել ավելացնի իր ունեցածին:

Այսօր Ոհանեսը մի առանձին, ուրախ տրամադրության մեջ եր: Իսկ դրա զլխափոր պատճառն այն եր, վոր յերեկ յերեկոյան խանութպանն ու տերտերը հավատացրին նրան, թե «բայլշնիկներին» լավ ջարդ տալով՝ յետ են քշել... Թե չե քանի որ եր, Ոհանեսի քեֆը տեղը չեր. գյուղում շշուկներ ելին ընկել, թե զալիս են, հա, զալիս, ու են միքանի նոր յեկած մարդիկն ել կծու-կծու բաներ եյին խոսում, հին հավատն ու ազաթը խափանում, «բայլշնիկություն» եյին անում:

Ուրախ ե Ոհանեսը, թե ե առել նորից, ըբամիլ իր իշխանակայել զիրքը:

Նա նոր ե կերել չաղ հավի միսը, նախապես ներս առնելով մի լիքը թաս աբաղ ու զգում ե մեջը զուրեկան տաքություն:

Ինքնաբավականությունն ալիքներով լցվում է մեջը, յերբ նայում է ներքեռմ փոված զյուղին: Այստեղ, են խեղճերի ու անձարների «թաբունում» մարդիկ սովից դադված դեսուղեն են ընկնում, վոր իրանց կյանքի բարակ թելը պահեն, իսկ ինքը... սաղ աշխարհն ամբարել է իր տան մեջ ու պինդ նստել:

Ես թանգ ու կրակ տարին նա յերկու տարվա ցորենի ու գարու պաշար ունի և եղ բոլորը նրա վրա մի «ջափա» իւլ չինստել. նա ստացել է իր պարտապաններից ամենաբարձր, չտեսնված տուկոսների հաշիվը: Նա իր տված պարտքի փոխարեն վերցրել է մեկին յերեք և, բացի դրանից, ամեն մի պարտապան միքանի որ ել բանել և Ոհանեսի համար նրա սեփական հացը հնձելու և կալսելու ժամանակ: Իսկ իր տավարը, իր լավ, ամենից մեծ հողերը...

Թեպետ զյուղամիջում Ոհանեսը միշտ լաց է լինում, թե իր հացը ամենաշատը կրավականանա մինչև մարտ ամիսը, բայց եղ աստում ե, վոր թագցնի իր ունեցածը, թե չե վատ տարի յե, ով գիտի, հազար ու մի աչք է նայում իր տանը. շատը փող ա ուզում, շատն ել են թազա մարդկանց «թալֆից» տատմները կրծտացնում ա, միթամ ասում ա թե՝ մեր իշխանությունը կդա, յես գիտամ քեզ ինչ կանեմ:

Ու լի արհամարհանքով Ոհանեսը դիտում է վերեկից իր համագյուղացիներին, վորոնց են որվանից, ինչ ինքը հարստացել է, համարում ե անխելք ու սարսադ:

«Այ, կտորվեք դուք, ասում եր նա մտքումը այդ «ցածրերի» հասցեյին.—կտորվեք դուք, վոր շնորհք չունեք ապրելու»:

Նայում է Ոհանեսն իր բարձր գիրքից, ու նրան թվում ե, թե չորս կողմը ինչ վոր կա, իր քեֆի համար ե. թե արել մենակ իրան և ժպտում, են ջուր տանող կանայք, են տավարը, նույնիսկ են յերդիկներից յեխող ծուխը, բոլորը, բոլորը միայն իր համար են շարժվում:

2.

Ոհանեսին իր ուրախ տրամադրությունից հանեց Զորաթանանց Յագորը, վոր իշխ վրա բարձած մի պարկ ցորենը տանում եր ջաղաց:

Սա նոր զլուխը բարձրացնող հարուստ եր և իր մըցակիցը, ուստի և նրա տեսքը բավական եր, վոր զրգուեր Ոհանեսին: Յագորն ինչ-վոր «նոր դայդի» հացի առևտուր, «սպեկուլաց» եր անում, մեծ ոգուտ ստանում, իսկ ինքը, Ոհանեսը, չեր կարողանում նույնն անել: Մի ուրիշ զրգուիչ հանգամանքն ել այն եր, վոր Յագորը պատ-

րաստվում եր մարդու տալ իր աղջկան, վոր նույնպես Ոհանեսինախանձն եր շարժում: Այդ գեռ բավական չե, այժմ նա նոր և վերադարձել քաղաքից, վորտեղ ով գիտա թե ինչ «սպեկուլացով» հիմնովին փոխել եր իր հագուստը, կոշիկներն ու գլխարկը:

Ոհանեսին հենց այդ եր պակաս, նա նախանձից տակն ու վրայեղավ և ըստ սովորության սկսեց ինքն իրան խոսել, յերեքն նույնիսկ ձայնով, շարունակ ֆշուց հանելով, վոր առաջացնում եր «շուն» բառը հաճախ գործածելուց՝ համարյա ամեն նախադասությունից հետո:

«Մրան մտիկ, տեսեք, տեսեք՝ քաղքցի յա դառել, պալտոն ահագել, սապոկնի առել, զլիսին ել փափախը լայաղ չի, Ապակա յա դրել: Մինն ասի. շան տղա, եղ ջնուղի միրուքիդ, եղ կեռ քթիդ սազում ա: Ես քոսոտին մտիկ, վոչ բարով մարդամեջ ա խառնվել, աղջկանը մթամ բարձր տեղ ա մարդու տալին: Մի զլիսին բրդես, թե ինչ ունես, վոր ըտենց զըրթը-փըրթ ես անում, յանի կարմախմ հետեւից համեն: Ուզենամ թե չե՝ հենց հարսանիք կանեմ աղջկանս, վոր աչքերդ պլրզած մնան»...

Ու Մինչև Յագորի հորիզոնից անհետանալը նա արագ-արագ ծխում եր ու զրգովում, բորբոքվում:

Յագորի յետեւից ընկնելով, Ոհանեսը չեր նկատել վոր իրան զիմաց նեղ արահետով բարձրանում եյին ձորից Միբոխանց Գիքորը, իր կինն ու փոքրիկ տղան, յերեքն ել փայտի շալակներով: Նրանց գունատ դեմքերը, գզզված շորերը, վորոնց տակից տեղ-տեղ յերեսում եր մերկ մարմինը, նրանց խեղճ ու կրակ տեսքը Ոհանեսին միայն արհամարհանք եր ներշնչում: Նա գարձյալ սկսեց զրգոված ինքն իրան խոսել, կարծես Յագորի ջիգըն ել սրանից հանելու.

«Յարար մինն ասի՝ ինչի՞ համարեք ապրում: Դու յել կասես զեղամիջում մարդ եմ, ելի՛ եկել ա երեկ, թե՝ գարի փոխ տուր: Զահրումար տամ, վոր ուտես: Քասրբին պետք ա միշտ ինեղզած պահես: Յերես տվիր՝ աշխարքս քարուքանդ կանի: Համ գարի յա ուզում, համ ել բերանը շաղ տալիս, անիծում... Թեզ պես քոսոտի անեծքն ել վոր տեղ հասնի, ել ինչի՞ աստված ա, նա շատ լավ գիտի, թե ում ա տալիս... Են ինչ ա զրած փետերի վրա: Հա, սզնի ձղներ ա: Ախապեր, ես խալխը սաղ ծմակը դատարկեց, ել փետ ու սիզը չմնաց: Մի ասեմ երեխանց, վնան իրանք ել բերեն:»

Այսպես եր մտածում Ոհանեսը, չնայած վոր ամեն անդամ, երբ յերեխաները սիզն եյին բերում, նա միքանի հատիկ բերանն եր զցում ու միշտ կրկնում:

— Մինն ասի՝ սա ինչ ուտելու բան ա, վոր զուք ուտում եք:

3.

Ազահությունը բռնել եր Ոհանեսին, և նա ուղում եր ասել յերեխաներին, վոր գնան անտառից համ ցախ հավաքեն, թեպետ տան առաջը լիքն եր ցախով ու փայտով, համ ել սզնի ճղներ բերեն, բայց այդ բոլեյին ձանապարհին յերևաց իր ամենաատելի մարդը, Դարբինանց Պետրոսը:

Նա հագել եր մի հին, կարմիր դայթաններով յեզերած զինվորական համազգեստ, վորի մետաղյա կոճակներն արդեն չկային: Գլխին դրած բրդոտ դազախի փափախը վճռական տեսք եր տալիս նրա խոշոր գիմազծերին: Նրա բաց-կապտավուն աչքերի փորձող արտահայտությունը, զգուշ քայլերն ու կտրուկ շարժումները յերեան եյին հանում մի ձգտում, վոր զյուղից դուրս եր նայում: Ուսին զցած մի փոքրիկ պարկ գարի, նա արագ բայլում եր իր մաշված տրեխներով, կարկատած շալվարի տոտերը գուլպաների մեջ հավաքած:

Նրան տեսնելուն պես Ոհանեսը փրփրեց և նորից սկսեց իր ՓշՓշացող մենախոսությունը:

«Ելի ապրեց... շան տղա... Այ, մի քու դատաստանն ինձ տան, յես գիտամ՝ ինչ կանեմ. մի եղ մուզ-մուզ աչքերդ հանեմ, եղ բլբան լեզուդ կարեմ, վոր ցեցի նման գեղն ուտում ա: Բայլշեկություն ա անում, սրա հալին մտիկ: Սպասիր, յես քու փորից ոձերը կհանեմ. խաբարը հրե զարկել եմ իր տեղը. դու արխային կաց: Թե քեզ տնով-տեղով կորցնել չտամ, ի՞նչ տղա կըլեմ: Բա դու ինձ բազարի մեջը խայտառակ անես, թալանչի, ավազակ կանչես... Դու հլա սպասիր՝ ջիբերդ լավ բաց արա, ես ա կզան քո բայլշեկինին, քեզ կապրեցնեն: Ել չես իմանում, վոր քու համքարներին լավ ջարդել ու յետ են քշել: Այ հենց քշեն, վոր հիզն ել չմնա: Մի իմանաս՝ հւմից ա ճանկել եղ բուռը գարին, վիր անխելքն ա փոխ տվել: Տար, տար, մթամ եղ երկու հատիկը քեզ համար տարվա հաց ա դառնալու: Ա, մի տաս վեր զցես եղ մուռտառ շանը»...

Յեվ Ոհանեսը յերեակայում եր, թե միքանի հոգի հաստ դագանակներ առած վրա ին տալիս Պետրոսին, իսկ ինքը կատաղությունից փրփրած հենց խփում է, վոր ել տեղիցը չի վեր կենում:

4.

Ոհանեսի գրգռումը հասել եր գագաթնակետին: Նա ել մարդ չեր նկատում: Առավոտվա ուրախ տրամադրությունից ել հետք չեր մնացել: Գազազած դրության մեջ նա միայն կուզեր մեկն ու մեկի վրա թափել իր մաղձը:

Նրա ուշադրությունն ակամայից զրավեց կարմիր, զզզզված շորերով մի փոքրիկ աղջիկ, վոր ճամպին հանդիպած շնից վախենալով, բարձրացել եր դեպի Ոհանեսը և վազում եր հեին նեղ արահետով: Յերբ նա արդեն միքանի քայլի վրա յեր, Ոհանեսը հարցրեց:

— Աղջի, ա զլիսամեռ, եղ ուր ես վազում:

— Բայլշվիկնին գալիս են... հրեն ջաղացում տասը սալդաթ ա յեկել, պիտոզնին զլիսին:

— Այ լեզուգ չորանա, ասաց Ոհանեսը, առաջ շարժվելով — աղջի, քեզ ով ասեց. դու ում աղջիկն ես:

— Յես տեսա, համ ել ջաղացպանն ասեց: Իմ ապին Դարբինանց Պետրոսն ա, հիմի յել նա ընտեղ ա. ինձ ասեց, վոր չվախենամ, չունքի մեր ծանոթ մարդիկն են, համ ել ապին ասեց, վոր ոչովի բան չասեմ:

— Կորի, քաշվի աչքիցս, շան աղջիկ: Այ թե վոնց յերեսում ա. ոձի ճուար ոճ կըլի, բա ի՞նչ կըլի: Զլինի թե տունս քանդվեց, — մրմնջաց նա կիսաձայն:

Ոհանեսի ծնկները թուլացան. կարծես մի աներեսույթ ուժ նրա մարմինը փուլ ածեց, և նա այլևս ինքն իրան չեր պատկանում:

Նա սկսեց իջնել դեպի ներքեկի ճամպան, վոր մի «դրուստ» խաբար իմանա:

Ի՞նչ պատուհաս եր, վոր յեկավ զլիսին. ախր յերեկ իրան հավատացրին, թե բայլշեկիկներին քշել են, իսկ եսո՞ր: Հավատա, թե չհավատա: Բա են երեխան սուտ հո չեր խոսիլ: Ասած ա՝ դուզ խաբարը երեխից կիմանան: Են փուչ Պետրոսը հենց դրա համար ել գնաց, վոր են անիրավերի ճամպեն բաց անի: Համա ելի ով գիտենա, կարելի յա մի նոր խաբար իմանամ, մի խելքը զլիսին մարդ պատահի:

Յեվ նա ինքն իրան հուսադրելով անհամբեր նայում եր ջաղացի կողմը, սպասելով, վոր մեկն ու մեկը կզա ու մի «դրուստ», այսինքն իր սրտին մոտիկ խաբար կըերի...

Դիմացից յերեաց մի մարդ, վոր արագ քշում եր եշը:

Յագորն եր: Նույն մարդը նույն «պալտոնով», նույն մորուքով, բայց վնրքան նա այժմ սիրելի յեր Ոհանեսին: Հենց իմանա վազուց կարոտած մի մտերիմ մարդ եր գալիս:

— Բարի աջնորում, Յագոր, — ասաց նա մոտ գնալով: — ի՞նչ խաբար կա ներքելը:

— Ել ի՞նչ խաբար. են տնաքանդները գալիս են, — ասաց նա ու արագ քշեց իր եշը, վոր շուտով տուն համար: Նա ցորենն առանց աղալու յետ եր տանում:

— Վայ յես դրանց յեկած ճամբեն անիծեմ, — վրա բերավ Ոհանեսը, ծարավ մնալով Յագորի տված կցկառւր տեղեկությունից:

— Անիծեմ, թե ընենց անիծեմ, — վինթփնթաց Յագորը, հարվածելով իշխն:

Վորակես մի ծանր հիվանդ՝ Ոհանեսը բարձրանում եր գետի իր տուն: Կարծես իր մարմինը մի բեռ եր, վոր դրել եյին նրա վրա: Գնում եր ու ինքն իրան ասում:

«Այ աստոծ, յարաբ ինչ կըլի, մի չոռ ու ցավ, մի պատուհաս զրկես, ջնջես եղ անիրամիւրին»:

Նա մոտեցավ իր տանը, դուռը զբնգալով բաց արեց ու հևալով ներս ընկավ:

— Ա կնիկ, այ երեխեք, տունս բանդվեց. Են անիրավ բայլշեվիկնին գալիս են. իմ լիքը, ծով ոջախը պտի քարուքանդ, բրիշակ անեն:

Ասաց ու նվազած նստեց թախտին: Կինը՝ թողած իր լվացքը, վրա վազեց շվարած, ու գեռ կարգին չիմանալով բանս ինչումն ե, սկսեց սպալ Նրան հետեւցին և յերեխաներն ու մեծ աղջիկը, և տունը սուզ ու շիվան ընկավ, կարծես լուր եյին առել տան անդամներից մեկի մահվան մասին:

Մի փոքր անց Ոհանեսն ուշքի գալով դուրս յեկավ իր փոքրիկ տղայի հետ բան ու քլունգը ձեռին, չորս կողմն աչքածեց ու գնաց մարագի կողմը, վոր իր հարստությունը պահոտի:

Գնում եր, բայց և շատ քիչ հույս ուներ թագցնելու իր ամբարներն ու հորերը սոված գյուղի աչքերից:

5.

Գյուղի մյուս ծայրին մեծ իրարանցում եր: Ամբողջ գյուղը դուրս եր յեկել հանդիսելու փոքրաթիվ զինվորներին: Մանավանդ առանձին համակրություն եյին ցույց տալիս վաղուց կարոտած ուսւա զինվորներին, վորոնք ժալտալով կարծես ասում եյին՝ «գիտենք», մենք ել եղ ենք ասում. սրանից գենը միշտ միասին կլինենք»...

Ոհանանց կալում, գյուղի բարձր տեղը զուռնան փչում եր իր սահարին այնպէս զիւ, վոր լսկում եր ամենահեռու կետերում: Շատ շանցած թափոր կազմեցին: Առաջից գնում եր զուռնան, նվազելով զանազան յեղանակներ. նրա յետեից զնում եյին զինվորները, ապա և գյուղի յերբասարդները՝ հարսանիքի մակարների նման, կարմիր թաշկինակները զիին, իսկ ամենից վերջը ժվժվալով ու թոչկոտալով զնում եյին յերեխաները: Յերթի ճակատին Դարբինանց Պետրոսն եր՝ կարմիր դրոշակը պարզած: Նրա զեմքը վառվում եր զգացումներից, և թվում եր, թե նա սովորականից ավելի մեծացել ու բարձրացել եւ:

Համնելով Ոհանեսի տակը, բոլորն ել ակամա կանգ առան:

— Կեցցե խորհրդային իշխանությունը, — ձայնեց մեկը: Նրան ձայնակցեցին մյուսներն այնպէս ուժգին, վոր Ոհանեսի տունը դարդանդ ընկալի: Դեռ հեռվից ազմուկը լսելով, նա տան դռները ոլինդ փակել եր, տուաջն ել ծանր բաներ դրել, կարծելով թե բայլշիկները սկսի ներս թափվեն և ամբողջ ընտանիքով գերի տանեն:

Նոր եր թափուը շարժվել առաջ, յերբ հանկարծ նրա յետեկից Ոհանեսի տան դամիթը ներս ընկավ գիտ Սաքին, շրջապատված հրաւացող յերեխաներով: Իր յերկար վոտքերը, լոլող մարմինը պարի ձեռով ծռմուելով ու մի աչքը շիլ արած, նա ճղճում եր ու խընդուում, մեծ բավականություն սպատճառելով յերեխաներին:

— Տղեք ջան, հարսանիք ա, պահը յեկեք:

Աւ կարծես ավելի հաստատելով, վոր հարսանիք ե, նա յերեսը դարձեց գետի Ոհանեսի դուռը և ծափ տալով սկսեց յերգել հարսանեկան յերգը:

— Թագավորի մեր, գուրս յեկ, գուրս յեկ,
տես, ենք համար ինչ ենք բերել...

զիմիդ բամփող ենք բերել,
տանի տիրող ենք բերել...

6.

Անցել եր յերեք որ:

Ոհանեսը տուն ե ընկել, վոչ ուտում ե, վոչ խմում. յերեխի նման ամեն մի շշուկից վախենում ե: Դեմքը նիմարել ե, ավելի սեացել, ձայնը ցամաքել, ու աչքերը խուզարկու հայացքով շարունակ գեսուղեն են նայում:

Խչեր ասես չեյին պատմել բայլշեկների մասին. ամեն ինչ խլում են, ամեն ինչ տանում, սպանություններ, չարչարանքներ... Ես ել քեզ նրանք, ինչի չեն գալիս...

Սպասողական դրությունից նա հալվում ե, մաշվում և վոչ մի տեղ դադար չի առնում: Շարունակ մրսում ե ու վոչ մի կերպ չի տաքանում: Կերջապես չորրորդ որը նա սկսեց զողացնել, կինը բերում եր վրան ծածկում տանը յեղած բոլոր վերմակները, բայց ելի չեր ոգնում: Ոհանեսը դողացնում եր ու զառանցում:

— Ելի, Ելի յորդան տվեք, սառա... Փալիս են, դոները պինդ կողպեցեք, երկաթներ պցեք, շնոր արեք, գալիս են...

Յերբ դողոցքն անցնում եր, նա մոլորված շըջում եր տան բակում, ականջ գնում ե... սպասում, սպասում:

Իսկ գյուղի նորակազմ հեղափոխական կոմիտեն չեր մոռանում

Ոհանեսին: Նա հենց սկզբից վորոշեց ցորեն հավաքել ունեռներից գյուղի սովորների համար և նույնիսկ վճռեց առաջին հերթին ուղարկել Ոհանեսի մոտ, բայց հեղկոմի անդամներից մեկը՝ Կարապետանց Ռուփը, վոր շատ հանաչչի յեր, աղաչեց, վոր հետաձգեն նրա մոտ ուղարկելը.

— Տղեք ջան, թե ախտեր եք, ամենից յետ Ոհանեսի մոտ ուղարկեցեք: Թողեք մի ենպեռ ըլի, վոր ահը շատ ըլի, քանց մահը: Թողեք մի վախիցը երփի, խորովվի, վոր մեզ երել ա: Մեկ ա, կարալ չի թագցնիլ մեղանից պլոկած ցորենը. հազար ու մի աշք կա նրա վրա:

Այզպես ել յեղափ: Ոհանեսի մոտ յեկան հինգ որից հետո: Յերբ ուղարկվածները ներս մտան, նա պառկած գտանցում եր և նույնիսկ չեր ել նկատում իր անհամբեր սպասվող խորհրդավոր հյուրերին:

Դուրս գնալիս Ռուփը, վոր ժողովարաների հետ եր, լախ ժպիւը դեմքին ասաց.

— Տղեք ջան, տեսաք, Ոհանեսին սև ցավը բանել ա. սաղ ծալքերը վրեն ա տվել ու դեխ ա տալիս... «Վայ զալիս են, վայ դուռ կողպեք»: Հըմ... կողպեքը քո բերանը գըհնք, ուստա Ոհանես, վոր գելի նման մեր գեղը չուտես: Սև ցավը քեզ ուտում ա... Եղ ել հալբաթ թազա ցավ ա: Հենց սեանսա, վոր յես գիտամ:

Յեզ գյուղում տարածվեց Ռուփի հանաչով ասոծը, թե Ոհանեսը «սև ցավ» ա ընկել ու ծալքի տակ մտած դեխ ա տալիս:

Են որվանից դեսը Ոհանեսն ել առավոտները չեր դուրս գալիս իր բարձր գիրքը՝ աշքը կշտացնելու: Մեկ-մեկ ել թե անցնում եր են կողմը, կարծես ել վոչվոքի չեր տեսնում:

Նորից ծագում ե արկը, փայլում բլուրների վրա, բայց Ոհանեսը չի նկատում: Նա այժմ պարիսպներով, յոթը գոներով մի տուն ե վնատում, վոր թագնվի այստեղ:

«Սև ցավը» բռնել եր նրան:

— Ինչո՞ւ ժանգոտանց Ոհանեսը մինչեվ բայլշեփիկների գալը ատում եր Յազորին, իսկ յերբ իմացավ բայլշեփիկների զալը, հարազատացավ նրան:

Կա՞ արդյոք իրար հանդեպ նման վերաբերմունք քավորների մեջ, յեվ յեթե չկա—ինչո՞վ ե դա բացատրվում:

Այօջնար Պոլութքորդինուն.

Յերկաթե ՅելբաՅրներ

Սմբովսը, հուզված իրարանցման մեջ եր. հոետորը բարձրում կանգնած՝ խոսում եր նրանց հետ:

Սակայն ալիքների խշոցի նման՝ լսվեցին աղմուկի խառնի-խուռն ձախներ. հոետորը լոեց:

Հանկարծ բակի պարապապատ ցանկապատի վրա թռավ մի յերիտասարդ և լուռ պարզեց իր ձեռքը:

Մի ակնթարթում, կարծես, ելեկարական հոսանք անցավ բոլորի վրայով, լուռթյուն տիրեց:

Բոլորը քար լուռթյամբ նայում եյին յերիտասարդի առաջ ցըցված ու գունատ դեմքին. նրա սառած ու խօր ընկած աչքերի մեջ. նրա տանջված ու հոգնած դեմքի վրա կարելի յեր կարդալ դարավոր վիշտը. յերկար տարիների ծանր ապրությունների ամբարգած բողոքն ու գայբույթը խորը կնիք եյին դրել նրա թոռումած դեմքի վրա:

— Պետք ե ցրել միտինզը,—կապարե գնդակի նման դուրս թռան նրա սրախց այդ խոսքերը: Քար լուռթյուն ե ամեն տեղ: Հոետորը լուռ սպասում ե յելքին:

— Ցրել միտինզը, մեր խոսքը չի անցնի:

Բացականչեց մեկը և հուզված ամբովսը, վորպես խորունկ ձոր, արձականդ տվեց այդ կանչին:

Առաջին հոետորի բոցավառ խոսքերը հուսահատ հանգան իր շրթունքների տակ և զայրույթից պարզած բռունցքոտ բազուկները թուլացած վայր ընկան:

— Սա առաջարկում ե զինաթափ լինել և տուրքեր վճարել. հողերը թողնել նորից ունեռներին,—և ձեռքը պարզեց գեղի առաջին հոետորը: Իսկ նա տեղն որ տեղը չորացել եր, անխոս կանգնել: Բառ չեր գանում հուզված, ըմբոստացած ամբովսը հանգստացնելու:

— Այս մերկ և չոր ու ցամաք լեռներում արտերի համար մի թիզ վարելահող անդամ չի մնացել, մինչդեռ տուրքերի տակ ճըգմած մեզ ուղում են կաշեզերծ անել: Ո՞վ ցանկություն ո՞նի իր մեջը ծոելու...— Նա դեմքը նորից պարզեց առաջ և ուշագիր հա-

յացքով նայում եր բոլորին: Կարճ լոռությունից հետո, թիքն ավելացրեց.—Իհարկե վնչ վոք... Յեթե այդպիս ե, ել ինչու չեք լոել, ինչու չեք խոսում, բազուկներիդ մուծն ե աղակատ, թե կորովի կամքը...

Ասաց ու ցած թռավ քարե պարսպից, խառնվեց ամբոխի մեջ և անհետացավ:

Գյուղացիների մեջ իրարանցում ընկով. չելին իմանում ինչ անել: Անսովոր մի կայծ բոցավառվում, փոթորկվում եր նրանց սրտերում և աշխատում մեսցնել նրա բոլոր ձգտութիւնները:

Նորից խոսեց հռետորը:

— Ընկերներ, ընկերներ... բարձր ձայնով կանչում եր նոտ. ստկայն գյուղացիներով լեցուն հրապարակն անտարբեր եր նրա խոսքին. նրանք խառնվել ելին իրար. նայում ելին դեպի հեռուները. հրապարակը դատարկվում եր:

Յերբ յերիտասարդը հեռացավ հրապարակից, նայեց իր շուրջը, նայեց դեպի հրապարակը և արդեն թեթևացած՝ ազատ շունչ քաշեց. սեփական աչքերով տեսավ իր առաջին հաջողությունը և նորանոր մտքեր ու ծրագրներ բաղկեցին նրա առաջ: Անհանգիստ, խրանած վորոխ նման՝ վայրէցան առ վայրէցան նայում եր իր շուրջը և մրտափոհ անցնում առաջ:

Նրա արջից այրված ու սեացած գեմքի վրա հանկարծակի նկատելի ելին լինում նյարդային անհանգիստ ցնցութիւնը, սական վայրէցնական, և նորից նրա դեմքը ստանում եր գտված մետաղի գույն: Հոնքերից մեկի վրա թեթև վերք ուներ, վորը տարածվում եր մինչև ճակատի կենտրոնը:

Գուրին կանգ առավ, նրան մռաեցավ մի միջահասակ մարդ:

— Հո տեսնում ես, գյուղացիները մեր կողմն են, — դիմեց Գուրին հանդիպած մարդուն և նայեց դեպի հեռուն տարածվող թը-փուտները, ուր ոճապտույտ գալարվում եր Լաջանուրի դեար:

— Յեթե այս յերկու որը շարժում-յերութ տեղի չունենա, ամեն ինչ կորած ե, նորից ընդհանուր քնեածություն կտիրի, — ա-վելացրեց Գուրին և ուշադիր սկսեց նայել իր դիմացն անխօս կանգ-նած մարդու շրթունքներին:

Գուրին սպասողական վիճակում՝ նյարդային անհանգիստ շարշուներ եր անում: Նրա դիմագծերի վրա արդեն նկատելի ելին քրտինքի կաթիլները:

Յերկուն ել լուս մտածմունքի մեջ ելին: Ապա միջահասակ մարդը հանկարծ սթափվեց, գլուխը բարձրացրեց, մեջքն ուղղեց և կամաց ձայնով ասաց.

— Բարնարին ուղարկել եմ Լայլաշի շրջանը, Մորչաձելին դե-

պի Մեքվենա. իսկ պու սլոտի վնաս Դեխմիրի՝ տեղական ազգաբը-նոկությունը նախապատրաստելու:

— Մինչև յերբ սպասեմ...

— Վաղն աւագուտան Բարնարի տանը խորհրդակցություն և նշանակված. այստեղ կհավաքվենք, ուղղմիկները — զյուղացիները պի-տի հովաքվեն Որբելի բերդում: Այստեղից ցած կարշավեն դեպի Սխալճալան, ապա Յագերի վրայով անցնելով՝ կհանդիպնք Դիխմի-րի մոտ:

Գուրին վոշինչ չպատասխանեց. անխոս կանգնած եր նրա ա-ռաջ և ուշադիր լսում եր կարգադրությունները:

Կարճ ժամանակից հետո, նրանք բաժանվեցին իրարից և անք-քեր ուղիներով շարունակեցին իրենց ճանապարհը:

Քայլում եր Գուրին, սակայն շտապ և անհանգիստ՝ վորպես վանդակից փախած մի կենդանի. հագար ու մի ծրագրներ ու հեռանկարներ անհանգիստ ելին անում նրա միտքը.

Որն արդեն գեպի խավարն եր թեքվում, յերեկոյանում եր. — լույսը քանի գնում աղոտանում եր. առաջը տարածվող հարթությունները գունատվում, հեռավոր լեռների ելին նմանվում. լեռներըն ու բարձունքները քանի գնում կորչում — անհետանում ելին իջնող խավարի մեջ:

...

Սուր դանակով կտրված սև սավանի նման, լուսի ճառագայթների ճնշման ատկ բացվեցին յերկինքն ու գետինը: Կամաց-կամաց յերկում են մոխրագույն ու մոայլ լեռները և այդ լեռների գաղաթները ծածկող՝ նույն մոայլ ու մոխրագույն ամպերի անհատնում կարա-րավանները: Տեղ-առեղ յերկինքը նայում է փոքրիկ կապույտ հան-վաճներով և գաղտուկ՝ ճառագայթներով, սակայն այնուամենայնիվ յերկինքն ուներ արևի աչք, արևը յերկնակամարի պատուհանն եր:

Որբելի կոչվող լեռան գագաթին մի խրճիթ և կանգնած, ծածկված փայտի տաշեղներով ու շրջապատված ցանկապատով: Ոըր-ճիթը նայում է գած՝ դեպի Լաջանուրի գետը:

Ամեն որ այս խրճիթ-անակույթ դուրս ե գալիս ծերունի Գի-դան, հովվական ցուպը ձեռին, վառած շիրուխով և նեղ կածանով քայլերն ուղղում և դեպի գյուղ, ուր բանուկ հրապարակի վրա խո-սում ե պարապ գյուղացիների նետ, խոսում ե գյուղական ցավ ու գարդի մասին, իսկ նրա վորդին մերթ լինում ե արտում, մերթ անտառում և յերբեմն ջաղացում: Նրանց փոքրիկ ոջախն միշտ տաք ե, միշտ այնտեղից ծուխ ե բարձրանում:

Բարձունքում և գտնվում այդ տնակը, ջրի պակասության պատ-

ճառուկ չոր և գետինը, հողը և անակի մոտ գտնված փոքրիկ ծաղկանոցը գտնվում է ծերունի Գիգայի աղջկա խնամքի տակ, վորն ամեն առավոտ ջրում ու խնամում է այստեղ գտնված ծաղիկներն ու բույսերը:

Առավոտյան արշալույսին, ինչպես ամեն որ, այսոր ել բացվեց անակի դուռը և յերկու փայլուն աշքեր յերեացին արեավառ դեմքի վրա: Վազեց դեպի այգին-ծաղկանոցը և վողջույն տվեց իր սիրելի ծաղիկներին:

Լեռների գագաթներից կամաց-կամաց չքանում եյին ամպերը, վորոնց տակ արդեն նշմարելի եյին դառնում մոտիկ ու հեռավոր լեռնալանջերի կանաչոտ տեղերը:

Հանկարծ հրացանի գնդակների ձայներ լսվեցին և յուրաքանչյուր արձակած գնդակի ձայնը միախանվեց մեր շուրջը բարձրացող լեռների ծերպեռում ու անդնդախոր ձորերում լսվող արձագանքի ձայների հետ:

Սարսափեց այգում աշխատող աղջիկը, վայրկենական քարտափ բայց իսկույն սթափեց և նետի նման ոլացավ լեռան մյուս կողմը՝ վորաեղից հսկայական պղնձի նման յերեսում ելին Ռըբելլ լեռնալանջերը:

Այդ նույն ժամին անակի դուռը բացվեց, ուր յերեաց սպիտակամորուս ծերունին գունատ ու սարսափած:

— Խվարամզե, զպուշացիր գնդակից,—կանչեց Գիգան և մի քանի քայլ առաջ անցավ: Նրա դեմքը փայլում եր, անհասկանալի ուրախություն եր նկատվում նրա աշքերում: Աիրան անհանդիս խփում, ինչ վոր ուրախ սպասելիքների մեջ եր: Ճարակիկ վրայուն արակ այգու դլառվ, մոտեցավ, կանգնեց ժայռի դլինին, նայեց ցած ու նշմարեց չափազանց հուզիչ մի տեսաբան.

Հարթավայրի վրա ձգվող ճանապարհների վրա յերեսում եյին հրացանավորների շարքեր, իսկ Ռըբելլ բերդի մոտ խմբված եյին հրացանավորների բազմաթիվ խմբեր: Հեռվից ազմուկի ձայներ եւ լսվում: Մի փոքր հետո լսելի դարձավ նաև զենքերի շաշյուն:

Մտածմունքների մեջ խորասուզվեց, նրա սրտի ու մտքի մեջ կենդանություն ստացան հեռու անցյալի հուշերն ու պատկերները Տաճանենք առարի առաջ եր, յերբ նա յել, այսպես հուզված ու ըմբուստացած ժողովրդին պատապարվելու համար՝ առաջնորդում եր դեպի այս նույն ամրոցները, իսկ թիկունքում զտնվում եյին թագավորի պաշտապան զորքերը:

— Միթե սկսվեց...հազիվ լսելի ձայնով արտասանեց Գիգան և հանվեց իր գալագանին:

— Ի՞նչն սկսվեց, ի՞նչը...— հետաքրքրությամբ հարցրեց Խկարամզին և իր փայլուն աշքերը մերթ հոր վրա, մերթ հեռվում յերեացող ամբոցի պարիսպներն եր զցում:

— Ապստամբություն...ապստամբություն...— կրկնեց Գիգան և իր կախ գլուխը բարձրացրեց, դանդաղ քայլերով շարժվեց գեպի քարածայուր: Աշքերը հառեց մի կետի և անխոս ու անշարժ կանոնած եր յերկար. կարծես վոչինչ չեր զգում: Մոռազված անցյալի հիշողությունները կենտրոնացրել եյին նրան մի կետի, բայց հանկարծ սթափվեց, ցանկություն զգաց ապստամբած գյուղացիների մոտ գնալու ուղղվեց, խճողված սպիտակ բեխերը վոլորեց և շարժվեց զեպի ապստամբած ամբոխը:

Հանկարծ ծերունու իջած այդ նույն կածանով բարձրացան և նրա գեմ առ գեմ յեկան յերեք յերիտասարդներ, յերեքն ել զինված հրացաններով:

— Տեսնում ես, հայրիկ զենքերի մեջ ենք թաղված, իսկ ներքենում հազարնեո կան մեզ նման: Վաղը կեսորին, Լեշխումում, այսորվա իշխողներից վոչ վոք չի մնալու կենդանի:

Գիգան հափշտակությամբ նայում ու լսում եր զենքերի մեջ կորած իր վորդուն: Ուղիղ քսան տարի առաջ ինքն եր այդպես ձարպիկ ու սազմիկ, այժմ իր տղան և զենքի տակ մտած: Հպարտությունը պատել եր նրա սիրան ու հոգին և ուրախացած, հըճվամքով նայում եր ուղիղ վորդու աշքերին:

— Սրանք ընկերներս են, ծանոթացիք, հայրիկ—Մորչածե, կենծածե:

— Յես Լայլաշից եմ գալիս. ինձ հետ յեկել են յերկու հարյուր յերիտասարդ զյուղացիներ. զենքեր փոխադրելու համար ենք յեկել,—հազիվ լսելի ձայնով ավելացրեց նա և նայեց այն կողմ, ուր հավաքված եյին սազմիկները և վորոնց համար տանում եր սազմամթերք:

Գիգան այնս չկարողացավ զսպել իրան, փաթաթվեց վորդու վզով և պինդ սկսեց համբուրել նրան: Այս ջերմ համբույրի մեջ նա պատկերացնում եր իր վողջ ջահելությունը, իր բովանդակ անցյալը, նախկին գովոքի արժանի հիշողությունները, վորոնք մի ակնթարթում անցան նրա աշքերի տուաջից:

Մի քանի վայրկյան հետո, ուռոն վողերությամբ հափշտակված այս յերեք յերիտասարդները կանգնած եյին արդեն սարի բարձունքում գտնված տնակի յետեի սենյակում և յեռանդով քանդում եյին հողը—սենյակի հատակը:

Կարսկետ ծեռչերով ողի մեջ ճոճվում եր քլունգը, իջում եր

ցած՝ զարկվում գետնին այսովես անձայն ու խուր վոր կարծես զարկում եյին փխրուն գետնին, փափուկ հողի կոշտ կտորները թափի վում եյին աջ ու ձախ:

Գետին փորող ջահել-ջիվանները սրտատրով հետեւմ եյին բաների շարժումին. թէ ահա վորտեղ վոր ե՝ կերեան թագցրած զենքերի մասերը:

Կանգնած եր Խվարամդեն լուսամուտի մոտ և մերթ նայում եր իրենց տնակից ներքին հարթության վրա տարածվող ճանապարհին, մերթ իրենց սենյակի հատակը քանդող յերիտասարդ կենածածեյին և Բարնաբային:

Աշխատում եյին անդադրում. կարծես իրենց շուրջը վոչ վոք չեյին նկատում և տարված եյին իրենց աշխատանքով, նրանց բռվանդակ միտքն ու հողին մի բանով եր միայն զբաղված—վորքոն կարելի յե շուր հանել գետնի տակից զենքերը:

Եատ կարճ ժամանակից հետո, հարթության վրա ձգվող ճանապարհը բոնիված եր անհատում ու անթիվ սազմիկ ուժերով. անքնությունից այրված աչքերով, վախով ու շփոթված նայում եյին իրենց շուրջը:

Անթարթ աչքերով սարսափած տեսնում եյին մթության մեջ սկին տվող ծառի կոճկեր, և թվում եր նրանց ամեն բան, բայց վոչ յերբեք ծառի կոճկեր: Նրանք կարծում եյին, թէ դրանք թագընդած թշնամու դիրքերն են:

Պղտոր ու մոայլ ամպերի միջից առկայծում եյին փայլվող աստղերը և աղոտ ժամանակնում գիշերային մթագնած յերկը յերեսին:

Յերկինքն յեթե հայելի լիներ, անշուշտ իր մեջ կարտացոլեր այս հսկա հոսանքի ըմուտացումը:

Մոտեցան տափարակ տեղերին. մինչ այժմ, մի քանի շերտ ցրված ժողովուրդը համախմբվեց վորպես մի ամբողջություն, վերքածվեց կատաղի մի ալիքի. վորն առաջ եր շարժվում վոգերված ու խանդակառ:

Վոչ մի բանի առաջ այլիս կանգ չեյին առնում, վոչնչից չեյին քաշվում: Վոչ վախ, վոչ սարսափ այլիս գոյություն շուներ նրանց համար - մի նապատակ, մի ձգտում եր միայն քաշում նրանց առաջ—հաղթել ու փշրել ամեն տեսակի դժվարություններ, խորտակել ամեն տեսակի արգելքներ, վորոնք կհանդիպեյին նրանց:

Նրանք յերազում եյին զեմ առ զեմ կանգնել արգելող խրամատների, վորպեսզի այստեղից դուրս թափեն թշնամու կուտակված ուժերը:

Ահա և Որբելու լեռները:

Մի քանի ամրոց, մոայլ կանգնած ժայռոտ ծերպերին նայում են գեղի ցած՝ ներքեսում տարածվող դյուղին, իսկ գյուղը, մի քանի աղոտ ճրագների տակ, հանգիստ ննջում եր մեկուսացած:

Գյուղի մոտով հոսում—աղմիում է Լաջանուրի գետը, վորի վրա ձգված կամուրջը յերեւմ է յերկար, անշարժ ամպիվանու նման:

Կամուրջի միա կանգ առան տասնեմեկ ռազմիկներ:

Այս տասնեմեկից յետեկից հարյուրավոր այսպիսի տասնեմեկերի գնդեր են գալիս՝ ռազմունակ ու սրտոտ:

Բարնաբան հրացանն ուսից ցած բերեց, ուղղեց. լովեց պայթյուն:

Բարնաբան արագ շուռ յեկավ և ձեռքի շարժումով կարգադրեց հրացաներն իջեցնել ու բացականչեց.

— Մի զարկը բավական է: Որբել թող իմանա, վոր մենք գալիս ենք. - Բարնաբանն առաջ շարժվեց. բոլորը հետեւցին նրան:

Անցավ մի վայրկյան և ահա ամեն կողմից՝ խրճիթներից լույսերը վառած գալիս եյին աղջիկներն ու աղաները. նրանք վոչ ծածկված. եյին և վոչ ել հազնված: Մերկ ու տկոր, վոտարոբիկ դուրս եյին գալիս խրճիթներից և հարցնում իրաբ.

— Ի՞նչ պատճեց. ի՞նչու արձակեցներ հրացանը...

Այդ նույն ժամին ժողովրդի հսկայական ալիքը մոտեցավ կամուրջին. նրանց աղմուկն ու աղաղակը բռնել եր ամեն տեղ:

Բարնաբի տասնյակը շրջապատվեց գյուղացիներով: Նրանք իրենց մատներով տրուում եյին քնաթաթափ աչքերը. քրքրում մի քանի տեղից պատառուած վարտիկ շապիկները. մի քանիսը հայնոյելով և բունցքներով շարժվելով վազում են գետի խրճիթները, այստեղ ուր քանդված առաստաղից ու յերդիկից անձրւն ու ծյունն են թափվում ներս և ուր քանդված պատուհանների արանքով ներս ու դուրս ե անում հով ու զով քամին: Նրանք վազում են, վորպեսզի գանեն այստեղ հին, յերկաթե ընկերներ:

Ալիքը ներս խուժեց Որբելում:

Մորջնաձեն կանգնեց Բարնաբայի առաջ, հարմար դիրք բանեց և սկսեց խոսել ամբոխի. հետ.—

— Ախալճալեցիներ...

— Մթության մեջ խորասուզված լիոները ծանր մտածմունքներից սթափվեցին. նրանք ել արձագանկեցին «ախալճալալցիներին» և նորից խոր քուն մտան:

— Մենք այս իշխանությունը չենք ուզում... Հո ահսնում եք,

ովքեր ենք մենք...—բացականչեց նա և ձեռքերը մեկնեց դեպի ժողովուրդը, իր աշքերը, սիրու և բովանդակ ուշադրությունն ուղղելով դեպի այն կողմը.

— Մենք ել ձեր յեղայրներն ենք, թող անհծված լինենք, յեւթե յետ մնանք ձեզանից,—խոսքը կիսատ թողած՝ պատասխանեցին Մորչաձեյին,

Միքանի վայրկյան հետո ներս խուժած ալիքն ու դիմավորող ալիքը խառնվեցին իրար:

— Լուսաբացին Յագերում կլինենք. Յագերին մերն ե, — ասաց Մորչաձեն ու շուռ յեկավ: Նա չեր ել յերեռում, միայն յերբեմն լրավում եր նրա հուժկու ձայնը և տարածվում հեռուները:

Հանկարծ վոտքի կանգնեց ամբողջ գյուղը և միացավ ապրատամբներին:

Դուրս են գալիս Խրճիթներից, գետնափար տներից՝ գագանակներով, սրերով, փայտերով ու վրասորդական հրաշաններով: Այստեղայնտեղ լսկում են պատահաբար, թե փորձելու համար արձակած հրացանի ձայներ, և այս ձայները միախառնվելով անթիվ ու անհամար գյուղացիների շնչառության և աղմուկի հետ՝ ստեղծում են գայլութիւ մի անսահման ցանկություն ու ծարավ՝ վերջ տալու բռնակալ տերերի իշխանությանը:

Շարժվեց հսկայական ամբոխը, նրանք բարձրանում են սարը պիտի անցնեն առաջը ձգվող լեռնաշղթան:

Առանց կանգ առնելու գնում են առաջ: Ճանապարհին հանդիպում են ավերված խճուղիներ, մինչեւ ծնկները խրվում են ցեխի մեջ, փշերն ու խորթ ու բորդ քարերը ցավացնում են նրանց վոտները, բայց գնում են առաջ, առանց յետ նայելու—բարձրանում են հա բարձրանում: Այս հազարավոր մարդկանց սրտերը բարախում են վորպես մի սիրտ:

Նորից մի գյուղ:

Լիցորի գյուղն ե սա. հրացանը նորից պայմեց:

Այստեղ ել բոլոր գյուղացիները վոտքի յելան ու դուրս են յեկել իրենց խրճիթներից բոլոր նրանք, վորոնք դրսում տիրող աղմուկից ու ժխորից անկարող են քնել. ու դուրս են վագում նրանք, ինչպես Որբելում՝ տկոր, վոտարոբիկ, քնաթաթախ աշքերը ճմանելով:

— Ապստամբություն ե... ապստամբություն...—կանչում ե Մորչաձեն և ձեռն այս ու այն կողմ շարժելով վողերում բոլորին ու դործի կանչում:

Նրա ձայնը համնում եր ամենուրեք, բոլորի ականջին, և ամ-

բոխի մեջ անասելի աղմուկն ու ժխորը քանի գնում ավելի ու ավելի ուժեղանում եր. գոսում եյին բոլորը.

— Թալիս ենք... գալիս ենք...

Ապա վաղում են դեպի իրենց խրճիթները: Զափազանց ուրախ են նրանք, վոր վերջապես գետնի տակից հազար ու մի ծակ ծուկերից կարող են դուրս հանել թագցրած զենքերը, ձեռքերն առնել և գործադրել:

Նորանոր խմբեր եյին ավելանում, աղմուկը ստվարանում եր. նոր ալիքներ եյին բարձրանում ամեն անգամ, յերբ մտնում եյին վորեե նոր գյուղ:

Լեռների գագաթներն անցան, բարձունքները մնացին նրանց յետեռում և ձախ ուղղվելով բռնեցին Դեխվիրի տանող ուղին:

Բարձունքներից արդեն կազմ-պատրաստ եյին, վոչ վոք չեր քնել. ոչտիրացիներն արդեն կազմ-պատրաստ եյին, վոչ վոք չեր քնել. Դեխվիրի վառվում, խրճիթներից ճրագների լույսեր եյին յերեռում: Այս լույսերը հնար չեյին աալիս քնելու վոչ գյուղացիներին, վոչ շներին և վոչ ել անասուններին:

Լեռներից ու բարձունքներից իջնող՝ վրեժինդրությամբ լցված ամբոխը մտնում եր Դեխվիրի, ուր մի փոքր հանգիստ առնելով՝ ուղղում եյին շարունակել ճամբան: Այստեղ ապստամբներին միացան հարյուրի չափ զինված ուժեր. սրանք բոլորը մի սիրտ, մի հոգի գառած՝ սպասում եյին նույնչափ մի ամբողջություն ներկայացնող ապստամբներին. նույն զգացմունքով և նույն տենչերով ապրող սրտերը միացան, զրկախառնվեցին:

Յերկինքն արդեն սպիտակում եր: Խավարը յերկշուռ զոհաբերվող կենդանու նման ընկնում եր ու կորչում—անհետանում անավոր լեռներից ու ձորերից այն կողմ:

Մարդիկ արդեն նշմարելի եյին գառնում. դեմքերը պարզվում եյին. նկատելի յեր, վոր գիշերով նրանց աշքերում վառվող կրամեն ու բոցը՝ առավարշուսաբացին դեռ շարունակում եր փայլել ու բոցավառվել...

— Կազմ ու պատրաստ ենք... ինպիկե... խռովոտ, բայց վճռական ձայնով կանչեց Մորչաձեն, բարձրանալով ցանկապատը և յերեռ ձեռքերում պինդ սեղմեց հրացանը:

— Բոլորս պատրաստ ենք... գնանք, գնանք...—միաձայն կանչեց ամբոխը:

Ահա և Ցիկնիսծղալի կոչվող գետը, վոր պղտոր ու արտավազ հստում է մեր առաջ: Ավանեթիայի լեռներից ու ձորերից պղկած ծառերն ու զերանները քաշ տալով բերում զարկում ե իր քարքարոտ ափերին:

Յիենիսծղալի գետի վրա բանում եւ փոխադրանավը պյամին*), վորը գեռևս արշալույսին, պարանով ամբացած գետի ափին, կըռ- վում եւ անհանդիստ ջրի ալիքների հետ:

Հրացանի մի պայթյուն բավական եր, վոր փոխադրանավի տերն անմիջապես վոտքի յելներ: Զարմացած նայում եւ չորս կողմ և ից տեսածին չի հավատում:

— Ըսկեր, անցկացրու մեզ գետի մյուս ափը,—ձայնեց Բար- նաբան, նույնպիսի ձայներ ներդաշնակեցին նաև ամբոխից:

Արձակեց փոխադրանավը, պարանը յետ արեց և թիակի ճար- պիկ շարժումով՝ փոխադրանավն արագ հեռացավ ափից.

— Ապստամբներ են...—մըթմըթաց ինքն իրեն ծերունի նա- վապետը և գոհունակության ժպիտ անցավ նրա գեմքից.

Նրան ուրախացնում, նոր կյանք եյին տալիս բոլոր նոր գեղ- քերն ու նոր յերկույթները, վորոնք պետք եւ անշուշտ վորոշ հեղա- ցընում մտցնեյին նաև նրա անդույն ու միորինակ կյանքի մեջ: Ծե- րունի նավապետն իր սպիտակած յերկայն բեղերը վոլորեց և պա- տասխանեց իր հետ խոսողին.

— Ամեն անգամ 30 մարդ կարող եմ անցկացնել:

Շարժիեց մարդկային ալիքը վորպես հեղեղ, մի վայրկյանում փոխադրանավը լցվեցին այնքան մարդ, վորքան փոխադրանավը կա- րող եր տեղավորել:

Ալիքները ճեղքելով՝ սրացավ փոխադրանավը. իր հետ մյուս ա- փը տանելով ապստամբների անհանգիստ սրտեր—մեկ, յերկու և բազմաթիվ անգամ, մի ափը կենդանանում, մյուս ափը զատարի- վում եր:

— Յերկու մարդ՝ գալառի տուաշնորդին այստեղ բերելու, — կանչեց Մորչաձեն:

— Պատրաստ ենք, — կարծես միաժամանակ արձականգեցին Գուրին և Բարնաբան:

— Բերեք նրան իսկույն, թող կանգնի այս ժողովրդի տուշ և հաշիվ տա իր արարքների մասին. թող այս հեղեղի նման ալե- կոծվող ու անհանգիստ ժողովուրդն իր աչքով տեսնի իր նախկին բոնակալին:

Այդ ժամին հեռուներում արդեն յերկնակամարի վրա, արևի կարմիր ճառագայթների ազգեցության տակ՝ գունատ ամպերը պոկ- վում հեռանում եյին իրարից և արեի ու պայծառ տուավում շողն

*) Քառակումի, տախտակամածած մի նավ և, ծածկոցով և ցանկապա- տով, վորով մարդկանց կամ կենդանիներին անց են կացնում մի ափից մյուս ափը:

ու բովանդակ լույսը սփոփում—տարածվում եր բազմահակար շը- փոթված գեմքերի վրա:

Քայլում են Բարնաբան և Գուրին. նրանց սրտերը հուզված— գարկում են անհանգիստ նրանք պիտի արտահայտիչ լինեն հազա- րավոր տենչերի, հազարավոր ցանկությունների ու իղձերի, նրանք ուրախ են, վոր պատկանում են հարյուր հազարներին, նրանց մի մասնիկն են, նրանց յեղբայրներն են:

Գետի ափին մնացողները սպասողություն գարձած՝ անհանգիստ շարժումներ եյին անում:

Ամեն մեկն իրենից ներկայացնում եր մի հսկա ալիք—սեփա- կան ալեկոծ ու հուզիչ մտքերով, բոցավառվող տենչերով ու մըլ- մունջներով՝ ձուլված, միախառնված ընդհանուր տենչերի, մըլմունջ- ների. ալեկոծ ու հուզիչ մտքերի հետ:

Նրանց սպասումը՝ պոռթելումի կատաղած, փոթորկոտ մի ա- լիք եր, իսկ նրանց ալեկոծվող—փոթորկոտ սիրտը՝ սպասողություն:

Հեռվում, հրապարակի վրա յերեաց իշխանության ներկայա- ցուցիչը:

Նախաղգուշումը նրա քունը խանգարել եր. նա յել եր լսել պիշերվա հրացանի պայթյունը, զնդակի սուլոցը:

— Ի՞նչ եք կամենում...ի՞նչպես եք համարձակվում. — հարցնում ու միաժամանակ սաստում և գործուղվածներին,

Յերկուսը կամսպատճերը բաց. — Ի՞նչը կարող ե շեղել Գուրին ու Բարնաբային իրենց նպատակից, իրենց հանձնարարությունից: Նրանք լավ գիտեն, վոր իրենց թիկունքում այստեղ հոսուն գետի ափին՝ հազարներ կան ու հարյուր հազար- ներ, յերկաթե յեղբայրներ, վորոնք անտառի ծառերի նման անհան- գիստ իշխանում են ու մի սիրտ—մի հոգի, մի միություն գարձած՝ պատրաստ են բռնկվելու. ալեկոծվելու:

Գիտեն նրանք, վոր յերկաթե յեղբայրներն անհամբեր սպասում են և յերկաթի նման պինդ ու անհողողող պիտի դիմավորեն իրենց:

— Խոսքի ժամանակ չունենք. — պատասխանեցին նրանք:

Գուրին բռնում է վոտից վլուխ զինված գալառի տուաշնորդին և ասում.—

— Գնանք այստեղ: Այստեղ, ուր ժողովուրդն ե կամսպատճան, նա- մի՞ր գեղի գետի ափը:

— Մենք նրանցից ենք, գալառը մեզ պիտի հանձնես... Իշխանուերը—տերերը լսողություն գարձան:

Շփոթված կամսպատճան եյին նրանց առաջ:

Մի վայրկյան հետո նրանց դեմքին սատանայական ժպիտ յերեաց:

— Ասացեք, կկատարենք:

Կարծես այս պատասխանով կամեցան դժվար կացությունից մի կերպ դուրս պըծնել:

— Հետեւեցեք մեզ, այնտեղ պարզենք ու վորոշենք մեզ այրող խնդիրն, —ու յերկուսն ել ձեռքերը պարզեցին դեպի այն կողմը, ուր նրանց սպասում էյին հազարավոր յեղբայրներ, ընկելներ:

Յերեք զինվածներին տարանց հետ:

Մի քանի վայրկյան հետո, սրանք արդեն կանդնած եյին ժողովրդական գատաստանի առաջ, ժողովուրդը դատելու յեր իր իշխաններին:

— Ցրվեցեք, ինչու յեք ալեկոծվել... —սկսեց ժողովրդական ներկայացուցիչը, նրանց նախագահը:

Ամբոխի աղաղակը խլացրեց նրա ձայնը: Տեղից թուակ՝ Մորչածնն. նա մինչ այդ չեր ել յերեւմ:

— Հանձնեցեք դավաոր, ձեղ յենթակա շրջանը. զինաթափ յեղեք. ահա թե ինչ ենք ցանկանում, —վճռական ու խրոխարեց նա:

— Սյու անհնարին ե, —հազիվ լսելի ձայնով պատասխանեցին նրան:

— Սյու դեպքում զինաթափ արեք՝ և առաջնորդեք մեզ հետ, —կարգադրեց նա գյուղացիներին, վորոնք անմիջապես շրջապատեցին զինվածներին:

— Դուք, —դիմեց Մորչածնն իշխողներին հետեւող միլիցիոներներին, —մեզ հետ եք:

— Յեթե կընդունեք, —պատասխանեցին նրանք և միացան / ապրամբներին:

Մորչածնն շարժվեց առաջ. ապստամբները հետեւում են նրան. նա յերեք հոգնածություն չգիտեր վոչ քայլելու և վոչ ել կավի ժամանակ. ուրախ ու զվարի, հաղթական քայլվածով առաջնորդում եր նրանց:

Մտան Յագերի:

Յագերին արդեն գրավված եր:

Ապստամբները տեղափորվեցին շրջակայքում:

Հրատարակեց անդրանիկ կոչը. ստորագրված են. —

Լեշխումի հեղկոմի նախագոհ՝ ՍՎԱՆԻԶԵ

Թագմանիկավական շտարի դիմումով՝ ՄՈՐՉԱԾՆ

— Համեմատեցեր այս պատմվածքը Վ. Անանյանի «Կարմրազը» պատանին» պատմվածքի հետ:

— Ի՞նչու և ընդհանուր, ի՞նչն ե տարբեր:

— Ինչո՞վ և պայմանավորվում նմանությունը, գրական ազգեցությամբ, թե այլ բանով:

Ավել ԱՍԼԱՄԱԶՅԱՇՎԻԼԻ:

ՓԵՏՐՎԱՐԻ ՔՍԱՆ ՅԵՎ ՀԻՆԳԸ *)

Յերկու շաբաթ ե, ինչ անընդհատ վորոտում են թնդանոթները: Ամեն մի կրակոցից սարսափելի կերպով ամժում են քաղաքի պատերը և շաշում պատահանների ապակիները:

Լրագրները միալար բգավում են.

— Քաղաքացիներ, Վրաստանի ազատությանը վտանգ ե սպառնում... Գալիս են կարմիր ավագակները, վորապեսզի մեր յերկարը քարուքանդ անեն: Պատրիաստվեցեք նրանց զեմ կովելու...

Կառավարության պարագի առաջ անհամար բազմություն և հավաքվել: Այստեղ են նաև Գիգուցն ու Վասոն:

Ամբիոն ե բարձրանում ճառախոսը:

Ամբոխը լսելիք գարձակ:

— Քաղաքացիներ, —գոչեց ճառախոսը, —կարմիրները գումար են...

— Թող գան, բարի լինի նրանց գալուստը, —լսվեց մի ինչշոր մարդու ձայն բազմության մեջ:

Ամբոխը հուզվեց, նա վորոնում ե այդ խոսքերն արտասահմովին, իսկ մի քանիսը գաղտուկ ծիծաղում են:

— Գալիս են ու հետեւը բերում բոնաբարումն ու վշնչացում, —շարունակեց ճառախոսը. —պաշտպանեցեք ձեր մայրերի, քույրերի ու աղջիկների պատիմի այդ ավագակներից...

— Սուտ ե ասում, —արտասահման Գիգուցն ու մի կողմ քաշեց իր ընկեր Վասոյին:

Նրանք հեռացան բազմության միջից:

— Գնանք այնտեղ, վորտեղ մեզ նման կեղտութած շորերով մարդիկ կան: Դրանք մաքուր հազնված պարոններ են, մենք դրանց հետ գործ չունենք. —ասաց Գիգուցն իր ընկերոջը և նրանք ուղղվեցին Ազատության հրապարակի կողմը:

Այստեղ ել մեծ բազմություն ե հավաքվել: Կանդնել են փոքր խմբերով ու վիճում են:

*) Փետրվարի 25-ը Վրաստանի խորհրդայնացման որն ե:

Ամեն աեղ պատերազմի մասին են խոսում:
Ճառախոսը կոչ ե անում ժողովրդին՝ կովել կարմիքների գեմ:

Պատերազմը հետզհետե մատենում եւ:
Թողաճովների ձախն ավելի բարձր ու պարզ ե լսվում...
Յերեւում են վախեցած, սփրթնած դեմքեզ:

Միաժամանակ աչքի յեն ընկնում նաև ուրախ, ժաման պեմքեր:

Շատերը պատրաստվում են քաղաքից փախչելու, շատերն եւ—
կարմիքներին գիմավորելու:

Նաձալադեմի թաղամասի կամքջի մոտ հավաքվել են միքանի
բանվոր ու խորհրդակցում են:

Վորտեղից վոր եր—յերեան յեկավ Գիգուցը և ուղղակի քիթը
խոթեց նրանց խմբի մեջ այսպիսի մի ձեռփ, վոր կարծես հատկա-
պես կանչվել եր:

— Տեսնենք ինչ ե լինելու. չեմ կարծում, վոր բոլորին կո-
տորեն, գուցե մեղանից վոմանք կենդանի մնան,—առաջ մի բան-
վոր ու ձեռքը թափ տվեց:

— Ըսկե՞ր,—դիմեց նրան Գիգուցը,—քեզ, իբրե բանվորի, չի
սպում այդպիսի խոսքեր արտասանելը... Ո՞վքեր պետք ե կոտորեն
մեղ, ինչ պատճառով: Այստեղ գալիս են վոչ թե Ազա-Մահմադ
խանի բաշիբոզուկները, այլ մի սոցիալիստական պետության զոր-
քերը՝ հենց մեր յերկը սոցիալիստների առաջնորդությամբ... Այդ
զորքերը վոչ թե մահ ու վոշչացում են բերում այստեղ—ինչպես
գոռում են այդ մասին մեր ճառախոսները, այլ բերում են խաղա-
ղություն, յեղայրություն, միություն: Նրանց գալով մենք վոչ թե
կորցնում ենք մեր ազատությունը, այլ, ընդհակառակը, միովին ա-
զատվում ենք Անտանտի ազգեցությունից:

— Բարեկամ, այդ Անտանտա ասածդ ինչ բան ե,—հարցըց
յերկաթուղու սլաքի միամիտ պահապանը:

— Անտանտը միքանի բուրժուական պետությունների միու-
թյուն ե, վորոնց ցանկությունն ե իրենց ձեռքը դցել ամբողջ աշ-
խարհը և ամբողջ աշխարհի բանվորներին իրենց ստրուկը դարձնել:
Այդ մարդիկը, վոր այժմ փախչելու յեն պատրաստվում, նրանց սպա-
սավորներն են,—բացատրեց Գիգուցը:

Սրաքի բավարարված պահապանը ժամանց, բացեց իր՝ կոկոր-
դիլոսի բերանի մեծություն ունեցող բերանը, կամեցավ ինչ վոր
ասել, բայց լոեց:

— Իսկ դու ինչ եյիր կարծում, —հարցրեց Գիգուցը:

— Յես ինչ գիտեմ, ցավդ տանեմ. ել ո՞վ ասես Անտանտի
մասին չի խոսում, իսձ թվում եր, թե զա բուրժուազների մի ինչ
վոր թանգարին կերակուր պետք ե լինի, —պատասխանեց նրան
սլաքի պահապանն ու հեռացափ:

Բոլոր ներկա յեղողները սրտանց ծիծաղեցին:

Լուսացավ վետրվարի քսանեչորսը: Այլիս չի լսվում թնդա-
նոթների վրցոտը: Զեն ցնցվում տների պատերը: Զեն զնդնդում
պատուհանների ապակինները:

Ռուսթավելիի պղղոտայի վրա սլանում ե մի ինչվոր ծիա-
վոր ու չնորահավորում մարդկանց տեղի ունեցած աշողությունը:

Գիգուցը ժապում է խորամանկությամբ ու հարցնում ձիավո-
րին:

— Քաղաքացի, ինչ դրության մեջ ե գործը ֆրոնտում:

— Լավ գրության մեջ... Մեր գորքերը հաղթեցին բայլշեկ-
ներին ու փախցրին...

Գիգուցը չի հավատում այդ խոսքին:

Բայց նա մի քիչ կասկածի մեջ ե ընկնում, տեմնելով, վոր
այլիս կրակոցի ձայն չի լսվում: Նա գնաց Ազատության հրապա-
րակի կողմը:

Այստեղ հոծ բազմություն կար: Տեղտեղ կանգնել եյին մարդ-
կանց խմբեր և գաղտուկ վիճում եյին:

Գիգուցը մեկ մոտենում եր մի խմբի, մեկ—մյուս...

Հենց վոր նա մոտենում եր մի վորեե խմբի, խկույն լուս
եյին կամ խոսակցությունը փոխում:

Տրամվայի պահականոցի մոտ հաստափորի մեկն աննկատելի
կերպով կամաց ձեռքով խփեց իր նման մի ուրիշ հաստափորի,
աչքով նշան արեց Գիգուցի կողմն ու ցածր ձայնով ասաց.

— Նա լրտես պետք ե լինի:

Մյուսը ձեռքով ծածկեց իր բերանն ու հասկացրեց, վոր պետք
ե լոել:

Զկարողանալով վորեե նոր բան լսել այդտեղ, Գիգուցն իջավ
Պուշկինյան փողոցով, անցավ Սալդասակի շուկան, մոտեցավ Ալեք-
սանդրյան այդուն, ճանապարհը թեքեց դեպի Վորոնցովյան կա-
մուրջը և Պետական պողոտայով հասավ մինչև Կիրկայի փողո-
ցի անկյունը:

Ամեն տեղ մեծ բազմություն տեսավ, ամեն տեղ մարդիկ կա-
656—16

մաց ձայնով եյին խոսում, բայց նա պատերազմի վերաբերությամբ
վոչ մի տեղեկություն ստանալ չկարողացավ:

— Վարպետ, դուցե դուք պատերազմի մասին վորեե բան լր-
սած լինեք, — հարցրեց Գիգուցը գերմանացիների յեկեղեցու մոտ
առանձին կանգնած մի մարդու:

— Վա, դուքումսաղ, յես խո մինխստը չեմ, վոր պատերազմի
վերաբերությամբ տեղեկություններ ունենամ, — պատասխանեց ան-
ծանոթը, համարյա հարձակվելով նրա վրա. — յեթե պատերազմի
մասին տեղեկություն եմ ուզում, գնա Փորդանիայի ու Ռամիշվի-
լի մոտ, նրանք ամեն բան կասեն քեզ...

— Ճիշտ ե, մինխստը չես, բայց կարող եյիր վորեե բան լսած
լինել պատերազմի վերաբերությամբ, — ասաց Գիգուցն ու բայլերն
ուղղեց վերայի կամրջի կողմը:

Համարյա կես-գիշեր եր, յերբ Գիգուցը պառկեց քնելու:
Հետեյալ առավոտ, փետրվարի քանի և հինգին, դեռևս մութն
եր, յերբ սավառնակի բարձրացրած ձայնը զարթեցրեց նրան:

— Մի ինչ-վոր նոր բան կա, — մտածեց Գիգուցն ու արագ
փոտքի կանգնեց:

Հինգ ըսպեյից հետո նա արգեն փողոցումն եր:
— Նոր լուր լսել ես, — հարցրեց նրան առաջին հանդիպած
հարևանը:

— Ինչո՞ւմն ե բանը, — սրտի բաքախումով հարցրեց իր կողմից
Գիգուցը:

— Գիշերս մեր կառավարությունը փախել ե, զորքերն ու զը-
վարդիան նահանջել են Մցխեթի կողմը...

Գիգուցն ուղղակի վաղեց Ոլգինսկի փողոցի կողմը:

Մի բակի դուն մոտ կանգնել եր մի հասակ տռած կին ու

դառնապես լաց եր լինում:

— Ինչո՞ւ յես լաց լինում, մայրիկ. — հարցրեց Գիգուցը:

— Գիշերս, ժամի մեջի մոտ, մեր ամբողջ զորքերն անցան,
գնացին Մցխեթի կողմը. ասում են, թե այսոր բայլշեկները կդան
քաղաք ու բոլորի կոկորդները կկտրեն, — լացով պատասխանեց
կինը:

Գիգուցը հանգստացրեց նրան, բացատրեց, թե ինչո՞ւ յեն դա-
լս բայլշեկները, հասկացրեց, վոր նրա նման կանայք վոչ մի վախ
չպետք ե ունենան բայլշեկներից...

Ծերունի կինը հանգստացավ: Գիգուցն ուղղվեց Ռուսթավելու
պողոտայի կողմը:

«Սոլել» կոչված կինոյի մոտ միքանի մարդ եյին կանգնել ու
հանդարտ վիճում եյին:

— Ի՞նչ ե պատահել, ընկերներ, — հարցրեց Գիգուցը:
— Հեղաշրջում, — յեղավ պատասխանը. — մենշևկները փախան,
բայլշեկները գալիս են...

Գիգուցն ապատ շունչ քաշեց, յետ շրջվեց ու կանգ առավ Վե-
րայի վայրեջքի անկյունում, տրամվայի սլաքի մոտ:

Գիգուցը կանգնած ե, անկյունում ու նայում է Մոսկվյան փո-
ղոցին:

Նա տեսավ բանվոր Սիկոյին, վորն անկողինը շալակած, ձեռ-
քին մի պատառոտած փոքր ճամբրուկ բռնած, արագ քայլերով գր-
նում եր Վերայի կամրջի կողմը:

— Բարե՛, Սիկն, մւր ես գնում, — կանչեց Գիգուցը:
— Կայարան, կայարան, — պատասխանեց Սիկոն ու շարունա-
կեց առաջ դնալ:

Գիգուցը կանգնեցրեց նրան ու նորից հարցրեց:
— Կայարանում ի՞նչ գործ ունես:

— Յես ի՞նչ գիտեմ, ասում են, թե բայլշեկները գալիս են:
Գիգուցը սրտանց ծիծաղեց:

— Այ դու տիմար, անխելք արարած, մւր պետք ե գնաս, —
հարցրեց Գիգուցը ծիծաղելով:

— Յես ի՞նչ գիտեմ, կերթամ Ավճակա...
Գիգուցն ավելի պինդ հոհուաց ու հրամայական շեշտով ասաց
նրան.

— Յետ դարձիր, քանի դեռ սենյակդ չեն գրավել:

— Հապա բայլշեկները, — հարցրեց Սիկոն:
— Քսանք քո սենյակը, թափիր ահտեղ այդ իրերն ու գնանք
բոյլշեկներին դիմավորելու...

— Բայլշեկներին դիմավորելու, — զարմացավ Սիկոն:
— Այս, անմիտ մարդ...

Մի փոքր տատանվելուց հետո, Սիկոն նորից գրավեց իր սենյակը
և Գիգուցի հետ միասին ուղղվեց Ազատության հրապարակի կողմը:

— Այ դու արջ, դու վոր բուրժուա-կապիտալիստն ես, վոր
բայլշեկներից փախչում ես, — ասաց Գիգուցը:

Սիկոն գլխակոր ծիծաղեց ու վոչինչ չպատասխանեց:
Ինքն ել չգիտեր, թե ինչո՞ւ եր փախչում և ի՞նչ պետք ե պա-
տասխաներ...

Ազատության հրապարակում անհամար բազմություն եր հավաքվել ու սպասում եյին բայլչիկների գալուն:

Նրանց սպասելու միջոցին, քաղաքային վարչության շենքի աշտարակին ժողովուրդը կարմիր դրոշակ ծածանեցրեց:

Սիկոն ու Գիգուցը վագեցին դեպի Պուշկինյան փողոց, վորոեղից գալու յեր կարմիր զորքը: Նրանք կարիք չունեցան հեռու գնալ:

Հին հոգեոր սևմինարիայի մոտ նրանք հանդիպեցին կարմիր զորքին, վորը կարգով ու համբաքայլ ընթանում եր դեպի Ազատության հրապարակ:

— Ուռում, — գոչում ե ժողովուրդը զորքի հասցեյին:

Զորքը ժաղում ե, գոհ ե ժողովրդի դիմավորելուց:

Զորքի առաջնորդ ուազմական կոմիսարը վողջունում ե խանդավառ ժողովրդին և բարձրաձայն արտասանում:

— Ընկերներ, մենք յեկել ենք վոչ թե ժողովրդին ստրկացնելու, այլ աշխատավոր դասակարդին կալիտալիստների ճանկերից ազատելու: Մենք յեկանք այստեղ վրացական ժողովրդի միջնորդության շնորհիկ: Կեցցե՛ Վրաստանի աշխատավոր ժողովուրդը...

— Կեցցե՛, կեցցե՛, — լսվում ե խանդավառ ժողովրդի կողմից:

Սիկոն ազշած նայում ե այդ «ավազակների» անունով մկրբաված զորքին, կարմիր բանակայինների բարի ժպառող դեմքերին և զարմանում ե, տեսնելով նրանց վերաբերմունքը ժողովրդին:

Հասան Ազատության հրապարակ:

Յերկրորդ ուազմական կոմիսարը դիմում ե բազմության, առելով:

— Ընկեր, մենք յեկել ենք այստեղ վոչ այն պատճառով, վոր գրավենք յերկիրը, այլ այն նպատակով, վոր բերենք ձեզ համար յեղբայրություն, միություն ու խաղաղություն...

Ի տես այդ տեսարանի՝ հուզված Սիկոյի աչքերից արտասուք է կաթում ու նա մտածում ե.

— Այս ինչպես ե լինում, «վոր մահ տարածող ավազակները» դալիս են մեզ մոտ ու հետները բերում մեզ համար յեղբայրություն, միություն ու խաղաղություն...

Կարմիր բանակայինները տեղափորվում են հրապարակում ու մոտակա փողոցներում:

— Ընկերներ, ինչպես ե արդյոք ընթանալու Վրաստանի զորքը, — հարցը Գիգուցը մի կարմիր բանակայինի:

— Վրաստանն այժմ ազատ յերկիր ե և նրա բախտն ել ամողջովին վրացի ժողովրդի ձեռքումն ե գտնվում: Այսուհետեւ հենց

իրենից՝ վրաց ժողովրդից ե կախված, թե նա ինչպես կողասպործե իր ազատությունն ու ինչպես կկառավարե իր յերկիրը, — պատասխանեց նրան կարմիր բանակայինը:

— Թե վոր այդպես ե, — ասում ե նրան Գիգուցը, — կեցցե՛ ուրեմն յեղբայրություն ու հավասարություն տարածող կարմիր զորքը և նրա հետ միասին Վրաստանի աշխատավոր դասակարգը...

— Կեցցե՛ն, կեցցե՛ն, — լսվում ե ի պատասխան դրան՝ ժողովրդի կողմից և նրան ձայնակցում ե պատմական Մթածմինդա սարը, վորն ալեզարդ թիֆիսի զլսովն անցած ուրիշ շատ պատմական դեպքեր ել և հիշում:

ՅՈՒԹԻ ԼԻԲԵԴԻՆՍԿԻ

ԱՊԱՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Դաշտերի գորշ-մանիշակագույն հեռումների վրայով, քաղաքի մոխրագույն տանսիքներին կալչելով, կամաց և ցած լողում եյին ամպերի ծանրը, թուց, հանդարտ կույտերը: Նրանք մանր անձրև ելին մաղում, վորն անվատահ եր, վայց ուրախ, ինչպես սիրո առաջին շոյանը, ինչպես պատանու դողդոջ հալումը մերկ մարմնին: Էկունները չեն յերեսում — անձրևի մշուշապատ ցանցը ծածկել ե նրանց, և ամպերի ցած վարագույրի տակ աշխարհը փոքր ե և նեղ, իսկ ողը՝ դաղջ և խոնավությամբ հագեցած, կարծես ջրի մանրիկ կաթիլների փայլառ չերմոցի ապակյա շրջանակի տակ մշուշապատված:

Դանդաղ, ծույլ և քմահաճորեն ուղղությունը փոխող քամին քշում ե զաշտերից դեպի քաղաք հին կյանքի քայլայման և նորի սաղմնավորման արբեցուցիչ բուրմունքը, իսկ քաղաքից դեպի դաշտերը աղմուկ, թիվլթինկոց, սուլոց և զանգահարություն: Այս եր այն ել կոստանդին Պետրովիչն ըմբռնում ե իր ամբողջ եյությամբ: Նու կանգնած ե ավազոտ բլրակի վրա — այստեղ խրվել ե գետնի մեջ մի մենավոր, հողմահալք քար, նայում ե տների և ցանկապատերի կույտին, յեկեղեցիների խմբին, տաղտկալի դարձած, իր մանրամանություններով ծանոթ անդորք քաղաքի պատկերը թվում ե նրան յերադական, հինավուրց խունացած վարագույրի վրա գունատ թելերով ասեղնապործած:

Ուժեղ և հանդուգն մեկը կոպիտ կերպով ընդմիշտ կպատռի այդ վարագույրը և նրա տակ յերեան կղան նոր, կոնստանդին Պետրովիչի համար ոտար, թշնամի և անհասկանալի գեղեցկությամբ

փայլող կյանքի բազմերանդ գույները։ Կյանքը, ինչպես հնադարյան վիշտապ, տանջանքների և չարչարանքների մեջ մի անդամ ել գուխում ե կաշին, դեն ե գցում հինը, գույնը գցածը, կնճռոտվածը, և նրա տակ յերեան են գալիս նոր կյանքի չտեսնված նկարի ուայծառ բժերը։ Այդ պայծառ բժերը չեն արդյոք, վոր այժմ անձընի շղարշի միջոցով թափանցում են գորշ պատկերի վրա և յերեւում իբրև կրկեսի շենքի գլխի կարմիր գրոշակ և հրապարակի գեղատան կարմիր ցուցանակ։

Իսկ կոստանդին Պետրովիչը հիշում ե ոռւս մարդկանց անցյալ կյանքը, վոր ընթացել ե այդ վոյթորկտութից մշուշապատ գաշտերի ֆոնի վրայով, խճառկ քաղաքներում, աննկատելի անթիվ գյուղերում, կյանք, վոր նկարագրել են՝ Պուշկինը, Տուրգենևը, Չեխովը... և այլ հարյուրավոր ոռւս գրողներ, վորոնք արտասվել են այդ հավիտյան անցած զնացած կյանքի վրա, այնքան ճշորեն պատկերագրերել են այն և ընդմիշտ հմայել կոստանդին Պետրովիչին նրա տխուր գեղեցկությամբ։ Յերկու տասնյակ տարի նա գրականություն ե դասավանդել քաղաքի յերկու գիմնազիայում, յերկու տասնյակ տարի շարունակ նա նորից ու նորից կարգացել ե իր փոքրիկ առանձնասեպյակի յերկու պահարան զբաղեցնող գեղեցիկ կազմով գրքերը։ Հեղափոխության ընթացքում այդ գրքերի շարքերը սաստիկ նոսրացել են՝ մտի, ձավարի, ալյուրի և ձվի հետ և փոխանտեկում նրանք Մարգարիտա Սեմյոնովնան, մի տարիքավոր կին, վոր և ամուսին, և աղախին և նրա համար։

Ի՞նչ արած, ապրել պետք ե... Նա «սկզբունքով» չգնաց խորհրդային դպրոց աշխատելու, վոչ մի արհեստ չի իմանում, իսկ մթերած պաշարը և խնայած դրամը շուտով սպառվեցին։ Շաբթեշարաթ, ամսեամիս, տարեց-տարի, ամըողջ հեղափոխության ընթացքում նա ապրեց այն հույսով, վոր ահա ուր վոր և կընկնի հայրենիքի վրա բայլչեկների ունեցած արյունալի, ատելի և անհասկանալի իշխանությունը և հին, խակական կյանքը կվերադառնաւ։ Հոկտեմբերյան հեղափոխության առաջին իսկ ահավոր պայմաններից սկսած նա ատեց բայլչեկներին, վորոնք բոլորովին ոտար ելին նրա համար, վորոնք կարծես թե անցյալ կյանքում գոյություն չեն ունեցել, վորոնց գործողությունները, վարմունքը և խոսքերը նրա համար անհասկանալի և լիքն եյին հակասություններով։ Բայլչեկները թվում եյին նրան և զյադացար քիրտ, և վրա հետ միասին սատանայաբար խորամանկ, և կեղծավոր յեղվիաներ ու միաժամանակ նեղ, անողոք դոկտրինյորներ։ Նա չեր կարսդանում սառնարատությամբ տեսնել խորհրդային ցուցանակները և տնից

գրեթե բոլորովին դուրս չեր գալիս, նույնիսկ ցերեկը չեր բանում լուսամուտների բոլոր փեղկերը։ Բոլորովին անպետքացավ, վեր դիպավ, սկսեց սամագոնկա խմել, կծծիաբար կովում եր Մարգարիտա Սիմյոնովնայի հետ և ամբողջ որերով կամ պասյանս եր բաց անում, կամ թափալվում եր գահավորակի վրա և կրկին ու կրկին կարգում իր նոսրացող գրադարաննը։

Զեխո-Սլովակյան հեղաշրջումը վոչնչացրեց կյանքի հին կարգերի վերադարձի մասին նրա ունեցած հույսը։ Ժամանակին նա գայտարական եր տեսել տիրող բուրժուազիայի չարաշանությունները, գուղություններն ու կաշառակերությունը, սպիտակ սպանների տղիտությունը, հիմարությունը և անմիտ խստությունը։ Սպիտակներին նա խղճում և ատում եր, վերաբերվում եր դեպի սպիտակներն այն զգացմունքով, ինչ զգացմունքով հայրը կվերաբերվի գեպի իր հարբեցող և փուչ, նրա վրա դրած իր հույսերը չարդարացնող վորդուն։ Մարգարիտա կյանքը յերկրի վրա սկսեց նրան թվականի մարդարաց ցնորքների մեջ եր ընկնում, թե ամբողջ մարդկությունը պիտի կործանվի։

Բայց ահա, անգիտուն անխոնջ բայլչեկներն իրենց շուրջկալով վորսացին ամբողջ քաղաքը և ինչպես խլուրդի հողի տակի ախորժելի բնից՝ դուրս քցեցին յերկրի յերեսը՝ թարմ ողի մեջ, կապույտ յերկնքի տակ։ Խոր գիշերով նրանք տուն մտան, արթնացրին, նայեցին վկայաթղթերը, հրամայեցին հագնվել և հայտարարեցին նրան մորիլիզացիայի յենթարկված՝ վառելափայտ պատրաստելու համար։

Յեկ աղաղակում, ասում եր նա այդ հանգիստ, ատելի և ատելի և անհասկանալի մարդկանց, թե ինքը գործ չունի վառելափայտ պատրաստելու հետ, նա—մտավոր աշխատանքի մարդ և, պատանեկության դաստիարակիչ... Իսկ Մարգարիտա Սիմյոնովնան, պուազ և ծիծաղելի իր գիշերային հագուստով, աղաչում եր նրանց հանգիստ թողնել նրան, ձեռք չտալ և լալիս եր մանրիկ ուղունքի նըման արցունքներով ու նրա վերաբերյալ գրաններն եր կոփում մսով և կազամբով կարկանդակներ։

Բայց նրան արդեն գատարկ փողոցներով տանում եյին կոմպաշտի շտաբը, այստեղ—տոթ, ծխախոտի ծխով լիքը սենյակում, նույնպիսի բորբոքող, հայնոյող և բարկացած բնակիչների շրջանում նա մի անքուն գիշեր անցկացրեց, և մնացածների հետ միասին, ուրախ և ծաղրատեր կարմիր զինվորների ուղեկցությամբ, ուղարկվեց վանքի անտառը, և այնտեղ նրան վառելափայտ սղոցելու, ճղելու և դարսելու գործի դրին։ Յեկ կոստանդին Պետրովիչը բոցա-

վառվում եր բարկությունից դեպի այդ ոտար, անախոք ուժը, դեպի բայլեկիները տածած ատելության խոսքեր եր փոխանակում նա դժբախտության ընկերների հետ՝ վաճքի հինավուրց կամարակալ միջանցքներում, խցերում և սեղանաաներում, ուր նրանց ողեզն եյին տվել:

Իսկ հետո, թեև շատ դանդաղ և աննկատելի, բայց այնուամենայնիվ գարնան հմայքը սկսեց մտնել նրա հոգու մեջ, և մի տեսակ նոր հիացմունքով լուսավորվեցին նրա համար այն որերը, վոր նա պնդ եր կացրել թարմ ոդում, կանաչ, լուսկյաց սոճենիների տակ, անսովոր, բայց վոչ ծանր և թարմացնող աշխատանքի մեջ։ Այնքան նման չելին այդ որերը վերջին տարիների մոայլ-սենյակի կյանքին, և նրա հոգում առաջացնում եյին նրանք ապրումներ, վոր թվում եր թե ընդմիջութաղված և մոռացված եյին...

Չե վոր վազուց, վաղ պատանեկության որերին, յուրաքանչյուր դարձանը նա սպասում եր սրտատրով... Յեվ արդեն փետրվարի անվայլ—փափուկ որերին նա դուրս եր դալիս տնից, կանգնում, նայում եր հանդարտ կախարդական աշխարհին, ձյանը, վորը թվում եր նրան ավելի սպիտակ քան յերկինքը, լուսկյաց, ծածկամիտ և հրճվանքով մի ինչ վոր բանի սպասող ծառերին, և ինքն ել ինչ վոր մի բանի սպասում եր, և հանկարծ զգում իրեն, իր առողջ, յերիտասարդ, ուժեղ մարմինը, բացի վերեկ հագուստից, և իր խորը, չարտահայտված մտքերը, բացի վերեկ բառերից։ Յեվ այս վայրկաններին կար միայն մի սրտատրով քաղցր ակնկալություն։

Իսկ այժմ գարունը տարվա մյուս յեղանակներից նա զանազանում եր միայն նրանով, վոր տան մեջ նավթալինի հոտ եր դալիս և փեղկերը հանգում եյին, և մեկ ել ճրագը բավական ուշ եյին վառում... Սենյակի առորյա կյանքը, կահկարասիներով սարքված քառանկյունի տարածությունների մեջ, փակում եր նրա առաջ տմեն բան։ Յեվ միայն այս որերին, վոր անց եր կացնում սոճու անտառի մեջ, ուր գարունը վոտք եր գնում անվստահ, արահետները վեռ լիքն եյին ջրով և կապտականաչ ձյունով և միայն հալված ձյուններն եյին ցույց տալիս անցյալ տարվա խոտի չորացրած փընջերը, փշատերեների կույտերը, մեկ ել դանդաղ ու քնկոտ կյանքով ապրող արթնացող մըջնանոցը։ Այս յերեկոներին, յերբ նա հոգնած վերագանում եր աշխատանքից և հայացքով վորսում ամպերի մեջ հաշող արմի կարմիր հետքը, այս տարորինակ ժամանակին նա նուրից զգաց գարունը, նա սկսեց ուրախանալ և ցավել, վորովհետեւ նրա կյանքն արդեն անցել եր, անցել եր հիմար և անմիտ կերպով, իսկ գարունն առաջվա նման ուրախ եր և պայծառ։

Վերադառնալով աշխատանքից, կապույտ իրինամուտի կախարդական ժամերին, քնելուց առաջ, կոստանդին Պետրովիչը թափառում եր մութ վանքում, բարձրանում եր յերկրորդ հարկը, ուր տեղափորված եյին կարմիր զինվորները, լսում եր նրանց խոսակցությունը և ծիծաղը, մի անգամ նույն խակ հանդիպեց քաղղեկ Սպիցինի շուրջը հավաքված մի խմբի, և կարմիր զինվորների հետ միասին կոնսաւանդին Պետրովիչը ուշադրությամբ ականջ գըրեց Յերրորդ իստերնացիոնալի մասին տեղի ունեցած քաղաքական զրույցին։ Կարմիր զինվորների մեջ նա յերբեմն նկատում եր կոմմունիստների և նրանցից մի քանիսի հետ անվստահ կերպով խոսակցության եր բանվում։

Ապստամբության որը, փայտի պաշարը պատրաստելու համար մորիլիզացիայի յենթարկված բնակիչների մեջ անորոշ լուրեր եյին պտում, իսկ յերբ յերեկոյան նրանց բոլորին, նախապես համբելով, փակեցին մի մեծ, մութ սենյակի մեջ և բակից նրանց ականջին հասավ թմբուկի առանձապալի գոռոցը, այն ժամանակ զայրույթն ու վախը, ուրախությունն ու տագնապը լցրին սենյակը հոհոցով, կամչերով և թշնամական զոռոռոոցի թնդյուններով։ Բայց ահա ինքը կարառվովը, յերկու հարգալից, լուռ մարդու ուղղեկցությամբ ներս մտավ և հանդարտված ամբոխի վրա ցցեց ելեկտրական փոքրիկ լաղտերի ճառագայթը, նրա նվազ լուցու տակ հայտնաբերեց այդ բոլոր ծեր ու յերիտասարդ, գեղեցիկ և տպեղ, խելացի և հիմար դեմքերի վրա չարախնդություն, հույս և յերկյուղ, հասկացավ և վոչ բարձր, բայց ամենքի համար լսելի ձախով գիմելով վանքի պաշապանության համար մի զասակի հետ թողնված յերբորդ վաշտի հրամանատար, սկովիկի վայելչատես, քիչ առիկ հարգանգով ծիգ կանոնած ժուրըբինին, ասաց։

— Մի բան լինի թե չե...ձեռաց... հասկացա՞ր։

— Ալո, ընկ. կոմիսար,—պատասխանեց Ժուրըբինը, հանդուժն ժպտաց, ծոեց աշքերը կարառվովի վրա, ծոեց աշքերը բնակիչներու անձայն ամբոխի վրա և ինչպես մի դժոխքի սատանա թվաց նրանց՝ հրեղեղ զորեղ մարմառով, ծխոտված գեմքով, դաժմոն գեղեցիկ աշքերի ծուռ հայացքով և կարմիր զինվորի սաղավարտի սատանայական յեղջուրով։

Այս խավար, տագնապալի գիշերը մեծ տոթ սենյակում վոչ վոչ չընեց. շշնչում, շշնչում եյին, չարախնդությամբ մեկ մեկ թվում եյին կոմմունիստների անունները, հիշելով նրանց սխալները և հույս եյին դնում, հույս եյին դնում, հույս եյին դնում։

Կոնսաւանդին Պետրովիչն ել նույնապես քնած չեր, ծածկված իր

շինելով, պառկած իր նեղ և կոշտ նստարանի վրա, մի կողմից մյուսն եր շուռ գալիս և ամեն բան մտքով անց կացրեց։ Նա ապստամբության հաջողության չեր հավատում և չեր համակրում, հիշում եր Զեխո-Սլովակյան խոռվությունը և կոլչակի շարժումը։ Կոմմունիստները նրան ոտար ելին մնացել, և նա չեր հավատում այն բանին, ինչ վոր նրանք գրում ելին նրանք իրենց կարմիր դրոշակների վրա և ինչի համար վոր տնձնազոհությամբ մեռնում ելին։ Բայց յերբ ժողովուրդը, բանվորները, կարմիր գինվորները—այդ զինվորական շինեներով գյուղական յերիտասարդները—այսքան տարի հպատակում են նրանց, ինտերնացիոնալի այդ քարոզիչներին, կիսով չափ վոչ ուսւներից կազմված այդ հեղափոխական ազանդին, ապա նշանակում ե, վոր մի կենսական ճշմարտություն կա նրանցում։ Թերևս յեթենա փորձված լիներ աշխատել բայլշեկիների հետ, գուցե գտած կլիներ այդ ճշմարտությունը, բայց նա պառկում եր գահակորակի վրա, կարդում եր իր գեղեցիկ կազմով գրքերը և... մում, այդ գրքերը, անց կացրած կյանքի համար քելեխ սարքում։

Յեկ հենց վոր մի վաշտ վանք վերադարձավ և հայտնվեց, վոր ապստամբությունը ճնշված ե, կոստանդին Պետրովիչը ժուրբինից մի որով քաղաք գնալու թույլովություն խնդրեց, վորպեսզի մաշված վոտնամանները փոխի ե, ի դեպ, ինքն իրեն վորոշեց, անցնի լուսրաժին, հարցնելու, գուցե իր համար վորեն աշխատանք կդանիվի, և մեկ ել ուզում եր նոր աշքով նայել այդ ատելի դարձած քաղաքին, վոր նրա ամբողջ կյանքն եր կերել, տեսնել չսիրած, բայց սովորական դարձած Մարդարիտա Սիմյոնովսային, վորից ավելի մոտ համենայն գեպս նա աշխարհում վոչ վոք չունի։ Յեկ ահա առավոտվանից, այս փոշու նման անձրես տակ, քաղաք վառելափայտ կրող համրաքայլ սայլերի կողքից գնում ե կոստանդին Պետրովիչը, լսում ե գյուղացիներին և սայլերին ուղեկցող կարմիր զինվորների խոսակցությունները ցանքսի մասին, այն մասին, վոր վարի ժամանակն ե, իսկ անհավատ կոմմունիստներն ստիպում են ճանապարհների այս վատ ժամանակ փայտ կըեր վոր ցանքի համար սերմացու չկա, վոր խարեցա կոմմունիստները խոստացել ելին ցորենի փոխարեն ապրանք տար, բայց վոչ մեխ, վոչ յերկաթ, վոչ ամանշաման և վոչ ել չիթ ուղարկեցին գյուղը, այլ ուղայած ոճիկներ, պռւղբա և շրթունքի պոմադ...

— Թու, անհավատներ,—ասում ե գյուղացին...

— Եղ վորեն մեկը դիտմամբ մեր գործը խանդարում ե, պատամսանում ե շփոթմունքից կարմրած մի կարմիր զինվոր, այդ մասին անպատճառ պետք ե հայտնել Զեկային...

— Զեկան չի ոգնի։ Եստեղ ել, ենտեղ ել կոմմունիստներ են նրանք իրար պահում են։

Իսկ մի ուրիշ կարմիր զինվոր գյուղացիների մի խմբի բացարում ե.

— Ես փայտը վոր դուք կտրում եք, յերկաթուղու համար ե, իսկ յերկաթուղով սերմացու կրերեն...ցանելու համար, ինարկե։ Ես բոլորը մեղ Սպիցինն ե պատմել, քաղղեկը. լավ ընկեր ե...լրագրից ել եր կարդում...

Իսկ ով վոր հիմա խոռվություն ե սարքում, ով վոր խանգարում ե մեղ մեր տնտեսությունը կարգի գցել նա մեր թշնամին ե,—ասում ե նա ծանր ատելությամբ։ Հարազատ յեղբորս ել չեյի խնայի, թե վոր նա բանդիտ գասնար:

Վոչ մի բան չեմ իմանում,—վշտոտ ասում ե ամենքից հասակավոր, սպիտակած միրուքով և խոնացած աչքերով մի գյուղացի։ միայն թե հոգիս վկայում ե, վոր սովից բոլորս կոտորվելու յենք, յեթե յերկնային թագուհին չոգնի, —և, բլրակի վրայից նայելով քաղաքի յեկեղեցիների վոսկեղոծ խաչերին, լսելով յեկեղեցու թույլ զանգահարությունը, նա մորթե փափախը հանում է ճաղատ զլմից, յերեսը խաչակինքում, իսկ նրա յետեկց սկսում են խաչակնքել ուրիշներն եր։ Յեկ կոստանդին Պետրովիչը, ժուրգրդական լուսավորության հին շինելը հագին, սափրված, այժմ ծեր և կնձուտ, իսկ յերբեմն գեղեցիկ յերեսով, նույնպես խաչ ե հանում, նայում է այս հասարակ, տգետ գյուղացիներին, մոխրագույն քաղաքին, դաշտերի գորշ մանիշակագույն հեռուներին, այս մառախապատ որին, և սիրտը լալիս ե կյանքի այս հանդարա, հավետ չքացող կառուցվածքի համար, լալիս ե այս աղիողորմ զանգահարության—վորը վհատ, կախ գցած թեկերով, թռչում ե քաղաքի վիայով—այս համաշափի, աննկատելի, հասարակ ժամին, յերբ պղտոր սպիտակ բծի նման արել հեռացել ե կես որից և գորշ մանիշակագույն հեռու դաշտերի վրա գցում ե ծիածանի գունատ կամարը...

Կարմիր զինվորները, նայելով խաչակնքող գյուղացիներին, հանքերը կիտում են, իսկ հետո մեկը, ամենից յերիտասարդը, ծաղրանքով ասում ե—«Լավ, շատ աղոթք արիք, գնանք...իսկ դու, պարսն, նույնպես...չետ մի ընկնի»—գարձավ նա կոստանդին Պետրովիչին։

Սայլերը կամաց շարժվում են և կոստանդին Պետրովիչը տեսնում ե, թե ինչպես լայն հրապարակով քաղաքի բոլոր ծայրերից գեղի կըկեսն են հավաքում մարդիկ, գնում են խմբերով և մեկ-մեկ յերիտասարդներ, և ծերունիներ, աղամարդիկ և կանայք։ Տարբեր են նրանց դեմքերը, ժպիտները, շարժումները, քայլվածքը,

բայց և ամենքի մեջ մի ընդհանուր նման բան կա, կարծես նրանց լուսավորում և միևնույն հեռու, դեռևս պաղ առավոտյան արեք: Յեզ կուտանդին Պետրովիչը գլխի յե ընկնում, վոր այդ կոմմունիստներն են հավաքվում ընդհանուր ժողովի:

Ապստամբությունից հետո, այս առաջին կուտակցական ժողովն է, և կոմմունիստների համար յեկեղեցական զանգահարությունը նշում և ինչպես թշնամի փողերի ձայն, ինչպես հանգուզն հիշեցում, թե կոիվը չի վերջացել վոր թշնամին հետ և նահանջեր բայց չի խորտակված, յուրաքանչյուր վոք լսում է այդ ձայնը, հոնքերը կիսում, բայց հետո հիշում է, վոր հաղթությունը տարած է, վոր ապստամբությունն այսուամենայնիվ ճնշված է, և ինդակցում է ընկերներին: Իսկ լիզո Գրաշեփան նույնպես յերկշոտ մոտենում է կրկեսի մուտքին և չի փստահանում մտնել: Իդուր լիզան ամբոխի մեջ ծանոթներ ե փնտում: Կարծես թե նրանց բոլորին ապստամբության ժամանակ սպանել են. բայց ահա, կարգին շինելով, վոսկեփայլ կոճակներով, կրծքին կոմմունիստական աստղ, ինչը, ընկեր Մատուսենկոն, Քաղբաժնի քարտուղարը, հանում է զըրպանից իր կուտակցական մաքուր տոմսը և ցույց տալիս շըջկոմի յերիտասարդ ու մոայլ քարտուղարին, վոր նատած կրկեսի մուտքի մոտ ցուցակագրում ե հավաքվածներին...

— Ըսկեր Մատուսենկո, ընկեր Մատուսենկո... Դուք գոնե կենդանի յեք, ընկեր Մատուսենկո... Ձեզ գոնե չեն սպանել...

Իսկ ընկեր Մատուսենկոն ինքնագոհ ժպտում է:

— Ի՞նձ, ինչու պիտի սպանեն: Յես փոքր մարդ եմ, աննշան, հարեաններիս մեջ թշնամիներ չունեմ: Յես ու կինս հրաճգություն չենք լսել, փոչինչ... Հանդիսա քնած ենք յեղել մեր մահճականների վրա, հը՛, հը՛: Գիշերը կինս արթնացել և տառմ է,— «Բլյուշա, կարծես կրակում են...» «Հերիք են, Գրուշա, ասում եմ, քնիր, եղ քեզ, թվացել ե, հը՛, հը՛»: Իսկ առավոտը, լսում եմ, ճիշտ վոր կրակում են: Յես տանն սպասեցի, հենց վոր հրաճգությունը դադարեց, գընացի ծառայության: Քաղբաժնում, բացի ինձնից, վոչ վոք չկար, բայց յես իմ պարտականությունների մեջ թերանալ չեմ կարող...

— Ի՞նչ պիտի անես հիմա, ընկեր Մատուսենկո, ընկ. Սիմկովան և ընկ. Մարտինովն սպանված են...

Մատուսենկոյի դեմքը վիշտ և ցավ ե արտահայտում:

— Վորբացա յես, բոլորվին վորբացա... Ահա քեզ ժողովրդական տգիտություն և վայրենություն... Իսկ դուք, ինչ ե, միթե մեր կուտակցության մեջ եք ուղում գրվեր,— հովանավորող տոնով հարցնում ե նա լիզային,— մեզ մոտ ժողովի յեք յեկեր

Յեզ լսելով շաբաթ յերեկոյան ժամերգությանը հրավիրող գանգահարությունը, կիզան մտածում է այն մասին, վոր ինքն այսոր յեկեղեցի չի գնացել պատարագի, այլ յեկել և կուտակցական ժողովովի... Յեզ ընդհանրապես... նա յեկեղեցի չի գնա... նույնիսկ... Զատելին, վորովինեա... աստված չկա:

Յեզ զբաղված այս նոր մաքերով, ցրկած պատասխանում և նա Մատուսենկոյին...

— Ընկ. Կարառուլովի մոտ դործ ունեմ... Յես պայմանավորվել եմ նրան այսանդ հանդիպել:

Իսկ կարառուլովը ձիով մոտեցավ կրկեսի շնչքին, թեթև վայր ցատկեց ձիու վրայից, ձին կապեց, իսկ ինքը, առանց հեռանալու, նայում եր ճանապարհին և հեռվում տեսնում սայլերի սկ շաբքը: Մեկը ծանր ձեռքը դրեց նրա ուսին, և նա հետ նայելով տեսավ լայնայերես հանգիստ Գորնիխին, հոգնածության թեթև արտահայտությունն աչքերին, ամուր սղմած շբթունքներով:

— Բերնում են,— կարճ հարցրեց Գորնիխը, ցույց տալով ճանապարհը...

— Բերնում են,— նույնպես պատասխանեց կարառուլովը: Յեզ յերկումն ել լուեցին: Յերկումն ել հիշեցին քսան ութ ընկերներին, վորոնք այժմ պառկած են դադարդներում, կարմիր դբոշակների տակ, Արտակարդ Հանձնաժողովի բակում և սպասում են հանգիստավոր թաղման:

— Խեղճ տղաներ,— ընդհատումներով ասաց կարառուլով: — Եղուր տեղը կորան, իսկ յես ու դու իրավացի եյինք: Զեր կարելի դումարտակը քաղաքից դուրս տաներ:

Գորնիխը քիչ լուեց... մտածեց և տսաց. այնպես եր խոսում, կարծես ամուր պատի վրա ծանր, ուղիղ քարել եր շարում.

— Վո՞չ, կարառուլով, մենք յերկուսս ել սխալվում եյինք: Տեսնում ես, այ, վառելափայտը բերում են: Դու միայն մտածիր, — ամելացըրեց նա իր համար հազվադեպ վոգեորությամբ, — այս փայտը մեզ հացահատիկ կտա: Զե վոր գյուղացիական ապստամբության համար հացահատիկը նույնն ե, ինչ վոր ջուրը հրդեհի համար ընկերներն իզուր չմեռան... Այս, յես հիմա ըննություն եմ կատարում, և տեսնում եմ, վոր ապստամբությունն անխուսափելի յեր... Յեզ Գորնիխն սկսեց կարճ պատմել քննության հետեւսնքների մասին:

Յերեկ առավոտ դրավեցին քաղաքը, յերեկ միայն փողոցներում թնդում եյին հրացանի ձայները. Իսկ այժմ բլրակից յերեացող բոլոր տնակներն այնպիսի հանգիստ ու խաղաղ տեսք ունեն: Բայց Գորնիխը գիտե, յերեկվա բոցը նրանք հանգցրել են, Գիտե,

վախենում ե նոր ժայթքումից և կանխում ե այն; Այս վախն ստիպեց իրան զսպել կլիմովի դիակի վրա իրեն ցնցող հեծեծանքը, հեծեծանք, վոր հետեանք եր համարյա մի շաբաթվա քնի բացակայության և սարսափելի ջղային լարվածության, և անմիջապես ձեռնարկել քննության գեկավարությունը, և թեև պաշտոնով նա կենդանի մնացած չեկիստներից ավագը չեր բայց Չեկայի ամբողջ աշխատանքի գեկավարությունը՝ ինչպես յեղավ իրեն մնաց նըրա ձեռքին:

Քաղաքից շատ բանդիտներ չեյին հեռացել, կոմմունիստական վաշտի գրավման ժամանակ մի կարմրահեր վիրավոր գերի յեր ընկել, և Գորնիխը նրան դեմ առ դեմ կանգնեցրեց ուրիշ բանդիտների հետ, հարևան զյուղերի զյուղացիների հետ, վոր քաղաքում բողնաքած եյին - և այժմ խոնարհ եյին, յերկշոտ ու զլիիկոր, կարծես լրջանալուց հետո—և հեշտությամբ պարզեց նրա՝ ապստամբության պարագաներից մեկը լինելը: Յեկ Գորնիխը, վոր նախորոք արդեն նշանակել եր նրան զնդակահարելու որն ու ժամը, այժմ նրան ներում եր խոստանում, սպառնում եր, խնդրում եր և չեր հոգնում հարցաքննության հազար ու մի ձեւը գործադրելուց: Իսկ կարմրահերին յերբեմն թվում եր, թե ինքն ընկել ե ուշաղիր, հանդիսաւատանայի ձեռք, կամ թե ավելի ճիշտ, մի անխիղճ մեքենայի ատամների տակ, ամերիկական այն ճարտարամիտ և ճիշտ մեքենաներից մեկի, վորոնք կենդանի ճղճան խողին տաս ըստեյում յերշիկի անխոս սար են դարձնում:

Յեթե Գորնիխն ինքը չեր հարցաքննում, ապա արջում եր քըննիչների առանձնասենյակները, առանց խառնվելու, հետեւմ եր քննության, կարդում ցուցմունքների արձանագրությունները, իսկ յերբեմն ել անցնում եր իր առանձնասենյակը, փակում եր և յերկար, մենակ, փոչոտ զլուխը ձեռքերին հենած, նստում, և թվում եր, թե առանց վորնե մտածմունքի նայում ե սեղանի վրա դրած թղթի թերթերին, յերբեմն զգույշ և ժլատ կերպով նշանակում եր մի բառը, մյուսը, ապստամբության ընթացքը նրա համար ավելի և ավելի յեր պարզվում: և այժմ նա հինգ խոսքով պատմում եր քընության բազմաժամյա և հոգեմաշ ամբողջ հետեանքը: Հանկարծ կարառությ ընդհատեց նրան:

— Այ, տեսնում ես, այնտեղ մի աղջիկ ե կանգնած...դա մի ուսուցչունի յե, ապստամբության պատճառով խիստ շատ տանջանքներ ե կրել և կարող ե վորևէ ցուցմունք տալ Ռոբեկոյի սպանության մասին: Յես նրան ասել եմ, վոր գա ժողովին. քեզ հանդիպելու: Այ, տեսնում ես, մուտքի մոտ կանգնած ե... Ընկեր Գրաշեկա յեկեք այստեղ:

Յեկ Գորնիխը նկատեց աղջկա գումատ գեմքը, բաց շականակագույն, ճակատին և այտերին ընկած յերկար ուղիղ փնջերը, կապույտ, վախեցած աչքերը և լսեց գողգողացող ձայնը:

— Ուզում եմ ցուցմունք տալ... ընկեր Ռոբեկոյի սպանության առթիվ...յես ականատես եմ յեղել յես նրա հետ մի բնակարանում եյի ապրում և ահա...—Նա սկսեց պատմել Ռեպինի գալու մասին, վորն այնքան գեղեցիկ, սիրալիք և նենգամիտ եր, պարոնայք սենատորների մասին, իր նրանց հետ ունեցած հարաբերությունների մասին, ապստամբության գիշերը քաղաքի մեջ իր կատարած թափառության մասին, յերբեմն տարվում եր անպետք մանրամասնություններով, և այն ժամանակ Գորնիխը փափուկ և վստահ կերպով հարցեր եր տալիս ու նրա պատմությունն ուղղում դեպի իրեն համար անհրաժեշտ կողմը: Սկզբում հուզմունքը խանգարում եր նրան խոսելու, նրա խոսակցությունն անկապ եր, իսկ հետո հետզհետե ավելի փողերվեց, հետզհետե նրա ձայնն ավելի համոզեցուցիչ դարձավ, և նա սկսեց նույնիսկ անվստահորեն շարժել ձեռքերը: Իսկ նա պատմում եր Ռոբեկոյի սպանության մասին: Նրա աչքերն արտասուքով լցվեցին:

— Լսիք, Գորնիխ,—ասաց կարառուվը, յերբ նա լիզայի մոտից հեռացավ,—նոր յես նայում եյի քեզ և զարմանում ելի: Ինչքան գործնական մարդ յես զու: Այ, որինակ ինչքան լավ և հանդիսաւ հարցաքննեցիր այդ որիորդին: Իսկ հետո...դու արգյուք դիտես վոր յեթե քո հիսուն յերկաթուղայինները չլինեյին, կայարանը վերցրած կինեյին և այն ժամանակ...վատ կիները: Այն ժամանակ յես խմ գումարտակով վոչ մի ոգնություն չեյի կարող ցույց տալ: Ապրամբության լիկվիդացիան մի ամիս կըաշեր, Այդ փաստ ե: Յեկ ինչքան ընկերներ ելի կղոհվեյին...

Ապա կարառուվ դողգոջուն ձայնով ասաց.

— Այ, հիմա զու ձիու նման աշխատում ես, ամեն աեղ հասնում ես, և Զեկայում, և, վառելափայտ պատրաստելուն ես հետեւմ, և նույնիսկ լրագրի համար հողված ես տվել... Իսկ յես... վոչ մի բան չեմ կարողանում: Հենց վոր որիորդից լսեցի, վոր Ռոբեկոյին սպանել են, ել աչքիս բան չերկաց, գաղան կտրեցի և ձեռովս բանդիտների գլուխներն ելի կտրում: Իսկ հետո յել իմացա, վոր Զիման ել, Ստալմախովն ել, Կլիմինն ել...Ավար ամբողջ քաղաքացիական կովի ընթացքում յես ու Կլիմինը միասին ենք յեղել... Յեկ այժմ ահա յես վոչինչ չեմ կարողանում անել: Քաղաքն ինձ համար ուղղակի դատարկվել ե: Հայրոյիր ծերուկիս, բայց հիշեր, վոր յես քեզանից յերեսուն տարով մեծ եմ...Յերեկ ել դարդից մի

լավ խմեցի: Գլխավորն այն է, վոր լուրջ ժամանակը արցունք չէ գալիս աչքերից: Իսկ այս, լակում են, կարծես մեկը հոգիդ բայց և անում, վոռնում են: Հետո խղճմանքդ քեզ տանշում եւ բայց են ժամանակ լավ եւ լինում: Սպասիր, դու եւ կփորձես և կհիշես ծերուկ կարառվովն... Այս:

Զանդը գուռաց, շարքերը հանդարավեցին, և ահա մըսարանի մեջտեղից, կապ ընկնելով և կարմրելով, քաղցրջկոմի քարտուղարն առաջարկեց նախագահ ընտրել... Ծանր, տարակուսանքի մի խուլ սպամուկ զլորվելով անցավ շարքերի վրայուի: Ում ընտրեցին, յերբ ամենից լավիրը, ամենից տոկունները ու կարողները պատկած են կարմիր դրոշակներով ծածկված դագաղների մեջ: Մեկը կլիմինի աղքանունը, մեկը անվատահ Սիմկովայի անունը ուվեց... բայց քարտուղարը այդ անունները չգրեց:

— Ընկեր կարանլովին,—հնչեց Սատուսենկոյի բարակ, քրոցը պատուն ձայնը, բայց կարառվովը հրաժարվեց... Նա նախագահություն անել չեր իմանում: Չե վոր այդ մասին ընկերները պիտեն: Բացի դրանից՝ նա հիվանդ է...

Յեվ ահա հանկարծ, մի տեղից, վերևից, գալյորկայից, մի ուժեղ ձայն աղաղակեց,

— Գորնիլը... ընկեր Գորնիլը...

Յեվ անմիջապես իրքեւ պատասխան, պաշտպանեցին նրան զանազան կողմերից:

— Ճիշտ ե... Գորնիլին, ընկեր Գորնիլին...

— Եղ վոր Գորնիլին ե. — հարցը մի քանիսը բարձրաձայն:

Յեվ նորից գալյորկայից նույն ուժեղ ձայնն աղաղակեց ամբողջ կրկեսովը մեկ.

— Գորնիլը... չեկիստը... վոր յեկավ մեզ մոտ դեպո, բոլորիս վորքի հանեց և մեզ զեկավարում եր: Քաջ տղա յե:

Կյանքում առաջին անգամ եր պատահում Գորնիլին արդպիսի մեծ ժողովի նախագահություն անել: Գորնիլը մի քիչ շփոթվեց, չեր իմանում ինչ անի, իսկ ժողովը վարժեցրած գիշատիչ գաղանի նման, հնազանդ փուլել եր նրա վոտքերի մոտ, հանգարավել և իր խաղմաչյա հայացքը սևեռել եր նրա վրա, իր տիրոջ վրա: Յեվ «Ժոժովը հայտարարում եմ բացված» ընդհանուր դարձվածքի ու որակարգը հայտարարելու փոխարեն, նրա լեզվից դուրս թուրնչացին այլ խոսքեր, ծանր և սուր, վորոնք մտնում եյին լսողների գիտակցության մեջ, ինչպես մեխը մուրճի ծանր հարվածների տակ մըտնում և փայտի մեջ, խոսքեր, վորոնք Գորնիլի զորեղ միտքն ու կամքը ձուլել ու դարբնել եյին այս ճակատագրական շարաթվաընթացքում:

Իսկ նա խոսում ե այն մասին, թե ինչքան մեծ եր յեղել անցկացրած ալստամբության վտանգը, այն մասին թե, կոմմունիսաները քայլում են բարակ սառուցի վրայով, վորի տակ ալեկոծվում ե կատաղի զյուղացիական տարրերքը, պատրաստ՝ խեղդելու և վոչնչացնելու կոմմունիստների աշխատանքը, այն մասին, թե այդ տարրերքը պետք ե հպատակեցնել վոչ միայն սվինով և գնդակով, այլ և մթերքի սոցիալիստական փոխանակություն կազմակերպելով քաղաքի և գյուղի միջև:

— Ընկեր, մեր գործն այժմ ավելի ծանր կլինի... Գործկոմում մացել են իննը, իսկ կուսկոմում՝ չորս աշխատավորներ: Քաղքածնի յերկու պետերն ել չկան, իսկ Զեկայի՝ նախագահը, փոխանորդը և յերեք աշխատակիցները: Կենտրոնը մեզ չի ոգնի, նրա վրա հոգյանելն ավելորդ ե: Իսկ աշխատանքն այժմ բարդացել ե: Հացհատիկ բերելը քիչ ե: Պետք ե սկսել պատրաստվել ցանքի պայքարի համար և անցկացնել այն մեր ճանապարհներից զուրկ ամբողջ շրջանի մեջ: Իսկ բանդիտները զեռևս վերջնականապես լիկվիդացիայի չեն յենթարկված: Բանից դուրս ե գալիս, վոր մենք ավելի ևս պիտի ծանրաբեռնենք մեզ: Վերցնենք թեկուզ, որինակի համար, ինձ, այ, յես այժմ նախագահում եմ: Այդ նրանից ե, վոր մեզ հետ չեն վնչ կլիմինը, վնչ Ռոբերտոն, վնչ Սիմկովան, վորոնք այս պարտականությունն ավելի լավ կկատարելուն: Այսպես կլինի ամեն ապանվածների աշխատանքը կընկնի մեր ուսերի վրա: Ծանր կլինի բայց յեթե մենք հիշենք նրանց որինակը, ապա մենք աշխատանքը գլուխ կտանենք...

Յեվ յերբ յերգվեց «Ինտերնացիոնալը» և ժողովն անցավ գործնական խնդիրներին, Գորնիլը կառավարեց այն հանգիստ, վստահաշալուրջ կերպով, ինչպես ծանր բարձած բեռնակիր նավի ղեկավար վոլորապտույտ ծանծաղ գետի վրա:

— Ի՞նչ միջավայր ե նկարագրված այս պատմվածքում:

— Նման ե արդյոք այս միջավայրը Զորյանի յեւ Անանյանի պատմվածքներում նկարագրված միջավայրին:

Վո՞րն ե հիմնական տարբերությունը:

— Կա՞ն արդյոք նմանություններ:

— Ի՞նչով են պայմանավորված դրանք:

ԸՊՑՈՆ ՍԻՆԿԼԵՐ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲՌՈՒԽՆՑՔԸ

1.

Ամբողջ որեր ու գիշերներ լողալուց հետո նրանք վերջապես հասան Սպիտակ Ծովի Արխանգելսկ նավահանդիսար:

Դաշնակիցներն այստեղ եյին գտնվում պատերազմի սկզբից և այստեղ կառուցում եյին նավաշինարաններ, պահեստներ ու յերկաթուղիներ, բայց նրանք միշտ ել չեյին կարողանում բավարար չափով շենքեր կառուցել:

Զիմմին մտածում եր, թե այս արշավանքը կազմակերպված եր գերմանացիների գեմ, բայց այժմ նա սկսեց կասկածել. ըստ յերևույթին այս զորքերը կռվելու յեն բայլեկիների գեմ: Սոցիալիստական հեղափոխությունն Արխանգելսկում տեղի յեր ունեցել և ամբողջ հակողությունը բանվորների ու զյուղացիների խորհրդին եր պատկանում, յերբ բրիտանական զորքերն ու նավաստիներն անըսպասելի գրոհ տվին և նավահանդիսարը զրավիցին, քշելով հանկարծակի յեկած հեղափոխականներին: Այժմ նրանք մի զորախումբ են ուղարկել յերկաթուղով, իսկ մի ուրիշ զորախումբ ել Հյուսիսային Դվինայով: — Նրանք հետապնդում են ուռու կոմունիստներին և նրանց յետ են քշում դեպի սառած ճահիճները:

Իսկ այժմ ժամանել են ամերիկական զորքեր, ստանում են ամեն անհրաժեշտ բան և պատրաստվում են միանալու նրան, ինչ վոր Զիմմին թվում եր պատերազմական զործողությունների սկիզբը ընդում կազմակերպված բանվորների:

Զիմմին զարմանքից ինքն իրեն կորցրել եր. այս ամենը նրա համար այսպես նոր ու տարորինակ եր... մինչդեռ նա վոչ վոքի հետ խորհրդակցել չեր կարող: Ամբողջ այս զորախումբի մեջ Զիմմին չեր ճանաչում վոչ մի մարդու, վոր գոնե վորեե գաղափար ունենար արմատական շարժման մասին: Բոլորն ել բայլեկիներին նայում եյին վորպես կատաղած շների, դավաճանների, վոճրագործների, մի խոսքով նրանց անվանում եյին բոլոր այն վատ անուններով, վոր կարող են մարդու մաքին գալ: Բայլեկիները նահանջեցին դաշնակիցների գործից, նրանք դաշնակցեցին Գերմանիայի հետ, վորպեսզի մատնեն դեմոկրատիան, և այդ պատճառով այժմ ամերիկացիները յեկել են այստեղ, վոր նրանց որինականության ու կարգապահության դաս տան:

Ամերիկացիներն իրենց վրա նայում եյին վորպես մի հակայական զորամասի ավանդաբղի վրա—զորամասի, վոր պետք ե անցներ Պետրոգրադից մինչև Մոսկվա և քարտեղի վրայից պիտի ջնջեր բայլեկիզմի զաղափարն անդամ: Իսկ Զիմմի Հիգինսը պետք ե ոգներ: Զիմմի Հիգինսը դիբքերում, բերանը փակ ու միլիտարիզմի շքակառքի յետեկց կապված, պիտի մասնակցի պատմության մեջ առաջին պրոլետարական կառավարության վոչնչացումին:

Վորքան շատ եր մտածում այս մասին Զիմմին, այնքան ավելի յեր կատաղում. նա անձնական վիրավորանք եր համարում այն ստոր կատակը, վոր իր նկատմամբ թույլ տվին: Նա կուլ տվեց նըրանց պրոպագանդը, նա ինքն իրեն լցըեց նրանց հայրենասիրությամբ, թողեց ամեն ինչ վոր գնա կովելու հանուն դեմոկրատիալի: Նա մասնակցեց կովի, վտանգի յենթարկեց իր կյանքը, վերքեր ու ամսնաքններ կրեց նրանց համար:

Իսկ այժմ նրանք խախտել են նրա հետ կապած պայմանագիրը. նրան բերել են այստեղ և հրամայում են կովել բանվորների գեմ:

2.

Բարձրահասակ սկամորում մի զյուղացի վառարանի համար փայտ եր զարսում. — Նրան ոգնում եր մի ուրիշը. գա մի փոքր մարդ եր, գեմքի սուր գծերով, թափանցող ու սկ աչքերով: Նրա այտերը ներս եյին ընկած և թվում եր, թե արդեն միքանի տարի յե, ինչ կանոնավոր չի մնիել, իսկ կուրծքը հազիվ շնչառառ եր լինում: Նա իր ձեռքն ու վոտքը վաթաթել եր լաթերի մեջ, վորովինակ վոչ կոշիկ ուներ, վոչ ել ձեռնոցներ: Այնուամենայնիվնաթվում եր կենսուրախ և փայտի խտիար գետին ձգելով, գլուխը թափահարեց և արապանեց.

— Ալն:

— Ալն, — պատասխանեց Զիմմին:

— Յես անդիերեն խոսում եմ, — ասաց նա:

Զիմմին չեր զարմանում, յերբ վորեե մեկը նրա հետ խոսում եր անդիերեն. նա շվարում եր, յերբ նրա հետ անդիերեն չեյին խոսում: Այդ պատճառով նա ժպտաց ու ասաց.

— Լավ, հետո:

— Յես յեղել յեմ Ամերիկայում, — շարունակեց նրա խոսակիցը. — յես աշխատել եմ Մեծ Փողոցում զտնվող յերկաթագործարանում:

Բայտ յերևույթին նա շատախոսելը փայտ կրելուց գերադասում եր, չեր հեռանում և շարունակում եր հարցեր տալ:

— Դուք աշխատել եք Ամերիկայում:

Գյուղացին սուսերեն լեզվով ինչ-վոր բան փնթփնթաց, ու նա կրկին աշխատանքի անցավ. բայց հենց վոր գյուղացին դուրս յեկավ, նա ասաց:

— Վորեւ անգամ Ամերիկայի մասին կըխոսենք ձեզ հետ:

Զիմմին, իհարկե, պատասխանեց բարեկամական համաձայնությամբ:

Յերկու-յերեք ժամ հետո՝ աշխատանքից տուն վերադառնալիս, նա տեսավ, վոր փոքրիկ մարդը նրան սպասում է մթության մեջ:

— Յերբեմն յես Ամերիկան կարոտում եմ.—ասաց նա ու Զիմմին հետ միասին փողոցով ցած իջավ, նիհար ձեռներն իրար գարելով, վորպեսզի տաքացնի:

— Դուք ինչու վերադարձաք այստեղ,—հարցրեց Զիմմին:

— Յես կարդացի հեղափոխության մասին: Յես մտածեցի, թե կարող եմ հարստանալ...

— Հըմ, —ասաց Զիմմին և ինդաց. ինչպես յեղավ, հարստացաք:

— Ամերիկայում դուք վորեւ միության պատկանում եք, —պատասխանեց նա հարցին հարցով:

— Կարող եք հավատացած լինել, վոր այս, —ասաց Զիմմին:

— Վոր միության:

— Մեխանիկների:

— Գուցե դուք մասնակցել եք գործադուլների:

— Մասնակցել եմ:

— Գուցե դրա համար ստացել եք ինչվոր հարկն եւ:

— Ինարկե:

— Դուք յերբեք շտրեյկըրեյխեր չեք յեղել հը:

— Ըստ յերեսույթին, վո՞չ:

— Դուք, ինչպես ասում են, դասակարգայնորեն գիտակցություն եք:

— Այս. յես սոցիալիստ եմ:

Փոքրիկ մարդը դեպի Զիմմին դարձավ ու նրա ձախը դողաց անսպասելի հուզմունքից:

— Դուք կարմիր տումս ունեք:

— Այս. —ասաց Զիմմին, —բաճկոնիս ներքին գրավանումն եւ:

— Բնկել, —բացականչեց խոսակիցը: —Բնկել, —նա Զիմմին մեկնեց իր ձեռքերը, վորոնք փաթաթած եյին ուսպոժե հին պարկի կտորներով: —Տավարիչ, —ասաց նա ուղւսերեն:

Յեվ այստեղ, սառնամանիքում, այս մթության մեջ կանգնած յերկուսն ել զգացին, թե իրենց սրտերը թնդում են ուրախությունից վոր իր չերմությամբ տաքացնում եր նրանց: Այստեղ, —սա-

ուուցյալ գոտում, այս վայրի ու սառուցյալ յերկրում, մինչև իսկ այստեղ հրաշքներ ե գործում միջազգային յեղայրության վոգին:

Իսկ հետո հուզմունքից դողացող փոքրիկ մարդը իր փաթաթած ձեռքերով բռնեց Զիմմինի կրծքից:

— Յեթե դուք հեղափոխական եք, ինչու յեք կովում ուսւահուների դեմ:

— Յես նրանց դեմ չեմ կովում:

— Դուք համազգեստ եք կրում:

— Յես միայն մոտոցիկլիստ եմ:

— Բայց դուք ոժանդակում եք: Դուք սպանում եք ուսւաներին: Դուք վոչնչացնում եք խորհուրդները: Ինչու

— Յես այդ մասին վոչինչ չգիտեյի, —սկսեց պաշտպանվել Զիմմին. —յես ցանկանում եմի կովել կայզերի դեմ, ինձ բերին այստեղ, առանց ինձ վորեւ բան ասելու:

— Այ, միլիտարիզմի ու կապիտալիզմի ժամանակ միշտ ել այդպես ել լինում: Մենք ստրուկներ ենք: Բայց մենք ազատ կլինենք: Յեվ դուք մեզ կողնեք, դուք չեք սպանի ոուս բանվորներին:

— Զեմ սպանի, —բացականչեց Զիմմին շտապ կերպով:

Յեվ փոքրիկ անծանոթը Զիմմին թևովն անցավ:

— Գնանք ինձ հետ, շնուտ: Յես ձեզ մի բան ցույց կտամ, ընկեր:

3.

Նրանք քայլեցին մութ փողոցներով, մինչև վոր հասան մի շարք բանվորական խրճիթների վորոնք շինված եյին գերաններից ու վորոնց ձեղքերը փակված եյին հարդախառն ցեխի շաղախով—սրանք բնակարաններ եյին, վոր ամերիկական վոչ մի ազարակատեր հարմար չեր գտնի իր անասունների համար:

— Այսպես են ապրում բանվորները, —ասաց անծանոթը և խրճիթներից մեկի դուռ բաղխեց:

Դուռը բացեց մի կին, վորի շրջազգեստից կախ եյին ընկել միքանի յերեխաններ: Տղամարդիկներս մտան աղոտ ու ծխացող լամպով լուսավորվող մի սենյակ: Անկյունում դրված եր մի հակայական վառարան, վորի վրա մի կաթսայի մեջ կաղամք եր յեփվում: Անծանոթը կնոջը վոչինչ չասաց, բայց Զիմմին ցույց վառարանի մոտ գտնվող աթոռը և իր սկ թափանցող աչքերի հայցը հառեց նրա զեմքին:

— Դուք ինձ ցույց կտաք ձեր կարմիր տոմսակը, —անսպասելի կերպով ասաց նա: Զիմմին իր վրայից հանեց վոչիարի քուրքը,

արձակեց քուրքի տակից հագած բաճկոնի կոճակները և բաճկոնի տակի գրպանից հանեց թանգագին տոմսակը, վորի վրա կնիքներ եյին դրված անդամավճարը տալու մասին։ Անծանոթն սկսեց տոմսակն ուսումնասիրել և հետո գլուխը թափահարեց։

— Լավ։ Յես ձեզ վստահում եմ։ — Յեվ գրքույկը յետ վերադարձնելով, նկատեց։

— Իմ անունն է Կալինկին։ Յես բայլշկիկ եմ։

Զիմմիի սիրաը վեր-վեր ցատկեց՝ թեև մինչև այդ ել, նա արդեն սկսում եր գլխի ընկնել։

Մեղ այստեղից քշում են, — ասաց նա, բայց յես թիկունքում մընացի պրոպագանդ մղելու համար։ Յես ընկերներ եմ վնասում ամերիկացիների և անգլիացիների մեջ։ Յես ասում եմ. մի կովեռքանվորների դեմ, այլ կովեռք ձեր տերերի ու կալիտալիստների դեմ։ Դուք հասկանում եք։

— Իհարկե, — ասաց Զիմմին։

— Յեթե տերերն ինձ գտնեն՝ նրանք ինձ կսպանեն։ Բայց ձեզ վստահ եմ։

— Յես չեմ պատմի, — արագությամբ ասաց Զիմմին։

— Դուք ինձ կողնեք, — շարունակեց անձանոթը։ — Դուք կդնաք ամերիկական զինվորների մոտ և կասեք. այսքան տարիներ ուռաժ ժողովուրդն ստրուկ է յեղել, այժմ նա պատություն է ստացեք իսկ դուք յեկել եք ուռաներին կոտորելու և նրանց կրկին ստրկաց նելու։ Ինչու համար։

— Այդ ամենը յես շատ լավ հասկանում եմ, ասաց Զիմմին։ — Այլև ինչ կարող ենք անել։

— Պրոպագանդ մղել, — բացականչեց Կալինկինը. Ուր ել մենք հանդիպում ենք բանվորներին, բացականչում ենք — յելեք ու քանդեք ձեր շղթաները։ Դուք կարծում եք, նրանք ձեզ չես լի՛. Կապիտալիստները զիտեն, վոր նրանք կլսեն մեզ, նրանք դողում են, ահա թե ինչու յեն բանակներ ուղարկում, վոր մեզ ջարգեն։ Նրանք մտածում են, թե բանակները հավիտյան կենթարկվեն նրանց. այսպես չե։

— Նրանք մտածում են, թե ուսու ժողովուրդը կապստամբվի ձեր դեմ։

Այս խոսքի վրա փոքրիկ մարդը ծիծաղեց խելահեղ և ուրախ ծիծաղով։

— Մենք մեր սեփական կառավարությունն ենք ստացել։ Առաջին անդամ ամբողջ աշխարհում կառավարիչ են իրենք՝ բանվորները. Իսկ ձերնք մտածում են, թե մենք մեր դեմ կապստամ-

բենք։ Զերոնք այստեղ, Արխանգելսկում ստեղծում են կառավարություն, վոր ուստական են անվանում։ Նրանք իրենց հիմարացնում են, բայց ուսու ժողովրդին չեն հիմարացնի։

4

Փոքրիկ մարդը յերկար խոսեց և բոլորովին ուժից ընկառվ, նրա հազը բռնեց, նա իր ձեռքը կրծքին սեղմեց և լամպի լույսի ներքո նրա դեմքը բռնկեց կարմիր ցայգալույսով։ Կինը նրան խմելու ջուր տվեց, կանգ առավ մոտը և ձեռքը դրեց նրա ուսին. կնոջ լայն ու հոգսից կնճռոտված գեղջկական դեմքը կծկվում եր տղամարդի։ յերեսն այլանդակող ամեն մի ցնցումից։ Զիմմին ևս ամբողջովին ջղաձգվում եր, քանի դեռ նստել ու նայում եր նրանց, և իր հոգու խորքում նա դեմ առ դեմ յեղափ իր հզոր բաղդին։ Այժմ նա պարզեց զրությունը. նա պարզեց իր պարտականությունը։ Այդ պարտականությունը միանգամայն պարզ, միանգամայն հասարակ եր. նրա ամբողջ կյանքը մի նախապատրաստություն եր յեղել այդ պարտքը կատարելու համար։

Մի ըրպե անց նա տապ։

— Պատմեցեք ինձ, ինչ պիտի անել, ընկեր։ Կալինկինը հարցըց։

— Դուք Ամերիկայում պրոպագանդ մղել եք։

— Իհարկե, — ասաց Զիմմին։ — Յես մեկ անդամ բանտ եմ նըստել վողոցում ճառ արտասանելու համար։

Այս ժամանակ նրա խոսակիցը գնաց սենյակի անկյունը միքանի գլուխ կաղամբների տակը քրքրեց ու բերեց մի ծրար։ Նրա մեջ կային թերթիկներ, հավանորեն մոտ յերկու հարյուր հատ, ծըրարը Զիմմիին մեկնեց հետեւյալ բացատըությամբ։

— Ինձ հարցնում են, թե ինչպես անենք, վոր ամերիկացիները մեզ հասկանան։ Յես ասում եմ. նրանք պետք է խմանան, թե մենք ինչպես ենք պրոպագանդ մղում։ Յես ասում եմ՝ տպագրեք այն թոռոցիկները, վոր մենք բաժանում ելինք գերմանական զորքին, թարգմանեցեք այն անգլիկներն, և այն ժամանակ անգլիացիներն ու ամերիկացիները կկարողան կարդալ։ Ինչ եք կարծում՝ այս բանը մեզ կողնի թե չե։

Զիմմին վերցրեց թոռոցիկը, լամպը մոտ քաշեց ու կարդաց։ Զիմմին իր հայացքը թոռոցիկի վրայից վեր բարձրացրեց։

— Այդ մասին ինչ եք մտածում, հարցըց Կալինկինը։

— Հրաշակի յե, — բացականչեց Զիմմին։ Հենց այս ել պետք եւ վոք սրա դեմ վոչինչ առարկել չի կարող։ Սա փաստ եւ։ Սա հենց այն ե, ինչ վոր բայլշկիկներն են ասում։

Կալինկինը մռայլորեն ժպտաց:
— Ըսկեր, յեթե ձեզ մոտ այդպիսի թերթիկ գտնեն, ձեզ
կդնդահարեն՝ վորպես մի շուն: Մեղ բոլորիս կդնդակահարեն:
— Բայց ինչու:
— Վորովինետե այդ բայլշիկյան թոռուցիկ եւ:
— Դուք վստահացեք ինձ, ընկեր: Յես կբաժանեմ, և նրանք
իրենց արդյունքները կունենան, գրազ եմ գալիս:
— Դուք իմ մասին չպատմեք—բացականչեց կալինկինը:
— Զեմ պատմի, յեթե մինչև իսկ ինձ կենդանի-կենդանի
խաշեն:

5

Լեյտենանտը նստել եր սեղանի մոտ, դիք ու ձիգ, մանրակրկիտ,
ունքերը սպանալից կերպով և խիստ նայելով ակնոցների միջև:
Հիգինս, վորոտաց նա, վորտեղից ճարեցիք այդ թոռուցիկները:
— Արխի մեջ գտա:
— Սուտ եք ասում,—ասաց լեյտենանտը.—քանի հատ գտաք:
— Յերեք,—ասաց ու ավելացրեց,—կարծեմ այդքան:
— Ստում եք,—նորից վորոտաց լեյտենանտը:—Ում եր բա-
ժանել...
— Յես... յես չեմ կամենում այդ ասել—ասաց Զիմմին:
— Յես հրամայում եմ ասել,—ասաց լեյտենանտը:
— Յավում եմ, պարոն, բայց չեմ կարող...
— Դուք խուզարկել եք որան,—հարցրեց լեյտենանտը զին-
վորներին: Զինվորները լավ տնտղեցին ամեն ինչ, մինչև անդամ
կոշի տակերը ճեղքեցին և, իհարկե, առաջին գտած իրը Զիմմիի
տակի գրաններից, դա մի կարմիր քարտ եր:
— Ահա,—բացականչեց լեյտենանտը:
— Դա Սոցիալիստական կուսակցության կարտն ե, —ասաց
Զիմմին:

— Միթե ձեզ հայտնի չե, վոր Ամերիկա վերադարձող զին-
վորներից, վորի մոտ գտնվի այդպիսի մի քարտ, քսան տարվա
բանտ ե սպառնում:

Տիրեց լուռթյուն...

— Դե, Հիգինս՝—ասաց լեյտենանտը,—դուք աշկարա բոնվել
եք. հաստատվել ե, վոր դուք հայրենիքին և դրոշակին դավաճանել եք...

Նա արկղից հանեց յերկու ձեռնակապեր և կարգադրեց, վոր
անցկացնեն Զիմմիի ձեռքերը: Փողոցում նրան սպասում եր ավտո-
մոբիլը. սպան ձերբակալվածի և յերկու պահակի հետ գնաց զինվո-
րական բանտը:

Սերժանտ Պերկինսը թաթը բամբեց Զիմմիի ուսին, շուռ տվեց
նրա յերեսը իր յերեսին և նայեց աչքերի մեջ.

— Ե, շան վորդի, իմանում ես, ինչ եմ ասում: Յես քննեցի
գործը և իմացա բայլշիկներից շատերին, վորոնց հետ դու կապ
ես հաստատել: Բայց յես ուզում եմ նրանց բոլորին իմանալ, և կի-
մանամ. հասկանում ես:

Զնայած բոլոր յերկյուղին, վորին յենթարկվեց Զիմմին,—նրա
սիրուղ զարկեց ուրախաւթյունից: Պերկինսը ստում ե: Նա վոչինչ
ել չի իմացել:

— Ե, հիմի դու ամեն բան կպատմես,—շարունակեց նա,—յես
քո մսերդ մաս-մաս կպոկեմ... ամեն ինչ կանեմ, վոր դու ինձ
ասես... հասկանում ես: Դե ասա, ովքեր են...

— Վոչ վոք ել չկա. նրանք...

— Այգպես. համ. լավ, կտենենք: Յեկ սերժանտը Զիմմիի քա-
մակը շուռ տվեց իրան:

— Բոնեցեք սրան,—ասաց նա յերկու զինվորի...

Սերժանտը բոնեց Զիմմիի իրար կապած ձեռքերը և սկսեց
նրա մեջքի վրայով յետ վոլորել: Դա ամենասոսկալի ցագն եր, վո-
րից Զիմմին կուշ ու ձիգ յեղավ ջղացնցումների մեջ: Նա հեկեկում
եր, տնքում:

Բայց ներքնատան պատերն այնպես եյին շինուած, վոր տան-
տերերն, այնտեղից հեռու լինելով,—չեյին կարող անհանգստանալ,
իմանալ թե ինչեր են անում ներքեռում նրանց շահերը պաշտպա-
նելու համար:

— Անուններն ասա,—ասաց սերժանտը:

Նա վոլորեց Զիմմիի զույգ ձեռները մինչև ծոծրակը, շարու-
նակելով ձգել ու ձգել... անտանելի մի ցավ...

— Սրանից բան չի դուրս գա: Ստիպված ենք սրան միքիչ
վերև քաշել

Յեկ Պերկինսը գրանից հանեց մի ամուր պարան, մի ծայրը
անցկացրեց դույգ բթամատերին, իսկ մյուս ծայրը կապեց պատի
յերկաթե ողակներին: Դա ցարական ազենաներից մեկի շինածն եր,
վորպեսզի ոգտագործվեր «գեմոլիքատիալ» շահերի համար... Յեր-
կու ուրիշ զինվորներ սկսեցին Զիմմիին վեր քաշել, մինչև վոր նրա
վուները բարձրացան հատակից, ապա պարանները կապեցին այն-
պես, վոր Զիմմին իր ամբողջ ծանրությամբ, ձեռնակապերով մեջ-
քին կապած, յերկու բթամատերից կախվեց ողի մեջ:

Այժմ նա այլևս նեղություն չեր տալիս յերեք բանտային պաշ-
տոնյաներին, միայն իր կաս-կարմիր յերեսով, վոր այլանդակվեց

ջղաձգումներից և այբունոտված, կծած լեզվով անտանելի տեսարան ստեղծեց: Սակայն, ըոպեներ եյին անցնում, և Պերկինսի զայրույթն ավելի աճում եր... Նա խոստացել եր, վոր տեղեկությունները դուքս կկորզի, և դրա համար ել նրա հոչակը վտանգի մեջ եր...

— Պիտի խոսես թե չե: Ստիպված ենք ջրաբուժություն վորձել: Կոնսոր, բերեք յերկու կուժ ջուր և մի լավ մեծ ձագար: Լսիր, շան վորդի... Մենք ջուր կածենք վրադ: Քեզ յերկու ժամ կը թիւնք, հետո ելի ջուր կածենք և այսպես դիշերցերեկ կշարունակենք, մինչև վոր կխոստովանես...

Զիմմին յերեսը պատին սեղմեց... Զիմմին սկսեց մի կռիվ— ամենասպառնալի կռիվ, վորի մեջ յերկու մարդ կար. խղճի կռիվը մարմնի թուլության դեմ: Ասել թե չասել:

«Դու—հեղափոխական ես: Դու—սոցիալական արդարություն ես, վոր հանուն կյանքի կռիվ ես մղում այս աշխարհում, Դու մարդկություն ես, վոր գեմքը դարձել ե գեղի լույսը,—լարելով բոլոր ուժերը, վոր համար նոր սահմանների, յետել թողնի հին սարսափը,» Դու պետք ե համբերես: Դու պետք ե քաշես այս տաճանքը: Դու պետք ե դիմանաս այս ամենին ընդմիշտ, այնքան յերկար ժամանակ, վորքան պետք լինի»:

Պերկինսը տանջվում եր կատաղությունից, վորի մեջ քիչ չեր և յերկուղը: Սա ի՞նչ սատանայական գաղափար ե, վորը կարող է փոքրիկ, քննուու բանվորին բոլոր իշխանություններից ամենազուրեղը դարձնել: Ենք ի՞նչ գաղափար ե դա, վոր պետք ե խանգարես, վոր չտարածվի և թույլ չտաս, վոր վոչնչացնի այս կոկիկ ու գեղեցիկ սարքած աշխարհը, ուր Պերկինսը հույս ունի շուտով ստանալու հետեւյալ դինվորական տատիճանը...»

— Ովքե՞ր եյին ուղարկել Զիմմի Հիգգինսին Արխանգելսկ յեվ ի՞նչ նպատակով:

— Հայտնե՞լ եյին նրանք արդյոք Հիգգինսին իրենց իսկական նպատակները:

— Ի՞նչ միջոցներով եյին կապիտալիստներն ուղարկում իրենց զորքերը խորհրդային իշխանության դեմ:

— Ի՞նչո՞ւ Զիմմի Հիգգինսը ըդափանանց Կալինկինին յեվ մյուս բայլշեվիկներին:

— Ի՞նչն եր պատճառը, վոր Պերկինսը չեր հասկանում. թե ինչո՞ւ յեն ձգտում բանվորները խորտակել «կոկ յեվ սարքած» աշխարհը:

— Ի՞նորոշեցեր Հիգգինսին յեվ Պերկինսին, վորպես վորոշ դասակարգերի ներկայացուցիչների:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Տեսել ես ընկեր, ալեկոծումը ահեղ ովկիանի ուր յերկու ալիք շարժուն սարի պես իրար են վազում, իրար են վազում փրփուրը բերնին հովազի նման, ու հոխորտալով զարնվում, փշրվում ավազի նման... Իսկ յերբ անցնում ե վրեժի բոպեն—հուզումը վալրի, տեսել ես՝ ինչպես հանգստանում ե հսկան ջրերի, մեղմանում ե նա... մանուկի նման ժպտում ե ալիք, ալիքի միջից մի յերգ աննման, ծփալով մեղմիկ— շոյում լսելիք...

Լսել ես, ընկեր, ըմբոստ յերկնքում կոչը վորոտի, վոր գղրդում ե վորպես մի պայթյուն մեծ թնդանոթի. տեսել ես՝ ինչպես ամպերի կրծքին կայծակը դիգ-զագ իր լիզն ե միում փութելոտ, շեշտակի ու ցնցում աշխարք. կամ ինչպես թափով ծառս-ծառս ե լինում ցասկոտ փոթորիկ, հսկա ծառերին չոքե-չոք անում—զարձնում խաղալիք, մինչ վոր տեղում ե հեղեղը վայրագ և ինչպես փրկանք՝ ծանր յերկունքից ազատում աշխարք. բնությունը հաղթ ժպտում ե ապա պայծառ արեգին— վորպես պատասխան չար արհավիրքին...

Լսել ես, ընկեր, ծննդականի ճիշը հուսահատ, վոր գալարվելով, արգանդի ցագից պոռա անընդհատ... Վիրավոր ընկած այն եգ առյուծն ե այնպես մոնչում, յերկունքի ժամին մեծ ազատության ողնության կանչում. կլանքի յեվ մահու պայքարը մղող այն մարդն ե տաճանքող... Իսկ յերբ համառում ե հուսու բախտավոր ժամը փրկավիտ, տեսել ես՝ ինչպես ալդ խորհրդավոր վեհ պայթյումից յետ մի վսեմ, խաղաղ մայրական ժպիտ, վորպես վառ հակինթ վայլում ե նրա արնոտ շուրջերում— դեմքը զարդարում:

Այդպես եր ահա և այն վեհ ժամին հեղափոխության, յերբ վոր բաղխվեցին իրար հակառակ յերկու ախոյտան. ալիքի նման խուլ մոնչացին յերկու հզոր ուժ, աշխարհը ցնցվեց... ու յեղան կործան կարգերը վատուժ. վայրագ հեղեղին, շանթ ու փոթորկին հետեւյալ թափով հեղեղ ցնծության, յերկունքի միջից մանուկը ծնվեց Մեծ Ազատության. ընկեր իմ, ընկեր, ահա մանուկը Հեղափոխության. փորձության ժամին յերդվիր կրծքովդ պաշտպանել նրան,

ՅԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑ

ԱՄԲՈԽՆԵՐԸ ԽԵԼԱԳԱՐՎԱԾ

Համկածներ

Հեռու, մոտիկ ընկերներին, — աշխարհներին, արևներին, — հրանժան հոգիներին:

Բոլոր նրանց, ում վոր հոգին վասվում եղառ, —
բոլոր նրանց հոգիներին արևավառ: —
Կյանքի, մահի այս ամենի աղջամուղջում
վողջակիզվող հոգիներին վողջույն, վողջույն...

Իրիկուն եր, հրակարմիր մի իրիկուն:
Արել բորբ մալր եր մտնում արևմուտքում:
Դաշտի վրա փուլել եր մուժ արյունամած
Թուլն եր կարծես՝ բորբ արելի սրտից քամած:

Արել թեժ մալր եր մտնում արևմուտքում,
ու արյուն եր դաշտի վրա, թույն եր թքում:
Հորիզոնում վառել եր մի կարմիր քուրա—
ու արնավառ վայլ եր փոռում դաշտի վրա:
Ու արտերը ալեծածան վառվել հին
արեգակի կարմիր փայլով իրիկնային:
Դաշտը անծայր ու անսահման, լայնատարած,
հրակարմիր տարածվել եր նրանց առաջ:
Ծով եր կարծես, վոր սկիզբ ու սահման չունի —
ծով եր կարծես մշուշի մեջ իրիկունի...

Արեկ տակ իրիկնային, իրիկնային հրով վասված,
ալդ հին դաշտում կովում եյին ամբոխները խելագարված:
Քաղաքներից ու գլուղերից, ստեղներից հեռու ու մոտ՝
յեկել եյին նրանք նորից՝ հուսավառված ու կրակու:
Ով քաղաքից եր հեռացել — նա թողել եր մշուշը ծեր, —
մշուշը, վոր կյանքի վրա միաշաղախ ամայ եր դարձել:
Ով յեկել եր գյուղից հեռու — նա թողել եր հողը խոնավ,
վորի վրա կյանքը հուռ վնչ մի վոսկի հասկ չծնավ:
Ով յեկել եր ստեպներից, նա թողել եր անծայրածիր
լայնությունը հորիզոնի, վոր իր համար բանտ եր դարձել:
Ով քաղաքից եր հեռավոր, ուր մասախուր եր անորոշ —
նա բերել եր թռքախտավոր սիրտը, վորպես կարմիր գրոշ: —
Ով յեկել եր թողած հեռուն անծայրածիր մութը գյուղի՝
բերել եր իր մկաններում բեղմնավորված ուժը հողի:
Ով յեկել եր ստեպներից, ուր ապրում եր վորպես գերի —
բերել եր իր լուրի աչքերում լայնությունը ստեպների...
Էմբոստացած, խելագարված, չտանելով հին կյանքը ել՝
անծիր դաշտում ալդ հավաքված նրանք կովի եյին յեկել:

Մայր եր մտնում իրիկնային արել թեժ, լուսով վասված,
ու յերգելով կովում եյին ամբոխները խելագարված:
Դաշտն եր դեմք՝ փոված եր նա շառագունված ու արեւուն,
ու հեռլվում, ճամպի վրա, հսկա քաղաքն եր յերեւում:
Ծուլ նազանքով, իրիկնային արելի տակ անփութ փոված՝
պսպղում եր քաղաքը հին՝ հազարերանդ մի զանգըված:
Հեռու, հեռու, անծայր ու լայն տարածվել եր քաղաքը հին,
լողանում եր կարծես մարմանդ մշուշի մեջ իրիկնային:
Հաղթ շենքերը բարձր ցցված, կարծես կախված կարմիր ողում,
հետզհետե մթնում եյին, անգունանում ու աղոտում:
Հետո հրով միայն վառված պատուհանները ապակի
փայլում եյին արյունամած վերջին հրին արեգակի:
Արեկ դեմ փայլում եյին հրաբոսոր՝
բռնկվել եր նրանց սրտում տագնապը սուր:
Ու յերկնահուպ գմբեթների վոսկի խաչերը հրազուն
հետզհետե մարում եյին իրիկնային լուրթ յերկնքում,
և յերկնքի միրտը միված բնեռների պես արնաքամ՝
փայլում եյին արյունամած ծինելուկներն հսկայական:
Ծուխ չեր յելնում նրանց փողից, չեյին փնչում յերկնքն ի վեր՝
չեր կարծրանում նրանց ծուխից իրիկնային յերկնքը ել...
Լոկ մշուշը իրիկնային թանձրանում եր հետզհետե,
ու մշուշում կորչում ելին ծինելույները յերկաթե:

Իսկ քաղաքից դեպի հարավ՝ գուղձերի մոտ քանդած հողէ
յերեւում եր հսկայական կալարանը յերկաթուղու,
խվում եր մերթ շոգեկառքի սուլոցը սուր հեռու մուժում,
սորթում ելին կարծես այնտեղ խելագարված մի անասուն...
Ճշում եր սուր, հուսակառուր, ու հուսահատ ձայնը նրա,
վորպես անդարձ մահի մի լուր՝ տարածվում եր դաշտի վրա:

Ցնցված եր նա, կայարանը, հսկա ու հաղթ՝ նրանց առաջ՝
Ու հանգույցից կայարանի, դաշտովը մեկ լայնատարած՝
դեպի հյուսիս, դեպի հարավ, ու արևմուտք, ու արևելք
ուղիները յերկաթազիծ ձգվել եյին ամենուրեք:
Յերակների պես յերկաթե՝ քաղաքամոտ կայարանից
հեռու հեռու ձգվել ելին ուղիները յերկաթազիծ:
Յերակների պես յերկաթե ամուր գրկած կուրծքը հողի՝
մեղմվելով հետզհետե փախչում ելին զաղտագողի:
Ու ցցված եր ուղիների խաչակնքման սեղմ հանգույցում
կայարանը, վորպես մի հարց, վորպես հսկա մի քարացում:
Ուղիների ճամպամիջում հանգույց եր նա կարծես կապված,
ու անզիջում կովում եյին ամբոխները խելագարված:
Փշում եր մեղմ, մարմանդ մի զով՝ բարակ սուրում եր հարավեն,
գնում ելին կովնի, յերգնի, վոր կայարանը գրավեն:

Կովկեմ ելին: Սուրում եր մի իրիկնային մարմանդ քամի:
Դիմը քաղաքն եր տարածվել՝ հազարամյա մի թշնամի:
Մֆինքսի պես հսկակական, շեկ ծծերը դրած հողին;
Նա կտրել եր արևակամ ամբոխների կարմիր ուղին:
Ու կայարանը հաղթանդամ իրիկնային կարմիր ճռժում
հաղթ նստել են նրա առաջ, վորակես նրան հսկող մի շուն:
Հաղթ նստել եր նրա առաջ ու տիրուհու կամքին գերի՝
յերթն եր հսկում գետնատարած յերկաթափիծ ուղիների:
Ու գծերի մոտ յերկաթե, գեպի հյուսիս, դեպի առաջ
ձգվել ելին ալիքածկ իրամատներ գետնատարած:
Թշնամին եր պահվել նրանց ալիքածկ գետնափորում
ու մատներով արյունամած դեմը փոված դաշտն եր փորում:—
Մտել եր ջերմ կուրծքը հողի, հողի սրտում դարան մտած՝
կրակում եր գաղտազողի նենդ ձեռքերով արյունոտած:

...Մայր եր մտնում իրիկնային արել՝ թեժ, լուսով վառված:
Ու անվհատ կովում ելին ամբոխները խելագարված:
Աչքերի մեջ՝ կարմիր մի հուր, ու սրտերում—կարմիր կրակ՝
վերջին թափով մի ամրակուռ՝ անդայթ կովում ելին նրանք:
Խենթ յերգելով, կրակելով նրանք անցնում ելին առաջ—
ու թշնամին փախուստ տվեց՝ ահարեկված ու վարած:
Մութն եր արգեն, մայր եր մտել արեգակի շողը վերջին,
յերբ գրոհով մի անվեհեր կայարանը գրավեցին...

...Գիշերի դեմ գիշեր ե մութ խավարամած նրանց հոգին,
վոր կարոտով մի կրակոտ սպասում ե առավոտին:
Մավար ե մեծ սիրուց նոցա, բայց խավարում անծայրածիր
յերկինքներ կան կատուտաչյա, հորիզոններ՝ անծայր, անծիր
ու աչքերում նրանց կապույտ, ուր իջել ե գիշերը մութ,
հազար բողբոջ կա կրակոտ ու արշալույս, ու առավոտ:
Նրանց ձգված մկաններում ուժն ե նստել խոնավ հողի,
յեթե ուղեն՝ արեգակներ լշարտեն յերկինքն իվեր.
յեթե ուղեն՝ վար կբերեն յերկինքներից արեգակներ...
Յեթե ուղեն՝ կամքով արի ու աշխարհի հրով վառված—
ինչեր միայն չեն կատարի ամբոխները խելագարված...

...Լուսաբացին, յերբ կարմրածուի հորիզոնում հրաշուշան
կարմիր վառվեց արելը բորբ, վորակես կույի աղդանշան,
յերբ բանկվեց արեկելքում արելը նոր լուսով վառված,
դուրս նետվեցին կայարանից ամբոխները խելագարված...
Դեմը դաշտն եր անծայրածիր, ուր մշուշ եր արեգույն,
ու մշուշում շոգիացող, առավտի մարմանդ միգում,
կրկեսի պես մի վիթխարի, խայտաբղետ, խայտանկար
յեղերքի մոտ ճանապարհի յերկում եր քաղաքը քար...

Աչքերն հառած հեռու-հեռուն կարմիր վառվող արեգակին
արեալառ հեռուներում նրանք կովում ելին կրկին.
հոծ խմբերով հազարանուն, արգակի հրով վառված՝
դեպի Արևն ելին գնում ամբոխները խելագարված...

— Ավելի ելին հեղինակի նկարագրած օխելագարված ամբոխները և
ում դեմ ելին նրանք պայքարում:

— Հոկտեմբերյան հեղափոխության վիր շրջանն ե նկարագրված
այսուեղ:

ՏԵ. ԶԱՐԵՒՑ

ՔԱՂԱՂ ԻՄ, ՔԱՂԱՔ...

(Բալլար)

Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ—Բագու,—
վորքան հեքիաթներ կան այս գորշ քաղաքում...

Յես ունեմ ընկեր մի, ընկեր մի մոտիկ,
նա մեջքին կապում ե մի բարակ գոտի,
նա գլխին դնում ե հասարակ կեպի—
խեկան նա հերոս ե չգրված վեպի,
հասարակ բանվոր ե նա Բալախանում—
վորում ե նա հողը ու նավթ ե հանում:

Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ—Բագու,—
վորքան հեքիաթներ կան այս գորշ քաղաքում...

Այս վախտ բանվորը, այս վախտ տղան
այն տարին յեղել ե համարյա խոխա.—
Այդ այն մութ տարին եր, յերբ ծովի բացից
գրավեց քաղաքը մեր՝ անդիմացին:

Յերբ յեկավ, նստեց նա, ու հպեց պատին
մեր ըմբոստ քաղաքն ու պրոլետարիատին:
Տոմսոնի կողին ե քաղաքում տիրում.—
թշնամին դաժան եր, բարեկամն—հեռու...

Բայց յերբ ե բանվորը լոել աշխարհում.—
նա խուլ պալքարում եր, անդուլ պայքարում:—

Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ—Բագու,—
վորքան հեքիաթներ կան այս գորշ քաղաքում...

Այդ մութ որերին եր, յերբ մի որ բերին
լցրեցին բանտերը մեր ընկերներին:
Յեզ վաղ առավոտը, հանկարծ, դեմ ու դեմ—
մեր վախտ խոխին այն կանչեց կոմիտեն:

Գաղանի կոմիտեն մեր կանչեց ու ասաց.
«Դուքաջ կոմսոմոլ ես՝ հասակդ հասած—
քո հայրը բանվոր ե, ինքու—պրոլետար.
տեսնում ես թղթերը.—վերցրու ու արաւ:
Մերոնք գործադնւլ են պատրաստում արդեն.
այս խոզ գնդապետը էելել ե մեր դեմ—
ուզում ե վողին նա դարձնի գերի.—
կտանես այս թղթերը նրանց զորքերին,
կմտնես վողոցները խոխիլ ու բանուկ—
իրեն թե աֆիշ ես հանդիսա բաժանում:
Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ—Բագու,—
վորքան հեքիաթներ կան այս գորշ քաղաքում...
Հրճվանքից դողաց մեր քաջ խոխի հողին,
կարծես թե նա տերը դարձավ քաղաքի.
աչքերում ցոլաց մի խնդություն անհուն.—
տեսեք՝ ինչ գործեր են նրան վստահում...
Ճերմակ թերթիկները գրանը խոթեց:—
իսկի չվախի թող գաղտնի կոմիտեն:
Ու վազեց, վազեց նա սրտի դողոցով.
դիմացից՝ մի վաշտ եր անցնում փողոցով.—
զսպելով սըտում իր մի կրծող, մութ բան—
մոտեցավ նրանց նա ու ասաց. «Գուզբայ...
Ասաց, ծիծաղեց նա կամաց, ինքնիրեն—
ու հանեց թերթիկները, սկսեց ցրել—
Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ—Բագու,—
վորքան հեքիաթներ կան այս գորշ քաղաքում...
Այս ինչ քաջ տղա յե, այս ինչ լավ ցըիչ...
Բոլոր զինվորները մեկ-մեկ վերցրին,
սակայն հայհոյանքը կոկորդում զսպած՝
մեր խոխի գլուխն արնոտեց սպան:
.Հարվածեց, զլուխը արնոտեց խոխի—
կարմիր կաթիկները թափվեցին հողին...
Բայց լերկորդ հարվածը լերբ ողում շողաց—
արդեն չքացել եր, փախել եր խոխան...
Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ—Բագու,—
վորքան հեքիաթներ կան այս գորշ քաղաքում...
Հեխեկ հասավ մեր կոմիտեն խոխան.
արնոտած լերեսը հրճվանքից շողաց.
կապեցին գլուխը, դրին անկողին,
ուզարկող ընկերը համբուրեց խոխին...
Հետո գործադնւլ մեծ յեղավ քաղաքում—
յելան բանվորները—ու հաղթեց Բագուն,

Ամբողջ պրոլետարը կանգնեց գեմ և դեմ—
խոզուկ Տոմսոնին այն հաղթեց կոմիտեն...
Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ—Բագու,—
վորքան յեքիաթներ կան այս գորշ քաղաքում...
Հաղթեց գործադուլը ինգլիզ գորքերին,
Բագուկի պրոլետարիատը չդարձավ գերի.—
սարսեց գնդապետը մեր ուժից անթիվ—
և յելան ընկերները Բայիլի բանտից...
Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ—Բագու,—
վորքան յեքիաթներ կան այս գորշ քաղաքում...
Կեցցե՛ գործադուլը, կեցցե՛ կոմիտեն,
կեցցե՛ և փոքրիկն այն, կոմսոմոլ խոխան,
կեցցե՛ մեր պատքարը ու կամքը արի—
կեցցե՛ն բանվորները համայն աշխարհի...
Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ—Բագու,—
վորքան յեքիաթներ կան այս գորշ քաղաքում...

ՆԱՅԻՐԻ ԶԱՐՅԱՆ

Բ Ո Ն Կ Ո Ւ Մ Ը

Ռւրիշ վարդեր ելին բացվում այէ գիշեր,
ուրիշ մայիս եր բոնկում աշխարհում:
Պատուհանից ներս եր ընկել լուսնի շերտ,
ու Սաթոն, լուռ, միտք եր անում ու կարում:

Միտք եր անում մարդու մասին «բայլշեիկ»
ու կարկատում ծեր կեսարին արխալուխ,
ու փայտաշեն որորոցում առջեի.
Քնած եր խոր, քնքագանգուր մի գլուխ:

Յերիտասարդ կնոջ կարոտն անհագուրդ
կլկում եր մամուկանաչ առվի պես.
օյնչ ե անում հիմա Պետին քաղաքում... և—
Հետզհետե լույսն եր առնում արնի տեսք:

Մատածում եր Սաթոն մթին լերկյուղով.
—ինչու Պետին այս կիրակի տուն չեկավ...
ինչու համար «խումբը» նստել ե գյուղում...
ու մորթում են որը հիսուն ճուտ և զառ:
Աչքերն անթարթ բեկոնել են մի կետի:
— ինչ ե Պետին... ինչ ե շինում աշխարհում...

— թախ-թախ,—հանկարծ դուռը ուժով թակեցին
դուռը բացվեց ու ներս մտավ ուս Հարոն:
— Ո՞ւր և կեսառըդ,—մոլտաց տիրաբար,—
ու խորամանկ ժպտաց բեխի արանքից:
— Յերկու զինվոր պիտի պահեք մի շաբաթ:
Լավ կպահեք, պատիվ կտաք ու հանգիստ:
Ու յետեց յերկու «տղերք» մտան ներս,
մինչ ականջները հասնող յերկար բեխերով:
— «Դալի», «Տոն»,—տվին յերկու անուններ
ու կանգնեցին որորոցից քիչ հեռու:
— Վժնց ընդունենք, —ասավ Սաթոն տատամսոտ.
վոչ տեղ ունենք, վոչ տեղաշոր, վոչ սթար:
Ու ուս Հարոն թափ տվեց մտար մսոտ.
— սուս, անդգամ, սթար չունես, —ծոցդ առ:
Ներսես ամին մութ անկլունից արթնացավ:
Հարոն զուաց, վոր, իզուր և, չաղերսի:
— Խմբապետն և հրամայել այ սարսադ.
հայ տղերք են, չեն ուտելու քո հարսին:
Ու դառնալով «հայ տղերքին»՝ կամացուկ՝
«բալլարկի կին ե»—ասավ ու գնաց:
Դալին, Տոնոն շուրջը աչք են ման ածում:
Ու գողում ե Սաթոն՝ հերսից քրտնած:

2.

Հարբած գուգոռում են Տոնոն ու Դալին,
յերգի հետ ըեխերն ոլորում:
Զարթնած՝ որոցքումը մանուկն և լալիս,
իզուր և Սաթոն որորում:

Մթնում կծկվել ե ծերուկն անճարակ,
նայում ե սրածվ մղկառն:
Նրանք բզկտում են բուգերը գառան,
հեռվում մամուռ է կատուն:

Գոմում այդ մի գառն իր միայն մնացել.
այդ մեկն ել գտան, մորթեցին.
Դալին բղավում է խոպոտ—«տնատեր,
յեկ, թասըմ կոնձի»:

Խոպոտ հոհուռ են, խփում են սեղանին:
շները դիպչում են իրար:
Սաթոն գունատվել ե նման քաթանի,
Դալին ակնարկում ե նրան,

Դիշերն յերկարում ե, դառնում ե տարի,
գոռում ե մորթվող մի յերինջ.
հարբած աղմուկները յերգի ու պարի
գալիս են բոլոր տներից:

Ամեն տեղ մտել ե վոտով ուս Հարոն,
ամել ե. «պատիվ պիտի տաք»:
ամեն տեղ հոսել ե գինի և արյուն,
բացվել ե սուփրան կարկատած:

Ու ձեռքը նետում ե Դալին Սաթոյին.
Սաթոն խուսափում ե ճարպիկ.
Տոնոն որորվում ու գուռում ե. «թող ինձ,
գինի խմացնեմ, վոր հարբի»:

Դալիս ե Դալին յետեցը ընկած,
փախչում ե Սաթոն թեթևուա.
վերց հոհուռ հարբած լուսնկան,
ըերում ե քամին գինու հոտ:

Դալին հայհոյում ե, կրակում ե—կանգ ա՛ռ
կանչում, սպառնում ե նրան.
խեկ կինը թոչում ե՝ գրկած իր մանկան,
թոչում ե զեպի կալարան:

Ուրիշ մայիս եր այդ գիշեր վարդավորվում,
ուրիշ արև պիտի բացվեր լուսաբացին.
գիշերն ամբողջ յերկաթուղու կայարանում
յերթեկել եր ու զորատես զրահապատի:

Դիշերն ամբողջ լիքն եր դեպոն բերներեան:
վուանք հենվել կին յուղու յերկաթներին:
վուանք կանգնած, վուանք նստած գետնի վրա—
առաջարկները վճռական ու կարճ ելին:

Վաղը պիտի ապստամբեն ու տան գրոհ,
վաղը կինի համառ կոիվ ու հաղթանակ.
Ալեքպում պիտի պարզեն կարմիր դրոշ
և այնտեղից գեպի յերկիրն առաջանան...

Սպասում են խանդավառված ու անհանդիսա,
նրանց հուզում ե պայքարի կարոտն արթուն.
և ալիքը արդարության զգացմունքի
ահեղաթափ բարձրանում ե նրանց սրտում:

Ու ներս մտավ Սաթոն գունատ ու չնչանեղձ:
Շփոթ, աղմուկ, իրարանցում, չելան արագ:
Պետին զսպված խոռվությամբ դիմավորեց:
Սաթոն պատմեց յեղելությունը խայտառակ:

Վաղը կլինի կարմիր վրեժ ու հատուցում.
և սպասում են ցասումով շանթահարված.
վաղը կլինի արդարագույն ահեղ հարված...
Ո՛, պայքարի համայնական լերջանկությունը
Ուրիշ մայիս եր այդ գիշեր վարդավորվում,
ուրիշ արև առավոտաւան պիտի ծագեր.
գիշերն ամբողջ լերկաթուզու կայարանում
Սաթոն կարում եր արնագույն դրոշակներ:

4.

Պատին՝ «Վարդան Մամիկոնյան», «Խրիմյան»:
«Մայը Հայաստան», վոր «Լալիս եր դառնագին»:
ամբողջ գլուղում ոեսի ողան եր միան,
Խորասանի խալիչաներ հատակին:
Լուսանում եր, արդեն բացվում եր հանգարդ
առավոտը վարդի նման վիթխարի.
խոպոտել եր կարմրամոռթ թամադան
ավանդական «կենաց»-ների շուրջպարից:

Դեռ պատառը կուլ չեր տվել ոես Հարոն,
Դին կազարը սկսել եր մի նոր ճառ,
տերտերն հարբած շարակտն եր մըմոռում—
յեր ներս ընկավ գղիր Յեղոն լեղաճաք.
—Հավար, հասեք,—գլուղում մարդ են սպանել...
ու մահագուժ աղմուկն ընկած տներում
ժողովրդին արգեն վոտքի լեր հանել
դյուղը համայն վորոտում եր. «ոգնություն»...

Հալկորի արնոտ դիակն ուսերին՝
շարժվում եր ժողովուրդը դեպի վեր,
դեպի ոեսի սպիտակ տունը վերի,
ուր պատիվ ու կերուխում եր վողջ գիշեր:
«Մեր հայրենիք... թշվառ անտեր... վոտնակմիս...»
դեռ լերգում եր «խումբն» «անտեղյակ» ու հարբած...
դեռ ուտում ու խում ելին անհագուրդ,
յերբ տաս անգամ մառեցերը ծկլուց:

— բալշերիկի սուրհանդակ ե, հետ կացեք,—
գոռում ելին Դալին, Տոնոն կատաղի.
ճամպա տվեց ժողովուրդը ահաբեկ
տանում ելին ձերբակալված Սաթոյին:
Ժողովուրդը թակեց դուռը հավարով.
— զուրս յեկ, Հարո, զուրս յեկ, պարոն խմբապետ...
դինեթաթախ՝ դուռը բացեց ոես Հարոն.
— ի՞նչ եք զոռում, մւմ աղիքներն են թափել-

— Զեր նամուսին... իշխանության... ձեր... թքած..
— ի՞նչ են նստել ու ձրի հաց պատառում...
— Զեր են տալիս մալին, հարսին, աղջկան...
վերջն ել անմեղ մարդ են մորթում խանչալով.

— Տարան կերան թխսամերս մինումար...—
չճում եր մի կուղիկ պառավ ջղաձիգ:
— ի՞նչ ունեյի. մի թագածին յերինջակ...—
հայնոյում եր մի չքավոր գյուղացի:

Դին կազարը որորվելով գուրս յեկավ,
ուխին փափախ, հաստավիզ ու թագարեխ,
աչքերն արնոտ շուռումուռ տվեց մի անգամ,
խայեր, — ասավ, — ես հորի լեր հավաքվել...

Դրությունը հետզհետե բարդացավ.
թքում ելին խմբապետին ու ոեսին.—
«գուրս քշելու» կոչեր արին բարձրաձայն,
վրա պրծան, Սաթոյին լետ ուղեցին:

Դին կազարը մառւզերը դուրս հանեց
— բայլէրկ եք... ես ձեզ նման խայերի...
հայտա, կորեք, թե չե կիտամ կսպանեմ...
բուլց աղմուկը սաստկանում եր ավելի:

Հասկանում եր դրությունը ոես Հարոն:
Հին աղվես եր: Ու փափսած ականջին.
— ժողովուրդը գուղտեղել ե... չենք կարող...
պիտի անես, ի՞նչ վոր հիմի պահանջեն:

Ու խմբապետը հուսահատ խոնչաց.
— Դալին, Տոնոն զինաթափ: — Զերքակալիր:
Շողողացին մառվերներ ու խանչալ
Զեր հանձնվում ու զենքերը չեն տալիս:

Դալին զեմի տան կտուրը թռավ — տրաք —
և սկսեց այնուեղից վար կըտկել.
— հո Անդրանիկ փաշեն չելաբր... շուռ քուռուկ,
առ քեզի զենք, առ մառվեր, առ, հա քեզ:

Պատվում եր բիրներերան լուրը ոռումք.
«Ալեքսուրում կարմիր դրոշակ ե հիմի,
դաշնակները թաք են կացել հորերում,
Յերեան ե փախել Կարո Սասունին:

Ժողովրդին հրահրում եր Սաթոն,
չինայեն, վոր կտորեն բոլորին:
— թասլիմ, — զոռաց Դալին պատուած ճակատով,
ու քիչ հետո բերին կապված Տոնոյին:

Ժողովուրդը մռնչում եր ու հեռմ.
բռունցքները պատրաստ ելին հարվածի:
Բայց Արմենակն աղաղակեց.—ժողովներդ՝
համբերություն, առաջարկ կա առանձին:

Դուն զյուղի ժողովրդի կողմից մենք
զինաթափում ենք Ղաղարի խուժանին—
աբող, մոսին ու մառզեր կթողնեն,
իրենք գլուղից կհեռանան մի ժամից:

Դին Կաղարը ծամածովեց լերկուղից
և սպառնաց թնդանոթով հետո գալ.
այն ժամանակ զինված ուժիրը զյուղի
պաշարեցին ոհս Հարուի մեծ ողան:

Ու մարդապան Դալուն գետին փոեցին.
հետո մլուսին՝ «աննամուս» ու «տնաքանդ»:
Դաշնակցական խմբապետին ու ռեսին
վերցրին, վոր տան հեղկոմին՝ քննության:

Այդ առավոտ ուրիշ վարդեր բացվեցին
Ուրիշ աչքեր շողշողացին ծիծաղով.
գյուղի վրա, աղատարար, ազգեցիկ
կարմրագույն դրոշակն եր փողփողում:

— Ի՞նչ ժամանակաշրջան ե ընդգրկում այս պոեմը:
— Ի՞նչ միջավայր:
— Ո՞ւմ շահներն ելին պաշտպանում գյուղի ոեսը յեվ խմբապետները:
— Ովքե՞ր ելին կայարանում հավաքվածները:
— Ինչի՞ հետեւվանք եր ժողովրդի բռնկումը:

— Ի՞նչ ընդհանուր բան կա այս պոեմայի յեվ Վախտանգ Անանյանի
«Կարմրադրոշ Պատանի» պատկերների մեջ:

Գ. ՄԱՅՐԻ

ԴԵՊԻ ԳՅՈՒՆ

Անցել են տարիներ այն որից
ավառու նման սրբնթաց:
յես հիշում եմ նորից ու նորից
տարիներն այն թեժ, զրնգան:

Բանտում յես ամրացա մտքով,
դարձա հնի դեմ վոխակալ.
բանտում ինձ դարձրեց Սերգոն
հեղափոխական:

— Կոիվ հին, քար կարգերի գեմ,
հարստին—գնդակ մի անշեղ.
վորպեսի մեր քրտինքը չուտեն,
մեր Ծիրան կովը չքշեն:

Ու որին լեցվում ե արագ
նորանոր ընկերներով
խոր, խավար մեր կամերան—
ու բերում ելին, դեռ բերում:

Իսկ մինչ այդ գործը թշնամի
ծեծում ե լերկրի դռները.
ուռչում ե ծանր միքանի,
թերը վառողով բեռնել ե:

Բոլոր կոչերը անզոր ու բութ,
արթուն են մեր ընկերները.
հեռախոսները մոռում են խուլ,
— Զեն կրվում, Ղարսը ընկել ե.

Լեցվում են քաղաք—գաղազած
Ղաղախի գյուղացիները.
մեր կամքը սուլում ե անսասան,
— Բաց արեք բանահերի դռները...

Ու բաց են գռները բանտի,
տիրողը շպրտված անդին.
— Վողջույն մեր ազատ լեռներին,
վողջույն քարերին, հանդին:

— Սերգո, լսում ես, գյուղ գնանք...—
Ու գուրս ենք գալիս քաղաքից:
Սրել, վոնց վոր կարմիր չարխ,
փռում ե սարերի քամակին:

Վաղը, Սերգո, կյանք կլինի,
մեր կամքով ու մեր քրտինքով,
աշխատանք ու ջանք կլինի,
մեր-վողջույն եդ վաղվան, Սերգո...

Ժպտում ե որը, որը հաշտ,
թեքվում ե լեռները թամաշի.
արել վոնց վոր կարմիր չարխ,
փռում ե սարերի քամակին:

— Համեմատեցեք այս բանաստեղծության նյութը «Գրաղարանի աղջիկը» պատմվածքի նյութի հետ:

ԽՈՐԵՆ ՌԱԴԻՈ

ԴԱՍԱԿԱՐԳԸ

— Յերբ աշուն ե շնչում քամին,
ծառերը թեքվում են ալեհեր՝
տափաստաններն այն կասպից
դառնում են մթին շիրիմներ.—
իսկ այստեղ,
սրտում ձայնում են
աղեխարշ կանչեր ու հառաչ.

ձեռները,
ձեռները...
այն ժամն են,
այն ժամ ձեռներն են բազկատարած:
Աղջիկս,
տեսնժւմ ես.
ահա,

Մեր գյուղը վիրավոր բատրակ՝
ընկած լեռների հանգույցում,
լեկել ենք քաղաքից ահա,
բերել ենք նրան ոգնություն...

— Սերգո, գնում ենք, ելի,—
ու ժպտում ե Սերգոն չոր.
վերցնում ենք հրացանները,
գնում ենք ձյուների միջով...

Կրակում են խանդով
գյուղում դարան մատած—
կրակում ե խանդով
դաշնակցական բանդան:

Մեր գիրքը ամուր ե
արաքարաքոցի գեմ թունդ.
մեր գիրքը բլուրն ե,
նրանց գիրքը—տուն:

Կրակում ենք յերգով
ձյունոտ փոսից, քարից,
հրահանգում ե ձեռքով
հրամանատարը կարմիր:

Ռազմիկները կարմիր
գեպի գյուղ թուան:
Շուրջը յերգում եր քամին
«հնտերնացիոնալ»:

արնոտ ձեռներ են բարձրանում,
ձեռներ հիսուն յերկու հատ,
դարձած վրեժ ու բռունցք...
Մատ նստիր, աղջիկս, այսպես,
սեղմվիր քո ծեր հոր կողերին
...Տես.

տափաստանները կասպից
դառնում են շիրիմներ խորին:
Դու մոտ չես գալիս, աղջիկս,
չես ուզում հորդ սփոփել
ուզում ես, վոր սիրտ, արջի պես,
սոսկումով բռնված դոփիք.
ուզում ես, վոր ուսերս բռնած
սարսափը ցնցի ինձ վողջ գիշեր,
դու գլուխդ հակել ես մոալլ...
դու հեկելմամ ես, աղջիկս:

Յեվ ինչմէ,
ինչմէ յես լալիս դու,
ինչմէ յես մորմոքում դառնտգին:
— Ախ, հայր իմ,

ինձ հանգիստ տուր,
կորուստներ ե վողբում իմ հոգին:
Տարիներ, տարիներ առաջ,
յերբ յես զեռ լեղել եմ մանկիկ,
ավագուստներում այն մոալլ
ընկել են մարտիկներ անգին:
Յեղել ե մի լոկիր Դենստերվիլ
ու մի ալլ գաֆան գնդապիտ՝
բերել են 26.ին Բագվից
ու անապատում գնդակել:

Յեվ այսոր,
այս լուսաբացին,
տարիներ, տարիներ առաջ,
արյունը անմատ 26.ի
ներկեց անապատը մոայլ:
Թող, հայր իմ, կոմքերիտ քո աղջկան
հիշելու կորուստներ, դիտկներ:
Լուսագեմ...

ու նրանք ընկան
քսանվեց նահատակներ...
* * *

Լուսությունն աղմուկ ե դառնում,
լուսությունը շաչում ե կատաղի,
հոր սիրտը զղումն ե արնում,
աղջկա սիրտը լալիս դառնաղի:
Ու ժամերն են դոփում մոլեգին,
դոփում են ու չեն ընթանում.
խփում են ծեր հոր քունքերին:
...Սոսկումն ե աճում, խտանում:
Լուսությունը խեղդում ե հորը,
նա ուզում ե աղաղակել.
նա գրկում ե աղջկա ծնկները,
հեկեկում ե անոգ ու կերկեր.
— «Եեղել ե մի լոկիր Դենստերվիլ
յեղել ե գաֆան մի գնդապիտ...»
Ախ լսիր,
սիրելի իմ դստրիկ,
այդ յես եմ նրանց գնդակել
այդ յես տվի նրանց գեմ աղդանիշ,
աղդանիշ գաֆան գնդակման...—
Աղջկա գեմքը փոխվեց քաթանի
ու հետո բռնկվեց հանկարծ:
— Դմւ...
դահիճը քսանվեցի...
ու հետո հուսահատ ճշաց.—
— Բայց...
ինչմէ դու գնդակեցիր...
— Ինչմէ...
Այդ մի հարցնի, աղջիկս,
չե վոր կան յերկու բանակներ...
յես պարտավոր նիփ այդ գիշեր,
պարտավոր եփի գնդակել:
Յես ուրիշ բանակից եփի.—
այդ բանակը ջարդվել ե այսոր.—
նրանք ուզում եյին միլիոնի
հաղթ ուժով կրկնել մեր դասը:
Յես զինվոր եյի իմ գասի.
յես լսում եփի նրա ձալնը,—
դրանից ել գաֆան ու անսիրտ
յես տվի սղանշանը:
Նրանք այլ բանակից եյին.
նրանք մեր դեմն եյին ընդվում.
գնդակել պարտավոր եյի յես.
գասակարգն արդպես եր ուզում:
...— Պարտավոր եյիր դու, հայրիկ,
գասակարգն այդպես եր ուզում:
Յեվ աղջկա գեմքին ամենի

շողաց վրեժի ցասում:
Նա հրեց հորը ալեոր,
վորն ընկել եր գետնատարած.
դուրս թռավ:—
Քամի ու խալիք.
բացվում եր աղոտ մի լուսաբաց:
* * * * *

Վայրկյաններն են դոփում մոլեգին,
դոփում են ու չեն ընթանում,
խփում են ծեր հոր քունքերին,
լուսությունն ե աճում խտանում:
Լուսությունը իսելդում ե հորը.
նա ուզում ե աղաղակել
նա փնտում ե աղջկա ծնկները,
հեկեկում ե անոգ ու կերկեր:
...— Լուսաբաց եր.

նրանք ընկան.
հավատով անմռունչ ու իլրոխ.
և ասես այդ արնից հաղթական
վորի յերկերը բռնկվեց նոր հրով:
Յեվ հանկարծ...
դուռը շառաչեց
ու զենքերը շողացին իր աչքին:
Ներս մտավ աղջիկն ու կանչեց.
...— Բոնեցեք քսանվեցի գահիճին...
* * * * *

Յերբ հորը գնդակում եյին,
աղջիկը շնչաց անհուզում,
— Ներիր, հայր.
պարտավոր եյի...—
դասակարգն այդպես եր ուզում:

Քսանվեց կոմմունարների գահիճներից մեկին, Ֆունտիկովին խորհը-
դալին իշխանության ձեռքը հանձնեց նրա աղջիկը:

— Ինչմէ հայրը գնդակահարեց 26 կոմմունարներին:
— Կարո՞ղ եր արդյոք նա այլ կերպ վարվել և վո՞ր դեպքում:
— Ինչի՞ հետեւանք եր, վոր հայր ու աղջիկ գտնվում ելին տարբեր
դասակարգերում:
— Ճիշտ վարվեց արդյոք աղջիկը՝ հանձնելով հորը խորհըդալին իշ-
խանության ձեռքը:

Գ. ԿԱՅԱԶԵՎ

ԿՈՄՄՈՒՆԱՐԻ ՎՈՐԴԻ

Ու կանցնի մըրիկն ալս հզոր
մըրիկը կատաղի, ուժդին
կհարցներ տղան վորբացած
իր մորը կրկին ու կբկին...
«Ասա ինձ, մայրիմ սիրասուն,
վժրաեկ ե հայրիկս անգին»:
Ու թեքած գամբանին այրին
կասե միշտ հպարտ, անսասան՝
«Նա ընկավ մեծ կովում սրբազն...—
որերին սեալուր, դըմնի,
յերբ վոսոխը չար ու ազան
խեղդում եր յերկերը հալրենի,
յերբ արյամբ եր ուզում հանգցնել
իմ այս մեծ հայրենի յերկում»...

Ու մալրը կասե եր վորդուն.—
«Քո խիզախ հալրիկիդ համար,
վոր ընկավ կռվի մեջ քաջաբար
մեր ծանր որերին անհամար...
Տնքում եր գարկերից թշնամու
լայնարձակ մեր Ռուսիան անծայր
մահն եր սպասում ահարկու
մեր տպատ վաստակին ու կյանքին...»

— Քո հայրը դիմում եր կոմմունար

Պանծալի 18 թվին»:

Ու տղան կլու խոհասուլզ
կնայե գամբանին հերոսի,
կխորհե հեռավոր որերե, —
հիսոքանչ որերի մասին

և հոգու աչքի դեմ կկանգնի
ըստվերը իր հզոր, հսկա հոր...
կերդվի միշտ քայլել նույն ճամբով
վողջ կյանքում անհողողդ,
անընդհատ.

չդառնալ, չշեղվել հոր ուղուց
միշտ հպարտ, աներե ու հաստատ...
«Յերդվում եմ, չերդվում եմ միշտ
լինել»

քաջարի, և ազնիվ, և խիզախ:
Յերդվում եմ վողջ հոգովն ատել
նենդ, խարդախ բռնակալ չարերին:
— «Իմ հայրը զինվոր եր կոմմունար
պանծալի 18 թվին»...

ՀՆԴԱՇՆՈՒԻՐ ՀԱՐՑԵՐ ՈՒ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

— Ի՞նչ ժամանակաշրջան են ընդգրկում այս բաժնում զետեղված նյութերը:

— Ի՞նչն ե նրանցում ընդհանուր:

— Վո՞ր գրվածքներում ե նկարագրված Փետրվարյան հեղափոխության ժամանակաշրջանը:

— Վո՞ր գրվածքներում ե նկարագրված Հոկտեմբերյան հեղափոխությունը:

— Վո՞ր գրվածքներն են ընդգրկում յերկուսն ել:

Ստ. Զորյանի, Մաթելոս Դարբինյանի յեվ գախտանգ Սնանյանի այստեղ զետեղված պատմվածքներն հիմք ունենալով գրեցեք շարադրություն «Ի՞նչպես և արտահայտվել հեղափոխությունը մեր զեղեցիկ զրականության մեջ» թեմայով:

— Այս հեղինակներից վո՞րը հեղափոխության վո՞ր շրջանն և արտահայտել:

— Հեղափոխության վո՞ր շրջանն ե ընդգրկում Ակսել Բակունցի «Վանդունց բաղին»:

— Ի՞նչ միջավայր ե նկարագրված Ելիզար Պոլումորդվինովի «Յերկաթե յեղբայրներ» պատմվածքում:

— Համեմատեցեք այդ միջավայրը Վ. Անանյանի պատմվածքում նկարագրված միջավայրի հետ. — ի՞նչն ե ընդհանուր յեվ ի՞նչն ե տարբեր:

— Ի՞նչպես և գրված Ստ. Զորյանի «Գրադարանի աղջիկը», ո՞վ և խոսում պատմվածքում. ո՞ւմ կողմն ե հեղինակի համակրանքը. ի՞նչի՞ց ե դա յերիվում:

— Տարբերվո՞ւմ ե արդյոք Զորյանի այդ պատմվածքի լեզուն նրա «Հեղկոմի նախագահը» պատմվածքի լեզվից. — Ինչի՞ց ե բղխում այդ տարբերությունը:

— Ինչո՞վ ե պայմանավորված այդ. յերկու պատմվածքներում ելքազմաթիվ ռուսերն յեվ գավառաբանությունների գործածությունը:

— Տարբերվո՞ւմ ե արդյոք Մ. Դարբինյանի «Կիկոսը» պատմվածքում գործադրված պատմելու յեղանակը Ակսելի «Վանդունց Բաղին» պատմվածքում կիրառված պատմելու յեղանակից:

— Վո՞րն ե հիմնական տարբերությունները. մատնանշեցեք նմանությունները:

— Կա՞ արդյոք նմանություն ն. Զարյանի «Բոնկումը» պոեմի յեվ Վ. Անանյանի «Կարմրադրոշ պատանին» պատմվածքի միջեվ:

— Կարելի՞ յե արդյոք միելնույն նյութը մշակել արծակ յեվ չափածու:

— Վո՞րն ե արծակի յեվ վո՞րը չափածոյի առավելությունը:

— Ունի՞ արդյոք Զարյանի այդ պոեմը սյուժե:

— Կա՞ն նրանում գավառաբանություններ:

— Էստ ծեփի համեմատեցեք Յեղիշե Զարենցի «Ամրոխները խելազարված» պոեմը Ն. Զարյանի «Բոնկումի» հետ. տարբերվո՞ւմ են այդ պոեմները լեզվով, պատկերներով, տաղաչափությամբ: — Ի՞նչն ե արդ տարբերության հիմնական պատճառը:

— Կարդացեք Ստ. Զորյանի «Գրադարանի աղջիկը» յեվ «Հեղեկոմի նախագահը» պատմվածքներն ամբողջությամբ:

— Կարդացեք Մ. Դարբինյանի «Կիկոսը» յեվ Վ. Անանյանի «Կարմրադրոշ պատանին»:

վոր ստեղծված ե գործելու միայն և միմիայն յերեխաների համար և վոր չի կարող նրանցից դուրս ունենալ վոչ հոգս, վոչ ցանկություն:

— Գիտես, Լևոն, — ասում եր նա մայրական անզուսպ և կույր զգացման բուռն գրգուման պահերին, գրկելով մի ձեռով մեծ մլուսով փոքր զավակին, — յեթե տեր մի արասցե, սրանց մի բան պատահի, յես, առանց մի վայրկյան տատանվելու, ինձ կսպանեմ:

— Լավ, հիմար-հիմար մի դուրս տա, — կը կնում եր Լևոնը, հանգիստ ժպտալով այն լայն, պայծառ ժպիտով, վոր միայն անկեղծ և բարեսիրտ մարդկանց ե պարգևած և վոր մի առանձին գրավչություն ե տալիս նրանց դեմքերին, վորքան ևս այլանդակ լինեն նրանք:

Այսպես ապրեց Մագդալինան իննը տարի, միշտ հանգիստ, միշտ անվրդով, ինչպես մի անդամ արդեն իր ուղին հարթած լաշտային գետակ: Մի որ Լևոնը տուն յեկավ հուզված և, թուրն ուսից զած դնելով, ասաց:

— Ահա, վերջապես:

— Ի՞նչ ե պատահել, — հարցրեց Մագդալինան, վոր այդ ժամանակ զբաղված եր փոքր յերեխայի հագուստը փոխելով:

— Զորաժողով ե հայտարարված:

— Զորաժողով, — արտասանեց Մագդալինան անգիտակցաբար առանց նայելու ամուսնու յերեսին:

— Այս, սիրելիս: Յեվ շատ հավանական ե, վոր մեր գունդն ել ուղարկեն, հետեւաբար և ինձ:

— Ուր պիտի ուղարկեն, — հարցրեց Մագդալինան, տակավին լավ չմքոնելով հաղորդած լուրի ամբողջ լրջությունը: — Ի՞նչ ես ուզում ասել:

— Ուզում եմ ասել, վոր պատերազմ ե լինելու:

— Պատերազմ: — Մագդալինան բաց թողեց յերեխային և իր խոշոր, սևորակ աչքերը, վոր այնքան գեղեցիկ եյին և այնքան միամիտ, հառեց ամուսնու յերեսին: Այս միտքը, թե Լևոնը պիտի զնա պատերազմի դաշտը, թվաց նրան այքան տարորինակ, վոր նա կարծեց, թե ամուսինը մի չար կատակ ե անում:

— Այդ ի՞նչ ե նշանակում:

— Այդ նշանակում ե, սիրելիս, վոր յես կամ միքանի ամսից հետո կվերադառնամ, կամ յերբեք չեմ վերադառնա: Յես չեյի ուզում հանկարծակի հայտնել, բայց քանի վոր այնքան քաջ լեղար,

III

ՀԱՄԱՇԽԱՅԻՆ ՊԱՏԵՐԱՋՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ

ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

ԵՐՈՍԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Աղքերի ահոելի պատերազմը տակն ու վրա արավ Մագդալինա Մաքայանի կյանքը: Ապրել եր նա մինչև այդ ժամանակ անգոր, անգույն անարյուն, բայց յերջանիկ կյանքով: Սիրել եր նա իր ամուսնուն այնպես, ինչպես սիրում է կինը տղամարդուն: Սիրել եր արդյոք նրանից: Ինքներդ գատեցնեց: Տանեռութ տարեկան մի շատ սովորական, շատ պարզ աղջիկ եր, վոչ հիմար և վոչ ել շատ խելոք, յերբ ամուսնացավ զինվորական Լևոն Մաքայանի ել շատ խելոք, յերբ ամուսնացավ զինվորական Լևոն Մաքայանի հետ: Ամուսնացավ առանց յերկար մտածելու և յերկար տատանվելու, վորովհետև արդեն մանուկ հասակից լսել եր, վոր յերբ վոչ հարուստ մի ընտանիքի աղջիկ դպրոցն ավարտում ե, յերբ զիտեք թե շատ նվազել դաշնամուր, պարել, զվարճախոսել, պետք ե ամուսնանա, յեթե չի ուզում ծնողների համար ավելորդ բեռք դառնալ:

Այսպես թե այնպես, Մագդալինան իրեն անբախտ չեր զգում, ինչպես չեր կարող անբախտ զգալ իրեն մի հավ, վոր ունի առատ կուտ և տաք բուն: Նա նույնիսկ յերջանիկ համարեց այն պահից, յերբ ունեցավ առաջին զավակը և յերկու տարի չանցած՝ յերկրորդ մեկը տղա, մյուսը աղջիկ: Յեվ իր ամբողջ եյությամբ անբախտ նվիրվեց նրանց այնպես, ինչպես կարող ե նվիրվել միայն այն եյակը, վորի կյանքի խորհուրդը պարփակվել ե ընտանեկան սահմանափակ շրջանակի մեջ: Նա մոռացավ ամենքին և ամեն ինչ, վոր կապ չուներ իր զավակների ճակատագրի հետ: Նրա դաշնամուրի կափարիչն որերով և շաբաթներով չեր բարձրանում: Հազնվում եր անփուլթ, առանց վորեն ուշադրություն դարձնելու իր արտաքինի վրա: Նույնիսկ ամուսինը դարձավ նրա աչքում շնչավոր մեքենա,

վոր առաջին լուրը լսեցիր առանց ուշաթափվելու, կասեմ. արգեն
վորոշված ե մեզ ուղարկել:

— Ուր:

— Հայտնի չե:

— Յեր:

— Տան որից հետո:

Մագդալինան գլուխը թեքեց կրծքին, տխուր հառաչեց և, մի
փոքր անցած, շարունակեց.

— Իսկ յերեխաները...

— Իսկ յերեխաները կշարունակեն պատերազմել քեզ հետ, —
հեղնեց կոնը նույն զվարթ յեղանակով:

— Դու կատակ ես անում, բայց իմ հոգին միանդամայն տա-
կըն ու վրա յեղավ: Զե՞ վոր դու կարող ես վիրավորվել:

— Կարող ե պատահել:

— Նույնիսկ սպանվել:

— Այդ ել մի անսպասելի բան չե:

— Հետո:

— Հետո ի՞նչ: Դու կոնես յերիտասարդ հետաքրքրական այրի:
Յերեակայում եմ, ինչպես սազ կդա քեզ սպազմեստը: — Յեզ կոնը
բարձրաձայն ծիծազեց, ցույց տալով հաստ շրթունքների տակից
սպիտակ, մսոքուր, առողջ ատամների շարքը:

— Լոիր, — գոչեց Մագդալինան, անկեղծ վրդովվելով, — ինձ մի-
այն անհանգստացնում ե յերեխաների վիճակը: — Կոնը բացատրեց,
թե յերեխաները կպահվեն ավելի լավ, քան մինչև այժմ: Պատե-
րազմի ժամանակ զինվորականների ոռճիկներն ավելացնում են:
Մագդալինան կստանա կոնի այժմյան ամսականը, իսկ ավելացու-
մը նրան բավական ե. պատերազմի վայրում գող ծախսելու հա-
մար մեծ պետքեր չկան:

— Յես այդ մասին չեմ մտածում, — ընդհատեց Մագդալինան,
— այլ...

— Այլ ի՞նչ...

— Յես յերեակայել չեմ կարսդ, թե ինչպես կարելի յետանց
քեզ ապրել: Յերեխաներն առանց իրանց հոր... Վո՞չ, վոչ դու ամեն
բան կատակ ես դարձնում: Լավ մտածիր: Նրանք կարող են մինչև
անզամ...

— Լավ, մի յերկարացնիր, — ընդհատեց կոնը, յերեխաներն
առհասարակ շատ հեշտ են ընտելանում իրանց վիճակի փոփոխու-
թյանը... Անցյալի հիշատակը նրանց համար վասողի ծուխ ե, կար
և վայրկյան չանցած՝ չբացավ: — Յեզ նա շարունակեց համոզել Մագ-

դալինային հաշտվել իր պարտականությունների հետ: Կան մարդու
համար պարտականություններ, վորոնց կատարելը բարձր է, քան
ամեն մի յերջանկություն, քան ինքը կյանքը: Մագդալինան հոգու
խորքում մի առ մի հերքեց կոնի բոլոր ասածները, այնքան վայ-
րենի յեր նրա համար սպանելու կամ սպանվելու գաղափարը: Բայց
չակածառեց: Նա զգաց, վոր ներկա դեպքում հոկածառու-
թյունը կլինի ապարդյուն: Հետեւյալ առավոտից նա սկսեց զբաղվել
կոնի ճերմակեղենը կարգի բերելով: Հետզիւտե նա ընտելացավ
պատերազմի անհրաժեշտության մտքի հետ, վոր այնքան ջերմե-
ռանդ պաշտպանում եր կոնը և այլևս դադարեց բողոքել ճակատա-
գրի դեմ:

Ուղերության որը Մագդալինան յերեխաների հետ գնաց յեր-
կաթուղու կայարանը կոնին ճանապարհ դնելու: Նա կարողացավ
կատարել ամուսնու խիստ պատվերները՝ հրաժեշտի պահին վոչ մի-
այն լաց չլինել, կամ տխուր գեմք ցույց չտալ, այլև աշխատել յե-
րեալ ուրախ ու զվարթ: Բայց յերբ Մագդալինան տուն վերադար-
ձավ, յերբ աղախինը ինքնայենը ներս բերեց, յերբ յերեխաները,
կարծես քնազդաբար գուշակելով իրենց մոր հոգեկան դրությու-
նը լուս նստեցին սեղանի քով, յերբ այլևս չերեաց կոնի միշտ
պայծառ, միշտ կենսախինդ, միշտ ժապուն դեմքը, յերբ չըրս-
վեց նրա քիչ խուլք, բայց մեզմ համակրելի բարիտոնը՝ մի ան-
սովոր, ծանր վիշտ համակեց նրա հոգին: Թվաց նրան, վոր այն, ինչ
վոր յեղել ե իննը տարի շարունակ, անցավ գնաց անվերագառնալի,
վոր մի ինչ-վոր աներեսույթ զորության մի ուժգին հարվածով կը-
տրվեց իր գոյության սովորական ընթացքը, վոր այնքան սահուն
եր, այնքան անաղմուկ և յերջանիկ իր անգունության մեջ: Թվաց
նրան, վոր այդ որից առմիշտ անհայտացավ խաղաղության հովա-
նավորող հրեշտակն այս համեստ, անդորր կացարանից, ուր վոչ
մի յերկարաւակություն տեղի չեր ունեցել, ուր վոչ մի կը-
ծու վիրավորական խոսք չեր արասանմել իննը տարվա ընթաց-
քում: Յեզ նա, չկարողանալով իրեն զսպել թողեց յերեխաներին,
անցավ սեղանատնից, ընկավ յերեսն ի վայր անկողակալի վրա և
սկսեց դառն հեկեկար գլուխը թաղելով բարձի մեջ, վորպեսզի ձայ-
նը չհասնի յերեխաներին: Հեկեկալ այսպես, ինչպես հեկեկում եր
մանուկ հասակում, յերբ խլում եյին նրանից իր սիրած խաղալիքը...

Մամա, լաց մի լինիր, բավական ե, — լսեց նա հանկարծ և
անմիջապես գլուխը բարձրացրեց, աշքերը սրբեց, աշխատելով թագ-
յնել իր վիշտը: Նրա առջև կանգնած եր վեց տարեկան Գարիկը:

Գեր, առողջ, զվարթ, ժպտուն՝ կատարելապես իր հայրը... Մայրը գրկեց նրա գլուխը, սեղմեց կրծքին և ջերմապին համբուրեց, առագարագ արտասանելով.

— Վոչի՞նչ, բալիկը, վոչի՞նչ: Յես լաց չելի լինում, ընդհակառակը, ծիծաղում եյի...

— Մամա, պապան վորտեղ գնաց, — հարցրեց նա, ձեռիկը գընելով մոր հերարձակ գըլիսին:

— Զգիտեմ:

— Ինչու դնաց:

— Զգիտեմ:

— Հա, հասկանում եմ, ոու ինձնից թագյնում ես: Ասում ես՝, յերեխա յե, թող չիմանա:

— Լավ մի մտածիք, պապան շուտով կվերադառնա:

— Չե, մամա, նա շուտով չի վերադառնա: Յեթե ուզում ես, նա կարող է իսկի յել չվերադառնալ, գիտես, իսկի յել...

Մագդալինան ցնցվեց սարսափից: Մանկան խոսքերը նրան թվաց ինչ-վոր նախագուշակում:

— Սուս, լեզուդ կկտրեմ; — գոչեց նա, ձեռքով վակելով Գարիկի քերանը: Կարծես դրանով ուզում եր առաջն առնել մի դժբախտության, վորի նախագուշացումն ինքն ել ուսեր հոգու խորքումք Բայց մանուկը չզսպեց իրան:

— Մամա, — շարունակեց նա, — զու կարծում ես յես հիմնը եմ, վոչինչ չգիտեմ: Դոնապանն ինձ բոլորն ասել ե:

— Ի՞նչ ե ասել քեզ այդ հիմարը:

— Իսկի յել հիմար չե, նա ինձնից ել խելոք ե: Նա ասում եր, վոր պապան գնում ե գերմանացիների հետ կովելու: Կայսրն ե հրամայել: Ասել ե՝ կոտորեցէք այդ կալբաս ուտողներին, շատ են յերես առել: Ո, իմ պապան քաջ ե, վոչ վոքից չի վախենա: Նա այդ գերմանացիների գլուխը կկտրե իր թրով: Դու մի անհանգըտանար, կտեսնես:

— Այո՛ իհարկե, պապան քաջ ե, յես նրա համար չեմ վախենում, — քաջալերեց Մագդալինան փոքրիկին:

Հյուսիսի նահանգական մի քաղաքից ստացվեց հետեյալ հեռագիրը. «Հասա վողջ առողջ: Գնում ենք ավելի հեռու, Լսոն»: Այս հեռագրին հաջորդեց առաջին նամակը, վորին հետեց յերկրորդը, ապա յերրորդը և այնուհետեւ լսոնը լուեց... Այդ պահից ահա ըսկը կավեցին Մագդալինայի իսկական տանջանքները: Մեկը մյուսից չար կասկածներ և յենթագրություններ պալարեցին նրան, վորպես

թունավոր սօղունները: Մեկը մյուսից զարհուրելի տեսիլներ պատկերացան նրա առջև, վորպես գերեզմանային ուրվականներ: Հանուն զավակների հանգստության, նաև հերոսական ձիգեր եր գործ դնում իր հոգու տառապանաքնները թագյնելու համար: Մերթ այդ աջողվում եր նրան, բայց հաճախ՝ վոչ: Յեվ քիչ անդամ չեր արտասվել նույնիսկ յերեխաների ներկայությամբ: Ամեն որ նա պոստ ստացվելու ժամանակին նստում եր լուսամուտի առջև, նայում եր գեպի բակը, սրտի բարախումով սպասում նամակի: Գալիս եր նամակաբերը, անցնում եր գեպի հարեանները, և նրա հարցին շարունակ պատասխանում եր ստունաբյուն:

— Զկա, տիկին:

Ամեն առավոտ նա աղախնին ուղարկում եր հեռագիրներ ու լրացիրներ գնելու, կարդում եր ծայրեծայր բոլորը, ինչ վոր պատերազմին եր վերաբերվում, հուսալով գանել վորեն տեղեկություն յեթե վոչ լսոնի, գոնե այն գնդի մասին, վորին նա պատկանում եր: Յեվ վոհ մի լուր: Նա գիտե, վոր պատերազմը մեծ ե, անորինակ, վոր միլիսների բանակներ են դուրս յեկել իրարու գեմ, վոր մի ինչ-վոր գունդ մի բուռը ջուր ե վիթխարի հեղեղի մեջ: Նա գիտեր, վոր մարդիկ ապանվում, վիրավորվում, գերի յեն վերցվում տասնյակ հազարներով, բայց և այնպես չեր դադարում հուսալ ծովի ավազում գտնել այն միակ հատիկը, վոր ամենից փայլուն եր նրա համար, ամենից գնահատելին: Այդպես անցկացրեց Մագդալինան պատերազմի առաջին ամիսը: Այսուհետեւ փոքր առ փոքր մեղմացավ նրա հոգեկան փոթորկիը և սովորական առողջ բանականությունը, վորից զուրկ չեր, տակավ առ տակավ տիրացավ իր սրբազն իրավունքներին: Ամեն որ նա դողդոջուն ձեռքերով բաց անելով տեղական լրագիրը: Նախ և առաջ աչքի յեր անցկացնում սպանվածների և վիրավորվածների անվերջ ցուցակները: Յերբ հասնում եր Մ. տառին, մի պահ կանգ եր առնում, նրա ձեռները թուլանում եյին ու լրացիրը բաց թողնում ծնկների վրա: Նրա տառապող սիրտը սկսում եր այնպես ուժգին բարախել, վոր, կարծեա, ձգտում եր զուրս սպրդել կրծքի տակից, ինչպես նոր ձերբակարգած թոշունը վանդակից:

Մի առավոտ աղախնը յերեխաներին տարել եր իրենց տասի մոտ և նոր վերագարձել եր խոհանոց, յերբ հանկարծ լսեց մի բարձր ու սուր ձիչ: Նա իսկուն վազեց սեղանատուն, վորտեղից լսվեց ձիչը: Այսուեղ, լուսամուտի առջև, առավոտան արեգակի մեղմ ձառագայթների տակ, որվա լրացիրը ձեռքում ձգված եր Մագդալինան

նան անշնչացած։ Զարիք գուշակելով, շփոթված աղախինը վազեց պատշաճամբ և բարձրածայն ոգնություն կանչեց. Ապա վերադառնութով, չոքեց տիրուհու մոտ։ Յեկան միքանի հարեան կանայք, և աղախինը նրանց ոգնությամբ ուշքի բերեց Մագդալինային ու նըստեցրեց թախտի վրա։ Նա գունատ եր, ինչպես ճերմակ կտավ։ Նրա կապտած շրջումքները կտել եյին ատամներին և դողդողում եյին։

— Ի՞նչ պատահեց, — գոչեցին հարեան կանայք, արդեն լրադրից գուշակելով, թե ի՞նչ կարող ե պատահած լինել։

— Նրան սպանել են, — հազիվ կարողացավ արտասանել Մագդալինան և նորից ուշաթափվեց։ Յերբ նորից ուշքի բերեցին նրան, սկսեց գառնագին հեկեկալ, արտասանելով։

— Յես նախազգում եյի, դիտեյի, վոր սպանվելու յե։ Վոչ վոք չխանգարեց նրա հեկեկանքը, զգալով վոր նման խոսքերն անզոր են։ Աղախինը վազեց դժբախտ լուրը Մագդալինայի ծնողներին հայտնելու, պատվեր ստանալով յերեխաներին վոչինչ չասել և չբերել տուն։ Յեկան ծնողները. Մայրն իր հեկեկանքն խառնեց դատեր հեկեկանքին։ Իսկ հայրն ասաց, թե լրագիրների ցուցակին հավատալ չի կարելի, թե հարկավոր ե շտաբում տեղեկանալ։ Յեվ ինքը շտապեց տեղեկանալու։ Իսս ժամ անցած, նա բերեց դժբախտ լուրի հաստատությունը։ Այս, շտաբում ստացած ցուցակի մեջ կա մի պորուչիկ լեռն Մաքայան անունով։ Սպանված ե նա մենքասկած լիվի մոտ տեղի ունեցած ճակատամարտերից մեկում։ Մագդալինան պահանջեց, վոր հեռազրվի այն զորաբանակի հրամանատարին, վորին պատկանում ե լւսնի գունդը։ Յերեք որ անցած ստացվեց հետևյալ հեռազրիրը. — «Տեղեկացեք Կովկասյան շտաբում»։ Այլևս կասկած չմնաց։ Մագդալինան պահանջեց, վոր լեռնի դիակը գտնվի և կովկաս բերվի։ Պահանջը համարվեց անիբարգործելի։ Ասացին, վոր պորուչիկը սպանված ե շտաբում առաջ, վոր անտարակույս նրան թաղել են հենց սպանված որը, վոր զուր կլինի ամեն ջանք նրա դիակը գտնել և այլն, և այլն։ Մագդալինան համոզվեց, վոր, արդարե, իր պահանջն անիբարգործելի յե։ Նա բավականացավ սովորական հոգեհանգստով, հետեւելով ուրիշների որինակին։

Այլևս նա դադարեց հետաքրքրվել պատերազմով։ Այլևս հեռագիրներն ու լրագիրներն կորցրին նրա աչքում իրենց նշանակությունը։ Միակ կենդանի կապը, վոր կար նրա և սոսկալի արհավիրքի միջև, կտրվեց։ Իսկ համայնական վիշտ կրելու համար նրա սիրութ տեղ չունի իր մեջ։ Այնքան խոշոր ե անձնականը։ Յեվ, խորառուզիւլով ինքն իր մեջ, նա չդիտեր՝ ի՞նչ ե կատարվում դրսի աշխարհում և չեր ել ուղում իմանալ։ Միակ բանը, վոր նրան ըզ-

բաղեցնում եր, բացի վշտից, յերեխաների վիճակն եր։ Հարկավոր ե նրանց ապահովության մասին հոգալ։ Յերբ նրա հայրը գնաց ուր հարկն ե տեղեկանալու, թե ի՞նչ կարգադրություն կա սպանված զինվորականների վորբացրալ ընտանիքների վերաբերմամբ, պատամխան ստացավ, թե տակավին վոչ մի կարգադրություն չկա և թե բարձրագույն իշխանությունն անշուշտ վորեն հրաման կարձակե շուտով... Մագդալինան չբողոքեց։ Նա արեց այն, ինչ վոր կարող եր անել. կրծատեց իր ծախքերը մինչև մինիմում։ Նա դադարեց տնից գուրս գալ, ծանոթներին չհանդիպելու համար։ Նա դադարեց այցելել նույնիմուկ իր ծնողներին ու քույրերին, վորոնց կարեկցությունը նրանց ավելի գրգռում եր, քան սփոփում։ Նա չեր թագահնում իր դժկամակությունը, յերբ մերձավորներն այցելում եյին իրեն։ Նա մեծացնել տվեց լեռնի ամենահաջող լուսանկարը, վոր նկարած եր գեռ ամուսնությունից առաջ, գրեց ու շրջանակի մեջ և կախեց պատի վրա, լեռնի գրասեղանի վերել։ Յեվ դա յեղավ նրա ամենասիրելի ընկերն ու խոսակիցը։ Յերեխաներից թագուն նա նոտում եր այդ լուսանկարի առջև, յերբեմն ժամերով նայում եր, նայում հառաջում, արտասկում մեղմիկ, զարձյալ նայում։

Մերթ ընդ մերթ նկարն այնքան կենդանանում եր, վոր, կարծես, շունչ եր առնում և ձգտում եր գուրս գալ շրջանակից։ Այդպիսի բովեներին Մագդալինայի հոգու խորքից բարձրանում եր կասկած, հույսի նման մի բան, և պաշարում նրան։ Թվում եր նրան, վոր ինքը և ամենքը մոլորության մեջ են, վոր կատարում են հանցանքի հավասար մի սխալ, կարծելով թե լեռնը մեռած է, վոր խելառություն եր այդպես շուտ, առանց ստուգելու, հավատալ նրա սպանմանը։ Բայց անցնում եյին բովեները և ցնորքն չքանում եր՝ տեղի տալով կատարված իրողությանը։

Մի անդամ, — պատահեց այս բանը հոգեհանգստից մի ամիս անցած, — Մագդալինան ննջարանում կրտսեր յերեխայի համար շապիկ եր կարում, յերբ Գարիկը ներս վազեց՝ գոչելով։

— Մամա, այնտեղ մի մարդ ուղում ե քեզ տեսնել։

— Ո՞վ ե։

— Զհարցրի։

Մագդալինան կարը դրեց մի կողմ, հանդարտ վեր կացավ և գուրս յեկավ սենյակից։ Պատշգամբի վրա կանգնած եր մի անծանոթ մարդ՝ «Կարմիր Խաչ» հողագույն համազգեստով, աջ թեր վրա խաչի նշանը։

— Ի՞նչ եք կամենում,—հարցը Եղ Մագդալինան:
 — Տիկին, դոկտոր Վարագդանովը ձեզ խնդրում ե շնորհ բերել իր մոտ:
 — Ի՞նչ գործ ունի ինձ հետ:
 — Չգիտեմ,—պատասխանեց անծանոթը, յերեսը մի կողմ դարձնելով և նկատելու աստիճան շփոթվելով:
 — Ասացեք դոկտորին, վոր յես ժամանակ չունեմ տանից դուրս գալու, մանավասդ, վոր ծանոթ չեմ նրա հետ:
 — Բայց, տիկին, գործը շատ կարևոր ե և ձեզ ե վերաբերում,—արտասանեց անծանոթը նորից շփոթվելով:
 Մագդալինան նայեց նրա յերեսին խորը հայացքով, զգալով ինչ-վոր տարօրինակ կասկած:
 — Ինչպես յերեսում ե, դուք գիտեք՝ ինչու համար ե ինձ կանում դոկտորը,—ասաց դրական յեղանակով:—Ինչու յեք թագցնում, ասացեք:
 — Տիկին, գուցե գիտեմ, բայց ինձ իրավունք չե տրված առելու: Յեկեք և ինքներդ տեսեք: Յես արդեն կառը եմ բերել ձեզ համար: Կես ժամում նա մեզ կիսցնի հիվանդանոց:
 — Շատ լավ,—արտասանեց Մագդալինան, արդեն զգալով, վոր պիտի լսի մի անսպասելի լուր՝ կամ շատ տիսուր, կամ շատ ուրախ: Ճանապարհին նա այլևս վոչ մի հարց չտվեց, վախենալով՝ լսել մի վատ բան... Կես ժամ անցած քաղաքի ծայրում կառը կանգ առավ մի մեծ շինության առջև, վոր բաղկացած եր միքանի մասերից: Կարմիր խաչ կրողը նրան առաջնորդեց ընդարձակ բակով դեպի մեկը այդ մասերից և ինդրեց ներս մտնել: Ըստունարանում, ուր նստած եյին միքանի կանայք տիսուր դեմքերով, ձեռներն զանազան կապցներ, նրան դիմավորեց մի բարձրահասակ մարդ շատ նիհար դեմքով և ալեխառն միբուքով:
 — Ներեցեք, տիկին,—ասաց նա, վոր ինքը դոկտոր Վարագդանովն եր,—վոր յես ձեզ նեղություն պատճառեցի, բայց այդ իմ կամքով չեր, այլ... Դոկտորը մի վայրկյան կանգ առավ, տատան-կամքով վեց, ապա իր չոր-չոր ու յերկայն մատներով ուղղելով ակնոցը՝ վեց, ապա իր չոր-չոր ու յերկայն մատներով ուղղելով ակնոցը՝ ավելացրեց.—Նախքան մյուս սենյակն անցնելը, պատրաստվեցեք ավելացրեց:— Այսիքան մյուս սենյակն անցնելը, պատրաստվեցեք ավելացրեց:— Այսիքան մյուս սենյակն անցնելը, պատրաստվեցեք ավելացրեց:— Այսիքան մյուս սենյակն անցնելը, պատրաստվեցեք ավելացրեց:

— Բայց, դոկտոր, դուք այդ ուրախ լուրն այնքան ել ուրախ չեք հաղորդում ինձ...
 — Մենք, բժիշկներս, պարտավոր ենք նման դեպքերում թագցնել և մեր ուրախությունը և մեր տիրությունը,—խույս տալով պատասխանեց դոկտոր Վարագդանովը:
 — Յես ուղղում եմ նրան տեսնել իսկույն և յեթ,—գոչեց Մագդալինան, քայլերն ուղղելով դեպի դռները:
 — Մի բոպե,—արգելեց բժիշկը, բռնելով նրա թեր: Նա գնաց հարեան սենյակը, դռները ծածկելով իր հետևից: Մի բոպե չանցած, վերադառնալով, ասաց,—Այժմ կարող եք գնալ, միայն խոսք տիկին, վոր ինչ վոր ել տեսնեք՝ պիտի զսլեք ձեզ և աշխատեք չսաստկացնել ձեր ամուսնու հուզմունքը: Տալիս եք ազնիվ խոսք:
 — Տալիս եմ,—ասաց Մագդալինան դրական յեղանակով: Դոկտորը, դռները բաց անելով, ասաց.
 — Մահք:
 Սենյակը, ուր մտավ Մագդալինան, բավական ընդարձակ եր և խիստ լուսավոր: Յերկու լուսամուտներից մեկի առջև, ձյունի նըման ճերմակ ողատի տակը դրած եր մի մաքուր անկողնակալ: Ներս մտնելով, Մագդալինան մի վարկյան նայեց աջ ու ձախ, առաջին պահ վոչինչ չնկատելով լույսի առատության պատճառով: Գթության քույրը, վոր լուռ կանգնած եր լուսամոտի առջև, զլիսի նշանով ցույց տվեց նրան անկողնակալը: Մագդալինան մոտեցավ: Այստեղ պառկած եր կենը՝ ճերմակի վերմակով ծածկված մինչև կոկորդը: Նա լուռ ժամանակ այն վարկյանից, յերբ Մագդալինային տեսավ: Յեթե չիներ այն բնորոշ ժամանակ առջև, վոր յերեսն հանեց նրա գեղեցիկ առամների շարքը, հաղիվ թե Մագդալինան առաջին պահ նրան կեննի տեղն ընդուներ, այնքան կերպարանափոխվել եր նա: Նրա Միբուքը բավական յերկարացել եր և տեղ-տեղ ճերմակել: Նրա մի ժամանակ լիք-լիք, զվարթ դեմքը նիհարել եր, գունատվել և ծածկվել եր խորը խորշերով: Հիշելով դոկտոր Վարագդանովին տված խոսքը, Մագդալինան ճիգ արավ և կարողացավ զսպել այն սուր ճիչը, վոր պատրաստ եր դուրս ժայթքել ամիս ու կեսվա տառապանքներից հոգնած կրծքից: Նա միայն արտասանեց:— Կեն... Յեվ թեքվելով, համբուրգեց նրա հետ:
 — Նստիր,—ասաց կենը առաջվա խռպոտ բարիտոնով, վոր սակայն մի փոքր վայրենացած թվաց Մագդալինային: Գթության քույրն աթոռը մոտեցրեց և ինքը շտապեց դուրս գալ սենյակից: Մագդալինան նստեց:
 — Դեհ, պատմիր, այդ ինչ սոսկալի թյուրիմացություն եր,—

արտասանեց նա հուզված ձայնով, հազիվ կարողանալով յերևալ առի:—Յես քեզ սպանված ելի համարում:

— Գիտեմ, դու մինչեւ անդամ հոգեհանդիստ ես կատարել և սպազգեստ հագել: Բայց, նախ և առաջ տան, յերեխաները առնդշ են:

— Առողջ են:

— Իմ սպանման լուրը,—ասաց Լեռնը, միքանի վարկյան լուրց հետո,—այն հասարակ սխախերից ե, վոր շատ սովորական են պատերազմի, մանավանդ այդպիսի պատերազմի ժամանակ:

— Իսկ դու, վոր գիտեյիր, թէ ինչ վիշտ կարող ե ինձ պատճառել քո մահվան լուրը, ինչու չերքեցիր:

— Յես սխախ իմացա այն ժամանակ, յերբ հերքելու ուշ եր, վորովնետեւ իմ հերքումից առաջ յես կարող ելի այստեղ դալ:

— Բայց ինչու վերջին ժամանակներու նամակ չեյիր զբում:

— Չեյի կարող գորել, վորովնետեւ շարունակ կոխիների մեջ եյի:

— Դու ծանր ես վիրավորված:

Լեռնը առատնվեց իսկունի պատասխանել: Հայացքը նեսացներով Մագդալինայից՝ նա արտասանեց:—

— Իմ վերքերն արդեն բուժվել են:

— Բոլորովին...

— Բոլորովին,—պատասխանեց Լեռնը ծանր հառաջելով, և նրա աչքերը լցվեցին արտասուրով:

— Բայց ինչու համար ես այստեղ պառկած: Ինչու ուղղակի տուն չես յեկել: Լեռն, դու արտասվում ես, ինչ գաղտնիք ունես, ասա:

— Վոչինչ, վոչինչ,—արտասանեց Լեռնը, աշխատելով ժպտալ արցունքի միջից:

— Վոչ, վոչ, ասա: Կա մի բան, վոր դու ինձանից թագցնում ես: Յես զգում եմ այդ: Դու ինձ խարել չես կարող: Ասա, յես ուշ զում եմ իմանալ, ինչ ել վոր լինի, հասկանում ես, ինչ ել վոր լինի:

— Խոսք տուր ինձ, վոր չես զզվի ինձանից, ինչ վոր ել տեսնես:

— Լոկիր, դու վիրավորում ես քեզ և ինձ:

— Բայց արա մի փոքր կուրծքս:

Մագդալինան զգուշությամբ մի փոքր հեռացը Լեռնի կրծից վերմակի ծայրը: Հողագույն կիտելի վրա յերևաց մի սպիտակ խաչ:

— Այդ ինչ խաչ ե, —հարցրեց Մագդալինան:

— Սուրբ Գեորգի չքանշան:

— Դու չքանշան ես ստացե՞ր, այն ել Գեորգի, աս, —դոչեց

Մագդալինան ուրախանալով, —դրա համար յես քեզ միայն համբուրել կարող եմ:

Յեվ, թեքվելով, յերկու անդամ համբուրեց Լեռնին, վոր աղերսական հայացքով նայում եր նրան:

— Ուրեմն դու հերժու ես, —ավելացրեց նա հուզված:

— Այս, —արտասանեց Լեռնը, ծանր հառաջելով, և նրա աչքերը լցվեցին արցունքով:

— Բայց դու, կարծես, ուրախ չես, պատմիր Լեռն, ինչու արժանացար... այդ պատվին...

— Փոքր ել ցած քաշիր վերմակս և դու կիմանաս ինչպես...

Մագդալինան վերմակն ավելի ցած քերեց, նայեց: Նույն վայրկյանին մի սուր և յերկարատեւ ճիշ դուրս թուավ նրա կրծքից: Երագուսը անգորացած ընկավ Լեռնի կրծքի վրա: Կիտելի թևերը ուսերից ցած ելին ընկած, դատարկ, ինչպես լաթի կտորներ: Լեռնի կըները մինչեւ արմատ կտրած ելին:

Ներս վագեց գթության քույրը և Մագդալինային ուշքի բերեց:

— Դեն պետք ե շպրտել այդ անսամոթ ծաղրը, փողնց, փողնց, —դոչեց Մագդալինան, և ուժգին թափով պոկելով Լեռնի կրծքից չքանշանը, ձգեց դուրս լուսամուտով:

Լեռնը հեկեկում եր մանկան պես:

ԴԵՐ. ԳԵՂԻՔՆՅԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏՈՒՄ

— Վաշտ, կանգնի՞ր:

Վաշտը վոչ-ոկթմիկ թափով գաղարեց մասց ճամակի վրա: Միակ աղմուկը ամայի շրջակայքում:

Նա յել դադարեց:

Մսաց միայն զինվորների հեռը, վոր հիմի ավելի պարզ և ամբողջ գիտչում եր շրջակայքի լուսթիանը:

Սպաները դուրս յեկավ ճամբից ու քամակները զիմհար տալով խոշոր քարերին՝ սկսեցին անխոս ծխել:

Զինվորները կապտած ու մրկված յերեսները թագցրել են բաշմիկների մեջ ու չեն խոսում, ինչպես մեռելատանը:

Անձրին սկսեց փափար:

Ցուրտ ե:

Յերեմի հեռից, կարծես մի խարխուլ մեծ շինության ոճորքից, մի քար և ընկեռում հատակին ու խուլ թնդում:

Հետո արձագանզը՝ դու-սւմմ... քայքայվում եւ ու հալվում ու-
դի մեջ:

— Ա՞մպ ե, —խոսեց վաշտի մեջ մի ձայն:

— Դու եղան իմացի. —պատասխանեց մի ուրիշ չարաժպիտ
ձայն:

Յեվ ինչի՞ ին սպասում...

— Սվինը վեր բռնի, եյ, —մըթմըթաց մի զինվոր իրենից ա-
ռաջ կանգնածին:

Դիմացինը, վորին «Եյ» ասաց, դրստեց իր ուստղինից կախ
ընկած հրացանի փոկը, հանդիստ նայեց աչքերին: Սա յել նրա աչ-
քերին նայեց:

Յեվ ուրիշ վոչինչ:

«Եյը» մեղմորեն նևաց ու կուզը կրկն դուրս զցեց: Հետո
սկսեց կողքանց նայել անձրևաջրի բարակ թելին, վոր սողալ սկսեց
ճամպի արխի միջով:

Բարակ անձրէը իր միլիոնավոր մատներով թակում եր զին-
վորների վերաբկուները: Նա մի խուլ, մտածկու պատմություն եր
անում: Եյը ախորդելով եր լսում նրան: Դա նրան ինչ-վոր քաղցր
բան եր հիշեցնում: Հասկանում եւ սարի դադան, վորի թաղիքին
անձրէը մտերմորեն թխթիւկացնելով կես-գիշերային լոռության մեջ
նինը ե բերում մարդու աչքերին:

Վորտեղից ել միտն, ընկան այդ անդած-կորած բաները: Թսան
տարուց ավելի յե սարի կյանքից հեռու՝ ընկած ե յեղել քաղաքնե-
րը: Իսկի միտն ել չի, թէ ինչպես ե ապրել: Սուաջ կառապան եր
Դիլիջնի տրակում, հետո գիշերապահ թիֆլիսում: Վերջերս ել
վեց տարի յե՝ հնոցպան եր Բագու՝ Սպիտակ քաղաքի մի յուղի
գործարանում: Ամեն տեղ իր պաշտոնը քշվածությունն ե յեղել:
Գյուղերից գուրս, աներից դուրս, գործարանի անկյունները: Ու քր-
սան տարի յե՝ նստում ե, իր մտքերի յետե, ընկնում: Դրանից ել՝
կարգին խոսել չգիտե: Հենց վոր զալիս ե «պերեկիչկան», և յեն-
թասպան հասկում ե նրա անվան և պառողա յե լինում, զինվորնե-
րը հասկանում են, վոր դա նա կլինի. բոթում են կողքին ու նա
գեմ ընկնելով ու ֆիզիկապես արտասանում ե.

— Յա (յես):

Նրա ազգանունը վոչ վոք ել չսովորեց: Ուստի և ամենքը «Եյ»
են կանչում նրան:

Հիմա, իբրև «խաչակիր»՝ պատերազմ ե զնում:

Դեռ ականջի մեջն եր իր հնոցների դղրդոցը՝ վոր նրան պո-
կեցին աշխատանքից, բերին միքանի ամիս զինավարժեցրին, վոր

առանեն պատերազմ: Ուշը մնաց իր հնոցների կողմը — դործը մնաց
կիսատ: Մենակ գործն ե. տունը մնաց անտեր՝ իր կնոջ ու յերե-
խայի հոգսով: Հետո քաղաքը, մարդիկ, հազար ու մի բան ու գործ..
Աշխարքը:

Միտքը գնում ե դեպի յետ:

— Քայլերով առաջ...մարշ...

Վաշտը նորից կենդանացավ և հուղարկավորների պես շարվժեց:
Խը ըթ...խը ըթ... խը ըթ...

Կոշիկները ոկթմիկ շեշտով խոսում, խաղ են անում քարերի,
կոշտերի հետ:

Հիմի յել Եյը կառչեց այդ խրթխրթոցին: Հաճելի յե ինչվոր:
Մտիկ ե տալիս առողջ զինվորների կարմրած ձեռքերին, շղթունք-
ներին, լսում ե նրանց թարմ շնչառությունը: Հաճելի յե: Ինչ-վոր
հույս կա դրա մեջ: Հետո կծկվելով այդ ձայների հաճույքի մեջ
մտիկ ե տալիս խոզան արտերին:

— ԶԵ, «սրանք» ել են վարում, ցանում: Աշխարքի մեջ մի
խելք կա: Պատերազմը չի տեի յերկար, չի լինի:

Անա զաշտի հեռուներից, կարծես գետի տակից գուրս յեկավ
մի գյուղ: Իրիկվան ստվերներ են կախ նրա գոներից ու չարդախ-
ներից: Կարծես շների հաջոց: Կարծես ինչ-վոր մարդիկ են դը-
ների առջե

Խըճիթների կերպարանքներ յերկացին, վոր նոթերը կիտած
մտիկ տվին խավարի միջից:

Կայան ե:

Պահակներ են ցցված ճամպի յեզրին:

Ախոռներից մարդիկ յելում մուտ արին: Վախկու լույսերը ծրե-
րակեցին գոների արանքից:

Վաշտը կանգ առավ: Իրենց դունդը այստեղ եւ Յերեկի իրենց
եյին սպասում: Զինվորներ գուրս յեկան ախոռներից. Խոսեցին: Ա-
սում են վաղը յելույթ ե. գնում են խրամատ:

Զինվորները դողդղալով մտան ներս, վար բերին հրացաններն
ու պարկերը: Վերջապես հանգիստ ե: Զեռաց միաց ոջախը, և ծու-
խը լցրեց խրճիթը:

Ու թեև հոգնած եյին, բայց չպառկեցին քնելու, այլ խոնվե-
ցին խրճիթում և ձայները բարձրացնելով՝ սկսեցին խոսեր կարգա-
գրել, հարմարվել:

Թեյ հանդիս յեկավ. Թթու հացի հոտ. Ըսթում են:

Խըճիթի մի մասը, վոր անասունների բաժինն եր՝ մասուքնե-
րի առջե ձիեր եյին կապած: Ախորժելի հասարակություն:

Բոցը ոչախում կշրտաց, թենքը թափ ավեց, զինվորները կիւսաբոլոր նստեցին դիմացը:

Չախները բարձրացավ.

— Եյ, Դաթիկո, «ջուրը» հանի:

— Չկա, գնա Ռաստով:

— Աբա, Տիմոֆեյ, շաքարը մի դեսը:

Տիմոֆեյը հանում է կեղտոտ շաքարի քսակը և մեկնում է դիմացինին:

Նոր է վորոշվում զինվորների կերպարանքը:

Վաշտը մի խայտաճամուկ խառնուրդ է ոռւմների, հայերի, մըացիների, լեհերի....

Կրակի ուրախ չնթոցին խառնվեց զինվորների ուրախ զրույցը:

Ուրախ են նաև նրանց ստվերները, վոր ահա թուչկուում, պարում են սեացած պատերի վրա:

Թեյը ժպառում է կապույտ եմալե գալաթների միջից ու չերացնում:

Մի շիրակեցի մեջը զբել է պատին և վոտները մեկնել:

— Հակն, ես դրուստ մեր տունն ե: Այ, են մեկը տեղովը մեր տոլաքն ե:

Ու ձեռը մեկնում է դիմացի պատի խորշը:

Հակն, վոր քթի տակին յերգում է, գլխով հավանության նըշան է անում:

Կարծես տեսած լինի շիրակեցոնց տան տոլաքը:

Շիրակեցին, ժպառում է և գլուխը թափ տալիս.

— Տերը փախել ե, հը, Հակո:

Հակն կոնատակն է քերում ու կլկացնում:

Եյը նրանց է լսում: Յեկ ուրախ ե: Այս խոսքերի վոխանակությունը նրան անասելի դուր է դալիս:

Նա յել է ուզում մի բան ասել այդ տան տիրոջ մասին, վոր փախել ե: Բայց միայն հազում է և կոտրած ժպիտով նայում է շիրակեցուն:

— Տղերք, տում են ես կողմերը լավ հաց և ըլում, — ծոծրակը քորելով հորանջում է Եյի հարեան Միկիչը:

Յեկ դառնում է ոռւսերեն՝ իր կողքին նստած մի կարմրամուք զինվորի:

— Շլվշ կուզմա, ես գյուղերում շատ լավ հաց և ըլում:

Եյը մտիկ տվեց կուզմային: Սա շուռ տվեց իր պղնձագույն կլուխը գեպի խոստկիցը, և մորուքի կարմիր լավան կասկադներով թափեց ուսագլխից:

— Նու, բռատոկ, եստեղի հացով մեզ չես զարմացնի: Ես տարի մեր կուբանում հացը այ մինչեւ եստեղ եր—ցույց ե տալիս իր լանջը ախակես վատահ ու լախ, կարծես հենց ինքը տափաստան յերկերը լիներ: Հետո կոշացած մատները սյունաձև բռնելով գավաթի տակին՝ տարավ շուրթերին ու ֆըռթ անելով ներս քաշեց թեյը:

Զբույցը մեծացավ: Սկսեցին խոսել հողի հատկություններից: Հնձից: Անասուններից:

Կարծես հիմա պիտի քաղցր քնեն և վաղը գնան դաշտային խաղաղ աշխատանքի:

Միայն Տիմոֆեյը տիսուր է:

— Այ, գուք հիմի յերկի հաց ունեք ձեր տանը: Ամա տեսեք, վոր իմ կսիկը, ախակեր ջան, ես ըովեյիս մի կտոր հաց ել չունի: Ինքս հյուսն եմ: Վեց ջան յերեխեք թափել եմ տանը՝ յեկել: Կերակը տեսնեմ:

Վոչվոք չի պատասխանում:

— Ո՞ւմ համար ե ես զարմաղալը—չեմ իմանում: Ամա արի տես, վոր ուրիշը կռիվ ե աարքում՝ մեջ տեղը մեր ժողովուրդն է կռվում:

— Դու ինչ ես եստեղ բերանդ շաղ տալիս,—մըթմըթում է մի մոայլ զինվոր, վորը թեք և ընկած և աչքերը հառել ե առաստաղին,—մի ե տանը ժառանգություն թողել իր կնկա համար: Թող գնա աշխատի: Թագավորական ծառայություն ե, հարսանիք չի:

Բոլորը մոայլվում և բարկանում են Տիմոֆեյի վրա, թեն գիտեն, վոր սա ճշմարիտն է խոսում: Յեկ մըթմըթան զինվորն ել հենց զրա համար ե քըթմնջում: Նա ել համաձայն է Տիմոֆեյի հետ:

— Քնի, քնի, — խեթում է նրան Տիմոֆեյը, — յես սոված աշխատավոր եմ, դու յել կուշտ գեղացի չես:

Լուսմ են մի պահ:

Պառկած ե Եյը, բայց քունը չի տանում: Մարմինը տնքում է հոգնածությունից: Աչքը փակ՝ ականջ ե զնում: Ախոսի հոտը ախորժելի յե զալիս նրան: Հարազատ, խաղաղ մի բան կա դրա մեջ: Մսուրքներից՝ զըրթ-զըրթ, լսվում է ձիերի ուտելու ձայնը: Դա հիշեցնում է հեռուներում թողած կյանքը, խաղաղ կյանքը: Դա վոչ թե ախորժելի, այլ ե սրտառուչ ե: Յերբեմն ձին տոռջ սմբակով պինդ գոփում է գետինը:

— Երնակ քեզ, — մըթմնջում է Եյը և գառնությամբ ժպառում:

Ուզում է ավելացնել, թե «գու զիիտես, վոր պատերազմ ես յեկել», բայց միտքը չի ձևավորվում:

Ու ընկնում է մտքերի յետե:

Աչքի առաջն է գալիս իր տունը: Հիմա քնած են՝ իր յերեխան

ու կինը: Յեկ չգիտեն, վոր ինքը այս հեռու յերկրի մի ախոռում արթուն պառկած՝ նրանց վրա յե միտք անում:

Ահա իր փակ աչքերի դիմաց ուրվագծեր են որորվում: Իր յերեխայի յերկար թարթիչները խաղաղ քնած աչքերի յեղբներին: Գիշերվա ճրագը պլազում ե, առկայծում, և լույսը դողում ե նրա դեմքին: Ահա յերեխայի և անկողնի ստվերը որորվում ե պատի վրա:

Եյի յերեակայությունը սրվում ե: Ահա իրենց գործարանի հընոցները: Բոցերը պտույտ են գալիս իլիկների պես ու մղվում են հնոցի պառկած խողովակների խորքը: Փոնչում են նրանք, թուչում, գղրդում են կաթսաներն ու խողովակները: Եյը պարզ տեսնում ե: Այ, տես, գուրս յեկավ գործարանի ընդարձակ բակը: Տեղ-տեղ ինչ-վոր շողիներ են ֆոտֆոտում, ինչ-վոր խողովակներ են չըխկացնում:

Ահա և խաղաղ ծովը ծղվում ե ափին: Հեռուն մթնում ե Քիբի-Եյբաթը: Դեպի աջ քնած ե խորհրդավոր Բագուն...

— Եյ, վեր կաց, — գոռում ե ընկեր հնոցպանը վոչ իր ձայնով և բարկացած:

«Վախտ» ե, վախեցած հարցնում ե Եյը ու վեր թուչում:

Զոկապեան ե: Նա յե բոթել վոտքով:

Շշմած, գողալով վեր ե կենում Եյը:

Կեղտոտ մի յերկինք ներս ե նայում յերդիկից: Դեղնած խոտեր են դողդողում ու ծեծվում այդ յերդիկի յեղբներին:

Դուրսը քամի յե:

Հավաքվում են:

Զինվորները չար ու ներվային են: Այնպես են մտիկ տալիս ամեն մեկի վրա, այսպես են խեթում սրան ու նրան, կարծես նա յե այս ամենը սարքել:

Վերջապես շարժվեցին:

Վոչվոք չի խոսում: Հրացանները գրկած, ձեռները թերերի մեջ՝ կանգնել են ու սավել: Թշնամու յերկրի քամին հաջում է դամմիու պես, կծում, վանում ե նրանց,

Դիմացը ժանդուար բլուրներ են: Ասում են՝ այնտեղ են խրամատները: Այն կողմից գնդացիներ են չոր-չոր հաջում: Եյը աւականց ե դնում, և թվում ե, թե ուա արագիլի կտուցների կափկափոց ե: Ծանոթ պատկեր, իրենց գյուղի արագիներ... բայց պատկերը վախով ցնդում ե: Դիմացի բլուրներում «գործ» կա, անախորժ ծանը մի գործ:

Ահա դիմացի բլրից, ուր գնացել եր իր հարեան վաշտը փոխվելու, իջնում ե մի ուրիշ վաշտ:

Նրանք գալիս են հեղեղատի միջով, հատ-հատ, դանդուդ:

Վաշտը լարվեց: Նրանց ե նայում:

Ահա ծանրաքայլ մոտեցան նրանք: Վոմանք կազում են: Նըրանք գալիս են ու բոլորովին լուռ անց են կենում սրանց կողքով:

Վերարկուները ճմլած, ցեխատ, իրենք մի տեսակ փտած, սըմքած: Դեղնած մեռեները: Յեկ կարծես դեմքեր չեն, այլ դիմակները Այդ աչքերը, իբրև արդեն մահը տեսած աչքեր՝ ինչ-վոր տարորինակ անտարբերություն ունեն իրենց փայլի մեջ:

Ապակու պես են փայլում:

Ահա թե ինչպես են նայում «այնտեղից» յեկածները:

Բայց ինչ կա «այնտեղ»...

Մտիկ ե տալիս նրանց Եյը և հասկանում ե, թե ինչ կա «այնտեղ»:

Յեկ ծանը մի ձեռ քաշում ե նրան «այնտեղ».

— Դեպի հեղեղատը, մարշ...

Վաշտը շարժվում ե դեպի հեղեղատը, վոր այնտեղից բարձրանա խրամատների շարքը:

* *

Եյին հետախուզության ուղարկեցին մի խումբ զինվորների հետ: Պատահաբանը յեղավ դա թե հետախույզ կոմանդի քմահաճ անփութությունից—բայց յեղավ:

Մթնշաղ եր, վոր ճամպա ընկան:

Նաև շեղվեցին դեպի ձորակը և անխոս իջան ներքեւ:

Պետք, ինչ-վոր իր մաքի մարդ, հրամայեց մի փոքր սպասել ժայռի տակին:

Ամայի ձորակ: Ամեն ինչ անծանոթ, դարանակալ, թշնամի... Գետակի ափին ժայռերի խոշոր, մամոռու բեկորներ եյին տիրում ու անհյուրընկալ նայում եյին:

Վոչ մի ձայն:

Առվակներ միայն քրթմնջում:

Յեկ ուրիշ վոչինչ:

Շարժվում են առաջ:

Ահա և մի մեծ ժայռի բեկորի տակին մի դիակ: Մի թեր փոռի տակ, մյուսը ցեխի մեջ՝ ընկած ե նա բերնքսիվար ու յերեսը շրջել ե այս կողմը: Քայքայված ե նա գանգի գուռը—բերանը լուծված, թափված:

Ժնգնագալի ծիծաղը ատամների մեջ, աչքի մեկը ճոռթված մյուսը կիսափակ՝ Եյին ե նայում:

Սա յել նայում ե նրան:

Ծանր, մահի հոտ ե գալիս նրանից:

Եյլ ուզում ե խոսել. դարձյալ խոսք չի գտնում ասելու, բայց թէքով բոթում ե զինվորներից մեկի արմունկին և ցույց ե տալիս դիակը:

— Կորցրու, —թքում ե սա և յերեսը շուռ տալիս:

Նստեցին մի փոսի մեջ: Մեկը պլուխը դուրս հանեց, սկսեց դիտել չորս կողմը: Իսկ պետք սկսեց կարգադրել: Բայց և շուտ շուտ կարգադրությունը փոխում եր խորհրդակցության: Ավելի շատն այն եր, վոր նա ինքն ել վոչ մի ծրագիր չուներ: Յերբեմն նա կիսածայն խոսում եր մի զինվորի հետ, վորը ըստ յերեսութին նրա պես ծանոթ եր դիրքին ու հանգամանքներին: Խնդիր եր գրված՝ գտնել փշալարերի կողքերից մի այնպիսի ճամպա, վոր կարելի լիներ գիշերը մոտենալ և կտրատել: Յեվ յերեկի պետք դիտեր, թե վորքան են մոտ կամ հեռու վտանգից՝ ըստ յերեսութին իր ոգնականի հետ հանգիստ եր:

Հանկարծ մթան մեջ մի խուլ ձայն սողաց ու թուավ: Թիթիոց:

Պետը թնդաց տեղից: Սա անակնկալ եր արդեն: Ականջ ե դնում: Ի՞նչ իմանաս, ո՞վ ե, ի՞նչ ե:

Պետը գործում է խորամանկորեն, զգուշ: Բայց նրա ամեն մի շարժումը, վճիռը Եյլն թվում են անսիրա, մեքենայի պես անսիրա: Եյլ վախենում է նրա ամեն մի խոսքից:

Յեվ ահա պետի մոխրագույն ապակե աչքը կանգ ե առնում Եյլ վրա: Ապա նայում ե իր ոգնականին: Սա ել խորամանկորեն ժպտում է և հասկանում է պետին:

Պետն ուզում ե վտանգն ստուգել: Բայց կարող ե «ծախս» լինել:

— Լսիր, Եյլ, գնա մի հարյուր քայլ այս ուղղությամբ և ալանջ դիր:

«Այսպես ապահով ե»—մտածում ե նա և նայում իր ոգնականին:

«Ճիշտ ե»—մտածելով պատասխանում ե նրան ոգնականը և ժպտում:

Ոգնականը, իհարկե, խղճում ել ե նրան—դե մարդ ե, պետք կդա վտանգավոր վայրում: Բայց պետք ե նաև, վոր վտանգվելիս այդ մարդը վտանգվի:

«Անհրաժեշտություն»—մտածում ե նա և նայում ե Եյլն, վոր շփոթված դեռ կանգնած ե՝ ինչպես վոչխարը մսագործի առջև:

— Աշխատի մեզ չկորցնես,—պատվիրում ե պետը: Եյլ գնում ե:

Իսկ պետը ոգնականի և մյուս զինվորների հետ քաշվում են մեկդի, դեպի ձորաբերանը տանող ճամպան:

Հանկարծ բլրի ուսերից լսվեց հրացանի ճայթոց: Նա ճայթեց չոր ու ընդհատ՝ կարծես քամին ձեռը դրեց հրացանի շրթունքին և լոեցրեց: Հետո լսվեցին ուրիշ ճայթքոցներ են:

Եյլն այնպես թվաց, թե մեկը քաշեց իրեն դեպի վար: Անգայորեն նստեց:

Ինչ-վոր ստվերներ եյլն վազում բլրից. Նա մի շարժում արավ դեպի ձորակը, բայց հանկարծ վոտը զցեց մի փոսի մեջ, վորը հենց ուղիղ նրա կոռունկի յետևն եր, ու ընկավ մեջը:

Վազողները գետինը դոփելով անցան փոսի մոտից: Հիմա յել ճայթքոցները ձորակից լսվեցին: Յերեկի իր ընկերների հետ ընդհարում յեգագ: Բայց ահա միքանի ծույլ կրակոցներ են, ու ամեն ինչ հանկարծ լսեց:

Ի՞նչ պատահեց—Եյլ չհասկացավ:

Սպասում ե, թե ինչով կվերջանա կոկիր: Ականջ ե զնում: Հեռացան: Չպիտի գան:

Բայց ընկերները չեն դալիս:

Վոչինչ չի սկսվում առայժմ: Յեվ ի՞նչ պետի պատահի սրանից հետո: Չպիտե: Պիտի հեռանմ, միանմ իր ընկերներին, թե մաս այստեղ:

Ի՞նչ պետի կարգադրեն:

Ականջները թշում են և ծիածանի ողակներ են ալիքավորվում աչքերի մեջ: Փորձում ե վեր կենալ՝ զգում ե, վոր փորի աջ կողմն ու մի վոտը իրանը չեն: Կարծես մի գաղան սուր ատամները զցել՝ բռնել ե իրան վոտից և չի թողնում շարժվելու:

Նա վորոշում ե սպասել իր ընկերներին: Ու թեև յերկար ժամանակ անցավ, բայց Եյլ հանգիստ ե դեռ: Չե, կդան: Ի՞նչպես կբթողնեն մարդ այսպես անխնամ մնա այստեղ և վերքից մեռնի: Այն ել այսպես հեշտ, մենակ:

Յեվ նա հարցական աչքերը փոսի յեղբներին հառած, շուտ-շուտ վորում ե ամեն մի թվացող շարժում:

Վոչինք:

Միայն քամին ե գալիս և ոտար ու անկարեկից մռմռում:

Հետո թռչում ե, վստվստում սմբուլների մեջ, սրանք շաշում են բարակ մտրակների պես:

Յեվ մաս այդպես մնաց նա՝ աչքը փոսի յեղբներին, մինչև լույսը բացվեց:

Դարձյալ վոչվոք: Քամին ե միայն, վոր ինչ-վոր անհասկանաւ լեզվով խոսում ե քարերի ու խոտերի մեջ:

Այդքանը միայն:

Ի՞նչպես... մերեմն ամեն բան այսքանն եր: Վերջացավ:

Վոչ: Այդպես չի կարող լինել:

Յեվ նա շարժում ե անում, վոր վեր կենա: Բայց զուր: Ծանրացել ե արձճի պես: Ավելի գնալու. անդամ սողալու հնար չկա: Սաստիկ ցավը նրան իր ատամների մեջն առած՝ անշարժ պահում ե գետնին կպած:

Հիմա մենակ հնարն այն ե, վոր գտն և տանեն իրան:

Յեվ նա աչքերը հասուծ նայում ե գլխավերելը. Այն կողմը բաց ե: Յերեսում ե ձորակը: Ծովում ե քիչ և յերեսը շրջում դեպի նա: Զառիվայրին մի քար քիթը խողի պես տնկել առաջ ու նայում ե: Հեռուն, գետակից քիչ բարձր մի հին ավերակ ե մտորում: Մարդ, շունչ չկա այստեղ: Մահվան պատուհանները անթարթ նայում են այստեղից:

— Վայ թե իմն ել եստեղ պիտի հատներ,—մըմնջում ե խըռպոտ ձայնով Ելը ու ձայնը բարձրացնում ե.

— Ոգնեցէք, մարդ չկա...

Վոչվոք:

Միայն յերկնքում անկարեկից մի ամպ սառն լողում-գնում ե իր բանին:

Փակում ե աչքերը:

Պայծառ գույներով, ինչպես կենդանի իրական կյանք՝ իր բոլոր անցած կյանքը յետ ե գալիս և լցվում իր շուրջը. Յերեսույթի պես գալիս-անցնում ե իր մանկությունը, մոռացված դեպքեր են կենդանանում: Ահա ինքը իր առջև—փոքրիկ յերեխա՝ կոճի յե խաղում. դռանը, քարին նստած ե իր տատը, իրան ե նայում: Ահա սար են գնում: Անտառներ են ծխում ձորի մեջ: Ինչ-վոր լուսաբաց ե, ջրերը լույսերի պես թափում են մամրուտ ժայռից: Հետո արագ հոսում են քաղաքի փողոցները, տրամվայները, մագաղինները, իրենց գործարանը, Բալախանին, Սպիտակ քաղաքը, մագութի ու ցեխի մեջ վոտարոբիկ կանայք, վոր մագութ են քաշում կեղտոտ դույլերով:

Սև նավթահորերը: Հրդեհ: Շշակները լեղապատառ ճշում են: Բանվորները խելագարների պես խոնվել են կայարանի առջև, վոր շրջապատված ե բոցերով: Այստեղ պառկած ե հիվանդ Գյուքին: Նրան են ուզում փրկել: Ի՞նչպես են կտրատում իրենց, ի՞նչպես են մզգում դես ու դես, մագլցում պատերը, ցատկում կտուրներից, թուկերը նետում:

— Ուռանա—գոռում են կատաղի ուրախությամբ բանվորները, և հիվանդ Գյուքին աչքերը մարած, վոս ընկած, գլուխը ծռած մի կողմ, տանջալից հայացքով նայում ե գեսուղեն: Նրան թոկերով կապած վար են բերում կտուրից:

— Հայ գիգի, ընկերակիք...—Ծտի պես կթռչեցին իր մոտ և թևերի վրա կթոցնեցին իրան:

Բայց մւր են նրանք...

Սարեր, ձորեր, դաշտեր, ելի սարեր, ելի ձորեր ու դաշտեր...

Ուզում ե լաց լինել, բայց միայն գեմքն ե ծամածում: Արցունք չկա: Աչքերը փակում ե:

Ահա և իրենց գործարանի ճաշարանը: Նստած են ամեն ազգի բանվորներ: Դեմքեր, գեմքեր, դեմքեր... Բոլորը կենդանի, պարզ, ծանոթ: Նրանք ասում, խոսում են:

Ականջները գժժում են, ինչպես հեռագրի սյուները: Յեվ կարծես թոշում ե ողի մեջ, ու իր հետ սլանում են հազարավոր մարդիկ, քաղաքներ: Նրանք վշշում են գետերի պես ու հոսում, հոսում, հոսում...

Իր հնոցպան ընկերները—Մարտինը, Ստեփանը...

Ահա նրանք վագում են դեպի ինքը: Ահա յեկան, կանգ տուան իր մոտ: Գրկում են իրեն, վոր բարձրացնեն: Ու ինքը մասովի փաթաթվում ե նրանց վոտներին, արդքան ավետաբեր վոտներին:

Ի՞նչ եժան եր նայում նա իր ընկերներին, և ի՞նչ թանգ են հիմա նրանք:

Թանգ—կյանքի չափ:

Բայց ի՞նչպես՝ կյանքը մինչեւ այստեղ եր: Այսքանը միայն: Յեվ ուրիշ վոչինչ: Ի՞նչ անսպասելի բան:

Ահա իր վոտնատեղը, հողի թարմ փլվածքը, իերը ինքը ընկապ վոտը—իր կյանքի վերջին գործը: Դեռ մինչեւ յերեկ յերեկո նա կարողանում եր այդ անել:

— Իմ վոտի թափած հողը,—մտածում եր Ելը դառնությամբ—մինչեւ ենտեղ Ել ձեռս չհասնի, ենքան Ել չկարենամ անեմ...

Շատ բան ե ուզում ասեր բայց արդքան ե զուրս գալիս:

— Եղ ե,—խոսում ե նա բարձրաձայն—իմ ձեռիս ու վոտիս վերջին գործը: Սրանից գենը ել վոչ կրակ կվառեմ զավոդում, վոչ ել վոտ նորից կկարենամ եղանեղ դնել:

Ել յերբեք. յերբեք վերջին վոտնատեղով չի վերադառնա դեպի կյանքը: Յետ գնալ չկա:

Այստեղ կյանքն եր, մի տեղ կա գնալու—գեսլի մահ:

Հիմի մի գործ ունի նա—մեռնել: Կյանքը վերջացավ: Բայց ի՞նչպես պիտի մեռնի: Ինքը մեռնի և ինքն ել տեսնի՝ այդ: Ինքն 656—20

ել հիմի մի կմախք ե դառնալու՝ աչքերը ճոթուած, ատամները բաց,
ինչպես այդ դիակը, վոր յերեկ տեսավ ճորակում...

Չի կարող լինել այդ: Վոչ: Ուրիշ բան թող լինի:

Նոր զգաց միայն, վոր «կենդանի, ժամանակ, ամբողջ կյան-
քում նա հանդիսաւ եր, և դա նրանից եր, վոր միշտ մի նեցուկ ու-
ներ.—Հույսը: Հույսը կենդանի մարդ եր, միշտ իր հետ, միշտ իր
սպասին:

Հիմա այդ կենդանի եյակը, այդ միշտ պատրաստ նեցուկն ին-
քը դիականում եր իր առջև, իրենից առաջ:

Չե, դու են ասա—ուրեմն ել իսկի՞ չի պատահի, վոր մեկը
գա իր գերեզմանը փնտուելու: Գործերը մնաց կիսատ, յերեխան չի
մեծացել, տունը ամայացավ: Ուրեմն վոչվոք և վոչ մի ժամանակ
չի ցույց տալ իր տեղը, թե՝ «ահա եստեղ ե թաղված»:

Սառը քրտինք ե տալիս վրան:

Ու սրտնեղում ե.

— Ողնեցեք, մարդ չկտ...—Գոնե մի մարդ անցնի, իրան տես-
նի: Թշնամին թող գա: Նա յել մարդ ե: Գաղան թող գա:

Յեվ զգում ե, թե ինչ մեծ բան ե մարդը, ընկերները, աշխար-
հովի կյանքը: Ի՞նչ բան եր մարդկանց մեջ մեռնելը—խաղ ու պար:

Մի տանջալի պատկեր այլակերպվում, շարժվում ե աչքի դիմաց:

Նա մեկ բացվում ե, ժպտում, մեկ փակվում: Իր յերեխան՝
աչքերը գարնան որվա պես ուրախությամբ լի:

Վիրավորը մտովի փաթաթվում ե նրա վոտներին և չոր, կաշ-
վացած շուրթերով համբուրում: Ու մի դառն դաշույն ծակում ե
սիրաը.

Հետո իր զավակի դեմքը փոխվում ե ուրիշի դեմքի, ալլայլ-
վում ե, քայլայվում:

Զյան հյուսեր: Անգունդ: Անձրեն ե թե դետը: Վոչ: Ականջ-
ներն են թշում: Գլուխը պտտվում ե: Ինքը յերեխում ճախրում
ե, յերկները իր վոտքերի տակին սլանում ե ուրշվոր: Ի՞նչ վոր հար-
սանիք: Լեռնային գյուղ: Աղջիկները պար են բռնել: Ահա մինը
ծիծաղեց...

Մի լեռնային ջրվեժի մեջ ե ինքը: Խմում ե, խմում, բայց
սիրտը չի հովանում: Ու ընկնում ե զառանցանքի մեջ:

Ի՞նչքան ժամանակ ե անցել... Զարթնում ե, Բայց միթե քը-
նած եր: Զղիտե: Աչքերը բաց ե անում: Վարտեղ ե: Չի հասկանում:
Իր հետ ինչվոր չարագուշակ, ժանգոտ բան ե պատահել: Ի՞նչ բան:
ու հանկարծ հիշում ե ու ցնցվում.

Հա: Պիտի մեռնի:

Բայց միթե նոր բան ե դա: Միթե չգիտեր:

Այո, նոր բան ե, ամեն բոպե նոր բան ե: Ամեն բոպե նոր ե
զգում, հետո մոռանում, հետո լավ զգում, վոր պիտի մեռնի: Յեվ
չի կարողանում հասկանալ, վոր այդ այդպես ե:

Չորացած սմբուլի մի կմախք իրենից մի քայլ հեռու իրեն ե
նայում և որորվում:

Միակ շարժուն բանը, վորի մեջ մի քաղցր, բայց շատ տխուր
ժպիտ կա: Կյանքի ժպիտ:

Նա իր վրա այնպես ե նայում, վոր ինքը այլևս մեռած ե: Ու-
ժերն արգեն սպառվում են: Շունչը կտրվում ե: Յեվ կարծում ե,
վոր յեթե նստի՝ շունչը կհեշտանա:

Յեվ ուժ ե անում, վոր նատի: Չի կարողանում: Գետինը, այդ
մեծ ու ծանր գետինը կպել ե նրան: Հեռում ե, ոդն ե վորսում:
Բայց ոդն ել փախչում ե իրենից:

Նայեց սմբուլի կմախքին ու ձեռը զցեց նրան: Պոկի՞: Վոչ: Հե-
տո ել «վոչվոք» չի շարժվի իր մոտ: Միակ շարժուն բանը իր
շուրջը:

Վոչինչ չի փոխվում, վոչինչ չի ոդնում իրան: Վոչ սպասելը,
վոչ յերազելը, վոչ քնքանալը սմբուլի հետ, վոչ ել քնելը: Մի բան
միայն ահավորապես ճշմարիտ ե.

Պիտի մեռնի...

Արձճի պես հաստատ ե դա:

Գոնե այնպես մեռնի, վոր ինքը չիմանա...

Տիմոֆեյը ճշմարիտ եր, վոր գայրանում եր: Տեսաք ուր բերին
իրեն այս պատերազմը սարքողները: Ի՞նչպես խորամանկորեն բե-
րին դցեցին մահի ճանկը: Մեռնել՝ մեռնել: Ու մի թունավոր զայ-
րույթ ե ուժանում նրա սրտի մեջ:

— Բռնես զբանց, բերես բերանը սխմես արյան վրա ու
խեղղես. «ահա, արյուն ես ուզում՝ խմիր, արաքվիր»:

Յեվ ինչու յեկավ, ինչու այն հրացանը, վոր իրան տվին չը-
բարձրացրեց ու չղարկեց տվողի գանդին: Մեռնել՝ մեռնել: Այստեղ
չեր մեռնի, այնտեղ կմեռներ: Ուր եր խելքը: Հայ գիղի գիտ Տի-
մոֆեյ: Ը, բռնես այստեղ ուղարկողների շնորհ, բերես այստեղ,
յերեաները զարկես քարերին, քսես, տրորես.

— Ընը, կերեք, կշացեք... եյիք ուզում... շան վորդիք:

Ու գագնը զարթնում ե մեջը:

— Մարդ չկտ... Ո՞վ կա եղտեղ...

Կատաղում ե:

Այլս վոչ սարսափ, վոչ կյանք, վոչ մահ:

Յեվ խռպոտ ձայնը լարելով, հետզհետե ձայնը սրմու ե ու զիլ

վոռնոց ե արձակում, սոված գայլի խոպոտ վոռնոց։ Հետո ճանկուտում ե գետինը, ուզում ե սողալ, կրծտում ե ատամները, պոկում ե խոտերը, «իր վերջին ընկերոջը»—սմբուլը, քարը, հողը...

Բայց այդ ամենը բոլորովին զուրք։ Պիտի մեռնի...

Գիշերը սողում ե ձորակից վեր։ Առարկաները սուզվում են խավարի թանաքի մեջ։ Վիրավորի բոլոր շարժումները հետզհետեւ դառնում են անմիտ ու անոգուտ։ Նա բոլորովին արյունաքամվում, ուժասպառվում ե, Յեկ սկսում ե անկապ զառանցել։

Զառանցեց ամբողջ գիշերը։

Այսուհետև «ինքը» այլ ես այնտեղ չե։

Դա մի անգիտակից մսակույտ ե, վոր խոփուում ե, ջղաձղվում և մահ ե աղերսում։

Լուսանում ե։

Անշարժ մի դիակ դաշույնի սառը աչքերը չոել նայում ե վեր։

Ո՞վ եր եյք։

— Ի՞նչպես եր նա ընկել պատերազմի դաշտ։ — Ո՞վ եր նրան ուղարկել։

— Ի՞նչն եր ընդհանուր նրա յեվ մյուս զինվորների մեջ։

— Ի՞նչն եր տարբեր։

— Հասկանո՞ւմ եյին արդյոք նրանք, թե ի՞նչն եր պատերազմի բուն պատճառը։

— Ի՞նչ իմաստ ուներ նրանց լուռ դժգոհությունը։

— Ի՞նչ ե ուզում ասել հեղինակն այս պատմվածքով։

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ ԳՅՈՒՂՈՒՄ

(Հատված «Կարմրաքար» վեպից)

Պատերազմի լուրը պայմեց, ինչպես վորոտը պարզկա յերկընքում։ Կարծես հրթիռ եր, վոր պայմենով վեր սլացավ, ճեղքեց խավարը, զյուղի վրա կրակե անձրև մաղեց և հալվեց։ Առորյայի մասը հոգսերը հանկարծ խառնվեցին, ինչպես կոռւնկի յերամն ամպ գիշերին։

Շուդանց Իսոն դարպասի քարին նստաց արեխների հողն եր թափ տալիս, յերբ տեսավ Զանեն ծուռ Ուհանին՝ մի խուրձ կանաչ խոտ մանգաղին հաղցրած։

— Հը, — հարցրեց Ուհանը, խուրձն ուսից իջեցնելով։

— Ի՞նչը։

— Բաս լսել չեմ...

Այ է, սուտ կլինի... Տեսնես վասին եսոր քանի փարչելսմել, պրիստավի հրամանին զլխու չի... Մեր Սողոմունն ասում ե՝ թուղթը խակի փեշատած ել չի... կարելի յե վոր ուրյադնիկը փոխ քցած լինի։ Խելքդ ինչ ե կտրում, — դարձավ Ուհանին, ասես ուզում եր իր յերկմտանքը վերացնել։

— Ի՞նչ ասեմ... Բանի ես վիս վախտը կոփվ քցողի տղան յեթիմ մնա։ Հունձ ունենք, կալ ունենք։ Բա մեր սրտից ջուր խմած մի մարդ չկա, վոր մեծամեծաց հասկացնի ժողովրդի ավելաթը։ Ու մի քիչ մտածելուց հետո հարցրեց. — Իսն, Ղարսա կոփվը ձմեռնամուտին չեր...։

— Բա ի՞նչ։ Են եր, յապոնացուն եր։ Զե, հստեղ մի հնարք կա, ասենք գլխու չենք։ Թե բեզարած չես, գեղամեջ գնանք, տեսնենք ինչ են խոսում...։

Բոլոր Քարի մոտ այդ ժամանակ մարդիկ լսում եյին քաղաքից նոր վերագարձած Հասրաթենց Սիմոնին։

— Մին ել նաչանիկը փոշտից դուրս յեկավ, թե՝ ժողովուրդ, ուռուա՛... Հուռուայ տվին, պատերից կարմիր-կապույտ թղթեր կըպցրին... Պրիստավն ինձ հետ եղ ժամանակ խոսում եր... Նա դեռ գլխու չեր...։

— Սիմնն, թղթերը դու տեսամը...։

— Բա վնաց...։

— Ի՞նչ եյին խոսում քաղաքի մարդիկ։

— Ի՞նչ պիտի խոսեյին։ Ամեն մարդ իր դուքանում, իր առետուրի հետեւից։ Ինձ ճանաչ մի դուքանչի ասում եր՝ շաքարը շատ կթանգի, նմանապես կտորը։

— Վեր թիվն են կանչում, — հարցրեց Շինականը։

— Եղքանը չտեղեկացա... Համա ասում եյին, վոր մեր մհալի ժողովուրդը հազար մարդ կտա։

— Հազար։ Ել տակին ի՞նչ կմնա...։

— Ղալմաղալը վոր չլիներ, շատ բան կտեղեկանայի պրիստավից, համա յեկան, թե նաչանիկը վոազ կանչում ե։

— Ի՞նչ ղալմաղալ, Սիմոն։

— Ա, յես իմ, ե... Մեկ ել դուքանները կապեցին, զորքը, ժողովուրդը մեյդան թափվեցին... Ուռուա՛... հա ուռուա՛։ Հենց ուզում եյի իմանամ, թե իմ գործը վոնց կլինի, ձեռքով արեց, թե զնա...։

— Սիմոն, տեղեկացար լավ գերանդին քանի ե, — հարցրեց մեկը։

— Անդարդի մինը, գերանդույի վախտ ես գտել — վրա բերեց խոն։ Ծերունու հազը նորից բռնեց ու գլուխը տմբումբացնելով, ձեռքը կրծքին սեղմեց, վոր ներսում մի բան պոկվեր ու հանգըստանար։

— Տերտերն են որը զուր չեր ասում, թե յերկիրս պիտի խառնըվի, — ասաց Ավան ամին, վոր մինչ այդ լուս լսում եր խոսակցությունը: Բոլորը լոեցին, ու միայն ծերունի Խոյի կարծիքն եր խզզում, ինչպես սղոցը: Ավան ամին շարունակեց:

— Եղ մեղ նման խավար ժողովուրդն ե, վոր բանից խարարություն չունի... Թե չե ուսումնագետ մարդիկ կանուխ եյին իմանում... Տերտերն ասում ե սերբիացին վոր թագավորի տղին սպանեց, են որը հայտնի յեր, վոր կոխվ պիտի լինի:

— Բա մեր ցանքը, մեր կալը, — հարցրեց Շուղանց Խոսն:

— Քարը վոր գլորվում ե, մամուռը չի պահում, այ Խոս... Տերության ինչ հոգն ե, թե ձեռդ նեղումն ե: Հրաման հանեց՝ տուր՝ տուր: Ի՞նչ պիտի անես, — պատասխանեց Ավան ամին:

— Լավ, տանք... Թագավորի հողից մւր պիտի փախչենք: Ախր, դե, տակին մնացածը չի կառավարում: Են խաչած հողին վոչ արժանանամ, թե սուտ ասեմ, հրես հանդից կոտրատված յեկել եմ, տանը մի քցելու չայ չկա. Բա վոր մեր յերեխուն տանեն, են է քցեմ ինձ գետը... Սելավն յեկավ, կալստեղս քանդեց, մինչի հիմա յել խանգարված ե մնացել:

— Այ Խոս, հազար ասի, ով ե լսողը:

— Բա վերջը, մի լուս չի հասնելու մեղ: Եսպես խավար պիտի մնանք...

— Զաղացդ ես ե, թեփն ալյուրի հետ կես ե. կազաս ել ես ե, չաղաս ել ես ե... Բա՛, Խոս:

— Զրին ասին թե ինչի յես խշում, ասաց՝ տեղս քարոտ ե... Հիմա մեր որն ե:

— Լավ, զարդ մի՛ անի ե, — ասաց դարբինը: — Արան ոուսի թագավոր կասեն... Յերկու ամիս չի քաշի փափախներով խոիկ կտա գերմանացուն, տանի ծով կածի: Շատ-շատ յերկու ամիս դիմանան: Հերու վարժապետն ասում եր, թե նրանց հացն առնովի յեւ Հաց վոր չունենա, ինչ պիտի անի: Դու ասա հացի բանը լավ դնա:

— Հազարաստեղծ աստված, քո խեղճն ենք... Մեծ գետի ճանապարհը մեծ ե լինում... Դու ասա, վոր մեր աղբյուրը չցամաքի, — ասաց Շուղանց ալկորը:

— Խոն ամի, հարուստի տունը զոնաղ յեկավ, աղքատի ուլը մորթեցին: Տրաքոցը վոր ընկավ, մենք հո ես գլխից ենք վոտան տակի կորչելու, — տիսրությամբ հարեց Աւնանը:

—————

Գլուղի վրա բացվեց մի պղտոր առավոտ: Մոխրագույն ամ-

պերը ծխի նման բարդ-բարդ վեր եյին յելնում, կարծես վիթխարի կրահորի բերան եյին բացել:

Առավոտյան մուժի մեջ ծննդացին յեկեղեցու զանգերը: Ժամհար բարսեղը սովորականից կանուխ եր զարթնել և կաղ վոտը քարշ տալով բարձրացնել զանգակատուն: Հեռվից նայողին այնպես եր թվում, վոր վոչ թե մամարն ե քաշում զանգի պարանները, այլ զանգերն են ձգում նրա թեկերը, նախ՝ աջը, ապա ձախը: Կաղ վոտը ձգած, վլուխը գետնին խոնարհած, բարսեղը կարծես արձանացել եր, մոռացության տվել ծանոթ զավիթը, պարանների կըշկուուր, վոր սեղմում եր բռան մեջ, զանգակատանը բուն դրած աղանձնիներին, վորոնք ամենորյա ձեռվ թուան, յերբ ինքը սանդուղքով վեր բարձրացավ, և շար ընկան զմբեթի ծալրին:

Ժամհարը կանուխ եր զարթնել: Գիշելն ել անկողնում կողքից կողք եր շըջվել, կարծես ներքնակի մեջ փշեր եյին լցված: Նա յերեմն գլուխը վեր եր հանում, նայում պատուհանին: Ի՞նչ յերկար եր ամառի այս գիշերը...

— Սամսնն, քնել չես... — ձայն եր տալիս վորդուն:

— Չե...

— Քնի, բալաս: Յերկար ճանապահ ես կտրելու, — խկ ժամհարի կինը մթնում ման եր գալիս, պղնձները զրբնդացնում, սանդուղը բաց անում, ինչ վոր բան հանում, կապում: Լսելի յեր պլված հեկեկոցի ծայն, վոր դադարում եր, յերբ Սամսնն ու հայրը լուսում եյին: Մայրը հեկեկաց բարձրածայն, յերբ խոսքի միջից ժամհարն ասաց.

— Հետ մեր տանն եմ ասում... նամակդ մշտական թող անպակաս լինի: Դու յել քեզ մղայիթ կաց... Հաղար շառ, հազար փորձանք:

Մոր հեծկաոցի ծայնից յերեխաներն ել զարթնեցին: Ամենափոքրը տեղերում նստեց ու կանչեց մեծ յեղորը: Յերեխան կարծում եր, թե նա զնացել ե, ու իրան քնած են թողել:

— Բարսեղ, որհնյալ... բավական ե, — ասաց Տեր նորընծան յեկեղեցու բանալին գրանից հանելով:

— Եսոր շատ դարդու ե զանգերը քաշում, — ասաց մի պառավ:

— Նաշարն ինչ անի: Մի տուն քուլփաթի պահողը Սամսնն ե, — ու ներս մտան կիսամութ, խոնավ ու քարակոփ յեկեղեցին:

Շատ յերգիկներից եր ծուխ բարձրանում: Կապույտ ծուխը վախիկելով ձգում եր վեր, ու սառը քամին նրա բաշից բռնած, թոցնում եր, կտուրներից պոկում: Յեփում եյին, թխում: Կանուխ եյին վեր կացել և նրանք, վորոնք զինվորացու չունեյին, զնացողը

մեկի փեսան եր, մյուսի՝ հորաքրոջ տղան... Պառավ կանայք, շալերի մեջ փաթաթված, սողացող ստվերների նման մեկ-մեկ անցնում եյին գյուղի դատարկ փողոցներով ու կորչում յեկեղեցու ներսի մթության մեջ: Բոլորն ել համարյա նույն ձեռվ եյին ծնկադրում, փողձկում, ճակատը կռացնում յեկեղեցու սառը հատակին: Վոչ վոք չեր լսում Տեր Նորբնծայի ձայնը, վոր արձագանք եր տալիս ծանը կամարների տակ, ինչպես հարվածը դատարկ կարասում: Կանայք ու ծերերը յերկար չեյին մնում: Հենց արցունքը ցամաքեր թե չե, դուրս եյին գալիս և շտապում տուն՝ մի բան ել պատվիրելու գնացողին, մի քիչ ել նայելու նրանց:

— Հիբանի տղերքն ինչ են լսել, վոր առավոտ կանուխ դուքանը բաց են արել—հարցրեց թելունց պառավը ժամհարի կնոջը:

— Եհ, նրանց սրտի խորհուրդն ովկ կիմանա, — պատասխանեց կինը:

Այդ առավոտ կարմրաքարում ամենից վաղ գարթնողը Մկրտչումն եր: Լույսը չբացված Յեփրեմը քաղաք եր քնացել տեղեկանալու ապրանքի գներից ու կատարվող իրադարձություններից: Մկրտչումը նրան շատ հանձնարարություններ եր տվել, մի քանի անգամ եր կրկնել իր ասածը, կրկնել եր տվել յեղբորը, ինչպես ուսուցիչն՝ աշակերտին: Գիշերով Մկրտչումն ինքն եր վեր կացել իջել ներքե, Յեփրեմին գարթեցրել: Գոդուն պատվիրել եր ձին թամբելու և յեղբորը ճանապարհ զցելուց մի անգամ ել ապսպել եր քաղաքում անելիքը և գնացել խանութ:

Մկրտչումը խանութի հատակին փոել եր գույնզգույն և եյանոց թաշկինակներ, վորոնց մեջ բուռքուռ լցնում եր չամիչ, պլնղուկ, նոխուդ, ապա թաշկինակները կապոց եր անում, դարսում: Խանութում վոչ վոք չկար: Ամեն մի թաշկինակ կապելուց նա հրձվում եր, ինչպես մայրը, վոր քնած յերեխայի զլխավերելնծա յե գնում: Մկրտչումը մի վայրկյան մտածեց, ապա հետ զրեց կտած թաշկինակները, սկսեց բաց անել: Մրգեղենն իրար եր խառնվել: Ու նա ձեռքը մեկնեց, դարակից վերցրեց մի կապ ծխախոտ, սկսեց մեկ-մեկ դարսել կապոցների մեջ: Մեկ ել հավաքեց ծխախոտը, բարձրացավ վերևից ավելի աժանը և հասարակը վերցնելու:

Պատերազմի լուրը նրա վրա ևս շշմեցուցիչ տպավորություն եր արել: Բայց այդ տեսել եր միայն մի վայրկյան, ինչպես թեթև զլխապտույտ: Ու շատ հասարակ դասավորել եր այն բոլորը, վոր բերելու յեր պատերազմը զյուղի և իրենց տան համար: Պամոշնիկ Անտոնին նա սառնամբտությամբ պատասխանել եր.

— Սա պե՛տք է լիներ... Անկարելի յեր... Ես տրաքոցին վաղուց եյին սպասում: Զորակոչի յենթարկվածների ցուցակում միայն դրու Պուղու անունն եր, վոր դժգոհություն առաջացրեց նրա դեմքի վրա:

— Բա սղոցարանը,—մտածեց նա:—Ու մինչև Անտոնը մյուսների անունները կթվարելեր, Մկրտչումն իր անելիքը վորոշեց:

Փողոցներում անց ու դարձն սկսվեց: Գրաստներին ուտելիք ու գործիքները բարձած մի քանի հողի գնացին աշխատանքին: Ինչքան դաժան ու համար կամար եր խոտը հարել, հարածը կիսուկներ անել այդին ջրել գեղնած գարբիներին նայել վոր հունձը չուշանա: Յերբեմն տներից յերեխաները վազում եյին բոլոր Քարի մոտ նայելու հո չեն հավաքվել: Կամ թե բարձրանում են կտուքը և նայում պամոշնիկի «ոթախի» կողմը, վորի առաջ տկոր ձին դեռ կանաչ եր ուտում:

Իրենց դարբասի անկյունում Ունանը յեղբորը համոզում եր այն, ինչի մասին յերեկոյան խոսել եր, ու Խաչանը զլուխն որորելով ասել եր. «Վախսենում եմ»... Ունանը յեկել եր ջաղացպանի մոտ. Ճիշտ ե, նա հայտնել եր միջոցը, սակայն ավելացրել եր. «Համա անտերն իսկական գահրումար ե»... Զանով տղամարդ պիտի լինի, վոր զիմանա... Են առաջ եր. հիմա կարմրաքարում ուր ե եղան վոսկոր... «Խաչանից Ունանը պահել եր ջաղացպանի խոսքը, թե տղամարդ միայն կարող ե զիմանալ այդ «զահրումարին»...

Մի ներքին ձայն Խաչանին ասում եր, վոր միջոցը վտանգութեա: Բայց սիրտը մղկատում եր... Ինչպես պիտի ապրեն տունը, կինը, յերեխան: Ամբողջ գիշերը կինը արցունք եր թափել բարձին, որորոցի վրա, յերը կոացել եր յերեխային ծիծ տալու: Ու հենց ուղում եր բերանը բանա, բարակ աղբյուրի նման արցունքը ձլում եր: Այս յերկընտրանքը Խաչանին ծանր մտատանջության մեջ եր քցել: Խակ յեթե խմի մի գավաթ ծխախոտի չուր, ինչպես Ունան եր ասում, կազատվի ու տանը մնա... Խաչանը կրկնում եր մոլոր վածի նման: «Ճեռնենք, կոմիսիա ընկնենք... Բալքի բըրակ են տուրս բերում»:

Հանդում մենակ մնացած յեղան բառաչի նման հանկարծ լսվեց գզըի հուժկու ձայնը.

— Հե-հե... զնացողը գա մեյդանը, հեյ...

— Բայդուշ—ասաց թելունց պառամբ ու ձեռը չանչ արեց ձայնի ուղղությամբ:

Խաչանը տեղում ձգվեց: Այդ կանչը նրան ազատեց յերկընտրանքից, պիտի զնալ: Ու Մջկեց դարբասով ներս:

— Կաց, ասաց Ռւնանը, ձեռքը գրապանը տանելով: — Ձեռքի խաշուղ կանես, մինչեւ տեսնենք: Յերեկ յերկու բեռ խոտ եմ ծախել Զրիկեցի Բախշուն... Ու նրա ձեռքին դրեց խոտի վարձը:

— Գալիս ես, ասաց մեկն ու վազելով իջավ ներքին թաղը: Մի յերեխա կտուրից կանչեց.

— Անտոնը ձին թամքումա՞...

Յեկ իրարանցումն ընկատվ: Սկսեցին կապել, կապկապել անետուն վազել, թելի, պարանի, հայ փոխ առնելու, գրաստներ սարքելու: Մի մայր ծնկներին խփեց, նա մոռացել եր պաշարի մեջադ դնել ու ճիգ եր անում հիշելու, թե վորտեղ ե աղի պարկը:

Կարմրաքարից գնում եյին Շուղանց Եսոյի տղան, Խաչանը, Սիմոն ամու վորդին, վորի անունը գտնվել եր վերջին ցուցակում և հայրը լացակումած վերադարձել եր տուն, մարդ ուղարկել, վոր վոչխաբատեղից նրան կանչեն: Գնում եր և Դիլբարի Թևանը, վոր Արգումանի հետ եր զինվորությունից վերադարձել, իրեն հետ բերել նախշուն մի ցուցանակ, վրան վրած «Մաստովսկի պարիկմախեր»: Թևանի միտքը, վորպես կետ նպատակ, Կարմրաքարում վարսավիրանոց բաց անելն եր: Պատերազմի լուրը լսելուց, նա անմիջապես կապուտել եր ցուցանակը, գործիքների մի մասը, պինդ մեխել և տնեցոց պատվիրել մինչև իր վերադարձը չբացել: Իսկ նացածը՝ ածելիները, մկրատը, գլուխ խուզելու մեքենան հետք տանում եր: Կանչում եյին Գորլ Պուղուն, ներքին թաղից յերեք հոգու, ժամհար Բարսեղի վորդուն:

Գյուղի ծայրին, Զրիկից յեկող ճանապարհի վրա, յերևացին մի քանի ձիավորներ, վորոնք քշելով յեկան հրապարակը:

— Գալիս են, — ճայն տվին ճավաքվածները: Լսվեց զմբգմբոց, ապա զուռնի բարակ ճայնը: Յերեաց տանուտերի սպիտակ ձին, ապա ուրյադնիկ Յերոշը, վորից հետո ձիավորների ու հետիոտն մարդկանց խուռն բազմությունը:

— Սարի արջերն յեկա՞ն, — ճայն տվեց մի յերիտասարդ ու վազեց դեպի փողոց: Կարմրաքարցիք վերի գյուղացիներին այդ անունով եյին կանչում՝ անտառապատ լեռան տակը լսակվելու համար:

— Խալիս սրտին դանակ տաս, արյուն չի կաթի, սրանք ել հարսանիք են դնում, — ասաց Ռւնանը:

Վերի գյուղից յեկողները հասան Բոլոր Բարի հրապարակին ու կանգ տուան: Այնակեղ արդեն հավաքվել եր մի ուրիշ խումբ, վոր սովարացել եր զուռնա գհողի աղմուկից: Մի քանի հոգի մստեցան տանուտերի ձիու սանձը բռնելու: Խոնված բազմությունը ճեղեւով նրան մոտեցավ պամոշնիկը: Նրանց մոտ կանգնած մարդիկ

լսեցին տանուտերի հարցը և Անտոնի պատասխանը՝ «Սավսեմ հազիր ենք»:

Ինչպես յերկու հոտ խառնվում են իրար, յերը մակաղելու յենքում, այնպես ել վերի գյուղից յեկած բազմությունն ու Կարմրաքարի փողոցներում սպասողները իրար անցան: Մեկը փնտրում եր իր բարեկամի վորդուն, մյուսը Կարմրաքար գալու առիթից ոգտվելով խոսում եր խոտի գնի մասին, պատվեր տալիս Կարմրաքարի բարեկամին, յերրորդն իր հեշտավար ազգականի տեսությանն եր վազել և շտապ պատմում եր, թե ովքե՞ր են գնում իրենց գյուղից, ինչ են խոսում Զրիկում: Անսովոր յեռ ու զեռ եր, և հրապարակն ու նրան միացած փողոցները սևացել եյին ձիավորից, ու հետիոտի մարդկանցից, վորոնց մի մասը ուղեկցելու յեր մինչև քաղաք, մյուսը մասը վերագառնալու յեր Կարմրաքարից:

Պամոշնիկը մեկ տանուտերի հարցին եր պատասխանում, մեկ՝ զգիրին կամ առաջն հանդիպած Կարմրաքարցուն ուղարկում ուշացողներին շտապեցնելու: Տանուտերը, վորի տեսքին առանձին փառահեղություն եր տալիս յերիտասարդ ու կայտառ ձին, մանավանդ յերբ անհամբերությունից փանչացնում եր, վոտով գետինը դոփում և կարմրած ոռւնղերով ոռը ծծում, սանձը կոծուտում, — տանուտերը դիտում եր հավաքված բազմությունը, և ավելի հեռուն՝ կտուրների վրա խումբ խումբ կանգնած հարս ու աղջիկներին: Նրա վզից կախած պղնձե յերկար շղթան ու կլոր նշանը լրացնում եյին տեսքի հանդիսավորությունը: Գլխի թեթև շարժումով նա ընդունեց իր գյուղացիների բարեկը, վորոնցից մի մասը իրենց պարտքն եյին համարում մոտենալ և լուռ սեղմել նրա ձեռքը:

— Բա ինչու չես իջնում, — հարցը Եկարտումը, — զակուսկի կանելիր, մինչի հավաքվելին...

— Շնորհակալ եմ, Մկրտում... տեսնում ես, ելի, զլուխս ինչքան և խառնված: Յետ դառնալիս դոնադ եմ:

Տեր Նորբնծան հենել եր յեկեղեցու պատին: Նա առավոտյան արարողությունը նոր եր ավարտել, ավելի ճիշտ համառոտեր վորովիետե զուռնա-գհողի ճայնին յեկեղեցում յեղած ծերերն ու պառավները գուրս եյին յեկել, շտապել աները:

Քահանան նայում եր ապակյա աչքերով, նայում եր խոնված բազմությանը, ձիավորներին, — ինչպես գետափի չոր կոճղը գետի սըրնթաց հոսանքին: Նրա կողքով շտապ անցնում եյին մարդիկը վորոնցից զուռնը չեյին նկատում նրան, վորոննը զլխուի բարեկերին տալիս: Նա գիտեր, վոր սպիտակ ձիուն նստածը տանուտերն ե... Ահա նրա հետ խոսում ե Մկրտումը. նրա կողքին «Գեղեռն» ե՝ Գողին՝ մի պարկ շալակած:

— Տերսէր, ճանապարհից հեռու կաց... Մարդը շատ ե, կվաս-
աեն, —քահանան չիմացավ, թե ով ասաց: Յեկ մեքենայաբար քայ-
լերը փոխեց դեպի դիմացի կտուրը:

Ամբողջ գյուղն եր հավաքվել: Յեկել եր նույնիսկ կույր Սա-
յին, վոր մեջը Բոլոր Քարին հենած լսում եր խոսակցություննե-
րը, կանչը, ձիերի վրնջոցը, մանուկների լացի ձախերը, մեկի զիլ
ծիծաղը... Ավան ամու կողքին կանզնել եր ուստա նազարը և փա-
փախով սրբում եր ճակատի քրտինքը: Ավան ամու այգուց նայեր-
կու կողով խնձոր եր բերել և սպասում եր, վոր բաժանի: Ուստան
յերեխայի նման ուրախացել եր և նրա համար, վոր գնացողներին
Ավան ամին խնձոր ե բաժանելու և նրա՝ վոր ինքն ե բերել կո-
ղովները:

— Ավան ամի, հենց հազրվել ես, ասես դու յել ես գնալու, —
ասաց Արգումանը, աչքը գցելով նրա կոկիկ ու պինդ կապած տը-
րեխներին:

— Կոտորվելուն մենք ենք, վոր չեն տանում, — ասաց ու բաց
արեց կողովը, Առաջինը քեզ, — ու բոռվ լիքը լցրեց նրա գլխարկի
մեջ: Խնձորների բաժանելն իրարանցում առաջացրեց: Շատերը մո-
տեցան: Գղիրն ել մեկնեց իր գլխարկը, իսկ Թելունց պառավը
կտուրից կանչեց:

— Հրեն ծառերը կոտրատվում են ելի... Հասնելուց կուտես,
յերեխոց փայը մի կտրի: — Գղիրը փոշմանած ձեռքը հետ քաշեց,
կորավ բազմության մեջ:

— Պա, պա՛... Կարմրաքարը զարգացել ե... ես վախտ կարմիր
խնձոր, — ասաց Արգումանը և խնձորները ձեռքին մոտեցավ կտրանը,
վորի վրա կանգնած եյին ջաղացողանի կինը, Բարիկոն, Սալբին,
իր խորթ մայրը, ու թվաց, թե պարտեզից խնձոր ե քաղել, ինչպես
մանկության որերին ծոցերը լցրած շտապում ե յուրայինների մոտ:
Թեկուզ Սալբին գլխաշոր յերեսի վրա յեր քաշել բայց և այն-
պես նրա կարմրելն Արգումանը նկատեց:

— Տեսէք, ե... Ավան ամին ինչ հոգեպահուստ ե ունեցել, —
ասաց և խնձորվ լի գլխարկը մեկնեց:

— Պահի, ճանապարհին կծարավես — ասաց խորթ մայրը:

— Զե՛, վեր կալե՛ք, — և դարձավ Բարիկոյին, — ախչի, Յեգորին
չես տեսել:

— Հրեն, ե՛, Խաչանի կողքին... — Ջաղացողանի կինը խնձորնե-
րից մեկը վերցրեց և մեկնեց Սալբուն: Աղջիկն ամաչելով խնձորը
պահեց գոգնոցի տակը:

Գղիրը տեղեկագրեց, վոր բոլորը ներկա յեն: Վասիլը պատ-

րաստ ծրաբը հանձնեց: Մկրտումը Գոդուն նշան արեց պարկը մո-
տեցնելու:

— Եղ ինչ ե, Մկրտում, — Ժպտալով հարցըրեց զզիրը:

Հեչ, ասում եմ աղերքն ուրախ գնան, — ասաց և մի կապոց,
վոր վերե եր դրված, մեկնեց տանուտերին, յերկրորդը՝ ուրյադնիկ
Յերոշին, վոր ձիու վրայից կոացել եր պարկի վրա, վիզը ձգեւ
տակս ուզում եր մինչև տակը տեսնել:

— Իմ հոգուս պարտքը տեղ համելուց նաշանիկին ես մասին
ուպորտով հայտնեմ, — ասաց տանուտերը, մատներով կապոցը տըն-
տղելով:

— Ե՞ս, սա ինչ ե վոր, — կեղծ համեստությամբ պատասխա-
նեց Մկրտումը:

Գնացողները մեկ-մեկ մոտենում են, կապոցներն ստանումք-
Խաչանը ստացած կապոցը զրեց վորքիկի գրկին: Դիլբարի Թեանը
հենց տեղն ու տեղը բաց արեց մրգեղենը, զգուշությամբ լցրեց
գրպանը ու թաշկինակը տնտղեց:

— Փեշքեշ ձիու ատամին չե՞ն նայի, Ե՛յ, — ձայն տվավ մեկը
Թեանը թաշկինակը ծալեց ու տեղավորեց պայուսակում:

— Յես ել ասեմ առավոտ կանուխ դուքանը ինչի յեր բաց, —
ասաց Թելունց պառավը կողքին կանգնած մի կնոջ, — նա ել ջան
ե, չի, ասենք մի քիչ չար նախանձ ե...

— Հալբաթ նրա սիրոն ել ե մղկառում, — պատասխանեց կինը:

Յերը Մկրտումի ընծաների լուրը բերներեան տարածվեց:

— Արգուման, Ե՛յ, մոտեցիր, — կանչեց պամոշնիկը: Մկրտումը

վերջին կապոցը ձեռքին նայում եր նրան:

— Խաղեյինս կոտր կինկնի, լավ չի, — բարձաձայն ասաց Ար-
գումանը: Տանուտերն ու Մկրտումը իրար յերեսի նայեցին: Պա-
մոշնիկը նրան ինչ վոր բան ասաց:

— Դե, լավ, բարիշեցի՛ք... Բա եսոր ել մարդ իրարից խոռվ
մնա, — կանչեց տանուտերը: Մկրտումը մի քայլ արեց:

— Վաշ բլազարողի, իմ առուն դրա աղբյուրից ջուր չի խմիր... —
ասաց Արգումանը և շրջվեց, բազմության մեջ Յեգորին գտնելու:

Տանուտերը Անտոնին մի բան ասաց ու ձին շարժեց: Ուրյադ-
նիկն ու մնացած ձիավորները հետեւեցին նրան: Գղիրը սանձից
բռնած բերեց Անտոնի ձին:

— Ռոտա, ստրոյսա, բղավեց Արգումանը, — դե՛, լաց յեղեք,
նանի՛, զիզի՛, հոքիր... Սար ու քոլեր ձեզ: Ել տեսնելու չենք... Պա՛,
պա՛, պառշտին ջրի գին ե, — ու վազեց կտուրի վրա հավաքված կա-
պա, պառշտին ջրի գին ե, — ու վազեց կտուրի վրա հավաքված կա-

Մջեց, արցունքները պահելու համար: Յեգորը մոտեցավ Արզումանին:

— Սրբ՝ հետո, բան եմ ասելու...

Իրարանցումը գաղաթնակետին հասավ: Կտուրներից իջան ու խումբներմբ հայաքվեցին սրա նրա մոտ: Զիավորներն զգուշությամբ առաջ անցան: Շուղանց իսոյի հիվանդ կինը, վոր անկողնուց եր վոր կացել, ճշաց ու կախվեց վորդու վզից: Իսոն արցունքը սրբելով, կոչ թէից բռնեց:

— Սխչի՛, յերեխի սիրտը խարար մի անի, թող պարզամիտ գնա...

— Տերտե՛ր, չեղավ, ելի՛, մեր գլխին ավետարանդ պահես, ասես համոզես,—ծիծաղելով ասեց Արզումանը և սեղմեց տերտերի վոսկրոտ մատները:

Արզումանը կտուրից նայեց սկացած փողոցին: Մեկը հեկեկում եր, գլուխը պատին հենած, մի ուրիշը, արցունքը սրբելով հուսադրում եր գնացողին: Խաչանը յերեխային դրել եր ուսերին և զրուցում եր Ունանի հետ, իսկ կինը նրանից քիչ հեռու կանգնել եր, կապոցը ձեռին: Փողոցում յերևաց ջաղացպանը: Նա աչք եր ածում մեկին: Արզումանը տեսավ նրան ու մոտ վազեց.

— Անդրի ամի... Ու ջաղացպանը գրկեց նրան:

— Յես մեռած, դու սաղ... Արզուման, սալամաթ վերադառնաս, դու յել խեղճ ես...

— Գալու յեմ, Անդրու ամի: Հալա ի՞նչ որեր ենք տեսնելու...

Կտուրի վրա խորթ մալրն եր, ջաղացպանի կինը, Սալրին: Տերտերի կինը մի խմբից մյուսն եր վազում: Թեկը լայն բաց արած, իբրև ծեր սագ, նոգնգալով մոտեցավ թելունց պառավը ու փաթաթվեց Արզումանին:

Մի մոր տղա յել դու յես, բարա ջան, ի՞նչ ես յեթիմի պես կանգնել...—Արզումանը զգացվեց, աչքերը տաքացան:

— Չորտ յեվո, խայտառակ են անելու, հա՛,—ասաց նա, թեով աչքերը սրբելով:

Պամոշնիկ Անտոնը ձգեց ձիու սանձը: Նրա առաջից գնում ելին դիոլ ու զուռնան ու հետիոտի մարդկանց խումբը: Յեկ թափորը շարժվեց, զանդաղ, անկանոն,—շարժվեց, ասես այդ զանդաղն իբր կենդանի միս պոկում ելին գյուղի մարմնից, կտրատվում ելին հաղարակոր թելեր, անասելի ցավ պատճառում թե նրանց, վորոնք պաշարը շալակած գնում ելին ու կարոտով նայում ծանոթ տներին, կտուրի վրա հավաքված աղջիկներին, կանանց և թե նրանց, վորոնք դատապարտված ելին մնալու և սպասելու:

— Ավան ամի, եհ, մնա՛ս բարով,—աս ց Արզումանը:

— Զե, գնանք... մինչի Լուս Խաչերը հետդ կդամ:
— Արզուման, Արզուման... Ուստա նազարն եր վազում:
— Ուստա ջան...—ու փաթաթվեցին իրար:
— Բարով վերադաշաս,—մրմնջաց ուստան:
— Արխային կաց, մնացեղը չեմ:
— Ավան ամի, նամակս քեզ վրա յե գալու,—ու քիչանց ավելացրեց.—աչք ես յերեխու վրա պահիր, մինչև տեսնենք,—ասաց Արզումանը, ցույց տալով Յեգորին: Ավան ամին լուռ եր, մտքերի հետ:

Լուս Խաչերում կանգ առան: Իրենց արտի կողքին կանգնել եր Խաչանը: Արտը ծովի նման ծփում եր ծանր հասկերը քսվում ելին իրար, հնչեցնում տառուր լարի նման:

— Ունանը կհնձի, արի՛,—ասաց Արզումանը:

Յեվ անխօս բաժանվեցին: Մնացին միայն նրանք, վորոնք մինչև քաղաք պիտի ուղեկցեցին:

Ճանապարհը շարունակեցին: Արզումանը յետ նայեց: Կողքի կողքի գնում ելին Ավան ամին ու Յեգորը... Յեռվում, արտի յեղրին, կանգնել եր Սալրին, կանգնել եր ու նայում եր: Հանկարծ արտերի միջից գուրս յեկավ իրենց պառավ Բողարը ու փաթաթվեց վոտների:

— Բողար... Բողար, յետ դառ...

Շունը նստեց հետեկ վոտների վրա, լեզուն հանեց շոգին: Արզումանը մի անգամ ել սաստեց շանը վերադառնալու... Յերեսում ելին գյուղի ծայրի տները, յեկեղեցին ասես փոսի մեջ եր: Արզումանը ձեռքով արեց աղջկանը և վազեց ընկերներին համարու...

Բողարը մի քիչ ել սպասեց, մինչև Արզումանը փոքրացավ, սկասովի չափ: Ու շունը վերադարձավ:

— Ի՞նչ միջավայր ե նկարագրված այստեղ:

— Ի՞նչ տպավորություն թողեց պատերազմի լուրը գյուղացիների վրա:

— Միելնու յինն եր այդ տպավորությունն արդյոք բոլորի համար:

— Ի՞նչո՞վ ե պայմանավորված գյուղացիական զանազան խավերի արքեր վերաբերմունքը դեպի պատերազմը:

— Վո՞րն ե այս հատվածի ամենացայտուն մասը:

— Կա՞ն արդյոք այս հատվածում թույլ տեղեր:

— Համեմատեցիք Ակսել Բակունցի այս հատվածը նրա նախկին («Գյուղաշխատավորի տետրակից») գրվածքի հետ. Կա՞ն արդյոք վոճային նմանություններ:

— Ի՞նչն ե տարբեր այդ գրվածքներում:

ՊԱՏԵՐԱԶՄԸ

I

Փոքր, աննշան գյուղ ե կաղնուտը, այնպես վոր յերբ պետական վորեւ պաշտոնյա յելնում ե շրջանը պտտելու, նա սկի կաղնուտ չի մտնում:

Սյդտեղ ամեն ինչ նույն ե, ինչ վոր մեր բոլոր գյուղերում—մի փոքրիկ, տխուր յեկեղեցի՝ քարերը մամուռով ծածկված, փայտե չորս վոտի վրա կանգնած բարձր մի զանգատուն՝ զանգի թելերը սյուներից մեկին կապած. մի փոքրիկ տերտեր, վոր կարդալու ժամանակ ակնոցը թելով կապում ե ականջներին, մի խանութպան, վորի կապույտ ներկած դոներով խանութումնավթի հետ միասին ծախվում ե «փունջուղով» կանգետ, մի տանուտեր, վոր կառավարում եր մոտակա յերկու, կաղնուտից ավելի փոքր ու անըշան գյուղն ել, և, քահանայի վորդի լինելով, սիրում եր խոսել զըրաբար—«Զի քո յե, համենայն դեպս»... Յեվ ինչպես բոլոր գյուղերում, կաղնուտում ել ապրում ելին մարդիկ այնպես, ինչպես հարյուր, հազար տարի առաջ, ժամ ելին գնում, մատաղ անում սրբերին, ցանում եյին, հնձում. գարուն, ամառ, աշուն աշխատանք, աշխատանք, անձրե, կարկուտ ու յերաշտ. ձմեռը զրույց ողաներում, հարսանիք ու բուք... Ապրում ելին ամեն մեկն իր հոգսով, հանգիստ, հավատալով, վոր «իր ճակատին եղ ե գրած»... Գյուղն ընդհանուր անհանգստություն եր ընկնում միայն աշնանը, յերբ տըղերանցը տանում ելին «սալդաթ»: Տանում ելին հեռու, հեռու տեղեր՝ Վարչադ, Աղես, Կովիլ... «Բնկածներին» կաղնուտցիները հյուրասիրում ելին հերթով, տալիս ելին նրանց գուլպա, շապիկ, թաթման ու զրեթե գեղով ճանապարհ գցում մինչև կայարան: Յեվ յերբ «պոեզը» տանում եր տղերանց նրանք յերկան նայում ելին պոեզի յետելից, նրա ծխի ամպակուտակ քուլաներին, նրա հեռացող, սարերի մեջ կորչող ճամպին և հառաչում խմբով. «Անտեր մաս, անտեր»... Ու բոլորին թվում եր, վոր յեթե չգար այդ պոեզը, իրենց վորդիներին չելին տանի այդքան հեռու, հեռու տեղեր՝ Կովիլ, Վարչադ, Աղես, ել ինչ իմանաս ուր, վոր ծայրին աշխարհի... Բայց գյուղի հանգստությունը վրդովից ավելի այն ժամանակ, յերբ տանուտեր Արսենը հայտնեց, թե «կոիվ ե բացվել», և թուղթ ե յեկել զավաս տղերանց հավաքելու:

Կաղնուտցիներն այդ որը լավ են հիշում:

Տղամարդիկ հունձ ելին գնացել. կանայք լսելով այդ՝ իրար զիսով անցան: Վազում ելին նրանք մնետուն և ծնկներին խփելով

հաղորդում իրար. «Իմացաք, աղջի, կոիվ ե, ասում են. տղերանցը տանելու յեն»... «Վեւյ, քուանամ յես, վաւյ, խավարեք դուք. մի տսավ, աղջի»... «Կանցիլարը թուղթ ե եկել»... «Վույ, խավարեք դուք»... Ու լոկը խսկուն տարածվեց ամեն կողմ, շուտով հասակ և հանգը, ուր տղերը խոտ եյին հնձում... Ու յերեկոյան տղերը հնձից յեկան թե չի տանուտերը բոլորին կանչեց կանցիլար... Դրանց մեջ եր, ամենափառ առաջ, Մաճկալանց Թափիթը, հետո Ծիրանանց Արշոն, ժամհարի տղա Զաքարը, Անդարդ Սեթոն, և, վոր մեկի անունը տաս, բոլորն ել ջանել տղաներ, բայց դրանց մեջ Դափիթն եր մենակ, վոր վեց ամիս չկար յեկել եր «ծառայութենից» և յերեք ամիս եր ինչ պսակվել եր... Մի խոսքով՝ տանուտերը սրանց բոլորին կանչեց և հայտնեց, վոր «թուղթ ե յեկել զավասը ավագելու», թող պատրաստ կենան վաղը օաղաք զնաւու, այսինքն այն գյուղաքաղաքը, ուր պըհստամի եր նստում, իսկ այդտեղից, ինչպես կարգն ե, պիտի դեային գավառային քաղաք... Կանցիլարը լուսավորված եր մի հատիկ լամպով, այն ել զրագիրը դրել եր առաջին, ապակուն հազցըն եր մի սպիտակ թուղթ և սենյակի մեջ մասը թողել մթան մեջ: Տղերը կիսախավարի մեջ, տախտակի յերկար նստարանների վրա տեղավորված՝ լուռ լսեցին տանուտերին, լսեցին, և յերբ նա վերջացրեց, սկսեցին միանդամից դովուար:

— Կոիվ, ես նեղ մաջալին եդ եր պակաս,— խոսեց առաջինը Ծիրանանց Արշոն:

— Բա մեր արտերը, արտերը վճնց պիտի անենք, — բղավեց ժամհարի տղա Զաքարն իր հաստ, բամբ ձայնով:

Ու ամեն կողմից սկսեցին՝ «արտեր, արտեր»... Բոլորը խոսում ելին արտերի մասին, վորովինեաւ արտերը հասնելու վրա ելին:

— Իսկ ինչ կոիվ ե, խալփա, — հարցրեց Ծիրանանց Արշոն տանուտերին:

— Վերտեղ, եւմ հետ,— հարցրին մյուսներն իրար յետելից:

— Եդ արգեն զի քո յե. կերթաք ինքներդ կտենաք: Յես ինչ զիտեմ՝ վորտեղ ե, — ուսերը վեր քաշեց տանուտերը և գործն արդեն վերջացած համարելով՝ թեքվեց ծեր, ճաղատ գլխով գրագրի՝ Արշակ աղի կողմը և սկսեց ինչ-վոր բաներ հարցնել:

Այս բոլոր ժամանակ Մաճկալանց Դափիթը լուռ եր: Նրան թըվում եր, վոր ամենը, ինչ կատարվում ե շուրջը — յերազ ե, հանկարծահաս, ծանր մի յերազ: Կոիվ. ինչ կոիվ, վորտեղ, ինչի համար: Հինգ տարի «ծառայութենից» հետո միքանի որ չկա յեկել ե — նորից հրացան, նորից կազարմա, այն եր, ով գիտի, վորտեղ...
656—21

Ու կոիվ բառը կարծես հարվածում եր նրա գանդը — կոիվ, կոիվ... Տղերքը խոսում եյին, աղմկում, բայց նա այդ աղմուկների մեջ տեսնում եր միայն հրացան, կազարվա, ցեխոտ ճանապարհներ, ուր քաշ ե գալիս իրենց հետևակ գունդը՝ հողնած, դադրած, փթաչափ բեռան տակ... Ծեր ծնողները հազիվ ուրախացել եյին, հազիվ մի կարգին ցանքս եր արել — հիմի այդ բոլորը, դրանց հետ ել ջահել կնոջ թող ու գնա... Դավիթն իր մտածումներից սթափվեց միայն այն ժամանակ, յերբ աղմուկը լոեց. տղերքը դուրս եյին գնացել։ Նա յել վեր կացավ և գլխարկը, իր դիմուրական հին, կանաչ կանթով գլխարկը, վոր վեց ամիս առաջ բերել եր հետը, դրեց գլխին ու դուրս գնաց:

Հետեյալ որը, վաղ առավոտյան, գյուղացիների մի մեծ խումբ կաղնուտից ճամպա ընկավ դեպի կայարան։ Մարդ, կին, ջահել ու ծեր իրար խառնված գնում եյին դաշտի ճանապարհով, վոր վոլորմուր ձգվում եր արտերի միջով և այսպես գնում դեպի կայարան... Պարզ որ եր. արտուաները խաղում եյին ողի մեջ. քամին, մի բարակ, զով քամի անցնում եր ցորենների վրայով, և արտերը վետվետ ու ալիքավոր հորձանքով գնում եյին դեպի բլուրները... Արտերին նայելով, գյուղացիները գնում եյին մի հսկայական թափոր կազմած։ Ամենից առաջ իր ճերմակ ձիուն նստած՝ գնում եր տանուտեր Արտենը չերքեզի չուխեն հագին, ինչպես միշտ, տանուտերական նշանը դեղին շղթայով վիզը գցած, ինչպես անում եր տահասարակ պաշտոնական գործերով տեղ գնալու ժամանակ (մի ուրիշ նշան ել փոքրիկ ողով կարած եր կրծքին)։ Տանուտերի յերկու կողմից, միքանի քայլ հարգալից հեռավորության վրա, գնում եյին յերկու զզիրն իրենց նիհար, վոստոստուն ձիերով։ Իսկ գրանց յետեկց տղերք, կանայք, յերեխաներ։ Դրանք կաղնուտի և մյուս յերկու գյուղի զապաներն եյին (ողաճեստի զինվորները), վոր գնում եյին կայարան։ Իսկ նրանց հետ ազգական ու բարեկամ — մայր, յեղբայր, հայր, կին կամ քույր — մի-մի կապոց ճեռներին՝ ուղեկցում եյին տղերանց։

Խմբի մեջ եր և Մաճկալանց Դավիթը։ Հաղթ կուրծքը դուրս գցած, գլուխը բաց, հին շինելն ուսին, գնում եր նա և վինթինթում տանուտեր Արտենի վրա։ Նրա հետ գնում եյին պառավ մայրը՝ Մարան նանը — միքանի ձու և յերկու խաշած հավ կոճատակին, և կինը՝ Վարդիշաղը նույնպես մի փոքրիկ կապոց ձեռքին։ (Հայրը՝ ծեր վասկանը մնացել եր տնպահ)։ Կարդիշաղը, վորպես նորահարս, գնում եր աչքերը գետին գցած։ Պսակից հետո առաջին անգամ եր մարդու հետ դուրս գալիս հասարակության մեջ... այն ել այդքան

բազմության մեջ։ Բոլորը նայում եյին նրան, նրա շալ շորերին, նրա կլապիտներ գեղին գոտուն, շրջազգեստի փոթփոթ ծայրերին, և նա այդ բազմաթիվ նայվածքներից ամաչելով՝ աշխատում եր մարդու հետ չքայլեր այլ շարունակ կեսոր կողքից։ Վարդիշաղն ամաչում եր, բայց չըան միմիթարում եր այն հանգամանքը, վորուրեց ջահել հարսեր ել կրյին իրենց հետ, թեն իրա պես յերեք ամըսկա պսակված չեյին, բայց ելի ջահել եյին։ Մեկը, որինակ՝ Ծիրանանց Արշայի քույրը, վորը յեկել եր մարդուն և յեղբորը ճամպու գնելու, մյուսը՝ իրիցանց հարսը՝ ամուսնուն և տեգորը։

Ճաշի մոտ հասան կայարան։ Մինչև գնացքի գալը նստեցին ստվեր տեղերում՝ պատերի տակ, ակացիների և բարդիների շվաքում՝ հանգստանալու և «միքիչ նհար» անելու։ Սակայն չանցավ միքանի բոպե, զանգը տվին. գնացքը գուրս յեկած՝ գալիս եր։ Բուլորն իրարով անցան, կապոցները վերցրին ու խմբվեցին պլատֆորմի վրա։ Պառավ Մարանը մի կողմից հարսին հսկելով, վոր «գյագա-գյուղեք» չդիպչեն նրան, մյուս կողմից վորդու փեշը բըռնած՝ ասում եր. «Դավո ջան, նամակդ անպակաս կանես, ջահել հարս ե, սիրտը կոտրի վոչ»... Իսկ Դավիթը շարունակ ժպտում եր. «Հա, նամին, հա. դու զիլ կաց», մասում եր նա մորը և կնոջը ցույց տալով՝ ավելացնում. «Ես շաշին լավ կպահես»...

Տղաները կամաց-կամաց տեղավորվեցին։ Դավիթը նույնպես մտավ վագոն։ Նանն ուղեկցեց նրան մինչև վագոնի շեմքը (նրանք գնում եյին ապրանքատար վագոնով)։ «Զվերը կոտրես վոչ, Դավո ջան, աղն աղլուխի տառումը կապած ա», խորհուրդներ, ցուցումներ եր տալիս նա իրար յետեկց և ձեռը ծոցը դրած նայում, թե հարմար տեղ է նստելու արդյոք Դավիթը և կապոցը չի զցի արդյոք այնպիսի տեղ, վոր ձվերը կոտրվեն։ Յեկ նա վագոնից հեռացավ այն ժամանակ միայն, իերը գնացքը սուլեց։ Նա վախով յետ կանգնեց ու շարժվող գնացքի յետեկց ճեռները բարձրացրեց վեր, դեպի յերկինք։

— Դու հարեհաս ըլես, ով զորավոր սուրբ Մարգիս...

II

Տղերանց գնալուց հետո կաղնուտն իրեն զգում եր հանկարծ թալանված։ Շատ քիչ տուն կար, վոր կոիվ գնացած զինվոր չունենար կամ ազգական ու բարեկամ չիներ գնացածին։ Իսկ Կաղնուտում գրեթե բոլորն ազգական ու բարեկամ եյին իրար, և այդ պատճառով, տղերանց գնալուց հետո, բոլորը գրեթե սպասում եյին յուր, նամակ։ Ով վնրտեղ գնաց, ուր մնաց, ի՞նչ յեղավ... Սպասում

Եյին անհամբեր, ջղագրգիռ ու աագնապով: Բոլորի մեջ, սակայն, և ամենից ավելի անհանգիստ եր Մարան նանը: Աշխատանքի միջոցին թե պարապ ժամանակ նա Դավթին չեր մոռանում. թե դաշտում, յերբ հասած արտերում զբնդում եր գերանդին, թե այն ժամանակ, յերբ կովերը բառաչելով գալիս եյին հանդից, թե տանը, յերբ հարսը ման եր գալիս առաջին—նա վորդուն մտաբերելով շարունակ քրթմանջում եր ինչ-վոր: Իսկ ծեր վոսկանը Դավթի զնուուց հետո, հարեան Պետրոսի ոգնությամբ, մի կերպ բերեց սարի խոռը և գիգեց, հետո, յերբ արտերի հունձն սկավեց, նա՝ իր եյին գերանդին ու սրոցը վերցրած՝ զնաց արտերը հնձելու: Մարան նանը, յերեան և Վարդիշաղը զնում եյին նրան ողնելու: Այսուհետեւ կալին՝ բոլորն աշխատում եյին միասին: Յեկ բոլոր այդ աշխատանքների մեջ անհամբեր սպասում եյին ելի նամակի:

Վերջապես այդ նամակը յեկավ: Դավթը գրում եթ, վոր ինքը լավ ե և «կուզի, վոր դուք ել լով լինեք և գործով աշողակ»: Շատ բարով եր անում նանին, ամուն՝ հորը և կնոջը՝ Վարդիշաղին: Ել—դուք վողջ լինեք: Կովի մասին վոչինչ չեր գրում: Վերջում ասում եր միայն, վոր զնում են «Գերմանի կողմը»: Դե, այդքան ել վոր գրել ե, հերիք ե, ինքը վողջ լինի. միայն թե նամակն անպակաս անի... Բայց յերկրորդ նամակն ստացվեց շատ ուշ: — Անցավ նոր տարին, անցավ բարեկենպանը, անցավ մեծ պատր—նոր զատկին միայն մի բաց նամակ յեկավ՝ յերեսին մի մեծ մարդու պատկեր: Դարձյալ շատ բարով եր անում բոլորին և գրում եր, վոր իրենց «պոկը Կարպատումն ե»: Տնեցիներն, ինարկե, շատ ուրախացան, վոր, վերջապես նամակ յեկավ, և այդ նամակը միքանի անդամ կարդալ տվին սրան-նրան: Բոլորը լավ եր, հասկանում եյին, բայց թե ինչ բան եր այդ «Կարպատը»—վոչինչ չհասկացան: Մինչև անդամ տերտերն ել բան չհասկացավ: Ակնոցն թելերն ականջների յետեր կապած՝ նա նայեց նամակին, նայեց և զլուխը շարժեց. — Որհնվածը հնենց չի գրում, վոր մի բան հասկանաս... Կարպետ թե Կարպետ, քաղաք ե, գյուղ, — ինչ իմանաս...

— Բա ես պատկերն ինչ ե, տերտեր ջան,— ցույց տվեց նանը բացիկի յերեսի ծերունու նկարը:

— Դե, դա յել պատկեր ե ելի, ով ե իմանում...

Այդ որվանից հետո ել նամակ չեկավ:

Աշուն եր, քամի. տան առաջին բարդիները խշում եյին ու տերեաթափ լինում: Նրանց հետ խշում եյին և բոլոր բարդիները խշում եյին միատեսակ խուլ, համատարած խշոցով, և ընդհանուր այդ խշոցի ժխորից բացի զյուղում ուրիշ ձայն չեր լսվում:

Մարան նանը շեմքում նստած զնդնում եր ու հետն ել մատածում— Ակնի իսկապես մի բան և պատահել եղ տղին, ինչու հապանամակ չի գրում... Յեթե մի բան պատահած լինի և հարսի ծնողներն իմանան— ինչ կանեն: Վարդիշաղին կտանեն յերեկի... Նանը լսել եր, վոր նրանք աշողիսի մտադրություն ունեն: Այստեղ-այնտեղ խոսում եյին այդ մասին, և այդ խոսքերը նանի ականջն եյին համնում: Թեև հարսի հերանք հեռու եյին, կաղնուտից յերկու գեղ այս կողմ, բայց նրանց մտադրության մասին նանը լսել եր: Ուզում եյին Վարդիշաղի տանել... Եհ, յերկու տարուց ավելի յե, քիչ ժամանակ չի, մարդը չկա, մտածում եր նանը հարսի մասին:

Շունը հանկարծ մռոաց բարձր, և աչքերը բակի դռանը, կանքնեց վոտների վրա, հսկող հայացքով նայեց և, տեսնելով՝ յեկողը ծանոթ ե, նորից նստեց: Մանը քայլերով, ձեռնախայտը, ավելի շուտ մի ճիպոտ կոնատակին՝ գալիս եր մի շեկ ու փոքրիկ, տարիքով մարդ: Նանն խկույն ճանաչեց— Վարդիշաղի հայրն եր— Դեղին Ծիտը, ինչպես անվանում եյին նրան իրենց զյուղացիները՝ գեղին մագերի և բարակ ձայնի պատճառով:

— Բարի որ քեզ, ինտմի Մարան,— ասավ նա գեռ հեռվից մի այեպիսի բարակ ձայնով, վոր կարծես դուրս եր գալիս մի նեղ, առեղի ծակի չափ նեղ կոկորդից:

— Բարին արկիր, խնամի Խունկի, — պատասխանեց պառավը, տեղից յելունով:

Բարեկելով՝ նրանք նստեցին իրար կողքի, հենց շեմքի մոտ ընկած գերանին:

— Եհ, վհնց եք, խնամի Մարան:

— Փառք իրան, խնամի Խունկի, ապրում ենք ելի:

— Բա ես վհնց պար ըլի, խնամի Մարան, — ասաց նա հանգարտ հոգոցով, ու խոսքը չափարած չիրուխը վառեց:

— Ի՞նչը, խնամի Խունկի:

— Ես մեր Դավթի բանը, խնամի Մարան:

Դառամի ձեռներն ու ծնկները դողացին նստած տեղը:

— Բան գիտես, խնամի:

Խնամի Խունկն հանդարտ չիրուխը հանեց ատամների արանքից:

— Զե, խնամի Մարան: Ասում եմ՝ մի խաբար չեկավ ելի:

— Ուր ե թե: Վհրտեղից,— հառաջեց պառավը:

— Հը ըմ, — մզգաց խորհրդավոր ու յերկար խնամի Խունկին, և առժամանակ լուելուց հետո, հարցրեց. — Ես քանի տարի ելավ...

Նանը նորից հառաջեց.

— Յերկու տարուց ավելի յե, խնամի Խունկի. Վարդիշիվորին իրեքը կթամամի:

Խնամի Խունկին նորից մզզաց.

— Հըշմ... Յերկու տարի,—խոսեց նա բերանի անկյունով, չի-
բուխն առանց հանելու և, քիչ հետո, չիբուխը ձեռն առնելով՝ գը-
լուխն իջեցրեց ու աչքերը՝ հասեց գետին. — Բա ես վճնց պտի ըլի, —
շարունակեց նա դարձյալ աչքերը գետնին, — եղ աղջկա, Վարդիշա-
ղի բանը...

Նանը հասկացավ Դեղին Ծափ միտքը: Նա լսել եր, վոր Վար-
դիշաղին ուզում են տանել, լսել եր և այն, վոր մի ինչ-վոր ունե-
վոր լորուտեցի առաջարկ եր արել հորը, Վարդիշաղի մասին:

— Ինչի՞ համար ես հարցնում վոր, ինամի, — խոսեց նանը,
շուրթերը հուպ տալով, վոր ցույց եր տալիս, թե արդեն զլիսի յե-
րնկել բանն ինչուն ե և պատրաստվում ե հարկավոր պատասխան
տալու:

— Ինչի՞ համար.. Դե, դու յել կնիկարմատ ես, ինամի Մա-
րան, կհասկանաս ելի... Զահել աղջիկ ե, սիրտը կոտրած...

Նանը շուրթերն ավելի սեղմեց և նստած տեղը լուս տրորվեց:

— Գիտեն մարդիկ, զիտե աստված, ինամի Խունկի, — խոսեց
նա հառաջանքով, ծանը և զրեթե հանդիսավոր, — զիտեն ամենքը,
աղջկանդ աչքիս լսի պես եմ պահում: Ասած չեմ մի որ՝ ես ծուխը
քեզ, կամ՝ մեկնած վոտդ քեզ քաշի...

— Շնորհակալ եմ ինամի Մարան, հաստատ մնաս... Բայց ա-
սում եմ, չահել աղջիկ ե ելի, ով ե իմանում... Մերն ասում ե՝
թող միքանի որ ել դա մեր տուն: Ասում ե՝ բեխանց մեջ սիրտը
կրացվի միքիչ...

— Թող դա, ինամի ջան, յես ել ուզում եմ սիրտը բացվի,
չահել ե... — Պառամի անկեղծ եր խոսում, — թող դա, ինամի Խուն-
կի, բայց թեզ յես բերես, մենակ կարըմ չեմ. սովորել եմ... Հրես
մեր հայն ել կդա՝ տենենք ինչ ե պառւմ:

Պառամի խոսում եր մարդու մասին:

Քիչ հետո ծեր Վոսկանն ու հարս՝ Վարդիշաղը յեկան բու-
տանից, մի-մի դդում ձեռներին: Ծեր Վոսկանը նստեց գերանին:
Խնամու գալու նպատակն իմանալով, տվեց իր համաձայնությունը:

— Թող դա բեխանց, ինչ կա վոր, թող դա, — խոսեց նա անա-
տամ բերանը չպալացնելով, այնպես, վոր ձերմակած և զեղնած բե-
րերը քիչ եր մնում բերանը մտնելին. — թող դա...

Յերեկոյան դեմ Դեղին Ծիան իր աղջկա առաջն ընկած՝ տա-
րավ իրենց գյուղը: Վարդիշաղն իր շորերից մի կապոց արավ, համ-
բուրեց կեսոր, կեսրարի ձեռքն ու վնաց: Յերերը ճանապարհ դը-
րին նրան մինչեւ բակի դուռը:

— Թեզ կդաս հա, — պատվիրեց նանը միքանի անդամ: Վարդիշաղը գլխով անելով հեռացավ:

Նրա գնացրեց հետո տունը նանին թվում եր գատարկ: Նա հա-
ճախ նստում եր տան շեմքին և որերը համրում, թե յերբ պետք է
Վարդիշաղը գա: Յերբեմն ել անհանդիստ, տխուր դիմում եր մար-
դուն:

— Վարդիշաղը յեկավ վոչ, այ մարդ:

Յեզ ծեր Վոսկանն ամեն անդամ, բերանը չպալացնելով, պա-
տասխանում եր.

— Կդա ելի, բա հոմալ չի... Մի որ կդա...

Յերկու շաբաթ հետո, սակայն, լուր յեկավ, վոր Վարդիշաղն
ել չի գալու. նրան տվել են լորուտեցուն...

III

Ծեր ամուսինները մնացին մենակ: Ամբողջ աշուն ու ձեռո
տնից գրեթե դուրս չեկան: Նանը մինչեւ անդամ յեկեղեցի չեր գը-
նում: «Յեթե նրանում մի զորութին կար, ըսենց չեր ըլի», ասում
եր նա հաճախ: Նրանց յերկար ճանապարհը անից գոմն եր, գոմից
տուն, բոլոր ժամանակ զբաղվում ելին տափարի և հավերի հոգսով:
Ու այսպես մինչեւ գարուն: Իսկ գարնանը, յերբ վարուցանքն ըս-
կավեց, ծերունին արորը սարքեց և զնաց վար:

Յեզ միքանի որ եր արդեն՝ վար եր անում:

Ճաշն անց եր: Պառավ Մարանը շեմքի մոտ ամաններ եր սըր-
բում ավազով: Չամբարը նրա կողքին նստած, գլուխը թաթերին,
աչքերը յերեմն-յերեմն բանալով, նայում եր պառավին և նորից
ննջում: Մեկ ել նա մոռաց հանկարծ և մի ակնթարթում ցատկեց
տեղից ու հաջելով տուաջ վագեց: Ո՞վ ե... Նանը ձեռը զրեց ճակա-
տին և իր քաղված աչքերով նայեց շան յետելից: Ինչ-վոր մեկը վա-
լիս եր զեպի իրեն՝ մի հաստ ձեռնափայտ ձեռին: Գալիս եր կա-
մաց-կամաց ու ծանր-ծանր շուրջն եր նայում: Հազին զինվորի շի-
նել ու գլխարկ եր, բայց ինքը զինվորի նման չեր յերեսում՝ կա-
զում եր միքիչ, զլիարկն ել աչքերին եր քաշել: «Տենաս օ՞վ ե» —
մտածեց նանը ձեռը ճակատին: «Չլինի Դավոյի մասին մի ըան գի-
տի»... Նանը, առանց տեղից շարժվելու, շարունակում եր նայել
զարմացած: Յեկողը յեկավ կաղալով, յեկավ ու հանկարծ «Բարով,
նանի» ասավ: Պառավը զրեթե ծուլ յեղավ տեղից:

— Ախ, Դավո ջան...

Ու ծեր Չամբարից բայցի վոչվոք չտեսավ, թե ինչպես մայր
ու վորդի գրկեցին իրար ու լաց յեղան... Պառավը զարմացած եր:

առաջին կանքնած եր մի ուրիշ Դավիթ. ձայնը նըանն եր, բայց ինքն սկի նման չեր. աչքերը խոր ընկած, վոսկրները սրված, մի թշի վրա յել ինչ-վոր սպի կար. զնդակի տեղ եր, ինչ եր... Նանն ուզում եր հարցումիոր անել, բայց չկարողացավ: Յեվ քիչ հետո, յերբ մտան ներս, յերկու փոքրիկ, քառակուսի լուսամուտներով սենյակը, նա հուզումից սկսեց անկապ, կցկտուր խոսեր:

— Ո՞վ զորմիոր սուրբ Սարգիս... Ախր յերազում տեսում եշի, Դավի ջան, տենում եյի, վոր չե...—Ու խոսում, խոսում եր յերկար ու կարծես ուզում եր միքանի տարվա անցուդարձը պատմել միքանի ըոսկեյում:

Դավիթը մորը լսելով՝ նայում եր միաժամանակ կից սենյակի դռան և դեպի բակը: Յերկար լսելուց հետո նա, վերջապես, ընդհատեց մորը.

— Բա ես մերոնք մւր են,—հարցրեց հանկարծ:

— Մերոնք,—յերկարեց խոսքը նանք, շուրթերը սեղմելով.— Հերդ, Դավի ջան, զնացել ե վար անելու: Յերկու որ ե մեր դիմացի արտը վարում ե... Հողը, ասում ե, շատ ե պնդացել: Դէ, իրա ուժն ել չկա են վաղվա... Խեղճ հայր հալից ընկել ե: Դույել մի խարար չես անում... Միշտ ասում ե՝ «գա յերեսիս մի բուռ հող քցի,—ել՝ հեշ»...:

Լուռ լսում եր Դավիթը մորը և ելի նայում կից սենյակի և բակի դռան: Յերկար լսեց, լսեց և նորից ընդհատեց մորը.

Բա են հարմն ո՞ւր ե զնացել...

Վորդու հարցը շփոթեց պառավին. նա չկարողացավ իսկույն պատասխանել: «Իմացել ե տենաս, թե չե», մտածեց և աչքերը դետնին, սկսեց թախտի կարպետի ծալված ծայրերն ուղղել:

— Վարդիշաղը,—խոսեց նա կարպետի հետ խաղալով.— Վարդիշաղը հերանց տուն ե զնացել...—ու խոսքը չտվարտած՝ հառաչեց:

Դավիթը նկատեց մոր հուզումը և կանաչ կանթով գլխարկը, վոր մինչ այդ գլխին եր, վերցրեց և նստեց թախտի ծայրին:

— Ինչ կա, բան ե պատահե՞...

Նանք լուռ եր:

— Դե ասա տեսնենք ինչ կա,—շարունակեց Դավիթը, մոր լրությունից ինքն ել անհանգստացած: Պառավը փղձկաց հանկարծ և սկսեց արտասպել:

Ու պատմեց բոլորը:

— Ախ, ասողի լեզուն չորանա, չորանա...

Մի ժամ, ժամից ավելի Դավիթը մնաց լուռ նստած միևնույն անդը, արմունկները ծնկներին, վլուխն ափերի մեջ առած՝ մտա-

ծում եր: Հետո յեկավ տեղից, գլխարկը վերցրեց, փայտը ձեռն առավ և զնաց դեպի գուլուր: «Ո՞ւր, Դավի ջան», հարցրեց նանը վախեցած: Դավիթն առանց յետ դառնալու՝ «գնամ տենամ ինչ ե անում տալին», ասավ ու առաջ զնաց կաղալով: Մայրը հուզումի մեջ մոռացել եր վորդու կաղալը:

— Բա եդ վոտիդ ինչ ե պատահեր, այս աղա— հարցրեց հոգատար յերկյուղով:

— Հեջ, —պատասխանեց Դավիթն առանց յետ դառնալու:

Դավիթը կամացուկ ու գանգաղ գուրս յեկավ փողոց և քայլերն ուղղեց դեպի դիմացի արտը: Վարի որ եր, փողոցում մարդ սակավ եր պատահում. պատահողներն ել կանգնում եյին և նայում նրան: Գյուղում զինվոր հազվագեղ եր լինում, այդ պատճառով նայում եյին ուշադիր, հետաքրքիր: Մի կին, վոր յերկու հորթ իրար կապած, առաջն արած քշում եր—յերկար նայեց նրան և դարձավ կողքի կնաջը. «Մածկալանց Դավիթը չի, աղջի, Վոսկանի տղեն»... «Հլե վոնց վոր նա ըլի», պատասխանեց մյուսը: Դավիթը ճանաչեց այդ կանանց, — (մեկն իրենց հարեան Պետրոսի կինն եր, իսկ մյուսը ժամհարի հարսը), բայց չպատասխանեց նրանց տարակուսանքին: Նա յել իր հերթին նայում եր գյուղի տներին, վորոնք բոլորն ել կարծես իջել, փոքրացել, խրվում եյին գետնի մեջ. ելի Արտեմի խանութն եր մենակ, վոր աչքի յել ընկնում ներկած գոներով... Գնում եր նա և նայում տներին. տեղատեղ չները հաջում եյին նրա վրա, յերեխաները կանչում եյին «ուռուս, ուռուս»... Այս բոլորին նա վոչ մի ուշ չեր դարձնում, թիւում եր նրան, թե զնում ե ոտար մի գյուղի միջով, այնպես, ինչպես զնում եր Կարպատի, Պոլչի և Ռուսաստանի զյուղերի միջով: Բայց վոչ մի տեղ — վոչ Կարպատում, վոչ ել Ռուսաստանում նա իրեն այնպես ոտար ու մենակ չեր զգացել, ինչպես այստեղ՝ իր հայրենի գյուղում: Նրա մաքից չեյին հենանում մոր խոսքերը — «Վարդիշաղը մարդու յե զնացել». ու այնքան վատ եր զյուղ իրեն, վոր չեր ուղում մտրդ տեսնել և աշխատում եր շուտով, շտապով գուլոս գալ զաշտ... Աջ վոտի վրա կաղալով, ձեռնախայտը ձեռին, վերջապես, գուրս յեկավ զյուղից և հասավ գետափ: Դեռ զյուղամիջից, յերը շները չեյին հաջում, լովում եր գետի խջխջոցը: Զրի այդ ձայնը ծանոթ եր Դավիթին, բայց դա յել հեռափոր ու ոտար եր թիւում: Գետը հոսում եր հորդացած ջրերով, պղաոր ու մթնած ալիքները մըմուռ եյին և հրերում միմյանց կավե պատնեշների մեջ ու բոլոր ժամհարի խջխջում, թշում, կարծես բողոքում, տրտնջում ու զայրանում եյին ում-վոր գեմ:

Դավիթը կամաց-կամաց մոտեցավ արտին։ Ծեր Վոսկանն ու-
րագն արխալուղի գոտին խրած՝ զառամած ձայնով անընդհատ խրա-
խուսում եր յեղներին. — հա, քեզ մատաղ, հա, քաշի, հա... Յեվ յեղ-
ները մեջքները լարած՝ գնում եյին համաշափ քայլերով, իսկ նրանց
յետև բացվող ակոսից բարձրանում եր թեթև, բարակ ծխի նման
թեթև գոլորշի։

— Բարի աջողում ամի, — ասավ Դավիթը հորը մոտենալով և,
քրտնած լինելով, դիմարկը վերցրեց։

Հայրն ավելի ուշ ճանաչեց վորդուն, քան մայրը։ Դավիթը...
Յերկար չեր հավատում և ձեռն աչքերին հովանի արած՝ նայում
եր։ Յերբ վերջապես, համոզվեց՝ Դավիթն ինքն և — բռնեց վորդու
գլուխը և համբուրեց նրա քունքի մազերը, ապա սկսեց գանգաշտ-
վել, վոր այսքան ժամանակ նամակ չեր գրում, իրենք եր, ով և ի-
մանում, ինչեր եյին մտածում։

Խեղճ մերդ ամեն որ լաց եր լինում. — Հայ ես վոնց ելավ,
ես ինչ ելավ, — խոսում եր ծերունի Վոսկանը դանդաղ, զառամ ձայ-
նով, և նրա անատամ բերանը չպառում եր, և բեղերի մազերը, քիչ
եր մնում, բերանը մտնեյին։ Մոր պես հայրն ել փոքրացած ու-
թեթևացած եր թվում Դավիթին. ավելի նիհարել եր ու ծերացել.
հոնքերը բոլորովին ճերմակել եյին և կախ ընկել աչքերի վրա, մին-
չև անգամ ականջների մազերն ել սպիտակել եյին։ — Ի՞ն, լավ ա-
բեր, վոր յեկար, վորդի, լավ արիր. — ասում եր նա շուտ շուտ։

Յեվ յերբ բավական խոսել եր, մի ձեռքով մեջքը բռնեց, մյու-
սով գետնին դիմհար տալով՝ յելավ վարը շարունակելու։ Բայց Դա-
վիթը չթողեց։

— Թող, ապի, ասավ, յես կվարեմ...

Յեվ ձեռնափայտն ու շինելը թողնելով հոր մոտ՝ մաճը բռնեց։
Յեղներն առանց ձիպստի շարժվեցին։ Դրանք հին յեղներն եյին,
վոր ալժմ բավական պառավել եյին, բայց և ավելի փորձառու
դարձել։ «Եհ, գնացել ե, գնացել», — մտածում եր Դավիթը կնոջ մա-
սին. — «Թող գնա... ել կսիկ չի ճարվի աշխարհում», ավելացնում եր
դառնացած, վրեժինդիր և մաճն ամուր սեղմում ձեռքում։ Վարժ
յեղները գնում եյին համաշափ քայլերով և ակոսները կանոնավոր
շարում եյին իրար կողքի։ Գոհ եր Դավիթը. յեղների հմտությունը
զարմացնում եր նրան, այնպես կարգով եյին քայլում։ Զորբորդ
թե հինգերորդ ակոսի վերջում, սակայն, արորը հանկարծ դուրս
պրծագ ակոսից և վարածն ընկափ։ Դավիթը վոար գեմ տվեց արորն
իր տեղը գցելու և, հանկարծ... ծունկը բռնեց ու չոքեց։ Ինչ պա-
տահեց։ Նա սաստիկ ցավ զբաց, ծնկին դիպած հին գնդակի տեղն

այնպես ծակեց, կարծես մեկը շամփրեց նրան. վոտից մինչև գլուխ-
վագեց մի տաք հոսանքը, և քրտինքը միանգամից ծածկեց նրա ճա-
կատը։ Նա ծունկը բանեղ և կամաց շիկեց։ «Վոչինչ, բան չկա. վատ
տեղ դիպավ» — մտածեց նաև և շարունակեց վարը։

Հետկյալ ակոսում կրկնվեց նույնը։

Այս անդամ ծերունի Վոսկանը նկատեց և մոտեցավ վորդուն։

— Ինչ պատահեց, Դավի ջան...

— Հեշ, ծունկս չթին դիպավ, — պատասխանեց Դավիթը ծուն-
կը բռնած։

— Խամությունից կրի, խամությունից. — ասավ հայրը. — դու
նստի, նստի, յես կվարեմ...

Դավիթը ծունկը բռնած՝ գնաց գետի շինելը։ Նա զարմացած
եր. ինչու հանկարծ ծունկը ցավ տվեց այդպես։ Ճիշտ և, գնդակը
դիպել եր ծնկին, հանել եյին և դրանից եր, վոր թեթև կաղում
եր, բայց նրան թվում եր միշտ, վոր, այնուամենայնիվ, իրենցգոր-
ծը կանի։ Նա ձեռից ել, վոտից ել վիրավորվել եր կարպատներում
կամ։ ինչպես ինքն եր ասում - կարգատում, պառկել եր հիվանդա-
նոցում և ամբողջ հիվանդանոցի հետ գերի յեր ընկել, նորից հի-
վանդանոցի հետ ազատվել եր գերությունից, և միշտ ել նրան թը-
վացել եր, վոր լավ և վիրավորվել ե, այդպիսով կաղատվի ծառա-
յությունից և վորքան ել ձեռքն ու վոտը վնասված լինեն, այնու-
ամենայնիվ իրենց գործը կարող ե անել։ Բայց ահա — ել ինչի յե-
պետք...

Որը կամաց-կամաց յերեկոյանում եր, բայց նա տեղից չեր
յելում. ծունկը դեռ մոմում եր։ Հայրը միքանի անդամ խոր-
հուրդ տվեց գնալ տուն։ Չուզեց։ Ուր գնալ, ինչ պիտի անի տա-
նը... Ծեր մարդն աշխատի եստեղ, ինքը գնա տուն։ Ինչ կա տա-
նը... Յեվ նա նույն տեղը նստած մնաց այնքան ժամանակ, մինչև
վոր հալը յեղներն արձակեղ ու սայլը լծեց։ Նա ոգնեց հորը սայլը
լծելու, ապա շինելը հանավ և կաղալով, առաջվանից միքիչ ավելի
կաղալով՝ գնաց գետի ցյուղ։ Ուր ե գնում; Ի՞նչ պիտի անի տանը,
ինչ կա տանը, մտածում եր նա և զայրութով ցավող վոտին ավե-
լի ամուր խիում գետին...»

Այն ժամանակ, յերբ նա թեթվում եր գետի գետը, նկատեց,
վոր իր յետեից նույնպես գետի ցյուղն եյին գալիս յերեք ձիավոր
Ուշ շգարձնելով յեկողներին՝ նա շարունակեց ճանապարհը։ Զիա-
վորները մոտենում եյին հետպհետեւ։ Դրանցից մեկը տանուտեր Ար-
ուենն եր, մյուս յերկուաը՝ նրա զգիրները՝ հրացանները թիկունքով
զցած։ Տանուտեր Արսենը, ինչպես միշտ, չերքեղի չուխան հագին,

գդակը թեք, բեղերը յերկար ու սուր, վոր հիշեցնում եր նասըր-
եղդին շահին, ուղիղ՝ շիփ-շիտակ նստել եր ձիուն, և ձին նրա տակ
զնում եր «ջրի պես», բաշը քամուն տված: Իսկ գդիրների ձիերը
հետևում եին նրան սայլում լծված հոգնած յարուների պես ցին-
գիր-ցինդիր անելով: Տանուտեր Արսենը գալիս եր իր կառավարու-
թյանը յինթակա Խաչի գեղից: ուր գնացել եր գասալիք զինվոր-
ներ բոնելու: Յերկու որ առաջ նա «արչնի» թուղթ եր սահցել,
վոր Խաչի գեղցի յերկու զինվորներ փախել են — դրանց անունը
գրած եր թղթում—պետք եր բոնել և ուղարկել: Հրամանը պրի-
տավից եր և շատ խիստ: Բայցի դրանից թղթում գրած եր, վոր ընդ
հանրապես հետեւ պիտի, վոր փախած զինվորները չթագնվեն զյու-
ղերում: Յեվ ահա՝ տանուտեր Արսենը գնացել եր այդ հրամանը
կատարելու: Խուզարկել եր փախած զինվորների աները, մարադը,
գոմը, նայել եր ամեն տեղ, մինչև անդամ նրանց ազգականների
տները, հարցուփորձել, սպաննացել եր նրանց ծնողներին, հարա-
զաններին և... վոչինչ: Փախածները չեյին գտնվել: Թանի անգամ
բոնել եր այլպիտի «լրբերի», թքել, մրել ուղարկել և ելի՛ հեշ—
գալիս են... Հենց այդ Խաչի գեղցի մեկը փախել եր յերեք անդամ
Երզրումից... Բայց թե վնրտեղ պիտի թագնված լինեյին այժմ խա-
չիդեղի այդ տղերքը, նա հասկանալ չեր կարողանում: Այսպիսի
անաջողություն չեր ունեցած յերեք, ինչ պատասխան ովիտի տար
պրիստավին... Մտածում եր տանուտեր Արսենը և վուներով շտա-
պեցնում ձիուն, ու ձին նորից զնում եր «ջրի պես»՝ բաշը քա-
մուն տված...

Գետափին հասավ Դավիթին: Մոտենալով ձին կանգնեցրեց և
նրան նայեց: Դավիթն իսկույն ճանաչեց տանուտեր Արսենին. նո-
ւուրուփին չեր փոխվել, փոխվել ՝ եր միան հին չերքեղի չուխտն.
այսինքն առաջիկ սկսույնի փոխարեն արժմ հագել եր դարչնա-
գույն. վազմաները նույն եյին, նույն եր գդակը. ելի նույն
40-45 տարեկան մարդն եր Խաչի ամեն բան լավ եր
հիշում: Բայց տանուտերը չճանաչեց Դավիթին. և ինչպես ճանա-
չեր Դավիթի նման այնքան մարդ կար միատեսակ շորերով. բայց
գուցե և չուզեց ճանաչել, դժվար ե տսել. այնուամենայնիվ, ձին
կանգնեցնելով՝ հարցրեց արագ—մզ ե և վնրաեղից ե գալիս:

Դավիթը չպատասխանեց:

— Քեզ եմ հարցնում ե՞ զինվոր ես:

Դավիթը գարձյալ չպատասխանեց. նա շարունակում եր քայ-
լել գեղի կամուրջը:

— Իսիր, քեռուս տղա, շարունակեց տանուտերը հեղնանքով,

ցուցամատը գեղի իրեն շարժելով, ինչպէս անում են մանուկնե-
րին կանչելիք. — գակումնենո, բան ունես, թե՞ զի քո յեւ:

Դավիթը շնուրը թիվց ուսոր զցեց ու լեզուն չպապնելով գլու-
խը շարժեց. — Նըմա, նրա այդ անտարբերությունը, զիսի շարժումը
և ինպի «չպապը» վրդովեց տանուտերին (ովեւ աս, վոր իրեն մար-
դատեղ չի դնում, իր հարցերին չի պատասխանում), և նա ձին
քշեց զեղի Դավիթը, կամենալով իջնել ձիուց, բայց մինչ այդ՝ յետ
ընկած գզիրները մոռեցան. և Դավիթին ճանաչելով՝ յերկուսը միա-
մին բացականչեցին.

— Սա իո մեր Դավիթն ե, խալիս...

Տանուտերը անքաց, գլուխը թափահարեց, վիրափորանքից թե
թյուրիմացությունից՝ հայտնի չի, և ձիու սանձը բաց թողեց նորից:

Դգիրներն ուզում եյին զրուցց բացել Դավիթի հետ, իմանալ
մըրը ե յեկել վորտեղից, բայց Դավիթն անուշաղիր նրանց ցան-
կության, ատամները սղմած՝ գլուխը շարժեց տանուտերի յետեց,
ինչ-վոր փնթվնթաց ինքն իրեն և շարունակեց ճանապարհը կա-
մուրջով:

Կես ժամից հետո նա տանն եր արգեն: Հազիվ մտել եր ներս,
զզիրներից մեկը յեկավ և կանչեց նրան կանցիլար:

— Ինչ կա, ով ե կանչում, ինչի՞ համար:

— Տանուտերը...

— Տանուտերը... Գլուխը քարով ե տվել տանուտերը... Դնա-
սան գալիս չեմ, — պատասխանեց Դավիթը վրդով:

Յեկ չգնաց:

Բայց քիչ հետո նույն զզիրը նորից յեկավ.

— Խալիքն վոազ կանչում ե կանցիլարումը...

Դավիթը գարցյալ չընաց. ինչ գործ ունի նա տանուտերի մոտ:
Սակայն միքանի բոպեյից հետո յերկու զզիր միասին յեկան
և տարան նրան:

Դավիթը վերցրեց իր ձեռնափայտը և առաջ ընկավ:

«Մի տեսնենք եղ մարդն ինչ ե ուզում ինձանից», մտածում
եր ճանապարհին:

Տանուտերը ձեռքերը յետեր դարսած՝ անցուղարձ եր անում
կանցիլարի բակում և շրթունքները կրծում: Միքանի գյուղացի և
մի կին նրա մոտ կանգնած՝ ինչ-վոր բան եյին ինդրում, բայց տա-
նուտերը աչքը ճամաչել, դժվար ե տսել նրանց: Յերբ Դավիթը
զզիրների հետ միասին ներս մտավ բակը՝ նա ձեռքերը կանթեց
մեջին, կանգնեց և ուղիղ նրան նայեց.

— Հը, վերջապես, — խոսեց նա, — մեր տղա, դու խանի թուն-
ես, նամենիկի թոռն ես, վոր լայաղ չես անում գալ...

Դավիթը մի ձեռք նույնպես կանթեց մեջքին և վոտից գլուխ նայեց տանուտերին, արհամարհական դասնությամբ լի հայացքով:
— Ե, ինչ կա վոր. ինչի գամ,—խոսեց նա ակամա արհամարհանքով, յուբաքանչուր բառն առանձին շեշտելով:

— Եղ արդեն քո բանը չի՝ ինչի համար, — շարունակեց տանուտերը, — քեզ վոր կանչում են — պաի գաս: Հասկանում ես..., ես-տեղ վլատն ե կանչում, հասկանում ես, — բարկացավ տանուտերը և ավելի մոտեցավ նրան, — զու ինձ են ասա — դակումենտ ունես, թե չե: Ել լիրելիրը մի խոսի:

— Դե, լավ, հերիք, — թափ տվեց ձեռք Դավիթը և ձեռնափայտը բարձրացրեց:

Թե գգիրները և թե բակում յեղած գյուղացիները լավ չնկատեցին՝ ինչ պատահեց, վոր տանուտեր Արսենը հանկարծ փովեց գետին:

Գգիրները վրա վագեցին նրան բարձրացնելու:

Բայց նա չեր շարժվում:

Դավիթի հարվածը գիպել եր նրա քունքին — ճակատից արյուն եր գնում:

Դավիթին անմիջապես ձերբակալեցին և տարան ներս:

Յերբ նրա մոտ յեղած թղթերը վերցրին, գրագիրը նրանց մեջ գտավ մեկը, զինվորական վարչությունից տրված մի թուղթ, վորի մեջ գրված եր «Դավիթ Մուճկալով, 28 տարեկան, ազատվում ե զինվորական ծառայությունից անպետքության պատճառով»:

Գրագիր Արշակ-աղան միքանի անգամ կարդաց այդ թուղթը, կարդաց և չհասկացավ, թե ինչու Դավիթը մի այսպիսի վկայութիր ունենալով՝ ցույց չի տվել տանուտերին:

Ինչից ե վախեցել արդյոք, վոր ցույց չի տվել — զարմանում եր նա, — և ինչ ե մտածել, վոր սպանել ե տանուտերին:

Մտածում եր Արշակ-աղան, մտածում ե բան չեր հասկանում:

— Տալիս ե արդյոք այս պատմվածքը պատերազմի շրջանի գյուղի ցայտուն պատկերը:

— Ի՞նչն եր այդ գյուղում ամենաբնորոշը:

— Ի՞նչպիսի հարաբերություններ կային գյուղացիների և տանուտերի միջեղ:

— Ի՞նչ դեր եր խաղում գրագիրը:

— Ի՞նչո՞ւ Դավիթն սպանեց տանուտեր Արսենին:

— Համեմատեցեր այս պատմվածքն Ակսել Բակունցի «Պատերազմի պկիզը գյուղում» պատմվածքի հետ. կա՞ն արդյոք նմանություններ:

— Ի՞նչո՞վ են դրանք պայմանավորված:

ԱՍ. ԶՈՐՅԱՆ

ՉՐԼՈՒՐԻ ՄՈՏ

... Ես, ինչ պատմում եմ — Ավստրու կողմա եր: Շաբթից ավելի, առավոտ, իրիկուն կովում եյինք: Յերեկը հանգստանում եյինք շողի պատճառով — առավոտ, իրիկուն կրակում... Մին ավստրացիք եյին առաջ գալի, մին մենք եյինք վրա տալի, բայց միշտ ենպես եք ըլում, վոր մոտեմ եյինք ելի մեր տեղերում, մեր հին դիրքերում: Բայց գուրան տեղ եր. հերիք եր գլուխներս բարձրացնեյինք — իրար տեսնում եյինք, իսկ դուրբինով հո — վոնց վոր առաջիդ: Մեր ու ավստրացոց արանքին մի տուն կար միայն, մի մէծ տուն, յերկու հարկանի, կտուրը յերկաթած: Կալվածատիրոջ տուն ե, ասում եյին. նրա դաշտն եր, ինչն եր... Առաջին ել պարտեղ կար, սիրուն ճաղավոր պարիսպով: Ենքան մոտիկ եր, վոր — բոլորը տեսնում եյինք: Դրա մոտ ել մի ջրհոր կար՝ յերկար փետով (են վոր ուսուները ծուրավլ են ասում): Ինչքան եյինք ծիծաղում եղ փետի վրա... Եղանակ կովից ամեն բան՝ տունը, ծառերը, ախատեր, կուշ են յեկել կարծես, ուզում փախչել, թագնվել, բայց եղ փետը — եղ ծուրավլ՝ մեն-մենակ տնկվել ե դաշտի մեջ ու դունչը մեկնել յերկնքին: «Աղոթում ե», ասում եյին: տղերքը: «Չե, մեզանից խռավել ա, գանգատ ա անում»: Մթամ աստծուն: Միքանիսն ել թե՝ «Մեդ բանի տեղ չի գնում, ինչքան ուզում եք կրակեցեք, ինձ բան չեք անի, ասում ե»: Ու մենք կրակում եյինք, մի-մին ե, հանաքով նշան եյինք բոնում դրան, բայց նրա համար՝ հե՛չ...

Ու եսպես շաբթից ավելի... Կրակում ենք, կրակում, բայց արել բարձրանում եր թե չե — կրակոցը յերկու կողմից ել դադարում եր:

Կոփիկ՝ կոփի, եղ արեն ել մի կողմից եր նեղում մեզ: Բայց դաշտ, ամառվա շոգ որ, — ջուր ել չկա: Մի բոչկա ջուրը, ինայելով, խմում ենք յերկու որ. որական մի բակլաւկա — վոնց վոր ուղարին դգալով ջրես...

Մի որ եր, ըհը, ջուր չկա... բոչկեն ել ե հատել, բակլաւկեն ել... Ծարավից տղերանց բերանը բաց ե մնացել հավերի պես... Լեզուներս կպել, չորացել ե... Գիտեք ելի, յերբ մարդ ծարավ ե, վոնց ե ըլում... «Այ, միքիչ ջնուր հա՛», ասում ենք իրար: Բայց վորտողից... Բոչկեն գնացել եր ու մի որ եր չկար: Բոնվել եր, ձին եր ընկել, ինչ եր պատահել — չկար... Մեր բախտից ել ավստրացիք չեն շաբթվում, թե չե մի հայ անեյին՝ իրենց գերին եյինք — են-

աղբ և իլնք թուլացել... Մենակ մենք չենք ենակես. վաշտապետն եւ պակաս չի մեզանից: Տեսնում ենք շուտ-շուտ ավտորացոց կողմըն և նայում, պառշները չպալացնում ու «չորս վազմի», ասում եւ, «յերը պիտի ջուրը բերեն»:

Բա բեղերը նոր ծլած տղա յեր, առւս ստորինս, բերել եյին ամիցեր: Լավ, դարձիմանդ տղա յեր, հասկացող, հանաքչի. բոլորիս հետ ել լավ եր: Իրան ել վասիլի վլասիչ եյին ասում: Բա նայեց, նայեց ավտորացոց կողմը, մին ել թե՝ «չորս վազմի», գոնե նո ջրհորը մոտիկ ըլեր... Մենք ել նայում ենք ջրհորին ու զարմանում, վոր ջուրն եսքան մոտիկ եւ ու անկարելի, հեռու... Ծարավ մարդիկ ու ջրհոր... Նայում ենք, վոնց վոր սովածը հացին...

Բա ջուրն եսքան մոտիկ ըլի ու մենք եսպես ծարավ, ասում եւ տղերանցից մինը:

— Եղ ասի ե՞,—խոսեցին տղերը:

Խոսում ենք ու ջրհորին նայում, վոնց վոր սովածը հացին: Իսկ մեր վաշտապետը պառշները չպալացնում եւ ու շարունակ՝ «Չորս վազմի, չորս վազմի»...

Տեսնում ենք—խեղճը ինքն ել տանջվում ծարավից:

Խոսում ենք, մին ել տղերանցից մինը թե՝

— Այ, մեկը ըլեր, եղ ջրհորից ջուր բերեր համ...

Ու սկսվեց: Ամեն կողմից վրա տվին.

— Տղերք, միշ կարա խեկապես...

Ասում են ու իրար նայում: Ասում են ու վաշտապետին նայում:

— Յեկեք մեզնից մինը թող դնա...

— Գժկե՞լ եք, ինչ ե, նրանք ենտեղ նստած (այսինքն ավտորացիք), ասում են, ճանձ ել ժամ դա, կտեսնեն...

Մին ել թե՝

— Յեկեք փորձենք:

— Այ տղա, ձեռ վեր կալեք, ասում են, շանսատակ կանեն: Միքանիսը թե՝ փորձենք, միքանիսը՝ թարկը տվեք: Վերջը թե՝ անպատճառ, ինչ ել ուզում ե ըլի—պետք ե դնանք: Բա ով գնա, ով չպնա, թե՝ յեկեք վիճակ քցենք: Յերեսուն-քառասուն թուղթ փաթաթեցին ու լցրին մի փափախ: Դեհ, հանեցեք... Հանեց, սա, հանեց նա—մի ութ, իննը մարդ, վրա տասը, տերդ խնդա, Բաղդասար, վիճակն ընկավ ինձ:

«Դե, գնա հիմի, ասում եմ ինքս ինձ, այ քեզ ովին, յերկու տարի ազատվեցիր կրակից, հիմի արի ջրի ճամպին մեսի... Եսպես ել սարսաղութին»...

Բայց ընկերական բան ե, ինչ պատի անես. ընկել ե, պտի կատարես:

— Դե, արի գնա, արի գնա, — ասում են:

Իսկ յես ժամ չեմ գալի. դեռ կարծում եմ՝ հանաք եւ թուղթ թը ձեռիս շուռ եմ տալիս գես ու գեն: Տղերքն ել կարծում են—վախում եմ: «Զըլի վախենում ես»... Նամուսս չկերցրեց.

— Կատովին թել կապեցեք, գնամ, — ասում եի:

Եստեղ թե՝ Վասիլի Վլասիչին ասենք նոր: Այսինքն վաշտապետին: Վասիլի Վլասիչը ակոպի մի ծերում նստած պապիրոս եր շինում: Յերկու տղա մոտեցան թե՝ «Թույլ տվեք, վաեւ բլագադարովին, գնանք ջրհորից ջուր բերենք»...

— Վոր ջրհորից, ասում ե:

Տղերքը ցույց տվին մեր առաջի ջրհորը:

Վաշտապետը բարկացավ:

— Գժկե՞լ եք, ինչ ե, ասում ե—ինչպես կարելի յե, Զե՞ վոր իսկույն կսպանեն: Նիկակ նիկիզա...

Տղերքը թե՝

Վաեւ բլագարովին, դուք թողեք միայն, վոչինչ ել չի լինի: Ենպես կանենք, վոր շանսնեն:

— Բայց նի ե գնում, — ասում ե:

Թե՝ Բազգառաբը: Այսինքն—յես:

Վաշտապետը միքէչ չեմ ու չում աբաէ: «Ափսոս ե տղեն», — ասում ե: Բայց, վերջը, տեսամ՝ շատ են խնդրում, ծարավից մեռնում են, ճար չկա, ինքն ել ե ծարավ, — թողեց: Կանչեց ինձ իրամու ու խրատում ե.

— Բայց ենպես գնա, — ասում ե, — վոր շանսնեն հա՛... Կարող ե՞ս...

— Կաշխառեմ, — ասում եմ:

Տղերքը ուրախացան: Կատովը բերին, կառը-կտոր թելերը իրար արին, ունկը կապեցին ու ավին ինձ:

— Դե, քեզ տեսնենք:

— Բարի՛ ճամփապարի:

— Հաջողություն...

Թելը գրի կատովի մեջ, կատով ձեռս առա, սողալով անցա ակոպի թումբը ու՝ չոքե-չոք... Գհում եմ փորս զետնին քոելով՝ գնում եմ ծիտ տեսած կատիք պես, փորսող եմ տալիս խոտերի միջով, ու կատով միշտ աջ ձեռիս, զլենիցս առաջ բռնած, վոր յեթե կրակեն ել՝ կատովից զիազի: Միտմիտ մարդ, կարծում եմ՝ կատովից հետո ինձ չի դիպչի, կամ հենց յեկած գնդակը կա-

Տովի կրա յե գալու... Եղպես ե. վախից խոտի շվաքումն ել կողմահ-վես: Գնում եմ, ու մի կողմից վախում եմ, մի կողմից ել ուզում եմ անպատճառ գնալ, գնալ, ինչ ել լինի—գնալ... Անունի, սրատվի խնդիր ե: «Յեթե ճակատիս կրած ե, վոր մեռնելու յեմ, եսպես տեղ, եսպես բանի համար, թող մեռնեմ, ասում եմ, վոչինչ»... Մտածում եմ ու գնում. գնում եմ ու մտածում: Լավ ե՝ կանաչ ե, գնալու ժամանակ ենքան ել չեմ յերևում: Կանաչը եսպես մի թղից ավելի յե: Ես կանաչները տափակեցնելով սովում եմ, սո-ղում... Արեն ել վերևից ենազես ե վասում վոր, տերդ խնդա... Են-քան շողից չեմ նեղվում, ինչքան բրանքից... Քրտինքը ծլում ե յերեսից, թափել ե ականջներիս ետեր... Ուզում եմ սրբեմ, ձե՞ռ կբարձրանա... Սիրտս խնոցու պես քցում ե փորսումս... Բայց գը-նում եմ ելի, գնում—ավատրացիք դեռ չեն տեսնում... Շուտով հոգնեցի, փոփեցի կանաչների վրա... Հանգստացա ու նորից... Գը-նում եմ—ելի չեն տեսնում... Մի յերկու անդամ նայեցի մերսոց կողմը, տեսնեմ յետերիցս ծիկրակում են թագուն, իսկ ավատրա-ցիք—հեշտ... Ժամ չեն զալի: Զեն տեսնում:

Եսպես, ախալերս վոր գուք եք, չոքե-չոք, ստպալով հառա ջըր-հորին: Հասա ու մնացի քարի շվաքում: Բերանս ենազես ե չորտցել, վոր թվում ե՝ լեզուս կապ ե ընկել... Առաջ հլա, ես քարի շվա-քում մի լավ շունչ քաշեցի, հանգստացա... Նայեցի—ավատրացիք ելի չեն տեսնում: Լավ. հմի ինչ անեմ... Տեսնում եմ, վոր դժա-րը գալը չեր, դժարն են ե, թե վոնց ջուր հանեմ... Ջրհորի բերա-նը բարձր ե: արշինի չափ: Բարձրանամ թե չե—տեսնելու յեն, ու տեսնես թե չե—կրակելու յեն: Տերդ խնդա, Բաղդասար... Փորձե-ցի, պառկած, կատու կախել ջրհորը—չեղափ: Ճար չիար—պարի բարձրանայի... Բայց վինց բարձրանայի... Մտածում եմ, մտածում ու չեմ իմանում ինչ անեմ: Վերջը, կեցցես Բաղդասար, մի բան միտս ընկապ—ալլուխս: Լավ եր մտս եր, հանեցի ու կանգնեցի: Կանգնեցի ու թափ տվի դեպի տվատրացիք: Ավատրացիքս իրարով անցան, գլուխները հանեցին ակոպից ու նայում են ինձ: Յես ել սպիտակ ալլուխս թափ եմ տալի, վոր չկրակեն... Մի կողմից թափ եմ տալի, մի կողմից ել կատու կախում եմ հորը: Եղ վոր տե-սպան—ավատրացիքս հրացանները բանեցին: Յես ալլուխս թափ տա-լով ձեռս միքանի անգամ բերանս տարա: Ուզում եմ հասկացնել, վոր ջուր եմ տանում, ծարափ ենք...

Հասկացան, ինչ եր—ել չկրակցեինս...

Աչքերս նրանց կողմը—կատու կախ արի... հիմի յել, արի տես, թոկը կարճ ե, ջրին չի հասնում... Ի՞նչ անեմ... Վերցը զո-տիկս, կապեցի թոկի ծերը: Հասափ:

Չուրը հանեցի, հանեցի ու նորից աղլուխս նրանց կողմը թափ տալով կատու առած վազում եմ: Վհնց եմ վազում—ձի քշես, չես հասնի... Յես վազում եմ, իսկ ավատրացիք յետնիցս ծիծաղում են... Եղ յես հետո իմացա—տղերքը դուրբինով նայել եյին—պատ-մեցին:

Դեռ կես ճամպին եմ—մերոնք «ուռա» կանչեցին: Մալաղեց Բաղդասար, մալաղեց Բաղդասար:

Ել Բաղդասարին հալ ե մնացել:

Հասա ու, տղերանց հետ, ինքս ել ծիծաղում եմ իմ արածի վրա...

Բայց եղ վոչինչ: Յու ես ասա, թե մի կատու ջուրը քանի մարդու ծարափ կկոտրի: Միքանիսը խմեցին—հատափ: Մնացածնե-րը ելի մնացին ծարափ: Դե, գիտեք, ծարափ մարդու մոտ վոր ջուր են խմում—ավելի յե ծարափում: Չուրը ամենից առաջ տվինք, ի-հարկե, մեր վաշտապետին, հետո—ով ավելի ծարափ եր:

Մի հինգ-վեց հոգի խմեց—հատափ:

Տղերքը թե՝ արի Բաղդասար, մեկ ել գնա... Խնդրում են, աղաչում:

Մտածում եմ—գնամ, չդնամ: Ամեն անգամ պապը գաթա չի ուտիլ: Ավատրացիք են, քեռուս տղերքը չեն. մի անգամ թողին—լավ, յերկրորդ անգամ... Մտածեցի: Մտածեցի—ասի՝ մեկ ել գնամ, ինչ կըլի կըլի... Եղպես ժամանակ մարդ հարբածի պես ե ըլում: Շաշի պես հավեսի եյի ընկել...

Ես անգամ վերցի յերկու կատու: Ել վոչ թե սովում եմ ա-ռաջփա պես կամ չոքե-չոք եմ զնում: Կանգնած: Աղլուխս թափ եմ տալի ու առաջ գնում: Ավատրացիքս ել նայում են: Կարծես թե սպասում են, թե մի բան պտի ասեմ...

Համնում եմ ջրհորին, նորից միքանի անգամ ձեռս բերանիս եմ տանում, գլուխս շարժում եմ ու կատու կախում: Ավատրացիքս ելի նոյում են: Առաջիա պես ելի—վոչինչ... Բան չեն ասում:

Կատուները լցրի ու յետ, աղլուխս թափ տալով բերի:

Նոր տեղ ելի հասել, մին ել տղերքը թե՝

— Հրե մի ավատրացի յե զալի:

Յետ դառնամ-տեսնեմ—դրուստ: Մի սիպտակ շոր թափ տալով գալիս ե: Յեկափ, յեկափ ու—ընը—տեսնենք մի աման ել ձեռին:

Մերոնք թե՝

— Ջրի յե զալի...

Դրուստ վոր: Յեկափ, ջրհորի մոտ կանգնեց ու ձեռի շոր թափ տվեց մեր կողմը:

Մերոնք թե՝

— Այ տղա, նրանք ել են ծարավ ելել...

Ու թե դուք ժաժ եք եկել ենտեղ, մերոնք ել ենպես Բանք չարին:

Ավստրացիս կռացավ, ջուր հանեց ու տարափ:

Եղ վոր մերոնք տեսան, սիրտ արան: Թե՝ տղեք, յեկեք մեկ-

մեկ գնացիք ջուր բերենք: Բազգասարը հո փողը աթ չի արել...

Ինչպես ասի—տղերանց մեծ մասը ծարավ եր դեռ: Եղ խոս-

քի վրա բոլորը թե՝

— Գնանք:

Վաշտապետին ասին: Ելի միքէչ չեմ ու չում արավ, բայց թո-

ղեց:

Տղեքը գնացին:

Առաջ հլա մեկ-մեկ, հետո՝ յերկու-յերկու...

Եղ վոր ավստրացիք տեսան—իրանք ել յեկան:

Մենք գնացինք, նրանք յեկան, մենք գնացինք, նրանք յեկան,

ու մին ել տեսանք, մեր զինվորների կեսը հրես ջրհորի գլխին:

Մենք ու ավստրացիք խառնվել ենք իրար: Խոսում ենք, բայց ի-

րար չենք հասկանում: Հասկացնում ենք նշաններով: Մենք ասում

ենք «վարա խարոշ», նրանք ել՝ «գութ, գութ»... Եսպես խոսում

ենք, ջուր ենք հանում, իրար դրանդ ենք անում ու ծիծաղում... Յես մինչև հիմի յել չեմ հասկանում, թե ինչի՞ եյինք ծիծաղում:

Ենքան դիտեմ, վոր ուրախ եյինք, շատ եյինք ուրախ... Մինչեւ

անգամ յերբ ջրից կշտացանք - սկսեցինք յերես, ձեռներ լվանալ:

Հետո ջրհորի եկ ծուրավլի ճուացըինք, բարձրացըինք, կուացըինք,

բարձրացըինք... Ինչպես յերեռում եր՝ յերկար ժամանակ չեր բա-

ռել—ճռճռում ու ենպես ձեռներ եր հանում, վոնց վոր հարյուր տարվա հիվանդ: Դրա ճռճռոցի վրա ծիծաղում ենք, հանացներ ա-

նում... Ավստրացիք ելի ինչ-վոր բան են հարցնում, չենք հասկա-

նում: Նրանք՝ «գութ, գութ», մենք՝ «խարաօն, խարաօն»: Նրանք

մեզ հացի կտորներ են տալիք, մենք նրանց՝ պապիրոս: Ու ելի ի-

րար ենք նայում ու ժալտում...

Զդիտեմ, ինչքան ժամանակ եր անցել—մի ըոսե թե մի ու-

հաթ, — մին ել տեսանք՝ մեր դիրքերից ձեն են տալիք:

— Ռերյատա...

Վոնց ենք վազում: Ել դու պըծա՛ր:

Յետ յեկանք: Վաշտապետը ծիծաղում եւ:

— Հը, իշտացմք, — ասում եւ:

Մենք դիմով ենք անում.

— Դա վաե բլագարողիե:

— Իսկ ավստրացոց հետ ինչ եյիք անում, — հարցնում եւ:

— Վոչինչ.—ասում ենք, — նրանց լեզուն չենք հասկանում:

Նա զլուխը ժաժ տվեց ու բեղի տակ ծիծաղում եւ:

Հետո թե՝

— Լավ չի, — ասում եւ, — յերբ մարդիկ եսպես մոտիկ, բարե-կամ են իրար:

Նրա ես խոսքերի միտքը եղ ժամանակ լավ չհասկացա, բայց աղերանց հետ ելի զլխով արի:

— Ինարկե, վաե բլագարողիե...

Ել չխոսեց: Մենք ել ծարավերս կոտրած՝ հանգստացանք:

Նստել ենք ու խոսում, թե վոնց պատահեց ես բանը. վոնց ելավ, վոր ավստրացիք մեզ մոտ թողին ջրհորին: Միքանիսը թե՝ «իրանք

ել ծարավ եյին դրա համար»... Խոսում ենք մեզ համար, մին ել իրիկնապահին մի հրաման, թե պետք եւ առաջ գնանք, պետք եւ կրակել... Կրակել... Սրի տես, վոր տղերանցից վոչ մինը սիրո չի անում կրակելու: Զեններս չի բռնում, հասկանում եք: Քիչ առաջ իրար հետ ասում, ծիծաղում եյինք—իրիմի... Չի ըլում... Վերջը, վոր չի ըլում... Կրակելում ենք, բայց ենպես: Քցում ենք ողի մեջ, գնում ե...

Կրակեցինք, կրակեցինք, բայց ելի են, ելի են: Առավոար մենք մեր դիրքերում եյինք, ավստրացիք իրենց...

Բայց արի տես, թե բանից ինչ դուրս յեկավ. Մի որ անց՝ մեր վաշտապետին կանչեցին, տարան: Նրանից յետե մեր կապի-տանը, նրա հետ ել մի ուրիշ պարուժիկ յեկան մեզ մոտ—խոսեցին:

Կասլիտանը չոր, յերկար մարդ եր, սարք բնավորության տեր: Զին-վոր տեսներ թե չե նկատողություն. — «Ինչո՞ւ յե զլխարկդ ծու-ռը», «Ինչո՞ւ լավ չբարեկեցիր», «Ինչո՞ւ շորերդ, շինելդ լավ չես կոճ-կել», ու եսպես բաներ: Յեկավ սա ու սկսեց խոսել, թե, «զուք ասում եւ, յեկել եք թշնամու դեմ կովելու, պետք եւ կովեք, ասում եւ, ինչպես կարգն եւ: Մի հավատաք, ասում եւ, են մարդկանց, վոր ձեզ կասեն, թե ավստրացիք մեր բարեկամն են. դրանք հայրենիքի դավաճաններ են»... Խոսեց, խոսեց ու վերջն եւ, թե՝ «Ճեր վաշ-տապետը սրանից յեղը սա կլինի»: Այսինքն հետը յեկած պարու-չիկը: Խոսեց ու գնաց:

Իսկ մեր վաշտապետը—Վասիլի Վլավիչը: Ռուր տարան, ինչ յեղավ... հարցուփորձ, հարցուփորձ—վերջը իմացանք, վոր սպա-

Ենի են... Մնացիք գարմացած, թե ինչո՞ւ: Նրանից ել լավ մարդ... Բոլորիս զրության մեջ մտնում եր, յերբ մի բան ելինք խնդրում— «Հե» չկար: Հիվանդ ժամանակներս գալիս եր մեղ տես, վերավորված զինվորին տանելու ժամանակ համբուրում եր, հետո նամակներ եր գրում, սիրո տալի: (Եղան մի նամակ ել յես եմ ստացել): Իսկ մնացածի հետ—վոնց վոր ախալեր, կդարձեռը, մեջքներիս կիսիեր, կհարցներ՝ վոնց ենք, ինչ ենք... Ու ես բաների համար սիրում եյինք նրան... Բայց արի տես, վոր «վատ մարդ» ե յեղել, ասում ե: «Վատը» վորն ե, ինչ ե արել: Ելի հարցուփորձ, հարցուփորձ, վերջը իմացանք՝ մեղքը են ե, վոր րույլ ե տվել, ասում ե, իրա զինվորներին, թշնամու զինվորների հետ խոսեն և չի թողել թշնամու վրա կրակեն... Եղ վոր իմացանք—կատաղեցինք: Եղքան ել սուտ... Չե վոր մարդը, ասում ենք, եղ բոլորն արավ, վոր ծարավ չմեռնենք: Ել ինչո՞ւ յե եղ սուտը...

Խոսում ենք, բայց ջիպյարներս երվում ենք, վոր մարդը մեր պատճառով սպանվեց: Մտածում ենք, բայց ամեն մեւ կիս սրտին, կարծես, մի քար ե ընկել... Մի որ ել—հինդ-վեց հոգի խոսում ենք եսպես, զարմանում, զայրանում. թե եղան ել բա՛ն... Տղաներից մինը վեր կալավ թե՝ «Եղ բոլորը մեր կալիտանի գործն ե»: Մթամ սպանելու պատճառը նա յե յեղել: Մտածում ենք—զբուստ վոր—բոլորը նրա գործն ե: Կարող եր, չե, ձեն չհանել: Իմացածը ուրիշների—մեծերի—ականջը չըցել, յեթե զբուստ ել ըլեր են, ինչ վոր ասում եյին: Ուր մնամ վոր—սուտ... Մեր մեջ կային ուստ, խախոր, հայ, վրացի, լատիշ: Բոլորն ել հավասար ցավում են— «Խեղճ վասիլի վասիչ»... Ցավում են, ափսոսում, ու ամեն մեկի սրտին, կարծես, մի քար ե ընկած: Ցավում են ու չեն իմանում ինչ անեն... Մի որ ել եսպես հինդ-վեց հոգով խոսում ենք, մեր ուստը—Պալլուշա եյինք ասում—վեր կալավ թե՝ «Պրան ել ասում ե, նրա որը պատի քցել»: Վրացի Դամբիկն ել են կողմից՝ «Ուղիղ ե, ասում, պետք ե»...

Անցավ մի շաբաթ, ավատրացիք առաջ յեկան, նորից յետ գրնացին, ու ես անգամ, յերբ յետ գնացին, մենք մեր դիրքերը հասցրինք ջրհորին: Ու հենց եղուղ՝ մի գիշեր, յերբ կապիտանը, ամեն անգամվա պես, յեկել եր արավերկի—մեր տղեքը, կրակոցի ժամանակ, յեվ յեվս արին դրան... Ու յերբ առավոտը դրա մարմինը գտան ջրհորի մոտ, բոլորն ել կարծեցին, վոր անցնելու ժամանակ ավատրացիք են խփել: Եղան ել գրեցին կազերթեցում...

— Ինչո՞վ բացատրել, վոր օրհորի մոտ այսպես շուտ յեղբայրացան «թշնամի» բանակների զինվորները:

— Ինչո՞ւ կապիտանը դեմ եր զինվորների յեղբայրացանը յեվ ինչո՞ւ սպանեցին վասիլի վասիչին:

— Ինչո՞ւ զինվորներն սպանեցին կապիտանին:

ԱՅ. ԶՈՐՅԱՆ

ՈՂԱՆԻ ՄԱԼԸ

1

Ե՞ս, պատերազմի ժամանակ շատ բաներ անցան կաղնուտի գլխով: Շատ: Տղերքը գնացին կոիվ ու նրանց կեսից ավելին յետ չգարձավ—դաշտերը մնացին անվար, հողերը անցան, հետո հացը պակասեց, հացը թանգացավ ու, վերջն ել, թուրքը յեկավ ու ծանը նստեց հինդ ամիս... Ու եղ որերին կաղնուտի գլխով շատ բաներ անցան... Բայց են, ինչ վոր Ռւսանաց Ռիանի. գլխովն անցավ: Դեռ անցել վոչ մի մարդու գլխով: Այս:

Դեռ թուրքերը չեկած—կաղնուտի ժողովուրդը իրանց տակարըն առաջ արին ու, վորը վոտով, վորը սայլով գնացին զորքի հետ, վախան լոռի. մինչև անգամ տերտերն ել նրանց հետ. ու գյուղում մնացին միայն ծերեր, պառավելեր ու կաղեր: Դրանց հետ մնաց Ռւսանաց նստեց Ռիանը: Տղին, հարսին ու աղջկան ճամպու դրեց և ինքը մնաց, թե՝ «տունն ու բասանը չի կարելի անտեր թունել»: Հասկանմամբ եք—չուզեց իր տունը, իր ձեռովք ցանած բոստանը թողնել անտեր ու գնալ: Ինչպես կնոջը, հարսին, տղին—ենպես ել սիրում եր իր տունը, բոստանը: Դեռ գուցե ավելի: Մարդ եր ու եղպես ընավորություն ուներ: Քնքան ասին «վատանդ ա»—չլսեց: Մնաց ու մնաց.—Ի՞նչ կինի... Վոնց վոր եսպես, ենպես ել յես... Իսձ բան չի ըլի, դուք ձեր մասին մտածեցեք...

Եսպես՝ հարեւաններին, տանըցոց ճամպու դրեց ու ինքը մնաց: Նրա մեծ վորդուն թուրքերը սպանել եյին կարսի կրվում, ու Ռիանը մտածում եր—նրանից հետո ինքը գնաց ի՞նչ աներ. նրան սպանելուց հետո թող իրեն ել սպանեն: Մեկ ել մտածում եր, վոր թուրքը գա, միննուն ե, յերկար չի մնա—ել ինչո՞ւ տունը թողնել անտեր: Ու մնաց... Նրանց թաղում մնացել եր և պառավ Յեղսանը իր կովի հետ: Նա ել չուզեց գնալ, նա ել են կարծիքի յեր, թե թուրքը չե, թեկուղ հարամի յել գա—պառավ կնկան բան չի անի... Թուրքերը յեկան ե, իսկապես, վոչ Ռիանին ձեռք տվին, վոչ ել Յեղսանին. Նրանք յեկան, մտան սրան-նրա տուն, ման յեկան զենքի, զինվորի—բան չգտան. հետո տեղափորկեցին զանազան տներում— «վաշան» տերտերի տանը, ասկյարները՝ ուր պատահեց: Դրանցից մի տասը հոգի յել՝ իրենց հրացաններով, բանով, յեկան Ռիանի տունը: Յեկան՝ բոնեցին յերկու սենյակն ել ու նստեցին:—Մենք եստեղ պիտի մնանք...

Ոհանը—ի՞նչ կաբար ասի Ոհանը—միքանի փալաս հավաքեց ու գնաց գոմը։ Դեռ թուրքի գալուց առաջ յերբ յերկյուղ կար, թե ահա պիտի զան—նա տան պղնձեղենն ու ամանեղենը թաղել եր այնտեղ՝ գոմում, սալի տակ, իսկ տափարը դրկել եր տղի հետ։ Ու յերբ թուրքերն եղան սենյակները բռնեցին—նա ձեն ել չհանեց և անխոս գնաց գոմը։ Շատ դառնացավ, իհարկե, մտքում հայիոյեց. բայց ինչ կարող եր անել—բղի գլխին չեր կարող բռունցքով խրփել... Թշնամի յե, կովով յեկել ե գեղը գրավել—կարաս բան առել... Ու հինգ ամիս մնացին եղան՝ թուրքերը սենյակներում, Ոհանը գոմում. թուրքերն իրենց համար, Ոհանն իրա համար։ Եսպես՝ թուրքերը քնում վեր եյին կենում, գնում եյին իրենց բանին, յերբեմն հեռանում եյին որերով, նրանց տեղը նորերն եյին գալիս, իսկ Ոհանը անխոս՝ ցերեկը միշտ դռան առաջի բռստանում եր լինում—մարդերը քաղաքանում, մարդեր եր ջրում ու միշտ աչքի տա կով նայում եր թուրքերին. մեկ-մեկ ել իր հին, հալից ընկած շուրերը հագին, պառավ, փրչոտած կոճղի մնան, մնկվում եր բռստանում ու աչքի տակով նայում ենապես, ինչպես կատուն մկան—մարադ մտած։ Իսկ յերբ բակից անցնում եր գեղի բռստան կամ բռստանից գեղի գոմը՝ մազոտ հոնքերի տակից նայում եր նրանց և, յեթե առավոտ եր, ասում եր «ուաբան խեր», իսկ յերեկոյան՝ «ախշամ խեր»... Ու ել վոշինչ. չեր ուղում յերկար խոսել։ Յեթե մի բան հարցնեյին կողատասխաններ, մնացած ժամանակ—սուստ իրա գործին։ Բայց ասկյաբները յերենն կանչում եյին նրան թելի, յերբեմն ուտելիք եյին առաջարկում։ Զեր ընդունում։ — Ծնորհակալ եմ, զարդաշ, շատ շնորհակալ եմ... Իսկ յերբ զուով միս կամ կերակուր եյին տալիս—վերցնում եր «նրանց չնեղացնել համար» և տանում աղբանոց կամ գիշերը տալիս շանը։ Միշտ վախենում եր, թե թուրքերը կարող են թունավորել իրան, ու եղան նրանց տվածը չեր ուտում, կամ գեն եր զցում, կամ շանը տալիս... Յերբ ասկյարները, տարորինակ արտասանությամբ, կանչում եյին նրան՝ «Ոհան ամու»—«Ոհան ամուն ձեր աչքը հանի», ասում եր մտքում և, դարանակալ աչքերը գետնին, վորոնց մեջ միշտ զգուշություն կար, մոտենում եր նրանց։ Ու, պատահում եր, ասկյաբները զրուցում եյին նրա հետ, տան առաջին գերաններին նստած հանաքներ եյին անում, բայց նա, ո, միշտ զգուշ եր, միշտ իրեն պահում եր, վոր մի ավելորդ բան չասի։ Իսկ ենքան բան ուներ իր սրառում, ենքան... իր հին չուխեն հագին, մազի մեջ կորած գեմքով մնկվում եր բռստանում կաղամբների, բազուկների մեջ և արեածաղիկների արանքում, ինչպես հին փրչոտած կոճղ, և աչքերի տակով նայում թուր-

քերին, թե ինչ են անում, ուր են գնում, անից բան չեն տանում արդյոք, կամ չեն գնում դեպի գոմը, ուր թաղված եր պղնձեղենն ու ամաննեղենը։ Իսկ մեկ-մեկ ել, յերբ ասկյաբները հրացանները վերցրած՝ վորեւ տեղ եյին շտապում, յերբ նա կուշ եր գալիս արևածաղիկների յետեւ և ամբողջովին ուշագրություն դառած՝ հետեւ վում եր, թե գուցե հաւառ են, գուցե մերոնք հարձակվել են... Գիշերները մանավանդ, յերբ մենակ պառկում եր գոմում, համարյա չեր քնում. մտածում եր, մտածում, ու ենպես բաներ, վոր չեղած...

— Այ, մի մերոնք գան քամակից ու ջարդեն. այ մի մերոնց թովիր տրաքի սրանց մեջ կոտորվեն. են ժամանակ ինքն ել սրանց հրացաններից մինը կվերցնի ու մեկ, յերկու, տասերկու... Են ժամանակ կիմանան՝ ինչ բան և մարդ սպանելը... Մտածելով հիշում եր սպանված վորդուն ու հառաջում գոմի խավաբում։ Յեվ գոմի լուսության ու խավարի մեջ նրա ականջները խշում եյին, սիրտը փուլ եր գալիս, ու Ոհանը, եղ ահաղին մարդը, սկսում եր արտասվել... Եղանակ, վորդու կսկիծը նրան ենպես բաներ եր մտածել տալիս, և նա արտասվում եր. արտասվում եր ավելի անզորությունից, վոր վոշինչ չի կարող անել, վորդու վրեժը չի կարող առնել։

Յերեմի ել գնում եր պառավ Յեղսանի մոտ և կամաց, զգուշ, շուրջը պահելով, վոր իրենց վոչվոք չմի, խոսում եր թուրքերի մասին. — Յեղսան հարս, ինչ ես իմացել յերբ են կորչում...

Յեղսան հարս, տարիքով Ոհանից մեծ եր թե շուտ եր կարգված նրանից, իրան ավելի հեղինակալոր եր պահում. — Վոչ մի բան ել չեմ իմացել. թուրքերը իրանց սրտի խորհուրդը ինձ չեն հայտնում։ Փլուխը քարը, թե յերբ կերթան...

Ոհանը զարմանում եր Յեղսան հարսի անտարբերության վրա. բայց իսկույն հիշում եր, վոր նա թուրքերին կաթ և ծախում. «իսերփում և զրա համար. քավթառ»... Ու մի փոքր մտածելուց հետո փրչու զլուխը բարձրացնում եր ու դառնում պառավին.

— Յեղսան հարս, ելի կաթ են տանում... Համաց Քթներովը գա...

Ու մի որ ել ահա, յերբ արևածաղիկների արանքում կանգնած՝ նայում եր եսպես՝ նկատեց, վոր թուրքերը անհանգիստ գնում-զալիս են, անհանգիստ խոսում ու շորեր, հրացան, բան հավաքում...

«Եստեղ մի բան կա», մտածեց Ոհանը ու զիսողությունը լարեց, վոր ավելի լավ տեմի, թե ինչ եկատարփում։ Այս, թուրքերը անհանգիստ են նրանք հավաքում են տան իրերը...

Հավաքեցին, հավաքեցին և, վերջը, զինվեցին, շինել ջրի աման և ուրիշ բաներ վերցրած՝ գնացին...

— Տեսար, Յեղսան հարս: Գնացին: Կոբիվ կա ի՞նչ ա... Բան չես իմացել...

ԶԵ. Յեղսանը բան չգիտեր, բայց տնհամնպատացավ:

— Գնացին, ասքմ ես—բա մածուն են մերել տվել... իրիկվա համար...—Յեվ նա զլուխը շարժեց մտածմունքի մեջ:—ԶԵ, հալբաթ մոտիկ տեղ են գնացել, իրիկունե ելի յետ կդան...

Ու յերկուսով սկսում են գանազան յենթագրություններ անել: Բայց Յեղսանին ամենահավանականը թվում է այն, վոր թուրքերը իրիկունն աքալատճառ յետ կդան, յեթե վոչ մածուն չելին մերիլ տա: Իհարկե... Հարևանները խոսում են եսպես, մեկ ել ի՞նչ-վոր ձայն, շարժում ե բավում գեղի ծայրից, անտառի կողմից... Ոհանը նորից վագում ե իր գիտարանը—գոմի կտուրը և, ձեռը ճակատին, նայում անտառի կողմը: Նայում և ի՞նչ թուրք գորքը ահա յետ ե գալիս, բայց ուրիշ տեսակ՝ իրար խառնված, անկարգ... Ու, կարծես, միայն գեղից գնացածները չեն, ավելի շատ են... Նըրանց յետեկից գալիս են ձիավորներ քոՓ-պոլիմոս են բերում... ու կամաց-կամաց մոտենում են գեղին... Փախչում են... Ահից Ոհանը կուցավ. կնկատեն և, ով է իմանում, փախչում են գազազած կինեն կնկատեն ու վըզզ—մեկ ել տեսար, գնդակը յեկավ... Նա կուշ յեկավ ավելի ու շարունակեց դիտել...

Թուրքերը յեկան, անկարգ շարքերով մտան գեղի տակի շունեն ու՝ շունեյով ուղիղ յետ... Միքանիսը ջոկվեցին, յեկան մտան գեղ և ուղիղ տերտերանց տուն փաչի դիվանխանեն. մտան ներս, ի՞նչ վոր կապոցներ, բաներ առան ու հայդա... Նըրանց հետ գնացին և դարառութերը... Դըրանք ել շունեն ընկան ու գնում են ձիով, վոտով... Իսկ քոփլ-պուլիմոսը վազեցնում են ձիերը. ու ճամպից ամպի պետ փոշի յե բարձրանում...

— Քաշվում են... Փախչում են...

Յերբ եգակես շունելի փոշին բարձրացնելով՝ հեռացան բավական հեռու, ավելի շուտ, յերբ ծածկվեցին հեռվի փոշում՝ Ոհանը ցած իջավ իր գիտարանից և ուղիղ տերտերանց տուն—թուրք չկա արդյոք: Տերտերանց հայտնում մարդ, շունչ, զարառվ չկար: Տան գոները կրնկի վրա բաց են և ներս՝ վոչ մի շունչ... Այ քեզ ուրեմն ինքը չի սխալվում, բոլորը քաշվել են... Այ անսպասելի բան... Ռւզեց գնալ Ոհանը Յեղսանի մոտ, հայտնել այդ մասին, բայց մտածեց, վոր լավ կլինի առաջ մի գնա իր տուն, տեսնի ի՞նչ են արել ենտեղ թուրքերը:

Առաջ նա վախենում եր թե ի՞նչ—իր սենյակները չեր մտնում, ալժմ ել, զգուշությամբ, դուռը բաց արավ և մտավ տուշին սեն-

յակը: Ու, ի՞նչ ասես չկար եղտեղ, թափթած եր ամեն բան—փամփուշաներ, գնդակներ, հին տբեխներ, շորի կտորտանք, թղթեր ու խոտ, քար ու խոտ... Խոտը թուրքերը վուել եյին իրենց տակ, իսկ քարերը զրել բարձի տեղ, ու քարերի վրան՝ ելի խոտ... Յեվ ամեն կողմ սեխի վարունդի կեղեներ...

— Թովլա յեն շինել...

Մտքում հայհոյեց ու մոտեցավ մյուս սենյակի դռան:

Բայց հազիվ մի քայլ եր արել, վոր մտնի ներս—կանդ առավ քարացած: Նրա աչքերը տկամա չովեցին, բիրերը լայնացան և ձեռները, ահազին ձեռները, կոտրված թերերի պես, կախ ընկան կողքերից...

2

Այն, ի՞նչ վոր Ոհանը տեսավ այդ բոպեյին, և անսպասելի յեր և գարմանալի, և, յեթե կուղեք, յերկուղալի:

Սենյակի միակ տախտին, վորի վրա դարձյալ խոտ եր փռած, վորպենդի քնողի համար փափուկ լինի, պառկած եր, ի՞նչ եք կարծում՝ ով կամ ի՞նչ, վորից Ոհանը վախեցավ, վոչ—ավելի շուտ հանկարծակիի յեկավ, գարմացավ և, յեթե կուղեք, ապշեց... Պառկոծ եր մի թուրք, մի ահազին, վիթխարի մարդ իր ասկյարի շորերով, տրեխները հագին...

Միքանի վայրկան, ի՞նչ—միքանի բոպեյից ավելի Ոհանը մնաց եղպես քարացած, վեր քաշված, և առաջին միտքը, վոր յեկավ նրա գլուխը, այն եր, ուրեմն, բոլորը գեռ չեն գնացել... Շատ կարելի յե ուրիշ տներում ել կան սրա նման... Մտածում ե Ոհանը շեմքում կանգնած, ինչպես կենդանի զարմանք, մտածում ե ու մտքերը, ինչպես մեղվի պար, յեռում ե նրա զլխում.—շատ կարելի յե գնացին մեղ խաբելու, մեղ փորձելու համար. հը, շատ կարելի յե... Բայց գուցե սա մեռմծ ե—դրա համար են թողել: ԶԵ, մեռած լիներ—կթաղեյին... Մտածում ե Ոհանը շեմքում կանգնած, մտածում ե, ու մտքերը, ինչպես մեղվի պար, յեռում են նրա զլխում: Մտածում ե—մին ել թուրքը—ահա—շարժում ե ու մտքում քնի մեջ, մնքում ե ծանր ու յերկար, և կուրծքը բարձրանում ե, իջնում, բարձրանում ե, իջնում...

«Մնացել ե», մտածեց Ոհանը, և նրա աչքերը, հոնքի մազերի տակ կորած մանրիկ աչքերը, պսպղացին ուրախությունից: Ծեր, կուշ յեկած դեմքին յերեաց ուրախ մի բան, զոհ տեսք, և նա խոկոյն, իր հասակին անհամապատասխան արագությամբ, ցատկեց դոների արանքից և թեթե, անձայն քայլերով, վոտի մատների վրա, վազեց գուրմ:

Դուրս յեկավ և, ուղիղ գեղի գոմը. վազում ե թեթև և աչքերըն եք, բոլոր ժամանակ, փայլում են ենպես, կարծես գանձ ե գտել:

Վաղեց, մտավ գոմը ու, քիչ հետո, դուրս յեկավ կացինը ձեռին, ու նորից թեթև քայլերով գեղի սենւակները: Կացինը բռնել ե վոտին կացըրած, կարծես վախենում ե՝ մարդ տեսնի: Եղակն կացինը վոտին սղմած մտավ ներս և զգուշ, շատ զգուշ քայլերով մոտեցավ յերկրորդ սենւակին... Մոտենում ե և հետն ել սիրտ դողում ե—չինի հանկարծ թուրքը զարթնած լինի... Մոտենում ե ատամները սեղմած, մոտենում ե, մոտենում ե, շեմքի մոտ կացինը բռնում է յետեր... Հաղիվ մի քայլ եր արել—թուրքը տնքաց առաջի պես ծանր տանջանքով, դժվարությամբ, վոնց վոր ծանր յերադի մեջ: Ցնքաց, ու եդ անքոցի հետ նրա բերանից թուավ մի բառ.

— Անմ...

Ոհանը մի ակնթարթ կանգ ե առնում, աչքերը քնածի վրա, կանգ ե առնում անշարժ, առաջի նման քարացած, շունչը՝ բերանում պահած և, ապա կացինը նույն դիրքով բռնած, մոտենում ե քայլ առ քայլ, մոտենում ե զգուշ. ինչպես զոդն ե մոտենում աչքադրած բանին... Մոտենում ե կացնի կոթը վոսկրոտ մատներով պինդ բռնած: Ատամներն ել սեղմվում են իրար, իսկ աչքերը փայլում են, ինչպես վորս տեսած կատվի աչքեր, վոր զգուշ, գողեգող մոտենում ե իր վորսին՝ մեկն հարձակվելու համար:

Բայց այստեղ պատահեց մի բան, վոր կանգնեցրեց Ոհանի ձեռի թափը: Մի բան, վոր նա յերբեք չեր կարող սպասել:

Արդյոք նրա քայլերի ձայնից թե պատահաբար՝ պառկած թուրքը ծուլ յեղավ հանկարծ և զարմացած, լայն-լայն բացված աչքերով նայում ե Ոհանին, նայում ե ինչպես յերեխա, վոր կարծես տեսիլք ե տեսել յերազում—հայացքն ահով ու սարսափով լիքը: Նա ձեռները հավիարի պես բռնեց դեմքին, ասես պաշտպանվելու համար, հետո ձեռի մեկը կրծքին դնելով, մշտառվ ցույց արվեց ուսը, և արցունքի յերկու կաթիլ ընկան նրա աչքերից... Արցունքի կաթիլներ, հասկանում եք. այդ ահազին մարդու աչքերից արցունքի կաթիլներ ընկան և գնացին, կորան միրուքի մեջ... Եդ բռնորը նման եր փոքրիկ յերեխայի արածի, վորը տեսեց միայն մի ակնթարթ, մի վայրկյան, գուցե և միքանի բռակե, — Ոհանը լավ չկարողացավ վորոշել—բարձրացրած կացինը իջավ նրա ձեռի հետ, և մնաց նա իր տեղում մեխած... Իսկ թուրքը, նորից, մեջքի վրա ընկավ տախտին ու արտասվճամ ե...

Ոհանը քարացած ե զարմացած, ապշած...

«Ի՞նչ ցավ ունի տեսնես», մտածում ե Ոհանը, մտածում ե և ուղում ե հարցնել թե վնրտեղն ե ցավում: Այս, ենպես ծանը, դժվար ե անքում թուրքը, վար նա ուղում ե հարցնել թե նրա ինչըն ե, ցավում. բայց չի համարձակվում—ամաչում ե ինքը իրանից, ամաշում ե, վոր թուրքն իր առաջ լաց յեղավ: Նշանակում ե մի բան ունի ես թուրքը, մտածում ե—ի՞նչն ե ցավում, տեսնես:

Նա անշարժ մտածում ե, իսկ թուրքը մեջքին ընկած՝ չնշում ե արագ-արագ. յերեմն հառաջելով, ինչպես ահարկու բանից փախս առած յերեխա... Ոհանը տարակուսում ե—չի իմանում՝ թուրքը իրանից վախեցավ, թե նրա մի տեղը ցավում ե: Ուղում ե հարցնել—ելի չի կարողանում, չի համարձակվում...

Վերջապես մի քայլ ե անում և ձեռը մոտեցնում թուրքի ուսին:

Թուրքը վախեցած ծուլ ե լինում նորից և ուղում ե նստել: — Վախիլ մի, վախիլ մի—զորիսմա.—ասում ե Ոհանը և աշխատում ե խոսել մեղմ ձայնով:—Հիվանդ ես... Նաչաղ սմն...

Հարցնում ե օհանը մեղմ, մեղավոր ձայնով:

Թուրքն, աչքերն իրենց բներում խաղացնելով՝ նայում ե նըրան և ուղում ե կարծես վեր կենալ տեղից ու փախչել կամ պաշտպանվել, ու չի կարողանում... Եղակն նայեց Ոհանին, լավ անտղեց, հետո աչքերը պրատելով՝ նայվածքը ուղղեց Ոհանի ձեռին—կացինը չկար—ու, կարծես, հանգստանալով՝ շունչ քաշեց թեթևացած: Բայց դեմքը գեռ սպրինած եր, մոմի պեղին, կարծես տեսիլք եր տեսնում: Դեմքը կծկում եր շուտ-շուտ և ուսը բռնում նիհարած, գեղնած ձեռով:

Ոհանն ելի տարակուսած նայում ե նըրան և չի կարողանում վոչ հեռանալ, վոչ մուանալ՝ մի ծանը բան և զգում կոկորդում, թե սրտում... Ամաչում ե, ամոթ և զգում կարծես, մի ամոթ, վոր մեծերն զգումնեն փոքրերի մոտ... Ու հանկարծ, ասես սմնառում ծառ կտրելու ժամանակ զողության մեջ բռնված, ու զրանից ազատվելու համար կարծես՝ Ոհանը յետ և ցատկում, կացինը վերցնում ե ու դուրս՝ մյուս սենյակը. այստեղից ել արագ՝ դոմք: Հաւփշտապ, զզվանքով, ինչպես ոձ, կացինը զցում ե ներս ու նորից թուրքի մոտ:

Թուրքը նույն դիրքով պառկած եր՝ աչքերը դեպի դուռը: Ոհանին տեսնելուն պես նստեց շտապով. աչքերը վասկում են տեսպվ, խաղում են ըներում ու, կարծես, ուղում են պայթել:

Յերկուսն ել լուս են,—ծանը, անհարմար լուսիցյուն: Թուրքը, պարմացած, նայում ե Ոհանին, Ոհանը՝ հոնքերի տակից՝ նըրան ու-

գում ե ելի մի բան ասի—չի կարողանում. թուրքերեն լավ չպիտի,
յեղածն ել մոռանում ե. մոռացել ե: Խմացած խոսքերը չի հիշում:
Վերջապես, մի վոտից մյուսի վրա հենվելով, նրա միաը միքանի
բառեր յեկան, և սկսեց խոսել—հայերեն, թուրքերեն խառնելով,
մեծ մասամբ նշաններով: Յեզ առաջին հարցը, վոր տվեց Ոհանը
թուրքին, ելի այն եր, թե ինչն ե ցալում—նաչաղ... Վերտեղ...

Թուրքը, ակամա, դժվարությամբ ցույց ե տալիս ուսը:

Ոհանը լուսմ ե մի փոքր. դարձյալ դժվարանում ե խոսել:

— Աւոդ,—ասում ե կամաց և, զգուշությամբ, ձեռքը մոտեց-
նում ե թուրքի ուսին, այստեղ ուր ցույց տվեց ինքը:

Չեռք տալուն պես նրա գեմքը ծամածովում ե ցավից—Աւճ...

— Ցավում ա, —հարցնում ե Ոհանը:

Թուրքը աչքերը խփում ե և զլուխը շարժում:

Ո՛, շատ ե ցավում, շատ...

Ու նորից, թուլցած, ընկնում ե տախտին: Յերկում. ե՞ ցա-
վին գիմանալ չի կարողանում—այսպես ե ցավում:

Ոհանը նայում ե թուրքին, նայում ե նրա ցավից տանջված
գեմքին և համսկարծ:

— Հյա բաց, զյորախ, —ասում ե:

Թուրքը սպասել չի տալիս. կրծքի կոճակները արձակում ե,
շորը յետ տանում և ուսը բացում:

Ահագին ուսուցք: Գնդակի տեղ ե, ինը վերք. ուսել ե, և ամ-
բողջ մարմինը ալրփում ե զրանից: Ոհանին թվում ե ձեռները տաք
թուրքի մեջ և կոխում—այսպես տաք ե թուրքը, այսպես, և այր-
փում:

— Մեր ունես, —հարցնում ե Ոհանը ուսը նայելուց հետո և,
հետո, ինքն ել զարմանում ե, թե ինչն այդ հարցը տվեց:

Թուրքը չի հասկանում:

Ոհանը հիշում ե թուրքերենը.

— Անա, անա. վար, —կրկնում ե:

Թուրքը զլխով ե անում:

— Հա. դե շատ լավ,—շարունակում ե Ոհանը.—Անա՝ յախշի,
չոխ յախշի...

Թուրքի գեղին գեմքով մի ժպիտ ե սահում:

— Իսկ հեր—աթան—վար, —հարցնում ե նորից Ոհանը:

Թուրքը դարձյալ զլխով անում:

— Արվարդ:

Թուրքի զունատ գեմքը մթնում ե. աչքերը փակում ե, բայց
պատասխանում ե ելի զլուխը շարժելով:

Ոհանի լեզուն բացվել ե. ել չի լուսմ. շարունակում ե իր հարց
ու փորձը, համնում ե յերեխաններին, աշխատում ե հիշել, թե թուր-
քերեն ինչ են ասում դրանց: Ու դժվարությամբ հիշելով՝ հարց-
նում ե.

— Ուշադ, ողան—վար:

Թուրքի աչքերը լցվում են, շրթունքները դողում:

Յեզ խկույն չի պատասխանում. աչքերը արորում ե ու քիչ
հետո, ցույց ե տալիս յերեք մատը:

— Յերեք հմտ,—զարմանում ե Ոհանը և գլուխը կախում. ե-
լի ամաչում ե թուրքի յերեխին նայել, աչքերը փախցնում նրա աչ-
քերից ու լուսմ, լորում...

Իսկ թուրքը այդ հարց ու փորձից կարծես ուշքի յե դալիս մի
փոքր շվար, շփոթված նայում ե զեպի դուռը, զեպի լուսամուտը,
ու ամբողջ մարմնով ասես ուզում ե հասկանալ, թե ուր են իր ըն-
կերները, իրենց ասկյարները: Նա նայում ե եղանակում կուրս, իսկ Ո-
հանը իր միտքն ե մտածում, թե ինչն գնացող թուրքերը մոռա-
ցել են սրան ու թողեք եղ ինչպես և պատահել... Մտածում ե,
մտածում և ուզում ե հարցնել իրան թուրքին, թե վհնց ե պատա-
հել եղ: Բայց մինչ եղ՝ թուրքն ինքը հարցնում ե, թե ուր են
«մերսնք».

— Բըզըմլար հարա գեղտի...

Ոհանը ձեռը շարժեց իրանից շատ հեռու:

— Համսի գեղտի, գեղտի,—ասում ե. —Հիմի մերոնք են գա-
լիս... Բըզըմ զոշուն... Սըզըն՝ գեղտի, հիմի բըզըմ՝ զյալ...

Թուրքը ամեն ինչ հասկացավ. հասկացավ, վոր իրանց զորքը
նահանջել ե, իրենց բոլոր պահակները գնացել են, հիմի գալիս ե
հայոց զորքը...

Նրա գեմքը ավելի դեղնեց, քան առաջ, և նա վախով, անվը-
տահ նայեց Ոհանին:

Ոհանը ժպտաց միայն և ձեռը խփեց նրա մեջքին.

— Վախիլ մի՛—զորխմա...

3

Եսպես ե լինում ահա, վոր Ունանանց Ոհանը պատահում ե
թուրքին, իսկ թե ինչպես ե զրանից փորձանք գալիս իրա՞ Ոհանի
զլխին—եղ մասին միքիչ հետո: Առայժմ ասենք, թե ինչն թուրքը,
իրա պատմելով, յետ եր մնացել իրանց զորքից: Յերբ Ոհանը լուր
առավ, վոր մեր հայոց զորքը գալիս ե—թուրքին խկույն տարավ
գոմը, վոր յեկողները չտեսնեն: Ու եղտեղ՝ զոմում, տեղ հարմա-

ըեցրեց նրա համար, այսինքն են տեղը, ուր քնում եր ինքը, տվեց նրան։ Հետո ենպես, իմիջի այլոց, հարցեց, թե ի՞նչպես ե վոր նա յետ ե մնացել իրանց զորքից։ Յեվ թուրքը կարճ պատմեց, թե ի՞նչո՞ւ։ Յերբ ասկյարները գնում են—նրան միքանիսի հետ դարձու են նշանակում գեղում, բայց նրա ուսը, հին վերքը, վոր քանի որ եր ցափում եր և տաքություն տալիս, ենպես վոր վոտի վրա չի կարում կանգնի, ու գալիս ե մտնում հով ոթախները—պառկում։ Ու մնում ե եղանակ... մինչև Ոհանը գալիս ե։ Այ ինչպես ե յեղել, վոր նա յետ ե մնացել իրանց զորքից։ Տարբության մեջ նա մինչև իսկ չի իմացել՝ ինչպես ե յեկել ու պառկել։

— Այ, քեզ բան, ասում ե Ոհանը.—Բա հիմի ի՞նչ անենք, վոր մերոնք քեզ չտեսնեն...

Թուրքը լուս, խեղճ-խեղճ նայում ե Ոհանին ու կարծես ու ուզում ե ասել—յես բան չգիտեմ, իմ կյանքը քո ձեռին ե։

Իսկ Ոհանը մտածում ե, մտածում, ու վեր կենում։

— Յախշի,—ասում ե—դուր բուրդա...

Ու դուրս ե գնում. գնում բարձրանում ե իր գիտարանը—գումի կտուրը և, ձեռը ճակատին՝ նայում ե ճամպաներին, թե չի գալիս արդյոք զորքը հայոց։

Բայց զորքը չեկավ այդ որը. առավոտը միայն 20—30 զին-վոր մտան գյուղ և տեսան գյուղը դատարկ՝ առաջ անցան։ Հարց-ըն Ոհանին, թե թուրքերը յերբ են գնացել.—«Մի որ առաջ», պատասխանեց Ոհանը։

Սրանք գնում են, յետեից՝ յերեկոյան գալիս ե զորքը հայոց։ Գալիս են ու գեղի տակի ըստով անցնում։ Դրանցից միքանի հոգի միայն—մի յերեսուն զինվոր ու յերկու աֆիջեր մնում են գեղում։ մնացածը անցնում են առաջ, վոր գնան Դարաքիլիսա. Աֆիցերները ելի տեղակորցում են տերտերի տանը, զինվորները՝ ուր պատահում ե։ Ո՛, եղ զինվորները—վորտեղ մի հավ են առանում՝ ընկնում են յետեից։ Ինչ վոր թուրք ասկյարներից ազատվել ե, ուզում են բանել ըրանք։

Եսպես, Ոհանը սպասում ե, վոր զորքի յետեից վախած ժողովորդը կտա, նրանց հետ ել իր անեցիները. Բայց չկամ։ Զինվորները ասում են՝ «ժողովուրդը կտա յերկու շարաթ հետո»... Յերկու շարաթ հետո... Յատ ուշ ե։ Արտերը հասել են, անտառի պատուղները հասել են, հավաքող ե պետք, իսկ նրանք՝ յերկու շարաթ հետո... Մեկ ել մտածում ե—յեթե դան ու, հանկարծ, թուրքին տեսնեն իր մոտ...»

Այ քեզ բան...

Բայց լավ ե, դեռ յերկու շաբաթ կա. մինչև եղ մի բան կանի, մտածում ե Ոհանը, ու ենպես ե անում, վոր յեկած զինվորները թուրքին չտեսնեն. իսկ թուրքին պատվիրում ե, վոր դուրս չգա բակը. «Բիլըսան. դուրս չգաս հա, բըզըմ դոշուն գալդի»...

Գոմի մութի մեջ թուրքի աչքերը լայն բացվում են, և նա՝ անշարժ, զարմացած, ելի խեղճ-խեղճ նայում ե Ոհանին. իսկ Ոհանը նրան՝ «Դորխմա, վախիլ մի», ասում ե. ու այնուհետև ցերեկով—մեկմեեկ, իսկ իրիկունները—հաճախ, գոմում նստած՝ կես թուրքերենով, կես հայերենով, բայց մեծ մասամբ նշաններով զրուցում ե թուրքի հետ—վճրաեղացի յե, քանի տարեկան, վաղուց ե ամուսնացած, ու եղանակ...

— Ութը տարի յե ամուսնացած եմ,—ասում ե թուրքը մատները ցույց տալով. նա միշտ կարծում ե, թե Ոհանը խոսքերը չի հասկանում, և հասկացնելու ամենալավ միջոցը մատներն են, ու ցույց ե տալիս ութը մատ։

— Ութ... իմ Մինասն ել ութը տարվա պսակված եր, ասում ե Ոհանը ու հառաջում։ Մինասը—այսինքն նրա պսակված վորդին ել ութը տարվա պսակված եր, այս, վոր սպանվեց Ղարսի կովում. Բայց կինը, հարսը գեռ սպասում ե նրան, թե կզա մի կողմից։ «Արա մերն ու կինն ել կսպասեն սրան», մտածում ե Ոհանը ու հանկարծ հարցնում թուրքին.—յարեղ վհնց ա, —ցույց ե տալիս նրա ուսը.—Ելի ցավում ա...»

— Յոք,—ասում ե թուրքը,—առաջվա պես չի ցավում։

— Յախշի, յաշխի,—ասում ե Ոհանը, մի յերկու անգամ ել փոխենք՝ կլավանա... ենպես չի...»

— Տեմնենք,—ասում ե թուրքը։

Անցնում ե միքանի որ, ու մի որ ել, վերքը փոխելու ժամանակ, թուրքն ասում ե. —յեթե միքիչ կաթ լինի, վերքը լվա—ավելի շուտ կլավանա։

— Հա՞,—ասում ե Ոհանը.—եղ յես գիտեյի վոչ...

— Ու գնում Յեղանի մոտ կաթի։

— Կարա՞լ չես, Յեղան հարս, մի քիչ կաթ տաս...

— Ի՞նչ կա, —զարմանում ե Յեղանը.—ի՞նչի՞դ ե կաթը...

— Ենպես, ասում ե, —սիրտու ուզում ե. յեթե ունես՝ միքիչ տուր...

— Պառավը բերում ե մի բաժակ կաթ. «Առ Ոհան, խմի»...

Զե տուն պահ տանեմ, ասում ե Ոհանը,—ուզում եմ տաքացնեմ, փրթեմ։

— Հա, դե վոր ըթենց ա, բեր, ասում ե պառավը,—միքիչ ավելացնեմ... Աֆիցերների համար տարան, միքիչ մնացել ա...»

Ու ավելացնում ե. փարչի մեջ ե լցնում ու տալիս Ոհանին։
Ոհանը բերում ե ու թուրքի վերքը լվանում։

Յեկ ի՞նչ եք կարծում—թուրքի ասածը ճիշտ գուրու յեկավ—
կաթը ոգնեց։ Ել ցավ, տաքություն չկա։ Նրա գեղնած դեմքը կա-
մաց-կամաց պարզվում ե։ Որեցոր իրեն լավ ե զգում։
— Հը, յախշի, — հարցնում ե Ոհանը իր պատ թուրքերենով։
Թուրքը գլխով ե անում ու ինչ-վոր մռմռում։

— Սարսաղ, սարսաղ, — ասում ե Ոհանը ձեռը նրա գլխին դը-
նելով ու գլուխը հուպ տալով։ Դե թեկ արա, լավացի ու ըստե-
ղից ուագ ելի, թե չե...

Թուրքը նայում է նրան. Նրա խոսքերից բան չի հասկանում,
բայց անհանգստանում ե։ Իսկ յերբ Ոհանը հաց ե տալիս նրան—
ուտում ե և միշտ աշքի պոչով Ոհանին նայում. կարծես վախե-
նում ե նրա ներկայությունից թե կերակրից։ «Կեր, շաշ անհա-
վատ, կեր. քեզ գեղիլ չեմ. վախիլ մի... կեր, լավացի ու գնա, ախ-
պեր»։ Ու ելի հանաքով խփում ե նրա ուսին կամ գլխին... Իսկ
յերեկոները գոմի դուռը փակում ե թուրքի վրա ու ինքը գնում ե
սենյակում քնելու։ Ես բանը, ինչպես յերեսում ե, թուրքին շատ ե
անհանգստացնում, վորովհետեւ ամեն առավոտ, յերս՝ Ոհանը դու-
ռը բացում ե, ներս մտնում—տեսնում ե՝ թուրքը շորերը հազին ան-
ցուգարձ ե անում։ «Ի՞նչ թեզ ես վեր կացել, տո՛... ինչպես երեսում
ա՝ իսկի քնել չես, հը»։ Թուրքը գլխով ե անում, թե քնել ե, ու ելի
բերանը հուպ տված, անցուգարձ ե անում։ Ինչպես յերեսում ե՝ կառ-
բերանը հուպ տված, անցուգարձ ե անում։ Ու կածում ե, թե իր գլխին մի փորձանք չըերի, իվերջո, ես հալը։ Ու
գզուշանում ե, մինչև անգամ չի յել հարցնում՝ ի՞նչ կա... Մտամո-
ւոր շրջում ե կամ տախտի վրա նստած՝ լուսում։ Յերեմի, շրջելու-
ժամանակը կանգնում ե՝ ականջը ձենի կամ աշքերը գոմի վոս-
տայնով ծածկված յերդիկն։ Հետո հառաջում ե սրտի խորքից,
ենպես, կարծես սրտի թելերը կտրատվում են։ «Կնկա, երեխանց
մտախն ե մտածում», ասում ե Ոհանը մտքում։ Ու եսպես—որը
յերեք-չորս անգամ, Ոհանը մտնում ե թուրքի մոտ—հաց ե տալիս,
յերեք-չորս անգամ, Ոհանը մտնում ե թուրքի մոտ—հաց ե տալիս,
յերեք-չորս անգամ։ Ու եղ ժամանակ գոմի դուռը յերեմի
փակում ե, յերեմի մոռանում ու—բաց թողնում...»

Ու եղպես մի անգամ ել ահա մոռացավ փակել, ու եղ մոռա-
նալը ծանը նստեց նրան։ Դա յեղավ պատճառը վոր են փորձանքը
յեկավ նրա գլխին։
Եղպես, իրիկնագեմ ե, ու Ոհանը, հայտնի չե՝ ուր ե գնացել

(հետո, ասենք, պարզվեց, վոր գնացել եր բոստանի համար ջուր
կապելու)։ Նա չկա, իսկ պառավ Յեղսանը յեկել, նրա բակում վո-
րոնում ե նրան։ Նայում ե բոստանը, նայում ե արևածաղիկների
ու սիմինդների արանքը։ Զկա։ «Բա ես յեղանը հարկավոր ա ու...
ասում ե ինքն իրեն և նայում դես ու դեն... Հետո կամաց-կամաց
դեպի գոմը—գուցե ենտեղ լինի. ինքը չլինի ել—յեղանը ենտեղ ե
լինում, կվերցնեմ, մտածում ե Յեղսանը ու, դուռը բանալով մըտ-
նում ե գոմը... Մտնում ե գոմը ու ի՞նչ... Ոհանի փոխարեն—թուր-
քը նրա առաջ... Շատ ել Յեղսանը վոչ մի թուրքից չեր վախե-
նում, բայց եստեղ վախենում ե. վախենում ե հանկարծ տեսնելիս.
տեսիլք ե, ինչ ե... հանկարծակիի յե գալիս ու, զարհուրած, դուրս
գնում. մտածում ե՝ չըլի թուրքերը յեկել են նորից... Ճոներին ուժ
ե տալիս ու գնում տուն, ու են ե՝ մոտենում ե իրա տան—հան-
դիպում ե Ոհանին, վոր թաց բահը ձեռին գալիս ե առվի կողքով—
ջուր ե կապել... «Եեզ ի ման գալիս, Ոհան, ասում ե պառավը ի-
րան կորցրած.—«Են ի՞նչ թուրք ա ձեր գոմում»...»

Ոհանը շփոթվում ե, բայց պահում ե իրեն։

— Թուրք, ի՞նչ թուրք...»

Պառավը շարունակում ե միքիչ զարմացած, հեռում ե, գոգ-
նոցով, ճակատի քրտինքը սրբում ու ասում. Յեկա յեղանին, ըն-
տեղ չեյիր... Յեղանը հարկավոր եր, քամին խոսր թափել ա, ա-
սում եմ՝ գնամ Ոհանի յեղանը բերեմ... Յեկա, դու չկաս։ Ասի՝
մտնեմ գոմը, իցե ընտեղ ըլի... Ու ի՞նչ տեսնեմ—հրես մի թուրք։

— Թուրք,—զարմանում ե Ոհանը. — ի՞նչ թուրք...»

— Հա, թուրք... Սիրտս փորս ընկավ...»

Ոհանը գլուխը պատում ե, չգիտես իրա մոռացակոտության
վրա թե պառավի վրա. — Թուրքը վորտեղից, ա հարս, աշքիդ երե-
վացել ա...»

— Ի՞նչ ես ասում, ա աղա, իմ աշքով տեհա...»

— Սարսաղ բաներ ես ասում,—բարկանում ե Ոհանը. — Թուր-
քը իմ գոմում ի՞նչ ա անում. աշքիդ երեացել ա, ուրիշ վոչինչ...»

Ու ծիծաղում ե պառավի վրա...»

Յեղսանը տարակուսած՝ ձեռը դնում ե շուրթին ու մտածում,
թե չըլի, իսկապես, աշքին յերեացել ե. — Են, կըլի՛ վոր, — հարցնում
ե զարմացած։

— Խի՛ չի ըլի։ Ենքան թուրք ես տեհեր—ասում ե. — Թուր-
քից ահ առած ես—երազումդ ել կտենաս, աշքիդ ել կերեա...»

Ճշմած, զարմացած պառավը գնում ե տուն կասկածը որը-
տում, թե կարմաղ ե պատահել, վոր աշքին թուրք յերեա... Իսկ Ո-

հանը, վախեցած՝ դեպի գոմը։ Զգիտես ինչու, նրան թվում ե, վոր թուրքը պատավին տեսնելուց հետո փախած պիտի լինի. տեսնելու յեն—դա յել մի խայտառակություն. «Վժրտեղ եյիր»—«Ես ինչի տանը»... խալտառակություն...

Հով իրիկնասլահը կամաց-կամաց մթնում ե: Մոտիկից, Ծիրանանց հայաթից լավում ե զինվորների յերգը և մի մաղիանի խրինջոց, վոր կանչում, վորոնում ե կարծես քուռակին:

Ոհանը անհանգիստ, զլուխը կորցրած իրեն զցում ե գոմը։ Գոմը մութն ե. յերդիկից հազիվ լույս ե ներս ընկնում։ Թուրքը կանգնած ե գոմի մեջտեղը՝ այլայլված, ականջը վոտնաձենի։

— Հը՞ նեչա սան. — վրա յե պըճնում Ոհանը հեալով։

Թուրքը շփոթված, վախեցած ե. խոսում ե ընդհատվող ձայնով. — վատ չի, բայց քիչ առաջ մի կին, մի պառավ կին յեկավ ու իրան տեսավ եստեղ։ Դրանից մի բան չի պատահի...

— Հը՞ Ոհյան ամու, զատ ոլմասը՞ն...

Նա խոսում եր կամաց, ձայնը կոկորդում խեղդելով, և մութի մեջ միայն նրա աչքերի սպիտակուցներն են յերեւմ ու դեմքին, և դրանից Ոհանն զգում ե, վոր թուրքը անհանգիստ ե, շատ անհանգիստ։ Ինըը նրանից ավելի յե անհանգիստ, բայց ձեռը խը փում ե նրա մեջքին ու ծիծաղում։

— Վախիլ մի. զորխմա. բուրդա դուր, մի բան կանենք...

Ու դուրս ե գալիս և դուռը փակում թուրքի վրա։

Լսում ե ելի զինվորների յերգը Ծիրանանց հայաթից և մադիանի խրինջոցը, վոր կարծես կանչում, վորոնում ե քուռակին։

Դուրս յեկավ Ոհանը բակը ու մտածում ե՝ ինչպես անի, վոր թուրքի հեաքը ծածկի, յեթե վոչ մի որ ել, տեսար, զինվորները յեկան։ Դե են ժամանակ արի պատասխան տուր...

Մտածում ե Ոհանը ու գնում-գալիս տան առաջ։

Աստղերը գուրս են գալիս յերկնքում, զինվորների յերգը լը ուսում է. ձին կտրում ե իր խրինջոցը, բայց Ոհանը գնում-գալիս ե ու մտածում... Հոգնում ե, վերջապես, նստում ե շեմքի քարին ու նորից մտածում, թե ինչ անի, վոր թուրքի հետքը կորցնի կամ, ինչպես անի, վոր նրան վես չտան։ Բնելու ժամանակ ասի՝ մեր հարևան գեղերի թուրքերից ե—չեն հավատա. շորից, բանից կճանաչեն, վոր եստեղի թուրք չի...

Մտածեց Ոհանը, մտածեց յերկար ու, վերջը, վորոշեց—տանել նրան անտառ ու բաց թողնել. թող գնա իրանց թուրքերի մոտ թե չե՝ կբանեն, իրա համար ել վատ ե: Զե, թող գնա, մտածում ե ու վորոշում—այս, կտանի անտառ ու ճամպեն ցույց կտա, թե վոր կողմով պետք ե գնալ...

Բայց այդ մասին առաջուց դեռ պետք ե խոսել իրա թուրքի հետ—տեսնենք նա ինչ կասի...
Կես գիշերից անց եր արդեն, յերբ Ոհանը մտավ գոմը։

Թուրքը արթուն եր. ըստ յերեւյթին շատ զարմացավ Ոհանի գիշերային այցելությունից։ Իսկույն վեր թռավ՝ կանգնեց։ Մութի մեջ աչքերի սպիտակուցներն են յերեւմ ելի։

Ոհանը մոտեցավ և ձեռը զցեց նրա ուսին։

— Գեղաղ, — ասում ե:

Թուրքը զարմացած ե և չի հասկանում ուր պետք ե գնալ կես-գիշերին, ուր ե ուղում տանել իրեն Ոհյան ամուն։

— Գեղաղ, գեղաղ, — ասում ե Ոհանը, — գնա ձերոնց մոտ, հերիք ե ինչ վոր մնացիր. ախպեր...

Ու իր պոատ թուրքերենով, հայերեն խառնելով, մասամբ նըշաններով հասկացրեց թուրքին, վոր նրա տեղը իմացել են, ել մնալը վտանգավոր ե։ - Հասկանում ես. քեզ վոր եստեղ տեսան՝ քեզ համար ել վատ կլինի, ինձ համար ել։ Գյալ գեղաղ մեշա... Ենտեղ ճամպեն ցույց կամ, գնա, ախպեր, աստված քեզ հետ... Սան զասպ ոլ, ման դա սաղ ոլ...

Թուրքը գլխի ընկավ՝ բանն ինչումն ե. հասկացավ։

— Յախշի, յախշի, բու սհաթ. ասավ ու սկսեց շորերը կարգերել. գոտիկը կապեց, տրեխների թերերը ամրացրեց։

— Գեղաղ...

Դուրս յեկան, կանգնեցին դոանը ու ականջ դրին, թե մարդու ձայն, վոտի ձայն չի գալիս տրդյոք։ Զե, վոչ մի ձայն չկա. զինվորներն ել չեն յերգում, գեղը քնել ե. չներն անգամ չեն հաջում—ինչպես խաղաղ ե։ Ու գիշերն ել վոչ մութ ե, վոչ լուսավոր. լուսին չկա. աստղալույս ե միայն։

— Գյալ, — ասավ Ոհանը ու առաջ ընկավ։

Ուղիղ ճամպեն թողած, գնում ե բոստաններով, անցնում ե ինչ-վոր ցածրիկ պատերի վրայից, լոք ե տալիս փշոս ցանկապատերից, նորից բոստաններ, նորից պատեր. տեղ-տեղ գնում ե կուզկուզ ու շուտ-շուտ յետ նայելով՝ շնչում. «Գյալ... գյալ»... Թուրքը հետեւում ե և ամեն բանում որինակում նրան. ուր Ոհանը կունում ե և կուզկուզ անում։ Իսկ յերբ նա կանգնում ե և ականջ գնում, ինքն ել կանգնում ե և ականջ գնում։

Բոստաններից դուրս յեկան շուտով կալերը, իսկ կալերից՝ ուղիղ գեպի անտառ։ Տեղը գիբ ե—բարձրանում ե են կամաց-կամաց, հեռում են, քրանում, իսկ Ոհանի սիրտը ենպես ե զցում, վոնց

վոր ինոցիւ Բայց վոչինչ. բարձրանում ե ելի թուրքից արագ. կը նում ե նրա առաջից ու կանչում ե ելի. «Գյալ, գյալ»... կանչում ե կամաց, զգուշ, ենպես, վոր մարդ չլսի... Իսկ առաջը՝ անտառը կանգնած ե պարսպի նման, անշարժ ու խուլ խշոց ե գալիս միշայն... Դա՛ կամ տերեներն են թափվում, կամ ջրի ձենն ե, ասում ե Ոհանն ինքն իրեն և մտածում ե անտառ հասավ՝ ամեն ինչ վերջացած ե—թուրքին ճամպա կդնի, կազատվի, կհանգստանա... Ու զոռ ե տալիս վոտներին, դժվար տեղերը բռնում ե թփերից, մացառներից... Գնում ե ու թուրքը նրա յետերից...

Հասան, վերջապես, անտառի պոռնկը Ոհանը մի խորը շունչ քաշեց:

— Դե գեղ—ասավ:

Ու, հանկարծ, խոսքը դեռ բերանում, ծառերի տակից մի ձայն.

— Ո՞վ ե, կանգնեցեք...

Թուրքն իրան զցեց մերին, իսկ Ոհանը մնաց շշմած, հանկարծակի յեկած, ճիշտ ենպես, անսպասելի կերպով, թուրքին տեսնելու որը. ձեռներն ելի կախ ընկան կողերից, ու մնաց անշարժ աչքերը ձայնի կողմը:

Կարծես գետնի տակից դուրս յեկավ մեկը և անկվեց մերու պոնկին: Հետո արագ-արագ մոտեցավ հրացանը ձեռին: Պահակ զինվոր եր: Նրա ձայնի վրա մլուս կողմից յեկավ մի ուրիշ պահակ, ու յերկուսով շրջապատեցին Ոհանին—Ո՞վ ես, ինչ մարդ ես, ուր ես գնում...

— Վոչինչ,—հավաքում ե իրեն Ոհանը.—Ենպես, եկել եմ մերին...

— Իսկ են ով եր վոր փախավ...

Ոհանն իրան չի կորցնում:—Փախավ... Զե—ասում ե, —մարդ չկա. յես մենակ եմ:

— Յես քոյու եմ,—բարկանում ե զինվորը.—Իմ աչքով տեհա, մինը փախավ մերին...

Ոհանը—Զե. ինձ հետ մարդ չի յեղել. յես մենակ եմ...

Նրան չհավատացին և բռնեցին բերին տերտերանց տուն՝ իրանց աֆիցերների մոտ:

Մյուս որը, ձաշի դեմ, տերտերանց տան աֆիցերները քննեցին նրան:

Սկզբում Ոհանը վոչինչ չեր ուզում ասել, ուրանում եր. բայց յերբ աֆիցերները հայտնեցին, թե իրենք զիտեն, հաստատ իմաշել են, վոր նա իր տանը, այսինքն զոմում, թուրք ե պահել

և գիշերը ճանապարհ ե գցել, նա զարմացավ.—Եղ ձեզ ով ասավ: — Նու, եղ կարեսը չի, —ասում ե աֆիցերը.—գու ասա տեսնենք՝ ինչ զործ ուներ թուրքը քեզ մոտ:

— Հիվանդ եր—ասում ե Ոհանը:

Աֆիցերները ծիծաղում են:—Հիվանդ...

— Հա, հիվանդ եր,—ասում ե Ոհանը ու զարմանում ե, վոր իրեն չեն հավատում:

— Իսկ քանի որ ե քեզ մոտ եր:

— Կըլի տաս որ...

— Տաս որ... Հապա ինչու մեզ չեյիր հայտնում, վոր քեզ մոտ եղպես մարդ կա, թեկուզ հիվանդ, հը...

Ոհանը միամիտ նայում ե աֆիցերներին. նա եղ մասին իսկի չի մտածել.—Ինչի՞ համար հայտնելի վոր... Ենա հիվանդ եր, ասի՝ թող մնալավանա...

Աֆիցերները իրար են նայում և գլուխներն որորում:

— Լավ, յեթե հիվանդ եր, ինչու իրանց մարդիկ հետները չտարան: Հը... ինչու եյին թողել...

— Ինչու եյին թողել...—յերկարացնում ե Ոհանը միրուքը բռնելով ու պատմում ե, թե ինչու.—Նրանց զնալու ժամանակ զրտ տաքությունը բռնում ա, միում ու ոթախում ընկած: Նրանք ել, ինչպես յերկում ա, միտները չեն զցում, թե եսպես մեկը պակաս ա...

Աֆիցերները իրար յերեսի յեն նայում ու զլուխներն որոշում:

— Տարեք...

Յերկու որ հետո Ոհանին զնդակահարեցին, իբրև թշնամուլուես պահողի: Գնդակահարեցին անտառի ծայրում և հենց հնատեղ ել թաղեցին:

Գնդակահարելու բոպեյին ել նա ասում, համոզում եր, թե ինքը վոչ մի մեղք չունի, վոր թուրքին պահել ե ինչպես վիրավոր մարդու—եսպես, ենպես... բայց նրան չհավատացին և գնդակահարեցին...

Յերբ սպանության լուրը իմացվեց գյուղում, պառավ Յեղսանը գունատվեց սասաթիկ, լիքը կովկիթը գցեց ձեռից ու ծնկներին խփեց՝ «Եեզուս չորանար»...

Ու այսուհետեւ, մինչե եսոր ել յերբ խոսք ե լինում Ոհանի մասին, նա ծնկները ծեծում ե ճիշտ և կրկնում ինքն իրեն.

— Եեզուս չորանար, ախ, լեզուս չորանար... Բանից պարզ վում ե—թուրքին տեսնելու մյուս որը, առավոտ, նա, գեռ անաշել

բեկ, ամիցերների համար կաթ վերցնող զինվորին պատմում ե իր վախի մասին, թե ինչպես Ունանանց Ոհանի գոմում թուրք ե տեսել և սաստիկ վախեցել... Զինվորն ել աֆիցերներին: Խուզարկում են Ոհանի տունը, գոմը ու, վերջը տեսնում են՝ Ոհանը են մարդն ե, վոր բռնվել ե անտառի պոնկին... Ու ամեն ինչ պարզվում ե...

Ահա թե ինչպես յեղավ Ոհանի մահը, վորի մասին շատ են պատմում թե Կաղնուառում և թե մոտիկ գյուղերում...

— Ինչո՞ւ եր Ոհանն սկզբում ցանկանում սպանել թուրք զինվորին:

— Ինչո՞ւ փոխվեց նրա մտադրությունը:

— Կա՞ն արդյոք Ոհանի յեվ թուրք զինվորի դրության ու հոգեբանության մեջ ընդիանուր գծեր:

— Ի՞նչն եր թշնամացրել նրանց:

— Ինչո՞ւ դաշնակցական զորքի սպաները գնդակահարեցին Ոհանին:

— Վո՞րն ե Զորյանի այս պատմվածքի հիմնական իդեան:

— Համեմատեցեք այս պատմվածքի միեւնույն հեղինակի «Զրհորի մոտ» պատմվածքի հետ: Ի՞նչն ե ընդհանուր:

ԱՆՐԻ ԲՍՐԲՑՈՒՄ

Շ Ք Ա Ն Շ Ա Ն Ը

1

Այ թե զարմացանք մենք, յերք մտանք կարակու գյուղակը: Ո՞վ եր մնացել այնտեղ: Կանայք, յերեխաներ ու ծերունիները: Լոլոբեյի (մոտավորապես այդպես եյին կոչվում այդ կապիկանմանները) բոլոր զինվորները այդ որը վորսի եյին գնացել:

Թանձր խավարը մեզ նպաստում եր: Մերոնցից մեկը կարողացավ անաղմուկ կերպով սպանել սեամորթ ցեղի ծեր միմուին, վորի գեմքն այնքան եր կուչ յեկել, կարծես վաքսած որբած կոշիկ լինի: Թիկունքն աշտարակին դեմ տված՝ ծերունին քնել եր և յերեակայում եր, թե հսկում ե գյուղին: Առանց վորեւ խուճապ բարձրացնելու մենք անցանք հենց ուղղակի գյուղի կենտրոնը, նրա գլխավոր հրապարակը:

Պահվելով խրճիթների յետեին, մենք մաքրեցինք և լցրինք մեր հրացանները: Չորս կողման ինչ-վոր ստվերներ եյին թափառում, և վոչ մի կասկած չեր խոռվում նրանց անգորը: Վոմանք նստած եյին քարերին, վոմանք ուղղակի գետնի վրա, վոմանք ել շրջում եյին: Այ թե շփելու եյինք նրանց անկյունից...

Դիմացս, հենց ուղղակի նստարանի վրա, պատի տակին, իրար եյին հպվել անշարժ ու համրորին յերկու թխաղեմ անհայտ: Յեվ վորպես նշանակետ ընտրելով այն մեկին վոր աջակողմն եր նստած, յես ակամայից սկսեցի խորհնել, թե, որինակ ինչ կարող եյին խոսել նրանք:

Հնչեց աղդականչը: Բոլոր անկյուններից միաժամանակ ճարածատեցին մեր հրացանները: Այդ յերկար չտեղեց—յերկու ըսպեցից թանաքային այդ բոլոր սիլուետներն անցան իրենց նախահալրերի գիրկում եր, թե նրանք ուղղակի խրվում են հողի մեջ, լուծվում և հալվում և անհետանում են, վորպես ծուխը: Այնուհետեւ մենք այն աշխարհն ուղարկեցինք և, խոստովանում եմ, բավական դաժան կերպով, այն միքանի դեռևս վողջ մնացած տղամարդկանց և կանանց, վորոնք առնետների նման թագնվելով իրենց խրճիթներում, ազատվել եյին մեր համազարկից: Զեմ վիճում, արածներս տաք գործ եր, սակայն, ինչ արած, այդպես ե արդեն մարդը, յերք կանգնած ե թշնամու հողի վրա: Ներելի գործ ե, հաղթանակն եր պատել մեր զլուխը և, բացի այդ, մենք հարբած եյինք: Գյուղապետի խրճիթում մենք գտել եյինք մի տակառ կոկոսի ողի, վորն, ինչպես յերեսում ե, անգլիական մի սրիկա եմիսար եր ծախել այդ գժբախտներին: Ինչ վերաբերում ե ինձ, մի բան միայն պետք ե տոեմ ինձ արդարացնելու համար. կատարված ամբողջ անցուղարձից հիշողությանս մեջ շատ մշուշավոր նշաններ են մնացել: Թեև մեկ մանրամասնություն գամվել ե հիշողությանս մեջ. այն մի զույգ վայրենիները, վորոնք սստած եյին դիմացս: Յես նշանակեցի նրանց այն պահին, յերք լցնում եյի հրացանս, ընտրելով նրանցից մեկին վորպես իմ նշանակետը: Դրանց յես շատ վորոշ եմ հիշում, յես գրեթե ընկա նրանց վրա: Այն նստարանը վորի վրա նստած՝ նրանք դեռ մի վայրկյան առաջ այնքան զվարճալի կերպով խոսում եյին, այժմ ամայացավ: Նստարանի տակ փոված եյին յերկուսը, վորպես մի դիակ: Դուանք՝ նեզըն ու նեզրուհին եյին, վորոնք ջղաձգորեն փարվել ելին իրար, ինչպես յերկու ձեռքն ամուր սեղմումի ժամանակ: Յերկու սիրահար: Խոստովանում եմ, այս կատակն ինձ այնքան ցնցեց, վոր յես դեռ յերկար ժամանակ չելի կարողանում հանգստանալ այդ պատմական յերեկոյին և այդ առթիվ շարունակ կատակներ եյի անում:

Հիշողությանս մեջ խրճիթներն ե, մեր աղմուկը, պարերը, ծամածությունները, շարժուձերը և հանկարծ ծոծրակումս սուր մի ցափ, և յես ընկնում եմ... Ուրիշ վոչինչ:

Ուշքի յեկա յես լոկ վեց շաբաթ հետո Սեն-Լուիի հիվանդանոցում։ Արթնացա յես վաղ առավոտյան ձյունափայլ ճերմակ սենյակում, վորն ամբողջապես լցված եր յոդոֆորմի հոտով։

Հենց այն ժամանակ եր, վոր ինձ ամեն ինչ պատմեցին, Բանից դուրս եր գալիս, վոր մեր զորամասն անզգուշաբար մնացել եր հաղթված դյուռում։ Զինվորները քնել եյին։ Այդ պահին վերադառն եյին Լոլոբեյի զինվորները և կոտորել մերոնց բոլորին մինչև վերջին մարդը։

— Իսկ ինչպես ե, վոր յես... շնչացի յես։

Ինձ բացատրեցին, վոր յես ազատվել եմ պատահմամբ։ Խրճիթը քանդվեց, ուշադնաց յես ընկա, բայց վողջ մնացի։ բեկորների մի ամբողջ կույտ ծածկել եր ինձ։ Հետեւալ որը եքսպեդացիայի գլխավոր ուժերը նորից գրավել եյին և ավերել այդ գյուղը։ Կոտորել բոլոր «լոլոբեյներին», իսկ ինձ վոտքերիցու բոնած՝ դուրս եյին քաշել փրկարար ավերակների տակից։

Բայց տեսեք, թե ինչն եր ամենահետաքրքիրը. նահանդապետն ինքը յեկավ իմ մահճակալի մոտ և հայտարարեց, վոր յես ընտրված եմ պատվո լեզեռնի շքանշանի կավալեր։

Բոլոր ընկերներս սպանված են, իսկ յես շքանշան եմ ստանում։ Այդ յերեկո յես քուն մտա արտասովոր հուզմունքով և անսահման ուրախությամբ լցված։

Յերկար չտեսեց իմ առողջանալու պրոցեսը. յես շտապում եյի իմ հայրենի գլուղը, վորպեսզի ցույց տամ վաստակած շքանշանս։ Ողային ամբողջներ եյի կառուցում և յերեակայում եյի բոլոր տնեցիների զարմացած գեմքը, — հորս, մորս և հարեաններին։ Իմ նախկին ընկերներս — խեղճ վողորմելիները, — չեն համարձակվի հետախոսել իսկ դարբնոցի տերերն ինձ հետ կմտերմանան։ Յեվ ով ե իմանում, գուցե և հարուստ աղջիկը, որիորդ Մոնյեն համաձայնի ինձ հետ ամուսնալ։

Հասավ և վաղուց սպասած որը։ Հուլիսյան մի տուավոտ յես իջա վիլնսում, փոքր ինչ կաղալով, սակայն զլուխս հպարտորեն վեր բոնած, ինչ գլխարկով և նոր շքանշանը կրծքիս։

Յեվ ինչ ընդունելություն պարոններ, յերեակայել անզամ անկարելի յե։ Կայարանն ուղղակի ճաքում եր նվազախմբերից. յերեար-յերելար շարաններով աղջիկներ, հարսներ, բոլորը ծաղիկներով ու զրոշակներով։ Հենց վոր վոտքս դրի սանդուղքին, ինձ մոտ վազեց կավի պես կարմիր և բաճկոնը հագին մի մարդ, և ժպանց ինձ անզամ ինքը — իշխան դը վիլվերը, ամբոցի տերը. նա վորսորդա-

կան զգեստ ուներ հագին։ Մարդիկ հրում եյին իրար, քաշքում և ասում. «Ահա նա», ճիշտ այնպես, ինչպես ասում են. «Կեցցե թագավորը», և այդ ժխորը ամբոխի մեջ, զուզված, զարդարված և անձանաչելի՝ ժպիտներից հալչում եյին իմ ծնողները։

Ինձ քարշ տվին նախաճաշելու քաղաքային տունը։ Մինչև նախաճաշը ճառեր եյին ասում, նախաճաշից հետո՝ նույնպես։ Յեվ շարունակ խոսում եյին միայն իմ մասին։ Ինձ անվանում եյին «Կարիճը, վոր վողջ մնաց կարակույի կովում», «Սենեգալի հերոս»։ Քսան անզամ ինձ պատմեցին իմ սխրագործության մասին և ամեն անզամ մի նոր ձեռվ, չփառեմ ինչու, խառնելով այդ պատմության մեջ ֆրանսիան և քաղաքակրթությունը...»

3

Յերեկոյան դեմ, յերբ ճաշն արդեն վախճանին եր մոտենում, և յերբ բոլորն ել հանգստացել եյին, իմ պատվո աթոռին մոտեցավ ինչ-վոր լրագրական թղթակից և առաջարկեց, վոր յես ինքս պատմեմ նրան իմ բոլոր մեծահոգությունների մասին՝ լրագրուտ տպագրելու համար։

— Լավ! — ասացի յես, — այսպես ուրեմն... յես... յես...

Բայց այս առաջաբանին այլևս վոչինչ ավելացնել չկարողացա և բերանս բաց նայում եյի նրա յերեսին։

Զեռքս ոդում ինչ-վոր շարժումներ անելուց հետո քարայած կոնդ առավ։

— Վոչինչ չղիտեմ, — ստիպված յեղա յես խոստովանել։

— Հրաշալի պատասխան, — վնգստագ հիմարը, — այս կտրիճը չեցանկանում հիշել անզամ իր քաջագործությունները։

Յես ժպտացի և յելա սեղանից։ Նորից սկսվեցին շքերթները դեպի գյուղի ծայրը, նորից հանգես յեկան ավագներն իրենց ճառերով, պատվո մի նոր կերուխում սկսվեց, վորի հեղինակն եր այս անզամ քեռի Բարեուն։

Վերջապես համբույրների հրեշավոր քանակությունից հետո, ցրվեցին։ Յես մնացի մենակ. մինչազի մեջ, զարբնոցից վոչ հեռու։

Այն ժամանակ յես գնացի տուն յեկեղեցու մոտից անցնող ճանապարհով։ Գիշերն արդեն իջնում եր, աչքերս կպչում եյին հրճանքից, և վոտքերս քարշ եյին գալիս, վորպես փթանոցներ։ Եւչինչ չեյի հասկանում, զլուխս դատարկ եր, սակայն մի բան կարծես մաշում ու հալում եր ինձ։

Իմ խեղճ ու վողորմիլի զլիսի մեջ մեխի պես գամվել եր լրագողի կծու հարցումը, թե, «նշանավոր ինչ գործ եք արել գուք...»

Յեվ, իրավ, ինչ եմ արել: Յերկի յես իրոք վոր արտասովոր բան
եմ արել գրավականը շքանշանն ե, սակայն ինչ:

Հանկարծ յես կոճղի նման փայտացա մթնած ճանապարհի վրա
և այնպես տնկած մնացի խորհելով, տնքալով և բան չհասկանալով.

Միթե նրանք տակնուվրա արին ամբողջ իմ ուղեղս իրենց
շամպանիայով և խորամանկության ճանապարհով: Բայց կարող ե
պատահել, վոր յես կյանքիս ամբողջ մի հասկածը, մոռացած լի-
նեմ իմ փայլուն սխրագործությունը. ինձ թվում եր, թե այդպի-
սին բնավ յերբեք չի յեղել:

Մշուշամիտ և խոռվաճույզ՝ յես քարշ յեկա դեսի տուն այն-
պես, ինչպես անցյալ տարիները:

... Հենց այն ժամանակ եր, վոր ճամպավոլորքի մոտ մշուշի
միջից նկատեցի յերկու ստվեր, նստարանին կպած յերկու իրար
փարփած արարած: Նրանք ամուր բռնել եյին իրար ձեռքերից և
վոչինչ չեյին խոսում, սակայն նրանք այնպես եյին անձնատուր
յեղել այդ յերկուստեք լուսությանը, կարծես թե մեծ գործ լինեյին
կատարելիս: Յերեկոյի մշուշավոր գոլորշիացումների մեջ նրանց
դժվար եր նշմարել, սակայն զգացվում եր, վոր դրանք մարդկային
կերպարանքներ են, և վոր նրանց խոսացկությունը սովորական չե,
այլ ինչ-վոր խորհրդավոր թելեր կան նրանց մեջ:

— Ահա,—բացականչեցի յես և նորից կանգ տուա:

Յեվ մի ակնթարթում աչքերս հառելով գյուղի հեռավոր ծայրը,
յես տեսա մի ուրիշ գյուղ, վորն այժմ արդեն ավերված ե և ջրնջ-
ված աշխարհիս յերեսից իր բնակիչներով մեկտեղ և, վոր գլխավորն
ե, յերկու այն փոքրիկ և սեամորթ արարածներով, վորոնք գողացին
և ընկան իմ գոաքերի տակը: Նրանք մարդիկ եյին, նրանք լուռ
եյին: Ահա բոլորը, ինչ յես գիտեյի նրանց մասին:

Գիշերն ամեն ինչ հարթում ե և պարզում, և նեղրական այն
զույգն սպանիչ մի նմանություն ուներ այս զույգին:

Այդ ստվերները, այդ նեղրերը... Տիմարություն կլիներ՝ ինչ-
վոր կապ վորոնել այստեղ... Բայց յես զգում եյի այդ կապը: Յերք
վոր հարբում ես, անմեղ ու միամիտ ես դառնում, և բանականու-
թյունդ շատ պարզ ե պրիմիտիվ: Յերկի յես շատ եյի խմած, քանի
վոր այդորինակ համագություն ծիծաղեցնելու փոխարեն աչքերիցս
արցունք ցայտեցրեց: Զեռքս տարա շքանշանին պոկեցի այն կրծքիցս
և արագորեն խոթեցի դրանիս խորքը, վորպես գողացված մի իր:

— Իրենց սեփական կամքով եյին արդյոք քարուքանդ անում զին-
գորները նեղրերի գյուղերը:

— Ո՞վ եր մղում նրանց այդ անելու:

— Ինչո՞ւ տուն վերադառնալով զինվորը պոկեց շքանշանը յեվ պահեց
գրպանում:

— Ինչո՞ւ համար եր տրված շքանշանը:

ՅԵԼԱՆ ԲԱՆԱԿՆԵՐ ՀՍԿԱ

Լսեցիք—
յելան—
բանակներ հսկա, յերկաթզբահ:
Լսեցիք—
յելան—
աշխարհի բոլոր դաշտերի վրա:
Յելան,
գնացին—
Ռւրալից գեղի՝ Կարպատները լուրթ,
ու Կարպատներից մինչև Երզրում,
ու Երզրումից—Տըլիպոլի, Հոռմ:
Բոլոր կողմերից հավաքված յեկան.—
թուրք,
իտալացի,
հնդիկ,
վրացի,
ռուս,
շոտլանդացի
հայ,
խունխուզ,
թաթար,
կիրգիզ,
չինացի
Նյու-Յորքից յեկան,
Տայիտի կղզուց,
Հեռու Բաղդադից,—
յեկան—
Թւր հկան.—
Բոլորը բանվոր,
մուշա,
գլուղացի:—
Յեկան—
Թւր յեկան.—
Լընդոնից—Պեկին,
Ղարս,
Սարիղամիշ.—
Վոշի բարձրացալ,
արճիճի քամի...

Ու վոռնում եյին—
 «վն-վն-վն» «վն վն»—
 թնթանոթների կոկորդները չոր—
 «վն»
 «վո-վն»
 «վո-վն»
 գիշեր,
 ցերեկ,
 կեսոր:

 Ու վոռնում եյին—
 դաշտերի, ցանքսերի,
 արտերի վրա:
 ճճի-ճճի-ճճի—
 ոռումբ—
 բում—բում—բում—
 ել վոչինչ—կարմիր արճիճից բացի:
 Ու վոռնում եյին.—
 ոհւմբն եր հողմավար, վարար անձրեսում
 քաղաքներ քանդում, դաշտերը ձեռում:

 Ու լուսարձակներ հազարաչքանի
 լույս եյին սփոռում դաշտերի միգում,
 վոր արճիճն իր գործն անվրեպ անիւ:

 Իսկ քաղաքներում—
 Բերլինում, Պարիզում,
 Նյու-Յորքում հեռու—
 արնաքամ տենդով, ահով վարակված՝
 աշխատում եյին գործարաններում:

 Գործարաններում վիթխարահսկա,
 վորոնց յերկաթե շչակները բյուր
 անասունների նման խելագար
 իրենց յերկաթե խորխն եյին փնչում
 հորիզոնն ի վեր—
 գործարաններում աշխատում եյին
 պլուետարների բյուրավոր խմբեր,
 Դեռ կոռում եյին ու կոփում ոռումբեր,
 թեկուզ գիտելին՝ ուր պիտի ճամպեն:
 դեռ կոռում եյին ու կոփում ոռումբեր,
 վոր միլիոն, միլիոն թնդանոթների
 անկուշտ, անհագուրդ ծարավը ճամպեն:

 Յեվ ովքեր եյին նրանք.—կիսաքաղց
 ոռում,
 հնդիկ,

թաթար,
 գալլ,
 իրլանդացի.—
 բոլորը—բանվոր,
 մուշա,
 գյուղացի:—

 Իսկ իրենց վոսկի կարինետներում
 նստած՝ գիտուններ, խելքեր վիթխարի
 կովի պես դանդաղ վորոճում եյին
 յերազներ մահի, արյունի, հրի:
 Նրանք, վոսկեպատ կարինետներում,
 հանձարում եյին հեղձուցիչ գաղեր,
 վորպեզի Մահի վոտքերի առաջ
 մի ակնթարթում կանգնել կարենան
 զիակի բերգեր ու բուրգեր մսե:

 Յեվ այսպես —յեկան, յելան դեմ. դեմի
 բանակներ բաղում ու բազմամիլիոն.
 յեկան—
 Բաղդադից—Բերլին,
 Պերկամիշ,
 Բերլինից —Կալե,
 Դուվր,
 Վերդեն,
 Լիոն...
 Աշխարհից-աշխարհ,
 Ճովից-Ճովի յելան.—
 Նյու-Յորքից—Պեկին,
 Ուրալից —Միլան...

* * * * *

Յեվ նրանց դիերի վրայով,
 Լոնդոնից մինչև Կապուտան—
 անցնում եր յերկաթե քայլով
 մի հրեշ՝ անունը կապիտալ:

 Գալիս եր Բերլինից, Պարիզից,
 գալիս եր հյուսիսից դեղին,
 անցնում եր Նայերի վրայից,
 բռնել եր Բաղդադի ուղին:

 Գլխի տեղ — հսկա մի բերան,
 գլխի տակ — անսահման մի փոր,—
 կանգնում եր դիյերի վրա,
 խմում եր արյունը բոսոր:

Հազել եր—պուրպուր, վոսկի,
շողում եր արեի ներքո.
Ժպիտը ճարպոտ յերեսին՝
արշավում եր հաղթական յերգով,

Յեկ նրա յերգին գերի,
Բաղդադից մինչև Լիոն,
արնաքամ զարնվում ելին
զորքելը՝ միլիոն-միլիոն...
.

— Պատերազմի վո՞ր կողմն ե նկարագրված այս հատվածի մեջ:
— Ո՞վեր ելին պատերազմողները:
— Ո՞վեր ելին դրդողները:
— Ի՞նչ տեխնիկական միջոցներով եր տարվում պատերազմը:
— Ո՞վ եր շահում պատերազմից:

— Ի՞նչ տաղաչափությամբ զրված այս բանաստեղծությունը՝
միատեսակ, թե խառը:
— Համապատասխանում ե արդյոք նյութին այս տաղաչափությունը:

ԳԵՂՈՐԳ ԱԲՈՎ

ԶՈՐԱԿՈՉԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Յերբ քյոխվան ժողովն ըսկսեց:
փալանչին նստել եր շեմքում—
փալանչին խեղճ եր չունքի—
սուս ու փուս
կուչ եր յեկել
թախտի սոտ, հեռու քուրսուց,
Բարձերին քյոխվան եր նստել.
նստել ելին
տերտերն ու մուխսին,
իսկ թախտին—
շարեշար,
կարգով—
Կարապետ քեռին ու Հազոն:
իսկ հետո.
հերթով
շարված
ծալապատիկ ծխում ելին
գյուղական հարուստ ու աղքատ—
վըճուռմ ելին վեճ ու ոյին,
զանազան կոիվ ու գանգատ:

Քյոխվան թե՝
— սալղատ են կանչում.
տասնութից մինչև յեռեսուն.
վըճուռ թե ով ե սալղաթացու...
Վոր խոսք ու զրույց չտարածեք —
յես իմ ձեռքերը լվացա,
վճիռը ձեզ եմ թողնում:
Վճիռը վեճով ըսկըսվեց.
խոսում եր՝ ով զու եր զգում,
ում թայֆան թունդ եր զյուղում—
խնամուն պահում եր խնամին,
սահաները իր քավորին
թե քավորը տեր եր փողի...
Գյուղում ել մարդու չթողին —
բոլորին վեճի խառնեցին,
Մեջ բերին ամեն ծնողի:

Ում գրպանը տաք եր,
զանդին,
նրա ձայնը զրւնգում եր զիլ.
ըսկ ում ձայնը հաղթեր մյուսին —
վողջ ժողովը նրան եր լսում:
Կոծեցին իրարու ծնոտ,
նայեցին հասակ—տարիքի.
ունեվոր վոչ մի ծնող
չըտվեց իր բալեքին:
Մեկը «մեծ» կամ «փոքր» ե,
կամ «լաչառ»,
կամ մյուսը «վորբ ե»,
«մինուճար»:
Իսկ ով խեղճ,
ով ցած եր միջակից —
բաղդն իր զցվում եր վիճակի...
.

— Ի՞նչ ե նկարագրված այս հատվածում:
— Ի՞նչպես ե տեղի ունենում զորակոչը զյուղում:
— Գյուղական վո՞ր խավին եր տուժողը:

Ա. Ա. Զ. Ա. Ն.

ՊԱՏԵՐԱԶՄԸ

Նորից վարդերը վառ,
Նորից ամառ հասուն,
բայց այդ ի՞նչ, այդ ի՞նչ ամառ եր.—
արնոտ ու մահասարսուու:
Արնով եր շնչում հողը,
գանգեր, ազդրեր ու միս,
կյանքը—
արյունոտ եր—
կարմիր, կարմիր:

Յելավ արեը—
մի ուռած աչք—
ուռած ու արնաժեռ:
Ո՞վ եր, ո՞վ եր վառել
այդքան խարուկի,
այդքան հրդեհ:
Ո՞վ եր առել ու շպրտել
կյանքը մահու այս հորձանքում.
Ո՞վ եր այդպես առատորեն
մարդկանց հոտերը մորթոտում:
Ո՞վ եր հանել իրար հանդեպ
մարդկանց մըի ու հոգնության.
ո՞վ եր թափել այդքան արյուն
սափորներից առատության:

Արյուն ու մահ,
արյուն ու մահ
բանակները հորդուն—
քաղաքների վրա,
վողջ աշխարհում:
Ծովերն արնով են ծփում,
ողը ծխում,
մահու ուրուն և վոստվոսում
չար, անխնդում:

Յելավ չուկուն կելտողը
հանքափորի դեմ,
արյունով ներկեց
հողը.
ու դեռ գլուղացին
գերանդով իր
հնձում եր կյանքեր, կյանքեր:

— Արնաներկ և հողը,
գանգեր՝
գանգեր:
շրջում ե պատառոտող
կապիտալ—անգղը:
Հանում ե աչքը,
սիրտը մարդկային, —
անցնում ե առաջ
կրկին,
կրկին:

Սավառնում ե դեղնաթե
ու մահատարած,
սավառնում ե առաջ,
տվեք նրան դեռ
վոսկի առատ
տվեք հող,
շուկա:

Պատառում,
ծվատում ե
վողջ աշխարհը պատառ—պատառ.
դրա համար մահն ե խնդում
քըրքըջալի ու գազազած:
Նորից վարդերը վառ են,
Նորից ամառը հասուն,
բայց այդ ի՞նչ, այդ ի՞նչ ամառ եր—
արնոտ ու մահասարսուու...

— Համեմատեցեք այս բանաստեղծությունը Զարենցի «Յելան բանակներ հսկա» բանաստեղծության հետ, ի՞նչն ե ընդհանուր և ի՞նչը տարբեր:

ԳՈՒԻՐԴԵՆ ՄԱՀԱՐԻ

ԳՅՈՒՂԼԻ ՅԵՐԳԸ

I

Տապ ու կեսոր:
Կարծես կիսվել ե արեը
ու հոսում ե գաշտի վրա հալած վոսկի,
խոր թոքում են շուքերի տակ ծեր շները,
սպասում են ինչ վոր խոսքի:

Տապ ու կեսոր:
Ու հասկերի ձանձրույթն անծիր,

Ճանապարհներ անհրապույր ու առածիդ.

ահա մի սալը և իր ճոխնչը անտառամ.—

մի գլուղացի փոշոտ դեմքով զյուղը մտավ:

Կանգնեց սալը աղբյուրի մոտ, ու փնչացին յեղները՝ լայն,
ու հայացքներն անորոշ, ծուլ, նկտեցին ջրի վրա.
խոր ճռացին՝ յերկու դռներ ու միքանի դիմագծեր
ծույլ հորանջով նայեցին դեմ, վորպես մի հարց—նվ և յեկել...

Ելի նա յե, Մելքոն ամին, նա՝ վոր շատ և քաղաք գնում,
ու բերում ե ճոթեր, զամեր ու քաղաքից լրւր, նորություն,
—Մելքոն ամի, Մելքոն ամի, յեղները թող, մեղ մոտ արի,
քեզ և կանչում Գասպար ապին, Մելքոն ամի, արի, տապին...

Զիլ կանչում ե դեմի դռնից մերկ վոտներով ինչ-վոր Շողի կ-
նայեց մոայլ Մելքոն ամին, վոտները չառավ հողից:

Ճոթ չի բերել նա քաղաքից, չի կատարել վոչ մի խնդիր,
մոռացել ե մասը խոփի, նորոգումը իր հին սելի.
յետ ե յեկել վոնց վոր գնաց, բայց քաղաքից զյուղ և բերել
մի լուր սե ու մթագնած, վորպես ամպը կարկտարեր:

Ու մթնել ե Մելքոն ամին, վորպես ամպը կարկտարեր,
իրեկնային փոշոտ քամին մուր և նրա դեմքին թափել:

Հենվել ե նա իր հին սելին, իր սելի պես ջարդված ու հին
չնկատեց, վոր մեծ ճամպից նախիրները բառաչեցին,
չնկատեց, վոր դաշտերից հնձվորները վերադարձան,
ու ծուռումուռ փողոցներից աղջիկները ջրի յեկան:

Մինչ յեղները թոքում ելին ջրի վրա հանած լեզու,
իջնում եր մուժն իրիկնային նալիրական հին դաշտերում:
Դեռ նվում եր նրա գանգում, վորպես հառնող մի հին վոճիր,
դարանամուտ քաղսքը քար ու համբավը զորակոչի...

Զորակոչ եր:—Վոնց վոր սելավ զա ու խփի հոտ ու նախիր,
զորակոչ եր:—Ես ի՞նչ յեղավ, ով ուղում ե ում տա մահի...
հավաքում են զորք անքանակ, ամրանում են ներսից, զրսից,
համարվում ե աստղ ու տվագ, չի համարվում զորքը Ռոխ:

Չեթի լուսի ցոլքերի տակ խոժոռ մնում են լուռ դեմքեր,
ու մտքերում սե, անհատակ, տագնապում ե դեղի ողեն:
ու ծխում են չիմուխները հարցերի պես անլուծելի,
տմպ և կտրել լրաբերը ու մթնել և ողի ծերին:

Ու վոչվոր չի ուղում խոսի. ել ի՞նչ նոր խոսք, ել ի՞նչ նոր հարց
զորակոչ և, զարհուրելի, զորակոչ ե՝ պրծավ գնաց...
Տեսնում ելին իրենց մտքում գյուղից քաղաք տանող ճամպան-
տրեխների շարքը անծեր դեպի քաղաք ու ուղմագաշտ...

Տեսնում ելին իրենց մտքում հեռածավալ դաշտերն անծիր,
հողերը չոր ու անհագուրդ, ուր չի ընկնի վոչ մի հատիկ.
տեսնում ելին իրենց մտքում և գծերը ուղմագաշտի,
ուր գնդակը չի խնայի վոչ մի հաշտի ու անհաշտի...

Ու վոռնում են շները գորշ կալի վրա անդեզ, թափուր,
ու տագնապով մի անորոշ յերդիկներից հող են թափում...

Դիշերը գորշ, գիշերը շիլ, գիշերն անշուք մշուշ ու շուք,
գյուղն ե նիրհել աչքում փոշի ու չի շրշում վոչ մի շշուկ,
միայն անդեմ մի չար կոշմար ծանրացել ե գյուղի վրա.

սավառնում ե թեատարած ամեն քնում մի չար յերադ:

Ծանրացել ե կարծես մի ձեռք գյուղի բկին, վոր չճշա,
ու մոռում ե մի ցավ անտես, թափալվում ե ինքն իր վրա...

Վաղ առավոտ հին գյուղերից դեպի քաղաք տանող ուղին
հուն կլինի հորդան ուժի, ուժ մկանի, քարի, հողի...
ու կհորդե ուժն այն արագ դեպի քաղաք ու փակուղի,
դեպի զորանոց ու գործարան, դեպի մահ ու յերկաթուղի:

Ել ի՞նչ անի գյուղը անկար, անառավոտ ու անհրդին,
յերբ չի լինի մինչև անդամ ճշալու ուժ քաղաքի դեմ:

Ո, վերջնամերձ այս գիշերում թողեք ճշա ու բառաչէ
գյուղը զառամ ու անարյուն, քանի վոր դեռ դիակ մի չե.
ո, վերջամերձ այս գիշերում թողեք յելնի արկոտ թաթին,
ու թող ուտի վերքերն իր հում, թեկուղ սիրաը նրա ոլայթի:

Թեկուղ կույր ու սարսափահար, նախիրները վորպես քանդում,
զուրս գան զարկվեն ճակատ-ճակատի ու ջարդումն մարագ ու զուռ
Ո, գիշերում այս վերջնամերձ թողեք ճշա, թողեք հորդե,
ուղարկ կլինի վաղը արդեն, նա կմեռնի քաղաքի դեմ...

II

Առավոտ եր, անձրեսում եր յերկինքը մառ,
առավոտ եր իրիկվա պես ու նրա պես խավարամած,
զարթնած գյուղը դեռ իր տենդում հիվանդ եր մի,
վորն ուղում ե անցած որից մի բան հիշի:

Յեկ ի՞նչ եր վոր, — թուխապ ու քամի, աշնան անձրեն,
են վոր աշնան գյուղը քամի, թուխապ չի տեսել.
են վոր աշնան գիշերը չեն տարվել ջրից,
ու արել վար չի նալել նորից, նորից...

Առավոտ եր, անձրեսում եր յերկինքը մառ,
ու առավոտ խավարմած,
աշնան քամին դարանել եր գյուղի յետե,
գյուղը տենդում տագնապում եր, թոքում եր դեռ:

Ո, վորպես հարց, կամ յերգ մեռնող գյուղի մասին՝
մտորում եր գյուղի վրա սարը՝ Մասիս:

Կայարանը գծի վրա, մի սպիտակ, հսկա թռչուն,
կայարանում — իրարանցում.

լցվել ելին վագոններում հազար Սաքո,
շինելներով, փաթթաններով, պայուսակով:

Խոսում ելին, սրախոսում ու ծիծաղում,—
կայարանում
թափվել ելին պառավերը մոտ գյուղերից,
յեկել եյին առած պարեն ու վարանում,
յեկել եյին վերջին ժամու հրաժեշտի...

Կտան՝ ինչ վոր հաց ե, պարեն, հապճեպ համբուլը, արցունք գուցե
բայց ձանրացած բեռը քարե ելի պիտի գյուղ դարձնեն.
պիտի կծկվեն հարկերի տակ, լուրեր լսեն քաղաքներից
ու տագնապով մի անհատակ՝ միշտ սպասեն նամակների:

Վոր իմանան, թե վողջ են դեռ, վոր կովում են խրամներում,
վոր կարող են մի որ գալ յետ ու աշխատել չարքաշ ու լուս,
վոր կարող են վերադառնալ քաղաքների հարկը տալու,
հարկ հողերի, նախիրների, հարկ ապրելու ու շնչելու:

Իսկ մինչև այդ գյուղը պիտի հնձի մազթանք ու մահ,
վոր աշխարհի կարգը փոխվի, վոր պատերազմը վերջանա.
իսկ մինչև այդ վորպես քամի կտմ հանելուկ մի ծամածուու
պիտի լսի գյուղը ժամից «խաղաղություն ամենեցուն»...

Յերգում ե մի խումբ «Տանում-են»,
շարժում են թերը անվարժ.
— տանում են, տանում են, ժւմը,
— հա, հա, հա, տանում են... հորանց:

— չեց զիտի, սալդաթ Ասո,
Ֆրանկի յերկիր հասար,
ջարդեցիր մեկը տասով,
վոնց վոր նոր քաջ նազար:

Արտերդ կքաղվեն ենպիս,
արտերդ հենց հաց կըառնան.
պանիրն ել կըուսնի վրեն,
Աշնանը կմտնեն մառան:

Քյոխվեն ել քաղցր կլինի,
ամեն որ կասի. — վաճառք եք...
կըանա մեղրոտ բերանը,
— եսոր քիչ... արտս հնձեք...

— Տանում են, տանում են, — ժւմը,
հա, հա, հա, տանում են հորանց.
յերգում ե սի խումբ «Տանում են...»
կայարան: Սպասում: Գնացք:

Ահա վորպես սուրը դահճի մահապարտի վզի վրա՝
ընկավ զանգի յերեք հարված կայարանի սրտի վրա.
Ճչաց շչակն աղիորորմ — խմբերն յեղան ցան ու ցրիվ,
ճչաց շչակը անողոք — վագոնները գրավեցին:
Շտայ, անկապ խոսք ու պատվեր, զգուշության խելոք խրատ,
ու գնացքը վորպես դագաղ, դանդաղ շարժվեց գծի վրա.
վագոններից, նրանցքներից գուրս պարզվեցին հազար ձեռներ,
ու գլխարկները շարժեցին վորպես հեռու մի հրաժեշտ:
Որն եր մթնում կամաց-կամաց, նրանք յերկար կմնային,
յեթե չիններ, չթանձրանար աղջամուղջը իրիկնալին.
որն եր մթնում գորշ, անորոշ, ու քաղաքի զիրկը ընկան
կայարանը քաղաքնամոտ, ավանները նախիրական:

— Բոնեք հիմա զյուղի ճամպան, նույնն ե զյուղը մշուշ ու հին,
նույն սայլերի ցավը գանդաղ ու զորշ շարքերը հուղերի.
պարտահանն ե հնտեղ ելի, պարտատունը կովի զնուց,
հին չիսուսը նստած սելիդ մտորում ե մթագնած:
Գնա ու տներ հարկահանիդ, հիսուսներիդ ու տերերիդ,
քո նիհարած նախիրներից, մառաններից ու տրտերից.
գնա, պառավ, ասա չարքաշ քո ծերուկին վոր լավ դատի,
վորովհետեւ լայնացել ե ազան յերախը քաղաքի...

Բայց չգիտեր գյուղը զառամ, վոր իր հորդող ուժը ելի
մի որ պիտի վերադառնար առած ուժը քաղաքների.
պիտի զառնար ցինկ ու յերկաթ, պիտի զառնար ուժ ու գորշ,
հնի համար դամիճ ու թաթ, հնի համար վախճան ու զուժ:

Ու պիտի զար եղ ուժը մեծ նոր յեռանդով ու նոր կամքով,
ու գյուղից զյուղ, ու գծից զիծ. մինչև մուժը քաղաքնամոտ,
պիտի կոեր նոր մի աշխարհ, պիտի հառներ գյուղը անկար,
ու քաղաքը պիտի ժպտար ու վողջուներ յեղբայրաբար...

— Մանրամասն վերլուծեցեր այս բանաստեղծությունը թե ըստ բո-
վանդակության յիշ թե ըստ ձեվի:
— Այս բաժնում զետղված նյութերից վո՞րն ե նման այս պոեմին
ըստ բովանդակության:
— Ինչո՞վ եք բացատրում այդ նմանությունը:

ՀՆԴԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
 — Ի՞նչ ժամանակաշրջան են ընդգրկում այս բաժնի պատմվածքներն ու բանաստեղծությունները:
 — Վո՞ր պատմվածքներում ե նկարագրված պատերազմի սկիզբ գյուղում:
 — Վո՞ր պատմվածքներում ե նկարագրված պատերազմի դաշտում:
 — Ի՞նչ միջավայր ե նկարագրված Շիրվանզադեյի «Հերոսի վերադր» պատմվածքում:
 — Ի՞նչ միջավայր ե նկարագրված Հ. Բարբյուսի «Ազդանշանը» պատմվածքում:
 — Կա՞ արդյոք վորեվե նմանություն այդ պատմվածքներում:
 — Պատերազմի վո՞ր մոմենտներն են նկարագրված Ստ. Զորյանի «Զրհորի մոտ» յեվ «Ոհանի մահը» պատմվածքներում:
 — Մանրամասն վերլուծեցեք այդ պատմվածքների բովանդակությունը յեվ նշեցեք, թե ի՞նչ հիմնական գաղափար ե արձարձվում դրանցում. ի՞նչ միջոցներով ե հեղինակը վեր հանում այդ հիմնական գաղափարը. տալիս ե արդյոք գործող անձանց հոգեբանության նկարագրությունը. կարողանո՞ւմ ե հեղինակն այդ անել համոզեցուցիչ կերպով:
 — Համեմատեցեք Ակսել Բակունցի «Պատերազմի սկիզբ գյուղում» պատմվածքը Ստ. Զորյանի «Պատերազմի» հետ. ի՞նչն ե ընդհանուր դրանց մեջ. Վո՞րտեղից ե սկսվում տարբերությունը:

— Մանրամասն վերլուծեցեք Դեր. Դեմիրճյանի «Պատերազմի դաշտում» պատմվածքը յեվ նշեցեք դրա հիմնական գաղափարը. կա՞ արդյոք վորեվե ընդհանուր բան այդ պատմվածքի յեվ Զորյանի «Զրհորի մոտ» պատմվածքի միջև:
 — Կա՞ արդյոք Դեմիրճյանի պատմվածքի հերոսի հոգեբանության յեվ Զորյանի այդ պատմվածքի գլխավոր հերոսի հոգեբանության մեջ ընդհանուր գծեր. ըստնե՞ն արդյոք նրանք նման մտքեր ու տրամադրություններ. գտեք այդ նմանությունները. յեվ աշխատեցեք բացատրել, թե ինչի հետեւվանք են դրանք:

— Հատ այս բաժնում զետեղված նյութերի գրեցեք շար աղրություն. «Պատերազմը տվյալ հեղինակների պատմվածքներում» թեմայի շուրջը, հետեւյալ պլանով. ա) Պատերազմի սկիզբը. ի՞նչպես են ընդունում պատերազմի լուրը տարբեր դասակարգերը. ի՞նչու յեն այդպես ընդունում. բ) գյուղը զորակոչից հետո. ո՞վքեր են տնտեսապես տուժում առաջին հերթին յեվ ամենից ավելի. գ) պատերազմի դաշտում. ո՞վքեր են իրար դեմ կովողները. դ) ինչո՞ւ յեն նրանք յեղբայրանում, յերբ հանդիպում են իրար առանձին առանձին. ե) ի՞նչ վերաբերմունքի յե արժանանում այդ յեղբայրացումը տիրողների կողմից (Ստ. Զորյանի «Զրհորի մոտ» պատմվածքը). զ) յեզրակացություններ:

— Կա՞ արդյոք այս բաժնում զետեղված պատմվածքներում բառեր, վոճեր յեվ արտահայտություններ, վոր միանգամայն բացակայում ելին բաժինների պատմվածքներում: — Ընդհանուր առաջադրություն՝ ժամանակաշրջանի յեվ միջավայրի անմիջական ազդեցությունը յեզրի յեվ վոճի վրա: — Բերել որինակներ նայեվ նախկին յերկու բաժինների պատմվածքներից:

— Համեմատել Շիրվանզադեյի «Հերոսի վերադրօլ» պատմվածքը Ստ. Զորյանի «Զրհորի մոտ» պատմվածքի հետ ըստ ծեփի յեվ ցույց տալ վոճային յեվ լեզվական տարբերությունները, բացատրելով դրանց պատճառը (յեզուն ու վոճը իբրեւ հետեւվանք սոցիալական բովանդակության):

— Կարդացեք Ստ. Զորյանի «Պատերազմը» պատմվածքների ժողովածում: — Կարդացեք Դ. Դեմիրճյանի «Պատերազմի դաշտում» վիպակը: — Կարդացեք Յե. Զարենցի «Ամենապոեմու» ու Գ. Մահարու «Գյուղերի յերգը» ամբողջությամբ:

IV

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ՅԵՎ ԶԱՐԹՆՈՂ ԱՐԵՎԵԼՔԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Վ.ՌՀԱՆ ԹՌԹՈՎԵՆՑ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԵԹԻԱԹ

1

Իվը կապույտ աչքերով, վոսկեթել մազերով, միջահասակ, ըստ պիտակ մորթով, գիրուկ՝ արագաշարժ և կարմիր պարզ գլխարկով մի աղջիկ եր:

— Գնում ե սոցիալիստական գրականություն վաճառելու, — ասաց ինձ Զորջը, — զարմանալի աղջիկ ե, միշտ դիմադրում ե վոստիկանության և միշտ ել ձերքակալվում ե, — շարունակեց Զորջը:

Զորջը ինձ պատմեց, վոր իրենց ձեռքի տակ կան այնպիսի տասնյակ աղջիկներ, վորոնք սոցիալիստական գրականություն են տարածում գիշերները Նյու-Յորքի մեծ փողոցների անկյուններում:

— Վարձատրությամբ են անում:

Զորջը հառեց իմ աչքերին, հառեց սուր, ծակող նայվածքով:

— Իվը 40 տարվա բանվորի աղջիկ ե, նրա հայրը բանտումն ե այժմ, նա անում ե այդ, ինչպես մյուս բոլոր աղջիկները, դասակարգային գիտակցությամբ:

Յերեկոյան ժամի լոթն եր: Բանվորները վերադառնում եյին գործարաններից, իրենց ճաշի դույլերը ձեռքերին: Հոգնած, տամնջված դեմքեր ունեյին նրանք, վոմանք դեռևս մըոտ, գործարանային գլխարկները գլխներին:

— Հըլի, Ֆրենկ, բացականչեց Զորջը:

Ֆրենկը կիսագարձավ, գլուխը վեր տռավ և նայեց Զորջին: Յես սարսափ տեսա ֆրենկի աչքերում:

— Լոկառնուտ:

— Վո՞չ, յերանի լոկառնուտ լիներ, յերկարացրեց Ֆրենկը և գըրպանից ծխախոտ համեց և սկսեց ծամել:

— Յերկի թերթ չես կարդացել, Զորջ, — շարունակեց Ֆրենկը, վորի դեմքի վրա խաղում եր յերերացող լամպի ստվերը: Ֆրենկը պատմեց մի զարհուրելի պատմություն:

— Պոտը կատաղեց այսոր անտառի գաղանի նման, — սկսեց Ֆրենկը, — վերակացուն ամեն որվա նման յեկավ և սկսեց Պոտին նկատողություններ անել: Պոտը բացատրեց, ջոնաց հասկացնել վերակացուն, վոր սխալվում ե, բայց վերակացուն չարացել եր եղ կատվի նման և սկսեց հայնոյել, Պոտը բավական յերկար լուսություն պահպանեց, վոչինչ չպատսսխանեց, բայց յերբ վերակացուն հայնոյանքներից հետո՝ հայտարարեց, վոր նրա շաբաթական աշխատավարձից պետք ե կարեն իբրև պատիժ՝ Պոտը կատաղեց, հարձակվեց վերակացուի վրա, մի քանի ծանր հարվածներ նրա զլիին տալուց հետո, բռնեց, վեր բարձրացրեց նրան և վոտներից հանձնեց մեքենային, մի ակնթարթում վերակացուի ամբողջ մարմինը կուլ գնաց յերկաթյա գաղանին, փշրվեցին նրա վոսկորները ահավոր ձևնչոյներով, մեքենայի ճեղքերից սկսեց վագել արյունը, գեռես մարմինը գուրս չտված՝ մեքենան դադրեց աշխատելուց: Պոտըն ապշած նայում եր մեքենայի ճեղքերից վազող աբյունին: Բռնեցին Պոտին և ծեծելով տարան: Ամբողջ որը գործարանի բանվորները սարսափ եյին ապրում: Դեպքից կես ժամ հետո՝ վոստիկաններ յեկան, քննություն կատարեցին: Վոչ վոք վոչինչ չասաց գեղքի մասին, ասացին, վոր մեքենայի դադրելուց հետո տեսել են, սարսափելի վոճիր ե կատարվել:

— Գնանք մի հավելված առնենք, — առաջարկեց Զորջը:

Բուրժուական թերթերի հավելվածը լիքն եր Պոտի «վոճարագործության» մանրամասնություններով և նկարներով:

«Ահավոր վոճիր X գործարանում: Ատարականները կեղտուու են մեր բարեկերը: Թույլ ե գեւուկրատական ադմինիստրացիան: Պետք ե դուրս վւնիքել ուսարականներին այս սուրբ յերկրից»:

Պոտը իտալացի բանվոր եր, իր իսկական ազգանունով — Պոտինի, վոր կարձ՝ Պոտ եյին անվանում: Պոտի իտալացի լինելը բավական եր, վոր վողջ բուրժուական Ամերիկան սկսեր արձարձել Ամերիկայի գոները ոտարականների առաջ փակելու լոգունզը:

Հաջորդ փողոցում բավական մեծ բազմություն եր հավաքվել: Բազմության մեջտեղում իրարանցում կար և լսվում եյին հայնոհանքներ: Փողոցի յերկու անկյունների լամպերը չեյին կարող այնքան լուսավորել, վոր մենք կարողանայինք տեսնել, թե ի՞նչ եր դիմումում:

— Անիծված.

— Թու մեծագույնն ես:

Զորջը և յես ճեղքեցինք բազմությունը, վորպեսդի տեսնենք, թե ինչ եր պատահում: Հանկարծ ամբոխի միջից մի հաղթանակ կոպիտ բանվոր, պինջակը հսնեց, հանձնեց կողքիս կանգնած ընկերոջը և խոյացավ գետի մեջտեղը: Կոփի եր վոստիկանների և բանվորների միջև, Վոստիկանների սուլոցները սկսեցին ավելի աղեկուր ճշակ: Վրա հասավ մի ավտոմոբիլ: Վոստիկանական ավտոմոբիլ եր: Ավտոմոբիլի լույսերը լուսավորեցին կռվի վայրը—մի քանի բանվորներ եյին և վոստիկաններ: Բանվորները բոռնցքներով եյին կովում, իսկ վոստիկանները՝ իրենց կողքից կախված կարծ և ծանր փայտերով: Ավտոմոբիլից ներքեւ ցատկեց մի վոստիկան և փալտը բարձրացրեց այն բանվորի գլխին, վորը պինջակը հանելով՝ խառնվել եր կռվի: Բանվորը բռնել եր մի վոստիկանի կոկորդից: Վոստիկանը դուրս ընկած աչքերով, հուսահատ՝ նայում եր յերկնքին, յերբ ավտոմոբիլից ցատկող վոստիկանը փայտը իջեցրեց բանվորի գլխին, վորից արյունը ֆշաց շատրվանի նման: Վրա հասան յերկու վոստիկանական ավտոմոբիլ ևս, վորոնց յուրաքանչյուրի վրա 7—8 վոստիկաններ կային: Նրանք շրջապատեցին բանվորներին, շղթայեցին նրանց և բոլորին միասին մի ավտոմոբիլի մեջ դնելով՝ տարան:

Զորջը և յես մտանք բանվորների մեջ և սկսեցինք հարց ու փորձ անել թե ինչու և ինչպես եր սկսվել կռիվը:

Հանկարծ մի կանացի ձայն լսեցինք, վոր բանվորներին կոչ եր անում:

— Ով վոր ուզում ե իմանալ այս ընդհարման սոցիալ-քաղաքական գաղանիքը՝ պարտավոր ե կարդալ այս տետրակը:

Ի՞ն եր: Նա վաճառում եր «Կապիտալիզմի ծառաները» անունով մի փոքրիկ բրոցյուր: Բանվորները սկսեցին գնել, հատը 5 սենտ եր:

Պարզվեց, վոր կռիվը սկսվել եր Պոտի պատահարի առթիվ: Վոստիկաններն ուզել եյին խուզարկություն կատարել մի բանվորի տանը և կռիվը սկսվել եր:

Իմ աչքերի առաջ հետզհետե բացվում եյին սոցիալական մի նոր աշխարհի թանձը վարագույրները:

Սր. Հարրիսոնը համարվում եր Նյու-Յորկի ունիվերսալ խանութների թագավորը: Նրան եր պատկանում բաղաքի ունիվերսալ խանութների 50 տոկոսը:

Տիկին Դորոտի Հարրիսոնը տարեկան տասնյակ հազար դոլարի միայն արևելյան գորգեր եր գնում: Մինչեւ անգամ կային գորգավաճառներ, վորոնք միայն Տիկին Հարրիսոնի պատվերների համար, մեկնում եյին Արևելք գորգեր բերելու, հազարավոր դոլարներ աշխատելով:

Մր. Հարրիսոնի տունը մարմարից եր կառուցված, յերկնագույն մարմարից, թեթև ալիքավոր սկ բժերով: Յերբ յես ներս մըտա արտաքին յերկաթաձողերով մեծ դռնից՝ ինձ դիմավորեց մի նեղը համազգեստով: Նեղը անմիջապես ներկայացրի Տիկին Հարրիսոնի տոմսը: Նեղը կարդաց տոմսը և ցույց տվեց ինձ մայրի ծառերով յեղերգած կածանը: Շարունակեցի իմ ճանապարհը և հասա բնակարանի սանդուղքների ստորոտը: Դեռևս մարմարյա սանդուղքների ստորոտումն եյի, յերբ նշմարեցի յերկու համազգեստով սպիտակամորթ մարդիկ, վորոնք կանգնած եյին վերևի դռան յերկու կողմերին, ինչպես զինվորներ կազարմայի դռան առաջ: Բարձրացա վերև և դարձյալ ցույց տվի Տիկին Հարրիսոնի տոմսը:

— Սպասեցեք,—ասաց սպասավորներից մեկը և ներս գնաց:

Յես մի պապիրոս վառեցի և սկսեցի դիտել շուրջս: Ըստհանուր կանաչության մեջ ինձ թվաց, վոր այս մարմարյա տունը մի վիթխարի սպիտակ վարդ ե կանաչ տերեկներով յեղերգած: Բնակարանի չորս բոլորը տրեկի բույներով վառվող ծաղիկներ կային, բնակարանի ձախ կողմում ջրի մի շատրվան եր բարձրանում, այնքան բարձր, վոր ջրի կաթիները փոշիանում եյին և արևի ճառագայթների տակ ծիածաններ գծագրում:

Հեռուն վիթխարի քաղաքի վրա նստած եր համատարած ծխի մի մշուշ, բարձր շենքերի գագաթները հազիվ եյին յերկում, բայց արեկի շողերը թափկել եյին Հարրիսոնի ապարանքի վրա և ծաղիկները ժաղանակ եյին:

— Խնդրեմ, լսեցի հանկարծ յետեիցս:

Սպասավորներ, վոր ինձ հրավիրում եր ներս:

Յերկնագույն մարմարյա պատերից ներս՝ խոր լոռություն և կիսախավար եր տիրում: Դուռը անմիջապես բացվում եր մի ընդարձակ սրահում: Ներս մտնելիս ինձ այնպես թվաց, վոր յես մըտա մի հինավորց վանք: Ելեկարական լամպերն ել մոմի ձեւ ունեյին: Այդ սրահի խորքից—մեջտեղից—բարձրանում եր մի սանդուղքների ստորոտում ինձ դիմավորեց ժպտերես, կապույտ աշքերով և շեկ ծամերով մի աղջիկ, վոր գլխին սպիտակ փոքրիկ գլխա-

նոց ուներ, ժանյակից շինված, իսկ փորի վրա կապած եր մի փոքրիկ սպիտակ գողնոց:

— Բարե ձեզ, ասաց ինձ դիմավորող աղջիկը:

— Բարե ձեզ, պատասխանեցի անմիջապես և ցույց տվի Տիկին Հարրիսոնի տոմսը:

— Համեցեք, — ասաց կալույտ աչքերով աղջիկը և սկսեց քայլել:

Յես հետեւեցի նրան: Նա մտավ սրահի ձախ կողմի վրա բացվող մի սենյակ:

Յես ընկղմվեցի մի թափշա թիկնաթոռի մեջ և սկսեցի դիտել մի մեծ լուղաներկ նկար, վոր կախված եր դիմացի պատից: Այդ նկարը պատկերացնում եր յանկիների և հնդիկների պատերազմը — մի դրվագ ամերիկյան «հերոսական» պատմությունից: Անդիայից դեպի նոր ցամաք հասած առաջին գաղթականները, վորոնք բրիտանական բանտերի ավազակներն ու վոճրագործներն ելին, նոր ցամաքի վրա հանդիպեցին հնդիկներին, կարմրամորթներին, կոսորեցին նրանց, բանտարկեցին և հաղթեցին: Այդ հաղթանակի վրա կառուցվեց ահավոր մի բան — անգլո-ամերիկյան առևտուրը:

— Բարե, — հանկարծ լսեցի:

— Բարե, — ասացի մեքնայաբար և վոտքի կանգնեցի:

Լեյդի Հարրիսոնն եր:

— Յերեկի հափշտակված եք այդ նկարով, — հարեց Լեյդի Հարրիսոնը, — յես վաղուց եյի յեկել:

— Ներեցեք ինձ, մադամ, — մտածում եյի խեղճ հնդիկների մասին:

— Այն, հետաքրքրական նկար ե, հայտնի նկարիչ և նկարել, յես ձեզ ցույց կտամ և մեր նկարների գալերեան, այսուեղ ել շատ հետաքրքրական նկարներ կան:

— Յանկալի յե տեսնել ձեր նկարները, Տիկին Հարրիսոն, — պատասխանեցի:

Տիկին Հարրիսոնը նման չեր այն Տիկին Հարրիսոնին, վորին դուրսը հանդիպել ելի: Նա գրեթե կիսամերկ եր, նրա մարմինը կարծես թրթոռում եր նուրբ մետաքսէ վարդագույն շորի տակ: Նա սենյակը խաչաձեց և քայլեց դեպի պատշգամբը՝ ինձ հրավիրելով այստեղ: Տիկին Հարրիսոնը նստեց մի աթոռի վրա, վորի յետեր հոռվմեական մի գլադիատորի արձան եր դրված,

— Ուրեմն դուք հիմա ազա՞տ եք իմ գորգերը կարգի բերելու:

— Այն, մադամ:

— Յես ցանկանում եմ լավ գործ, կվճարեմ ձեզ ինչքան հարկն ե, մի քանի գորգերի վրա, վորքիկ տեղեր, թանաք ե թափած: Ա-

պա յես ուզում եմ մի քանի նոր գորգեր գնել, ձանձրացել եմ հըներից:

— Զարմանալի յե, տիլին.

— Ինչու:

— Վորովինետե մարդ վորքան յերկար ապրի արևելյան գորգի հետ, այնքան կը սիրի նրան, յերեկի ձանձրացել եք նրանից, վոր այդ գորգերը կեղտուավել են, փոշոտել և կորցը իրենց հրապուրանքը, լվացվելուց հետո՝ նրանք կարող են այնպես թարմանալ, ինչպես յերբեք չեն յեղել:

— Իսկապէս:

— Այն, աիկին, շարունակեցի յես, արևելյան գորգը մարդու նման չե, գորգը վորքան ծերանում ե, այնքան արժեքավոր ե դառնում:

— Ի՞նչ լավ կլիներ, յեթե մարդը գորդի նման լիներ, «փիւլիսոփայեց» Լեյդի Հարրիսոնը:

Արել փովել եր պատշգամբում, մի հազվագյուտ արև նյու-Յորկի գարնանային որերում, ներքեռում վառվում եյին ծաղիկները, շատրվանը ծիածաններ եր գծագրում թափշա կանաչի վրա, Լեյդի Հարրիսոնը կատվի նման ուզում եր փովել արևի շողերի տակ:

— Գնանք տեսնենք գորգերը, առաջարկեց նա:

— Գնանք տիկին:

Սրահի գորգերը դիտելուց և նշանակելուց հետո՝ մենք բարձրացանք վերկի հարկը և մտանք մի ջահազարդ դահլիճ, վոսկենուու վարագույրներով, մոզայիկ պատերով: Առաստաղի վրա կապույտ յերկինք եր նկարված աստղերով և մի լուսնով, վորոնց յետին դիշերները լույսեր եյին վառվում իսկական դիշերային յերկնքի պատրանքը տալով: Հատակը ծածկված եր մեծ հնդկական մի գորգով, խոշոր, պարզ ֆիզուրաներով, վորի ֆոնն եր կազմում ուղտի վոսկեգույն բուրգը:

— Այս գորդի վրա մի քանի տեղ սպիներ են գոյացել, ասաց Լեյդի Հարրիսոնը և հաճեց ցույց տալ.

Զահազարդ դահլիճից մենք անցանք մի փոքրիկ սենյակ, վորը մի տեսակ միջանցք եր ծառայում դեպի մյուս սենյակը: Այս միջանցք — սենյակում արևելյան գորգեր չկային, բայց զարմանալիուրեն հետաքրքրական մի սենյակ եր: Սենյակի մեծ լուսամուտները ծածկված եյին գույն թափշա վարագույրներով, վորոնք սենյակը դարձնում եյին մթնշաղային, իսկ սենյակի մեջտեղում բարձր գրված եր Միլոսի վեներան: Յես կանգ առա վեներայի առաջ և սկսա ապշտոթյամբ և հափշտակությամբ դիտել, յերբ Լեյդի Հարրիսոնը հարեց:

— Անպիտան աղախինները կոտրել են այս խեղճ արձանի թևերը:

Անմիջապես փոխվեց իմ ապշտության որյեկտոր, յես սկսեցի ապշել այն տգիտությանվրա, վոր բովանդակում եր Լեյդի Հարրիսոնը.

— Վորքան ժամանակ ե, վոր աղախինները կոտրել են արխեղճ արձանի թևերը, տիկին, — հարցրի:

— Զգիտեմ, իմ այս տունը գալուց առաջ ե պատահել, պատասխանեց Լեյդի Հարրիսոնը:

Արդեն ինձ համար պարզ եր, վոր մինչեւ անգամ Լեյդի Հարրիսոնը չեր մտահոգված հարցնելու արձանի թևերի կոտրված լինելու մասին և վոք ել չեր մտահոգվել բացատրելու Լեյդի Հարրիսոնին հելենական այդ թուչող մարմարի պատմությունը: Լեյդի Հարրիսոնը ինքնիրեն կարծել եր, վոր անպայման անպիտան աղախինները կոտրած լինելիս խեղճ արձանի թևերը, այլապես մի կոտրրված արձան ինչու պիտի այդպիսի առանձին ուշադրության արժանանար ունիվերսալ խանութների թագավորի ապարանքում:

Յես չուզեցի Լեյդի Հարրիսոնին պարզել Միլոսի Վեներայի պատմությունը, նախ՝ վիրավորական կլիներ, ապա՝ մտածեցի՝ թող Վեներան հավիտյան անձանոթ մնա Լեյդի Հարրիսոնին:

Մենք անցանք գրադարանը:

Գրադարանը մի ընդարձակ սրահ եր, վորի մեջ բաց կապույտ գույնը ճնշող, տիրող գույնն եր կազմում: Մի կողմի պատի առաջ շարված եյի, գրքերի ավտոմատիկ բացվող և փակվող պահարանները, իսկ դիմացի պատի առաջ շարված եյին պահարաններ, վորոնց մեջ դարսված եյին բյուրավոր գույնգույն միջատներ՝ ասեղներով ամբացված փոքրիկ բարձրությունների վրա: Կային և հունական և հռովմեական արձաններ, խառն և խուռն դարսված անկյուններում, իսկ կենտրոնում կանգնեցված եր մի մարմարյա փայլուն արձան, վորը մի փունջ ծաղիկ եր դրկած: Յերբ ուշադրությամբ նայեցի արձանին՝ տեսա, վոր Լեյդի Հարրիսոնի արձանն եր:

— Հավանում եք, — հարցը Լեյդի Հարրիսոնը:

— Այն, շատ լավ ե քանդակված:

— 25.000 դոլար ե վճարված, — հիշեցրեց Լեյդի Հարրիսոնը:

— Զգույշ յեղեք, Տիկին, վոր անպիտան աղախինները այս արձանի թևերն ել չկոտրեն, — ասացի յես:

— Ո՛, այո, — յերկարացրեց Լեյդի Հարրիսոնը, — յերեակայեցեք, վոր միշտ յես եմ մաքրում, չեմ թույլ տալիս, վոր աղախինները մոտենան նրան, — հպարտությամբ և «իմաստությամբ» պատասխանեց Լեյդի Հարրիսոնը:

Գրադարանում յերկու յերկար արեւելյան գորգեր կային, վորոնք վոհ մի դեֆեկտ չունեյին, միայն հարկավոր եր փոշին մաքրել:

— Մեացած սենյակների գորգերը ձեզ ցույց կտա մեր աղախիններից մեկը, — ասաց Լեյդի Հարրիսոնը և սեղանի վրա դրված հեռախոսով խոսեց ներքեր և կանչեց աղախիններից մեկին: Հեռախոսի խոսակցությունից իմացա, վոր աղախինի անունը Հելենա յեր: Այդ հեռախոսը վոհ մի կապ չուներ քաղաքի կենտրոնի հետ, դա միայն կապված եր բնակարանի մյուս մասերի հետ:

Քիչ անց՝ ներս յեկավ Հելենան — այն միհնույն աղախինը, վոր ինձ ընդունել եր առաջին անգամ:

— Ցույց տվեք պարոնին մյուս սենյակների գորգերը, հրամայեց Լեյդի Հարրիսոնը և գտնալով ինձ, — բոլոր գորգերը դիտելուց հետ՝ հաշիվ ներկայացրեք և սկսեցեք ձեր աշխատանքը, — ասց ու հեռացավ գրադարանից:

3

Մենք գրադարանից դուրս յեկանք մի միջանցքի գորգը դիտելուց հետո՝ մտանք մի ընդարձակ սենյակ: Այս սենյակումն էյին գտնվում պարսկական գորգերի ամենաթանկագին տեսակները: Պատից կախված մի քանի Շիրազները վառվում եյին արյան գույներով և ծովու կապույտով: Մահակալի պատից կախված եր մի կաշան, վորի մեջտեղում կարծես վարդի հրդեհ եր բոկնված հատակին ձգված եր մի Քիրմանշահ, վորի բազմաթիվ յերիզների մեջտեղում հյուսված եր ֆանտաստիկ մի ծառ, վրան առասպելական թուշուններով:

— Ո՞ւմ սենյակն ե այս, — հարցը Հելենային, յերբ տեսա անկունը դրված մի յերիտասարդ տղամարդու բյուրու:

— Յերիտասարդ Հարրիսոնի սենյակն ե, — պատասխանեց Հելենան:

— Հարրիսոնի տղան:

— Այո:

Յերիտասարդ Հարրիսոնի սենյակից հետո՝ մենք մտանք միանդքում բացվող մի փոքրիկ սենյակ, վոր կոչվում եր տուալետի սենյակը: Սա պարզապես արտաքնօցն եր, վորի մեջ կար վանինա, մեծաղիք հայելի, մետաքսով ծածկված մի թախտ, վորի վրա դըրված եյին ստիճաների պես ուռած բարձիկներ, հատակը և պատերը սպիտակ և սահուն մարմարից, իսկ վաննայի առաջ մարմարյա հատակին փուլած եր մի Բուխարա մուգ կարմիր և մուգ կապույտ տիրական գույներով, վոր ուժեղ մի հակադրություն եր

կազմում տիրող ընդհանուր սպիտակության մեջ։ Տուալետի այդ սենյակում տիրում եր մանիշակի հզոր և հարբեցուցիչ բուրում։ Այդ սենյակում, սակայն ամենազարմանալին հեռախոսի ապարատն եր, վոր զետեղված եր նստելու տեղի և վաննայի մեջտեղում։

— Այս հեռախոսը ինչու դրված ե այստեղ, զարմանքով հարցրի Հելենային։

— Նրա համար, վոր յեթե Լեյդի Հարրիսոնը զբաղված լինի այստեղ՝ գրսի հեռախոսը միացնենք, վորպեսզի խոսի։

Բուխարայի մայրը սկսել եր քանդվել, նշանակեցի և դուրս յեկանք դեպի տան յետեի պատշգամբը, վորտեղ փոփած եյին յերկար գորգեր, Բնակարանի յետե տարածված եր մի ընդարձակ պարտեզ, վորտեղ բանվորներ եյին աշխատում։

— Յեսի այստեղ նոր բնակարան են շինում Յերիտասարդ Լեյդիի համար, ասացի Հելենային։

— Վրչ, — պատասխանեց Հելենան, — յերիտասարդ Լեյդիի համար արդեն բնակարան կառուցվել ե, այստեղ լիճ են կառուցում Լեյդի հարսանիքի խնձույքի համար։

— Ինչպես։

— Լճի վրա յեն տաքու խնձույքը։

— Մի՞ որդա համար։

— Մի իրիկվա համար, շեշտեց Հելենան։

— Ինչքան ե նստելու այդ լիճ, — հարցը յես շվարած։

— Միտք Հարրիսոնի հաշվով՝ յերկու միլիոն դոլար, — պատասխանեց նա շեշտակի դեմքիս նայելով և դրանով մեր զրույցը վերջացավ։

Նորողվելիք գորգերի համար մի հաշիվ պատրաստեցի, տվի Հելենային հանձնելու Լեյդի Հարրիսոնին և դուրս յեկա Մր. Հարրիսոնի ապարանքից։

Վերադարձին, ավտոբուսի վրա, մտածում եյի վոր սա ուրիշ բան չե, յեթե վոչ ժամանակակից մի հեքիաթ, անզութ և անավոր մի հեքյաթ։

— Ո՞վ եր Պոոր։

— Ինչու նա սպանեց վերակացուին։

— Ո՞վ եր Հարրիսոնը։

— Ինչպես եր նա կուտակել այդքան հարստություն։

— Ի՞նչի վրա յեր ծախսում նա այդ հարստությունը

— Ո՞վ ե խոսում այս պատմվածքում. կարելի յե՞ պատմվածքից իմանալ նրա մասնակցությունը։

— Յեթե այդ մասնակցությունը լիներ կարո՞ղ եր նա ընկնել Հարրիսոնի պալատը։

Վ. ԹԵՐՁԻԲԱՇՅԱՆ

ԵԼ ՎԱՀԻԴԻ ՎԵՐՁԻՆ ԱՐԿԱԾԸ

I

Ծեր և միականի Մուհիդը, վորին ել-Վահիդ մականունն եյին ավել («վահիդ» արաբերեն նշանակում ե մեկ), Բաղդադի շրջակայրում ուղտապան եր, ուներ միայն մեկ ուղտ, — նրա վողջ կարավանը, — այն ել ծեր և միակնանի, ինչպես իր տերը։

Ուղտը իր սապատով վաստակում եր յերկուսի ապրուստը — թեթև բեռներ և անցորդներ փոխադրելով, իսկ ուղտապանը աչքի լույսի պես սիրում և խնամում եր նրան։

Մի անգամ, գործի բերմամբ, Վահիդը և իր ուղտը, վորի անունն Աբդի յեր, հետևելով Յեփրատ գետի հոսանքին, գնացին գետի հարավ՝ Գիշերը հասան հին Բաբելոնի ավերակներին, վորից քիչ հեռու գտնվում ե մի զյուղաքաղաք։ Վահիդը նախընտրեց գիշերել ավերակների մեջ, վորովնետե դրանով կազատվեր նաև՝ քարվանսարայի վարձից և յերկրորդ՝ մարդկանց ձանձրալի հարց ու փորձից։

Մի քիչ վորոնելուց հետո գտավ մի հարմար անկյուն, պատրապարված կիսափուլ պատով — և ազատելով ուղտի սապատը թեթև բեռից՝ մեջքի վրա պառկեց նրա կողքին և սկսեց դիտել աստղավառ յերկենքը։

Գիշերը հարավի պարձանքն է։ Յերեկվա տոթին՝ դանդաղ տողանցող կարավանները չափված, միալար քայլերով՝ անսպատների հրայրքի միջից յերազում են սփոփիչ գիշերը։

Վահիդը՝ վորպես ճշմարիտ հարավցի՝ զգում եր գիշերված ամբողջ հմայքը։ Նրա հոգին լցվեց յերանությամբ և անգիտակցաբար ակսեց հնչեցնել, կոկորդային խոպոտ ձայնով, գիշերվա յերգը, ավելի ճիշտ՝ մի հանգերգ, յերկար ու միալար։

— Յա լեյլ, յա լեյլ, յա լեյլ (ով գիշեր, ով գիշեր...)։

Գիշերվան գովքն ե սա, նույն հանգերգը, վոր կրկնվում ե Միշագետքից և Պարսից ծոցից ակսած մինչև արաբական մեծ տափաստանը և հյուսիսային Աֆրիկայի խորքերը։

Գիշերը սկսեց ցրտեր Սահիդը փաթաթվեց իր աբայի ծալքերում և պատրաստվեց քնելու։

— Քնիր, սիրելիս, — ասաց նա ուղտին, — վաղը յերկար համբառնենք կտրելու, լուսաբացից առաջ շարժվելու յենք։

Քիչ անց Վահիդը սկսեց մեղմորեն խռմփալ. ուղար մնաց արթուն և կարծես տխրեց. նայում եր քնած տիրոջը և գլուխնորորում:

Վահիդի քունը յերկար չտեղի. հանկարծ զարթնեց և նայելով շուրջը՝ ասաց.

— Դեռ քնած չես, իմ խեղճ Աբդի... Վատ յերազ տեսա. ինչվոր անըգգամներ յեկել եյին, ուղում եյին քեզ տանել: Մարգարեյի միրուքը վկա, յերազը լավ յերազ չեր:

— Սալամ ալեյքում:

— Սալամ ալեյքում:

— Սալամ ալեյքում:

Յերեք վողջույններ լսվեցին խավարի մեջ, և Վահիդը խոսքը կիսատ թողած՝ ժամանակ չունեցավ անմիջապես արտասանելու սովորական պատախանը՝ «ալեյքում սալամ»:

Յերեք սպիտակ բուրնուզներ *) առաջացան խավարի մեջ—յերեք մարդկային եյակներ—և կանգնեցին մի շարքի վրա:

Վահիդը նախ կարծեց, վոր յերազի շարունակությունն ե, սակայն ստուգեց իրողությունը՝ շոշափելով իր միրուքը և դեռ վորոճացող ուղարի դունչը: Հետո ճշմարիտ արեելցու անխռով ձայնով ասաց.

— Յեթե այս հեթանոս քաղաքի փլատակներում թափառող ջիներից *) չեք, թող ալահը որհնի ձեր գալուստը:

— Մենք ջիներ չենք, այլ քեզ պես ուղղափառ մուսուլմաններ,—պատասխանեց յերեք սավերներից ամենաբարձրը խուլ կոկորդային ցայնով:

Յերվիշները խավարի մեջ կայծկլառող աչքերով նայում եյին վորոճացող ուղտին:

— Յերեսում ե, ազնիվ ցեղից ե որհնյալ կենդանին, անկասկած սահարական արագընթաց տեսակից,—ասաց նրանցից մեկը:

Վահիդը չպատասխանեց. մի անորոշ կասկած սկսել եր կրծել նրա սիրտը, բայց գերվիշների պատկառելի տեսքը մեղմացնում եր կասկածի խայթը:

Յերեք գերվիշները բարի գիշեր ասացին և պառկեցին կողք-կողքի պատի տակ: Քիչ անց նրանք քնեցին, դեժ այդ եր վկայում նրանց ուղնգերից լսվող համաշափ աղմուկը, վորին սովորաբար խոմֆոց անունն են տալիս:

*) Սպիտակ քաթանե յերկար հագուստ, վոր սովորաբար ունենում են մի գլխանոց բազուղի նման: Գործ են ածում արարները:

*) Վոզի:

Վահիդը մի քիչ միամսվեց, յերբ նրանց քնած տէսավ:

— Մարգիկ քնի մեջ ավելի անվտանգ են յերկում,—մտածում եր նա.—յեթե շեյթանը մոլորեցրել ե սրանց և չար մտքերը բուն են դրել սրանց հոգում, թող ալլահը փարատե այդ չար մտքերը և բարերար քունը առաքինի յերազներ բերի, վորպեսզի զարթնեն մաքուր հոգով և գնան արդարության ձանապարհով:

Վահիդի քունը վախել եր: Նա յերկար մտածեց աշխարհի մասին: հիշեց իր մանկությունը, յերիտասարդության որերը, յերբ մեծ կարավանների հետ եր ժամբորդում, նստած իր զտարյուն «արաբը», աչքերը սկսեռուն հորիզոնին, իրար հաջորդող և անհայտացող միրաժներին, վորոնց յետեւ թագնված եյին հեռավորութիւնները: Մաքերի քմահաճ ընթացքը նրան վոխադրեց այդ ցանկալի ուղիսներից մեկը, ուր մի ժամանակ, շատ առաջ, ազրում եր նա, վորին սիրել եր անհույս և կորցել անհետ, վորպես միրաժ:

Ուղար շարունակում եր իր վորոճը: Նա այժմ միակ արթուն արարածն եր Բաբելոնի ավերակներում, վորովինետեւ նրա տեր Մուհիդել-Վահիդը նորից վոխադրվել եր յերազների աշխարհը, ուր նրան որորում եյին անցյալի տեսիները, ուղիսների և միրաժների հմայքը և գիշերվա մեղմ զեփյուրը...

Այս անգամ Վահիդը հնիջում եր խոր քնով, խոր և ճակատագրական:

Յերբ ծերունի Վահիդը քնից զարթնեց՝ նախնկատեց իր սիրեցյալ ուղարի բացակայությունը, ապա աչքերը շփելով—վոր ավելի պարզորեն տեսնի—տեսավ՝ վոր գիշերվա դերվիշները նույնպես անհայտացել եյին:

Յերբ հաստատ ստուգեց իրողությունը, Վահիդը սկսեց ծեծել իր կուրծքը: Նա վողբում եր իր կորուստը, անիծում խարես դերվիշներին և մեղադրում ինքն իրեն, վոր անզգուշ և եղել, հավատացել և յերեսություններին և թողել, վոր նենդավոր քունը փաթաթե իրեն մոռացության սավանների մեջ:

Սովորական փիլիսոփայությունը քիչ եր մնացել ամբուջապես լըեր նրան: Նա ձեռները խփում եր զլիսին և մրմնջում:

— Հիմար, հիմար ծերուկ, միթե գու մելքեսեյում *) որոր վոզ աշակերտ ես, կամ հարբած քրիստոնյա, վոր մոռանում ե իր հավատը մի բաժակ գինու համար: Միթե քո հայրերի իմաստությունը վախել ե քո զլիսից, ինչպես անվարձ հյուրը՝ քարվանսարութիւնը ու առաջ:

*) Դպրոցը ուր դպրան են սովորում և կարգալիս նստած տեղը որոր վում են յետ ու առաջ:

ըայից. ի՞նչպես թույլ տվիր, վոր անծանոթ մարդիկ, կասկածելի ինքնակոչ գերվիշները ծիծաղեն քո միրուքի վրա և խլեն քո վերջին ապավենը...

Արևել դիմում եր դեպի զենիթը հեղեղելով բազմագայան փը-
լատակները իր կենսատու ճառագայթներով, սակայն ավերակները
շարունակում եյին իրենց մեռելությունը և հսաղարյան Բաքելոնը
մի անգամ ևս վողբում եր իր ճակատագիրը, այս անգամ ուղար-
պան Մուհիդ-ել-Ղահիդի հետ, վորը վողբում եր իր կորած ուղարը,
ինչպես Բաքելոնը իր կորած փառքը...

III

Յերբ Վահիդը հասավ մոտակա գյուղաքաղաքի, դռներին, վորից նա խուսափել եր յերեկ գիշեր, նրան դիմավորեց կիսամերկ յերեխաների մի խումբ. Տեսնելով միակ ծերուկին՝ յերեխաները, ըստ յերկույթին, վորոշեցին զվարձանալ նրա հաշվին. Սուր ու այլանդակ ճիշերով վրա ընկան և մանր քարերի հետ միասին այլազան սրախոսություններ սկսեցին շպրտել դեպի նա.

— Սալամ-ալեյքում, հաջի բարա, — ձչաց պղնձագույն մալմնով
և արևառ դեմքով մի ստահակ.— ՀԱՅԻ գնում ես անհավատներին
բարի գալուստ մաղթելու. զգույշ, բարա Վահիդ (ակնարկություն
միականության), նրանք կծաղրեն քո միլուքը և կստիպեն քեզ
պարել ուղարի պարը...

— Յերկաթալարի վրա, — ավելացրեց մի ուրիշ ստահակ:

«Ուղաի պարը» ծակեց Վահիդի սիրալ, հիշեցնելով իր սիրեցյալ ընկերոջ. սակայն նրա համար պարզ չէր, թե խոսքը ի՞նչ «անհավատների» մասին է. ուզեց հարցնել, բայց տեսնելով, վոր այդ չարաձնի վոհմակից խելքի մոտիկ բան չի կարելի սպասել, գավազանով սկսեց ցրել նրանց:

— Կորեք, գնացեք,—մըմռաց քթի տակից և, նորից հիշելով իր կորած ուղար, մտքում ասաց.—Մարդարեյի բոլոր կանայք *) վկա, ձեր ամենքի մայրերը չելի փոխի իմ ուղաի մեկ կույր աքի հետ...

Այդ բոպեյին վերևից լսվեց ինչ-վոր մեքենայի խուլ դռոցը՝
յերեխաները հեռացան Վահիդից և սկսեցին դիտել յերկնաքը ձեռ-
ները ճակատներին՝ աչքերը արևից պաշտպանելու համար։ Վահիդը
ապշած այդ տարրորինակ ազմուկից, վոր գալիս երյերկնակամարից
և գնալով ուժեղանում, հետեւց յերեխաների որինակին։ մի քիչ
վորոնելուց հետո տեսավ ինչ-վոր թոշնաձե բան, սլացիկ մարմարվ
և հսկա թերերով, վոր սավառնում եր ոգի մեջ վիթխարի ծիծեռ-
նակի պես։

— Թեյարե, թեյարե*), ճշացին ստահակները և սկսեցին վա-
ղել մեքենայի թռիչքի ուղղությամբ:
Վահիդը լսել եր սավառնակների մասին, բայց սեփական աշ-
քով դեռ չեր տեսել:

Այ թե ինչ,—մտածեց նա,—սատանայական թռչունը իրավ վոր հրաշքի բան ե. սակայն ի՞նչ գործ ունի մեր յերկնքում: Կասկած չկա, անհավատները յեկել են: Ալլահ, ալլահ, ո՞վ եր տեսել այսպես բան Հարուն-ել-Ռաշիդի յերկրում: Վայ քեզ, Վահիդ ուղարդ գողացան՝ հերիք չե, այժմ շեյթանի սուրհանդակն ե գլուխիդապում:

Այդպես եր ուղարապան Մուհիդ-ել-Վահիդը, և ի՞նչ իմանար նա, վոր մինչդեռ ինքը գիշերը անց ե կացնում Բաբելոնի, խալ-դեյական հին մայրաքաղաքի ավերակներում, անզլիական առաջա-պահ զորամասերը զրահապատ սրբնթաց ավտոմոբիլներով հասել ելին Բաղդադի մոտերքը, և ժամ առ ժամ սպասվում եր Նրանց մուտքը Հարուն-ել-Ռաշիդի մայրաքաղաքը, վոր Իրաքի սիրտն ե՝ փոված Տիգրիսի շքեղ ափերին:

* * *

Տխուր խոհերով Վահիկը անցավ քաղաքի դարպասից և հիշեց
իր կորած ուղար, վորի հետ միասին հաճախ անցել եր նույն տե-
ղից ուրախ և անհոգ, իմաստուն և անչար: Իսկ այժմ... այժմ նա-
խանձում ե առաջին հանդիպած իշապանին, չե՞ վոր գրպանում մի
կարգին եշ գնելու չափ գրամ չուներ, իսկ ապագան մոայլ եր ու
անորոշ, հոյի անակնկայներով և անսախսրնթագ դեպքերով:

Այս խոհերի մեջ՝ անցավ ամայի փողոցներով, Վահիդը աննկատելի կերպով հասավ քաղաքի փոքրիկ հրապարակը, ուր բազմություններ խռնվել: Հրապարակի կենտրոնում շարված եյին զրահապատ ավտոմոբիլներ, վորոնց կողքերից սպառնալից գուրս եյին ցցված գընդացիլների փողերը: Մի քանի հրացանավոր՝ կլոր զիխարկներով, լայն գոտիներով և բաց ծնկներով, անց ու գարձ եյին անում ավտոմոբիլների շուրջը, հետաքրքրությամբ նայում խռնված ամբոխին և յերեմն ձեռքի շարժումներով պահում եյին նրան հարգական հեռավորության վրա: Ոտար զինվորները խումբ-խումբ կանգնում եյին դես ու դեն, ծխում եյին և խոսում անձանոթ լեզվով. Նրանք բոլորն ել մաքուր ածիլված եյին և ծնկները բաց: Բնիկ արաքները շրջապատել եյին նրանց և բերանաբաց դիտում ելին այդ ոտարութիւն մարդկանց, վորոնց նմանը նրանք յերեք չեյին տեսել: Անգիտա-

*.) Մահամեղը ունեցել է տասից ավելի կանալք:

ցիները վորձում եյին յերբեմն խոսել արաբների հետ, ձեռներով շարժումներ եյին անում, և յերբ բան դուրս չեր գալիս, իրենց լեզվով հայնոյում եյին, ապա ծխախոտ առաջարկում նրանց, ովքեր չեյին խորշում շուայլված թունդ խոսքերից (իհարկե անհասկանալի), վորոնց հաջողում եր անզուսպ ծիծաղ և հրհոոց անբեխ-անմորուք մերկասրունքների շարքերում: Զովի-ների և Թովի-ների^{*)} ծիծաղի առարկան տեղացիների յերկար փեշերը և միրուքներն եյին հատկապես, ուղղակի հակապատկերն իրենց կարճ շարվարների և անմազ դեմքերի: Արաբներին այս հակապատկերը ծիծաղ չեր պատճառում, զրահապատների զլիից յերկարող գնդացիրները սառեցնում եյին նրանց տրամադրությունը, ճնշում եյին և խեղում ծիծաղը նրանց կոկորդում, զրա փոխարեն նրանց զարմանքը փոխվում եր ապշության, հիացումը՝ անմտության և բոլորը միասին վերածվում եյին մի տեսակ հարկադրական հարգանքի և պատկառանքի անծանօթ և ահավոր ուժի հանդեպ:

Վահիդը ապշած գիտում եր այս ստարութի տեսարանը: Նա մի պահ մոռացել եր կորուսար և, նայելով հրապարակում անց ու զարձանող զորքին, զգում եր, վոր այդ մարդիկ կատակի համար չեն յեկել, վոր խնդիրը ավելի լուրջ ե, քան թվում ե:

Մի շատ ջանել անգլիացի զինվոր, զրեթե յերեխա, կանացի դեմքով, ժամանակույթ աչքերով, մոտեցավ հանկարծ վահիդին և արաբերենով ասաց.

— Զե՞ն, հեմշերի, ե՞նո՞...^{**)}:

Վահիդը հանկարծակի յեկավ և չպատասխանեց, թեև ասված խոսքերը անպայման պատասխան չեյին պահանջում. տակայն, տեսնելով յերիտասարդի զեմքի բարեմիտ արտահայտությունը, ակամաժպաց և մեքենայորեն սկսեց շոյել իր միրուքը: Անգլիացին նույնպես ձեռքը տարտի իր անմազ ծնոտը, շփեց և ժպատով ասաց:

— Զկա, միրուք չկա:

Այդ ըստեյին լավեց մոտորի աղմուկը. փոշիների միջից մոտեցավ մի ավտոմորի, վորից դուրս թուավ մի բարձրահասակ, դաժան զեմքով սպա, յերկար մտրակը ողի մեջ շարժելով:

— Մարշ, հայդե, — լսվեց մի ուժեղ բաս, և յերկար մտրակը նախ սկսեց ողի մեջ շաշել, ապա թափանցեց ամբոխի մեջ, պայթեց մարդկանց զլուխների վրա, փաթաթվեց նրանց իրաններին և վոտներին և քիչ անց որբեց ու մաքրեց հրապարակը հանդիսատես

*) Անգլիական զինվորների տրված մականունները:

**) Լավ ե, քաղաքացի, լավ:

արաբներից, վորոնցից շատերը խուճապի մատնված կոխոտեցին իրար, թափալեցին փոշիների մեջ և փախան տանելով անողոք մըտրակի հետքերը իրենց անդամների վրա և դաժան սարսափը իրենց հոգիներում:

Փախչող ալիքը իր հետ քշեց և Վահիդին, վոր սկզբում չիմացավ, թե ինչ պատահեց, սակայն լսելով մտրակի շաշյունը և նրան ընկերակցող խոսքերն ու իրարանցումը, հասկացավ, վոր հրամայվում և հրապարակը դատուրկել: Տեսնելով իրար կոխոտող, փոշիների մեջ տապլտկող ամբոխը և նրան տիրող խուճապը, Վահիդն ավելի քան տիրեց: Նա չեր կարող բացատրել դաժան սպայի վարմունքի պատճառները, քանի վոր, իր կարծիքով, հնարավոր եր, առանց մտրակի ոգնության դիմելու, հայտարարել, վոր հրապարակում խոնվելլ խստիվ արգելվում ե: «Յերեկ ուզեց փորձել իր նոր գնած մտրակը,—մտածեց Վահիդը, — կամ դուցե կարծում ե, վոր ամենաիմաստուն Հարուն-ել-Թաշիդի յերկրում մտրակի լեզուն ավելի պերճախոս ե, քան սովորական մարդկային լեզուն: Յեզոփոսը վկա, նա սխալվում ե, և յեթե նրա լեզուն իմանայի, բարձրածայն կասեյի՝ ով մարդ ասածո կամ սատանայի, յեթե ու կարծում ես, վոր արաբներին ծեծելով կատարում ես քո պարագը, ապա իմացիր, վոր այդ պարագը կծանրանո մեջքիդ, ինչպես ջաղացքարը, և դատաստանի որը կզլորի քեզ այն անդունդը, վորտեղից լսվում են միայն խուլ հառաջանք և ատամների կրծոց. լավ իմացիր, վոր արաբի հետ ել կարելի յե խոսել այսպես ինչպես, խոսում են ձեր յերկրի մարդկանց հետ—ասեն գնա, կզնա, յեթե համոզվի, վոր պետք ե գնալ»:

Այս մտքերը և նման մի շարք խոհեր բավական ժամանակ դրակեցրին Վահիդի ուղեղը, սակայն ուղտի կորուսար միշտ ներկայեր այստեղ, վորպես կենարոնսական խնդիր, վորի վճիռը շարունակ հետաձգվում եր: Գրավող բանակի տեսքը և նրա հզորության դիտակցությունը նրան ներշնչում եյին բազմազան մտքեր: Հենց այն միտքը, վոր սավանակով կարելի յե խուզարկել անապատը, նրա ամենահեռավոր ծայրերը, վոր անձի սրբնթաց կառքերով հնարավոր և արաբական նժույգից ել արագ սլանալ և հետապնդել ավազակներին, ստիպում եր նրան անգրադառնալ և կշռել այդ բոլոր հնարավորությունները: «Զգնամ արգյոք սրանց մեծ սահիբի մոտ, հայտնեմ ինձ պատահած գժբախտության մասին և խնդրեմ...»: Այստեղ միտքը կանդ և առնում, ընդհատվելով դաժան սպայի մտրակի սուր հիշողությունից:

III

Վահիդը քայլում եր աննպատակ՝ ծուռ ու մուռ փողոցներով և չնկատեց, թե ինչպես հասավ մի այլ հրապարակ, ուր կանգնած եր յերկիարկանի մի շենք, նախկին գալառական վարչությունը, վորի վրա ծածանվում եր մի անծանոթ դրոշակ, առանց կիսալուսնի և աստղի, յեռագույն, խաչաձև անկյունով։ Մի խումբ արարներ հավաքված դիտում եյին դրոշակը և ցած ձայնով խոսակցում եյին։

— Սալամ-ալեյքում, — վողջունեց Վահիդը։

— Ալեյքում-սալամ, — պատասխանեցին նրան։

Սա ում պալատն ե, — հարցրեց նա։

— Այսուղ նստում ե ինգլիկների մեծ սահիբը*):

Շեմքի մուտքը պաշտպանում եյին յերկու պահակներ, իսկ մի այլ զինվորական կանգնած դռան շեմքին, ծխամորճը բերնին և ձեռները հենած կողքերին, խոժոռ նայում եր խմբված արարներին ծխի քուլաները բաց թողնելով. դա մի հաղթահասակ անգլիացի յեր, կարմրած դեմքով, շեկ և կարճ բեխերով, թեփ վրա ուներ սերժանտի**), յեռագիծ սպիտակ նշան, գլխին կոլոնիալ կլոր դեղնագույն գլխարկ։ Մի յերկար շարք գունավոր ժապավենի փոքրիկ կտորներ, կարված նշանազգեստի թևի վրա, ցույց եյին տալիս նրա ծառայության տարիների քանակը, վորի մեծ մասը անց եր կացրել գաղութային յերկրներում։ Հնդկաստանում և Հուրավային Զինաստանում, ձեռք բերելով բռունցքի և մտրակի գործածության անվեպ փորձառություն, կիրառելով մեծ-բրիտանական քաղաքակրթության բարձր սկզբունքները և անխախտ պահելով նորիս մեծության կառավարության աշխարհասահան պրեսարիֆը։

Այժմ նա կանգնած հսկում եր նույն սկզբունքների ներկայացուցչի կայանը և նրա վրա ծածանվող դրոշակի պատիվը, ինչպես սպանդանոցի շուն, վոր պատրաստ եր գործի դնելու ատամ-ները, յերբ իր վուկրին վտանգ է սպառնում։

Յերեսում եր, վոր ներկաներից մի քանի արար առաջ ականատես եյին յեղել անգլիացի սպայի մտրակի առաջ բերած խուճապին։ Մի բարձրահասակ քաղաքացի պատմում եր դեպքը։ Մյուսները լուռ լսում եյին և թափահարում գլուխները։

— Ինչու յեն ծեծում, — ասաց մի ծերունի. — Ենչ ինչ ե, նա ել և չարանում, յերբ ականջներից բռնում ես, շներն ել իրենց պատիմի ունեն։ Իսկ մենք խո մարդիկ ենք, մեր սեփական հողի

*) Արաբերեն նշանակում ե «տեր»։

**) Ցինթասպա։

վրա, ուրիշների մուլի չենք զավթել, ապրում ենք մեր քրտինքի վաստակով, հեռու մեզնից ոտարի շառը։

— Ճշմարիտ ե, ով իմաստուն սելիդ Աբդուլլահ-իբն-Ումար, — խոսեց մի այլ ծերունի. — յեթե այս անհավատները կարծում են, վոր գործ ունեն անասունների հետ, չափազանց սխալվում են, վորովհետեւ այն ժամանակ, յերբ մեր պապերը տարածում եյին գիտության լույսը ամբողջ աշխարհում, ուսումնասիրում եյին ալգերան և բժշկությունը, թարգմանում Պլատոնը և Արիստոտելը, այն ժամանակ, առում եմ, սրանք գեռ վայրենիներ եյին և թափառական կյանք եյին վարում։

Ավելի յերիտասարդները ուշադիր, զարմանքով և խորին ակնածությամբ լսում եյին ծերունիների խոսքերը, վորոնք շատերի համար նոր հայտնություններ եյին։

— Յերբ ամենախիմաստուն և հզոր Հարուն-ել-Ռաշիդը իշխում եր Բաղդադում և Արաբական կայսրության սահմանները հասնում ելին...

Հանկարծ լսվեց թնդանոթի խուլ վորոս, մի քանի սավառնակ շտապ դռացին և արագ պտույտներ սկսեցին գործել քաղաքի վրա։ Հրապարակը լցվեց մարդկանցով։ Խոնվող բազմությունն արդեն սկսել եր խուճապի մատնվել։ Գավառապետի շենքից դուրս յեկան մի խումբ զինվորներ և յերկու շարք կանգնեցին դռան առաջ, մեզ ծանոթ յենթասպայի դեկավարությամբ։

Թնդանոթի վորոտը հեռվից եր գալիս։ Վահիդը թեև սուր ականջներ ուներ, սակայն ավելի ստույգ տեղեկություն ստանալու համար քաշվեց հրապարակի մի ազատ անկյուն, պառկեց գետնի վրա, ականջը փակցրեց հողին և սկսեց լսել...

— Նամազի լավ ժամանակ ես գտել, մարդ աստծո, — ասաց մի անցորդ ծիծաղելով և կանգ առավ։

— Բաղդադի կողմից ե, Տիգրիսի ափերի մոտերքից, — բարձրածայն ասաց Վահիդը, ականջը հեռացրեց գետնից, բայց պառկած մնաց։ Տեսնելով իր մոտ կանգնած մարդուն, վոր ապշած նայում եր իրեն, ժպտաց և միրուքը շոյելով ասաց։

— Նամազս վերջացրի, հերթը քոնն ե, պառկիր գեանի վրա և կլսես ըեյթանի խոհանոցի պղինձների հանած աղմուկը։

— Ասում ես Բաղդադի կողմից ե։

— Դու ասացիր։

— Վեր կաց, վոտների տակ կտրորեն, չես աեսնում...

* * *

Իրարանցումը հրապարակում սաստկանում եր: Լսվում եր քաղաքային մունետիկի ձայնը, վոր հրավիրում եր քաղաքացիներին քաշվել աները և չանհանգուանալ:

— Մեծ սահիբի հրամանով, ծեր ու յերիտասարդ, կին ու յերեխա, բոլորը անխափը վախ չունենաք, բան չկա, վտանգ չկա... Ո՞վ գտել ե, հինգ արծաթ բաշխիշ... Յա ալլահ, յա՝ Մոհամեդ...

Շատերը չեյին նկատում, վոր ծեր մունետիկը, վոր սովորաբար կորած ավանակներ գտնելու համար հրապարակային հայտարարություններ եր անում, այս անգամ ել մեքենայորեն կրկնում եր իր հավիտենական հանգերգը—«ով գտել ե, այսքան զուրուշ բաշխիշ»: Թեե վոչ մի ավանակ չեր կորել, բացի Մուհիդ-ել-Վահիդի ուղարկց, և վոչ վոք չեր խնդրել ծերունի մունետիկին «Եշի բալալ կանչել», սակայն ծերուկը յերկար տարիների ընթացքում սովորել ե միշտ նույն խոսքերը կրկնել և այսորվա արտասովոր հայտարարությունը անելիս՝ անգիտակցարար կցում եր սովորական վերջաբանը:

Ամբոխը ուշադրություն չեր դարձնում մունետիկի տարորինակ և անկապ հայտարարության բովանդակության վրա, վորիննանույնպես սովոր եր, սակայն Վահիդը լսելով հայտարարությունը, ցնցվեց, վեր թուավ պառկած տեղից և, ճեղքելով մարդկանց խիտ շարքերը, մոտեցավ մունետիկին: Վերջինս կրկնում եր նույն հայտարարությունը և վերջին բառերը՝ «ով գտել ե, և այն», յերը Վահիդը բոնեց նրա ձեռքը և սկսեց ամուր թափ տալ:

— Կանչիր, կանչիր, ձայնդ անսպառ, կորածը իմ ուղան ե, այս գիշեր գողացան անգամները, տաս արծաթ տուր, տասնհինգ, քսան... Ուղաս նշան ունի, մի աչքը կույր, մազը մուգ-դեղին, ճիշտ իննը տարեկան...

Վահիդը այնքան բարձր եր ճչում, վոր մի բոպե գրավեց շրջութված ամբոխի ուշադրությունը: Սկսեցին հավաքվել մունետիկի և Վահիդի շուրջը, հետացողները յետ եյին գալիս հետեւելով մեկնելի որինակին: Միականի ծերուկը գրավել եր բոլորի ուշադրությունը, մոռացել եյին ողում սավառնող դիվային թոշունները, թնդանոթի վորոտը, սահիբի պաշտոնատան վրա ծածանվող դրոշը և նրան պահպանող զինվորների շարքը:

Վահիդը շարունակում եր բարձր ձայնով նկարագրել կորած ուղտը և նրան պատահած դժբախտությունը: Երջապատող բազմությունը լուս լսում եր և կարեկցում խեղճ Վահիդին, վորի վիշտը միայն ճշմարիտ արարը կարող եր զգալ իր հոգու խորքում:

Յերբ Վահիդը վերջացրեց իր պատմությունը, մունետիկը բարձրացրեց իր ձեռնփայաը բազմության գլուխներից վեր և այս անգամ հետեւյալ կերպով ձևակերպեց իր հայտարարությունը.

— Սահիբի հրամանով կորել ե մեկ ուղտ, մեկ աչքը վասաված. մուսուլմաններ, մեկ ուղտ, վախ չունենաք, հեյ, վասնդ չկա, մեկ ուղտ, գանողին քսան արծաթ... քսան արծաթ...

Բազմությունը տեղից չեր շարժվում: Հեռվից լսվում եյին խառնիխուռն ձայներ, ծիծաղ, հիշոց և սուլոց: Մունետիկի հայտարարությունը այս անգամ ուշադրություն գրավեց իր տարորինակ ու անկապ բովանդակությամբ:

— Գժվել ե հիմար ծերուկը:

— Վախից խելքը թուել ե:

— Հարբած ե, գուցե:

— Զերմ ունի, գառանցում ե:

— Հնւ, հնւ, հնւ...

Հանկարծ ամբողջ հրապարակը թնդաց նման բացականչություններով բոլոր անխափը սկսեցին «հնւ, հնւ» կանչել, շատերը առանց իմանալու, թե բանը ինչումն ե: Յերեխանները հետևում եյին մեծերի որինակին և իրենց սուր ճիշերով ճեղքում ողը: Կտուրների վրա կանգնած կանայք, փաթաթված սև շղարշների մեջ, քիչ եր մնացել միանային տղամարդկանց հարայնրոցին, սակայն մնացին քարացած, յերբ իրենց բարձրությունից նկատեցին, վոր յերկնարկանի շենքի առաջ շարված անգլիական ջոկատը՝ հրացանները ուսին՝ սկսեց առաջանալ դեպի ամբոխը և լենթասպալի հրամանի համաձայն՝ զինվորները հրացանները ուսից վար առնելով՝ սկսեցին փամփուշտներ լցնել:

Հանկարծ կտուրներից լսվեց կանանց սուր ճիշ և չարագուշակ կերպով ճեղքեց ողը: Իրողությունը անսովոր եր և անսկնկալ: Հրապարակի բազմությունը, կարծես ելեքտրական ուժեղ հոսանքից շանթահար՝ մեխվեց տեղնուտեղը, անմոռնչ: Միայն լսվում եր զեռ մունետիկի զիլ ձայնը, վորի վերջին բառերն ել սառեցին՝ անակնկալ կերպով ելեքտրականացած մթնոլորտում...

— Քսան արծաթ, ով մուսուլմաններ, քսան արծաթ, գանողին քսան արծաթաթ...

— Փախեք, կրակում են, փախեեեք...

Սակայն վոչ վոք տեղից չեր շարժվում: Ամբոխի դիրքը սպառնալից եր: Ամենքը զգում եյին, վոր վոչ մի վատ բան չեն արել այդ գիտակցությունը վրդովում եր նրանց հոգին լցնում այն արդար զայրուով: Միթե իրենք ազտատ չեն զվարձանալու իրենց

քաղաքի հրապարակում, վայելելու իրենց հանգստյան որը, ուրբաթը, այնպես, ինչպես իրենց համելի յեւ Ենչու յենյեկել այս ոտարազգին ները, անկոչ հյուրերի պես, և խախտում են հյուրասիրության տարրական կանոնները, քիչ առաջ մտրակով, իսկ այժմ մահացու հրացանով:

Զինվորների ջոկատը վարանեց, տեսնելով ամբոխի սպառնական դիրքը և քար լոռությունը: Յենթասպան ձեռքը բարձրացրեց ողի մեջ և ինչպոր բան ասաց անդիրեն. մի յերիտասարդ, թրքական ֆեուդ գլխին, թարգմանեց նրա խոսքերը.

— Սահիբը հրամայում է անմիջապես ցրվել, իսկ վաղ առավոտ, սովորականի պես, բաց անել շուկան և անցնել խաղաղ աշխատանքի. չհնազանդվողները կենթարկվեն ամենախիստ պատիժների նույնիսկ կախաղանի:

Յերկինարկանի շենքի պատշգամբի դուռը բացվեց և մի անզիւացի կարճիկ զինվորական գեներալի ուսուցներով և ալեխառն մազերով դուրս յեկավ դիտելու հրապարակը: Ամենքի հայացքը մի պահ ուղղվեց գեպի պատշգամբը: Ծեր գեներալը սպասում եր, վոր ժողովուրդը կողջունե իր իելույթը, և պատրաստվել եր պատշաճ կերպով պատասխանելու ամբոխի խանդավառ ցույցերին և ովացիաներին:

Թարգմանը շարունակում եր.

— Սահիբը հայտնում է նույնպես, վոր անզիւացիների հզոր փադիշահը հարազատ զավակների պես սիրում է իր հպատակներին և նույն ունի, վոր իր հպատակները և հովանավորած ազգությունները անկեղծ վորդիական զգացմունքներով տոգորված են գեպի նորին մեծության զահը, վորի հզորությունը հայտնի յէ ամբողջ աշխարհին:

Ամբոխը անմոռնչ լսում եր թագմանի խոսքերը և, յերը սա վերջացրեց, կամաց կամաց սկսեց ցրվել լուռ և անշշուկ: Ծեր գեներալը տեսնելով, վոր ժողովուրդը անուշադիր թողեց իր նշանավոր և պատկառելի անձը, դժոն հեռացավ, պատշգամբի դուռը յետից ամուր շրմկացնելով:

* * *

Հրապարակը համարյա դատարկվել եր, կանայք նույնպես հեռացել եյին կտուրներից իրենց ամուսինների դիմավորելու համար: Մունետիկի ձայնը այլևս չեր լսվում, սակայն նա մնացել եր կանգնած հրապարակի կենտրոնում վահիդի հետ: Վերջինս իրանը ծռած յարցական նշանի պես՝ նայում եր նրան և քթի սկից մըմոռում

եր՝ «ալլահ, ալլահ, միթե ամեն ինչ կորած ե, միթե իմ սիրեցյալ Աբդին գտնելու վոչ մի հույս չկա»:

Զինվորների ջոկատը պետի հրամանով վերադարձել եր կայանը: Յենթասպան մի քանի հրամաններ տալուց հետո կրկին գրավել եր իր դիրքը՝ շենքի դռան առաջ, և շարունակում եր ծխել իր ծխամորձը հանդարտ և անայլայլ:

— Պիտի գնամ մեծ սահիբի մոտ և բողոքեմ, — բարձր և վրական ձայնով ասաց Վահիդը:

Մունետիկը գլուխը թափահարեց և կարծես ինքն իրեն՝ խոսեց.

— Այսոր յերեխաներս հաց չունեն, ովք պետք ե վճարի իմ վարձը:

Վահիդը ձեռքը տարավ դեպի գոտին ուր պահված եր քսակը, հանեց մեկ արծաթ, դրավ ծերունի մունետիկի ափի մեջ և առանց յետ նայելու հաստատ քայլերով առաջացավ գեպի յերկինարկանի շենքը: Համնելով դռան մոտ՝ նա մի պահ վարանեց, տեսնելով շեմքի վրա անշարժ կանգնած յենթասպային, վորը ձեռները դարսած մեջքին՝ ընդունել եր սպասողական դիրք:

Վահիդը հիշեց թարգմանի խոսքերը — «անզիւացիների հզոր փաղիշահը հարազատ զավակների պես սիրում է իր հպատակներին», — սիրտ առավ և խոսքը ուղղելով յենթասպային և մի ձեռքը բարձրացնելով գեպի պատշգամբը՝ ասաց.

— Սահիբի քերիր*), խնդիրք ունեմ:

Սերժանտը նախ գեմքը խոժոռեց, հետո դիտելով մանրազնին վահիդի արտաքինը, խորշոմազատ արևառ գեմքը, վորի վրա անսովոր փայլով կայծկլտում եր միակ աչքը, ալեխառն միրուքը, վոր կիսով չափ ծածկում եր բաց կուրծքը՝ ժպտաց և աջ բռունցքը մեքենաբար սեղմելով՝ ատամների միջից մումուց:

— Come on! (արի), — ու ձեռքով մոտենալու նշան արավ:

Վահիդը մի պահ տատանվեց — գնամ, թե վոչ: Մինչ նա վարանում եր, սերժանտի ուղեղում մի միտք ծագեց, մի զվարճալի միտք, հենց այնպես, մի փոքրիկ կատակի ծրագիր, փարատելու համար գաղութային նվաճման ծանր տաղտուկը:

Վահիդը մոտեցավ: Սերժանտը չշարժվեց: Մի պահ նրանց հայցները հանդիպեցին: Անզիւացին դեռ ժպտում եր, սակայն ճանապահն չեր տալիս: Վահիդը ձեռքի շարժումով հասկացրեց, վոր ուզում է մանել: Անզիւացին՝ նույնպես ձեռքի շարժում արավ, կարծես ուզում եր ճանապահն տալ, բայց այդ շարժումը ունեցավ անսպասելի հետևանք: Հանկարծ Վահիդը զգաց, վոր աչքերը մըթ-

*) Մեծ տեր:

Նում են, կորցնում ե վատքի տակի հողը և ինչ-վոր աննպատճել պտույտներ ե գործում ողի մեջ։ Այս բոլորը կատարվեց մի քանի ակնթարթում, և Վահիդը ուետինե գնդակի պես կանոնավոր վոստումներով գնաց թափալելու չորս-հինգ քայլ հեռու հրապարակի փոշիների մեջ... Ո՛, խեղճ Վահիդը դեռ չգիտեր ինչ ասել ե բո՞լը...

Իսկ անզլիացին՝ հաստատելով իր անվրեպ հարգածը և բոռւցքի անորինակ ուժը, բռնվեց անզուսպ հրճանքով. Նա ծիծաղում եր թափերի ամբողջ ուժով և ձեռներով ամուր սեղմում եր կողեւը, վոր ցնցումից չպայթի...

- Ի՞նչ միջավայր են նկարագրված այս պատմվածքում:
 - Ա՞վ եթ Ել-Վահիդը:
 - Ովքի՞ր եյին նրանց երկիրը՝ զրավողները:
 - Ինչո՞ւ եյին նրանք զրավում այդ էերկիրը:
 - Ի՞նչ միջոցներով եյին զրավում
 - Վո՞րն եթ Ել-Վահիդի վերջին արկածը:
 - Բնորոշեցեք բնիկների յեկ յեկորների փոխարարերությունը:

ՄՈՒԹԱԹՈՒԼԻՒԹ

ԱԱՅԻԴ ՅԵՎ ԱԴԻՆՏԱ

1

Միահնչյուն ու միալար կլինի իմ պատմվածքը, միապապակ, ինչպես ձմռան պաշար ժողովող մըջունի պատմությունը: Ահա նա քարշ ե տալիս իր ծանր բեռը գեպի մըջնանոց: Ճամպի վրա մի լեռ կա. դա լոկ մի կույտ ե հողի, բայց այդ կույտը նրա համար մի լեռ ե: Քանի՞շանի անդամ նա վրան բարձրանալ ե փորձում և վերստին ցած գլորվում ուժասպառ: Բեռը ծանր ե, քան ինքը. նա կարող ե քարշ տալ հարթ և ուղիղ տեղերում: Բայց չե վոր պետք անցնել լեռան մյուս կողմը, պետք ե համնել մըջնանոցը: Մըջունն ուղղվում ե և կըկին վերցնում իր ծանր բեռը. նա ամուր սեղմում ե այն առջեկի փոտիկների մեջ, նորից բարձրանում ու նորից ընկնում, և այսպես անվերջ:

Նույնքան միալար կլինի և իմ պատմվածքը: Բայց մըջունների մասին չե, վոր յես ձեզ պիտի պատմեմ. Կրանց խնդությունն ու վիշտը շատ ե հեռու մեզնից: Յես ուզում եմ ձեզ պատմել մարդկանց, կենդանի մարդկանց մասին, վորոնք մտածում ու զգում են այնպէս, ինչպես մենք:

Սայիդի հայրը մի զոմեց ուներ. Նրա ոգնությամբ եր մշակում
իր արտք: Յերբ շրջանի պետը խլեց զոմեցը, Սայիդի հայրը շատ
վշտացավ և որեր շարունակ անխռոս մնաց, այնքան մեծ եր նրա
վիշտը: Մոտենում եր հերկելու ժամանակը: Յեթե արտն իր ժա-
մանակին չհերկես, չցանես, ամբողջ տարի առանց բրնձի կննաս:

Սայիդի հայրը շատ եր մտահոգված. բրինձ եր հարկավոր և կնոջը, և մահուլ Սայիդին, և Սայիդի փոքրիկ յեղայրներին ու քույրերին:

Բայց Սայիդի հոր մտահոգության պատճառն այդ չեր միայն նա հողային հարկը լիովին չեր վճարել և վախենում եր, թե զբանի պետք գանգատվի զիմափոր պետին, և նա պատժի իրեն. վորովհետի որենքով դա պատժվում է:

Այն ժամանակ Սայիդի հայրը վերցրեց դաշույնը. դաշույնն այնքան ել լավը չեր, բայց թանգ եր նրա համար, վորպես իր հոռից մնացած ժառանգություն. դաշույնի պատյանը պատաժ եր արծաթով և զարդարված արծաթյա ողակներով: Նա ծախեց դաշույնը վաճառական չինացուն, վորն ապրում եր գլխավոր հրապարակի վրա, և տուն վերադարձավ. այդ փողով մի նոր գոմեց, գնեց:

Սայիդն այդ ժամանակ յոթ գոլով եր սոր փսուշ գտնց:
Սայիդն այդ ժամանակ յոթ տարեկան եր. նա շտապեց ընկերանալ նոր գոմեշի հետ: Յես ասում եմ «ընկերանալ», վորովհետեւ դա իսկապես ընկերություն եր: Գոմեշները սրտաշարժորեն կապվում են փոքրիկ ճափացիներին, վորոնք արածացնում են նրանց և հոգ տանում: Ուժեղ, հսկա կենդանին յերեխայի ազդանշանին հնագանդ՝ զլուխը դարձնում է զեպի աջ, զեպի ձախ կամ ցած խռնարհում: Նա ճանաչում է իր փոքրիկ տիրոջը, նրա հետ մեկաեղ ե մեծացել, հասկանում ու սիրում է նրան:

Նման մտերմությունն ել հասատվեց Սայիդի ու նոր գոմեշի միջև, և յերբ Սայիդն իր աշխուժ, ուրախ մանկական ձայնով բղավում էր գոմեշի վրա, կենդանին կարծես ավելի յեր ուժեղանում. նա փորում էր ծանր, կպչուն կավաճողը, և գութանի յետքից ձըգվում ելին խոր ակոսներ: Հասնելով արտի ծայրը, գոմեշը հնազանդորեն յետ եր դառնում, և նոր ակոսը ձգվում էր հնի կողքին:

Սայիդի հոր արտի մոտ ընկած եր Աղինտայի հոր արտը, այն փոքրիկ աղջկա, վորի հետ պիտի ամուսնանար Սայիդը. այդպես եյին գնոել նրանց հայրերը: Ու յերբ Աղինտայի յեղբայրներն ու Սայիդը հանգիպում եյին իրար նրանց արտերը բաժանող սահմանի վրա, ծիծաղում եյին ու կատակներ անում և յուրաքանչյուրը գովում եր իր գոմեշի ուժն ու հնագանդությունը: Բայց ինձ թը-գում ե, թէ Սայիդի գոմեշն ավելի լավ եր, գուցե այն պատճառով, վոր Սայիդը նրա համար միշտ փաղաքական խոսքը ուներ. չե՛ վոր գոմեշի համար ել փաղաքական խոսքը մեծ բան ե:

Նում են, կորցնում ե վատքի տակի հողը և ինչ-վոր աննպատակ պտույտներ ե գործում ողի մեջ։ Այս բոլորը կատարվեց մի քանի ակնթարթում, և Վահիդը ռետինե գնդակի պես կանոնավոր փոստումներով գնաց թափալելու չորս-հինգ քայլ հեռու հրապարակի փոշիների մեջ... Ո՛, խեղճ Վահիդը դեռ չդիտեր ինչ ասել է բօքը...

Իսկ անդլիացին՝ հաստատելով իր անվրեալ հարվածը և բռունցքի անորինակ ուժը, բռնվեց անզուսապ հրձվանքով. նա ծիծաղում եր թոքերի ամբողջ ուժով և ձեռներով ամուր սեղմում եր կողեւը, վոր ցնցումից չպայթի...

- Ի՞նչ միջավայր և նկարագրված այս պատմվածքում:
 - Ո՞վ եր Ել-Վահիդը:
 - Ովքե՞ր եյին նրանց երկիրը՝ զրավողները:
 - Ի՞նչո՞ւ եյին նրանք զրավում այդ էերկիրը:
 - Ի՞նչ միջոցներով եյին զրավում
 - Վո՞րն եր Ել-Վահիդի վերջին արկածը:
 - Բնորոշեցեք բնիկների յեվ յեկվորների փոխարաբերությունը:

ՄՈՒԼԹԱՐԴԻՆԻ

ՍԱՅԻԴ ՅԵԼ ԱԴԻՆՏԱ

1

Միահնչյուն ու միալար կլինի իմ պատմվածքը, միապաղադ, ինչպես ձմռան պաշար ժողովող մրջյունի պատմությունը։ Ահա նա քարշ ե տալիս իր ծանր բեռք գեպի մրջնանոց։ Ճամպի վրա մի լեռ կա. դա լոկ մի կույտ ե հողի, բայց այդ կույտը նրա համար մի լեռ ե։ Քանի՞ քանի անգամ նա վրան բարձրանալ ե փորձում և վերստին ցած գլորվում ուժասպառ։ Բեռք ծանր ե, քան ինքը. նա կարող ե քարշ տալ հարթ և ուղիղ տեղերում։ Բայց չե՞ վոր պետք ե անցնել լեռան մյուս կողմը, պետք ե համնել մրջնանոցը։ Մըրջյունն ուղղվում ե և կրկին վերցնում իր ծանր բեռք. նա ամուր սեղմում ե այն առջենի վոտիկների մեջ, նորից բարձրանում ու նորից ընկնում, և այսպես անվերջ։

Նույնքան միալար կլինի և իմ պատմվածքը: Բայց մըջունների մասին չե, վոր յես ձեզ պիտի պատմեմ. Նրանց ինդությունն ու վիշտը շատ ե հեռու մեզնից: Յես ուզում եմ ձեզ պատմել մարդկանց, կենդանի մարդկանց մասին, վորոնք մտածում ու զգում են այնպես, ինչպես մենք:

Սայիդի հայրը մի գոմեշ՝ ուներ. Նրա ոգնությամբ եր մշակում իր արտը: Յերբ ցըջանի պետք խլեց գոմեշը, Սայիդի հայրը շատ վշտացավ և որեր շարունակ անխռոս մնաց, այնքան մեծ եր Նրա վիշտը: Մոտենում եր հերկելու ժամանակը: Յեթե արտն իր ժամանակին չէրկես, չցանես, ամբողջ տարի առանց բրնձի կննաս:

Սայիդի հայրը շատ եր մտահոգված. բրինձ եր հարկավոր և կնոջը, և մասուկ Սայիդին, և Սայիդի փոքրիկ յեղայլներին ու քույրերին:

Բայց Սայիդի հոր մտահոգության պատճառն այդ չեր միայն նա հողային հարկը լիովին չեր վճարել և վախենում եր, թե շրջանի պետը գանգատվի գլխավոր պետին, և նա պատժի իրեն. վորովհեակ որենքով գա պատժվում եւ:

Այն ժամանակ Սայիդի հայրը վերցրեց դաշույնը. դաշույնն այնքան ել լավը չեր, բայց թանգ եր նըա համար, վորպես իր հոռից մնացած ժառանգություն. դաշույնի պատյանը պատած եր արծաթով և զարդարված արծաթյա ողակներով: Նա ծախեց դաշույնը վաճառական չինացուն, վորն ապրում եր գլխավոր հրապարակի վրա, և տուն վերադարձավ. այդ փողով մի նոր զոմեց գնեց:

Սայիդն այդ ժամանակ յոթ տարեկան էր. Նա շտապեց ընկերանալ նոր գոմեցի հետ. Յես ասում եմ «ընկերանալ», վորովհետեւ դա խևապես ընկերություն էր. Գոմեցները սրտաշարժորեն կապվում են փոքրիկ ճավացիներին, վորոնք արածացնում են նրանց և հոգ տանում: Ուժեղ, հսկա կենդանին յերեխայի ազդանշանին հնագանդ՝ գլուխը դարձնում ե գեղի աջ, գեղի ձախ կամ ցած խռնարհում: Նա ձանաչում ե իր փոքրիկ տիրոջը, նրա հետ մեկտեղ ե մեծացել, հասկանում ու սիրում ե նրան:

Նման մտերմութիւնն ել հաստատվեց Սայիդի ու նոր գոմեշի միջն, և յերբ Սայիդն իր աշխուժ, ուրախ մանկական ձայնով բղավում եր գոմեշի վրա, կենդանին կարծես ավելի յեր ուժեղանում. նա փորում եր ծանր, կպչուն կավաճողը, և գութանի յետքից ձզգվում եյին խոր ակոսներ: Հասնելով արտի ծայրը, գոմեշը հնագանդորեն յետ եր դառնում, և նոր ակոսը ծգվում եր հսկ հոռորեն:

Սայիդի հոր արտի մոտ ընկած եր Աղինատայի հոր արտը, այն փոքրիկ աղջկա, վորի հետ պիտի ամուսնանար Սայիդը. այդպես եյին վճռել նրանց հայրերը: Ու յերբ Աղինատայի յեղբայրներն ու Սայիդը հանգիպում եյին իրար նրանց արտերը բաժանող սահմանի վրա, ծիծաղում եյին ու կատակներ անում և յուրաքանչյուրը գովում եր իր գոմեշի ուժն ու հնազանդությունը: Բայց ինձ թը-գում ե, թե Սայիդի գոմեշն ավելի լավ եր, գուցե այն պատճառով, վոր Սայիդը նրա համար միշտ փաղաքական խոսքը ուներ. չե՞ վոր գոմեշի համար ել փաղաքական խոսքը մեծ բան է:

Սայիդը իննը տարեկան եր, Աղինտան՝ յոթ, յերբ շրջանի պետը Սայիդի հորից խլեց և այդ գոմեշը:

Սայիդի հայրը շատ աղքատ եր. նա ծախեց արծաթյա դարդերը, իր կնոջ ծնողներից մնացած ժառանգությունը, և այդ փողերով գնեց մի նոր գոմեշ:

Սայիդը վշտացած եր: Նա խմացավ Աղինտայի յեղբայրներից վոր գոմեշը քշել են գլխավոր հրապարակը, և հարցրեց հորը, թե արդյոք արծաթյա զարդեր ծախելիս չի տեսել կենդանուն հրապարակում: Հայրը նրան վոչինչ չպատասխանեց, և Սայիդը վախենում եր, թե իր գոմեշն ել քշած կլինեն սպանդանոց մյուս գոմեշների հետ, վոր խլել եր շրջանի պետը գլուզի բնակիչներից:

Սայիդը լալիս եր, հիշելով խեղճ, ծեր գոմեշին, վորի հետ ընկեր եր յեղել յերկու տարի, և վոչինչ չկարողացավ ուտել. մի ինչ-վոր բան խեղդում եր նրա կոկորդը: Զե՞ վոր նա դեռ յերեխա յեր:

Նոր գոմեշն ընտելացավ Սայիդին, և շուտով, գուցե շատ շուտով, տղան մոռացավ իր հին բարեկամին. մարդկանց սիրաը նման ե մոմի. ամեն ինչ նրա վրայից արագ կերպով ջնջում է:

Ինչ ել վոր լիներ, նոր գոմեշը թույլ եր նախկինից, բայց խեղճ կենդանին նույնքան խոնարհ ու հսագանդ եր, ինչպես իր նախորդը, վորին մորթեցին: Սայիդն Աղինտայի յեղբայրներին հանգիպելիս թեպետ և չեր կարողանում առանձնապես պարծենալ իր գոմեշի ուժեղությամբ, սակայն դրա վիխարեն հավատացնում եր, թե իր գոմեշի նման բարի, հսագանդ կենդանի ամըողջ աշխարհում չես գտնի: Բացի այդ, վոչ մի գոմեշ իր մեջքին այնպիսի գանգուրներ չուներ. բոլորին հայտնի յե, վոր այդ բախտի նշան եւ Ակոսներն ուղիղ և հարթ չեյին առաջվա նման, և յերկու կողմն ել հողի չհերկված կույտեր կային, բայց չե՞ վոր այդ ել կարելի յեր ուղղել:

2

Սայիդը մի անգամ գնար եր աշխատում առաջ քշել իր գոմեշը, վորը կարծես քարացել եր կենդանու արտասովոր համառությամբ, վոր նույնիսկ նրան մի վատ հայնոյական խոսք ասաց: Սայիդը չեր ուղում վիրավորել իր ընկերոջ. նա միայն կրկնեց այն խոսքը, վոր գործ են ածում մեծերը, յերբ բարկանում են իւրենց գոմեշների վրա: Բայց հայնոյանքի այդ խոսքն ել չոգնեց. գոմեշը տեղից չեր շարժվում: Նա թափ եր տալիս գլուխը, կարծես ուղում եր լուծն իրենից դեն ձգել. ծանր եր շնչում, գողում եր, փնչացնում... Ահ կար նրա կապույտ աչքերի մեջ, լնդերը մերկացել եյին...

«Գլուխդ ազատիր, վախիր», — գոչեցին հանկարծ Աղինտայի յեղբայրները, — «վախիր, Սայիդ, վախիր, վագրը»:

Յեկ ամենքն շտապով հանեցին գոմեշների լուծքը, ցատկեցին նրանց լայն մեջքներին և սլացան բրնձի արտերի, բարձրախոս մարգերի, թփուտների միջով, ճանապարհների, դաշտերի յերկարությամբ... Ու յերբ նրանք ծանր շնչելով, քրտնած, հեխն հասան գյուղը, տեսան, վոր Սայիդը չկա:

Սայիդն իր ընկերների նման՝ արձակեց գոմեշների լուծը, ցատկեց վրան ու սլացավ, բայց կենդանու անսպասելի թոփչքը խախտեց հավասարակշությունը և գետին գլորեց նրան: Վագրը մոտ եր...

Գոմեշը չկարողացավ միանգամից կանգ առնել և սլացավ՝ ընկած թողնելով իր փոքրիկ, մահվան դատապարտված տիրոջը: Բայց ահա նա հաղթահարեց իրեն առաջ մղող ուժը, վերադարձավ յերեխայի մոտ, տանիքի նման ծածկեց նրան իր անձունի մարմնով ու յեղյուրներն ուղղեց վագրի դեմ: Վագրը թոփչք գործեց, բայց այդ նրա վերջին թոփչքն եր: Գոմեշը վագրին առավ յեղյուրների վրա. նա հեշտությամբ եր կովում վագրի հետ. վագրը ատամները խրեց նրա վզի մեջ և պոկեց մի կտոր միս: Սարսափելի գաղանը գետին եր ընկած պատառոտած փորով: Սայիդը վրկված եր:

Յերբ այդ գոմեշը խլեցին Սայիդի հորից և տարան սպանացնոց...

— Չե՞ վոր յես քեզ ասացի՝ պատմվածքս միապաղաղ պիտի յինի, —

... յերբ այս գոմեշին տարան սպանացնոց, Սայիդը տասներկու տարեկան եր, իսկ Աղինտան արդեն գործվածք պատրաստել գիտեր: Տիտուր մտքեր եր հյուսում նա իր գործվածքին, վորովհետեւ նա տեսնում եր, թե վորքան տիտուր ե Սայիդը:

Սայիդի հայրը վշտացած եր, բայց մայրն ավելի յեր վշտացած: Նա բուժեց հավատարիմ կենդանու պարանոցի վերքը, իր հավատարիմ գոմեշի, վորը փրկեց և անփես գյուղը հասցրեց իր յերեխային հենց այն ժամանակ, յերբ նա հավատալով Աղինտայի յեղբայրների պատմածներին, կարծում եր, թե իր յերեխան կորավ ընդմիշտ: Հաճախ, նայելով կենդանու վերքին և տեսնելով, թե վնրքան խորն են մտել վագրի ճանկերը կենդանու հաստ մարմնի մեջ, նա մտածում եր այն մասին, թե վորքան խոր կարող եյին խրվել նրանք իրերեխայի քնքուշ մարմնի մեջ: Թարմ, բուժիչ խոտերը դնելով կենդանու վերքի վրա, նա շոյում եր գոմեշին և նրան վագրական խոսքեր ասում. նա ուղում եր, վոր բարի, հավատարիմ

կենդանին իմանար, թե վորքան յերախտագետ կարող ե լինել մոլորդը: Յեվ նա հույս ուներ, թե գոմեշը հասկացավ իր յերախտագիտությունն ու իր վիշտը, յերբ նրան խլեցին ու տարան սպանդանոց. թող նա հասկանար և այն, վոր մայրը դրանում մեղափոր չեր:

Փոքը ինչ անց Սայիդի հայրը փախավ զյուղից: Նա չկարուղացավ վճարել հողային հարկը և շատ եր վախենում պատժվելուց նա չուներ այլևս վոչ արծաթագործ դաշույն, վոչ ել արծաթյագարդեր, վոր ծախեր ու նոր գոմեշ գներ. նա այլևս վոչինչ չուներ: Թե նրա ծնողները և թե կնոջ ծնողները միշտ ապրել եյին նույն շրջանում, ուր և ինքը, ուստի իրան մեծ ժառանգություն չեյին թողել:

Վերջին գոմեշը կորցնելուց հետո նա միքանի տարի յել իր գոյությունը քարշ տվավ ուրիշների մոտ փարձու աշխատանք կատարելով: Բայց այդ աշխատանքն անշնորհակալ ու անխորժ ե, մանավանդ այն զյուղացու համար, վոր իր սեփական գոմեշն ե ունեցել: Սայիդի մայրը վշտից մեռավ, իսկ հայրը հուսահատության ըոպեյին փախավ հայրենի զյուղից: Նա հույս ուներ աշխատանք գտնել Բուխտենցորդում, Բատավիայի մոտ, բայց այնտեղ նրան մտրակներով պատժեցին, վորովհետեւ նա անցագիր չուներ, և վիրադարձին Բագուր՝ իր հայրենի զյուղը: Բագուրում նրան բանտ նստացրին, վորովհետեւ նա նման եր ինչլագարի. մարդիկ վախենում եյին, թե միգուցե խելագարության ըոպեյին վնասեր ուրիշներին: Սայիդի հայրը յերկար չմնաց, շուտով մեռավ:

Ի՞նչ յեղան Սայիդի յեղայրեներն ու քույրերը—յես չգիտեմ: Այն խրճիթն, ուր ապրում եր նրանց ընտանիքը, միառժամանակ դատարկ մնաց. շուտով նա ավերվեց. չե վոր այդ խրճիթը շինված եր բամբուկից և ծածկված արմավենու տերեներով: Յեվ այնտեղ, ուր մարդիկ այնքան տանջվել եյին, մնաց մի կույտ հող և աղբեցավայում այդպիսի տեղեր շատ կան:

Սայիդը 15 տարեկան եր, յերբ նրա հայրը փախավ: Սայիդը չետեղ հորը. նա մեծ մատղություններ ուներ: Լսել եր, վոր Բատավիայում ապրում են հարուստ մարդիկ, և վոր այնտեղ հեշտությամբ կարելի յե տեղ ճարել. գուցե յերեք տարվա ընթացքում նա այնքան կարողանա աշխատել վոր կարելի լինի յերկու գոմեշ առնել: Այդ միտքը նրան ժպտում եր: Վորպես մի մարդ, վոր գիտե, թե ինչ ե ուզում ինքը և ինչ մեծ միտք ե հղացել: Սայիդը յեկավ Աղինտալի մոտ և նրան հաղորդեց իր մտադրությունը:

— Գիտե՞ս,—ասաց նա Աղինտային,—յերբ յես վերագառնամ, մենք կամուսնանք և յերկու գոմեշ կղնենք:

— Ախ, ինչ լավ ե: Յես ուրախությամբ քո կինը կդառնամ, իսկ այժմ կմանեմ ու կզործեմ և անդադար կաշխատեմ, կաշխատեմ...

Նրանք հրաժեշտ տվին իրար, և Սայիդը թողեց հայրենի գյուղը:

Սայիդը յերկար ճանապարհ գնաց: Ստվերախիտ անտառները փոխվում եյին կանաչ հովիտների, ճանապարհին յերբեմն պատահում եյին արմավենիների կանաչի մեջ թաղված զյուղեր, իսկ հեռվում ճպված եյին բարձր, կապուտակ լեռները:

Միքանի որից հետո նա հասավ Սերանգ, ուր տները շինված եյին քարերից և ծածկված կարմիր կղմինտրով: Նա ապշած կանգ առավ—այդպիսի բան յերեք չեր տեսել: Սայիդն այնտեղ մնաց մի որ, հանգստացավ և, յերեկոյան հովան ընկնելուն պես, շարունակեց ճանապարհը: Արել դեռ բարձրութիւն եր, յերբ նա հետեյալ որը հասավ այն գետը, վորի մոտ ընկած է Տանժերանգը: Նա լողացավ, թարմացավ և գնաց վորոնելու իր հոր ծանոթին, վորն ապրում եր այդ քաղաքում: Սայիդը նրա մոտ գիշերեց: Այդ ծանոթը սովորեցրեց Սայիդին, թե բամբուկի թելերից ինչպես են գլխարկ գործում, և Սայիդը նրա մոտ մի ամբողջ որ մնաց, վորպեսզի սովորի այդ նոր արհեստը: Նա մտածում եր այդ արհեստով վորեկ բան վաստակել, յեթե Բատավիայում հաջողություն չգտնի: Հետեյալ որը նա շնորհակալություն հայտնեց իր հոր բարեկամին հյուրասիրության և սովորեցրած արհեստի համար ու շարունակեց ճանապարհը: Մթնեց. Սայիդը տիրեց: Ճանապարհորդության առաջին և յերկրորդ որը Սայիդն այնքան չեր զգում իր մենակությունը. նա ամբողջապես կլանված եր այն մաքերով, թե ինչպես Բատավիայում բավական փող կաշխատի և յերկու գոմեշ կառնի, —յերկու գոմեշ իր հայրն ել յերեք յերկու գոմեշ չի ունեցել, —և թե ինչպես կվերադառնա հայրենի զյուղն ու կտեսնի Աղինտային...

Բայց վորքան հեռանում եր, այնքան որերը յերկար եյին թըվում: Յեվ վորքան յերկար որեր կան յերեսուն և վեց ամիսների մեջ: Մի ինչ-վոր բան կտը նրա հոգում, վոր ստիպում եր դանդաղ քայլել: Վոտները ծանրացել եյին: Կարոտը, հուսահատ կարոտը տիրել եր նրան: Վերագառնալ արդյոք: Բայց ինչ կասի Աղինտայն այդ փոքրությունը տեսնելով: Նա աշխած առավ և սկսեց քայլել ավելի արագ, թեպետե վոչ այնքան արագ, վորքան առաջին որը:

Սայիդը հասավ Բատավիա։ Նա խնդրեց մի պարոնի, վոր իրեն ծառա վերցնի։ պարոնը իսկույն և նամաձայնեց, վորովհետև նա վոչ մի բառ չհամկացավ։ Սայիդի ասածներից։ Բատավիայում խոսում են մալայան լեզվով, իսկ Սայիդը խոսում եր ծավայի լեզվով։ Բատավիայում ուրախությամբ են վարձում այն ծառաներին, վորոնք գեռես չգիտեն մալայերենը, և վորոնք, ուրեմն, չեն փշացել... Սայիդը շուտով սովորեց մալայերենը, սակայն այդ հանդամանքը չփոխեց նրան։ Նա առաջվա նման մտածում եր յերկու գումեշի և Աղինտայի մասին։ Նա մեծացել եր և ուժեղացել։

Բայց յերբ անցավ յերեք տարին, Սայիդը յեկավ իր պարոնի մոտ և խնդրեց իրեն պաշտոնից արձակել։ Ամենքը Սայիդին ապերախտ համարեցին, բայց նրա խնդիրը չկարողացան մերժել։

Սայիդը ուրախ սրտով ճանապարհ ընկավ։ Նա քայլում եր ու չեր տեսնում իր շրջապատը։ Նրա հոգին այլ պատկերներով եր լեցուն։ Նա մտածում եր տան մասին և հաշվում իր գանձերը։ Նա իր հետ ուներ անցագիր և պարոնից ստացած վկայականը, իսկ գոտուց կախված եր մի կապարձ։ Նրա մեջ ինչ-վոր ծանր բան կար և այդ ծանր բանն անընդհատ հարվածներ եր հացնում նրա ուսերին։ Բայց Սայիդին ախորժելի եյին այդ հարվածները։ Ինչ ասել կուղի։ Զե վոր այնտեղ փող կար, այնքան փող, վոր կարելի յեր յերեք գոմեշ առնել։ Ի՞նչ կասի Աղինտան։ Բայց այդ գեռ բոլորը չեր։ Նրա գոտուց կախ եր նաև արծաթապատ պատյանով մի դաշույն, իսկ կրծքին։ հագուստի ծալքերում պահված եր մի արծաթյա գոտի վոսկյա կոճակով—Աղինտայի համար։

Սայիդը ճանապարհին համարյա կանգ չեր առնում։ Նա միայն Տանժերանգ մտավ՝ տեսնելու իր հոր բարեկամին, վորը սովորեց նրան հարդյա զլխարկներ հյուսել։ Սերանգն այժմ, Բատավիայից հետո, նրան գեղեցիկ չեր թվում։ իսկ յերբ իր մոտով անցավ գավառապետը, Սայիդը չթագնվեց բարձր խոտերի մեջ, ինչպես յերեք տարի առաջ։ այժմ նա ինչից պիտի վախենար։

Յերբ վորեւ պատահական անցորդ գնում եր Սայիդի հետ կողք-կողքի և պատմում նրան վերջին ժամանակներն իրենց յերերում պատահած անցքերի մասին, Սայիդը համարյա չեր լսում։ Նրան պատմում եյին սուրձի տնկարաններում կատարվող աշխատանքների և այն մասին, թե ինչպես շրջանապետներից մեկին բանտարկել են չափազանց բացահայտ թալանի պատճառով։

Բայց Սայիդը չեր լսում։ Նրա աչքի առջև կանգնած եյին ու-

րիշ, ավելի գեղեցիկ պատկերներ։ Նա տեսնում եր մեծ, սաղարթակիտ ծառը, վորի մոտ նրան սպասում եր Աղինտան, ինչպես խոստացել եր։ Սայիդն արդեն լսում եր նրա ձայնը։ «Բարե, Սայիդ, յես տմբողջ ժամանակ քո մասին եյի մտածում, թե մանելիս, թե հյուսելիս և թե բրինձ կալսելիս։ Նայիր, ահա, յերեք անգամ տասներկու նշան կա իմ սանդի վրա։ Այսոր նոր ամսվա առաջին որն ե, յես ծառի տակ սպասում եմ քեզ, Սայիդ, յես քո կինը կը լինեմ...»։

Գեղեցիկ, բերկը լից յերգեր կային Սայիդի հոգում, և նա չեր լսում անցորդների պատմությունները։

Վերջապես նա հեռվում տեսավ ծառը, կամ ավելի շուտ մի ահագին սկ կետ, վորը ծածկում եր աստղալից յերկնքի մի մասը։ գա հայրենի գյուղի անտառն եր, իսկ անտառի թափուտում գըտնը վում եր այն ծառը, վորի մոտ պայմանավորվել եյին Աղինտայի հետ հանգիպել իրար հետեյալ որը, արևածագից հետո։ Յերկար ժամանակ մթության մեջ շոշափելով ծառերի բները, Սայիդը վորուոնում եր ծանոթ ծառը։ Նա հարավային կողմից մի նշան ունի... ահա նա։

Սայիդը նստեց ծառի տակ և սկսեց նայել աստղերին և մտածում եր Աղինտայի մասին։ ինչ ե անում նա հիմա։ Զի սխարվել արդյոք ամիսների հաշվի մեջ, իր սանդի վրա նշաններ անելիս։ Իսկ յեթե նա բաց թողած լինի մի ամիս և հանկարծ չգա։ Նա շատ ե արդյոք աշխատել այսքան ժամանակվա ընթացքում։ Արդյոք ով ե ապրում այնտեղ, ուր կանգնած եր իր հոր խրճիթը։ Նա հիշեց հեռավոր որերը։ Նա հիշեց մանկությունը, մորը և այն թե ինչպես գոմեշը փրկեց նրա կյանքը...».

Իսկ աստղերը հանդարառեն սահում եյին յերկնքի վրայով, ու մոտենում եր լուսաբացը։

Յերեկի Աղինտան կգա արեկի առաջին շողերի հետ միասին, յերբ կբացվի լույսը։

Աստղերը գունատվում եյին ու մարում, բայց հովիտը գեռ նիրհում եր։ Լեռներն ավելի եյին սկանում և ավելի ցայտուն նըկարվում լուսացող յերկնքի վրա։ Լեռների գաղաթներին հավաքվում եյին հրաշագեղ ներկեր ու ստվերներ։ Բոցոտ, վոսկեհուռ ճառագյթները, նման հրավառ նետերի, հանկարծ ճեղքում եյին ամպերը. բայց նրանք շուտով անհետանում ելին, և կրկին իշխում եր մութը։

Սայիդն արդեն հեռվում տեսնում եր արմավենիների մեջ թագնված հայրենի գյուղը... այնտեղ քնած եր Աղինտան և գուցե

Տիմա նա Սայիդի նման արեին եւ սպասում: Մինչդեռ արել չկա
ու չկա...

Բայց ահա շինեցին ամպերի յերիզները. շուրջն ամեն ինչ
փայլեց ու բոցավովեց. և հրավառ նետերը կրկին ճեղքեցին մու-
թը, բոցոտ վոսկյա ճառագայթները դողացին, սուրացին ողի մեջ,
հանդիպելով միմյանց, խաչաձեւելով իրար ու ապա հեռանալով, հե-
ռանալով իրարից—վոսկյա, մարգարտյա, կարմիր, յերկնագույն,
արծաթյա ճառագայթները...Արդ—արեն ե, այդ—արշալույն ե, այդ—
Սայիդի հանդիպումն ե Աղինտային...

Բաղուրից անտառ տանող կածանի վրա վոչվոք չեր յերեռում...
«Դեռ շատ վաղ ե,—մտածում եր Սայիդը,—բայց շուտով, շատ շու-
տով նա կդա»:

Բայց Բաղուրից անտառ տանող կածանի վրա վոչվոք չեր յե-
րեռում...

«Վեր կենալ ու գնալ Բաղուր: Վոչ, յես չեմ կասկածում, վոր
նա կդա: Յերեկի նա՝ հոգնած բազմաթիվ անքուն դիշերներից՝ ա-
ռավոտյան մոտերքն ե միայն աչքը փակել: Սպասեմ նրան»:

Նա պատրաստ եր սպասել... սպասել...

Իսկ յեթե հանկարծ նա հիվանդ լինի կամ մեռած...

Սոսկումով բռնված յեղնիկի նման Սայիդը վեր թռավ և սկսեց
վագել այն կածանով, վոր տանում եր այնտեղ, ուր ապրում եր
Աղինտան: Նա վոչինչ չեր տեսնում, չեր լսում, մինչդեռ այդ ժա-
մանակ գյուղի մուտքի մոտ կանգնած՝ կանչում եյին. «Սայիդ,
Սայիդ»:

Բայց ինչու չի գտնում Աղինտայի տունը: Նա վագեց, հասավ
գյուղի մյուս ծայրը և խելագարի նման սկսեց յետ կառնալ: Միթե
նա կարող ե չճանաչել Աղինտայի տունը, միթե կարող ե անցնել
նրա մոտով: Բայց ահա կրկին նա գյուղի մուտքի մոտ ե: Այս յե-
րազ ե արդյոք. նա չի գտնում Աղինտայի տունը: Յետ դարձավ և
հանկարծ կանգ առավ, յերկու ձեռքով բռնեց գլուխը, կարծես թե
ուզում եր պոկել ու դեն շարտել իրեն հափշտակող խելագարու-
թյունը, և բարձրածայն դոչեց. «Յես խելագարվել եմ, խելագար,
խելագար»:

Բաղուրի կանայք դուրս եյին յեկել իրենց խրճիթներից և կա-
րեկցանքով նայում եյին Սայիդին, վորովհետև նրանք իմացել ու
հասկացել եյին, վոր վորոնում ե Աղինտայի տունը, բայց Աղին-
տայի տունն այլևս չկար Բաղուրում:

Յերբ Պարանգ-Կուտանգ շրջանի պետը խլեց Աղինտայի հոր
դոմեցը...

Զե՞ վոր յես քեզ ասացի, թե իմ պատմությունը կլինի միա-
պաղպաղ...

... այն ժամանակ Աղինտայի մայրը մեռավ վշտից: Աղինտա-
յի փոքրիկ քույրիկն ել մեռավ. վորովհետև մեռավ մայրը, վոր նը-
րան կերակրում եր իր կրծքով: Իսկ Աղինտայի հայրը փախենում
եր պատժից, վորովհետև չեր կարողանում վճարել հողալին հարկը...

... գիտեմ, գիտեմ, միապաղպաղ ե պատմվածքը...

... Աղինտայի հայրը փախավ այնտեղից: Նա իր հետ վերցրեց
Աղինտային և նրա յեղբայրներին: Բայց նա լսել եր, վոր Սայիդի
հորը Բուխտենցորդում պատժել եյին մտրակներով, վորովհետև նա
գյուղից դուրս եր յեկել առանց անդագրի, այդ պատճառով ել Ա-
ղինտայի հայրը վոչ Բուխտենցորդ գնաց և վոչ ել Բատավիա...Նա
ուղեորդեց յերկրի հեռու գավառներից մեկը, վոր գտնվում եր ծո-
վի մոտ: Այնտեղ նա թագնվեց անտառների թափուներում և սպա-
սեց Պա-Ենտոյին, Պա-Լիոնտային, Սիունիտային, Պա-Անիուլին, Աբ-
դուլ իսմային և շատ-շատերին, վորոնցից շրջանի պետը խլել եր
գոմեշները, և վորոնք վախենում եյին պատժից, վորովհետև չեյին
կարողացել վճարել հողալին հարկը: Գիշերը նրանք վերցրին ձկնոր-
սական նավակը և ծով մտավ: Նրանք ուղղվեցին սկզբում արևմուտք,
ապա հյուսիս-արևելք մինչև Տանա-իտամ ժայռոտ կղզին. նրանք ան-
ցան արևելյան ափով և ուղղվեցին դեպի ծոցը: Այդպես եյին շշըն-
ջում միմյանց այդ կողմերի ընակիշները, յերբ խոսք եր բացվում
չվճարած հարկերի, խլված գոմեշների և հեռու ծովափնյա գավա-
ռում տեղի ունեցած ապստամբության մասին:

Բայց խելը կորցրած Սայիդը լավ չեր հասկանում նրանց պատ-
մաճները և նույնիսկ, յերբ նրանք հայտնեցին, թե իր հայրը մե-
ռել ե, նա վոչինչ չիսկացավ: Նրա ականջներն աղմկում եյին, ա-
րյունը գլուխն եր խփել, քունքերը բարախում եյին. Նա լուռ եր
և մեռած հայցքով շուրջն եր նայում, չեր ճանաչում վոչվոքի:
Նա նման եր խելագարի:

Սայիդը հիվանդացավ: Մի պառավ կին առավ նրան իր խրճի-
թը և ինամեց խեղճ տղային:

Անցան որեր: Նա տվավ խնամող պառավին այնքան փող, վոր-
քան հարկավոր եր մի գոմեշ գնելու համար, և հեռացավ Բաղուրից:
Համելով ծովին, նա գնեց մի ձկնորսական նավակ և մեկնեց ար-

դավառը, ուր ապստամբած բնակիչները պայքարում եյին հոլլանդացիների դեմ: Նա միացավ վաշտերից մեկին, վոչ այնքան պայքարի, վորքան Աղինտային գտնելու համար:

Մի անդամ, յերբ ապստամբ ճավացիները կրկին հաղթվել եյին, Սայիդը գնաց թափառելու իր բոցավառված դյուղի շուրջը, վոր հոլլանդացիք հենց այդ միջոցին եյին գրավել: Սայիդը գիտեր, վոր սպանված մարդկանց այդ փոքրիկ գունդը բաղկացած եր գլխավորակես իր հայրենի գյուղի բնակիչներից: Ուրվականի պես քայլում եր նա այրվող խրճիթների միջև: Նա գտավ Աղինտայի հոր գիտերկրծքին վերք կար: Նրան սվինով ծակել եյին. հոր մոտ ընկած եյին Աղինտայի յերեք յեղբայրների գիտելիները. նրանք պատանիներ, համարյա յերեխաներ եյին: Իսկ քիչ հեռու Սայիդը տեսավ Աղինտայի գիտեր, մերկ, այլանդակված...

Սայիդը վազեց հոլլանդական միքանի զինվորների դեմ, զինվորների, վորոնք սվիններով կենդանի մնացած խռովարաններին շքում եյին այրվող խրճիթների բոցի մեջ: Նա խլեց մեկի սվինը, գրավ կրծքի տակ ու ինքն ընկավ վրան:

Սվինը խրցեց նրա կուրծքը և դուրս յեկավ մեջքից:

Ու ամեն ինչ վերջացավ:

Քիչ հետո Բատավիայում նոր հաղթության առթիվ մեծ ցընծություն կատարվեց, հաղթության, վոր նոր գավինիներ ավելացրեց նիդերլանդական-հնդկական բանակի դափնյա պսակին: Փոխարքան լուր ուղարկեց իր հայրենի յերկիրը, թե խաղաղությունը վերականգնված ե, ապստամբությունը ճնշված: Յեկ նիդերլանդիայի թագավորը, իր խորհրդակիցների ցուցմունքներով, շատ խաչը ընծայեց հայրենիքի ծառաներին նրանց կտտարած հերոսության համար...

— Ինքներդ գրեցեր հարցեր յեվ մանրամասն վերլուծեցեք այս պատմըվածքը ըստ բովանդակության յեվ ծեվի:

— Կարդացեք այս պատմվածքն ամբողջությամբ (լույս ե տեսել առանձին զրբուկով):

ԿՈՐ ՄԱԿ-ԿԵՑ

ԼԻՆՉԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

— Քաղաքում այսոր բոլոր նեղրերը Զոն Ուայտի յերեկվաքարողն են ծամծմում: Դու լսե՞լ ես այդ մասին, Նատալի, — հարցը մեծ վաճառատեր Հենրի կորդը իր սիրուն աղջկան:

Հոկտեմբեր ամիսն եր: Իրիկվա ստվերները քիչ-քիչ թափանցում եյին հյուրանոցը: Վառարանում այրվող փայտերի փայլը, կաշվի փափուկ կարասիներն ու վոսկեզոծ իրերը իրիկվա կիսաստվերի հետ՝ սենյակին տվել եյին հաճելի տեսք:

— Այո, հայրիկ, որ. Սուսին ինձ ասաց, վոր մտադիր ե ձեզանից վերցնել իր խնայած փողերը և հանձնել նեղրական կոռպերատիվին: Յեկ յերբ յես հարցըրի, թե վորտեղից ե նրա դլուխը մըտել այդ հիմարությունը, նա մի առանձին հպարտությամբ պատասխանեց. «Դա յերբեք ել հիմարություն չի, մեզ խրատել ե Զոն Ուայտը, յերբ յերեկ քարոզում եր յեկեղեցում»:

— Այդ յերբ ասաց:

— Այսոր, առավոտ:

Սուսին դայակ եր, ուրախ, սկամորթ մի պառավ: Յերբ Հենրին հարստացավ նա վարձեց այդ դայակին իր անչափահաս աղջկան խնամելու համար: Սուսին յերկար ժամանակ աշխատել եր Միդլստիլում ապրող ստրկատեր մի ագնվական ընտանիքում:

Կորդը վեր կացավ աթոռից և ջղային ման եր գալիս սենյակում:

— Մեր նեղրերը ուղղակի անտանելի յեն դարձել այն որից, յերբ սկսվեց պատերազմը, — վինթվինթում եր նա քթի տակ, — մանավանդ այդ բանը սկսեց աչք ծակել, յերբ Բուկեր Վաշինգտոնի *) մահվանից հետո հյուսիսից մեզ մոտ յեկան կրթված նեղրեր: Այժմ, նրանք նորից աղմուկ են բարձրացըրել և բանը այնտեղ հասավ, վոր այդ նեղրերը ուզում են կոռպերատիվ հիմնել Միդլստիլում: Այդ կոռպերատիվը ինձ բաց ե ի բաց կարող ե վնասել: Այդ սկամորթները ուզում են այստեղ սեփական խանութներ բացել ձիշտ այնպես ինչպես հյուսիսում նրանք հիմնել են դպրոցներ և յեկեղեցիներ: Զափի չկա նրանց լրբությանը: Բայց այստեղ նրանց թույլ չենք տա մտնել մեր յեկեղեցիները և յերդվում եմ աստծու անունով, Միդլստիլը չի հանդուրժի վոր իր սահմաններում նեղրերը ունենան սեփական խանութներ:

*) Աչքի ընկնող նեղր հասարակական գործիչ, վոր յերկար ժամանակ նեղր ինտելիգենցիայի պարագլուխն եր:

Կորդ խփեց իր բռունցքը սեղանին, վորից ընկավ լուսամ-
փոփը:

— Հայրիկ, յես չեմ կարծում, վոր դրանից կարող ե զորեւ
չարիք ծնել: Միթե գուք չգիտեք, վոր նեղբերը շատ են խոսում,
բայց յերբեք չեն կարող վորեն բան գլուխ բերել: Թող շատախոսեն
ինչքան ուզում են... Միհնույն ե նրանք այստեղ վոչինչ չեն կա-
րող անել, թողնենք նրանց անուշադիր:

Այս, իր խոսքի նուրբ ձեւրից դժվար չեր գուշակել, վոր Նա-
տալին ստացել եր նուրբ գաստիարակություն:

Նա հաջողությամբ ավարտել եր Վիրգինում յերիտարարդ աղ-
ջիկների ինստիտուտը, յերկու անգամ ճամփորդել եր Յեվոսպա,
իսկ ճմեռները նա անց եր կացնում Նյու-Յորքի ազնվական շրջան-
ներում: Այդ բոլորը աղջել եյին նրա վրա, և նրան տվել ազնվա-
կան նրբություն:

Նատալիի ամենաբուռն ցանկությունն եր փայլել վերին հասա-
րակության մեջ, իսկ այդ դժվար չեր, յեթե նա ամուսնանար Մի-
խայիլ Սանովիչի հետ, վոր «Նյու-Յորքի քրոնիկա» թերթի անորե-
նի վորդին եր, և «Այուս Սաել» ակցիոներական ընկերության խո-
շոր բաժնետերը:

Գեղեցիկ, հարուստ, հիանալի ձայնով ոժտված, հարավային վո-
ճի նրբություններ ունեցող կոկետ նատալիան նման եր յեվոսպա-
ցի աղջիկներին և աջրի եր ընկնում Միացիալ նահանգների ինք-
նավսահն կանանց մեջ:

Այս, նա ուներ իր նպատակին հասնելու բոլոր բարեմասնու-
թյունները:

Այնուամենայնիվ, Հենրի Կորդը ուներ իր լուրջ առարկություն-
ները և չեր ուզում իր աղջկան կնության տալ այդ հյուսիսեցուն: Քաղաքում բոլորը հավատացած եյին, վոր Նատալիան կամուսնա-
նա բժիշկ Տեյլորի հետ, վորի հայրը մի ժամանակ մոտ եր Կորդին
և ողնել եր նրան առևտրական խոշոր դիրք ձեռք բերելու գործում:

Կորդը ծնվել եր մի սպիտակ աղքատ ընտանիքում: Նա շատ
եր հապարտանում առևտրական հաջողություններով: Նա սիրում եր
հարավը և չեր կարողանում տանել հյուսիսեցիներին: Նատալին
նրա միակ զավակն եր և Կորդն ուզում եր, վոր իր աղջիկն ու իր
փողերը մնան հարավում: Բացի դրանից, Սանովիչի անունը նրան
դուր չեր գալիս, չնայած նրա բոլոր հարստությանն ու դիրքին: Սա-
նովիչը հրեյա յեր: Իսկ Կորդի համար, վեր մի հնազանդ հարավիցի
յեր՝ հրեաները հանդիսանում եյին ամերիկական քաղաքակրթության
միակ թշնամիները: Զե՞ վոր այդ նույն հրեաները թշնամի եյին Հի-

սուսին: Կորդը շարունակ պնդում եր, վոր «Դեղին վտանգը» հրեա
ժուրնալիստների հնարած բանն ե, վորպեսզի ամերիկացի հայ-
րենասերների ուշագրությունը վրիպի «Հրեական վտանգից»: Ահա
թե ինչու Կորդը հիմնադիր և ամենաջերմ անդամը դարձավ «Կու-
կուկս-կլան» ընկերությանը՝ յերբ բայց կիկական վտանգը ուռւմբի
նման բաղկան արևմտաքի դռները: Միդասվիլում բոլորին հայտնի
յեր, վոր Կորդը համակրում ե «Կու-կուկս-կլանի» ծրագրին, բայց
վոչ վոք չգիտեր, վոր նա այդ ընկերության նվիրատվություններ
ե անում, և ոգտվելով իր դիրքից՝ փող ե հավաքում նաև քաղաքի
մյուս ունեվորներից: Իսկ յերբ «Կու-կուկս-կլանի» գործունելու-
թյունը բացահայտ դարձավ, յերբ հյուսիսային միքանի ազգեցիկ
թերթեր ի գիտություն աշխարհի հայտարարեցին, վոր ալդ ընկերու-
թյան գործիչները վոչ թե հայրենասերներ են, այլ ամենահասարակ
բոնակալներ են և զեղծարարներ,—այն ժամանակ Հենրի Կորդը
«Հարավային դրոշակ» թերթին ուղարկեց մի մեծ հոգված, վորով
պաշտպանում եր «Կու-կուկս-կլանը»: Նա ապացուցում եր, վոր
բոլոր հակառակորդ թերթերի ղեկավարները հրեական գործակալ-
ներ են, վորոնք պայքարի յեն դուրս յեկել իսկական քրիստոնեա-
կան բողոքական դավանության դեմ և ցանում են կաթոլիկության
սերմեր... և վոր սեղբական ստոր ծագում ունեն այն բոլոր ամե-
րիկացիները, վորոնք հարում են այդ թերթերին:

Կորդի յեռանդուն հոգվածը բազում համակրանքներով և հա-
վելումներով արտատպվեց հարավի բոլոր թերթերում: «Կու-կու-
կու-կլանը» այդ պայքարից դուրս յեկագ հաղթական և սկսեց փո-
խել իր գործելակերպը ու հենց հարավի հարուստների վրա: Ընկե-
րության առաջին գործը յեղագ այն, վոր նա մի գաղտնի շրջաբե-
րականով կոչ եր անում իր անդամներին կազմել տեղացի սպի-
տակների ընկերություն և պայքար մտնել հրեա առևտրականների
դեմ, վորոնց թիվը որից որ շատանում եր հարավում:

Հենրի Կորդը ամբողջ հոգով վողջունեց այդ նոր գործելակեր-
պը: Զե՞ վոր նա սաստիկ ասում եր հրեաներին, վորոնք խլում ե-
յին նրա հաճախորդներին: Նա առանձնապես ասում եր հրեյա Մոր-
դուխայ Ռողենտալին, վոր իր խանութում մուծել եր չլսված մի
կարգ, — նա ապրանքը բաց եր թողնում ըստ հերթի, մինչդեռ պետք
եր նախ բավարարել սպիտակ հաճախորդներին և հետո միայն դառ-
նալ նեղերին:

Մի չորեքշաբթի, յերեկոյան ժամը 5-ին, սևամորթ կառապանը
Հենրի Կորդի վաճառանոցի առաջ բերեց մի շքեղ կառք: Հենրի
Կորդը ամեն որ այդ ժամերին զբոսնում եր: Գլխավոր փողոցով նա

թեքում եր դեպի քաղաքի ազնվական թաղը՝ դեպի Զեկոսն Ավենը։ Յերբ անցնում եր հրապարակի վրա մի գեղեցիկ յերկնարկանի տան առաջից՝ նրան վողջունեց տան տերը Արչիքալդ Ֆարնոնը։ Այդ պարոնը Կորդի գործակալն եր և դեմոկրատական կուսակցության դեկավարը։ Ֆարնոնի վողջունին Կորդը պատասխանեց սիրալիր, և կառքը կանգնեց։

— Դուք լսել եք նորությունը, — հարցրեց Ֆարնոնը՝ ձեռքը դնելով յերկաթե ցածր ճաղերի վրա։

— Վոչ իսկ ինչ կա։

— Նորից նեգրերը Նրանք նորից սկսել են իրենցը։ Կորդ, նորից նեգրերը։

Ֆարնոնը գուռը բաց արակ, մոտեցավ ձիուն և շոյելով նրա բաշերը, շարունակեց։

— Այդ լիբը նեգրը, Ելբը, յերեկ Ռոզենտալի խանութում շատ կոպիտ ե վերաբերվել Վիլյամ Կրոսի հետ, և նույնիսկ բոռուցք ե ցույց տվել։

— Ինչու Կրոսը կամ մեզանից մեկը չի ընկել այդ նեգրի յետից ու տեղնուտեղը չի դրել գետին։

— Զգիտեմ։ Յերեկ Միտչելը զինված է յեղել։ Բայց կարծեմ թե այդ անիծված Ռոզենտալն ել անցել է նեգրի կողմը։

— Բայց ինչպես կարելի յէ թույլ տար վոր սևամորթը այդպիսի վիրավորանք հասցնի բոլորից հարդված պատվավոր քաղաքացի Վիլյամ Կրոսին։

— Դուք գիտեք, — պատասխանեց Ֆարնոնը, — այդ նեգրերը խելագարվում են, յերբ քիչ փող են ունենում, կամ յեթե նրանց աշակերտ ե մի սպիտակ։ Կարճ ասած՝ այդ պատմությունը շատ զվարճալի մի բան է յեղել։

Զեղ հայտնի յէ, վոր Միտչելի հողը մեծ հասույթ է տալիս, և ի մի միջի այլոց, Միտչելը փաստորեն հանդիսանում է նեգրական կոռպերատիվի ձեռնարկողը։ Սեն Լեոնարդոն շատ քիչ փող ունի, և Միտչելը ոգտվելով այդ հանդամանքից շահագործում է նրան և Զոն Ռւայտին։ Իր ծրագիրը իրավործելու համար։ Միտչելը Ռոզենտալի խանութն է մտել և ուզեցել է գնել միքանի գործիքներ, այդ ժամանակ ներս է մտել Վիլյամ Կրոսը, մի կողմ հրել նրան և պահանջել վոր առաջին հերթին իրեն, սպիտակ գնորդին բավարարեն։ Ռոզենտալը վնթիթնթում է, թե ինքը ուզում է ապրանք բաց թողնել ըստ հերթի, վոր ինքը խտրություն չի դնում սև ու սպիտակ հաճախորդների միջև։ Այն ժամանակ Միտչելը ցույց է տալիս բոռուցքը և սպառնալից ասում, «Սպիտակ մարդ, — պիտի հասկա-

նաս թե չե, վոր նեզը նույնպես մարդ է, թեև նրա մորթը սև գույն ունի։ Յես ձեզ կապացուցեմ, վոր նեզը ել մարդ է, թեկուզ մեռնելու ել լինեմ տեղնուտեղը»։ Ահա այսպես ե բացվել գործը։ Զգիտեմ ինչ կապատահեր Կրոսին, յեթե Ռոզենտալը չմիջամտեր և չհեռացներ նեզը։

— Ասիծած, ստոր, քրիստոսասպան, — ճշաց Կորդը, — այդ նեգրին պետք եր տեղնուտեղը սատկեցնել։ Յեկ այդ պետք եր անել հենց տաք վեճի ժամանակ։ Այժմ մենք պետք ե դանենք վորեն պատճառ և կախ տանք միքանի նեզը, վոր միուսները խրատվեն։ Միայն թե պետք ե լինել չափազանց զգույշ, թե չե տեղի կտանք անախորժ միջամտությունների։ Դուք պետք ե մի քիչ ագիտացիա ատաներ հոգուտ նեգրերի, վորպեսզի նրանք յերես առնեն և գուրս գան մեր դեմքը, այն ժամանակ մենք մի լավ կլիրատենք... Դու չգիտես, թե ինչպիսի թուցիկներ ե ընկնում այդ նեգրերի ձեռքը։ Իմ հին բարեկամ բժիշկ Պիտերսը Խրուստոնից ուղարկել է ինձ մի նեգրական լրագիր, վոր ուղղակի ուումբի նման պայթեց իմ գլխին։ Յես մի որ ցույց կտամ քեզ այդ լրագիրը։ Իհարկե արդ տեսակի թուուցիկներն ու լրագիրները մեր նեգրերի համար են բաց թողնված։ Մենք պետք ե կովենք մեր նեգրերի դեմ մեր սեփական ուժերով։

— Իհարկե, — համաձայնվեց Ֆարնոնը, — բայց ինձ թվում է, վոր հատկապես պետք ե ձեռք գցել նրանց պարագլուխ Ելբ Միտչելին, և այդքան բավական կլինի։ Յեթե մենք կարողանանք բռնել նրան և պատժել հարավի դաժան որենքների համաձայն՝ այն ժամանակ կոռպերատիվի զաղափարը և նման ամեն մի ցնորք ջնջած կլինենք նեգրերի գլխից։

— Դու ձիշտ ես ասում, Ֆարնոն, պետք ե հավաքվել և մտածել մի միջոց։ Վորով հարավորություն լինի հեշտությամբ մեր ձանապարից մաքրել արդ անիծված Միտչելին։ Իսկ այժմ յես կշարունակեմ իմ զբոսանքը։ Սյոր յեղանակը հիանալի յէ, այսպիսի զեղեցիկ որ քիչ ե պատահում հոկտեմբեր ամսին, պետք ե ոզտվել։ Յերեկ մի լավ ձմեռ կունենանք այս տարի։ Առայժմ՝ ցըտեսություն։

Հաջորդ առավոտ Կորդը իր վաճառատունը աչքի անցնելիս, տեսավ, վոր բաժանմունքի վարիչը բարձր խոսում է գործակատարի հետ։ Նրա խոսելու յեղանակից յերեսում եր, վոր վարիչը ցանկանում է զրավել Կորդի ուշագրությունը։

— Դուք դնո՞ւմ եք, Բըյուս, — հարցրեց նա գործակատարին, — այսոր տեղի պիտի ունենա մի իսկական տոնախմբություն և մար-

զահանգես: Լուսնյակի լուսով պիտի լինեն պարեր և յերգեցողություն, հետո՝ լուսավորություն, կենդանի լուսավառություն: Ո՛, յես կարծում եմ, վոր բավականաչափ նավթ կճարվի սև մարմինները այրելու համար:

— Իսկ ինչ սև մարմիններ են,—հարցրեց գեր, կարմրաթուշ գործակատարը:

— Միթե չես հասկանում:

— Յերեկ Սեմ Լեռնարդը կլինի այդ մումիան:

— Ո՛, վ՞չ: Նա անվես մարդ ե: Թեև շատախոս ե, բայց համեստ բնավորություն ունի, նա լիրք չի:

— Իսկ ո՞վ ե հապա, յեթե Սեմը չի: Զե՞ վոր դուք չեք կարո՞ղ հաշիվ տեսնել Զոն Ուայտի հետ, նրա կոռպերատիվի մասին արածքարողների համար,—ի վերջո դա հիմար բան ե:

Կորդը հազիվ եր ծիծաղը բոնում: Խորամանկ ե Զոնսը, նկատեց նա քիթի տակ՝ իր վարիչի նկատմամբ և շարունակեց աղաճությամբ լսել:

— Ամբողջ Միդլստիլում միայն մի նեզը կա պատասխանեց նա,—վոր առիթ ե տալիս այդ բոլոր խառնակություններին: Յեթե մենք նրա քիթը կոտրենք, այն ժամանակ մնացածները սուս կկենան և կդառնան հլու հնազանդ վոչխարներ: Քանի դեռ Միդլստիլում ապրում ե Եյր Միդլելը՝ մեզ համար հանգիստ չկա:

— Բայց Միդլելը ապրում ե ուրիշ տեղ, նա Միդլստիլում չի Զննս,—նրա հողը քաղաքից շատ հեռու յե, նա պելի շուտ Գըլյաս Պոյնիտին ե մոտիկ:

Գործակատարը խոսում եր մի առանձին հպարտ և ինքնավաստան շեշտով, կարծես ամեն մի խոսք արտասանելիս՝ նա Ամերիկա եր գտնում:

— Ո՛, ճիշտ ե,—պատասխանեց Զոնսը քմծիծաղ տալով,—թեև նա չի ապրում հենց Միդլստիլում, բայց այդ նշանակությունը չունի: Նրա ազգցության տակ են մեր քաղաքի չքավոր նեզքերը, վորոնց նա գործ ե տալիս և լավ վարձատրում, շնորհիվ այն բանի, վոր լավ հասույթ ե տալիս նրա հողը: Յեվ նա ինքը հաճախ Միդլստիլ ե գալիս ու փողեր ծախսում: Նա պետք ե իրեն մի քիչ խոնարհ պահի՝ ինչ նեզը ե հարկավոր: Բայց նա լիրք ե և հանդուգն: Այդպես չե միթե: Ի՞նչ կդառնան մեր նեզքերը, յեթե մենք թույլ տանք վոր մի սեամորթ անասուն ձեռք բարձրացնի սպիտակ քաղաքացու վրա, և մնա անպատիժ:

— Զգիտեմ, Զոնս: Ուղիղն ասած, յես չեմ պաշտպանում այդ անասուններին, և աստծու անունը վկա, վոր չեմ սիրում առհասա-

րակ նեզքերին: Յեվ չեմ ել սիրի յերբեք: Բայց այնուամենայնիվ Միդլելը յեղել ե միշտ ել խոնարհ և անվասո: Բայց ինչ վոր ե, նա ել սկամորթ ե, հետևաբար և անտանելի: Յեվ յեթե ձեր ասածի համաձայն, նա դուրս ե գալիս իր սահմաններից՝ այն ժամանակ պիտի հարվածել նրան: Թեև հաճախ ե պատահում, վոր մենք ել դուրս ենք գալիս համբերություննից և անվայել բաներ թույլ տալիս մեզ, ուր մնաց նեզքը, վոր անասուն ե...

— Ինձ թվում ե,—առարկեց Զոնսը նորից քմծիծաղով, —վոր դուք չափազանց մեծահոգի յեք նեզքերի նկատմամբ՝ չնայած, վոր խելացի յեք և ունեք վայելուչ արտաքին: Յեթե սպիտակը իրեն թույլ ե տալիս անկարգ մի բան՝ դեպի նա պիտի լինել զիջող: Ամեն մի սպիտակ կարող ե դառնալ նահանգապետ, մինչև անգամ հանրապետության նախագահ, բանկիր կամ մեծ ակցիոներ: Սպիտակը կարող ե մեր պետության մեջ հասնել ամենամեծ դիրքին: Սակայն նեզքը, ամենից առաջ նեզը ե: Յեվ յեթե նեզքը սիալ ե գործում, մենք պետք ե նրան ցույց տանք արժանի տեղը: Դեպի նեզքը մենք չենք կարող լինել զիջող: Ամեն անգամ, յերբ նեզքը քիթը վեր ե քաշում՝ մենք պետք ե կոտրենք նրա քիթը և յեթե հարավոր ե՝ վիզն ել հետը: Վո՞չ, մենք չենք կարող և չպիտի հանդուրժենք նրանց լրբություններին: Նրանց հետ պետք ե լինել խիստ՝ ահա ամեն մի խնդրի լուծումը: Մենք վոչինչ չունենք այն նեզքերի նկատմամբ, վորոնք ճանաչում են իրենց տեղը: Բայց հարավում նեզքը ինքնասիրություն չպետք ե ունենա, թո՞ղ գնան հյուսիսային նահանգները:

Կորդը շուռ յեկավ և նայեց ժամացույցին: Նա Զոնսին համարում եր իր բոլոր ոգնականներից ամենից ընդունակը: Նա վաղուց մտադիր եր Զոնսին հանձնել ամբողջ վաճառատան հսկողությունը: Ինքը Զոնսն ել գիտեր, վոր տերը իրեն ավելի յե վստահում, քան վորեւ մեկի: Իզուր չեր, վոր Զոնսը շարունակ հրավերներ եր ընդունում իր տիրոջից և ստանում եր մեծ ոռմիկ: Այդ բանը գիտեյին բոլոր ծառայողները և նրան հարգում եյին, կատարում նրա բոլոր հրամանները: Իսկ նատալին դեպի նա սիրալիր եր, և նույն իսկ նրա մոտ յերբեմն նվազում եր դաշնամուր: Զոնսը յերազում եր դառնալ ապագայում իր տիրոջ ընկերակիցը և փեսան:

Հենրի Կորդը զբոսանքից վերագարձավ միայն ուշ յերեկոյան: Նատալին նոր եր հրաժեշտ տվել ֆորուել Ռաույին, վոր կարձ ժամանակով յեկել եր ընկերուհու, մեծ իշխանավորի աղջիկ Մագնուլիի մոտ: Մագնուլիի հայրը մեծ դիրք եր շինել իր համար պալատում իր նեզքատյաց ճառերով: Նրան անվանում եյին «նեզքակեր»: Նա

իր ծախսով բաց եր թողել մի հականեգրական կինուլիստ, վոր մեծ ընդունելության եր արժանացել հարավային թերթերի կողմից և հանգիպել սեգը ինտելիգենցիայի զայրույթին: Այդ նկարի համաձայն ազատագրված նեղերը գաղանանում են, խելագարվում: Նրանք հարձակվում են սպիտակների տների վրա, կողոպտում, բռնաբարում են կանանց, բայց չնայած այդ բոլորին՝ Միացյալ Նահանգների զորքը պաշտպանում է նրանց:

Նատալին ինքը սրբեց ոշարակի թանգարին, ճապոնական բաժակներն ու սկուտեղը: Յերեկոյան դեմ նա արձակեց սպասուհուն և սկսեց ինքը քաղցրավենի և խմիչքներ պատրաստել հոր համար:

Ոշարակ պատրաստելը նրան սովորեցրել եր մայրը և նա այդ անում եր հատկապես իր հոր և հաղվագյուտ ընկերուհիների համար:

Տուն յեկավ հայրը.

— Կցանկանայի՞ք սուրճ, հայրիկ: Բավական ուշ ե, բայց յես կարծում եմ, վոր դուք սովորականի նման կիսմեք մի բաժակ: Յես արձակեցի Բելլուն և սուրճը պատրաստել եմ ինքս:

Կորդը շնորհակալություն հայտնեց տղջկան: Նա դեմ չեր մի բաժակ սուրճ խմել սրսանքից հետո: Յեկ մինչդեռ Նատալին պատրաստում եր սուրճը՝ նա ընկողմանել եր փափուկ բազկաթոռի մեջ: Մի քանի բոսկե անց՝ աղջիկը սկուտեղի վրա դրեց թունդ, ծխացող սուրճը, վորի յերեսին բռնել եր սերը և բուրում եր անուշ հոտ: Կորդը վերցրեց բաժակը: Նատալին դեռ չեր ուզում գնալ նընշարան ու նստեց հոր կողքին: Պատուհանը բաց եր և քամին բերեց ինչվոր հոտ: Նատալին վեր թռավ տեղից:

— Հայրիկ, յես ինչվոր խանձագածի հոտ եմ առնում: Կարծես թե իին լաթեր լինեն այրվելիս, կամ մի դուցե հրդեհ կտ:

— Չեմ կարծում Նատալի, յերեի յերեխաները թափած տերմաներն են այրում վորոցում:

— Բայց հոտը ավելի յե սաստկանում: Կարծես թե այրված մի հոտ լինի:

— Չգիտեմ, զավակս, — պատասխանեց Կորդը նուրբ ժպիտը յերեսին, — դուցե մեկը խոզի միս ե տապակում:

Նատալին լոեց, նա մտածում եր: Նա իր նուրբ, զեղեցիկ ձեռները դրել եր ծնկներին: Բայց իսկույն սկսեց նորից.

— Հայրիկ, միթե չես լուսմ, հրացանի ձայներ են: Իհարկե, իհարկե հրացանի ձայներ են: Ահա, ահա նորից են լսվում... ինձ թվում ե. ինձ թվում ե... վոր այդ...

— Ուզում ես ասել, մեկն ու մեկին են այրում, — վրա բերեց

Կորդը աղջկա ասածին: — Շատ հավանական ե: Ո՞վ կարող ե ասել, թե ինչ կպատահի՝ յերբ նեղրերը չափը անցել են: Այսոր առավոտ, յես լսեցի, վոր խոսում ելին Միաչելի մասին: Նա ձեռք ե բարձրացրել վիլյամ կրոսի վրա: Յերեկի հիմա բռնել են նրան և յենթարկել ինքնազատաստանի:

— Միաչելը, հայրիկ, այդ այն հարուստ նեղըն ե, վոր ապրում և քաղաքի ճանապարհին:

— Այս, հենց նա:

— Հայրիկ, յես չեմ կարող մի բան չհարցնել: Ի՞նչ պիտի լինի այդ նեղրերի վերջը: Մենք աշխատում ենք նրանց զապել, բայց նրանք որից որ բազմանում և հարստանում են: Նրանք արդեն սկսել են մտածել հանգուգն բաներ: Որից որ նրանք վրդովում են մեր հանգիստը:

Կորդը մի ումակ խմեց սուրճը և շրթունքները լպստելով, սառը պատասխանեց:

— Հյուսիսային նահանգներում շատ են յերես տալիս նեղրերին. Բայց մենք հարավում ունենք մեր գործելակերպը:

— Շարունակ խոսում եք այդ գործելակերպի մասին, իսկ դրությունը որից որ սրվում ե: Յեթե հնարավոր լիներ նեղրերի հետ վերաբերվել այնպես հնդիկների հետ՝ այն ժամանակ խնդիրը կհեշտանար, բայց նեղրերին վոչնչացնել չի կարելի, վորովհետեւ նրանք կազմում են մեր տնտեսության հիմքը: Մեր Սուսին ինձ պատմեց, վոր նեղրերի մեջ մի հոսանք ե մտել, և շատերը ուզում են վերադառնալ Աֆրիկա: Այսոււմենայնիվ, յես չեմ կարծում, վոր նրանք այնքան հիմար լինեն, վոր ցանկանան նորից բնակություն հաստատել անապատներում, առյուծների և վագրերի կողքին: Յես վախենում եմ, վոր Ամերիկայում աճի մի տագնապ...

Կորդը ծիծաղեց.

— Սուսին միանգամայն ճիշտ ե ասել: Բայց դու լավ կանես, վոր գնաս ննջարան: Յես չեյի իմանում, թե դու քաղաքական հակումներ ես ունեցել: Թու մայրը մի հիանալի կին եր, բայց նա յել սիրում եր խոսել քաղաքական խնդիրների շուրջ: Նա կարող եր սենատոր դառնալ՝ յեթե միայն լիներ տպամարդ: Բայց չեմ հասկանում, թե դու ինչու ցանկացար նմանվել նրան... Քաղաքական խնդիրները կանանց համար չեն, մանավանդ քեզ համար՝ վոր ստացել ես նուրբ դաստիարակություն: Այդ հյուսիսիներն են, վոր կարծում են, թե կինը լավ ե նստի ժողովում, քան տանը: Բայց իզնը, նրանց սովորությունները մերիններից շատ, շատ տարբեր են, մենք ունենք մեր հնավանդ սովորությունները: Դու խելոք և զարգացագ

աղջիկ յես, բայց յեթե ապրեյիր հյուսիսում՝ կարող ելիք նույնիսկ փշանալ: Յեվ գուցե, հենց այդ ե զլխավոր պատճառը, վոր յես ուղում եմ դու ամուսնանաս բժիշկ Տայլորի հետ և մնաս հարավում:

Նատալին ուղում եր գնալ ննջարան, յերբ գուռը պինդ բաղի իւեցին:

Յեկողը բժիշկ Տայլորն եր: Նատալին լսեց, թե ինչպես նրանք բարեկցին իրար և սկսեցին խոսել ինչ վոր գործի բարեհաջող ընթացքի մասին:

Պատի շքեղ ժամացույցը խփեց տամներկուաը, և Նատալին ուղղվելով հայելու դիմաց՝ յեկավ հյուրի առաջ:

— Ո՛, դա մի սքանչելի ինքնաղատատան եր, յես դրա նմանը չեյի տեսեր դեռ վոչ մի նեզը այդպիսի ծխակատարությամբ խարույկ չեր բարձրացել, — ասաց Տայլորը բարեկի փոխանակությունից հետո, — յես մեծ բավականությամբ եյի մասնակցում հանդեսին:

— Իսկ ինչ եր անում Միտչելը, — հարցրեց Կորդը, — յերեկի բառաշում եր, կամ յերեկի ծվում եր չաղ խոզի նման, վորին մորթում ենք:

— Վոչ, նա բավական առնականություն հայտնաբերեց, և նույնիսկ դեռ լրբացավ ու հայհոյում եր: Մենք աշխատում եյինք նրան լացեցնել, կամ այնպես անել, վոր նա աղերսի, բայց նա միայն լություն եր պահում, կամ թքում ատամների միջից: Հարկավոր եր Ռոգենտալին այնտեղ տանել, — այդ կլիներ նրա համար մի լավ նախազգուշացում:

— Իսկ Կրոսն այնտեղ եր, — հարցրեց Կորդը:

— Այս: Նա նույնիսկ իր հետ եր բերել մի յերկար ձող, վորով ծակում եր սեամորթու կողերը: Իսկ ձեր գործակատարը փորձեց խափանել հանդեսը և սպանել նեզրին միանգամից, բայց Զոնսը բոնից նրա թեր և զենքը իմեց: Իսկ յերե Միտչելը գիտակցությունը կորցրեց, մենք վառեցինք խարույկը: Կրակներից նա նորից կենդանացավ: Վերջապես նա հառաչեց, և ինչպես հառաչեց: Կարծես թե վորոտ լիներ նրա ձայնը: Կրակը շրջապատեց նրան և սկսեց խանձել: Նա կորցրեց գիտակցությունը և մենք բացինք համազարկ...

Նատալին մի թեթև «ախ» արձակեց: Նա փոխեց իր դիրքը: Նրա յերեսը կարմրատակեց: Նա հուզված եր:

— Յես չեյի կարծում, վոր դուք այնտեղ կդնաք, — ասաց Տայլորին:

— Ինչո՞ւ չե, — պատասխանեց Տայլորը հպարտությամբ: Զոնսը իր փորդով գալիս եր իմ յետեից, և յես առաջինը գուրս բերի այդ նեզրին իր տանից, նախ քան մեր մարդկանց վրա հասնելը:

Նատալին վեր կացավ տեղից և մոտեցավ տղամարդկանց: Նա դու-

դում եր բարկությունից: Յերիտասարդ Տայլորը վոտքի յելավ: Կորդը նստած եր:

— Դուք ուղում եք ասել, վոր փաստորեն մամնակից եք յեղել ինքնաղատատանին, այդպես չե, — հարցրեց նա Տայլորին հառելով իր աչքերը:

Բժիշկը այնքան եր շփոթված, վոր չեր կարողանում պատասխան գտնել: Նա չեր սպասում այդպիսի հարց:

— Բայց ինչո՞ւ չե: Այս-ո, Նատալի, յես մամնակցում եյի: Ամեն մի հարավեցի, վորի յերակներում կարմիր արյուն և հոսում նա պետք ե մասնակցի նեղբերի կոտորածին: Բայց ի՞նչ եք ուղում ասել դուք:

— Յես վո՞չ մի դեպքում մարդու չեմ գնա նրան, ով մամնակից ե յեղե, ինքնաղատատանի, յեթե հարկավոր ե նեզը սպանել՝ այդ պետք ե անի ամբոխը: Հարավի լավագույն արիստոկրատները իրավունք չունեն իրենց թույլ տալ այդորինակ ստորացում...

— Բայց ի՞նչ ստորացում կա այդեղի, — նեզը յենթարկել ինքնաղատատանի՝ այդ հարավի մեր սրբազան ավանդն ե:

— Գուցե դուք չունեք այդքան զգայնություն, վոր հասկանաք նրբությունը, — վրա բերեց Նատալին, — Եյու-Յորքի գատավորը ուղարկում ե վոճրագործին գլխատման, բայց ինքը դատավորը յերեք չի կարի. մահապարտի զուխը: Զիկագոյի Զոն Մարկը՝ վոր կոնսերվարի գործարան ունի՝ հարյուրավոր մարդիկ ե վարձում անասուններ կոտորելու համար, բայց ինքը, հասկանալի յե, վոր չի գընում այդ վարձկանների հետ սպանդանոց: Յեվ յեթե դուք այդ նրբությունը չեք հասկանում՝ ապա ձեզ անհնար ե բացատրել: Յես միայն հիմա յեմ զգում, թե վորքան բարձր եմ կամնած ձեզանից:

Նա խոսում եր գրգռված, ինչպես մի մարդ, վորին սաստիկ վիրավորել կամ անարգել են: Հետո նա մի սառը հայացք գցեց յերիտասարդ բժշկի վրա ու հեռացավ իր սենյակը:

Նատալին շուտ չընեց:

Նա յերկար ժամանակ նստած եր փափուկ բազմոցի վրա: Հետո վեր կացավ և կանգնելով պատի մեծ հայելու առաջ, յերկար ժամանակ հիտունքով դիտում եր իր փարթամ մարմինը: Նա մըտածում եր հյուսիս ճամփորդելու մասին. հայրը յերեկի հասկացավ նրան: Կորդը աչքի յեր ընկնում իր նուրբ զգայությամբ, բացի այդ, նա շատ եր սիրում իր աղջկան: Այժմ հոր համար պարզ եր, վոր Տայլորի ամուսնության հարցը փակվում ե միայն այն պատճառով վոր իր աղջկա աղնվական զգացմունքները վիրավորված են, և Նատալին իրավացի յեր:

Բայց կորդը ինքն ել շատ զգայուն մարդ եր: Նա մի քանի անգամ ասել եր իր աղջկան, վոր ինքը յերբեք չի մասնակցել նեղրեսի կոտորածին, նույնիսկ այն ժամանակ՝ յերբ դեռ աղքատ եր: Նա այնքան կրթված եր, վոր ձեռքը չեր կեղտոտի նեղրի արյունով: Նա գերադասում եր այդ գործի համար գրգռել իր շներին:

Նատալին հայելու առաջ խպը հաճույքով դիտում եր իրեն և ժպտում: Այո, նա կզնա հյուսիս, և իր հորից կստանա մի խոշոր գումար: Նա արդեն պատկերացնում եր, թե ինչպիսի չքնաղ յերբյակ կկազմեն՝ ինքը և իր յերկու հարավային ընկերուհիները նյութորքի վերին հասարակության մեջ: Յեվ նա հաճույքից սկսեց կիսաձայն մի յեղանակ յերգել: Հետո նորից դիտեց իրեն հայելու մեջու նրա խոհերը թուան դեպի Միխայիլ Սանովիչը:

- Վորտե՞ղ են կատարվում այս նկարազրված դեպքերը:
- Ովքե՞ր եյին չենրի կորդը յեվ նրա համախօնները.
- Ո՞վ եր նատալիան.
- Բնորոշեցեք սրանց հարաբերության հիմնական գծերը:
- Ո՞վ եր Միտչելը.
- Ի՞նչու նրան ինքնադատաստանի յենթարկեցին:

— Ի՞նչ ընդհանուր բան կա այս յեվ «Սայիդ յեվ Աղինտա» պատմվածքում:

ԱՆԻՒ ԲԱՐԲՑՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ «ԲԱՐԲՑՆԵՐԸ»

Աշխարհացույցի վրա Արևմտյան Աֆրիկան նման ե վաճառվելու համար մասմաս յեղած հողամասի մի հսկա պլանի, վորը ծածկում ե յերկրագնդի նշանակալից մի մասը և բաժանված ե յերկրաշափական հատվածների: Բայց այդ հողամասերը գնված չեն. յեթե փողով վճարվեր նրանց արժեքը՝ շատ թանգ կնստեր: Քարտեզի վրա գեղեցիկ, կանոնավոր բաժանմունքները ցույց են տալիս այն պատառները, վոր մեծ պետությունները վերապահել են իրենց, այն որից, յերբ այդ հողամասերի տեր են հայտարարել իրենց:

Յերբ մարդ թափանցելու լինի այդ աշխարհամասը՝ կնկնի մի մացառուտի մեջ, ցածր ու անվերջ մի անտառ, ուր ծառերն արևից այն աստիճան խանձված ու տերեւազուրկ են, վոր տարվա ինք-

տմիսը նման են մեր ձմեռվա ծառերին. Նրանք կանաչում են միայն անձրևային յեղանակի հեղեղներից:

Այս մեծ մացառուտում, հեռվից հեռու, քաղաքներ կան, իրենց կառավարիչների պալատներով և բանկերով: Դրանցից յուրաքանչյուրն ունի բնիկների թաղամասեր, ուր թափված աղբում են նեղրերը: Այդ թաղամասերը նման են կենտրոնացման բանակատեղրի, կամ, յեթե ուղում եր, հավանոցների:

Ուրիշ նեղրեր ապրում են մացառուտի գյուղերում: Ահավասիկ դրանցից մեկը, վոր մի քանի հարյուր կիլոմետր հեռու յեղանվում բամաքո քաղաքից: Այս գյուղը գտնվում է մացառուտի բացուտներից մեկում և բաղկացած է քսանի չափ սրածայր հյուղերից:

Այս գյուղի անունը Դիալաքու յեւ ժամանակով այդտեղ ապրում եյին բամբարաները, ուղովները և ուրիշ նեղրեր՝ մի քիչ բուսական, բայց առողջ ու խաղաղ կյանքով: Աշխատում եյին և ծիծաղում: Այստեղ կյանքը մոտավորապես այնպես եր, ինչպես յեղել և մեր մոլորակում, մարդկության նախնական դարերում:

Ծեր Ամատույի և պառավ Զետեյի ընտանիքը յերջանիկ եր: Յերկու տղաները՝ Տիկեն և Քոքոբեն պահում եյին վոչխարները, այծերը և յեղները, վորոնք ընտանիքի լրացուցիչ մասն եյին կաղմում: Ժամանակ առ ժամանակ նրանք մազլցում եյին արմավենիների վրա՝ ծառի գագաթում դանակով բացված ճեղքից մի քիչ արմավենու գինի ծծելու համար: Կամ դգումից շինած ամանով կաթ եյին խմում, կամ արշավանքներ եյին կազմակերպում՝ վորս անելու, կամ պարզապես յերկիրներ տեսնելու համար, վորովհետեւ այստեղի նեղրերն վորքան զվարթ, նույնքան և հետաքրքիր մարդիկ են: Ամատույի տղաներն իրենց քրոջ՝ Բալայի հետ մասնակցում եյին տամտամներին, յերբ քեզի կրակի շուրջը պարում եյին կամ յերգում ծափ զարնելով: Յերեկոյան, իբրև բարի մուսուլմաններ, լվացվում և աղոթում եյին:

Այս հյուղում կային նաև յերկու պսակի սեռեկներ, վորոնք սպասելով այն որվան, յերբ իրենց հերթին կդառնան աշխատավոր հովիվներ, վորը պատիվ եր համարվում, զվարճանում եյին քեֆի կրակի շուրջը, տամտամների աղմուկի տակ և բացուտում խաղում եյին՝ բարկացնելով կինոսեֆալներին, վորոնք կես կապիկ, կես շուն, ուստի նուկ կես մարդ են:

Ամատույի ընտանիքը բարի անուն ուներ համաքաղաքացիների մեջ, վորոնց հոգին պարզ եր և արդար: Յեվ գյուղապետը, վոր յերեւնի իր հեղինակության նշան նիզակը ձեռին գալիս եր հսկելու, նրանց մասին վոչ մի խոսք ասելու պատճառ չուներ:

Արդ, Ֆրանսիան յեկավ գաղութացնելու այդ գյուղը։ Ֆրանսիան իր պաշտոնյաներով և զինվորներով արդեն հաստատվել եր այդ շրջանում։

Այսշուշտ շատ լավ կլիներ, յեթե մի ժողովրդից ավելի զիտուն և ավելի կուլտուրական ժողովուրդ իր զիտությունը և իր կուլտուրան տրամադրեր այդ ուրիշն՝ նրա բարեկեցությունը բարձրացնելու, նրա միտքը հարստացնելու և լայնացնելու, նրա ճակատագիրը լավացնելու համար։ Բայց նման գաղութացում գոյություն ունի միայն բանկետների ճառերում և ընտանեկան տփիշաների մեջ։ Նման թափանցում և համերաշխություն կարող է լինել միայն այն ժամանակ, յերբ համաշխարհային պրոլետարիատն իր գործերն ինքը կարգավորելու հնարավորություն կունենա։ Մինչ այդ, գաղութացում նշանակում ե ամեն ինչ, բացի բնիկների շահերը պաշտպանելուց, և նույնիսկ նշանակում ե նրանցից սիստեմատիկ կերպով ազատվել։ Դրա ազացույցը կարելի յե գտնել, առանց հեռանալու այն վայրերից, վորի մասին խոսում ենք. գունամորթ ժողովուրդները կարծես հրաշքով պակասում են և շուտով առասպել են թվալու։ Նրան վոչնչացնում են, ինչպես մի հիվանդություն, և պահպանում են նրանց այնքան, ինչքան հարկավոր ե՝ իրրեանասուն աշխատեցնելու համար։

Ուրեմն, գյուղ տանող արահետների վրա յերկացին նեղը, վորոնք տանում եյին պատգարակների վրա նստած սպիտակ մարդկանց։

Սպիտակները խոշոր խրճիթներ շինել տվեցին։ Քոքորեն նրանցից մեկի մոտ ծառա մտավ։ Գործերը լավ չդնացին։ Նրա հետ վաս վարվեցին և ծայր աստիճան հոգնեցրին նրան։ Ուղեց հեռանալ։ Իր տերը և գյուղապետն արգելեցին։ Փախավ։ Նրան հետապնդեցին մացառութի մեջ և հրացանի գնդակը նրա թեր կոտրեց, վորովետե ամեն բանից առաջ կարևոր եր սպիտակների հեղինակությունը հարգել տալ։ Սակայն և այնպես, իբր հարգանք ժողովուրդների ազատության, ուղեցին հավատացնել թե դիպլածով եր պատահել այդ վերը բորբոքվեց և դրությունը վատացավ. բժիշկ չկար. բոլոր ճանապարհորդները կարող են վկայել, վոր սանիտարական սպասարկությունն իսկի չի կազմակերպված այդ յերկրներում։ Վատակ, մի որ կիսամեռ Քոքորեյին հարկադրված տեղափոխեցին մի շաբաթվա վոտով ճանապարհի հեռավորության վրա դտնվող հիվանդանոցը։ Սկիզբները նրա մասին լուր ստացվում եր, հետապայում վոչ մի լուր,

Վոչ մի լուր չստացվեց նաև յերիտասարդ Բալայից, վոր նուրը

եր և բարձրահասակ, բրոնզե սիրուն արձանի նման։ Նա գրավել եր իշխանի նման Դիալաքույում հաստատված մի գաղութային յենթասպալի ուշադրությունը։ Փոքրիկ Բալան անհետացավ իբրև գեղեցիկ, թշվառ մի ստվեր։

Հետո արդյունաբերական մի ձեռնարկ հիմնելու համար կատարված աշխատանքները պատճառ յեղան մոծակների բազմանալուն և համաճարակ սկսվեց։ Սպիտակամորթ հիվանդներին հեռացրին, բայց սկամորթ հիվանդների մեծ մասը մեռավ, վորովհետեւ բժիշկ չկար. սանիտարական մի խումբ պետք ե գար, բայց յերբեք ել չեկավ։ Շտապելու կարիք չկար, Զոհերի մեջ եր Ամատույի մանկիներից մեկը։

Գյուղում մի նոր անձնավորություն յերևաց։ Զինվորագրող ագենտն եր։ Այս նեղը, վոր քաղաքից եր գալիս, աքորի նման զարդարված եր և շատախոս։ Նա իրար վրա յերկու բուրուզ եր հագել, մետաքսյա սանդալներ, ուներ կարմիր վելուրից զլանոց և հովանոց։ Դժվար եր գիմադրել, թեկուզ և նեղը, բայց նման շքեղ արտաքին ունեցող մի պաշտոնյայի պերճախոսությանը։ Ամատույի անդրանիկ տղային՝ Տիքեյին նա համոզեց կամավոր զրվել ֆրանսիայում տեղի ունեցող պատերազմի համար։ Ֆրանսիան այնքան բարի յեր, վոր ընդունում եր նրան իբրև զինվոր և տալիս եր նրան մի շքեղ նշանագիւտ ու մի հրացան։ Ֆրանսիան ցանկանում եր, վոր իր յերախտագիտությունը հայտնելու համար Տիքեն ծառայեր նրան և մեռներ նրա համար, յեթե առիթը ներկայանար։

Գրեթե ֆրանսիացի համարվելու փառքից շացած Տիքեն ստորագրեց պայմանագիրը և մեկնեց։ Այսպիսով ծեր Ամատուն և պառավ Զետին մեռակ մնացին վորը յերեխայի հետ։ Նրանք իրար եյին նախում ու տիրում։

Վորովինեան գյուղի այլ ընտանիքները ևս նման բաղդ եյին ունեցել, վորոշ թշնամություն սկսվեց սպիտակ տերերի գեմ։ Բայց ի՞նչ կարող եյին անել բնավորությամբ այնքան բարեհամբույր մի բուռն նեղը, յեվրոպական քաղաքակրթության առաջացող ալիքների գեմ։

Տարիներ անցան։ Դիալաքուն հետզհեան շահագործման կարեվոր մի կենարոն եր գառնում։ Այստեղ առաջացավ մի մեծ արհեստանոց և առևտրական ձեռնարկ, վորի շուրջ թափառում եյին գյուղի հատ ու կենտ բնակիչները, նման աքսորականների, ստամոքսները գտարկ, նիհար։ Հիմա ել բժիշկ չկար. սպիտակներն իրենց կարիքների համար ավտոմոբիլներ ունեյին։ Բայց կար մի ստղիո-բարձրախոս, և հակառակ իրենց թշվառության՝ նեղը

հիացած և ապշած եյին նվագից ու այն ճառերից, վորոնք թափ-
վում եյին բարձրախոսից:

Մի որ Ամատույի և Զետեյի յերեխան ծանր հիվանդացավ այն
հիվանդությունից, վորից մահացել եր իր փոքր յեղայրը: Ծերու-
կը և պառավը ծայր աստիճան հուսահատվեցին, վորովհետեւ պետք
եր նրան տեղափոխել, իսկ դրա համար փող եր հարկավոր: Իսկ
փող չկար այդ խրճիթում, վորի բոլոր յերեխաները հաջորդաբար
անհետացել եյին: Վոչ հովիվ, վոչ արջառ. ուրեմն այլիս—վոչինչ:
Յեկ այդ փոքրիկ յերեխան միակ թելն եր, վոր նրանց կապում եր
յերջանկության, նույնիսկ կյանքին:

Մի յերեկո, յերբ մտածում եյին ճակատազրի մասին, առանց
խոսելու, մի սեամորթ խոշոր մարդ ներկայացավ նրանց խրճիթի
դռանը:

Իրենց տղան՝ Տիքեն եր: Բայց չճանաչեցին նրան:

Վորովհետեւ հինգ տարի անցնելուց հետո վերադարձ հրածիք
Տիքեն շատ փոխված եր:

Իր ընկերների՝ Բասուրույի, Դիարայի, Խալիսույի, Դալլոյի և
այլոց նման նա չեր սպանվել քանի դեռ այնտեղ եր:

Բայց այլանդակվել եր: Խումբից դուրս յեկած հրեզեն մի ալիք
նրա դեմքի մորթը պոկել եր, այտի և կզակի վոսկորը մսազերծ եր
արել և դրա հետեւնքով վոչ վոք չեր կարող ճանաչել նրան:

Մի ուրիշ տեսակետից ել փոխվել եր: Հինգ տարի շփվելով
ֆրանսիայի և ֆրանսիացիների հետ՝ կոպիտ հովիվը, ճիշտ ե, ազատ-
վել եր մի շարք պատրանքներից, սակայն ձեռք եր բերել մտքի
ճկունություն, վորից շատ հեռու եր անցյալում, յերբ քարայրների
նախամարդու չափ պարզ եր և միամիտ:

Ահա թե ինչու նրա մեջ միաք հղացավ անմիջապես իր ծնող-
ներին չասելու՝ «Յես Տիքեն եմ» և նրանց մի լավ անակնկալ պատ-
ճառելու, մի լավ անակնկալ: Այս, վորովհետեւ նա թեյն այլանդակ-
վել եր, վորը մի շատ փոքր գժբաղտություն ե, սակայն հարուստ
եր: Մի ամբողջ հարստություն ե բերում հեալ, 300 ֆրանկ ֆրան-
սիական թղթադրամ: Լավ գնով վաճառել եր դիպվածով զյուղե-
րում գտած թանգագին իրերը (վորովհետեւ յեկրոպացու նման խո-
րամանկ եր դառել) և մի գերմանացու կզակի վոսկի ատմները,
վորոնք իր պարկի մեջ յերկար ժամանակ մնալուց նոր փայլ եյին
ստացել:

Ճիշտ ասած, Արտուայի և Շամպայնի ռազմագուշերի այդ
ուրվականի սիրտը թրթուացել եր, յերբ գյուղին մոտենալիս լսել
եր կինոսեֆաների հաջոցը և արմավենիների տերեների մեղմա-

հնչյուն ու յուրահատուկ խշտոցը: Թովագրացել եր նրա սիրտը, յերբ
տեսել եր խոշոր ծառերը, վորոնք կանաչ կամար են կազմում հրա-
պարակի վրա: Բայց անծանոթ մնալու ու իր հնարամտությամբ
հպարտ՝ խաղում եր իր դերը՝ թարթելով իր միակ աչքը:

Ծեր Ամատուն և կինը ընդունեցին մի որվա այս հյուրին,
ինչպես հարկն ե, բայց ընկճված, լուս, զիշերացը ջիկների նման
եյին կատարում նրանք հյուրընկալության ծեսը Տիքեն իզուր եր
փորձում նրանց խոսեցնել: Հետո նրանց շահագրգությունը զար-
թեցնելու համար և չկարողանալով դիմանալ միլիարդների տեր լի-
նելը ապացուցելու ցանկությանը՝ նրանց ցույց տվեց այն թղթա-
դրամները, վոր թաշկինակի մեջ փաթաթած՝ դրել եր պարկի խոր-
քում:

Յեկ յերկու ծերուկները զարթնեցին իրենց մեքենայական
թմրությունից, միևնույն ժամանակ մտածելով, վոր յեթե այդ փո-
ղից մի քիչ ունենային՝ կողքի հյուզում մահացող յերեխան անմի-
ջապես կիրկվեր:

Քանի վոր Տիքեն աեղ համելու համար քայլել եր ամբողջ
նախորդ զիշերը և ամբողջ որը մինչև յերեկո, ուստի նրա քունը
տանում եր և նա հորանջում եր: Վերջապես նա քնեց նստած տե-
ղում՝ պարկը կողքին գրած:

Յեկ յերկու ծերուկները կըկին միևնույն ժամանակ մտածե-
ցին.—Ի՞նչ կլինի, յեթե առնենք նրա փողը քնած ժամանակի:

Յեկ պառավ մայրն եր, վոր առավ փողը շատ կամաց, մինչ
հայրը նայում եր. հետո յերկուսն ել դուրս յեկան, գուռը փակելով՝
թուրս գալուց հետո, Զետեն ասաց.

— Յեթե զարթնի՝ հետ վերցնի փողը և փոքրիկը մահանա:

Նրանց թշվառ գլխում մի միտք եր տիրապետում և միայն
այդ: Ծերուկ զույգը սարսուաց այն մտքից, վոր իրենց ձեռքում
յեղած բժշկությունը կարող եր խլվել իրենցից:

Ծերունին չոր ճյուղերը դարսեց փոքր հյուղի դռան առաջ,
վոր նմանապես չոր ճյուղերից եր և վորտեղ քնում եր հյուրը—ու
կրոկ տվեց: Հետո փախան:

Հակառակ իրենց կամքին՝ վերադարձան տեսնելու համար, յերբ
արշալույսը ծագեց:

Այրված փայտի մի դեղ եր մնացել, վոր դեռ ծխում եր, և
այրված մի մարմին այդ սև խարույկի վրա:

Բայց ածխացած մարմինի վրա մի բան նրանց ուշագրությունը
գրավեց: Այստեղ, կրծքի վրա շղթայով վղին կապված յերեսում եր
Տիքեյի թալիսմանը.

Տիքէն, Տիքէն, իրենց զավակը: Յերկու ծերուկներն ընկան գետնի վրա մարդու հոգի կսկծեցնելու աստիճան հեկեկալով, հանկարծ մի անգամ ևս միենույն ժամանակ հիշելով, վոր ոստարականն արդարե Տիքեյի ձայնն ուներ: Գետնի վրա տարածված մնացին յերկար ժամանակ, սպասելով այս ամենի վախճանին:

Յեկ ողի մեջ լսեցին կայծակի նման ուժեղ, բարձր մի ձայն: Ռադիո-բարձրախոս եր, վոր խոսում եր:

Յեկ այն, ինչ վոր լսում եյին նրանք, այն վոր միենույն ժամանակ տարածվում եր ամբողջ աշխարհում, այն, ինչ վոր ասվում եր այդ յերկու խղճուկ սեամորթ բեկորներին,—ֆրանսիայի դադութների մինիստրներից մեկի ճառի մի կտորն եր:

...Այն բոլոր տեղերում, վորտեղ մուտք ե գործում ֆրանսիան, իր հետ ժողովուրդներին բերում ե վոչ միայն քաղաքակրթության բարիքներ, այլ և իր յեղբարական սերը և հոգատարությունը...

— Համեմատեցեք այս պատմվածքը Մուլթադուլա «Սայիդ և աղինտա» պատմվածքի հետ:

— Ի՞նչն ե ըսդհանուր յեկ ի՞նչն ե տարբեր այս պատմվածքներում:

— Վո՞ր պատմվածքն ե ավելի զեղեցիկ յեկ սրտառուց:

— Ի՞նչո՞ւ:

ԶԵԿ ԼՈՆԴՈՆ

Չ Ի Ն Ա Գ Ո

Ահ Զոն Փրանսերեն չեր հասկանում: Նա նստած եր լեփլեցուն դատական դահլիճում, չափազանց հոգնած ու ընկճված, լսում եր չդպրող և բամբ Փրանսերենը վորով խոսում եր մերթ մի աստիճանավորը և մերթ՝ մյուսը: Ահ Զոյի համար այս բոլորը շաղակրատություն եր և նա զարմանում եր Փրանսիացիների հիմարության, վորոնք այդքան յերկար ժամանակ եյին վասնում Զունդ Գայի սպանողին զտնելու և չեյին զտնում նրան: Պլանտացիայի վրա աշխատող 500 կուլիները դիտեյին, վոր Ահ Սանն եր կատարել սպանությունը և ահա Ահ Սանը մինչեւ անդամ չեր ձերբակալված: Ճիշտ ե, վոր բոլոր կուլիներն ել գաղտնաբար համաձայնվել եյին մեկ մրուսի մասին վկայություններ չտալ և դրանից հետո շատ պարզ եր, Փրանսիացիները պետք ե կարողանալին հայտնաբերել, վոր Ահ Սանն եր սպանողը: Նրանք շատ ապուշ եյին—այդ Փրանսիացիները:

Ահ Զոն վոչինչ չեր արել, վոր վախենար: Նա չեր մասնակցել

սպանության: Ճշմարիտ ե, նա ներկա յեր յեղել դրան, և Սկիմըը, պլանտացիայի վերահսկիչը, աճապարել եր գեպի բարակները և բըռնել եր նրան այնտեղ՝ ուրիշ 4 կամ 5 կուլիների հետ, բայց հետո ինչ: Զունդ Գայ միայն յերկու հարված եր կերել, բանականությունն ասում եր, վոր 4 կամ 5 մարդ չեյին կարող վերքի յերկու հարված առաջացնել: Ամենաշատը՝ յեթե մի մարդ միայն մի անգամ եր հարվածել, ուրեմն միայն յերկու մարդ եյին արել այդ:

Ալպես եր պատճառաբանում Ահ Զոն, յերբ նա, իր չորս ընկերների հետ միասին, ստել, կոծկել, շփոթեցրել եր դատարանի իր ցուցմունքներում տեղի ունեցածի մասին: Նրանք լսել եյին սպանության ձայները, և Սկիմըը նման, վաղել եյին դեպքի վայըը: Նրանք Սկիմըը առաջ եյին տեղ հասել—այսքան: Հինգ մարդ չեյին կարող իրենց գլուխները վրա տալ յերկու դանակի վերքի համար: Բացի գրանից՝ վոչ մի ոտարական սատանա սպանությունը չեր տեսել: Սակայն այդ Փրանսիացիներն այնքան հիմար են:

Բայց Ահ Զոն ամեն բան չեր հասկանում: Անգլիական Ընկերությունը, վորի սեփականությունն եր պլանտացիան, մեծ ծախսերով Տահիտի*): Եր բերել 500 կուլիներ: Բաժնետերերը աղմկում եյին դիվիդենաների համար և ընկերությունը գեռես վոչինչ չեր վճարել ուստի ընկերությունը չեր ուզում, վոր իր թանկ պայմանագրի: Այս դատավճիռը պետք ե տրվել: Դատավորությունը շուտով վերջանալու յեր:

Նա կարող եր տեսնել այդ: Այլևս վոչ մի վկայություն, վոչ ել լեզուների շաղակրատություն: Ֆրանսիացի սատանաներն ել հոգնել եյին և ըստ յերեսույթին սպասում եյին դատավճիռին: Ահ Զոն, սպասելիս, հիշեց իր կյանքի այն որերը, յերբ պայմանագիրն ստորագրեց և նավ նստեց գեղի Տահիտի: Ապրուստը ծանր եր նրա ծովափնյա զյուղում և յերբ նա պարմանավորվեց աշխատելու հինգ տարի հարավային Ջրերում որեկան մեքսիկան 50 սենտով, նա իրան բաղդավոր համարեց: Իր գյուղում կային մարդիկ, վորոնք տաժանակիր աշխատանք եյին կատարում տարին մեքսիկան տաս դոլարով, և կային կանայք, վոր ցանցեր եյին շինում ամբողջ տարին մոտ հինգ դոլարով, մինչդեռ խանութպանների տներում կա-

*): Ֆրանսիային պատկանող մի խումբ կղզիներից ամենամեծը և ամենակարևորը:

յին աղախիններ, վորոնք իրենց ծառայության համար ստանում ելին տարին չորս դոլար: Յեկ ահա ինքը պետք է ստանար 50 սենտ որական, մի որվա համար, միայն մի որվա համար ինքը պետք է ստանար այդ արքայական գումարը: Շատ ել գործը ծանր եր: Հինգ տարին լրանալիս՝ նա պետք է վերադառնար տուն—պայմանագրում կար այդ—և ել չպետք է աշխատեր: Նա պիտի հարուստ լիներ մինչև կյանքի վերջը, մի բնակարան՝ բոլորովին իր սեփականությունը, կին և յերեխաներ, վորոնք պետք է մեծանային և հարգեյին իրան: Այս, և տան յետեռում պիտի ունենար մի փոքրիկ պարտեզ, մի վայր խորհրդածության և անդորրի, շուրջը բարձր պարիսպ, վորպեսզի չվրդովեն խորհրդածությունը և անդորրը:

Նա արգեն աշխատել եր 5 տարվա 3 տարին: Արգեն հարուստ մարդ եր շնորհիվ իր վաստակի և միայն յերկու տարվա անջրպետ կար Տահիտիի բամբակի պլանտացիայի և խորհրդածության ու անդորրի միջև, վոր սպասում եյին իրեն: Բայց ահա փող եր կորցնում, վորովհետեւ Չունդ Գայի սպանության տարաբախտ պատահարին ներկա յեր յեղել: Նա բանտում նստել եր յերեք շաբաթ և այդ որերին կորցրել եր 50 սենտ որը: Սակայն դատավճիռը շուտով պետք է տրվեր և նա պիտի վերադառնար աշխատանքի:

Ահ Զո՞ն 22 տարեկան եր: Նա յերջանիկ եր և ուներ բարի բնավորություն: Մինչդեռ նրա մարմինը նիհար եր ասիացունման, դեմքը կլոր եր, կլոր՝ ինչպես լուսինը, դեմքը ճառադայթում եր մի ազնիվ հաճություն և վոգու քաղցր բարություն, մի բան, վոր անսովոր եր նրա յերկրացիների մեջ: Նրա արտաքին տեսքը համապատասխանում եր ներքինին: Նա յերբեք նեղություն չեր պատճառել, չեր մասնակցել շուլուխների: Թուղթ չեր խաղում: Նրա հոգին պետք յեղած կոպտությունը չուներ, այս կոպտությունը, վոր թուղթ խաղացողի հոգուն և հատուկ: Նա բավարարվում եր փոքրիկ բաներով և պարզ հաճույքներով: Անշատկությունը և խաղաղությունը զով որում, բամբակի դաշտի կիզիչ աշխատանքից հետո, նրան անսահման բավականություն եյին տալիս: Նա կարող եր նըստել ժամեր և դիտել մի մենավոր ծաղկի և փելիսոփայել կյանքի առեղծվածների մասին: Մի կապույտ ճայ ափազոտ ծովեզը վրա, մի թուզող ձկի արծաթյա ծողփյունը, կամ դիմացի ծովալուում մի մարգարտյա ծաղկի և մի վարդի մարումը կարող եյին մոռացնել նրան գառն որերի անցուղարձը և Սկիմըրի ծանր խարազանը:

Սկիմըրը, կարլ Սկիմըրը մի գաղան եր, գաղանային մի գաղան: Բայց նա վաստակում եր իր ոռծիկը: Նա զուրս եր քաշում

500 ստրուկների ուժի վերջին մասնիկը, վորովհետեւ նրանք ստրուկ եյին մինչև տարիների պայմանը վերջանար. Սկիմըրը ճգնում եր այդ 500 քրտնաշաղախ մարմիններից քամել ուժը և վերածել արտածելու պատրաստ բամբակի հակերի: Նրա տիրական, յերկաթյա, առաջնակարգ գաղանությունն եր, վոր նարավորությունն եր տալիս նրան ստեղծելու այդ վերածումը: Ապա, նրան աջակցում եր մի հաստ կաշվե գոտի, յերեք մատնաչափ լայնությամբ, վորով նա միշտ ման եր գալիս և վորը, առիթը յեթե ներկայանար, կարող եր իջնել կուացած կուլիի մերկ քամակին ատրճանակի հարվածինման: Այդ հարվածները հաճախակի եյին, յերբ Սկիմըրը ձիով ման եր գալիս ակոսված դաշտերում:

Մի անգամ, պայմանագրված աշխատանքի առաջին տարվա սկիզբին, նա սպանել եր մի կուլիի իր բոռնցքի մի հատիկ հարվածով: Նա մարդու գլուխը չեր փշրել ձվի կճեպի նման, բայց հարվածը գլխի միջինը փշացնելու չափ բավարար եր յեղել, և, մի շաբաթ հիվանդ պառկելուց հետո, մարդը մեռել եր: Բայց չինացիները չեյին բողոքել ֆրանսիացի սատանաներին, վորոնք իշխում եյին Տահիտի կղզուն: Դա նրանց գործն եր: Սկիմըրը նրանց պրոբլեմն եր: Իրենք պետք և խուսափեյին նրա ցասումից, ինչպես խուսափում եյին կարիճներից, վորոնք թագնվում եյին խոտի մեջ կամ սողոսկում եյին ննջարանները անձրևոտ գիշերներին: Զինագոնները—այնպես եյին կոչում կուլիներին թուլամորթ կղզեցիները—զգուշանում եյին, վոր Սկիմըրին տհաճություն չպատճառեն: Սա հավասար եր տաժանակիր աշխատանքի դատապարտվելուն: Սկիմըրի բոռնցքի հարվածը Ըսկերության արժեք հազարավոր դոլարներ, բայց Սկիմըրին վոչ վոք չփորձեց նեղություն պատճառել:

Սկիմըրը և նրա ահուելի բոռնցքը ինչ եյին վոր: Մեռավ Զինագոն: Հետո՞: Նա միայն մի չինադո յեր: Բայց գրանից, նա մեռավ արևահարությունից, ինչպես բժշկությունն եր վկայում: Ճշմարիտն այն եր, վոր Տահիտի կղզու ամբողջ պատմության ընթացքում վհչ վոք արևահարությունից չեր մեռել: Բայց դա յեր, վոր այս չինագոյի մահը յեղակի յեր դարձում: Բժիշկն այդքանն ասել եր տեղեկագրի մեջ: Նա շատ անաչառ եր: Դիվիդենդները պետք և վճարվեյին, այլապես մի ձախողանք ևս պետք և ավելանար Տահիտի կղզում տեղի ունեցած ձախողանքների յերկար պատմության վրա:

Այս սպիտակ սատանաները վոչինչ չեն հասկանում: Ահ Զո՞ն կշռադատում եր նրանց անքննելիությունը, յերբ նստած դատական գահիճում սպասում եր դատավճիռն: Չեր կարելի ասել, թե ինչ եր կատարվում նրանց մտքերի յետեռում: Նա միայն սպիտակ սա-

տանաներից մի քանիսին եր տեսել: Բոլորն ել իրար նման եյին—ովիցերները և նավաստիները նավի վրա, քրանսիացի աստիճանաւորները, մի քանի սպիտակ մարդիկ պլանացիայում՝ Սկիմըն ել մեջը հաշված: Նրանց մտքերը շարժվում եյին խորհրդավոր կերպով, չեր կարելի զլխի ընկնել: Նրանք բարկանում եյին առանց հայտնի պատճառի և նրանց բարկությունը միշտ վասնգավոր եր: Այդպիսի ժամանակ նրանք վայրի գագանների նման եյին: Նրանք մտահոգվում եյին փոքրիկ բաներով, բայց յեթե պատեհությունը ներկայանար՝ մինչև անգամ չինաղոյից ավելի շատ եյին աշխատում: Նրանք ժուժկալ չեյին, ինչպես չինագոներն եյին ժուժկալ, վորկրամոլ եյին, ուտում եյին անառակորեն: Չինագոն չեր իմանում յերբեք, թե վորեւ բան յերբ կհաճոյացներ նրանց և յերբ բարկության փոթորիկ կրարձրացներ: Ինչ դուր յեկավ մի անգամ, մյուս անգամ կարող եր ցաման պայթում առաջացնել: Սպիտակ սատանաների աչքերի յետև վարագույր կար, վորը քողարկում եր նրանց մտքերը չինագոյի հայացքից, սպիտակ մարդիկ տարորինակ եյին ու հրաշալի, և նրանք ստանաներ եյին:

Ահ Զոն զարմանում եր, թե դատավճռի կազմելը ինչու այդքան յերկար ե տեսում: Դատի տակ յեղողներից վոչ մեկը ձեռք չեր բարձրացրել Զունդ Գայի վրա: Ահ Սանը մենակ եր սպանել նրան: Ահ Սանն եր արել այդ: Զունդ Գայի վիզը դարձրել եր յետ՝ մի ձեռքով նրա մազի պոչից բռնելով և մյուս ձեռքով, յետեկց, դանակը կոխելով նրա մարմնի մեջ: Յերկու անգամ եր խրել: Այնտեղ, դատական դահլիճում, փակ աչքերով, Ահ Զոն նորից տեսավ սպանության գործողությունը վեճը, լամբարդ բառերը, վոր փոխանուկիում եյին, կեղտ և նախատինքը, վոր ուղարկվում եյին հարդելի նախնիքներին, հայոյանքներ գեռես չծնված սերունդներին, Ահ Սանի ցատկելը, Զունդ Գայի մազի պոչի բռնումը, դանակը, վոր յերկու անգամ ընկղմվեց նրա մարմնի մեջ, դռան հանկարծակի բացվելը, Սկիմըրի ներս խուժումը, դռան խորտակումը և Ահ Սանի փախչելը, Սկիմըրի թոչող կաշվեգոտիս, վորը մնացյաներին քշեց անկյունը և ատրճանակի կրակելը, իբրև սիդնալ, վորը Սկիմըրին ոգնության հասցրեց: Ահ Զոն դողում եր, յերբ այս բոլորն ապրում եր նորից: Գոտու մի հարվածը, վոր իջել եր նրա յերեսին՝ մորթի մի մասը կորզել եր: Սկիմըրը մատնանշել եր դեմքի նշանները, յերբ վկայության նստարանի վրա, ինքնորոշեց Ահ Զոյին: Հենց հիմա եր, վոր այդ նշանները այլևս տեսանելի չեյին: Հարվածը յեղել եր կենտրոնից կես մատնաշափ հեռու և կարող եր աչքը հանել: Այս բոլորից հետո՝ Ահ Զոն մոռացավ բոլոր պատահածը, յերբ մի տե-

սիլքում տեսավ խորհրդածության և անդորրի պարտեզը, վորը պիտի իրը լիներ, յերբ վերադառնար իր սեփական յերկիրը:

Նա նստած եր անվշտակիր դեմքով, յերբ դատարանը հաղորդում եր դատավճիռը: Իր 4 ընկերակիցների դեմքերը նույնպես անվշտակիր եյին: Յեվ նրանք մնացին անվշտակիր մինչև թարգմանը բացատրեց, վոր հինգն ել հանցավոր են ճանաչված Զունդ Գայի սպանության մեջ և վոր Ահ Զոուն պետք ե գլուխը տա, իսկ Ահ Զոն պետք ե նստի բանտում 20 տարի, Ուռնդ Լին՝ 12 տարի, և Ահ Տոնդը՝ 10 տարի: Կարիք չկար հուզվելու այդ մասին: Մինչև անգամ Ահ Զոուն մնաց անտարբեր, սառն, ինչպես մումիա, թեև նրա գլուխն եր, վոր պիտի կրաքեր: Դատավորն ավելացրեց մի քանի խոսք և թարգմանը բացատրեց—վորովհետեւ Ահ Զոույի դեմքը ամենախիստ կերպով չանդրված եր Սկիմըրի խարազանով հարվածից, ուրեմն անպայման նա յեր սպանողը և քանի վոր մեկը պետք ե մեռներ՝ հենց նա թող լինի արդ մարդը: Նա շեշտեց նաև ապահամանըրը, վոր Ահ Զոյի դեմքը նույնպես խիստ կերպով չանդրված եր, ուրեմն յեզրակացությունն այն եր, վոր նա յել ներկա յեր յեղել սպանության և նրա անկասկածելի մասնակցությունը արժանացնում ե նրան 20 տարվա պատժական ծառայության: Ահ Տոնդի 10 տարին և յուրաքանչյուր վճռի համեմատական պատճառաբանությունը ևս բացատրվեց: Թող չինագոները խորը դաս վերցնեն արդ բոլորից, ասաց դատավորը վերջապես, վորովհետեւ չինագոները պետք ե սովորեն, վոր որենքը պետք ե գործադրվի մինչև անգամ յեթե յերկինքները վուլ գան:

Հինդ չինագոներն ել տարվեցին բանտ: Նրանք վոչ հանկարծակիի յեկան և վոչ ել վշտացան: Դատավճիռները ինչքան ել վոր անակնկալ եյին, բայց նրանք սովորել եյին դրան սպիտակ սատանաների հետ գործ ունենալիս: Այդ սատանաներից չինագոն միշտ ակնկալում եր ավելի բան անակնկալը: Իրենց չգործած վոճրի համար ծանր պատիժը ավելի տարորինակ չեր, քան այն անհամար տարորինակ բաները, վոր սպիտակ սատանաներն անում եյին: Հատարակող շաբաթների լնթացքում Ահ Զոն հաճախ մտածում եր Ահ Զոույի մասին թեթև հետաքրքրականությամբ: Նրա գլուխը պետք ե կարվի այն գիւղիսանի միջոցով, վորը կառուցված ե պլանտացիայի վրա: Նրա համար չպետք ե գոյություն ունենան ծերանալու տարիներ, վոչ ել անդորրության պարտեզներ: Ահ Զոն փիլիսոփայում եր կյանքի և մահվան մասին: Գալով իրեն՝ նա չեր վրդովվելը Քոսան տարին պարզապես քսան տարի յեւ: Այդքանով միայն իր պարտեզը հեռացավ իրենից—և այսքան: Նա յերիտասարդ եր և

իր վոսկորներում ուներ Ասիայի համբերատարությունը: Նա կարող էր սպասել այդ քսան տարին և այդ ժամանակաշրջանում իր արյան կը ակները պիտի նվազեցին և ավելի հարմար պիտի լիներ ինքը խաղաղ վայելքի պարտեզին: Նա մտածեց դրան մի անուն տալ և կոչեց այն Առավոտյան Խաղաղության Պարտեզ: Այդ մտածումով նա ամբողջ որը յերջանիկ զգաց իրան: Նա ծխում եր լավ, ուսում լավ, քնում լավ և չեր մտահոգվում ժամանակի դանդաղ ընթացքի համար:

Կրուշոն մի ժանդարմ եր: Նա անց եր կացրել 20 տարվա ծառայություն գաղութներում—Նեղերայից և Սենեգալից մինչեւ Հարավային Զերը, և այդ քսան տարին մազաչա և չեցին պայծառացրել նրա բութ միտքը: Նա այնքան տափակ եր և հիմար, վորքան իր գեղջուկ որերին՝ ֆրանսիայի հարավում: Նա գիտեր կարդապահության և իշխանության վախը: Աստծուց մինչև ժանդարմների սերժանտը միակ տարբերությունը նրա համար իր հայտնաբերած հնագանդության սորվական չափն եր: Ճիշտն ասած՝ սերժանտը նրա մտքում ավելի յեր զանգվածանում, քան աստված, բացի կիրակի որերից, յերբ աստծո թարգմանները իրենց ասելիքներն ունեյին: Սովորաբար աստված շատ եր հեռու, մինչդեռ սերժանտը ընդհանրապես շատ մոտ եր:

Կրուշոն եր, վոր դատավորից որդեր ստացավ բանտապահի վրա վորով հրամայվում եր այդ պաշտոնակատարին, կրուշոյին հանձնել Ահ Զոռու անձնավորությունը: Յեվ, պատահեց, վոր դատավորը նախորդ գիշերը ֆրանսիական մարտանավի ոփիցերներին և կապիտանին ճաշ եր տվել: Նրա ճեռքը գողում եր, յերբ դրեց որդերը և աչքերը ցավում եյին այնպես աղեկարշ կերպով, վոր որդերը կրկին չկարդաց: Վոչինչ, մի չինագոյի կյանք եր, վոր դուրս եր գրում վերջիվերջո: Այնպես վոր գլխի չընկավ, թե զանց եր առել Ահ Զոռոյի անվան վերջին տառը: Որդերը կարգացվում եր «Ահ Զո» և, յերբ կրուշոն ներկայացրեց որդերը՝ բանտապահը հանձնեց նրան Ահ Զո անձնավորությունը: Կրուշոն վերցրեց այդ մարդուն նստեցրեց, իր կողքին, վագոնի վրա, յերկու ջորիները յետեր, և քշեց:

Ահ Զոն ուրախ եր, վոր դուրսը, արեի շողերի տակ և: Նա նստեց ժանդարմի կողքին և հափշտակվեց: Նա հափշտակվեց ավելի քան յերբեք, յերբ զլսի ընկավ, վոր ջորիները գնում եյին հարավ՝ դեպի Ատիմառնս: Անտարակույս Սկիմըրը իր յետվից մարդ եր ուղարկել վերադարձնելու իրան: Սկիմըրը ուղում ե յերեի, վոր նա աշխատի: Շատ լավ, նա լավ պիտի աշխատի: Սկիմըրը յերբեք

պատճառ չպիտի ունենա գժգոհելու: Տաք որ եր: Զորիները քըրտնեցին, կրուշոն քրանեց: Ի Ահ Զոն քրանեց: Բայց Ահ Զոն եր, վոր ջերմությունը տանում եր նվազագույն անհանդստությամբ: Նա յերեք տարի տաժանակիր աշխատել եր պլանտացիայում այդ արեկի տակ: Նա հափշտակվում եր, հափշտակվում եր այնպիսի անկեղծ վողերությամբ, վոր մինչև անդամ կրուշոյի ծանր միտքը զարմանքով սթափվեց:

— Դու շատ զարմանալի յես,—ասաց նա վերջապես:

Ահ Զոն հավանությամբ գլուխը շարժեց և ավելի հափշտակվեց: Կրուշոն խոսեց նրա հետ կանկալի^{*)}: բառբառով և այս բառը, ինչպես բոլոր չինագոնները և ոտարյերկրացիները, Ահ Զոն ևս հասկանում եր:

— Դու շատ ես ծիծաղում,—ասաց,—մարդու սիրու այսպիսի որը պետք ե արցունքով լցվի:

— Յես ուրախ եմ, վոր բանտից դուրս յեկա:

— Այդքան, —ժանդարմը թափ տվեց իր ուսերը:

— Դա բավական չե՞:

— Ուրեմն դու ուրախ ես, վոր գլուխդ պետք ե կորվի: Ահ Զոն զարմանքով նրան նայեց և ասաց:

— Հը, յես ահա զնում եմ յետ գեպի Ատիմառնո աշխատելու պլանտացիայում Սկիմըրի համար, դու ինձ Ատիմառնո չե՞ս տանում:

Կրուշոն ձեռքը բեխին տարափ: «Լավ, լավ», ասաց վերջիվերջո, ջորու քամակին մտրակի մի հարված իջեցնելով, «ուրեմն չես իմանում»:

— Ի՞նչ:—Ահ Զոն սկսում եր ինչ-վոր տարտամ վախ զգալ:— Սկիմըրը ել չի ուզելու, վոր իր համար աշխատեմ:

— Այսորվանից՝ վհչ,—կրուշոն հրհուաց սրտագին: Լավ կատակ յեր:— Տեսնում ես, վոր կարող չես լինելու այսորվանից աշխատել: Գլուխը կարգած մարդը չի կարող աշխատել. հը: Նա մշտեղ չի նազոյին և ծիծաղեց:

Ահ Զոն պահեց լոռություն, մինչդեռ ջորիները վազեցին մի տաք մղոն: Հետո խոսեց:

— «Սկիմըրը կտրելու յիմ կլուխը»

Կրուշոն տտամերը ցույց տալով ծիծաղեց և զլուխը թափ տվեց:

— Թյուրիմացություն ե,—ասաց Ահ Զոն մոայլ, յես այն չի նազոն չեմ, վորի զլուխը պետք ե կտրել, յես Ահ Զոն եմ: Հարգելի

^{*)} Հավայան և Սանդվիչյան կղղիների բնիկները:

դատավորը վորոշել ե, վոր յես մնամ 20 տարի նյու կալեդոնիայում:

Ժանդարմը հրհուաց: Լավ կատակ եր, այս ապարորինակ չինակոն փորձում ե խաբել գիլիոտինին: Զորիները քայլեցին մի շազանակի պուրակից և կես մղոն ել կայծափայլ ծովի կողքից, նախքան Ահ Զոն խոսեց նորից.

— Ասում եմ յես Ահ Զոուն չեմ: Հարգելի դատավորը չասաց, վոր իմ գլուխը պետք ե կտրվի:

Մի վախենա,—ասաց կրուշոն իր բանտարկյալին, նրա դրությունը ավելի հեշտացնելու բարեգործական մտադրությամբ,—այդ ձեռվ մեռնելը դժվար չե:—Նա իրար խփեց իր մասները:—Արագ ե, այ այսպես: Թուկի ծայրից կախվելու, վոտով խփելու և հինգ րոպեյի չափ գրիմաներ անելու պես չե: Նման ե կացինով վառյակ սպանելուն: Կկարես գլուխը, պրծանվ: Մարդու գլխի կարեն ել այդպես ե: Փոնտֆ... վերջացավ: Զի ցավացնի: Մինչև անդամ չես կարծում, վոր կցավացնի: Չես մտածի: Քո գլուխն արգեն գնացած կարծում, վոր կցավացնի: Չես մտածի: Քո գլուխն արգեն գնացած կլինի, այնպես վոր չես կարող մտածել: Շատ լավ ե: Դա այն ձեն ե, վորով յես ուզում եմ մեռնել՝ արագ, ո՞հ, արագ: Դու բաղդավոր ես, վոր այդպես ես մեռնում: Դու կարող ես բորոտություն վոր ես, վոր այդպես ես մեռնում: Դու կարող ես բաղդավոր, ամեն անդամ մի մտա, կամաց-կամաց բթամատը, նաև վոտի մատները: Յես գիտեմ մի մարդ, վոր տաք ջրից այրվեց: Մեռնելը յերկու որ տվեց: Դու կարող եյիր նրա վոռնոցը լսել մի կիլոմետր հեռվից: Բայց դժու: Ահ, այն էյիր նրա վոռնոցը լսել մի կիլոմետր հեռվից: Բայց դժու: Ահ, այն հեշտ: Կլիք... դանակը վիզդ կտրում ե այդպես: Պրծանվ: Դաշնակը մինչև անդամ խուտուտ կտա, ո՞վ ե իմանում: Այդ ձեռվ մեռնողը յերեք յետ չի յեկել, վոր պատմի:

— Բայց ասում եմ, վոր յես Ահ Զոն եմ, յես չեմ ուզում, վոր գլուխս կտրեն:

Կրուշոն խոժուեց: Զինագոն իր տիմարությունը շատ հեռու յեր տանում:

— Յես Ահ Զոուն չեմ, սկսեց Ահ Զոն:

— Բավական ե, — ընդմիջեց ժանդարմը: Նա ուսոցրեց իր թերը և ճգնեց խիստ յերենալ:

— Ասում եմ յես չեմ, — սկսեց Ահ Զոն նորից:

— Սուս, — գոռաց կրուշոն:

Դրանից հետո նրանք քշեցին վագոնը լուս: 20 մղոն եր Պալիիտելից մինչև Ատիմառնո և հեռավորության կեսը անցել եյին, յերբ չինագոն նորից համարձակվեց խոսել:

— Յես ձեզ տեսա դատական դահլիճում, յերբ հարգելի դա-

տավորը մեր հանցանքի մասին քննություն եր կատարում: Շատ լավ, և զու հիշում ես, վոր Ահ Զոուն, վորի գլուխը պետք ե կը-տրվի, հիշում ես, վոր նա—Ահ Զոուն—յերկարահասակ մարդ եր, ինձ նայիր:

Նա վեր կացավ հանկարծ և կրուշոն տեսավ, վոր նա կարձա-հասակ մարդ ե: Յեկ հենց վոր կրուշոն պատկերացրեց Ահ Զոույին հիշողությամբ, Ահ Զոուն այդ պատկերացման մեջ յերկարահասակ եր: Ժանդարմի աչքին բոլոր չինագոններն ել իրար նման եյին: Մի դեմքը սման եր մյուսին: Բայց յերկարահասակության և կարձա-հասակության միջև կարող եր զանազանություն մտցնել և սա ի-մացավ, վոր կողքին նստողը այլ մարդ եր: Նա ձիգ տվեց ջորինե-րին շփոթված, այնպես, վոր փայտը տնկվեց նրանց դեմ՝ վերբար-ձրացնելով ոձիկները:

— Տեսնում ես, վոր թյուրիմացություն ե,—ասաց Ահ Զոն հաճելի կերպով ժպատակով:

Բայց կրուշոն մտածում եր: Արդեն զգաց, վոր կանգնեցրել և վագոնը: Նա իրազեկ չեր դատավորի սխալին և վոչ մի ճանապարհ չուներ գրանից զուրս գալու, բայց նա գիտեր, վոր այս չինացոն և հանճնվել իրան Ատիմառնո տանելու: Ի՞նչ փույժ թե սխալ ե հանճնվել իրան և պետք ե նրա գլուխը կտրելին: Վերջիվերջո մի չինագոն յե և ի՞նչ արժի մի չինագոն վերջիվերջո: Բայցի զրանից՝ կարող ե պատահել, վոր թյուրիմացություն ել չե: Նա հո չեր իմա-նում, թե ինչ ե կատարվում նրանց մտքում: Նրանք իրենց գործը զիտեյին: Ի՞նքն ով եր, վոր նրանց մտածումն ինքը աներ: Մի ան-գամ, շատ ժամանակ առաջ, նա փորձել եր նրանց համար մտածել և սերժանան ասել եր՝ «Կրուշոն, գու հիմար ես, վորքան շուտ զի-տենաս այդ, այնքան շուտ զործդ զլուխ կըերես: Դու մտածելու համար չես ստեղծված, զու պետք ե հնագանդվես և թողնես մտա-ծելն ավելի լավերին»: Այս վերհիշումից զգաստացավ: Նաև յեթե վերագանար Պալիիտե, պիտի ուշացներ մահապատիճն Ատիմառնո-յում և յեթե վերագանալում սխալվեր՝ սերժանտից պիտի ստա-նար հանդիմանություն: Յեկ, ավելին, հանդիմանություն պիտի ստանար նաև Պալիիտեյում:

Նա խփեց ջորիներին մտրակով և քշեց առաջ: Նայեց ժամա-ցույցին: Արդեն իսկ կես ժամ ուշանալու եր և սերժանալու կարող եր բարկացած լինել: Արագացրեց ջորիներին: Վորքան Ահ Զոն պըն-զեց սխալը բացատրելու, այնքան համառ դարձավ կրուշոն: Այդ զիտակցությունը, վոր սխալ մարդ եր տանում՝ նրա բնագործությունը չլավացրեց: Այն զիտակցությունը, վոր սխալը իրը չեր՝

ամրապնդեց նրան այն հավատքում, վոր գործվող սխալը ճիշտ եր: Վորպեսզի սերժանտի տհաճության չենթարկվի, կրուշն պատրաստ եր կամովին մի դյուժին սխալ չինազոների մահվան դատապարտելու:

Գալով Ահ Զոյին՝ յերբ ժանդարմը գլխին տվեց մտրակի կոթով և զուզուցով հրամայեց սուս կենալ, վոչինչ չեր մնում անելու, յեթե վոչ սուս կենալ: Յերկար ճամբրդությունը շարունակեցին լուս:

Այսպես ժամանակը սահեց, մինչև վոր հասան Ատիմառնո և ջորիները քայլեցին մինչև կառափնատի ստորոտը, վորի ստվերի տակ կանգնած եր անհամբեր սերժանտը: Ահ Զոյին աճապարհեցրին կառափնատի սանդուխներից վեր: Ներքեռում, մի կողմի վրա, նա տեսավ պլանտացիայի 500 կուլիներին հավաքված այնտեղ: Սկիմը վորոշել եր, վոր գեպքը պետք ե մի լավ առարկայտկան դաս լինի և դրա համար կանչել եր կուլիներին դաշտից և ստիպել նրանց ներկա լինելու:

Հենց վոր տեսան Ահ Զոյին, սկսեցին մըթմըթալ ցած ձախով իրանց մեջ: Նրանք տեսան սխալը, բայց լուցին: Անմեկնելի սպիտակ սատանաները անտարակույս փոխել եյին իրենց միտքը: Փոխանակ մի անմեղ մարդու կյանքը կորցելու, նրանք կորցում եյին մի ուրիշ անմեղ մարդու կյանքը: Ահ Զոու կամ Ահ Զո—ինչ տարբերություն: Նրանք յերբեք չեյին կարող հասկանալ սպիտակ շներին ավելի, քան սպիտակ շները կարող եյին հասկանալ իրանց: Ահ Զոյի գլուխը պետք ե կտրվեր և իրենք, յերբ մնացած յերկու տարիա ծառայության պայմանադիրը վերջանար, սիտի վերադառնային Զինաստան:

Սկիմը գիլիոտինն ինքն եր շինել: Նա ամեն բան կարող եր շինել, թեև յերբեք դիլիոտին չեր տեսել: Ֆրանսիայի աստիճանավորները նրան միայն պրինցիպն եյին բացատրել: Նրա թելազրությամբն եր, վոր մահապատիժը տեղի պիտի ունենար Ստիմառնում փոխանակ Պապիտեյի: Վոճրի վայրը Սկիմը պատճառաբանությամբ, պատժի լավագույն վայրն եր և, ավելին, դա պիտի ունենար վողջունելի ազգեցություն պլանտացիայում աշխատող 500 կուլիների վրա: Սկիմը ցանկացել եր կամովին զահիճի գերն ստանձնել և, իբրև այդպիսին, նա կառափնատի վրա յեր և փորձում եր շինած գործիքը: Մի բանանի ծառ, մարդու վզի չափով և գիմաղրությամբ, պառկած եր գիլիոտինի տակ: Ահ Զոն դիտում եր կախարդված աչքերով: Գերմանացին, զարձնելով մի փոքրիկ պտուտակ, բարձրացնում եր դանակը իր դարսած փոքրիկ հորիզո-

ական փայտի գաղաթին: Մի ցնցում թոկի հաստ կտորի վրա՝ բացն եր թողնում դանակը, վորը ընկնում եր փալֆլելով՝ մաքուր կտրելով բանանի բունը:

— Ինչպես ե գործում, — հարցրեց սերժանտը՝ բարձրանալով կառափնատի վրա:

— Շատ գեղեցիկ, — ցնծաղին պատասխանեց Սկիմը ը, — ահա վասիկ ցույց տամ ձեզ:

Նորից գարձրեց պտուտակը, վորը բարձրացրեց դանակը, ցընցեց թոկը և բաց թողեց դանակը շառաչյունով կակուղ ծառի վրա: Բայց այս անգամ ^{2/3}-ից ավելի չգնաց:

Սերժանտը կիտեց հոնքերը. «Դա գործ չի տեսնի», ասաց: Սկիմը սրբեց քրտինքն իր ճակատից:

— Ծանրություն ե հարկավոր, — հայտարարեց նա: Քայլելով կառափնատի յեզրը, պատվիրեց յերկաթագործին 25 ֆունտանոց յերկաթի մի կտոր: Յերբ նա կուցավ յերկաթը դանակին լայն յեղրին տմրացնելու համար՝ Ահ Զոն նայեց սերժանտին և տեսավ իր պատեհությունը:

— Հարգելի գատավորը ասաց, վոր Ահ Զոուի գլուխը պետք է կտրվի, — սկսեց նա:

Սերժանտը գլուխը թափ տվեց անհամբեր: Նա մտածում եր 15 մղոն ճանապարհորդության մասին, վոր առաջն եր այդ կեսորից հետո, գեղի կզզու քամու կողմը, Բերտեյի մասին, Լաֆիերի գեղեցիկ գատեր մասին, մարգարտավաճառի մասին, վոր սպասում եր իրան այս բոլորից հետո:

— Յես Ահ Զոուն չեմ, յես Ահ Զոն եմ: Հարգելի բանտապետը սխալ ե արել: Ահ Զոու յերկարահասակ մարդ ե և դուք տեսնում եք յես կարձահասակ եմ:

Սերժանտը նայեց նրան արագորեն տեսավ թյուրիմացությունը.

— Սկիմը՝ ը, — կանչեց հրամայողականորեն, — արի այստեղ:

Սկիմը տնքած բայց մնաց իր գործի վրա, մինչև վոր յերկաթի կտորն ընկավ՝ իրան բավարարելով:

— Քո չինագոն պատրմաստ ե, — հարցրեց սերժանտը:

— Տես, — պատասխանեց Սկիմը ցույց տալով Ահ Զոյին:

— Դա յե չինագոն:

Սկիմը ապշեց: Մի քանի վարկան խիստ հայնոյեց և նայեց դիմացի բանին, վորն ինքն իր ձեռքով եր շինել և անձկությամբ սպասում եր, վոր գործի:

Ի՞նձ նայեցեք, — ասաց վերջապես, — մենք չենք կարող հետաձգել այս գործը, յես արդեն այդ 500 չինագոներից յերեք ժամկու-

աշխատանք կորցրել եմ, յես չեմ կարող այդ բոլորը նորից կորցնել իսկական մարդը բերելու համար։ Ներկայացումը թող կատարվի յեղածին պես։ Վո՞չինչ, չինազո յե։

Սերժանտը հիշեց յերկար ճանապարհորդությունը, մարդարտավաճառի դուստրին և վիճեց ինքն իր հետ։

— Նրանք պետք ե մեղադրեն կրուշոյին, յեթե բացվի խնդիրը, բայց շատ փոքրիկ հսարաւորություն կա բացվելու, Ահ Զոռուն խընդիրը չի հարուցի, ինչ ել վոր լինի։

— Մեղադրը կրուշոն չե վերջիվերջո, — ասաց սերժանտը — անպայման բանտապետի սխալն ե։

— Ուրեմն շարունակենք, չեն կարող մեղադրել, ով կարող է զանազանել մի չինագոն ուրիշ չինագոյից։ Մենք կարող ենք ասել, վոր մենք պարզապես կատարել ենք հրահանդներն այն չինագոյի վրա, վոր մեղ հանձնված եր։ Բայցի դրանից, յես իսկապես չեմ կարող այս բոլոր կուլիներին դուրս բերել իրենց աշխատանքից յերկրորդ անգամ։

Նրանք ֆրանսերեն եյին խոսում, Ահ Զո՞ն, վոր մի բառ անդամ չեր հասկանում, այսուամենայնիվ դիտեր, վոր վորոշում եյին իր ճակատագիրը։ Նա դիտեր նաև, վոր վորոշումը կախված է սերժանտից և նա կախ եր ընկել այդ աստիճանավորի շրթունքներից։

— Շատ լավ, հայտարարեց սերժանտը, շարունակենք, վոչինչ, չինագո յե։

— Յես նորից եմ փորձելու, վստահ լինելու համար։

Սկիմը շարժեց բանանի բունը դեպի առաջ, դանակի տակը։ Սկիմը ցնցեց թոկը և դանակը հարվածեց շառաչյունով, մաքուր կորելով ծառը։

— Գեղեցիկ, — բացականչեց սերժանտը, դադար առնելով պապիրոսը վառելու չափ, — գեղեցիկ, իմ բարեկամս։

Սկիմը դուր յեկավ գովասանքը։

— Արի, Ահ Զոռու, — ասաց նա տահիայան բարեառով։

— Բայց յես Ահ Զոռուն չեմ, սկսեց Ահ Զո՞ն։

— Սուս, — սաստեց, — յեթե նորից բաց անես բերանդ, դլուխդ կջարդեմ։

Վերահսկիչը սպառնաց նրան բոռնցքով և նա լոեց։ Ի՞նչ ողուտ բողոքելուց, Այդ ոտարյերկրացի սատանաները միշտ իրենց ճանապարհը ունեն, նա թույլ տվեց իրեն ընկնելու ուղղածիդ տախտակին, վոր իր չափով եր։ Սկիմը ձգեց ողակները — այնքան ձգեց, վոր կաշին մտավ մարմնի մեջ և ցավացրեց։ Բայց Ահ Զո՞ն չբողոքեց։ Ցավը յերկար չպիտի տեսեր։ Նա զգաց, վոր տախտակը

յերերիվում ե ողում և փակեց աչքերը։ Յեկ այդ վայրկյանին նա նշանարեց խորհրդածության և անդորրի իր պարտեզը։ Նրան թվաց, վոր նստել ե պարտիզում։ Մի զով քամի ե փշում ե զանգերը ծառերում մեղմագին զողանջում եյին։ Նուե, թռչուններն անքուն աղմուկ եյին բարձրացնում և պարսպի յետեկից գալիս եր զյուղի կյանքի մեղմացած ձայնը։

Այն ժամանակ զգաց, վոր տախտակը հանգչեց և մկանալին ձնշումից և ձգումից նա հասկացավ, վոր պառկած է կոնսալին։ Նա բաց արավ աչքերը։ Ուղիղ վերեւում նա տեսավ կախված դանաւրությունը, և նշանարեց, վոր Սկիմը հանգույցներից մեկը դուրս եր պրծել։ Այն ժամանակ լսեց սերժանտի հրամանի խիստ ձայնը։ Ահ Զո՞ն փակեց աչքերն աճապարանքով։ Նա չուզեց, վոր դանակի իջնելը տեսնի։ Բայց նա այդ զգաց — մի մեծ ուացիկ ակնթարթ։ Յեկ նա այդ ակնթարթում հիշեց կրուշոյին և այն, վոր նա ասաց։ Բայց կրուշոն սխալ եր։ Դանակը խուտտուտ չտվեց։ Այդքանը միայն իմացավ գիտակցությունը կորցնելուց առաջ։

— Բնորոշեցեք Ահ Զոյին, իբրեւ գաղութային ստրկացած բանվորի։ Ինչի՞ հետեւվանք եյին նրա հոգեբանության պասսիվ գծերը։ — Ինչո՞ւ նրա ընկերները չբողոքեցին կատարվող անորինության դեմ։

— Բնորոշեցեք Կրուշոյին յեկ սերժանտին։ — Սրանց հասկացողությունները, հոգեբանությունը, վերաբերմունքը դեպի կուլիները յեկ այն։

ԶԵԿԱՎԵ ԿՐՈՒՆԿԸ

ՅԵՐԿԱՎԵ ԿՐՈՒՆԿԸ

I

Մի յերեկո յես անցկացրի «Գիտության բարեկամներ»-ի ակումբում *): Այստեղ հավաքվում եր կավիտալիստ դասակարգի իսկական սերուցքը։ Կողմնակի մարդկանց այստեղ ներս չեյին թողնում։ Ակումբի վարչությունը հոգում եր, վոր վիճաբանությունների մանրամասնությունները թերթերում չտպվեն։ Այդ պատճառվ այստեղ կարելի յեր լիովին անկեղծ խոսել, և գրանից ողավում եյին շատերը։

— Զեր հայրը «Գիտության բարեկամներ» ակումբի անդամ ե, և դուք, հասկանալի յե, մուտք ունեք այստեղ, — ասաց երնեստը։

*) Պատճառվ հեղափոխական բանվորների պարագլուխ երնեստի կինն է։

Յերեքաբթի յերեկոյան յեկեք այնտեղ: Խոստանում եմ, վոր դուք կորցրած ժամանակի համար չեք զղջալ: Յես կաշխատեմ կյանքի տերերի ախտավոր կողմը շոշափել: Յես կստիպեմ նրանց գայլերի նման ատամները կրծոել: Յես կսպառնամ նրանց քսակին, և դա կսթափեցնի նրանց այնուես, վոր նրանք իրենց իսկական բնությունը յերեան հանեն: Դուք կտեսնեք գեղեցիկ կոստյումներով քարանձավների մարդկանց, վորոնք կովում են վոսկրի համար: Նրանք ինձ կանչել են՝ կտոր-կտոր անելու համար: Այդ միտքը պատկանում է ակումբի հիմնադիր տիկին Բրենդվորին: Նա խոստացել է նրանց համար խեղկատակության յերեկո սարքել, ինչպես սովորաբար անելիս ե յեղել հրավիրելով բանավեճի պարզամիտ և անվտանգ ու փորմիստներին. տիկին բրենդվուդը համոզված է, վոր յես բոնված եմ հորթի վոգեվորությամբ և բութ եմ կովի նման: Նա փորձում եր ճանաչել ինձ, և իմ անմեղությունը հիացմունք պատճառեց նրան:

Ակումբի նիստը բացվեց նշանակված ժամին: Ընդարձակ ընդունաբանում շարված ելին բազկաթուաների շարքեր, ուր նստած ելին մոտավորապես զիտության յերկու հարյուր անդամ, վորոնք յեկել ելին լսելու Երնեստին: Նրանց մեծ մասը մեր յերկրի ամբողջ քաղաքական և արդյունաբերական կյանքի դեկավարներն ելին:

Մենք արդեն բոնել ելինք մեր տեղերը, յերբ տիկին Բրենդվուդը ներս բերեց Երնեստին: Նա հագել եր գեղեցիկ սև կոստյում, վոր նրան շատ եր սազում: Սակայն նրա բոլոր շարժումների մեջ նկատվում եր վոչ զիտավորյալ ամաչկոտություն: Հոչակավոր փաստաբան Վան-Ժիլբերտը, ժողովի նախագահ, վեր կացավ և միքանի խոսքերով, վոր կրում ելին թեթև ծաղրանքի բնույթ, Երնեստին ներկայացրեց ունկնդիրներին: Այդ Վան-Ժիլբերտը, վոր հայտնի եր իր հուետորությամբ և լավ ծանոթ եր որենքներին, սոցիալական ու ֆորմատորներին և բանվոր դասակարգի դեկավարներին, հարուստ մարդկանց ներկայացնելու ձեր շատ լավ զիտեր:

Ունկնդիրները միշտ ժպտում ելին: Դրանից բարկացած՝ յես նայեցի Երնեստին, և նրա տեսքը ինձ ավելի զայրացրեց: Նա նըստել եր համեստ բութ և անտարբեր: Մի վայրկյան ինձ թված նույնիսկ, վոր նա ամաչում ե այնքան ուժ և հարստություն ունեցող այդ հասարակությունից:

Վան-Ժիլբերտը վերջացրեց: Երնեստը վերկացավ և ոկսեց խոսել: Նա խոսում եր կամաց, զսպված: Նա պատմեց իր՝ բանվորական ընտանիքում ծնվելու, այն խղճուկ պայմանների մտախն, ուր հոգին և մարմինը չեր կարող զարգանալ ինչպես հարկն ե:

Նա խոսեց իր տեսչերի ու իդեալների մասին, վորոնք ընդհարուման մեջ ելին այն դրախտի հետ, ուր ապրում են վերին դասակարգերը: Նա ասաց.

— Մի ինչ-վոր տեղում, վերևում,—յես ալդպես եյի մտածում,—վորպես թե կան մաքուր, աղնիվ մտքեր, տիրում ե խիզախ մտավոր կյանք: Տեղեկություններ, վորոնք քաղեցի բուլվարային այն բոմաններից, վորոնց մեջ, յեթե չաշենք ստոր և թափառաշնիկ մարդկանց, բոլոր գործող անձինք գեղեցիկ են մտածում, խոսում են հրաշալի լեզվով և վեմ գործեր են կատարում:

Հետո նա պատմեց իր գործարանային կյանքից և հեղափոխական բանվորների մասին:

Այս վերջինների մեջ նա գտավ հանգուգն և փայլուն գլուխներ:

— Հեղափոխությունների մեջ յես ձեռք բերի ուժեղ հավատգեպի ապագայի նոր մարդկությունը, կրակոտ իդեալիզմ, ինքնազության սեր:

Այս բառերն արտասանելիս, կարծես, նա բոլորովին կերպարանափոխվեց: Նրա դեմքից շողեր ելին տարածվում: Սակայն հասարակություննը մնաց անտարբեր:

Հարուստ Փաբրիկանտ Ուիկսոնը, վոր ինձանից հեռու չեր նըստած, կիսաճայն արտասանեց.

— Ուտոպիստ:

Այժմ Երնեստն անցավ իր կյանքի այն արջանին, յերբ, բարձրանալով հասարակական սանդուղքով, նա կապեր հաստատեց վերին գասակարգերի հետ:

Հուսախաբությունը կատարվեց անմիջապես, և բոլոր հրապույրները ցնդեցին ինչպես մուխ:

Նա խոսում եր կտրուկ և այնպիսի բառերով, վոր ունկնդիրներին չեր կարող գուր գալ: Նա ասեց, վոր զարմացել և այդ ձահճի ստորությունից: Նա տեսել ե հրեշտային ինքնասիրություն, ամենից ավելի գարմացրել ե նրան անկախ մտավոր կյանքի կատարյալ բացակայությունը: Հեղափոխությունների հետ ունեցած հարաբերություններից աղնվացած՝ նա զզվանք և զզացել դեպի տիրող դասակարգերի հոգեկան թմրությունը:

Տիրող դասակարգերի ներկայացուցիչները շատ ելին ցնդաբանում զանազան փոքրիկ իդեալների մասին և սիրում ելին մանր բարոյական ճշմարտությունների մասին աղմկել. սակայն, իրոք, նըրանք բոլորը համոզված նյութապաշտներ ելին՝ բառիս ամենավատ մտքով և իսկական բարոյականության մասին վոչ մի գաղափար չունելին:

— Յես գիտեմ մարդկանց, — ասաց նա, — վորոնք հիշում եյին Քրիստոսին ամեն հարմար դեպքում, բայց միևնույն ժամանակ հրացաններ եյին տալիս վարձու պահապանների ձեռքը, գործադուլավորների վրա կրակելու համար:

— Յես գիտեմ մարդկանց, վորոնք ցիրկի ըմբշամարտը համարում եյին չափազանց կոպիտ, անարգ տեսարան և վորոնք, սակայն, նույն ժամանակ մասնակցում եյին կենսական մթերքները խարդախելու դործում, վորի հետեանքով յուրաքանչյուր տարի մեռնում են ավելի շատ յերեխաններ, քան թե ինքը Հերովդեսը կարողանար մորթել:

— Յես պատահել եմ շքեղ հազնված պարոնների, վորոնք հովանավորելով գիտությունն ու գեղարվեստը և զոհելով մեծ դումարներ՝ քրիստոնեյությունը քարոզելու վայրենիների մեջ, քամում եյին սոված բանվորների քրտինքը, քաղաքական գործիչներին կաշառում եյին, խաբեբայությամբ զբաղվում դատարաններում և ավագակաբար սեփականացնում ուրիշների աշխատանքը:

Երնեստը յերկար խոսեց այդ մասին, վառ գույներով նկարագրեց այն զգվանքը, վոր տիրեց իրեն, յերբ մոռափից ծանոթացավ հարուստ դաստկարգին: Բայց նրա թունավոր ճառը ներկա յեղողների վրա քիչ տալափորություն թողեց:

— Իսկ այժմ թույլ տվեք խոսք ասել ապադա հեղափոխության մասին, — արտասանեց Երնեստը:

Նա սկսեց փաստեր տալ պրոլետարիատի հեղափոխական բանակի և զանազան յերկրներում յեղած հեղափոխական մասսաների թվի մասին:

Այստեղ առաջին անգամ ժողովականներս անհանգստություն զգացին: Դեմքերը լրջացան, և վոմանք անհամբերությունից կրծում եյին շրթունքները: Իսկ հոետորը խոսեց նաև կովի միջոցների մասին և ունկնդիրներին ծանոթացրեց հեղափոխական բանվորների միջազգային կազմակերպության հետ, վոր Միացյալ Նահանգներում և զանազան յերկրներում քսան և յերեք միլիոն հինգ հարյուր հազար մարդ ունի:

— Նման բանակը, — գոռաց նա, — պետք ե վոր ստիպի տիրողներին մտածել: Մեր նշանաբանն ե — կորչի աղքատությունը: Մենք ցանկանում ենք վերջնել մեր ձեռքը պետական իշխանությունը և մարդկության բախտը: Կիլենք ձեզնից մեր ուժը, ձեր պալատները, ձեր շքեղ փարթամությունը: Գնացեք և հայ վաստակեցեք ձեր ճակատի քրտինքով: Փորձով իմացեք, թե ինչպես են ապրում տանջած բանվորները քաղաքում և գյուղացիք՝ արտերում:

Այս ասելով նա ցնցեց իր կորովի ձեռքերը: Նա սպառնալից եր, ինչպես իր շղթաները խորտակող աշխատանքի մարմացումն: Կանանց դեմքն ընդունեց վախի արտահայտություն: Բայց այս ժողովին ներկա տղամարդիկ գործնական մարդիկ եյին և վոչ ծույլ վատնողներ:

Նրանք նույնպես պայքարել գիտեյին հարկավոր դեպքում: Բարձրացավ թեթև աղմուկը, բայց շուտով խաղաղվեց: Սա կենդանական կատաղի բառաչումի առաջին նախալուրն եր, վորով պիտի վերջանար այդ յերեկոն: Յեկ այդ ննջունների ժամանակ, վոր նման եյին իրար կրծուառ շների հաջոցին, յես ակամա ցնցվեցի: Վոչ, այս մարդիկ առանց պայքարի չեն զիջի աշխարհի վրա ունեցած իրենց իշխանությունը:

Իսկ Երնեստը շարունակում եր խոսել և նրանց խոցոտում եր բառերով մուրճի նման: Այլև նկարագրելով բանվոր դաստկարգի տնտեսական կյանքը կարգավորելու ներկա անընդունակ դեկավարներին, նա բացականչեց:

— Ձեր զեկավարությունը բանի պետք չե: Դուք խեղդում եք քաղաքակրթությունը: Դուք կույր եք և աղան: Դուք քնացը եք ձեր խիզճը գթության և հեղության խաբերա իդեալներով: Դուք պայթելու չափ կուշտ եք իշխանությունով ու հարստությունով և հղվացած: Բայց ձեզ կվիճակի ձրիակեր մեղուների բախտը, վորոնց բանվոր մեղուները սպանում են մեղրաբջիջների մոտ: Դուք ապացուցեցիք ձեր անպետքությունը և պետք ե տապալվեք: Միլիոնավոր բանվորները հայտարարում են ձեզ, վոր նրանք մտադիր են իրենց շուրջը համախմբել բոլոր բանվորներին և աշխատավորներին և իշխանությունը խլել ձեր ձեռքից: Հենց սա յե սոցիալիստական հեղափոխությունու, պարոններ: Կանգնեցրեք այն. յեթե կարող եք:

Նա լոեց, և միքանի վարկյան տիրեց կատարյալ լուսություն:

Աւլա լսվեց խուլ աղմուկ. հանկարծ քսանի չափ մարդիկ տեղից վեր թուան խոսք պահանջելով: Նրանց դեմքը կարմրել եր հուզմունքից, նրանք կատաղությունից թափ եյին տալիս բոռւնցքները: Պետք ե ասել, վոր բոլոր ներկա յեղողները, նախագահը, Վան-Ժիլ-Բերդից սկսած, կատաղել եյին: Նա խոսեց տուաջինը, մոռանալով իր կոչումը և վոչ վորի թույլ չտվեց արտահայտվելու: Բայց դա նոչակավոր փաստաբանի ճառ չեր, ճարտասանության բոլոր որենքներով: Վոչ, դա չարացած գոռգուսոց և հայնոյանքների մի տարափ եր Երնեստի հասցեյին: Ամբոխը վայրենի հրհոցով արտահայտեց իր հրձվանքը:

Բայց Երնեստը բոլորովին չկորցրեց իր սառնարյունությունը և իր հրաշալի կարճ պատասխանով կատարելապես ջախջախեց սահմարձակ փաստաբանին: Յես հրաժարվում եմ տալ վիճաբանությունների հետազա ճիշտ պատկերը: Տեսարանն իսկապես հրաշալի յեր: Բայց վորքան տաքանում եյին հակառակորդները, այնքան ավելի հանգիստ եր Երնեստը:

Նա ուներ խոշոր ու բազմատեսակ տեղեկություններ, սուր և ճկուն, ինչպես թուր:

Նա իր դեմ դուրս յեկողներին հողին հավասարեցրեց: Նրանց կատաղությունը ավելի և ուժեղացավ:

Վիճաբանությունների վերջում խոսեց կապիտալիստ Ռոբերտոնը: Միայն նա պահպանեց կատարյալ հասպատություն, և Երնեստը, հակառակ դեպի մյուսներն ունեցած իր վերաբերմունքին, դեպի նա հարգանքով վերաբերվեց:

— Կարիք չկա պասխանելու, — ասաց Ռոբերտոնը ինչ-վոր մտածելուությամբ, — յես ձեր վեճին հետեւցի զարմանքով և նույնիսկ զզվանքով: Ինձ զզվանք ներչնչեցիք դուք, իմ դասակարգի պարունայք ներկայացուցիչներ: Դուք ձեզ պահեցիք ինչպես հիմար աշակերտներ: Դուք շատ բառեր վատնեցիք, բայց այդ բոլորը բզզոց եր հիշեցնում: Դուք բզզում եյիք այնպես, ինչպես մոծակները արջի շուրջը: Պարուներ, ահա արջը, — նա ցույց տվեց Երնեստին, — և ձեր բզզոցը նրան շատ քիչ վախեցրեց: Հավատացեք ինձ, դրությունը լուրջ ե: Այս արջը իր թաթը մեզ ցույց տվեց: Նա ասաց, վոր Միացիալ Նահանգներում կան մեկ ու կես միլիոն հեղափոխականներ: Դա փաստ ե: Նա ասաց, վոր նրանք մտադիր են խլել մեզնից մեր իշխանությունը, մեր պալատները և մեր հարստությունները: Սա յել փաստ ե: Այս, մեծ հեղաշրջումը անխուսափելի յե, բայց պիտի հուսանք, վոր հաջողումը կլինի վոչ թե այն ուղղությամբ, վորպիսին ցանկալի յե դասախոսին:

— Արջը ցանկանում ե մեզ հաղթել: Ապա յեթե մենք հաղթենք արջին:

Խուլ մանշյունը նորից անցավ դահլիճի միջով: Բոլորը հավանությամբ գլուխները շարժեցին: Դեմքերն ընդունեցին կատաղի արտահայտություն:

— Բայց վոչ թե բզզոցով պիտի հաղթենք արջին, — սառը և առանց կրքության շարունակեց Ռոբերտոնը: մենք խոսքեր չենք վատնի: Մեր պատասխանը արճիճը կլինի: Իշխանությունը մեր ձեռքըն ե, վորը բաց չենք թողնի:

Այստեղ նա դարձավ Երնեստին և շարունակեց ցայտուն:

— Ահա մեր պատասխանը: Մենք չենք ցանկանում զուր խոսքեր վատնել: Յերբ դուք կպարզեք ձեր ուժեղ ձեռքերը դեպի պաւատանքը կատարությունը, ինչպես վոր պարձենալով հավատացնում եք, այն ժամանակ մեր ձեզ ձեղ ցույց կտանք, թե վարն ե խոկական ուժը: Գնդակների սուլոցը և թնդանոթների վորոտը կլինեն մեր պատասխանը:

Մենք ձեզ հեղափոխականներիդ կտրորենք մեր կրունկներով և ձեր դիակներիդ վրայով կբայլենք: Աշխարհը մեզ է պատկանում, մենք նրա տերը և մտադիր ենք այդպիսին ել մնալ: Իսկ ինչ վերաբերում է աշխատանքի բանակին՝ բոլոր ժամանակներում նա թափալվում է կեղափի մեջ: Յես պատմությունը բավականին լավ գիտեմ: Յեզ նա կեղեւի մեջ կմնա այնքան ժամանակ, վորքան յես, մերսնք բոլորը և նրանք վորոնք մեզանից հետո պիտի գան, իշխանությունն իրենց ձեռքում կպահեն: Ահա խոկական խոսքը, բոլոր խոսքերի պատկերը: Վոչ աստված, վոչ մամոնա, այլ ուժ: Զեր բառարանից դուրս ձգեցեք այդ բառը, վորովհետև դա ձեր բերանում մի գատարկ սպանալիք ե:

— Յես վերջապես ստացա իմ պատասխանը, — հանգիստ հակամառեց Երնեստը, — այդ ձեր միակ պատասխանն ե, վոր դուք կարող եյիք տալ: Ռուժ: Հենց ուժի նշանակության մասին ե, վոր մենք ասում ենք բանվոր դասակարգին: Դառը փորձից մենք գիտենք, վոր ձշմարտության, իրավունքի ու մարդասիրության կոչերը ձեր գութը յերբեք չեն շարժել: Զեր սրտերն ել այնպես ամուր են, ինչպես և ձեր զենքերը, վորոնցից դուք կրակում եք աղքատների վրա: Ահա թե ինչու դուք քարոզում եք ուժը: Մեր պատասխանն ել արձիճը կլինի, — բացականչեց Երնեստը: Յերբ իր ժամանակին դուք հրաժարվեք իշխանությունը մեզ հանձնելու, այն ժամանակ մեր պատասխանը դուք կլսեք գնդակների սուլոցի և թնդանոթների վորոտի միջից: Զեզ համար փրկություն չկա: Ճիշտ ե, դուք պատմությունը լավ գիտեք: Ճիշտ ե նույնպես, վոր աշխատանքը պատմական ժամանակներից թափալվում է կեղափի մեջ: Յես համաձայն եմ ձեզ հետ: Բայց յեթե դուք հասկանաք պատմության իմաստը, ապա կտեսնեք, վոր ձեր վախճանը միանգամայն անխուսափելի յե: Կարևորն այն չե, թե դա տեղի կունենա մի տարի, կամ տասնյակ տարի հետո. ձեր դասակարգը տապալվելու յե ուժի ողնությամբ. Զեզ նման մենք կրկնում ենք այդ կտրուկ բառը, վոր անդադար հնչում ե մեր ականջին:

— Կեցցե ուժը:

Յեզ «Գիտության բարեկամներ» ակումբի յերեկոն այս անդամ գերջացավ մեծ աղմուկով:

... Հաջորդեցին դասակարգային պայքարի որերը...

Զիկագոյում անցկացրի յերեք որ և այդ ժամտնակ տեսա արդեն ամբոխի վոչնչացումը միայն և վիթխարի տների միջև յեղած մահաբեր կրակոցը: Ինչ վերաբերում ե մեր ընկերների հերոսական կռվին, այդ տեղի յեր ունենում ուրիշ տեղ—իմ դիտողության սահմաններից դուրս: Յես միայն լսում եյի ուումբերի և ականների պայթունը և տեսնում դրանից առաջ յեկած հրդեհների ծուխը: Սակայն ինձ հաջողվեց ականատես լինել ոդային կռվին և մեր ոդապարիկների հարձակմանը՝ թշնամու ամբությունների վրա: Այդ տեղի ունեցավ ապստամբության յերկրորդ որը: Յերեք ապստամբած զորագնդերն արդեն վոչնչացված եյին, և ֆորտերը դրավել եյին կապիտալիստների վարձկանները: Քամին մեղ ցանկալի ուղղությամբ եր փչում, և ահա ապստամբներով բռնված տներից մեկի վրա բարձրացավ առաջին ոդապարիկը: Մեր ընկերներից մեկը, դրանից առաջ, հնարել եր ամենաուժեղ պայթող ուումբը, և վորովհետեւ հեղափոխականների տրամադրության տակ չգտնվեց և վոչ մի կանոնավոր աերոպլան, ուստի ստիպված եյին ոդապործել հնաձև կանոնավոր անդամական, ուստի ստիպված եյին ոդապործել հնաձև վոր շատ անկատարելագործված գործիքներ եյին, բայց կատարեցին իրենց գերը: Առաջին ոդապարիկը թուավ ֆորտերից հեռու և աներեւութացավ հորիզոնի հետեւ:

Դրա վիճակի մասին հետապայում իմացանք: Նա արդեն պատրաստ եր իջնելու, յերբ պարզվեց, վոր գտնվում ե յերկաթուղու գծի մոտ զինվորական այն գնացքի վերևում, վորն արագությամբ Զիկագոյ յեր սլանում: Ռմբածիկ ընկերները նետել եյին իրենց ունեցած բոլոր ուումբերը լոկոմոտիվի վրա և քարուքանդ արել ձանապարհը վորի հետեւանքով յերկաթուղային հաղորդակցությունը դադարել եր շատ որեր:

Մյուս ոդապարիկի թոփչքն այնքան ել հաջող չեր: Նա շատ ցածր եր թոչում, և զինվորները գնդակահարել եյին նրան.

Ռմբածիկներն ել եյին վոչնչացել: Դրա փոխարեն յերբորդ ոդապարիկը մեծ հաջողություն ունեցավ: Ճիշտ ե, նա ել շատ բարձր չթըռավ, բայց բարեբախտաբար վոչվոքի չհաջողվեց գնդակահարել նըրան: Յես այժմ կենդանի կերպով պատկերացնում եմ այդ տեսաւրանը. հակայական գունդը բարձրանում եր ոդի մեջ, և նրանից կախված եր մի փոքրիկ մարդ: Յես չկարողացա ֆորտերը տեսնել, բայց տան կտուրից կոիվը դիտող ընկերներն ասում եյին, վոր գունդը հենց ֆորտերի վրայով եր սլանում:

Յես չնկատեցի, թե ինչպես ընկավ ոռումքը: Բայց իմ աչքերի առաջ գունդը արագ յերկինք սլացավ: Մի ակնթարթ անց ծուխի այուները յերկինք բարձրացան, և ապա լսվեց պայթյունի վորոտը: Ֆորտը քարուքանդ եր արված:

... Ամբոխը մոտ տասը քայլ հեռավորության վրա յեր գըտնը ըլքում, յերբ թնդանոթները վորոտալ սկսեցին: Վոչ մի բան չեր կարող դիմադրել այդ կրակի մրրկին: Ամբոխի հետին շարքերը սեղմում եյին, բայց առաջ ցանկվել արդեն վոչվոք չեր կարող:

Մի ակնթարթում մեռած դիակներից բլուրներ կազմվեցին: Մարդիկ ընկնում եյին ամբողջ շարքերով: Յերբեմն վիրավորները, վորոնց հաջողվում եր այդ սարսափելի ալիքների գագաթը յեներ, ցած եյին գլորվում և ընկնում ավտոմոբիլների անիմերի տակ: Զինվորները տեղնուտեղն սպանում եյին նրանց:

Այնուամենայնիվ մի անգամ տեսա, ինչպես մի տղամարդու հաջողվեց վոտքի յենել և ատամներով ֆաշիստ զինվորի կոկորդին մեխվել:

Ապա նրանք յերկուսով, թե զինվորը և թե կռվողը, գետին գլորվեցին:

... Կրակոցը վերջացավ: Ամբոխի գրոհը յետ եր մղված: Ավտոմոբիլներին հրաման տրվեց մարքել ձանապարհը: Բայց նրանք չկարողացան առաջ շարժվել դիակների այդ հակայական լեռների միջով: Զինվորները սկսեցին մեռածներին մի կողմ քաշել, այդ ժամանակ նրանց համար բոլորովին անսպասելի բան պատահեց: Մեր ընկերներից հարյուր հոգու հաջողվել եր, կտուրից կտուր անցնելով, համնել այն տեղը, վորի ներքեւ խիտ շարքերով կանգնած եյին բուրժուական զինվորները:

Յեվ ահա հասավ վրիժառության ժամը:

Վերեկից զինվորների գլխին ուումբերի մի ամբողջ տարափ վեց: Ավտոմոբիլները հրամանատարական կազմի հետ միասին ջարդուփուր յեղան: Քիչ հեռու մի ուրիշ տնից նրանց վրա նորից ուումբեր տեղացին: Ամբողջ փողոցը զինվորների դիակներով ծածկվեց:

Մենք, յես և մեր ընկերներից մեկը ձեռք-ձեռքի տված փախչում եյինք արյան լճեր կազմած փողոցներով, սայթաքելով ու ընկնելով, մինչև վոր մեջ հաջողվեց մի անկյուն համնել: Այստեղ կանգնեցինք, վոր շունչ քաշենք: Ամբոխը նորից դանդաղ շարժվում եր, մոտենում:

Այն ժամանակ մենք փախանք հակառակ ուղղությամբ: Այստեղ փողոցները դատարկ եյին ու խաղաղ, բայց ամեն մի քայլա-

փոխում սոսկալի անակնկալներ կարող եյին մեզ սպառնաբ՝ Հրեշտային հրդեհի բոցերը բանել եյին յերկնակամարի ամբողջ հարավային մասը։ Մենք գիտելինք, վոր բանվորական թաղամասերն են այրվում։ Յես ուժառալառ վայր ընկա: Խարտուենը, մեր ընկերը, փշրեց հարեան խանութի ապակին և ինձ ոգնեց ներս մտնել լուսամուտից։ Խանութը մտա թե չե, թուլացած ընկա... Դեռ մութ եր: Ապա յերը մոտեցա փողոց նայող լուսամուտին, հրդեհների փայլը այնքան վառ եր, վոր նրա լույսի տակ ազատ կարելի յեր կարդալ: Ինչ-վոր հարեան տեղից լսվում եր ձեռքով նետվող ոռոմքերի ճայթյուն և թնդանոթի վորոտ։

Ամբողջ յերկինքը պատած եր ծխի հսկայական ամպերով, վորոնց միջից յերեմն յերեռմ եյին կրակի լեզուներ։

Անողնական ծերեր ու պառավներ, հիվանդներ, թույլեր, հաշմանդամներ, բանվոր գասակարգի ամենադժբախտ անդամներին հըրդեհը փողոց եր քշել: Յես ել վոչինչ չեմ հիշում...

Միայն յերը աչքերս բացի, տեսա, վոր մեկը ինձ ամուր գըրկում եր: Իսկույն հասկացա, վոր Երնեստն եր գա, և յերկյուղով նայեցի նրա խանձութած մազերին: Բախտավոր պատահականությամբ նա գտել եր ինձ այստեղ։

Յեվ յերը կատարյալ ուշքի յեկա, Երնեստն ինձ ցած տարավ ու տեղափորեց շինության մեջտեղը գտնվող մի սենյակում։ Արտաեղ ես ւնեցի որվա ամբողջ յերկրորդ մասը և ամբողջ հետեւյալ գիշերը։ Յերրորդ որը նույնակես այստեղ անցկացրինք, իսկ չորրորդ որը Երնեստին հաջողվեց Զիկագոյից հեռանալ։

Փողոցներում կոփները շարունակվում եյին։ Միքամի թաղամասեր գեռ գտնվում եյին մեր ընկերների իշխանության տակ բայց նրանք շրջապատված եյին զինվորական մեծ խմբերով, և թաղամասերը վոչնչացան մեկը մյուսի յետեից։ Ապստամբությունը ճընշելու գործն անդադար շարունակվում եր: Վոչվոք գթություն չեր կարող հուսալ։

Բայց մի անգամ առիթ ունեցանք անցնելու բոլորովին քարուքանդ յեղած տեղով, վոր գանվում եր հեղափոխականների գրաված յերկու ուժեղ գիրքերի միջև: Կրակոցների ճայթյունը աջից ու ձախից լսելի յեր մեզ, յերը մեր ավտոմոբիլը ոլանում եր ծխացող ավերակների միջով։

Տեղ-տեղ փլածքներն այնպես կտրել եյին ճանապարհը, վոր ավտոմոբիլը մեծ գժվարությամբ եր ուղի հարթում իր համար։

Մենք քաղաքի արվարձանից արգեն հեռու եյինք, յերը ավտոմոբիլը գեմ առավ դիակների ալիքին։ Սա մի իսկական ալիք եր՝

ծովի կանգ առած ալիքի պես։ Հեշտ եր գլխի ընկնել, թե ինչ եր կատարվել այստեղ։ Հենց վոր ամբոխը ծովել և անկյունի այս կողմը, նրանք սկսել են հնձել թնդանոթներով։

Սակայն զինվորներն ել քիչ զոհ չեն տվել։

Հավանական ե, վոր զինվորների մեջ հաջող կերպով ոռոմքեր եյին նետված։ Զինվորներն ու հեղափոխականներն ընկած եյին խառնի-խուռն, այլանդակ ու անձանաչելի, փշրված ավտոմոբիլների և փչացած թնդանոթների միջև։

Միքիչ ելանց մենք գտնվում երինք կանաչ գաշտերում ու տեսնում ծխով պատած քաղաքը։ Ուշացած պայթյունների թնդյունը գեռ համում եր մեր ականջին։ Դեմքս Երնեստի կրծքի մեջ թագցրի և լուռ լաց յեղա խորտակված հեղափոխության համար։

Երնեստը քնքշորեն գրկեց ինձ։

— Մենք հաղբած ենք ժամանակավորապես, իմ քանգագին, բայց վոչ ընդմիջում։ — ասաց նա։ — Մենք մի ավելորդ դաս յեփս առան։ Վաղը հեղափոխություններ նորից կվերածնիվ՝ ավելի ուժեղ, ավելի փորձված յեվ ավելի կուռ-կարգապահ։

Նյու-Յորկ վերադառնալուց հետո, շաբաթներ անցած, մենք լիովին հասկացանք, թե վճրքան մեծ եր հեղափոխության կրած պարտությունը։ Շատ տեղերում բանկել եյին բանվորների ապստամբություններ, վորոնք անողոքաբար ճնշվել եյին։

Ամեն տեղ տակավին անհամար գնդակահարություններ եյին տեղի ունենում։ Լեռներն ու անապատները լի եյին փախստականներով։ Լրտեսները գտան մեր փախստատեղերից շատերը, վորոնք ապա քարուքանդ յեղան։ Մեր ընկերներից վոմանք հոգեպես բոլորվին ընկճվեցին։ Հուսահատության աստիճանին հասած՝ նրանք բռնեցին տերրորի ճանապարհը։ Նրանք հեշտությամբ զոհում եյին իրենց կյանքը և հաճախ անմիտ քաջությամբ խափանում մեր ապագա ծրագրները։

Յեվ այս սարսափների միջով սառնասիրտ առաջ եր ընթանում Յերկաթե կրունկը իր վարձկանների՝ գաղտնի վաստիկանության հետ։ Նա անխնա պատժում եր իր թշնամիներին և վոչ մի կորուստից չեր փախենում։ Սակայն, դրա հետ մեկտեղ, տեղի եր ունենում ուժերի համախմբումը՝ նոր հեղափոխության համար։

Պարտվելով մենք մտածում եյինք նոր հաղթակման յեվ նոր հաղթանակի մասին։

Յեվ այդ հաղթանակը հեռու չե...

— Կարելի՞ յե արդյոք Երնեստին համարել բանվոր դասակարգի շահերի արտահայտիչ։

— Ուտոպիկակա՞ն եյին արդյոք Երնեստի արտահայտած գաղափարները։

— Վերջնակա՞ն եր արդյոք բանվորների պարտությունը։

ԱԶԱՏ ՎՃՈՒՆԻ

ՎԵՐ ԿԱՅ, ՍԻՐԵԼԻ՛Ս

Յերեկ,
անապատումը մեր անսահման,
իմ ուղու,
իմ սիրելի,
պարանոցդ վեր պարզած,
ուզում եյիր Շեմս-արել համբուրել...

Յերեկ,
ոազիսումն ել-Սամի,
իմ սրտակից,
իմ մտերիմ,
յես ու դու
գիշերները
Յերկնքի փերուզատառ զիրքն եյինք կորդում:

Հիշում ես,
չե՞,
վոր յես
համբուրում ելի քեզ,
աչքերը քո,
իմ ընկեր,
իմ սիրելի:

Իմ աշխատանքի
ու ճամբարների ընկեր,
հիշում ես,
չե՞,
վոր քըտինք եյինք թափում յես ու դու,
ինձ ու քեզ
յեկ ամենքի համար...

Այսոր
Պարանոցդ վեր չես բռնում.
ինչու:

Այսոր
Յերթդ՝ մտամոլոր.
քայլերդ՝ դանդաղ. ինչու:

Այսոր,
իմ սիրելի,
կարոտ չես Շեմս-արեին.
ինչու:

Այսոր,
ով քեզ իւեց
ու բաժանեց ինձանից,
ինչու,
ինչու...

Պարանոցդ ծռած,
հայացքդ մոլոր ու մութ' ավագներին,
ում վոտքի հետքն ես վորոնում...

ինչու,
սիրելիս,
հայացքիդ մեջ թախիծ կա,
անաստղ գիշեր
ու բարկություն...

Ոտար վոտների հետքեցը կան
ավագների վրա...
հարազատներիդ արյան շիթեց կան
ավագների վրա...
Այս վար ոտարականն եր աղեղնավոր,
վոր վոտքը գրեց շեկ ավագների վրա...
Ու հարազատներիդ արյան շիթեց կան
ավագների վրա...

Մեր արևավառ անապատներում
ալսոր հեռավոր ծովերի խոնավություն կա
և վոռնոցը հեռավոր ցամաքների...

Մեր անապատներում ոտարականներ կան—
ծովերի հեռավոր ճամպաներով յիկած...
Յամաքից ցամաք են անցել նրանք,
ծովից ծով են անցել
ու յեկել—
ծովերից,

ուր ջրշուններն են լողում:
Ումեր անապատների բորենիներին միացած
մարմինդ հոշոտել են ուղում,
սիրելիս:

Այն ով եր,
վոր ծանը բեռ գրեց կոնակիդ:

Ի՞չ,
հիմա համբուլիս փոխարեն
ոտարնեցն են քեզ մտրակում,
սիրելիս:

Պարանոցիդ հպարտությունն ով կոտրեց:
ի՞նչ,
ոտարները քեզ գրաստ են կարծում...
Ասմա,
սիրելիս,
իմ քըտինքի,
պայքարի,
հրձվանքի
ու. ճամպաների ընկեր,
յի՞րը,
յի՞րը վերջապես
թաղես պիտի ավաղների տակ
ոտարների բեռները ծանր...
Յի՞րը,
յի՞րը վերջապես
պիտի կայծակի հայացքդ մութ...
յի՞րը,
յի՞րը վերջապես
պիտի սողան բորենիները հա-
յացքիդ առաջ...
Յի՞րը,
յի՞րը վերջապես
տեսնեմ պիտի
պարանոցդ արեին պարզած
քո հողմածուփ և շոգեկանչ անապատների մեջ...
Յի՞րը,
յի՞րը,
յի՞րը,
սիրելիս:

— Ով ե խսում այս բանաստեղծության մեջ,
— Ի՞նչ ե նա հասկանում «ուղտ» ասելով:
— Ովքե՞ր եյին այդ «ուղտին» հալածողները:
— Ի՞նչ իմաստ ունեն բանաստեղծության վերջին տեղերը:

— Ի՞նչպես ե զոված այս բանաստեղծությունը սովորական տաղա-
չափությա՞մբ, թե այլ:
— Կա՞ն արդյոք այս բանաստեղծության մեջ նյութին անհարա-
զատ պատկերներ:

ՌԱՄ ՌՅՅԸ

1

Ճանհայի փողոցում:
Ամառ:
Կեսոր:
Գործադուլ:
Ցույց ե:
Ցնցում:
Հնձում ե գնդացիրն եսոր
բանվորին,
գլուղացուն ըմբռստ...
Զարթնել ե կուլին չարքաշ՝
քնիցը գերող ու խոր:
Զինմաշինը հուր ե հիմի,
որերը—պայքար, ժխոր...
Զինը
չնչին չի հիմի
փշվող ու նուրբ չինի չի:
Զինը
հինը չի հիմի,
քնաբնը ու մեղկ զինի չի...
Ճանհայի փողոցումն եսոր
յեռում ե կյանքը բոցված:
Մոնչում ե առյուծը հզոր,
սիրտը խոր ու խոր խոցված...
Ճարժվում են շարքերը փողոցով:
Ծով ե փողոցը յերթով:
Փովել են զրոշներն ալ հուր:
Փողոցը թնդում ե յերգով...
— Յելիք.
ում կյանքը տանջանքով լի յե.
ու վոր կուլի յե—բանվոր,
մեքենավար,
նավաստի,
դարբին:
Հնձնլ,
առաջ,
առաջ,
առաջ:

2

Բանկերը Լոնդոնի, Տոկիոյի՝
եսոր գնդակով են խոսում:
Շանհայի փողոցումն եսոր
չիների արյունն ե հոսում...

Կանգնած հնդիկ զինվորներ հիսունմեկ՝
դեմ առ դեմ շարքերի անանց,
գնդակի յեն բոնում անխնա
ծերերին,
փոքրերին,
կանանց ..

Մի ջանել սպա սպիտակ,
յեկած Լոնդոնից հեռավոր,—
հրացան ե տալիս կտրուկ.
— Երակ, անդադար կը ակ:

3

Մեկը հիսունմեկ զինվորից—
Ռամ Ռոյլ՝ հնդիկ զինվոր,
հրացանը ձեռքին բռնած,
կանգնել ե մտածկոտ ու լուռ:

Յեկ հենց արդ դաժան ժամին
թռչում ե Շանհայից հեռու
խոհուն միտքը Ռամ Ռոյլ,
Ռամ Ռոյլ հոգին լեռնեն:—

Հե հեկ,
հեռավոր Հինդում,
Բիլուրի գալապում փոքրիկ՝
հայրենի գյուղն ե յերեսում,—
զյուղը աշխատող ու սոված:

Յեկ ահա
գյուղի վերեսում,
Գանգեսի ափին կպած
յեղեգնիա խրճիթը Ռամ Ռոյլ,—
տկլոր ֆաքիրի նման
իր բախտին
կամ մահվան սպասող...:

Ռամ Ռոյլ տեսնում ե կարծես,
կարծես տեսնում ե, —
ահա
չոր խսրի վրա պառկած

իր կինը
հյուծված ու հիվանդ:

Յերկու մանչուկներ մատղաշ
հստել են հեքոս մոր կողքին.
և լնչպես ուզեն,
լնչպես,
Մայրիկից մի պատառ չոր հաց:
Ամեն առավոտ-իրիկուն՝
կարոտով,
կոկիծով մանկական
հիշում են իրանց հորը — Ռամ Ռոյլն,
հիշում են,
կարոտում
ու լալիս,
ու հարց են տալիս անվերջ
մահամերձ և անճար մայրիկին.
— մայր,

մւր ե,
մւր ե հայրը մեր,
ինչի՞,
ել ինչի՞ չի դալիս...
Ե՞իս,
Ռամ Ռոյլ լնչպես չհիշի,—
թե քանի միստեր ու սիր
հինգը շինել են մի խսիր,
ու նստած քեզ են քաշում...

Յեսիր և հինգը հիմի,
շղթայված,
իր կյանքն ե մաշում...
Ե՞իս,
Ռամ Ռոյլ լնչպես չհիշի,—
թե քանի-քանի անգամ
զրել են զնդացիր մահաբեր
չարքաշ հին չինդի սրտին...:

Յեկ քանի բանվոր գյուղացի
ընկել են գնդակիցը խոցով
ու գեռ քանիսը կընկնեն՝
սրտերը վրեժի բոցով...:

Ռամ Ռոյլ,
հեկ,
հնդիկ զինվոր,
տերդ անաշխատ,

դաժան՝
լերկըումդք քեզ գերեց,
քեզ Շանհայ բերեց,
ինչի, —
յերբ չինի կանչը հնչի,
յերբ թնդա սիրտը ջինի,
զինի քեզ,
դահիճ շինի
ու հրաման.
— Առաջ,
կրակ...
Բամ Ռոյ,
հել,
հնդիկ զինվոր,
ինչ,
կրակես դու պիտի,
կրակես չարքաշ չիների սրաբն...

4

Թոչում են գնդակները կարկուտ
գեղի շարքերը չիների՝
չինմաշինը յերեք չի ների
սպանդն այդ դաժան և անգութ...
Զինմաշինը յերեք չի ների
դահճին դավադիր ու դաժան,
վոր ըմբոստ, չարքաշ չիների
արյունը թափեց փողոցում...
Գնդակները նորից են թոչում
ուղիղ:
Անվրեպ:
Համազարկ:
Շարքերը անզեն,
բայց պողպատ,
վհատում չկա,
չի լինի:
Ահա ուսանող մի ջահել՝
փովել և փոշումը, գետին.
քերում ե հողը արնաներկ
ու հոռում շնչովը հետին:
Հնկավ մի կուլի վերք առած,
գլխիցը արյուն և հոսում.
հայացքը հեռուները հառած,
ինչ-վոր գառանցում ե, խոսում»

Մի տաս տարեկան չին տղա,
կիսամերկ, բորիկ, նուշ աչքով,
սեղմած բռունցքները փոքրիկ,
կանգնել և բանվոր հոր կողքին:

Յեվ հանկարծ գնդակ մի բոցված
ծակեց խոր կուրծքը չին տղի.
ընկավ նա կրծքից խոցված,
ճշալով նվադ.
— Ա՛խ, հայրի ինկ:

Գալարվեց սիրտը Ռամ Ռոյի:
Ու թվաց նրան, վոր իրավ.
իր մանկիկն եր նա հարազատ—
ընկավ վիրավոր ու մեռավ:

Գալարվեց սիրտը Ռամ Ռոյի:
հիշեց հայրենիքն իր չինդ,—
պինդ շղթաներով շղթաված:

Հիշեց մանկիկներն իր անտեր,
վոր գուցե մհոնել են քաղցից:

Յեվ կամ հենց գուցեայդ ժամին
նրանք ել լնկան արնաքամ...

Գալարվեց սիրտը Ռամ Ռոյի:
Աչքիցը կաչեր և հորդում:

Կարծես այն փոքրիկ չին տղան
այնպես նման եր իր վորդուն...

Յեվ ահա սրտում Ռամ Ռոյի
ճշում և սուր ձայն մի ծանոթ,
կարծես իր մանկան ճիշն և այն.
— Ա՛խ, հայրի ինկ, ամոթքեզ, ամոթ...

Ռամ Ռոյը ցավիցը ցնցվեց,
ինչ-վոր մի բիրտ ձեռք առնական

պոկում և սիրտը տեղից:

Յեվ հանկարծ թափով վճռական
կանգնեց շարքերի գեմը սեգ.

ու կանչեց բարձր, բարձրականչ.

— հել,

հնդիկ զինվորներ,

ինձ լսեք,

լոեք,

յեղբայրներ իմ անգետ,

կանդ առեք,

ել մի կրակեք

Ճեր յեղբալըների վրա,
 Ճեր վորդիների, քույրերի,
 ու ճեր հայրերի վրա...

 Ահա կանգնել եմ յես անվախ,
 Կրծքաբաց կանգնել եմ ճեր առաջ.
 և յես կմեռնեմ անհառաչ,—
 թե վոր գնդակները ճեր թեժ
 խրվեն կրծքումս կարծրակուռ...

 ԶԵ,
 Կրակողը չեմ յես յերբեք
 չարքաշ չիների սրտին...
 Վրեժը մեր մահաբեր
 դողա թող սպան մեր դաժան...

 Թող մեր գնդակներն անվընեալ
 սուլեն
 և թռչեն
 ու խոցեն
 կրծքերը մեր բիրտ տերերի...

 ԶԵ,
 Կրակողը չեմ յես յերբեք
 չարքաշ չիների վրա...

 Շփոթ ե տերել շարքերին:
 Հիսուն զինվորները հնդիկ՝
 կանգնել են անշարժ ու մռայլ:

 Հնչեց հրամանը սպայի
 — գնդակել, պատրաստ, կրակ:
 Հիսուն զինվորները հնդիկ
 կանգնել են անշարժ ու մռայլ:

 Հրամանը նորից ու նորից.
 — լսմամ եք, պատրաստ, կրակ:

 Հիսուն զինվորները հնդիկ
 կանգնել են անշարժ ու մռայլ:
 Դողում ե ձայնը սպայի.
 — հե՞,
 գնաւք, —
 զինվորներ հնդկացի,
 հիշեցեք,
 Հինգում հեռավոր
 Ճեռքումս պատանդ եք թողել
 Ճեր հայրերը ծեր ու վորդիք...

Լսում եք,
 կրկնում եմ,
 կրակ:

 Պարզվեցին հրացանները հիսուն
 դեպի կուռ կուրծքը Ռամ Ռոյի,

 Հրամանը համառ վորոտաց:
 ու հրացաններից հիսուն
 սուլեց զիւ
 միայն
 հինգ
 գնդակ:

 Որորվեց Ռամ Ռոյը գունատ:
 Մահամերձ փովեց չոր գետնին:
 Դեմքին դողում ե դառն ժպիտ:

 Զեռքը պինդ սեղմած խոր վերքին,
 սողում ե առաջ ու առաջ՝
 դեպի շարքերը չիների:

 Սողում ե,
 հեռում
 ու նորից:

 Դողում ե,
 հեռում
 ու նորից:

 Շարքերի մոտը չիների,
 Փողոցի մեջտեղը ահա
 պառկել ե փոքրիկ չին տղան,—
 վոնց վոր մի ծաղիկ տրորված,
 և կյանքը սառել ե դեմքին:

 Յեզ ահա Ռամ Ռոյը հնդիկ
 զրկեց արնաքամ չին տղին,
 ինչպես իր վորդուն հարազատ:
 Կարծես շնչում ե կամաց.
 — յես ու դու ընկանքայս կովում,
 վոր չինը միշտ լինի ազատ...

 Ավելի հզոր ե հիմի
 թափը թնգացող շարքերի...
 Բյուր սրտեր ձուլված են իմի...
 Լսում եք ձայնը զարկերի...

 Ավելի խրոխտ ե հնչում
 հիմի կանչը զոռ չիների.

— Զինմաչինը լերբեք չի ների
դահիճին դավաղիր ու դաժան,
վոր քանի՛ չարքաշ չիների
արյունը թափեց փողոցում...

Ավելի խրոխտ ե հնչում
հիմի ռազմերդը չիների.
— Յելեք,
ում կյանքը տանջանքով լի յէ,
ով վոր կուլի՛ յե—բանվար,
մեքենավար,
նավաստի՛,
դարբին,
հնձնդ,
առաջ,
առաջ,
առաջ...

ինչպիս հայր՝ վորդի հարազատ,—
մամ մուլ՝ զինվորը հնդիկ,
ու տաս տարեկան չին տղան՝
գրկել են իրար անբաժան:

ՅԵՂ. ՉԱՐԵՆՅ

ԼԵՆԻՆՆ ՈՒ ԱԼԻՆ

1.

Սշխարհի կենտրոնը — Մոսկովի ե:
Մոսկովը Մեկկայից ել հին ե:
Մոսկովից մեծ քաղաք — չի ը:
— Քանի վոր Մոսկովի միջին
ապրում ե ինքը
Լենինը:
Այ, Մոսկովում հենց եղ
ապրում ե արևադաշ Լենինը:
Նա, վոր մեծ ե, վոնց վոր ամենամեծ
լալիֆ:
Սակայն ենպես խալիֆ,
վոր հասկանում ե միշտ ֆուխարայի
հալից:
Ես ե պատճառը հենց,
վոր սիրում ե նրան Տըապիզոնցի Ալին:
Թիավար ե Ալին մի նավակի վրա:
Մտանում ե ամիսը —
3½ լիրա *):
Սշխատում ե սակայն առավոտից —

գեշեր:
Ու սիրում ե նրան
տերը, վոնց վոր գրաստ,
քշել:
քշել,
քշել:
Սիրում ե Ալին Լենինին:
Նրա մասին նրան
պատճել ե նավաստի մի ոռու:
Ցույց ե տվել նրան
պատկերքը Լենին:
ասել ե.
— Լենին—կառոշ **):
Ալին ասել ե
— Զ՞ը ***):
Ուսուն ասել ե.
— Բաս.

Լենին վար —
բուրժույ յոկ ***:
Բուրժույ — այսինքն զանգին,
այնինքն եղենդի, աղա,
են, վոր նստում են հանգիստ,
ուստում են ուրիշի քրտինք
ու սիրում են
միշտ
ծովափին
նստել նարդի խաղալ:
Հասկացել եր Ալին.
«Լենին —
բեյուկ խալիֆ» —
«Բեյուկ *** խալիֆ» սակայն,
վոր հասկանում ե միշտ ֆուխարայի
հալից:
Ու սիրում եր նրան,
եղ լենինին հեռու
իր չարքաշի սիրով արագիզոնցի
Ալին:

2.

Եղ որը սուդ եր Մոսկովում,
վորւացել եր վոնց պրոլետարը:
Ով վոր մոտ եր նրան —
արդեն գիտեր՝
— ել չկա կարմիր դեկավարը...

Եղ որը արդեն երկապեն
հավաքում եր մկան առ մկան
իր ուժերը, վոր պատճեղ կապե
անողոք կորուստի դիմաց:

Եղ որը ամեն պրոլետար
Վոսկովում, Բագվում, Թիֆլիսում
շնել եր իր կամքը — բետոն
ու հոգին չուզուն,

* Ներկայումս լիրան հավասար ե մի ոռուլու:

** «Կառոշ» ոռուերեն խօրօշ բան ե, աղավաղված:

*** «Զոք» թուրքերեն նշանակում ե շատ՝ «վար»—կա, «յոկ»—չկա

**** «Բեյուկ» — թուրքերեն՝ մեծ:

պողպատել եր կամքը, վոր եզուց
կորուստի տեղ են թանգաղին՝
կուռ
դնե բյուր-մկան մի բոռւնցք
վոստի բկին:

Յերկաթե իր կամքով եղ որը
մեր յերկրում ամեն պլուետար
ենպիս եր զգում, կարծես նոր ե,
կարծես նոր ե յեկել կռվի որը,
և ինքը գոռ գրո՛ պիտի տա,
ամփոփե իր ուժերը,

հավաքե մկանն իր գերջին,
վոր մնա բանվորի դիկտատուրը
ու հաղթե—

առանց իլիչի...

3.

Ու թուավ ռադիոն եղ որը,
վոնց վոր թուր աշխարհը կիսող,
մահաթիռ ռադիոն եղ որը
Մոսկովից հասավ Տրապիզոն:

Եղ որը ենքան եր աշխատել,
վոր հալից ընկել եր Ալին:
Մարմինը քրտինք եր պատել
բայց պիտի աշխատեր ելի,
Նվում եր ամեն մի մկանը,
նվալով քաշում եր դեպի տուն.
բավական ե, ասում եր,—բավական ե

հոգնությունը քո...
Յերեկո յեր:
Մութ ծովափով
գնում եր Ալին դեպի տուն:
Ու տհասավ հանկարծ ծովափին
իր ծանոթ նավաստուն ոսուս:
Մոտեցավ,
վոր ասի սալամ,
մեղմի ձեռքը՝ ծանոթ վոնց վոր հին,
ու կամաց փոփոք նըան՝

«—կարաշ լենին!»:

Մոտեցավ:
Տխուր եր նավաստին:
Անձանոթ եր դեմքը: Անոգ:

Ու չասավ մշտական «դրաստի»-ն,
Այլ—

կամաց
«—Ալի, լենին յնկա:

Ել վոչինչ:

Հեռացավ:
Ու թվաց թե
լեռնացած՝ զարկեց մի ալիք:
Հասկացավ խոսքերի եղ իմաստը
նավաստի Ալին...

4.

Գիշեր ե:
Քնել ե Տրապիզոնը:
Զի հաջում անգամ մի շուն:
Վոստիկանը, սական, վոնց վոր
շունը —

արթուն ե.
հսկում ե փողոցում:
Սրբութում են սե սոսիները,
փսփում են վոնց վոր խտվարին,
վոր թեկուզ Տրապիզոնը քնել ե,
բայց ահա—արթուն ե Ալին:

Գողեգող գնում ե Ալին
պատերի տակով դեպի մութը:
Գողեգող գնում ե Ալին
դեպի մութ.—
— Լոկ ինքը դիտե:

Մոտենում ե ահա կամացուկ
մի շենքի...
Կորած խավարում՝
ցուցանակ կա ենաեղ մի ծուռ...
նկարած ե վրան—

նա դիտե—

հասարակ—

ՄԱՆԳԱԴ ՈՒ ՄՈՒՐՃ...

Ծրջում ե եղանակ գողեգող
վոստիկանը՝ խեթ ու տուող:
Կոչվում ե շենքը քաղաքում—

«ԿՈՆՍՈՒԻԼՈՏ ՌՈՒՄ»:

—Կհճսուլ...

Մոտենում ե Ալին, վոնց վոր գող:
Անցնում ե մոտից վոստիկանը:
Մահում ե Ալին կողքով—
մոտենում ե գոանը:

Մեղմում ե զանգը.
Զանգից սակայն զիւ
Խոր լոռության մեջ
զարկում ե
մի սիրտ:

Բացվում ե գուռը:
Մանում ե ներս:
Լոկ պահապանն ե,
վոր արթուն ե դեռ:

Նա ճանաչում ե կարդաշ Ալուն.
հաճախ գնացել են մեկտեղ լողալու:
Բայց արդեն գիշեր ե:
Ուշ ե արդեն:
— Ի՞նչ ե հարկավոր Ալուն արդյոք:

Բայց բախտից Ալու—
հյուպատոսն հանկարծ յելնում ե զուրս:
— «Լենին յնկ», — հարցնում ե Ալին—
Լոռություն:
Վոնց վոր մուրճ՝ տաշող:
Ու—

Կրծքին խփելով Ալին —
մրմինջում ե.
— Նեթ կարաշո...*:
Յեվ ապա նայելով գետին,
մի բանից վոնց վոր վախելով
ասում ե՝ գառնությամբ լի.
— «Ալի պլոխ: Ալի—աղլիոր.. յ**:
Խոնարհում ե գլուխը գետին,
վոնց վոր վիշտ ե հայտնում ու պատիվ—
և—
հեռանում ե՝ բավելով պատին...»

— Ինչու յե հեղինակը Մոսկվան համեմատում Մեկկայի հետ և ասում, վոր «աշխարհի կենտրոնը Մոսկովն ե»:
— Ի՞նչն եր խոսում Ալու մեջ. յերը նա գնում եր խորհրդային կոնուլատը ցավակցություն հայտնելու կենինի մահվան առթիվ:

* Աղավաղված ոռւսերեն. ուզում ե ասել՝ լավ չի:

** Պլոխ—ոռւսերեն ոլոխ բառն ե՝ աղավաղված, ուզում ե ասել Ալին վատ ե զգում իրեն, Ալին լալիս ե:

Դ. Ա. ԲՈՎ

(Համ հսկախի)

ԼԵՆԻՆՆ ՈՒ ԼԻ-ԶԱՆԸ

1

Պեկինում մարդիկ կան բոլոր տեղերից:
Պեկինում այնքան փողոցներ:
Փողոցում Լի-Զանը յերկար թափառեց.
թափառեց կուլին գործադուրկ:

Ու հետո դաշտերում... վերահսկիչը չար,
ամեն որ ծեծում եր լի-Զանին,
այն որից, ինչ Լի-Զանը մըշակ դարձավ՝
չը թողին իր մեջքը դինջանա:

Դաշտերում, ուր բըսնում եր թելը բուրավետ՝
մի անդամ փըչեց տաք մի քամի
ու թիկնեղ մի ճամբորդ կորցրեց դաշտերում
մի կըտոր թերթ լըրագրի:

Հոգնաբեկ ու ծեծված բանվորը վերցըրեց
ու կարդաց պատմությունը հուզիչ.
մի յերկրում հիմա տեր, զեկավար ե դարձել
վոչ թե ժանտ մանդարինը—կուլին:

Ու այնտեղ, տըրորած այդ թերթի դեմքին,
վոր ընկել եր գողդոջ ծունկերին—
նըկարված եր ավագը ազատ այն յերկրի
ու գըրված եր անունը—լենին:

Ու թեյի դաշտերում կուլիները խըդուկ—
այն որից՝ թե ցերեկ, թե գիշեր,—
անհամար հեքիաթներ են հյուսում,
թե լենինը՝ նըրանց կըհիշե:

Թե պիտի տապալվի մանդարինը:
Դաշտերից բըրընձի ու թելի
լենինը—դեպի ըմբոստ Պեկինը—
կըկանչի բոլոր կուլիներին:

Ցերեկն արեի տակ: Ցերեկը մըտքակի տակ:
իսկ մըթին գիշերը բոլորած շըրջան—
յերկար յերազում են, շըշընջում կամաց—
թե ուր ե լենինը. լենինը չեկավ...

Ու նախում են այդ հին
տըրորած թերթին

նըկարի աչքին կըկոցուն.

մըտքակը մոռանում են, ու տարվում յերկար
լըրագրի այդ հին թերթով:

2

Վըսընդվեց լի-Զանը:

Կըրկին ընկավ Պեկին.

Նա զըսպում եր մաղձն իր:

Փողոցներն անթիվ են: Ամբոխը մի հեղեղ:

Լի-Զանին կըրծում ե քաղցը:

Ու հանկարծ...

Լըսեց լի-Զանը

ճիչը լըրագրավաճառի:

ճիչում հուզում եր հընչում:

«Մեռավ ամենամեծ բայլը կիկը.

«Մեռավ,

«Մեռավ...

Տատանվեց լի-Զանը: լի-Զանը գունստվեց:

Յեկ մըթագնեցին աչքերը լի-Զանի:

լի-Զանը իջավ մի տան սանդուխքի՝

ու մըշուշը իջավ լի-Զանի աչքին:

Լենինը մեռավ: իսկ նըրամնք հապա.

ինչ անեն նրանք—կուլիները չին:

Ու միթե անվերջ նրանց ուսերին

դընդակն ու մըտքակը պիտի շառաչեն:

Մեռավ լենինը: Նա, վոր թերթիկից

ապըստամբության նըշանն եր տըվել:

Զեր լացել յերբեք լի-Զանը մըտքակից,

իսկ այժմ—

լի-Զանը դառն հեկեկաց:

3

Դարձան, վոլորվեցին ամիսներ, շաբաթ
ու գարձավ լի-Զանը ոիկը—

լի-Զանը մի գըրաստ փոշեպատ—

լի-Զանին ով տան՝ չըքըշեց:

Պեկինում փողոցներ կան մաքուր:

Պեկինում կան աըներ բարձրահարկ:

Կը թողնեն, վոր անցնի այն տեղով

Ոիկըու պես կեղտոտ մի ավանակ:

Լի-Զան,
կողքի կեղտուտ փողոցներից կերթասու:
վեց փթանոց կին և քաշում Լի-Զան ոիկան:
վեց փթանոց մի կին
հագին խաս ու կերպասու—
կինը,
անձար ոիկանուն
ուր ուզեց կըքըշի:

Ու Լի-Զանը քաշում և շըլինքով,
վորպես լեզ.
նա հեղ ե, անմըռունչ...
իսկ սըրտում այն ճիշն եր ճըլընգում,
թե չըկա ալես Լենինը փըրկիչ:

Բայց հանկարծ...

Դըղիրդ:
Վորոտ ու պայթյուններ:
Ու ցընցվեց Լի-Զանը:
Լի-Զանը կանգ առավ:
Յած նետեց ուսից լուծը ծանրաբեռ...

Տեսնում ե՝

անթիվ կուլիներ...
Փողոցով հոսում են նըրա դեմ:

Տեսնում ե՝

շողջողուն սուրեր ու սըլիններ—
առել,

ճոճում,

շրջում են կուլիները մերկ:

Տեսնում ե՝

չինտառու կարմիր դըրոշներ:

Ու փողոցի լայնքով

այդ բոլորի վրա
գալիս և Լենինը.

Լենինը՝

այնպես,

ինչպես այն թերթի տըրորած դեմքին

աչքը կըկոցում ե Լենինը

կանչում ե Լի-Զանին

— Յեկ...

— Յեկ...

Ու մատը մեկնած

նշանում ե վեր—

դեպի թաղերը մաքուր ու մեղկ:

Ծալվում են ծունկերը Լի-Զանի,
հուզմունքից ծընումն ե դողում,
— վաչ վոքի, վոչինչ չըզիջանել:
— չեղեղով ամեն ինչ վողողել:

Ու հեղեղը առավ Լի-Զանին:
Լի-Զանի թոքերը լայնացան—
ցընծաղեմ Ցին-Զոն
Լի-Զանին

յերկարից փայլուն մի հըրացան:
Նա տվեց պարկերով փամփուշտ:
Վարժեցրեց հըրացան պարպելուն,
ու հիմա մեր Լի-Զանը անհաշտ
պայքարում և շըքեղ Պեկինում:

ԱԼԱՆՐԱՖ ԲԱՅՐԱՄՈՎ

ԱՐԵՎԵԼՔԻՆ

(Թուրքերենից)

Նախկին խավար բախտդ վարար վառվում ե,
վոսկեկտուց, վոսկեարև Արևելք.
վառ արեիդ լուսը առատ փովում ե
ու ծովում ե կյանքդ վերե, Արևելք:

Յեվրոպացիք վորոնեցին քո ճամբան
ու բերին քեզ ոսկիում, հաշիչ ու շղթա,
այն որվանից վոսկի արեկ հանգավ,
կամքդ դարձավ աշնան տերե, Արևելք:

Ճզմել ե քեզ բիրտ կրունկով Անգլիան,
ու ծծում ե քո արյունը ալվլան,
և նրա հետ և նրա պես բռնակալ
ունես ներքին տղրուկ տերե—Արևելք:

Տերերիդ դեմ սկ, սպիտակ թե դեղին—
վոտքի հանիր հզոր մուրճին, մանգաղին
դու չես կարող դեն շըրտել խեղդողին,
թե չունենաս դինված թերե—Արևելք:

Ու կոգնի քեզ քո պայքարում տիտանի,
Հոկտեմբերը, այն բոցավառ պատանին,
նետիր փայլդ Խաղաղական ովկյանին,
հրդեհավառ բարձրացիր վիր—Արևելք:

ԵՄԻԼ ՎԵՐՀԱՐԵ

ԲԱՆԿԻՐ

Նամակներով ծածկված գրասեղանի առաջ,
թիկնաթոռում թաղված, դողդոջուն ու մոայլ,
նա զբում և ճերմակ թղթիկների վրա՝
միտքը հեռու, հեռուն՝ յերկրի ծայրերն հառած:
Տեսնում են նա կապը, Յեյլոնը ու ձավան,
և ովկիանոսն Հնդիկ, ուր իր նավերն հազար
դեպի չորս կողմն հողի, դեպի հազար կայան,
առագաստները բաց, նավարկում են ազատ:

Կայարաններն իրա ու ռելսերը կարմիր,
վոր ուղարկե պիտի անապատներն անթուխայ,
ուր արեն և միայն շարժվում մերյալ տոթում—
յերենոսի, սաթի աշխարհները անծիր:

Իր հանքերը, նավթի շատրվաններն անթիվ,
իր բանկերի մոլի յեռուզեռը հնչուն,
վոր խեղդում ե, լափում, զառանցանքով տանջում
և իր տենդը նետում ովկիանոսից անդին:

Ժողովուրդներ, վորոնց սենատները դահիճ
և որենքները խեղճ հպատակ են իրեն—
նա կարող ե մատնել նրանց հողմին հրե,
թե ոգտակար լինի հաշիմսերին դա իր:

Պատերազմներ, արյուն, մոլեգնություն ու վոխ,
վորոնց միակ արքան—ինքը—կըծում ե հար
պաղ թվերի անկիրք տտամներով—հազար
հանգուցներ ու հարցեր՝ արյունոտ ու ալրող:

Յեվ նա գիտե, վոր հին թիկնաթոռում բազմած,
իր մատյանում յերբ նա խծըծում ե դողդոջ—
իր քաղքենի վոգուն կապում ե կյանքը վողի,
ուր տիրում ե թախիծ ու սպիտակ սարսափ:

Ո, վոսկին, իր վոսկին, վոր ցանում ե հեռու,
բազմապատկում այնտեղ—մոլի քաղաքներում,
այնտեղ—խրճիթներում ու խուցերում տիսուր,
ու լույսերում, ոգում, ամենուր:

Իր թեավոր վոսկին, հեռուներով հարբած,
իր սավառնող վոսկին, իր գիշատիչ վոսկին,
վոսկին՝ շնչող ու վառ—
վոսկին:
Իր վոսկին, վորով փայլում են բորբ ամենքամի
ու հով,

իր վոսկին, վոր հողն ե ծծում
թշվառության անթիվ շրթունքներով:
Իր վոսկին՝ հուրհատող, իր վոսկին խորամանկ,
խարող՝ առանց խոսքի—
հուրսի ու արկի բեկոր—իր վոսկին:

Նա չզիտե ինքն ել, թե ինքն ինչի՞ յե տեր,
բայց իր դիզած վոսկին ավելի յե յեթե,
քան բուրդերը հսկա, աշտարակները ցից—
նա սիրում ե խորհել, պաղարյուն ու հանգիստ,
խորը, զգաստ սիրով,
վոր ինքն ունի արդեն, վորպիս բարիք ու կանձ—
խոկական ակն հողի՝ զընդան ու զնդան:

Ամբոխն ատում ե իրեն, բայց պատկանում է նրան.
Նախանձում են, բոլորն ել. վոսկին պսակն ենրա:
Ցանկությունը յերկրագին, հրդեհումը նրա կեղ
լափում ե սիրտը նրանց, ինչպես իր սիրտը
լափեց:

Ինքը—նա յե, վոր տալիս ե ուղածին
դյութիչ վաստակը հացի:
Ի՞նչ հոգ, վոր նա կեղեքում ե բոլորին—
ով իր գոնից հեռացավ—նա գառնալու յե նորից:
Վորպես հսկա ջրապտույտ, վորպես հորձանք,
թավալվում ե ուժը նրա անեղածակն
փրփրում ե, յեռում ու քաշում իր մեջ
տերեներ ու ձյուղեր և քարեր ու սերմեր.—
կարողություն, հասուլթ, տնտեսություն ու կյանք
և կոպեկներն անգամ,
վոր խուզերի մթռւմ, զիշերն ամեն ծառա
համարում ե ծածուկ իր ճրագի առաջ:

Այսպես ահա, հսկա իր գեղերով փողի,
թիկնաթոռում թաղված, դողդոջուն ու մոայլ,
նա տիրում ե բոլոր արքաների վրա
ու վճռում բախտը ծովերի ու հողի:

ՀՆԴԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

— Ի՞նչ միջավայր են նկարագրված այս բաժնի պատմվածքների մեջ
մասում:

— Բնորոշեցեք այդ միջավալը, նյութ ունենալով այս բաժնի պատ-
մը պատմվածքները:

— Ի՞նչ ընդհանուր գաղափարական գիծ եւ անցնում այստեղ զետեղ-
ված պատմվածքներում:

— Ինչո՞ւ յեւ Վ. Թոթովենցի «Ժամանակակից հերկաթը» զետեղված
այս բաժնում:

— Ինչո՞ւ յեւ այս բաժնում զետեղված Զեկ Լոնդոնի «Յերկաթե կը-
րունկը»:

— Ինչո՞ւ յեւ այստեղ զետեղված Եմիլ Վերհարնի «Բանկիր» բանա-
ստեղծությունը:

— Այս բաժնում զետեղված պատմվածքներից վորի մեջ եւ ամենից
ցայտուն կերպով նկարագրված գաղութային իրավազուրկ յեվ շահագործ-
վող աշխատավորի դրությունը յեվ հոգեբանությունը:

— Համեմատեցեք ըստ բովանդակության Զեկ Լոնդոնի «Չինագո»
պատմվածքը Մուլթաթուլու «Սայիդ յեվ Ադինտա պատմվածքի հետ. նշե-
ցեք նմանություններն ու տարբերությունները:


— Վորն եւ այստեղ զետեղված պատմվածքների յեվ բանաստեղծու-
թյունների միջև յեղած հիմնական տարբերությունը ըստ բովանդակու-
թյան:

— Համեմատեցեք Վշտունու «Ռամ Ռոյ» ը Զեկ Լոնդոնի «Չինագոյի»
հետ. ինչով եւ տարբերվում Ռամ Ռոյը Ահ-Չուից:

— Համեմատեցեք նայեվ Ահ-Չուին Արովի պոեմում նկարագրված Լի-
Զանի հետ:

— Կարդացեք Մուլթաթուլու «Սայիդ յեվ Ադինտան» յեվ Զեկ Լոն-
դոնի «Յերկաթե կրունկն» ամբողջությամբ:

— Կարդացեք Ազատ Վշտունու «Արեվելքը հուր եւ հիմա» բանա-
ստեղծությունների ժողովածուն:



ՑԱՆԿ

1. Սոցիալիստական սինարարությունը յեվ նոր կենցաղը ժամանակակից գրականության մեջ

1.	Ալազան. — Առորյան թիթեղե թէերի տակ	3
2.	» Հաջողություն, Արշակ, հաջողություն	14
3.	Հովիկ Մելիքյան. — Տոնելի ճամբին	22
4.	» » Հայր և վորդի	32
5.	Աս. Զորյան. — Շիրակի ջրանցքը	41
6.	Լ. Թարգոյլ. — Նա գնում եր բողոքի	49
7.	Ակսել Բակունց. — Արտելիա	57
8.	» » Գյուղաշխատավորի տետրակից	62
9.	Մ. Դարբինյան. — Անիծված հողը	74
10.	Ս. Զավեսիձե. — Առաջին տրակտորը	86
11.	Ն. Լորկիպանիձե. — Զեմաքերի կոմունան	99
12.	Յե. Զարենց. — Մեր աշխարհը սավետական	107
13.	» » Բալլադ 26-ի մասին	111
14.	Ա. Վասունի. — Զան, սավետի յերկիր	116
15.	Փ. Արով. — Խորհրդային յերկիր	116
16.	Մ. Արմեն. — Ասաղի ճանապարհը	118
17.	Վ. Նորենց. — Յերգ հողի մասին	127
18.	Ս. Ենլի. — Պատգամավորը	128
19.	Կալե Բոբոխիձե. — Վողջույն ծովափին	128
20.	Ս. Ռուսամ-Զալե. — Բագու	130
21.	Հ. Հակոբյան. — Հայլասարություն	131

2. Փետրվարիան յեվ Հոկտեմբերյան հեղափոխությունը ժամանակակից գրականության մեջ

1.	Աս. Զորյան. — Հեղկոմի նախագահը	137
2.	» » Գրադարանի աղջիկը	152
3.	Ակսել Բակունց. — Վանդունց Բաղին	165
4.	Մ. Դարբինյան. — Կիկոսը	180
5.	Վ. Անանյան. — Կարմրադրուշ պատանին	197
6.	Արազի. — Սև ցավը	219
7.	Ելիզար Պոլումարդինով. — Յերկաթե յեղբայրները	227
8.	Եիկոլա Ասլամազաւիլի. — Փետրվարի 25-ը	239
9.	Յուրի Լիբելինսկի. — Ապստամբությունից հետո	245
10.	Ռապտոն Սինկիր. — Ամերիկյան բոռնցքը	258
11.	Հ. Հակոբյան. — Հեղափոխություն	726

12. Յե. Զարենց.—«Ամրոխնելը խելազարդած»	268
13. » » Քաղաք իմ Բագու	271
14. Ե. Զարյան.—Բոնկումը	273
15. Գ. Մահարի.—«Դեպի գյուղ»	278
16. Խ. Ռադիո.—«Դասակարգը»	279
17. Վ. Կնյազեվ.—«Կոմունարի վորդին»	281

**Յ. Համաշխարհային պատերազմը ժամանակակից հեղինակների
գրվածքներում**

1. Շիրվանզադե.—«Հերոսի վերազարձը»	284
2. Գ. Դեմիրճյան.—«Պատերազմի դաշտում»	295
3. Ա. Բակունց.—«Պատերազմի սկիզբ գյուղում»	308
4. Ս. Զորյան.—«Պատերազմը»	320
5. » » «Զընորի մռո»	335
6. » » «Ահանի մահը»	343
7. Հ. Բարյուս.—«Շքանշանը»	360
8. Յե. Զարենց.—«Յելան բանակներ հսկա»	365
9. Գ. Աբով.—«Զորակոչը գյուղում»	368
10. Ալազան.—«Պատերազմը»	370
11. Գ. Մահարի.—«Դյուզերի յերգը»	371

**4. Իմպերիալիզմը յեվ զարթող արեվելքը ժամանակակից
գրականության մեջ**

1. Վ. Թորովենց.—Ժամանակակից հերյաթ	378
2. Վ. Թերզիբաշյան.—Ել Վահիդի վերջին արկածը	387
3. Մուլքաբուլի.—Սայիդ և Աղինդա	400
4. Կլու Մակ-Կեյ.—Լինչի դատաստանը	411
5. Հանրի Բարբյուս.—Բաղաքակրթության բարիքները	
6. Զեկ Լոնդոն.—Զինագո	
7. » » Ֆերկաթե կրունկը	441
8. Ակատ Վասոնի.—Վեր կաց, սիրելիս	452
9. » » Ռամ Ռոյը	455
10. Յե. Զարենց.—Լինինն ու Ալին	463
11. Գ. Աբով.—Լինինն ու Լի Զանը	466
12. Ա. Բայրամով.—Արևելքին	469
13. Եմիլ Վերհարն.—Բանկիր	470



ԳԻՆԸ 2 Ր. 50 ԿՈՊ. ($29\frac{3}{4}$ մամ)

550-1



Е. Чаренц

КУРС ЛИТЕРАТУРЫ

(VII г. обуч.)

Госиздат ССР Армении
Эревань—1930

Sue

Buy

62.482

